4

2006

ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

ԻՆՔՆՈՒՆՔ ՍՈՒՐԲ ԳՐՈՑ



221

1490 Ֆ/ 1737-ԱԿ

ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ

ԻՆՔՐՈՒՆՔ ՍՐԲՈՅ

Բացաքննեալ երկասիրութիւն Տն Տն Պետրոսի
Վարդապետի Աղոնց՝ Աբբեպիսկոպոսի, և
Ընդհանրական Աբբայի Մխիթարեանց։

Եւ տպագրեալ յառաջնորդութեան նորա՝ ինքնայօժար ծախիւք
ազնիւ և բարեպաշտ Կարնեցի Գէորգ Աղայի Յակոբեան։

ՀԱՏՈՐ Դ.

ՑՈՒԴԻԹ. ՏՈՎԲԻԹ. ԵՍԹԵՐ. ԴԱՆԻԷԼ. ԵԶՐԱՍ.
ԵՒ ՄԱԿԱԲԱՅԵՑԵՑՒՔ ՄԻՆՉԵՒ'Ի ՔՐԻՍՏՈՍ.



94380-ԱՀ

Ի ՎԼԻՆԼԻՏԻԿ
Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ՂԱԶԱՐՈՒ
1819. ՌՄԿԸ.

ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ԷՋԱՐՈՒՆՉ ՍՐԲՈՅ ԳՐՈՑ

ԳԻՐՔ ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՅՈՒԴԱՅՈՑ ՏՈՎԲԻԹԱՑ ԵՒ ԵՍԹԵՐԱՑ

ԳԼ. Ա.

Յուդիթ. Հողոփեռնէս. Ալիքոտոդոնոսոր թագաւոր ասորեստանեայց։

Իբրև կորոյս սենեքերիմ արքայ ասորեստանեայց զմեծ բանակ իւր հարիւր ութսուն և հինգ հազարաց, որք 'ի միում գիշերի կոտորեցան 'ի հրեշտակէ տն, մարք՝ որք բռնի նուաճեալ կային ընդ ձեռամբ ասորեստանեայց, զայն ժամանակ 'ի ձահ առեալ ազատութեան իւրեանց, թօթափեցին 'ի բաց զլուծ նոցա։ Այս արփաքսադ ըստ բերելոյ յաջողութեան թագաւորեալ 'ի վերայ մարաց՝ ընդարձակեաց զսահմանս տէրութեան իւրոյ, նուաճելով ընդ իւրև՝ արշաւրօք և սրով ազգս բազումս։ Շինեաց կամ ամրացոյց զբաղաքն եկ-

բատան յերկրին եկբատանացւոց (ռամկ. համբ-
տան), պատեալ զնովաւ պարիսպս 'ի կոփածոյ քա-
րանց, լայնութիւն իւրաքանչիւր քարի՝ 'ի կանգնոց
երից, և երկայնութիւն 'ի վեց կանգնոց. Թանձրու-
թիւն պարսպացն 'ի յիսուն կանգնոց. իսկ բարձրու-
թիւն յեօթանասուն կանգնոց. կառոյց և աշտա-
րակս՝ հարիւր կանգուն բարձրութիւն, և թանձ-
րութիւն հիմանն նոցա վաթսուն կանգուն։ Զգիտ
նա ժամանակ պարապոյ 'ի հաստատել և յամրա-
ցուցանել զտերութիւն իւր. քանզի ոչ սենեքերիմ,
ոչ ասորդան, և ոչ իսկ նաբուքոդոնոսոր ընդ ամ-
ենչ կարող էին դիմադրաւ լինել և խափանել
զյառաջադիմութիւն նորա։

Զաբուքոդոնոսոր նստաւ հանդարտեալ 'ի պա-
տերազմական գործոց ընդ ամ մետասան, հայե-
լով միշտ 'ի հեռուստ հանդերձ մեծաւ սրտցաւու-
թիւն ընդ փառաւորութիւն և ընդ բարգաւաճումն
մարաց, այլ ոչ երբեք մերկացոյց զսուր իւր ընդ-
դէմ նոցա։ Զպա յամին երկոտասաներորդի իւ-
րոյ թագաւորութեան գտաւ կաղմ և պատրաստ՝
երևեալ յասպարէզ մարտի անթիւ բազմութիւն զօրաց
յընդարձակ դաշտի անդ հռագաւայ ընդ մէջ եփ-
րատայ և տիգրիսի առ հիւդասպ գետով։ Զնդ
կարգեալ յարդարեաց զզօրս իւր 'ի ձակատ ընդ-
դէմ մարաց. որք էին եկեալ պատահել ասորեա-
տանեայց արտաքոյ սահմանաց երկրի իւրեանց։
Զայն զի օգուտ մեծ է թագաւորին առնել պա-
տերազմ՝ թէ հնար իցէ՝ արտաքոյ տան իւրոյ։ Զբ-
կու բանակք հարան 'ի դիմի ամենայն զօրութիւն
յերկրին արիավքայ արքային եղիմացւոց. զօրացաւ
նաբուքոդոնոսոր, եհար խորտակեաց զմարս, կա-
լաւ զարփաքսադ, և սպան զնա սրով իւրով. տի-
րեաց քաղաքաց նորա. և չորաւ մինչև յեկբատան
քաղաք, ա՛ռ զնա և աւար եհար, և քանդեալ կորդ-
ծանեաց զպարիսպս և զաշտարակս նորա։

Զեծամոեալ նաբուքոդոնոսորայ ընդ այն յա-
ջող սկսուած պատերազմի իւրոյ՝ եդ 'ի մտի զաշ-
խարհ ամենայն ընդ իւրև նուաճել. ա՛ռ ընդ իւր

'ի դաշնակցութիւն զշրջակայ տերութիւնս այլազգեաց. և ապա կարծելով յաղթել թագաւորութեց լոկ ահիւ անուան իւրոյ, հրեշտակս արձակեաց 'ի պարսիկս, և առ բնակիչս կիւլիկեցւոց, և դամասկոսի, և լիբանանու. և առ ամենայն բնակիչսն որք բնակեալ էին դէմյանդիման Ծովէզերեայցն 'ի կարմրոյս, 'ի գաղատդ, և 'ի վերինն գալիլեա, և 'ի մեծ դաշտն յեզրայելի. և առ ամենեսին որք բնակէին 'ի սամարիա, և յայնկոյս յորդանանու մինչև ցերուսաղէմ, և յեգիպտոս և մինչև ցեթովպիա, զի անձնատուր լինիցին իւրոց հրեշտակաց. և վճռեսցեն 'ի ձեռս նոցա հարկս ծանուցս. և եկեսցեն գումարեսցին առ նա՝ երթալ ընդ նմա 'ի պատերազմ։ Այլ այսպիսի ծանր գործառնութիւք՝ ոչ վճարին 'ի ձեռն քանի մի հրեշտակաց, յորժամ չունիցին առընթեր գունդս ահաւոր զօրաց։ Այնմ բնակիչք աշխարհաց առ որս առաքեաց՝ ապախտ արարին զպատգամն նորա, և ոչինչ երկուցեալ 'ի նմանէ՝ դարձուցին զհրեշտակս նորա ոչ միայն ունայն 'ի պահանջմանց, այլև արհամարհանօք։ Յայնժամ ամբարտաւանն իբրև յայտնի թշնամի իւր դնելով զամենեսին զնոսա, որք չառին յանձն լինել նմա հարկատու, որպէս թէ ծանուցն յանցուցեալ իցեն՝ զի չկամեցան տալ նմա հարկս և զօրս, զոր չէին պարտական տալ, բարկացաւ յոյժ. և երդուաւ յիւր թագաւորութիւն և յաթոռն՝ խնդրել զվրէժ յամենեցունց 'ի նոցանէ։

Այսիրզն ուրթատանեերորդ (կամ ըստ լատին թարգմանութեան՝ երեքտասաներորդ) ամի իւրոյ թագաւորութե՝ կոչեաց 'ի խորհուրդ զամենայն մեծամեծս իւր և զկուսակալս, և յայտ արար նոցա զխորհուրդ կամաց իւրոց տիրել աշխարհի, և հրատարակեաց 'ի լուր ամենայն զօրուն զորոշումն իւր վասն հանրական մարտի պատերազմի։ Կոչեաց ըստ հոգոտիեռնեսս զսպարապետ ամենայն զօրացն. և յանձն արար 'ի նա զգործադրութի մեծի գործոյն։ Հոգոտիեռնեսս խորհեցաւ զամենայն, բաց յայտմանէ՝ զոր նախ զառաջինն և 'ի վեր քան զամենայն

ինչ պարտ էր խորհել միշտ. այսինքն է խորհեցաւ զամենայն բաց յոյժ. որպէս թէ յաջողութիւն, և ձախողութէ պատերազմի չիցէ կախեալ գլխովին յոնծային տնտեսութէ։ Կոչեաց առ ինքն զամենայն իշխանս և զզօրագլուխս. և հրաման եւ կալ 'ի գլուխ իւրաքանչիւր իւրում գնդի։ Հանդէս առբար զօրուն, և եգիտ զի էին հարիւր քսան հազար հետևակաց, և երկոտասան հազար հեծելոց աղեղնաւորաց, ամենեքեան արք զօրաւորք քաջակիրթք 'ի մրցմունս մարտի։ Լու զգուշացաւ, զի մի պակասեսցի նոցա պարէն 'ի դարման, առ ուղտս և գրաստս բազումս յոյժ՝ բառնալ զկահ և զկապսի նոցա։ Պատուէր եւ ամբարակաւոր զինուորաց ածել զկնի բանակին խաչն, և արքան, և եբամակս այծից 'ի կերակուր՝ անթիւս և անհամարս։ Լու զի նախ յերկիրն ասորւոց ունէին մտանել, որ էր երկիր ցորենոյ, և գարւոյ և ամենայն արմտեաց, հրաման եւ զօրապետաց ժողովել անտի ցորեան և զայլ արմտիս, և ընուլ շտեմարանս մեծամեծս։ Լ'ռ ընդ իւր և ոսկի և արծաթ 'ի գանձուց թագաւորին բազում յոյժ, բաւական 'ի տալ այնչափ բազմութեան զօրաց զօր ըստ օրեայ թոշակ նոցա. գիտելով զի զինուորք կամ յոյժ դիւրաշարժ են փախչել 'ի բանակէն, և կամ կաւրի յանդուգն՝ ոտնհար լինել զինուորական կանոնաց, եթէ ըստ ժամանակին ոչ տացին նոցա թոշակք իւրեանց։

Յետ այսպիսի պատրաստութեց, յաւելեալ 'ի նախագրեալ թիւ զօրաց այլ ևս յայլոց դաշնակից տերութեց իբրև զբազմութէ մարախոյ, որոց ոչ գոյր թիւ, էջ 'ի լերանցն ասորեստանեայց. և զօրէն ուխտնահոս հեղեղաց ծածկեաց զկիլիկիա, անց զեփրատ, աւարեաց զմիջագետս, զդամասկոս, զմադիամ, և զայլ թագաւորութիս, որք յիշատակէն 'ի նոր գիրս, առանց պահելոյ զկարգ գնացից բանակին։ Յայս առաջին յարձակումն ոչ այնչափ փոյթ եղև հոլովեռնեայ տիրել քաղաքաց և ամրոցաց, քան թէ աւար հարկանել, հրձիգ առնել,

կոտորել՝ի դաշտս և՝ի քաղաքս անզէնս ոչ միայն զմարդիկ, այլև զանասունս նոցա, առ՝ի սէր և երկիւղ արկանել՝ի վերայ ամենայն բնակչաց ծովեզերեայց. զիտելով զի Թշնամիք կիսով չափ յաղթեալ էին, յորժամ երկիւղ տիրէ՝ի վերայ նոցա։ Պատուէրն՝ զոր էր նաբուքոդոնոսոր իւրումն սպառնալեալ, էր կոտորումն և ջնջումն. այլ տիրապէս պատուիրեալ էր նմա քակել և կործանել ընդ ամենայն տեղիս զմեհեանս, զսեղանս, զկուռս, և զանտառս դիւանուէրս, իբր ոչ եթէ առ բարձրացուցանելոյ զփառս միոյն ոյ Աշխարհի, այլ զի կամէր ամբարտաւանն՝ զի ամենայն ժողովուրդք նմա պաշտօն տարցին իբրև մի միայն աստուածոյ երկրի. ոչ շատանայր տեսանել զնոսա իւր հպատակս, եթէ ոչ տեսանիցէ և իւր երկրպագուս։ Ամենայն ժողովուրդք՝ ընդ որս անցին զօրք ասորեստանեայց, իշխանք և Թագաւորք ընտրեցին ինքնակամ անձնատուր լինել նաբուքոդոնոսորայ, քան սպառսպուռն կորնչել՝ի սրոյ նորա. և միաբան կամաք դային ընդ առաջ հողոփեռնեայ երդմամբ, և պատկաբ, և ծնծղայիւք, և Թմբկաբ, իբրև յընդունելութիւն նոր չաստուածոյ։ Ամենայր հողոփեռնէս՝ի քաղաքաց անտի զընտիր ընտիրս երիտասարդաց, և յաւելոյր զնոսա՝ի զօրս իւր. և այնպէս հետզհետէ բազմացուցանէր զզօրս իւր իբրև զաւազ երկրի։

Այս լուր հասեալ յերուսաղէմ՝ զարհուրեցոյց զամենայն հրէաստան։ Ամատակարար Թագաւորութեան յուզոյ և համարէն հրէաստանի էր յայնժամ յովակիմ, կամ (որպէս ունի լատինն և ասորին,) եղիակիմ մեծ քահանայ կամ քահանայապետ, որ ըստ որում ասացաք յիւրում տեղւոջ, ընդ Աշխարհիս ածպաշտութիւն ունէր յանձն իւր միացուցեալ զհանձար և զիմաստութիւն՝ի խոհական տնտեսութիւն ժողովրդեան իւրոյ։ Սա առաքեաց պատուէր բանիւ և գրով յամենայն կողմանս սամարիայ մինչև ցերիքով, և՝ի դովթայիմ, և առ բնակիչս յանդիման մեծի դաշտին եզրոմելայ, զի ամենեքին՝ի

զէն վառեսցին. և խոյս առեալ 'ի դաշտային տա-
փարակ տեղեաց, ուր ոչ կարէն հաստատել զոտս
հանդէպ աշխարհաժողով զօրուն ասուրայ, ելցէն
ամրասցին յամուրս լերանց, ուր անձկութիւն կրձին
անդորձ արասցէ զբազմութիւն թշնամւոյն։ Այս նո-
րոգեալ զամրոցս լերանց. բաշխեաց զէնս լեռնա-
կանաց. ելից զշտեմարանս պարենից. և ետ փա-
կել զամենայն կիրճս և զնեղ անցս, ընդ որս հնար
էր հողոփեռնեայ գալ յերուսաղէմ։ Այլ զմե-
ծագոյն պատրաստութիւնն պատերազմական յանձ
հաստատեաց և 'ի ջերմեռանդն աղօթս։ Ամենե-
քեան սա ՝ն դիմեցին, ամենեքեան խոնարհեցան
անկան առաջի նորա. և առ առաւել շարժելոյ
զգուութ ամենողորմ ՝ն, յաղօթսն յաւելին և
պահս. և արք, և կանայք, և քահանայք արկին
քուրձ զմիջովք, և մոխիր զգլխովք. և ամենայն
այր իսրայէլի կանամբք և մանկամբք 'ի գուշս ի-
ջեալ առաջի տաճարի ՝ն, աղաչէին զ՝նձ. և առ 'ի
ցուցանել զսուգ և զհասարակաց ապաշխարութիւն՝
արկանէին քուրձ և զսրբութիւն սեղանօքն. և կար-
դային առ ՝ն միաբան 'ի միասին յամենայն սրտէ։
Այս որպէս է տեսանել 'ի լատինն, եղիակիմ մեծ
քահանայ եղ և շրջեցաւ անձամբ յամենայն սահ-
մանագլուխս երկրին իսրայէլի՝ զնեալ զամենայն
դիրս տեղեաց, ուր կարգեալ կային պահնակք 'ի
պահպանութիւն անցից. և յորդորէր քաջալերէր և
խրախուսէր զնոսա տեսեալ յաղօթս 'ի խնդրուածս
և 'ի պահս, խոստանալով նոցա հանդիսիլ ողոր-
մութիւն ՝ն։ Զուշ առնէր նոցա զմեծն մովսէս՝ որ
ոչ կառաջ և ոչ հեծելովք, և ոչ սրով, այլ աղո-
թիւք խորտակեաց զամաղէկ։

ԳԼ. Բ.

Հողոփեռնէս մատնէ զայիրովը 'ի յեռաս եբրայեցւոց։ Լսեալ զանցս ջրոյն՝ ոչ երկնչէր 'ի խաղաղն։

Զայս ամենայն պատրաստութիւն որդւոցն իսրայելի լուեալ Հողոփեռնեայ, և 'ի միտ առեալ թէ նոքա պատերազմաւ զդէմ ունել խորհին, և ոչ թէ խոնարհիլ և անձնատուր լինել նմա, իբրև զհուր բորբոքեալ վառեցաւ բարկութիւն նորա։ Զ.մլ զի անծանօթ էր նմա երկիրն և ազգն իսրայելեան, կոչեաց 'ի ժողով ատենի պատերազմի զզօրագլուխս մովաբացւոց և ամմնացւոց զնիզակակիցս իւր, որոց բազում անգամ բազում պատերազմունս մղեալ էր ընդ եբրայեցիս. ուստի և տեղեակ էին հանգամանաց երկրին և ազգի նոցա։ Լ.հարց ցնոսա, թէ զինչ ժողովուրդ են սոքա, զինչ լերինքդ, զինչ ձանապարհք, զինչ և ո՞ր պիսի քաղաքք նոցա. և յինչ յոյս վստահացեալ են դոքա միայն՝ դիմագրաւ լինել զօրուն ասուրայ, որում ցայս վայր ամենայն բնակիչք արևմտեայց խոնարհեցան։ Լ.ր 'ի խորհրդեան անդ և մեծ սպառրապետն և առաջնորդ ամենայն ամմնացւոց՝ աքիորը անուն, այր առաքինի որպէս 'ի զինուորական, նոյնպէս և 'ի բարոյականն՝ զգօն և խոհական, անկեղծ և մտնենդ. հեռի 'ի մարդեղոյզ շողմութեց. համարձակ և պարզ 'ի բանս՝ յորժամ իրաւունքն տային ազատութեան լեզուի նորա։ Տեղեակ էր ամենայն անցից և իրաց եբրայական ազգին 'ի սկզբանէ անտի նոցա։ Գիտէր և զայս, թէ պարտ է քաջ սպարապետին գիտել ոչ միայն զտեղագրութեան երկրին, ուր ունի մղել պատերազմ, այլև զանցս պատմութեց նորա։

Լ.րդ՝ սա յառաջ մատուցեալ՝ ասէ ցՀողոփեռնէս. եթէ հաճեսցի տրդ լսել բանից ծառայի

քո, պատմեցիր քեզ զՀիմարիան. ժողովուրդն որ բնակեալ են 'ի լեռնակողմանսդ՝ են յազգէ քաղդեացւոց. որք ոչ կամէին պաշտել զդիս երկրին զորս պաշտէին նախնիք դոցա, երկին անտի և պանդխտեցան 'ի միջագետս. և մերժեալ զբազմութիւն աստուածոց, պաշտեցին զմի միայն ճշմարտեալ Ծանեան։ Լաւ նորին հրամանաւ եղեալ անտի՝ եկին բնակեցան 'ի խառան յերկիրդ քանանու. և մեծացան անդ ոսկւով և արծաթով և անասնով բազմաւ. ապա 'ի պատճառս մեծի սովոյ՝ որ եղև յերկրին քանանու, անցին յեգիպտոս. ուր ընդ յորեքհարիւր ամն (որպէս ունի լատինն) այնչափ բազմացան, զի ոչ էր թիւ ազգի նոցա։ Բ. Բքայն եգիպտոսի յարչարեաց զնոսա յազիւսագործութիւս և յայլ ծանր աշխատութիւն՝ 'ի շինութիւն քաղաքաց և ամրոցաց. իսկ նոքա կարգացին առ ածն իւրեանց, և նա եհար զանազան հարուածովք զամենայն եգիպտոս։ Յայնժամ արձակեցին զնոսա ելանել յերկրէ անտի. այլ (որպէս յաւելու լատինն) յետոյ ստրջայեալ արքայն եգիպտոսի յաղագս արձակելոյ զնոսա՝ մնդեցաւ զորու ծանու զհետ նոցա անդրէն դարձուցանել զնոսա. այլ ածն նոցա էբաց առաջի նոցա ցամաք ճանապարհ 'ի կարմիր ծովու, ամբարձեալ զջուրսն աստի և անտի իբրև պարիսպ. և այնպէս ցամաք ոտիւք անցին ընդ ծովն. իբրև զհետ մտին նոցա եգիպտացիք ընդ այն շաւիղ, դարձան ջուրքն և ծածկեցին զնոսա խսպառ. մինչև յանհամար բազմութիւնն անտի չմնալ և ոչ միոյ ապրեալ։ Իսկ երբայեցիք ելեալ անտի՝ չքան կալան զլեառն սինայ և զանապատն, ուր ոչ երբեք բնակեալ էր մարդոյ։ Լառն ջուրք վասն նոցա քաղցրացան. և ընդ ամն քառասուն ընկալան յերկնից կերակուր։ Ամ և հասին, միշտ յաղթող հանդիսացան՝ առանց սղեղանն, առանց նետից, առանց վահանի և առանց սրոյ. վասն զի ածն նոցա պատերազմէր զպատերազմն նոցա։ Ոչ եղև երբէք որ կարող նուաճել զզ-ժողովուրդդ զայդ, եթէ ոչ՝ յորժամ մեղանչէին

առ ՝ծն իւրեանց։ Յորժամ թողին զոքա զՀոգ իւրեանց, և պաշտեցին զաստուածս օտարս, մատնեցան յաւար, և ՝ի սուր, և ՝ի նախատինս ամենայն ազգաց, և յորժամ զարձան կատարեալ սրտիւ առ ՝ծն իւրեանց, անդրէն զօրացան։ Խոստովանք քանանացւոց, յեբուսացւոց, փերեզացւոց, քեռացւոց, խևացւոց, ամովրհացւոց, գերգեսացւոց. և ամենայն թագաւորութիւնք եսեբոնայ ՝ի պարտութիւն մատնեցան առաջի դոցա։ և տիրեալով երկրի նոցա՝ բնակեցին ՝ի նոսա։ Մինչ ոչ մեղանչէին ՝ի յայ իւրեանց, եր ընդ նոսա ամենայն բարութիւն։ Զ՝ծ նոցա ատեայ զանիրաւութիւն։

Յայս վերջին ժամանակս յորժամ ՝ի բաց կացին ՝ի պահպանութիւն օրինաց պատուիրելոց նոցա յայ իւրեանց, հարան ՝ի պատերազմունս բազումս յոյժ, և գերեցան յերկիր օտար ՝ի զանազան ազգս. և այժմ զարձան առ ՝ՀՐ ՝ծ իւրեանց։ Խողովեաց զնոսա ՝ծ ՝ի գերութիւն ուր կին ցրուեալք. և բնակեցին ՝ի լեռնակողմանդ. և կալան զքաղաքն երուսաղէմ, ուր է սրբութիւն կրօնի նոցա։ Չէ արդ այժմ ՝ՀՐ, այս են իմ կարծիք. տեղեկացիր թէ զիարդ են նոքա ընդ ՝այ իւրեանց. եթէ հեստեալ էն նմա և մեղուցեալ, ելցուք ՝ի վերայ նոցա համարձակ, զի յաղթեմք նոցա։ Զ՝պա թէ չիցէ ինչ նոցա անիրաւուն առ ՝ծն իւրեանց, զանց արասցուք առ նոքաք ՝ՀՐ. զի անտարակոյս՝ լինիցիմք յամենի նախատանաց ամենայն երկրի։ Զ՝այսպէս խօսեցաւ աքիորը սպարապետ անկեղծ, և տեղեակ ամենայն իրաց որդւոց իսրայէլի։ Զ՝այց որ հարցանէ մեղադնարար, չիք ՝ի նմա միշտ յօժարութիւն լսել հանդարտութիւն։ Կատաղեցաւ հողոփերնէս և ամենայն ժողովն ընդ նմա. զի հայհոյուն մեծ թուեցաւ առաջի նոցա՝ ասելն աքիորայ, թէ ՝ծն իսրայէլի հզօր է քան զնաբուքոդոնոսոր. վասն որոյ անդրէն և անդ իբրև հայհոյիչ կամին սպանանել զիմաստուն խորհրդականն. այլ վճռեցին մերժել զնա ՝ի բանակէ իւրեանց, և մնանել ՝ի ձեռս իսրայէլացւոց. եթէ յաղթեսցեն նոքա (զոր անհը-

նար համարէին), թող բարի լիցի և նմա. ապա թէ ոչ՝ 'ի միասին ընդ նոսա լիցի Ճարակ սրոյ ա-սուրայ։

ՅաՃոյ թուեցաւ հողոփեռնեայ բան ժողովոյ զօրապետաց. որոշեաց հատուած մի 'ի զօրուէն, և տուեալ զաքիովը 'ի ձեռս նոցա՝ պատուիրեաց տանել 'ի բետիղուա, և մատնել զնա որդւոց իս-րայելի։ Այլ զի՝ ըստ ցուցանելոյ լատին բնագրին, ընդ այն անօրէն գործ՝ նշան ինն երկիւղի երևե-ցոյց աքիովը յերեսս իւր, զոր ոչ կարաց պատրուա-կել, ասէ ցնա ամբարտաւանն հողոփեռնէս հեգ-նելով. լունելիր ինչ այլագունիլ, եթէ Ճշմարիտ լինիցին գուշակութիւք քո. բայց յայդ մի ինչ վստահ լինիցիս. զի խօսեցայ, և ոչ անցանէ բան մի 'ի բա-նից իմոց։ Այլան զօրք ասուրայ և կապեցին զնա. իսկ ամենացիք բռնադատեցան լուել և տանիլ այնմ մեծի նախատանաց. զի չէին բաւական ոչ թուով և ոչ զօրութիւն զվրէժ սպարապետի իւրեանց առ-նուլ 'ի նոցանէ։ Իսկ որք ածէին զնա՝ իբրև հա-սին յոտս լերինն բետիղուայ, զկայ առին. զի էլ ընդդէմ նոցա 'ի քաղաքէ անտի խումբ մի պարսա-ւորաց յիսրայէլացւոց անտի։ Որքա կշռելով 'ի միտս իւրեանց թէ ոչ կարիցեն ստանալ ինչ նոցա, որք 'ի բարձանց անտի քարաձիգ լինէին 'ի վերայ սո-ցա, խոյս եդուն ընդ լեռնոտամբն. անդ կապեցին զաքիովը 'ի կոՃղ ինչ, և փախեան։ Այլ որդիքն իսրայէլի իջեալ, և գտեալ զնա կապեալ, լուծին և տարան 'ի բետիղուա։

Հողովեցան 'ի վերայ նորա ծերք և ամենայն ժողովուրդ քաղաքին, հարցին ցնա թէ վասն ի՞նչ եղև ընդ նմա այն անցք. և նա պատմեաց Ճշմար-տութիւն զամենայն զոր խօսեցաւ 'ի ժողովի անդ իշխանացն ասուրայ. և զոր ինչ միանգամ մեծաբա-նեալ խօսեցաւ հողոփեռնէս վասն տանն իսրայէլի։ Զայն իբրև լուան՝ ամենեքեան 'ի գուՃս իջեալ, տաղտկացեցին արտասուալից պաղատանօք առ-նոր նած երկնից. և զաքիովը մխիթարեցին յուսալ 'ի բարի. և ոչինչ որ էր յայնժամ իշխան և մատակա-

բար քաղաքին, եւ նմա ինքեանս 'ի տան իւրում. եւ արար նմա կոչունս՝ հրաւիրեալ եւ զծերս եւ զքահանայս առ 'ի պատիւ նորա։ Զ.պա վերստին ժողովեցան ամենայն իշխանք եւ ծերք եւ քահանայք, եւ ամենայն ժողովուրդն ընդ նոսա միացեալք յեկեղեցի, եւ զդիէրն զայն ամենայն կարգացին առ ոտն ոծ իսրայէլի։

'Ի վաղիւ անդր պատուիրեաց հողոփեռնէս ամենայն զօրու իւրում հարիւր եօթանասուն հազար հետեւակազօր պատերազմողաց, եւ երկոտասան հազար հեծելազօր վառելոց, (թող զանհամար բազմութիւն ընտիր ընտիր երիտասարդաց, զորս յաւել 'ի զօրս իւր յամենայն գաւառաց և քաղաքաց նուաճելոց, թող և զայլ ռամիկն ամենայն,) գնալ ելանել 'ի վերայ երկրի լեռնակողմանն 'ի բետիղուա։ Զ.ուստ հրամանի նորա քանի մի գունդք յառաջապահք յառաջ խաղացեալք ընդ պատառուած լերինն, երկին բանակեցան 'ի գլուխ բեղբեմ լերին, որ հայի 'ի դովթայիմ մինչև 'ի կիամ. որ էր յանդիման գլխոյ լերին, յորոյ վերայ էր բետիղուա քաղաք, զոր խնդրէին պաշարել. քայց չէր այն գործ թեթև. զի էր անդ ձոր մեծ և խորին յոյժ անջրպետ. որ զլեառն զայն քաժանէր յերկու լերինս։

Զբրև տեսին որդիքն իսրայէլի 'ի քաղաքէ անտի զթշնամին 'ի գլուխ անդր մերձակայ լերին, և 'ի ձորս և 'ի դաշտս անթիւ բազմութիւն սփռեալ իբրև զմարախ, (ասէ լատին բնագիրն,) անկան 'ի վերայ երեսաց իւրեանց յերկիր, հող զգլխով արկանէին, և միաբան յոգնութիւն կարգային զամենազօր զամենողորմ՝ոծ. ասա այր իւրաքանչիւր զէն 'ի ձեռին գնացին կացին 'ի պահպանուն նեղ անցիցն, ընդ որս և էթ հնար էր թշնամւոյն մերձենալ 'ի պարիսպս քաղաքին։ Զ.ու զայգ և զցերեկ արթնուք հսկէին ամենայն զինուորական այալքը ջուրթք, ոչ զանց առնելով և ոչ զմիով պատերազմական կանոնաւ։ Զ.յսպէս պարտ է առնել և այնմ՝ որ դնէ զյոյս իւր յոծ։ Զ.պաւինութիւն որ

անգործ և դատարկ առնէ զմարդ, ոչ է յոյս, այլ յանդգնութիւն։ Զ.ծ զօրացուցանէ զքնոս, որ ա-ռանց նորա առ ոչինչ զօրէր. 'ի տալ նորա զգնու-թիւն իւրոյ կարողութիւն, կամի զի և մարդն յիւրմէ կողմանէ 'ի վար արկցէ զամենայն զգուշութիւն և զհանձար։

Կատաղէր հողոփեռնէս՝ իբրև տեսանէր, զի մի միայն լեառն նահանջ արկանէր ընդդէմ ամենայն ձգանց և յառաջադիմութիւն իւրոց փառաց։ Կայր եգիպտ հնարս ինչ, որով թուեցաւ նմա սակաւ աշ-խատութիւն հանել զգործ պատերազմին 'ի գլուխ։ 'Ի զննել նորա զդիրս տեղեաց, և զանցս ձանա-պարհաց, ետես ջրմուղ, ընդ որ երթայր ջուրն 'ի քաղաք անդր. ետ վաղվաղակի խնուել զնա. և ապա փոխեաց զխորհուրդ իւր, ոչ ևս դիմել պատերազ-մաւ 'ի վերայ քաղաքին. այլ նստիլ հանդարտեալ և հատանել զջուրն. զի չունելով բնակչաց քաղա-քին զվերջին կարևորն զայն տարր, ինքնին ստի-պեացին լինել անձնատուր առանց մարտի պատե-բազմի։ Կային 'ի քաղաքի անդ գուբք յոլովք, և բաց յայնցանէ, (որպէս ցուցանէ լատինն) էին աղ-բիւրք ջրոց և արտաքոյ պարսպաց քաղաքին ոչ կարի ինչ 'ի բացեայ. յորոց բնակիչք քաղաքին մերթ ընդ մերթ գաղտագողի փախստեամբ առնուին ջուր, ոչ այնչափ 'ի յագուրդ ծարաւոյ, քան թէ առ դոյզն ինչ զովացուցին։ Զ.մոնայիք և մոլաբա-ցիք տեսին 'ի տեղեացն ուր էին բանակեալ՝ զաղ-բիւրսն, և զառնուել անտի բէտիղուացւոց ջուր՝ ծա-նուցին զայն հողոփեռնեայ. և նա հաւանեալ ընդ խորհուրդ նոցա, որք ասացին պահել զաղբիւրսն, կացոյց առ իւրաքանչիւր աղբեր հարիւր զինուորս. զի մի ոք 'ի քաղաքէն այնուհետև իշխեսցէ մերձե-նալ 'ի նոսա և առնուլ անտի ջուր։

Զետ աւուրց երեսուն և չորից այսր պաշար-ման՝ սկսաւ քաղաքն 'ի վերջին կարօտութեան ջրոյ հասանել. չափով և կշռով տային ժողովրդեան զջուր ըմպել որչափ ինչ բաւական էր միայն ապրիլ և առ զովացուցանել զպապաքուն։ Զ.ս այնուհետև

հարկ էր իշխանաց քաղաքին պատերազմիլ ոչ միայն ընդ արտաքին թշնամիս, այլև 'ի ներքս անդ ընդ քաղաքացիս։ Զի պաշարմունս քաղաքաց չիք մեծաւ դոյն վիշտ կառավարչաց՝ քան զխառնիճաղանձ բազմութիւն մարդկան՝ կարձամիտ և անհամբեր նեղութեանց. ցորվայր չպակասի ինչ նոցա, արիք և համբերատարք երևին. այլ ընդ սկսանիլ նուազիլ կարևորաց, եթէ ոչ դիցի սանձ նոցա, միաբանին 'ի յարուցանել խռովութիւն։ Զ.յսպէս պատահեաց 'ի բետիղուսա. զի արք և կանայք, երիտասարդք և մանկունք պարտասեալք և լքեալք 'ի ծարաւոյ, ժողովեցան 'ի վերայ ոգւոյ և 'ի վերայ իշխանաց քաղաքին, և լալով ձայնիւ մեծաւ ասէին. դատ արասցէ Ա՛ծ 'ի մէջ մեր և ձեր, զի արարիք առ մեզ իբրս անիրաւութիւն, առ 'ի չխօսելոյ ձեր 'ի խաղաղութիւն ընդ որդիսն ասուր։ Զ.ըդ՝ տուք յաւար նոցա զքաղաքս ամենայն. զի լաւ է մեզ լինել 'ի յափշտակութիւն նոցա և 'ի ծառայութիւն, միայն թէ կեցցեն անձինք մեր. քանզի ոչ կարեմք տեսանել զմահ տղայոց և զկանանց աչօք մերովք. զի պակասեալ սպառեալ են ոգիք նոցա։ Զեր լատինն այս պէս ընթեռնու. * Զ.ըդ տուք զքաղաքս 'ի ձեռս հողոփեռնեայ, և լեցի վախճան մեզ համառօտ 'ի բերան սրոյ, որ երկարի 'ի պաքոյ ծարաւոյն ‖։ Զ.յլ յայնմ մեծի ամբոխման ոչ անցին նոքա՝ որպէս սովորութիւն է՝ զչափ. զի զկնի առաջի առնելոյ զաղէտս իւրեանց, ամենայն ժողովն 'ի միասին դիմեցին յաղօթս գոչելով առ Ա՛ծ ձայնիւ մեծաւ։

Զգնա իշխան յորում երկու իրք դժուարակցորդք գերբերինակ ինն միաւորեալ կային, սիրտ գորովական, և լանջք պատերազմական. կարեկցէր ընդ տառապանս ժողովրդեան, զոր եցոյց արտասուօք 'ի խօսիլն ընդ նոսա (որպէս ունի լատինն), այլ ոչ գիտէր ցանուլ ընդ ամբոխումն նոցա։ Զ.սա զինուորական կանոնաց տեսանէր զքաղաքն յայն վիճակ հասեալ, զի մարդկօրէն խորհելով ոչ գոյր այլ հնար, բայց տալ զնա 'ի ձեռս թշնամւոյն։ Սակայն սիրտ նորա վկայէր, թէ Ա՛ծ զկնի այնչափ

պաղատանաց երևեցուսցէ զօգնութիւն իւր։ Կարի ծանր էր նմա, զի հայհոյիչ ամբարտաւանն տեսեալ զքաղաքն նուաճեալ ընդ իւրով ձեռամբ՝ հաստատեսցէ զՀայհոյութիւն իւր։ Յուշ լինէր նմա քաջ սպարապետն աքիոմը՝ որ 'ի մահ դատակնքեցաւ, իբր զի 'ի խօսիլ իւրում առաջի հողոփեռնեայ՝ եցոյց զգերագոյն կարողութիւն այն իսրայէլի. և այժմ խիթալի էր՝ թէ գուցէ կորուսանիցէ նա զայն խորհուրդ առաքինի, եթէ զքաղաքն զայն՝ զոր ետես այնչափ արտասուօք, աղօթիւք և պահօք սրբեալ, տեսցէ մատնեալ յայ 'ի ձեռս թշնամւոյն 'ի կորուստ։ Այլ և զայս խորհէր, թէ որ է ոճծ, և հեռագոյն ևս տեսանէ՝ ուր ոչ ժամանէ մերս տեսուն. և եթէ թոյլ տայ երբեմն անօրինին զօրանալ և հարստահարել զարդարն, ինքն գիտէ զնորհուրդ իւր գաղտնի. մեք յամենայն թշուառութիս մեր պարտապան եմք երկիրպագանել տնտեսութեց իւրումն ոճծային նախախնամութիւն, որ յամենայնի է արդար և ոճ։

Գ.Լ. Գ.

Ալչիա սպիպեալ 'ի ծողովրդենէ՝ խոսպանայ մատնել զչաղաքն 'ի յեթաս ընչանոցն։ Այլ յոտքէն ոչ նշոսպուանն, և քրիստ զչաղաքն։

Յայսպիսի յուզմունս խորհրդոց գոլով ողիսայ՝ տեղեկացաւ անվրէպ, թէ որչափ ջուր կայցէ տակաւին 'ի քաղաքի անդ. և իմացեալ եթէ կայ դեռևս վասն հինգ աւուրց՝ ձշդիւ բաշխելով, այնչափ ինչ խոսեցաւ և արար, զի հանդարտեցոյց զբաղմութիւնն, և ետ համբերել նոցա սակաւ ինչ ժամանակ ևս. խոստանալով երդմամբ, զի թէ 'ի

հինգ աւուրս ոչ առաքեսցէ ՝ն ծ զողորմութիւն իւր, արասցէ ըստ բանից նոցա։

Լոյր ՝ի բեթիղուա տիկին մի մանկամարդ. որ ազնուութիւն տոհմի, պայծառութիւն գեղոյ երեսաց, հրեշտակային համեստութիւն, և անարատ վարուց սրբութիւն փայլէր իբրև զարեգակն ՝ի մէջ ժողովրդեանն բեթիղուայ։ Նոյն նորա Յուդիթ դուստրն մերարեայ, այրի յերից ամաց, և ՝ի չորից կամ ՝ի վեց ամսոց. քանզի այր նորա մնասեալ յաղդէ նորուն, և ՝ի հայրենեաց նորա մեծատուն և ակնաւոր ՝ի քաղաքի անդ՝ վաղահաս մահուամբ յափշտակեցաւ ՝ի կենաց, հարեալ ՝ի խորշակէ՝ մինչ կայր ՝ի վերայ հնձողաց իւրոց ՝ի դաշտին. և զնա ինքն զյուդիթ եթող ժառանգ ամենայն հարստութիւն իւրոյ։ Քանչելի ինն էր յայնպիսի ազնուութիւն, յայնչափ մեծութիւն, և յայնպիսի գեղեցկութիւն՝ չլինել նմա գէթ ՝ի գոյզն ինչ ընչոյ մնափառութիւն երբէք նսեմացեալ։ Որչափ մեծատուն էր, այնչափ համեստ էր, խոնարհ և ժուժկալ. հանդերձ նորա քուրձ ՝ի վերայ միջոյ, արկեալ ՝ի վերայ զհանդերձ այրութեան. սեղան նորա պահօք էր պատրաստեալ. տունն նորա էր նմա իբրև մենարան, ուր կամաւոր փականօք նստէր առանձնացեալ ընդ իւրոց աղախնեաց։ Նոյն նորա հոչակեալ էր, ամենեքեան խօսէին զնմանէ. այլ ոչ ոք գիտաց ասել երբէք բան ինչ անպատեհ զնմանէ. զի երկիւղած էր նա յոյժ ՝ի ՝ն ։

Զդ իբրև լուաւ յուդիթ զդաշնադրութիւն, զոր եդ ոզիա ընդ ժողովրդեան՝ մնասցէ զքաղաքն ՝ի ձեռս թշնամւոյն, եթէ ընդ աւուրս հինգ ոչ առաքեսցէ ՝ն զօգնութիւն իւր, վշտացաւ յոյժ. և առաքեալ կոչեաց զոզիա, և զքաբրին, և զքարմին զգլխաւորս իշխանաց, աղաչելով գալ առ նա, զի խօսեսցի յունկն նոցա կարևոր ինչ բան։ Նոքա. և յուդիթ իւրով ընտանի համեստութիւն, բայց միանգամայն և ՝ն ծ ային նախանձու յայտ արար նոցա, թէ ամենայնիւ պարսաւելի է ուխտն՝ զոր ուխտեցին ժողովրդեան, չափ և սահման դնելով խոր-

հրդեհ կամացն ՝ոյ. արար նոցա ջերմ յորդորակս
'ի հաստատութիւն. եցոյց զպարտս զոր ունէին միմ-
թարել և քաջալերել զաւգմութիւն. եդ առաջի
նոցա բանս և օրինակս որով պարտ էր նոցա պա-
հել զժողովուրդն 'ի համբերութիւն և 'ի ջերմութիւն
առ ՝ած։ Իսկ նոքա քաղցրութիւն ունէին մատուցեալ
ամենայն բանից նորա, յանձն արարին զանձինս և
զքաղաքն ընդունական աղօթից նորա. և խոստո-
վան եղեն՝ եթէ ամենայն բանք բերանոյ նորա ար-
դար էն և ՝ծ և ՝ծային։ Այս վերջին բան ա-
ռեալ տիկինն իմաստուն 'ի բերանոյ նոցա՝ ասէ
ցնոսա. արդ՝ որպէս ճանաչէք լինել առ յ՝ոյ զոր
ինչ խօսեցայ, նոյնպէս դիք 'ի մտի՝ յ՝ոյ լինել և
զայն, զոր խորհիմն առնել. և աղօթս արասջիք
զի հաստատեսցէ ՝որ զխորհուրդս իմ։ Կացջիք դուք
զդիշերս զայս առ դրան քաղաքիս՝ որ հանէ 'ի
դաշտ անդր. և արասջիք զի բացցի ինձ դուռն, և
թոյլ տացի ինձ ելանել նաժշտաւս իմով։ Այլ դուք
մի քննէք զգործն՝ զոր գործելոց եմ. գիտասջիք
զայն՝ յորժամ դարձայց, և ես ինքնին պատմեցից
ձեզ։ Իսկ դուք յաճախեցէք յաղօթս. զի յայս ան-
ձուկ միջոց ժամանակի, յոր ուխտեցիք մատնել
զքաղաքն, այցելու լիցի ՝որ ՝ած 'ի ձեռն իմ։ Ի՝եծ
հաւատն զոր ունէր ամենայն ժողովուրդն 'ի՝ծ տի-
կինն, արար զի իշխանքն հաւանեցան նորին առաջ-
արկութիւն առանց քննելոյ զխորհուրդ նորա։

Նոքա դարձան 'ի տեղիս իւրեանց. և յուդիթ
'ի բաց հանեալ յանձնէ զաղնիւ հանդերձս՝ որովք
ընկալաւ զիշխանս 'ի տուն իւր. զդեցաւ անգրէն
զքուրձ, և ցանեաց մխիթր 'ի վերայ գլխոյ իւրոյ.
և ջերմեռանդն պաղատանօք կարդաց առ ՝որ ՝ած՝
երիս շնորհս խնդրելով։ Ի՝ զի զհողոփեռնէս իմ-
բռնեսցի 'ի գեղ երեսաց, և 'ի բանս շրթանց իւ-
րոց. և այն առանց մեղաց. քանզի գիտէր՝ զի ինքն
սովիմբ ոչ լինէր առիթ չարուն. իբր զի գոլով ազատ
յառնէ՝ չէր ինչ նմա փոյթ թէ հոգոփեռնէս ցան-
կասցի առնուլ զինքն կնութիւն օրինօք. և զայն ևս
գիտէր՝ զի ինքն ՝ով կարէ վաղագոյն կարձել զնա

'ի կենաց, և 'ի զլուխ տանել զնորհուրդն յաղթութիւն։ Երկրորդ՝ պահել զնա և չթողուլ լինել որս չարամարտ փաղաքչանաց հողոփեռնեայ. զի ունելով 'ի սրտի գործ մեծի արիութիւն գործել, երկրնչէր զի մի 'ի կանացի տկարութիւն մեղկեալ յաղթեսցի. զիտելով թէ քանի դժուարին է կնոջ՝ որ տեսանէ զանձն սիրեցեալ, պատուեալ, և փայփայեալ, պինդ ունել զանձն՝ առանց զնոյնօրինակ սէր և զղջատիւ փոխարինելոյ։ Երդեալ էր 'ի մոլ առ սուղ ինչ ժամս և եթ մնալ 'ի խորանն հողոփեռնեայ. այլ երկնչէր թէ և այն սուղ կենակցութիւն կարող էր յափշտակել զսիրտ նորա. և յաղթել նմա. վասն որոյ աղաչէր՝ զի մի տկարասցի և յաղթեսցի. զի ոչ երթայր մնոտի զննութիւն աղագաւ, կամ 'ի կանացի ինչ ընդունայն հաճութիւն. այլ միայն յաղագս փառաւորելոյ զնոյն, և փրկելոյ զժողովուրդ իւր, և զտաճարն սրբութեան։ Երրորդ՝ յաջողել զնորհուրդն ազդեալ նմա 'ի հոնէ. զի իւրով անզգոյ և տկար բազկաւ սպանցէ զվիրագն զայն՝ ոչ առ մարդկային մնոտի փառաց, այլ առ առաւել լուսափայլութիւն հաճային կարողութիւն, յաղթելով այսմ ահաւոր բանակի անհամար զօրաց 'ի ձեռն կնոջ։ Այս են երբեակ շնորհք խնդրեալք յուղիթայ 'ի հոնէ. որք և շնորհեցան նմա անթերի։

Յետ այսպիսի աղօթից մերկացաւ յիւրմէ զքուրձն, և 'ի բաց եհան զհանդերձն այրութեան. լուացաւ, օծաւ իւղով անուշիւ. զգեցաւ զհանդերձս ուրախութեան. կապեաց զմեծագին զսպարօշն 'ի ձեռսն իւր, և զարդարեցաւ ամենայն շքեղութեամբ և փառաւք իբրև զհարսն շքեղաշուք։ Այլ զի յայս ամենայն շքեղազարդութիւնս ոչ գոյր մնան, կամ ստուերք ինչ մնափառութեան կամ անպատեհ ցանկութիւնք, հոգ ևս յաւել 'ի գեղ նորա առանձին ինչ շնորհ և պայծառութիւն 'ի հիացումն։ Այլ ընդ իւր զաղախին մի և եթ. և ետ ցնա զմխաղն լի փոխրնդով, և այլ պաշարօք. և զհաղաղակն գինւոյ 'ի դարման անձինն 'ի բանակի անդ. զի մի ստիպեսցի

1990
ՀՍՍՀ-ՍՍՌ.

պղծել զանձն անոր։ Եւ եկեալ 'ի դուռն քաղաքին, եգիտ անդ զոգիա և զքահանայսն, և զբարբին և զբարմին զիշխանս. որոց տեսեալ զՀրաշալի գեղ նորա՝ հիացան. և արձակեցին զնա երթալ, հայցելով 'ի ներսէ յաջողութիւն յառաջադրութեան նորա։ Եւ յուզիթ նորա գեաց զպաղատանս իւր առ ած, և եկ ընդ դուռն քաղաքին, և գնաց ընդ ծործոր հովտին ուղիղ ընդ ճանապարհն։ Ցեսին զնա պահապանք ասորեստանեայց. հարցին ցնա, ո՞վ իցէ, ուստի գայ, և զի՞նչ խնդրէ. և 'ի տալ նորա զպատճառ գալոյ իւրոյ ըստ հաճոյից նոցա, որպէս թէ ունի ցուցանել զդիւրին հնարս մտանելոյ ներս նոցա 'ի քաղաքն, ոչ ոք իշխեաց նեղել զնա։ Եւ զարմացեալ ընդ պայծառութիւն գեղոյ նորա, և ընդ համբաւութիւն բանից, ածին զնա պատուով 'ի բանակն. և ըստ հրամանին հոլոփեռնեայ՝ մուծին 'ի ներքս 'ի խորան անդր առաջի նորա։

Գիտէր իմաստուն տիկինն վարիլ ընդ առն փառամոլի. ուստի այն ինչ յինքն յափշտակէր զաչս նորա գեղով երեսայ իւրոյ, կամեցաւ յափշտակել և զսիրտ նորա խոնարհութիւն անկեալ 'ի խոնարհ երկիր եպագ նմա, և խօսեցաւ ըստ հաճոյից նորա՝ ծանրացուցանելով զիշխառական վիճակ քաղաքին իւրոյ, յոր ցուցանէր առանց պատերազմի մուծանել զնա։ Այլ գիտաց այնպէս յարդարել զբանս իւր, զի առանց ընդդէմ հաճոյից հոլոփեռնեայ խօսելոյ ինչ՝ միշտ պահեաց զպատիւ ոյ ճշմարտի. չողբորթեաց առանց ստախօսուն, գովելով զնա իբրև հանճարեղ և իմաստուն քան զամենայն որդիս ասուրայ, իբրև մի միայն նեցուկ հաստատուն ինքնակալին ասորեստանեայց, և իբրև զօրագլուխ հաչակաւոր քաջակիրթ յամենայն զինուորական ձեռնարկս։ Այլայց թէ լուեալ է զամենայն, զոր ինչ խօսեցաւ աքիորը 'ի խորհրդեան սենեկի նորա. և հաստատելով զբանս նորա՝ յաւել, թէ ոչ ոք խորայելի բարկացեալ է յոյժ ժողովրդեան իւրում վասն մեղաց զոր մեղան նմա. և թէ՝ մտանեսցէ

զնոսա 'ի գերութեի 'ի ձեռս թշնամւոյ նոցա։ Այս վերջին բանք էին մարդարէութիւք որ կատարեալց էին յառնուլ նաբուքոդոնոսորայ արքայի բաբելացւոց գերուսաղէմ. բայց Հողոփեռնէս կաբծէր ամենայն մարդարէութեց լինել վասն իւր։ Յաւել յուդիթ ասել, թէ առաքեալ ինքն յոյ առնել ընդ նմա գործ մեծ, զորմէ զարմանացի ամենայն երկիր. և թէ ինքն պաշտէ զայն ածն ամենազօր. ուստի յորժամ թոյլ տացի նմա եկանել 'ի բանակէն՝ կալ ըստ սովորութեան յաղօթս առ ածն իւր, նա յայտնէ ինքեան զժամանակ կործանմանն իսրայէլի, և յայնժամ ես եկեալ տարայց զքեզ ասէ 'ի մէջ բեթիղուայ և 'ի մէջ երուսաղէմի։

Հողոփեռնէս և ամենայն զօրաւորք հիացեալ աղշեալ կային ընդ նա. և ուր 'ի սկզբան անդ ամենեքեան զգեղ նորա գովէին, զկնի լսելոյ զբանս բերանոյ նորա՝ ոչ յագէին 'ի գովելոյ զիմաստութիւն և զհանճար նորա։ Իսկ Հողոփեռնէս այնչափ հաճեալ հաւանեցաւ ի խօսիլ նորա, մինչև խոստացաւ թէ 'ի կատարիլ կանխասացութեան նորա՝ և ինքն պաշտեսցէ զածն յուդիթայ։ Չէ ասաց տանել զնա 'ի խորանն՝ որ կից էր իւրոյ խորանի. ուր պահէր զգանձ իւր, և զարկղն պատերազմի. և կերակուր հրամայեաց տանիլ նմա 'ի սեղանոյ իւրմէ. բայց յուդիթ հրաժարեցաւ 'ի կերակրոյ նոցա 'ի պատճառս իւրոց օրինաց. ասելով թէ ունի կերակուր բերեալ ընդ իւր 'ի քաղաքէն. և զի թուեցաւ Հողոփեռնէայ թէ առ սակաւ աւուրս իցէ այն նմա բաւական, վստահացոյց զնա յուդիթ թէ ոչ սպառեսցէ զկերակուրն իւր, մինչև արասցէ ածր 'ի ձեռս նորա զոր խօսեցաւն։

Ամենայն իրք յուդիթայ ցայս վայր յաջողեցան ըստ կամաց նորա. բայց առ 'ի կատարել անվտանգ զխորհուրդն իւր՝ կարեւոր էր յապահովացուցանել և զայլ իրս ինչ։ Զկն նա 'ի բառնալ զգլուխ Հողոփեռնէայ, և քաջ նախատեսանէր ունել դիպոզութիւն առ այն, յորժամ մնացանիցեն զնա 'ի խորան անդր միայն, և յայնժամ 'ի ննջել Հողոփեռ-

նեայ 'ի քուն՝ ինքն անքուն հսկելով տարցի 'ի գլուխ զգործն։ Այլ էր ինչ գիւրին կարող լինել ըստ ժամանակին խոյս տալ 'ի խորանէն, և ապրեցուցանել զանձն։ Այսն այնորիկ հարկ էր առնուլ ընդհանուր իմն ազատուն 'ի հողոփեռնեայ անարգել շրջելոյ, մնանելոյ, և ելանելոյ արտաքոյ բանակին՝ ոչ միայն 'ի ցերեկի, այլև 'ի գիշերի. յաջողեցաւ նմա և այս խնդիր։ Օ՛ի տեսեալ յուդիթայ 'ի հողոփեռնէս յոյս և վստահութիւն մեծ 'ի վերայ իւր, թէ կարող է և կամի ստանալ յոյ իւրմէ զամենայն բարի վասն նորա, ասաց ցնա, թէ առ 'ի վճարել զիրսն ընդ ոյ՝ հարկ էր նմա մեկուսանալ ընդ ժամն ինչ գիշերոյ արտաքոյ բանակին միայնիկ իւրով նաժշտաւ, և երթալ խօսել ընդ ոյ իւրում, և բերել նմա զպատգամն նորա։ Հողոփեռնէս գրաւեալ գլխովին 'ի սէր յուդիթայ՝ ոչ կարաց 'ի կասկած ինչ դաւառանութիւն անկանիլ 'ի խնդրոյ ասսի նորա. վասն որոյ շնորհեաց զնդրեալն, խստիւ պատուիրելով պահապանաց, զի մի բնաւ ոք արգել լիցի նմա երթալ և գալ երբ և կամիցի. հրամայեաց և իւրում սենեկապահի զի դուռն խորանի իւրոյ միշտ բաց կացցէ առաջի յուդիթայ ըստ ամենայն հաճոյից նորա։

Օ՛այս ազատութիւն առեալ յուդիթայ՝ սկսաւ 'ի նմին իսկ գիշերի, և յայլ երկու յաջորդ գիշերս ելանել 'ի բանակէն, և երթալ մինչև 'ի ձորն բետիղուայ. և անդ լուանայր ըստ օրինաց յսղբերս ակամակիտ ջուրցն, և կայր յաղօթս առ ոյ՝ յաջողել նմա 'ի փրկուն որդւոց Ժողովրդեան իւրոյ. և դառնայր անդրէն։ Այսպէս արար զերիս գիշերս, զի կարծիցեն զայն իբր սովորական իմն պաշտօն կրօնի իւրոյ։ Յաւուր չորրորդի հրաւիրեցաւ յուդիթ յընթրիս հողոփեռնեայ. և կալ մնալ ընդ նմա 'ի խորանի անդ նորա զգիշերն զայն։ Յուդիթ քաջ հնարագէտ 'ի պատրուակել զանձն՝ ընկալաւ խնդուքն զհրաւէրն ըստ ամենայն մասանց։ Այրար հողոփեռնէս ընթրիս պայծառ. և արբ նա գինի սաստիկ յոյժ, որչափ ոչ էր արբեալ երբեք յաւուրս

կենաց իւրոց. յուդիթ բազմեցաւ 'ի վերայ բազմա-
կանի զոր արկ նմա նաժիշտն իւր դեմյանդիմանն
հողոփեռնեայ. և ան և կերաւ և արբ առաջի նո-
րա զոր պատրաստեաց նմա աղախինն իւր. և 'ի
սեղանի անդ երևեցուցանէր զանձն կայտառ և
զուարթագին. և 'ի յորդորել զնա հողոփեռնեայ ու-
րախ լինել ընդ նմա, ասէ յուդիթ՝ իբր շնորհակալ
լինելով զնմանէ յաղագս այնչափ մեծարելոյ զնա,
այո՛որ իմ ուրախ եմ, զի մեծացան յիս կեանք իմ
այսօր՝ քան զամենայն աւուրս 'ի ծննդենէ իմմէ։
Այլ էր աւարտեալ ընթրեացն, զի յուդիթ միայն
մնաց 'ի խորան անդր ընդ հողոփեռնեայ. այլք ա-
մենեքին խոնջք և վաստակք 'ի բազում գինեբ-
բուաց անտի փութացան անկանիլ իւրաքանչիւր 'ի
խորան իւր. և հողոփեռնէս ել անկաւ 'ի գահոյս
իւր՝ թաղեալ 'ի գինւոջ և 'ի քուն խորին. և բա-
գու սենեկապան նորա փակեաց զդուռն խորանին՝
թողեալ 'ի ներքս անդ զյուդիթ ը իւրում աղախ-
նայ, և ինքն գնաց 'ի խորանն իւր։

Օ ամենայն ինչ 'ի դէպ տնօրինեաց ած 'ի յա-
ջողումն գործոյն. և չինաց այլ ևս ինչ, բայց միայն
գործադրութիւնն։ Լսաց յուդիթ ցաղախին իւր
կալ արտաքոյ 'ի պահպանութիւն դրան խորանին. և
ինքն մերձեցաւ և եկաց առ գահոյս հողոփեռնեայ.
և կացեալ անդ վայրկի մի՝ արար լռելեայն համա-
ռօտ աղօթս առ ած։ Լսպա առեալ զդաշոյն նորա,
որ էր ընդ մտարն, մերկացոյց զնա 'ի պատենից.
և կալեալ զմերոյ նորա՝ ասաց. զօրացո զիս ած
իսրայելի յաւուրս յայսմիկ. և երկիցս հարեալ զո-
ւրութիւնն 'ի պարանոցն՝ եհատ զգլուխ նորա. և զմար-
մին նորա թաւալեցոյց 'ի գահոյից անտի, և ըն-
կեց 'ի գետին։ Լսև սուղ ինչ դադարեաց 'ի ներքս
անդ՝ փոքր մի ոգի առնուլ. միանգամայն զի դա-
դարեսցի հոսումն արեան 'ի գլխոյ անտի, յառաջ
քան զդնել զնա 'ի մախաղ կերակրոյն։ Լսբարձ 'ի
գահոյից անտի և զպատուական վարագոյրս հողո-
փեռնեայ. զոր ծալեալ՝ եդ և զայն 'ի մախաղ
անդր ընդ գլխոյն. և ետ ցաղախին իւր։ Լսայսպէս

առնէր և 'ի նախընթաց գիշերուն, զի յորժամ էր. թայր լուանալ յաղբիւրն, տայր ծրար մի հանդերձից և այլոց իրաց կարևորաց առ լուացումն 'ի ձեռս աղախնոյն բերել ընդ իւր. որպէս զի և այժմ եթէ տեսանիցեն պահապանքն զմախաղն զայն 'ի ձեռս նորա, նոյնպէս կարծիցեն։

Զայս փակեալ զդուռն խորանին՝ ելին 'ի ճանապարհ երկոքին 'ի միասին. անցին ընդ ամենայն բանակն, և ոչ ոք արգել կամ նեղեաց ինչ զնոսա, կարծելով երթալ նոցա յաղբիւրսն ըստ իւրեանց սովորութեան. բայց նոքա փոխանակ զկայ առնելոյ առ աղբերսն՝ շրջեցան ընդ ձորն զլեռնակողմամբ։ Իբրև հասին մերձ առ պարիսպս բեռիցուց, ամբարձ յուդիթ զձայն իւր, և աղաղակեաց առ պահապանսն և ասաց, բացէք բացէք արդ զդրունս, զի ընդ մեզ է ՀԱԾ մեր։ Զոր արարին վաղվաղակի ցիշխանս և ցգլխաւորս քաղաքին. և նոյն ժամայն սփռեցաւ լուրն ընդ քաղաքն ամենայն, թէ դարձաւ յուդիթ, և կայ սրտաբոյ՝ մնալով զի բացցի դուռն։ Եւ և ահնուանէր ոք միւսանգամ տեսանել զյուդիթ. ուստի 'ի լսել թէ կայ նա առ դրան քաղաքին, ամենեքեան 'ի տանց 'ի դուրս ընթացան։ Զհիա իշխանն եկն անձամբ մուծանել զնա փառաւոր. ազնուականքն և ռամիկք 'ի մեծամեծաց մինչև 'ի մանկունս լապտեր 'ի ձեռին ընթանային տեսանել զնա։

Իսկ յուդիթ մտեալ 'ի քաղաքն և փոքր մի յառաջ գնացեալ, ել 'ի բարձրաւանդակ վայր (որպէս ընթեռնուս լատինն), և հրամայեաց ետ լռել, և ունկն դնել նմա։ Եւ ասաց բարձրաձայն բարբառով. որդիք իսրայէլի օրհնեցէք զՀԱԾ, որ ոչ մերժեաց զողորմութիւն իւր 'ի տանէն իսրայէլի. և հանեալ զսարկու գլուխն 'ի մախաղէն՝ ասէ. ահաւասիկ գլուխն հողոփեռնեայ. ահա և վարագոյրքն պատուականք, ընդ որով անկեալ գնէր յարբեցութիւն իւրում, յորժամ սատակեաց զնա ՀԱԾ 'ի ձեռն կնոջս։ Եւ՝ 'ի կարծիցէք թէ այս ձերդ հասարակաց ցնծութիւն զնով համեստութիւն իմոյ գնեցաւ։ Կենդանի

է՝ որ՝ որ պահեաց զնս 'ի ճանապարհին յայնմիկ յերթալ իմ, և 'ի կալ անդ, և 'ի դառնալ աստ. զի յայսմ ամենայնի ոչ ձգեաց ոչ հոգի իմ և ոչ մարմին յինքն արատ ինչ մեղայ պղծուն. և դարձոյց զիս ած ուրախութիւն ընդ յաղթութեն նորա, ընդ պահպանութեն իմ, և ընդ փրկութեն ձեր։ Զգնա իշխան քաղաքին ողջունեաց զնա պանծալի գովութիւն, և օրհնեաց յանուն հասարակաց ժողովրդեան. և ամենայն ժողովուրդն միաբերան հաստատեցին զօրհնութիւնն՝ ասելով, եղիցի եղիցի։

Զ.քիովը սպարապետ ամենայնոց, այն՝ որ ըստ նախաձառելոցս՝ 'ի մահ դատապարտեալ էր 'ի հոդոփեռնեայ, զի քաջ խօսեցաւ զոյ իսրայէլի, ոչ պտաւ յայնժամ անդ. այլ զի չէր արժան յապաղել 'ի նմանէ զցնծութիւնն՝ որում արժանացաւ, փութապէս կոչեցաւ ենա։ Իբրև եկն՝ ասէ ցնա յուդիթ. ահա սվ իշխանդ քաջ, ած մեր հզօր՝ զորմէ դու վկայեցեր բարի վկայութիւն թէ դիտէ առնել արդարութիւն ընդդէմ իւրոց թշնամեաց, տես արդ՝ թէ որպէս 'ի գիշերիս յայսմիկ 'ի ձեռն իմ եհատ զգլուխս անհաւատին. և որպէս զի գիտասցես թէ ճշմարիտ է այս, տես ահաւասիկ զգլուխս հոդոփեռնեայ. այնմ՝ որ արհամարհեաց զած իւրով հայհոյութիւն. ընդ ոտն եհար զտունս իսրայէլի. և զքեզ կապեաց և եհատ ածել այսր 'ի մահ։ Զ.ստմնեցաւ աքիոզը 'ի տեսանել զգլուխն զայն, մինչև կրել զամբոխումն ամենայն ներքին մասանց ոգւոյն՝ որ լինի 'ի յանկարծական և յանակնկալելի պատահարաց. յորմէ և նուաղեալ անկաւ 'ի գետին 'ի վերայ երեսաց իւրոց. և մնաց առ վայր մի անդ անշշունչ. ապա 'ի միտս եկեալ և զգաստացեալ, անկաւ առ ոտս յուդիթայ, երկիր երպագ նմա, և օրհնեաց զնա մեծամեծ օրհնութիւն. և ճանաչելով զած ային կարողութիւնն, ընկալաւ յամենայն սրտէ զճշմարիտ հաւատ. և թլփատեալ 'ի մարմին անթլփատութիւն իւրոյ յաւելաւ 'ի ժողովուրդ ած։ և թէպէտ ինքն էր ամենացի, սակայն վասն արժանաւորութիւն նորա ընկալան զնա և զամենայն տուն

նորա որդիքն իսրայէլի յազգ Իբրեանց և յեղբայր, Իբրև զմի 'ի բնիկ Եբրայեցւոց։

ՓուԹայր յուդիԹ՝ զի մի կորուսանիցեն որդիքն իսրայէլի զդիպողուԹիՀ ժամանակին. իմաստուԹեամբ խորհեր, զի ԹԷ մահ հողոփեռնեայ հնէսցի 'ի բանակին ասուրայ՝ լցցին առ հասարակ խառնուԹիՀ, և ահիւ տագնապեսցին՝ ԹԷ արդ որդիքն իսրայէլի դիմեն մարտիս 'ի վերայ Իբրեանց, և յաղԹեն։ Ամն այնորիկ ետ խորհուրդ իշխանաց քաղաքին՝ կախել զգլուխ հողոփեռնեայ զմնՀարձանաց պարսպաց քաղաքին. և յառաւօտուն 'ի ծագել արեգական ամենայն արք զօրաւորք պատերազմի վառեալ 'ի զէն յարձակեսցին 'ի դուրս 'ի քաղաքէն՝ Իբրև ԹԷ կամիցին գրոհ տալ 'ի վերայ բանակի Թշնամւոյն 'ի դաշտ անդր. բայց մի իջանիցեն 'ի լեռնէ անտի. այլ միայն շուինդն ինն Հարկանիցեն։ Այն տեսեալ պահակացն ասուրայ՝ առեալ զզէնս Իբրեանց ընԹացին 'ի բուն բանակ անդր ազդ առնել զօրապետաց. և նոքա դիմեսցեն 'ի խորանն հողոփեռնեայ. զոր գտեալ անգլուխ, անկցի ահ և դողումն 'ի վերայ նոցա. և ցնորեալ 'ի մտաց 'ի փախուստ դարձցին. յայնժամ իջանիցեն մեՀիլ զՀետ նոցա և կոտորել զնոսա։

Մինայն ինչ կատարեցաւ ըստ բանիցն յուդԹայ։ Յորժամ ծագեաց առաւօտն, կախեցին զգլուխն հողոփեռնեայ զպարսպաց քաղաքին. բերին զուսցիք ելին արտաքոյ քաղաքին սպառազինեալք. փողք և աղաղակաւ խառով ինն Հարին. իշխանք և հազարապետք ասուրայ դիմեցին 'ի խորանն հողոփեռնեայ, և ասեն ցբագու սենեկապետ նորա յարուցանել զնա, զի իշխեցին ծառայքն ելանել 'ի վերայ մեր։ Մտուտ բագու քաղխեաց զդուռն սենեկին, քանզի կարծէր ԹԷ 'ի քուն իցէ Հանդերձ յուդԹաւ. և Իբրև ոչ ոք ետ նմա պատասխանի, քաջալերեալ եմուտ 'ի ներքս 'ի սենեակն. ետես և ահա մարմին Հողոփեռնեայ արիւնաԹաթաւ անդլուխ կայր անկեալ 'ի գետին.

յիմարեցաւ վասն իրացն. ընթացաւ 'ի սենեակն յուղթայ, և ոչ գտեալ զնա անդ՝ ծանեաւ նոցն հետայն թէ յումմէ՞ յափշտակեցաւ զլուխ նոցա իւրոյ։ Պատառեաց զպատմուճանն իւր, և ձայն բարձեալ լալով և դողմամբ ընթացաւ առ իշխանս զօրուն, աղաղակեաց և ասէ. ապստամբեցին ծառայքն, զի արար ամօթ նախատանաց կէն մի հեբրայեցի տան արքայի նաբուքոդոնոսորայ։ Պիտեցաւ գոյժն առ ժամայն ընդ բանակն ամենայն, և անկաւ ահ և սարսափ յոյժ 'ի վերայ նոցա. որք առ հասարակ շփոթեալք և խուճապեալք 'ի փախուստ դիմեցին, ոչ մնալով ամենևին այր ընկերի իւրում, թողեալ զխորանս, զզէնս, և զայլ ամենայն կահ և զկարասի. զի թուէր ամենեցուն նոցա՝ զսուր եբրայեցւոց ունիլ 'ի վերայ պարանոցի իւրեանց. յայնժամ իջին զօրքն 'ի լեռնէ անտի բեթիղուայ, և մտին զկնի նոցա կոտորել զնոսա։ 'Ի նմին ժամու սուրհանդակս արձակեաց ոզիա յամենայն քաղաքս և յագարակս եբկրին իսրայէլի՝ ընդ որս ունէին անցանել փախստականքն. և ա մենեքեան 'ի զէն վառեցան, և պնդեցան զհետ ասորեստանեայց, սատակելով 'ի նոցանէ մինչև 'ի վերջին սահմանս եբկրին իսրայէլի։

Մեծ եղև կոտորած ասուրայ. բայց մեծագոյն եղև աւարն զոր տարան 'ի բեթիղուա. անթիւ անասունք՝ դրասոք և հօտք այծից, և անբաւութիւն կահուց կարասեաց. մինչ զի ընդ աւուրս եբէսուն հազիւ զօրեցին ժողովել և տանել զայնչափ զառ և զասղուռ բանակացն. յղփացան լցան մեծացան յոյժ բնակիչք բեթիղուայ. աղքատք և յետին չքաւորք լիացան հարստութիւն։ Խորանն հողոփեռնեայ, և արծաթ խորանին, և սպասք ոսկւոյ և արծաթոյ, և ակունք պատուականք և ամենայն ինչք նորա տուան յուղթայ։ Յովակիմ որ և եղիակիմ քահանայ մեծ, զոր տեսեալ 'ի վերս անդր լինել զաստիարակ և առաջնորդ մանասէի. և ընդ նմին ծերակոյտ որդւոց իսրայէլի եկին յերուսաղէմ 'ի բեթիղուա յողջոյն յուղթայ. և օրհնեցին զնա ա-

մենեքեան միաբան, ասելով առ նա. Դո՛ւ բարձ-
րութիւն երուսաղէմի, դո՛ւ ցնծուլի իսրայէլի, դո՛ւ
պարծանք ազգիս մերոյ, զի արարեր զայս ամե-
նայն բարութիւս ազգիս մերոյ. օրհնեա՛լ եղիջիր
դու յամենակալէն այ մինչև յաւիտեան. և ասաց
ամենայն ժողովուրդն, եղիցի։ Լուկին առ նա և
կանայք մեծարել զնա, և օրհնեցին զնա, և նուա-
գէին նմա երգս պարուք. և ինքն ոստս արմուտ-
նեաց և ձիթենեաց ծաղկօք հանդերձ տայր նոցա։
Լա՛ւ այլևս կանայք մեծամեծք տեղեաց տեղեաց
զայլին գունդագունդ՝ գովել զնա. և բազմութի-
՝ի ժողովրդենէ զկնի երթային նոցա վառելք և
կազմեալք՝ պսակս գունակս գունակս՝ ի գլուխս
ունելով իւրեանց։ Լսակ յուդիթ զայն ամենայն
փառսն ՝ն՝ այ վերառաքելով երգեաց զերգս օրհ-
նութե և յաղթանակի, պէսպէս չքնաղ օրինակօք
և նմանութիւնք հնչակելով զամենազօր կարողութի-
բարձրելոյն, զայսօրինակ սկսանելով. * Լրգե-
ցէ՛ք ՝ն՝ թմբկօք, և օրհնեցէ՛ք զնա ծնծղայիւք,
և ուղղեցէ՛ք նմա երգս և օրհնութիս. բարձր
արարէ՛ք զնա, և կարդացէ՛ք զանուն նորա. զի ՝ն՝
խորտակէ զպատերազմունս ՝ն՝ ։ Լ՝պա չոգան
բազմութիւն յերուսաղէմ երկիր պագանել ՝ն՝, և
մատուցանել պատարագս, և կատարել զուխտս իւ-
րեանց ՝ի տաճարի ՝ն՝։ Լա՛ւ յուդիթ նուիրեաց ՝ի
տաճար անդր ՝ի նուէրս ՝ն՝ այ զզէնս, և զամենայն
պատերազմական կահ և զկարասի հողոփեռնեայ,
զի կացցեն անդ ՝ի յիշատակ յաւիտենական սքան-
չելահրաշ յաղթութեն։ Լ՝կեաց յուդիթ ՝ի տան
առն իւրոյ մանասէի ամս հարիւր և հինգ. և որ-
պէս յետ յաղթութիս առ նորին կենդանութիւ,
նոյնպէս զկնի մահուան, զաւուրս բազումս ոչ
յարեաւ թշնամի ՝ի վերայ որդւոց իսրայէլի ՝ի
խռովել և ՝ի զարհուրեցուցանել զնոսա։

Ժամանակ Յուդիայ։

Տեսաք զպատմութիւն յուդիայ. արդ արժան է խնդրել զժամանակն թէ երբ եղև։ Բ. ոչ այս ուրնիմք ասել ընդ կեսարու կաղինոսի մանրախոյզ քննողի ժամանակագրութիւն նոր գրոց, թէ առ 'ի գտանել զժամանակ յուդիայ՝ չիք այլ ճանապարհ առաւել համառօտ և ապահովի, որպէս զնեալ զնշանս՝ զորս նշմարեմք 'ի նոր գիրս, այսինքն 'ի նմին իսկ 'ի պատմութիւն յուդիայ ըստ օրինակիս ըստ այսմիկ։ Բրդ ասի անդ նախ, թէ նաբուքոդոնոսոր արքայ ասորեստանեայց թագաւորէր 'ի նինուէի մեծի քաղաքի։ Երկրորդ՝ թէ յամին երկոտասաներորդի թագաւորութեան իւրոյ յաղթեալ արփաքսադայ՝ առաքեաց զհողոփեռնէս տիրել և այլոց թագաւորութեաց։ Երրորդ՝ յընթացս բովանդակ պատմութեան չիք ուրեք յիշատակ թագաւորի իսրայելի, կամ թագաւորի յուդայ. մնտեսութիւն երկրին գտանի 'ի ձեռս մեծի քահանային եղիակիմայ կամ յովակիմայ։ Չորրորդ՝ չիք բնաւ խօսք կամ զրոյց վասն բառնալոյ զկուռս, և քնջելոյ 'ի միջոյ ժողովրդեան ոչ այլ զայլ կայթակղուիս. բայց միայն դիմել յաղօթս 'ի պահս, և 'ի քրձազգեցութիւս։ Հինգերորդ՝ տաճարն երուսաղէմի յոտին կայր. յոաբ. ը. 2. և ըստ ասելոյ աքիորայ՝ էր աւերակ, ոչ ոտնակոխ եղեալ և պղծեալ։ Վեցերորդ՝ ըստ վկայութեան նորին աքիորայի՝ չէին՝ անցեալ բազում ժամանակք, յորմէ հետէ երբայեցիք մտանեցան 'ի գերութիւն 'ի ձեռս թշնամեաց իւրեանց. (կամ ըստ լատին ընթերցուածոյ, վարեցան 'ի գերութիւն յերկիր օտար.) և նորոգ էին դարձեալ յերկիր իւրեանց. * Այս այժմ՝ ասէ աքիորը, դարձան առ Տէր ոչ իւրեանց, և ժողովեցան 'ի

գերութիւն իւրեանց, ուր էին ցրուեալք, և կա-
լան զքաղաքն զերուսաղէմ, ուր էր սրբութիւն,
և բնակեցան 'ի լեռնակողմանս ։ յոռդն. Ե. 23 ։
Լ.օթնորդ՝ յուզիթ եկեաց ամն հարիւր և հինգ.
յոռդն. ԺԷ. 28. և յետ յաղթութեան իւրոյ * ոչ ոք
էր որ զարհուրեցուցանէր զորդիսն իսրայէլի յա-
ւուրս յուզիթայ, և յետ մեռանելոյ նորա զաւուրս
բազումս ։ Լ.ս յորժամ արար զայն յաղթութիւն,
գեղ երեսաց նորա էր կայտառ, ընդ որ ամենա-
քեան հիանային, ուստի և ինքն ունէր լինել յիւ-
րումծաղկեալ հասակի։ Յայսոսիկ հիմունս հաս-
տատեալ՝ զայսօրինակ տրամաբանեն կաղինոս. Լ.յս
ամենայն պարագայք և նշանք ամենայն իրօք Աշմար-
տին, եթէ անցք բեռիղուայ և յուզիթայ դիցին
'ի ժամանակի մանկութեան մանասէի. այլ ոչ բոլորն
Աշմարտին, եթէ յայլ ժամանակ դիցին. ապա
գնիլ պարտ է 'ի մանկութեան մանասէի։

'Լ.ախ՝ 'Լ.ինուէ չև ևս էր կործանեալ. որպէս
հանդերձեալ եմք ցուցանել ստորև 'ի պատմութեան
տոմբիթայ։ Լ.ոտորուն զօրուն ասորեստանեայց,
և մահ սենեքերիմայ եղև յամին հնգետասանե-
րորդի եզեկիայ արքայի յուդայ, որ թագաւորեաց
ամն քսան և ինն. ուստի առ ժամանեալ յառաջին
ամ թագաւորութեան մանասէի՝ ինան ամք չորեք-
տասանք։ Յաջորդ սենեքերիմայ եղև ասորդան.
սա թագաւորեաց ամն երկուս. զկնի այնց երկուց
ամանց թագաւորեաց նաբուքոդոնոսոր։ Սա սկսաւ
թագաւորել յամին եօթնուտասներորդի եզե-
կիայ. ուստի և քսան և ինններորդ ամ եզեկիայ է
անվրէպ երկոտասաներորդ ամ նաբուքոդոնոսորայ։
Յայսմ երկոտասաներորդ ամի իւրում նաբուքոդո-
նոսոր յաղթեաց արփաքսադայ. և 'ի յաջորդ երեք-
տասանեորդ ամի սկսաւ առաջին ամ մանասէի. որ
սկսաւ թագաւորել մանուկ երկոտասան ամաց.
վասն որոյ և կարօտ՝ զի փոխանակ նորա այլ ոք
վարեսցէ զտնտեսութիւն թագաւորութեան. քանզի
յայն հասակ չէր նա կարօղ վարել զթագաւորու-
թիւն, և՛ս առաւել և ոչ պատերազմ մղել։ Տեսաք

'ի վեր անդր վկայութիւն եսայեայ մարգարէի զե-
ղեակիմ առանց անուան թագաւորի՝ ունել 'ի ձե-
ռին զմատակարարութիւն թագաւորութիւն 'ի ժա-
մանակի մանկութիւն մանասէի. և ասա զտանեմք
զյովակիմ որ նա ինքն է եղեակիմ՝ լինել հրամա-
նատար. ոչ յիշատակի թագաւորն, զի է մանուկ
հասակաւ անբաւական հրամայելոյ. այլ յիշատակի
հրամանատարն, որ առաքէ պատուէրս կարևորս
առ բարիոք տնտեսութիւն. և այսու երեք առաջին
պարագայք և նշանք քաջ 'ի գէպ դան մանկութիւն
մանասէի։ 'Ի գէպ գայ և չորրորդն. այն թէ չիք
ասա զրոյց ինչ բառնալոյ զկուռս, և ջնջելոյ-'ի
միջոյ զգայթակղութիւն. վասն զի առ եղեկիաւ
բարեպաշտ արքայիւ էին բարձեալ. և 'ի ժամանա-
կի մատակարարութիւն եղեակիմայ չէին մուծեալ։
Յայտնի է և հինգերորդ նշանն, թէ տաճարն
յոտին կայր. և զի ոչ բաղում ժամանակաւ յառաջ
լեալ էր աւերակ, այսինքն ոտնակոխ և պղծեալ,
ինքնին յայտնի լինի, թէ եղև այն առ ժամանա-
կաւ աքաղու հոր եզեկիայ արքայի։ Վեցերորդ
նշանն՝ այսինքն գերութիւն իսրայէլի նոր էր, իսմ
որպէս տեսաք յիւրում տեղւոջ՝ լեալ 'ի վեցերորդ
ամի եզեկիայ։ Եւ թէ որպէս բազումք 'ի նոցա-
նէ դարձան յերկիր իւրեանց, և ունէին ազատու-
թիւն երթալ յերուսաղեմ 'ի տաճարն, զոր յառա-
ջագոյն ոչ ունէին, թէպէտև ոչ պատմի յայտնի
'ի ծոր գիրս, բայց կան նշանք՝ յորոց քաղի բնական
տրամաբանութիւն։

Յորժամ սաղմանասար թագաւոր ասորեստան-
եայց տիրէր և բաբելոնի և քաղդէացւոց, զբազ-
մութիւն գերեաց իսրայէլացւոց ցրուեաց 'ի բաբե-
լոն և 'ի մէջ քաղդէացւոց։ Եւ յս յայտնի է 'ի գիրս
չորրորդ թագաւորաց։ Իսկ թէ առ սենեքերիմ
քաղդէացիք թօթափեցին զլուծ ասորեստան-
եայց, և մերովդաք բաղդան թագաւոր բաբելո-
նի ոչ ևս կախեալ կայր, և չունէր ինչ ընդ ար-
քային ասորեստանեայց, բացայայտ երևի. զի 'ի
նմին ժամանակի՝ յորում սենեքերիմ արքայ ասս-

բեստանեայց պատերազմ մղէր ընդ Եզեկիայ արքայի, մարովդաք բաղդան առաքեաց հրեշտակս առ Եզեկիա 'ի խնդակցութիւն վերադարձի առողջութեան նորա։ Ի նտարակոյս երևի և այն, զի Եզեկիա յետ կոտորելոյ հրեշտակին զամենայն զրանակն սենեքերիմայ, զայն հրաշս 'ի ձահ առեալ՝ կալեալ իցէ զսամարիա, և զայլ բազում քաղաքս իսրայէլի, որք կէս մի աւերեալ էին 'ի սաղմանասարայ. և կէս մի անպատսպար և անպահպան, չուներելով սենեքերիմայ զօրս 'ի պահել զնոսա։ Լաւ զի ամենայն իսրայէլ էր ընդ տերութիւն յուդայ, յայտ անտի է՝ զի ասորեստանեաքն անկարօղ 'ի պահել զերկիրն ընդ ձեռամբ իւրեանց՝ 'ի բաց թողեալ էին զնա. և զիարդ Եզեկիա չիցէ մտեալ 'ի ժառանգութիւն սեպհական, յորժամ կարէր մտանել առանց նիզակ մի շարժելոյ։

Այս եղեալ՝ ոչինչ է երկուանալի, թէ Եզեկիա բարեպաշտ արքայ խօսեալ իցէ և հաձեցուցեալ զարեկամն իւր զմերովդաք բաղդան՝ արձակել զիսրայէլացիս, զորս գտեալ էր նորա 'ի բաբելոն՝ վարեալս անդր յասորեստանեայց։ Լաւ մերովդաք ըստ ուղիղ քաղաքական կանոնաց ունէր արձակել. զի երբայեցիք ոչ երբէք ետուն պատերազմ ընդդէմ բաբելացւոց. և փորձն և նոյն իսկ հեռաւորութիւն տեղւոյն՝ շատ էին առ 'ի չունել արքային բաբելացւոց կասկած ինչ զնոցանէ. նա՝ օգուտ մեծ էր նմա զօրանալ արքային յուդայ, որպէս զի կարասցէ զդէմ ունել ասորեստանեայց, որք սովորական գլխահար էին քաղդեացւոց։ Լաւ ահա այսու օրինակաւ լինի բազմութիւն իսրայէլացւոց յետ գերութեան սաղմանասարայ՝ դառնալ յերկիր իւրեանց՝ ոչ և ընդ թագաւորաւ իսրայէլի, այլ ընդ թագաւորաւ յուդայ։

Ի յետ յիսրայէլացւոց գերելոց յասորեստան՝ դարձուցան 'ի սամարիա յասորդանայ արքայէ։ Ի՚անցեալ գրի 'ի գլխս երկրորդ եզրայ. Գ. 2. թէ նոքա որք խնդրէին գործակցել ընդ ցեղին յուդայ 'ի շինութեան տաձարին, ասացին ցզերաբաբէլ և

ցայլ իշխանս. * Շ ինեսցուք և մեք ընդ ձեզ. և
որպէս և դուք՝ խնդրեսցուք 'ի նոսնէ ոչ ձերմէ ||.
ուր լատինն ընթեռնու, * խնդրեմք զոմն ձեր.
քանզի և մեք նոյնպէս զոհեմք զոհս յօրէ յօրմէ
ասորդան թագաւոր ասորւոց ամն զմեզ այսր ||։
Այրքա որք զայսօրինակ խօսէին՝ ոչ էին յառաջին
գաղթականաց անտի առաքելոց 'ի սամարիա. զի
նոքա ամենեին հեռի էին 'ի զոհելոյ նոսն ոչ իս-
րայէլի. այլ սակս և պատուհասեցան յարձակմամբ
առիւծոց 'ի վերայ նոցա. և ոչ քահանայն երբայե-
ցի որ առաքեցաւ յայնժամ յարքայէ ուսուցանել
նոցա զօրէնս ոչ երկրին, ուսոյց նոցա երթալ յե-
րուսաղէմ 'ի տաճարն, որովհետև նաև քնիկ իս-
րայէլացիք ոչ երթային յերուսաղէմ 'ի տաճարն յա-
ռաջ քան զդերուին։ Այրքա առաքեալք յասորդա-
նայ՝ էին ծնեալ կռապաշտ յերկիր հեթանոսաց.
ապա թէ ոչ՝ էին արդեօք վաղվաղակի այնպէս
վարժեալ յիրս կրօնի։ Այպա էին իսրայէլացիք 'ի
ժողովրդենէ ոչ, դարձուցեալք 'ի սամարիա յասոր-
դանայ արքայէ, և հրաւիրեալք յեղեկիայէ արք-
քայէ յերուսաղէմ 'ի նաւակատիս տաճարին և 'ի
զոհս ոչ։ Այս ըստ կանոնի խոհեմութեան ունէր
ասորդան պատճառ առաքելոյ զնոսա առ 'ի մաք-
րել զերկիր իւր 'ի կասկածաւոր ժողովրդենէ.
և դարձուցանէր զնոսա առ եղեկիա՝ ոչ իբր շնորհս
ինչ առնել նմա, այլ 'ի ծանրութեան և 'ի վիշտ.
վասն զի բնութիւն ապառուամբ էին, խռովայոյզք,
և անհանգիստ։ Այս յորժամ մատեան նոքա մտա-
նել 'ի գործակցութեան շինութեան տաճարին, ոչ մեր-
ժեցան իբր թէ չէին 'ի ժողովրդենէ իսրայէլի.
այլ զի էին 'ի տանէ յուդայ. և մախացօղ ևս էին
ընդ փառս և ընդ յաջողութեան նորա. և ոչ իսկ
ուղիղ սրտիւ խնդրէին։ Այսպէս ահա ունիմք
հաւաստեաւ զդարձ բազմութեան իսրայէլացւոց յեր-
կիր իւրեանց՝ ոչ յետ բազում ամաց գերութեան
նոցա։

Հաւաստի լինի և եօթնեերորդ նշանն. զի
յերկրորդ ամի մանկութեան մանասէի մինչև ցամին

անցին ամք յիսուն և երեք. ամին թագաւորեաց ամն երկուս. յովսիա թագաւորեաց ամն երեսուն և մի. ընդ ամենայն են ամք ութսուն և վեց, յորս "ոչ ոք զարհուրեցոյց զորդիս իսրայէլի"։ Դ։ Յոլիցուք թէ "աւուրք բաղումք" խաղաղութիւն յետ մահուան յուդթայ եղեն ամք տասն. ուստի յետ սպանանելոյ նորա զՀողոփեռնէս, խաղաղացաւ իսրայէլ առ կենդանութիւն նորա՝ ամն վաթսուն և վեց. զոր հանեալ 'ի հարիւր և 'ի հինգ ամաց՝ յորս եկեաց յուդիթ, զհետ գայ թէ արար զայն քաջութիւն ըստ այսմ հաշուի, 'ի հասակի իբրև քսան և ինն ամաց. որ է հասակ կայտառ և գեղեցկածաղիկ այրի կնոջ։

Ռ։ արկիցես 'ի 'որ գրոց. Ռ։ յս խաղաղութիւն վրդովեցաւ գերութիւն մանասէի։ Ռ։ յսմ տուաք պատասխանի յիւրում տեղւոջ, թէ գերութիւն նորա այնպիսի օրինակաւ արարաւ՝ զի ոչ զարհուրեցոյց և ոչ իսկ զյուդա, մանաւանդ թէ խաղաղացոյց զնա։ Սակայն թէ և ըստ իրաց ինչ զարհուրեցուցեալ իցէ, 'որ գիրն ոչ ասէ՝ թէ "ոչ ոք էր որ զարհուրեցուցանէր զյուդա", այլ "զորդիսն իսրայէլի". և ահա յայնմ գերութիւն ոչինչ զարհուրանս կրեցին որդիքն իսրայէլի։ Զայս ասէ և ներհուն հայրն դուրնէմին յինեերորդ ճառն ժամանակագրութիւն. "Տես, զի ոչ ընդհանրապէս վասն ամենայն ազգին եբրայեցւոց ասի՝ թէ ոչ ոք զարհուրեցոյց զնա առ կենդանութիւն յուդթայ, և յետ մեռանելոյ նորա զաւուրս բաղումս, այլ՝ վասն իսրայէլի ևեթ խօսի սրբազան մատենագիրն"։

Ռ։ արկիցես երկրորդ. Զայս ամենայն մարթէր միապէս 'ի գէպ մեկնել, դնելով զայս գործ յուդթայ 'ի ժամանակի գերութեան մանասէի։ Պատասխանեմ։ Զէր մարթ յայնժամ մեկնել, թէ զիարդ չէք յիշատակութիւն վասն բարձման կռոց. ուր մանասէ յառաջ քան զգերութիւն իւր՝ լցեալ էր զերուսաղէմ և զամենայն երկիրն յուդայ դրօշելովք։ Յորժամ ժողովուրդն դառնայր յապաշ-

խաբութեն, եթէ կայլն առ նոսա կուռք և դրօ-
շեալք, միշտ գտանեմք 'ի նոր գիրս յիշատակեալ
թէ առաջին գործ նոցա էր բառնալ և ջնջել զա-
մենայն զայնպիսի գաղջելիս։ Իսկ ասա 'ի խօսիլն
վասն ապաշխարութեն նոցա՝ չէք և ոչ նշանախեց
մի վասն կռոց. ապա չկայլն։ Այլ և տեսաք 'ի
վերանգը զմտքգարէութեն եսայեայ, թէ 'ի պա-
կասիլ եղիակիմայ՝ անկցի կործանեսցի թագաւորն,
որ կախեալ կայր զնմանէ. իսկ մանասէ յետ գերուեն
իւրոյ ոչ միայն ոչ կործանեցաւ, այլ որ կործա-
նեալն էր՝ կանգնեցաւ, և յետ այնորիկ ըստ օրի-
նի վարեաց զթագաւորութեն իւր։ Այսպա եղիակիմ
չեղև հրամանատար թագաւորուն 'ի ժամանակի
գերութեն մանասէի. իսկ գործ յուդթայ եղև մինչ
հրամանատար էր եղիակիմ. ապա ոչ եղև 'ի ժա-
մանակի գերութեն մանասէի։

Այն բաղումք՝ որք ասեն, թէ նաբուքոդոնոսոր
յուդթայ էր նաբուպոլոսսար հայր նաբուքոդոնոսո-
րայ երևելւոյ 'ի գիրս դանիէլի։ Իսկ նաբուպո-
լոսսար թագաւորեաց հարուստ մի զկնի մանկու-
թեն մանասէի. ապա ոչ պաշարեաց զբեթիղուա 'ի
ժամանակի մանկութեն մանասէի։ Այլ պատաս-
խանեմ կաղկնոս առ այս, թէ արդեօք հայրն նա-
բուքոդոնոսորայ իցէ՞ կուռեցեալ նաբուպոլոսսար,
չէ՛ մեզ փոյթ. ուր նոր գիրն ոչ ասէ թէ ոչ որդի
իցէ նաբուքոդոնոսորն այն. որպէս և ոչ հակառա-
կիմք, թէ նաբուքոդոնոսորն յուդթայ յայլ լեզու
կոչիցի և նաբուպոլոսսար։ Իսկ թէ նաբուքոդոնո-
սորն յուդթայ իցէ հայր նաբուքոդոնոսորայն դա-
նիէլի, այդմ ոչ հաւանիմք։ Այլ յիրաւի. զի զնա-
բուպոլոսսար զհայրն նաբուքոդոնոսորայ դանիէլի գի-
տեմք լինել թագաւորքաղդէացւոց թագաւորեալ
'ի բաբելոն. իսկ զնաբուքոդոնոսոր յուդթայ նոր
գիրն կոչէ թագաւոր ասորեստանեայց թագաւո-
քեալ 'ի նինուէի մեծի քաղաքի. և յետոյ և ոչ դոյզն
ինչ նշան, յորմէ մարթ իցէ մակաբերել թէ իցէ
նա թագաւորեալ և 'ի բաբելոն և 'ի վերայ քաղ-
դէացւոց։

Պուլտ ասիցես. գոլով թագաւոր բաբելոնի և քաղդէացւոց՝ տիրեաց և նինուէի. վասն որոյ կոչի թագաւոր ասորեստանեայց թագաւորեալ 'ի նինուէ։ Պատասխանեմ. Այդ հակառակ է սովորական լեզուի ՝ծ գրոց. որ հաստատութիւն անուանէ զթագաւորս 'ի բնիկ թագաւորութենէ նոցա, և ոչ յայլոց թագաւորութենէ՝ զորս յետոյ ստացան։ Թագաւորքն յուդայ ոչ երբեք կոչին թագաւոր փղշտացւոց, ամմոնացւոց, եդոմացւոց. թէպէտ և 'ի վերայ նոցա ամենեցուն տիրեցին։ Նաբուքոդոնոսոր դանիէլի թէպէտ բազմաց տիրեաց թագաւորութեանց, սակայն միշտ արքայ բաբելոնի կոչի. որպէս և կիւրոս միշտ թագաւոր պարսից և մարաց։ Այս և զնաբուքոդոնոսոր յուդթայ եթէ թագաւոր էր բաբելոնի, և ստացող կամ տիրող ասորեստանեայց, ըստ իւրում սովորութենէ կոչէր թագաւոր բաբելոնի, և ոչ թագաւոր ասորեստանեայց։

Իսկ թէ ասիցի, էր թագաւոր ասորեստանեայց, և ստացող բաբելոնի և քաղդէացւոց։ Հարցանեմ. Երբ ստացաւ նա զբաբելոն։ 'Ի սկիզբն թագաւորութեան իւրոյ փոքր ինչ յետոյ զկնի կոտորածի հաւուն իւրոյ սենեքերիմայ՝ չունէր ոչ զինուորս, և ոչ զօրավարս։ Այս իբրև զօրացաւ, տեսաք զնա պատերազմել ընդդէմ արփաքսադայ և մարաց. և չիք անդ յիշատակ ինչ զբաբելոնէ, և ոչ զքաղդէացւոց։ Յաղթեալ արփաքսադայ՝ տեսաք զնա դարձուցանել զզօրս իւր 'ի վերայ ազգաց, զորս դիւրին էր նուաճել։ 'Ի ներքոյ բերտիղուայ կորոյս զանուն և զզօրս իւր։ Երբ ապա զօրացաւ, մինչև 'ի դժուարինն յայն մարտ ձեռնարկել և առնուլ զբաբելոն։ Զոքին իսկ արտաքին պատմիչք մերձաւորք այնց ժամանակաց ոչինչ գրեն զայսցանէ։ Այս չունիմք հին ինչ երկուս նաբուքոդոնոսորս պատուաստել, և գնել զմին հայր միւսոյն. որովհետև ժամանակն և տեղին ցուցանեն մեզ ոչինչ կապակցութիւն ունել միոյն ընդ միւսոյն։

Յայսմ թէ պաշարու

ԳԼ. Ե.

ՏՈՒԷՒՐ.

Լրանալիս այս եղև այր նշանաւոր՝ տուեալ 'ի ներ օրինակ մանկանց բարիոք անցուցանել զմանկութիւն իւրեանց. հարց՝ իմաստութիւն դաստիարակել զորդիս իւրեանց. մեծատանց՝ բարիոք 'ի կիր արկանել զհարստութիւն իւրեանց. աղքատաց՝ համբերութիւն տանել աղքատութիւն իւրեանց։ Ընաւ տովբիթ 'ի քաղաքի նեփթաղիմայ՝ պարծանք ցեղին իւրոյ, անուն հօր նորա տովբեղի. այլ 'ի տղայութիւն անդ նորա մեռան ծնօղք նորա. և մանուկն տովբիթ մնաց որբ 'ի ձեռս դերուրայ հանդոյ իւրում՝ մօր հօր իւրոյ։ Լոյս նա կին բարեպաշտն մնայր և դաստիարակեաց զմանուկն ըստ բերելոյ հասակին յերկիւղ տեն, և 'ի պահպանութիւն պատուիրանաց նորա, 'ի սէր և 'ի յորդոր առաքինութիւն, և 'ի խորշումն 'ի մեղաց։ Իսկ մանուկն ոգւոյ բարւոյ վիճակեալ՝ իբրև եբկիր պարարտ ընդունէր զբարի սերմանս արկեալս 'ի սիրտ նորա, և պտղաբեր լինէր ըստ չափոյ հասակին առատ արդասիս բարեաց։ Լաւանաւոր էր 'ի միջի այլոց մանկանց, ծանր և համեստ, դերազանցեալ քան զհասակն, ոչինչ տղայական ընդարձակութիւն երևեցուցեալ 'ի վարս։ Զմենայն ազգն նեփթաղիմայ, և ամենայն աղգականք և մերձաւորք նորա երթային յերկրպագութիւն երբնջոցն ոսկեաց, և կռոցն բահաղու. նա՝ և ոչ քայլ մի արար, և ոչ կրկնեաց երբէք ծունր այնպիսի դարձելեաց։ Զշմարիտ ածն՝ էր նորա ած. և ըստ իւրաքանչիւր ժամանակի պատուիրելոյ յօրինաց՝ երթայր յերուսաղէմ 'ի տաճարն տեն. և տայր զտասսնորդս արդեանց և զառաջնապտուղս, անթերի պահելով և զամենայն օրէնս և զկարգս։

Այսպէս յաջողէր՝ ՝ծ բարեպաշտութիւն թոռինն՝ զաբրի կամն և զվաստակ հանուցոյն մնուցչի նորա. որով և ուսուցանէր ամենեցուն, որոց 'ի վերայ կայ մանկունս դաստիարակել, թէ մանկունք ոչ երբէք այնպէս յարմար և պատրաստ են ընդունել զտպաւորութիւն բարի վարուց, որպէս յայն թարմ և քնքուշ տղայական տիս։

Լու յորժամ եղև այր հասակաւոր, առ կին, կոչեցեալ անուն. կին բարեպաշտոն համեմատ նմա, 'ի զաւակէ հայրենեաց իւրոց. և ծնաւ 'ի նմանէ մի միայն որդի. որում ընդ արեան և ընդ լաւութիւն բարուց՝ ետ և զանուն իւր. կոչեալով զնա տուրի կամ տուրիթ։ Զեր արժան պատծառութիւն այսր բարեպաշտ տոհմի փայլել միայն յերկրին սամարիայ. վասն որոյ մնօրինեաց ՝ծ անցանել նմա և լուսաւորել և զայլ երկիր օտար առաւել կարօտ լուսոյ՝ ծածկեալ թանձրամած խաւարաւ։ Թշուառութիւն՝ որ ընդ համբրէն թագաւորութիւն իսրայելի խախտեաց և զայս տուն, բազմաց երբեր օգուտ բաղում։ Աղմանասար արքայ ասորեստանեայց նուաճեալ զթագաւորութիւն իսրայելի՝ զտասն ցեղս եհան յերկրէ իւրեանց, և տարեալ ցրուեաց զնոսա 'ի քաղաքս, և յաւանս, և յագարակս երկրի տերութիւն իւրոյ։ Դ նմին ժամանակի և տուրիթ կնաւ և որդւովն իւրով ՝ծաւ 'ի գերութիւն 'ի նինուէ. այլ գոլով արի 'ի ճախողութիւն, որպէս էր հաւատաստ և զգաստ 'ի յաջողութիւն, եդ 'ի մտի՝ թէ ոչ երբէք թշուառանայ մարդ, յորչափ պահէ հաւատարիմ բարեկամութիւն առ ՝ծ։ Դերի եղև մարդոյ, այլ ոչ երբէք գերեցաւ մեղայ։ Լմենայն ազգ նորա և եղբարք երբայեցիք համարեցան՝ թէ 'ի սակս հարկաւորութեան ազատ են յօրինաց ուտել 'ի կերակրոց անտի հեթանոսաց. նա ոչ երբէք ՝ճաշակեաց կամ մերձեցաւ յայնպիսիս. և ուր պահասէր կերակուրն՝ ըստ օրինաց, նա զպտկասութիւնն զայն պահօք լցուցանէր։

Պարձահաւոյց եղև նմա ՝ծ վասն իւրոյ ան,

դրդուելի հաստատութենն 'ի բարի՝ նաև յօտար երկրի անդ գերութե. զի տնօրինեաց գտանել ընորհս առաջի նեմեսարայ. այսինքն սաղմնասարայ արքայի. որոյ տեսեալ զխոհեմութի և զհաստատութի նորա՝ արար զնա գործակալ կամ մատակարար 'ի խնամել զոչխս գարմանոյ իւրոց արքունեաց. միանգամայն ետ նմա ազատութիւն երթալ ուր և հաճեսցի։ Ոչխարն զոր ունէր տովբիթ 'ի պաշտամանէ անտի՝ էր առատ. և պարգևք որք գային նմա յարքայէ, առաւել էին քան զսահմանեալ թոշակն։ Ի սակաւ ամս մեծացաւ տովբիթ, այնչափ՝ զի բաց 'ի սովորական ծախուց անձին և տան իւրոյ. և բաց 'ի բազում ողորմութեց, զոր առատապէս բաշխէր աղքատաց և տառապելոց իւրոյ ազգին, եդ 'ի պահեստ քանքարս կամ տաղանդս տասն. այսինքն երկերիւր յիսուն լիտր, այն է ունկի արծաթոյ հնգետասան հազար. զոր ետ 'ի փոխ գաբայելայ իւրում ազգականի՝ տեսեալ զնա կարօտ օգնութե։

Գաբայել բնակէր 'ի Հռագիւս կամ Հռագաւ քաղաք, որ էր յերկրին Մարաց 'ի լերին Եկբատանայ՝ զայնու ժամանակաւ ընդ իշխանութիւն ասորեստանեայց. և էր այր յաջողաձեռն և ժրաջան. այլ որպէս առանց հիմնոյ ոչ շինի տուն, նոյնպէս չէ բաւական լինել ժրաջան, եթէ չունիցի ինչ 'ի ձեռին՝ որով սկսանիցի յառաջադէմ լինել։ Տովբիթ վստահացաւ 'ի նա զնախագրեալ տասն քանքար արծաթոյ 'ի փոխ՝ առանց տոկոսեաց, բայց հանդերձ մուրհակաւ. որով արար գործ ողորմութե գաբայելայ, և յառաջատես զգուշութի անձին և տան իւրում։ Գիտէր եթէ հնար է այսօր լինել ատելի, որ երեկ սիրելի էր. գիտէր թէ սիրելիք նպաստաւորեալք՝ են իբրև սպունգք 'ի ձեռին իշխանաց, զորս նովին գիւրութի ընուն գանձիւ, որով գիւրութի յետոյ ճմլեալ քամեն զամենայն։ Գանձ հեռացուցեալ, և եդեալ 'ի ծածուկ և 'ի հաւատարիմ ձեռս, ոչ գիւրաւ կորնչի 'ի պատճառս անյաջողութեց. և գիւրին է թաքու-

ցանել զպիտակ թղթոյ. այլ է դիւրին թաքուցանել զգանձարան։ Այս պարզաբար ասել, տովբիթ քաջ դուշակեաց զելս իրաց վասն իւր։

ԳԼ. Օ.

Մեղսաառաքեն տովբիթեայ։

Բանզի յետ ամաց իբրև վեցից մեռաւ սաղմանասար, և փոխանակ նորա թագաւորեաց սենեքերիմ. որում այնչափ ատելի եղև տովբիթ, որչափ սիրելի էր հօր նորա. ոչ 'ի պատճառս անհաւատարմութեան իմիք, կամ այլ ինչ յանցաւորութեան, այլ վասն բարեգործութեան իւրոց։ Տեսաք յիւրում տեղւոջ զսենեքերիմ 'ի միում գիշերի մերկ կողոպուտ 'ի զօրաց իւրոց կոտորելոց 'ի հրեշտակէ տեռ, յանիրաւ մարտի, զոր յարոյց 'ի վերայ եղեկիայ։ Այլ զօրելով ամպարիշտ արքայի հանել զքէն վրիժու յիսրայելացւոց յերկրին յուդայ, դարձոյց զցասումն իւր 'ի վերայ երբայեցւոց՝ որք էին 'ի նինուէ. յոլովք 'ի նոցանէ զուր տարապարտուց հրամանաւ նորա խողխողեալ լինէին. և առ 'ի ցոյց կատաղի ատելութեան իւրոյ ընդդէմ երբայական ազգին՝ կամէր, զի դիակունք սպանելոց անթաղ նեխեսցին 'ի փողոցս և 'ի հրապարակս։ Տովբիթ ելեալ գիշերայն՝ դողանայր զնոսա, և թաղէր 'ի ծածուկ։ Հարց փորձ արար բռնաւորն, թէ ո՞վ բառնայր զնոսա 'ի հրապարակաց. մի ոմն 'ի նինուէացւոց անտի մատնեաց թէ տովբիթ առնէ զայն։ Այս շատ եղև առ 'ի մահ դատապարտելոյ զնա արքայի. յափշտակեցան յարքունիս ամենայն ինչք նորա. բայց զնա ոչ դտին, զի բարեկամք նորա գաղտ փախուցին զնա արտաքոյ նինուէի, և 'ի ծածուկ պահեցին 'ի խնդրակաց.

քանզի բարեկամք յոլովք էին նորա յաղագս բա-
րելաւութեան բարուց նորա։

Մինաց տովբիթ միայն կնաւն իւրով, և միածին
որդւովք տուբիաս. որք որչափ սիրելի էին նմա,
այնչափ առաւելագոյն զսրտցաւութիւն նորա։
Ի յանձկունէ դառն աղքատուն սիրտս իմն է
մարդոյ լինել միայն. զի միայն կրելով ոչ առաւե-
լու վիշտ նորա վշտակից լինելով և այլում. ամ-
նայնիւ շատանայ, որ վասն անձինն միայն ունի
հոգալ. բայց եթէ կնաւ և որդւովք ի նմին անձ-
կութեան գտանիցի, բազմապատկի վիշտ նորա. և
ըստ թուոյ սիրելեաց որք ընդ նմա կան ի նմին
վշտի, բազմապատկի և նորին աղքատութիւն. որով
և առաւելապէս ծանրանան տառապանքն։ Ա-
կայն ոչ՝ որ կամէր զի տովբիթ առաւելուցու
զվարձս իւր, և լինիցի այլոց օրինակ աբիական
համբերութեան, ոչ եթող զնա ընդ երկար տառա-
պիլ յայնմ անձկութեան։ Քանզի ոչ անցին աւուրք
յիսուն, զի սենեքերիմ չարաչար սպանաւ յերկա-
ցուանց որդւոց իւրոց. և նստաւ յաթոռ թագաւո-
րութեան նորա երրորդ որդի նորա ասորդան որ
անմանն գտաւ ի հայրասպան մեծեղեռն գոր-
ծոյ։

Ասորդան չէր ոխերիմ առ եբրայեցիս. մանաւ-
անդ թէ նա ինքն է՝ որ զբազումս ի նոցանէ (որ-
պէս տեսաք) դարձոյց ի սամարիա ի հայրենի
երկիր իւրեանց։ Սա յառաջ քան զթագաւորել
իւր ունէր զոմն յեբրայեցւոց անտի իւր սիրելի,
կոչեցեալ աքիաքարոս. այն էր եղբօրորդի տովբի-
թայ, որդի անսայելի եղբօր նորա։ Իբրև թագա-
ւորեաց ասորդան, արար զնա դիւանագպիր աբ-
քունեաց. և առաջին իշխան ի վերայ ամենայն
իշխանաց թագաւորութեան իւրոյ։ Այսն իշխանու-
թեան ամբարձեալ աքիաքարոսի, առաջին փոյթ նո-
րա եղև պաշտպան լինել անմեղ հօրեղբօր իւրում։
Խրատեցաւ ի արքայի, և շնորհեցաւ նմա դարձուցա-
նել զտովբիթ ի նինուէ. և դարձուցան նմա ինչք
նորա (որպէս ընթեռնուս լատինն)։ Եւ զկնի

ծփանաց իբր յիսուն, կամ քառասուն և հինգ աւուրց՝ խաղաղացաւ ընդ ամն բաղումս։

Այլ յետոյ անօրինեցաւ 'ի ներսէ վերստին աբատիայլէլ արիական համբերութեանն նորա յայլ տառապանս, մինաւանդ թէ 'ի կոյտս տառապանաց։ Զի մեռանել ասորդանայ յետ թագաւորելոյ ամն իբրև երկուս և եթ, թագաւորեաց փոխանակ նորա նաբուքոդոնոսոր. որ յառաջին ամն թագաւորութեանն իւրոյ ոչինչ նեղէր զերբայեցիս։ Այլ յերկոտասանեորդ ամէ և անդր, յորժամ եղև յուդթայ երբայեցւոյ հատանել զգլուխ հոլոփերնեայ զօրավարի նորա, և կոտորել երբայեցւոց ըստ առաւել մասին զփախստական զօրս նորա, վառեցաւ 'ի նմա հրդեհ անհնարին տաւելութեանն ընդդէմ ազգին այնմիկ։ Որոգեաց անօրէնն զանդթութիւն սենեքերիմայ. և առ 'ի վրէժխնդրութիւն նախատանաց և այնչափ վնասուց իւրոց՝ զոր ընկալաւ 'ի ներքոյ բերդեսայ, տայր տանջել և չարամահ սպանանել 'ի նինուէ զերդկելն երբայեցիս, և պատուիրէր անթաղ մնալ դիականց 'ի հրապարակս 'ի նախատինս աղգի նոցա։ Այս բան թէպէտ չէք յայտնի գրեալ, բայց դիւրաւ քաղի 'ի գրոցն. գտանեմք տանջեալս և սպանեալս՝ թափեալ յոտից և 'ի պէղանց, և այնպէս անթաղ թողեալ 'ի հրապարակի անդ. և ոչ գտանեմք թէ յորոմամ ժամանակի, և որոյ թագաւորի հրամանաւ։ Այլ տեղեաց գրոցն երևի թէ եղև կամ առ ասորդանաւ, և կամ առ նաբուքոդոնոսորաւ։ Որ ասորդանաւ չէ հաւատալի. որովհետև տեսաք զնա բարեսիրտ առ երբայեցիս, և չէ իսկ հաւանելի թէ աբիաքարոս երբայեցի՝ առաջին իշխան և սիրելի ասորդանայ՝ թողեալ իցէ զնա բերիլ յայնչափ անդթութիւն՝ մինաւանդ թէ յիմարութիւն։ Այս՝ մարթ է թէ ոք 'ի նինուէացւոց անտի յառանձին թշնամութէ սպանեալ իցէ զոք յերբայեցւոց. որպէս հանդիպի և յայլ քաղաքս. զի ոչ թագաւորն, և ոչ իշխանք կարող էն խափանել իսպառ, զի մի երբէք մարդասպանութէ ինչ դիպեա-

ցի. քայց յայնպիսի գիպուածս ոչ երբեք լինի յանցանք արժանի մահու՝ գթութիւն թաղելոյ զայնպիսի սպանեալն։ Այսպէս պարտ է ասել, թէ զայս հալածումն յարոյց վերստին նաբուքոդոնոսոր. զպատմաւն գտանեմք յայտնի 'ի գործն յուդիայ, յերեքտասան կամ 'ի չորեքտասան ամի թագաւորութեան նորա. և չունիմք 'ի գիրս նշան ինչ հակառակ։

Բայց այսմ տեսութեան տովբիթ զկնի տառապանաց իւրոց, որ առ սենեքերիմաւ, վարեաց կեանս խաղաղական ամն իբրև վեշտասան. մինչև այլ նոր տառապանք հասին 'ի վերայ նորա։ Զանգի նա որպէս առ սենեքերիմաւ, նոյնօրինակ և 'ի հալածանս նաբուքոդոնոսորայ առնէր ողորմութիւն ընդ գիակունս եբրայեցւոց, որք անթաղ արկեալ կային 'ի հրապարակս. զի գաղտաբար յափշտակեալ թաղէր զնոսա ընդ հողով։ Եւ զայս այնչափ հաստատութիւն առնէր, մինչ զի 'ի տօնի միում մեծի արարեալ նորա 'ի տան իւրում ճաշ մեծ հանդերձ բարեկամաբ՝ իբրև կամէր բաղմիլ 'ի սեղան, լուեալ յորդւոյ իւրմէ, զոր առաքեաց ածել անդր և զայլս յեբրայեցւոց աղքատաց, թէ մի ոմն 'ի նոցանէ կայ 'ի հրապարակի անդ մեռեալ անթաղ, առժամայն եթող զճաշն, եթող զհրաւիրեալս, և ընթացաւ առ զմեռեալն, եբեր 'ի տուն իւր և թաքոյց. և 'ի մուտս արևու թաղեաց զնա։ Բարեկամք և մերձաւորք նորա Ի զի զդուշացուցանէին զնա, և Ի զի բամբասէին զնա՝ ասելով. "արդ ոչ էս երկնչի մեռանել վասն իրացս այսոցիկ, զի վասն որոյ հալածեցաւն՝ դարձեալ եկեալ թաղէ զդիակունսն"։ Բայց տովբիթ մեծ էս համարէր զայն գործ ողորմութեան քան զկեանս իւր։

Զետ այսորիկ եհաս նմա նոր փորձութիւն յառաւելութիւն արդիւնական առաքինութեաց. քանզի յաւուր միում 'ի գալ նորա անագանի 'ի տուն խոնջ և վաստակ՝ 'ի թաղելոյ զմեռեալս, դէպ եղև նմա ննջել առ որմով գաւթի տան իւրոյ գոլով պղծեալ ըստ օրինաց՝ վասն մերձենալոյն 'ի դիակունս. և

այն ինչ աչքք բացքք 'ի վերնայէր, ձագք ծիծռանց յառաստաղաց անտի ծրաեցին յաչս նորա. և խաւարեցան իսպառ երկու աչքնորա։ Ինկաւաւ տովբիթ և զոյս տառապանս յօժարակամ հպատակութիւն ածային կամաց. բայց ոչ զանց արար զոր ինչ առնել էր յիւրմէ կողմանէ 'ի դարման։ Գնաց առաջնորդութիւն այլոց առ բժիշկս անդ 'ի նինուէ. և ապա յերդմամիդա քաղաք պարսից, ակնուանելով գտանել գիւրութիւն ինչ 'ի բժշկաց անտի, կամ 'ի բաղանեաց, և կամ յօգոյ երկրին։ Բաղում ինչս ծախեաց, և բաղումս աշխատեցաւ, այլ ոչինչ օգտեցաւ. և առ կուրուն ասաց՝ ոչ կարելով խնամ ունել իրաց իւրոց, անկաւ վերստին յաղքատութիւն։ Այս այնպէս նա որ յիւրոց ընչից առատաբաշխ տրօք ողորմութիւն զբազմութիւն աղքատաց միթիթարէր՝ կոչոտացաւ զի աքիաքարոս ռոձիկք իւրովք գարմանեսցէ զնա։ Բայց և անտա կին նորա մանէր և գործէր ձեռօք իւրովք վասն օտարաց. և զվարձս զոր տային նմա՝ ծախէր 'ի կարեւոր պէտս տան իւրոյ։ Յաւուր միում 'ի վերայ սովորական վարձուց ետուն նմա 'ի պարգև ուլ մի ևս. զոր իցէ թէ չէր բերեալ 'ի տուն. զի լուեալ տովբիթայ զձայն նոր՝ անկաւ 'ի կասկած թէ գողունի իցէ։ Յայտ արար կնոջն զկասկած իւր. և հրամայեաց դարձուցանել զնա ցտէր իւր. կինն թէպէտ ասէր և հաստատէր, թէ 'ի պարգև տուաւ նմա 'ի վերայ վարձուց իւրոց. բայց տովբիթ ոչինչ իւիք հանդարտէր, այլ միշտ զնոյն պնդէր ստիպելով դարձուցանել զուն տա տէր իւր. զի ոչ էն ինձ ասէր օրէն ուտել զգողունի. մինչ զի 'ի զուր ջանայր կինն արդարացուցանել զանձն։

Յայսմ երևի թէ էանց տովբիթ զչափ խոհեմ և բնտրողական նախանձայուզուն. գուցէ լաւ ևս էր ծածկել զկասկած իւր, և պարզ հարցմամբ խնդրել զճշմարտութիւն։ Այրևի թէ պարտ էր հաւատալ հաստատութիւնք բանից կնոջն, ճանաչելով զնա երկիւղած 'ի Տէրն, և հեռի ամենևին յայդպիսի նշաւակելի գործոյ, զորօրինակ է զողուն։ Բայլ

թոյլ էտ ՝ած զայս վերնական ՝ի ծնառայն իւր սիրելի յուսումն կասկածոտ մնաց. զի ուսցին ոչ անխտիր անսալ իւրեանց կասկածանաց. որպէս և անչափաւորք նախանձաւորաց. զի գիտասցեն, թէ նախանձն յորժամ ոչ է կանոնեալ խոհեմութիւն, պատճառս տայ գայթակղութեաց. և ՝ի ջանալ խափանել զկարծեցեալ մերս՝ բազում անգամ նոր մերզ պատճառուէ։ Աշտամբանքն միշտ գառն են. իսկ անմեղին՝ որ մնայ գովութիւն, և երախտաւորին՝ որ ակնունի հնորհակալութիւն, փոխանակ այնր լսել կշտամբանս՝ անպերելի է։ Որպէս ահա տեսանեմք ՝ի կինն տովքիթայ, որ ոչ եւս ժուժելով տանել անպարտ կշտամբանաց անձին՝ շուարեցաւ ՝ի մտաց. և մոռացեալ զբարեպաշտութիւն իւր, և զպարտուպատշաճ պատիւ առն՝ խօսեցաւ խստիւ առ նա անդէպս և անպատեհս, ՝ի դէմն հարկանելով նմա զբարեգործութիւնս նորա, իբր առ անպիտանուէ, և առ մարդկան ականէ գործեալ, վասն այնորիկ և անբնդունելի առաջի ՝ած։ * Որ էն ասէ ողորմութիւնքն քո և արդարութիւնքն. զի ահաւասիկ յայտնի եղէն քեզ։ Իբր ասել, զամենայն կոյր զկուրայն առ մնափառութիւն գործեցեր, վասն այնորիկ ՝ի հար զքեզ ՝ած կուրութիւն. և այլ այսպիսի բանք։ Թոյլ էտ ՝ած և հնոջն գթեալ յայսպիսի յանցանս, վերստին յուսումն արանց, առ ՝ի չտալ վայրապար պատճառս բարկութիւն իւրեանց կանանց, թէպէտ և հեզաբարոյք էին. քանզի չէք ՝ի կանայս կիրք դժուարայաղթ իբրև զբարկութիւն. ՝ի յաղթել այլոց կրից՝ փութաջան են, զի փառս համարին զայն անձանց, բայց յաղթել կրից բարկութիւն յամր են և դանդաղ յոյժ. զի դնեն ՝ի մտի, թէ լռել և ՝ի չափս ունել զանձինս՝ տկարութիւն և նուաստութիւն ինն համարիցի կանայցի։

Տեսեալ տովքիթայ զկինն խռովեալ՝ ոչ եւս ասաց ինչ, զի մի եւեւս գրդռեսցէ զնա. գիտէր՝ զի կանայք դառնացեալք յորժամ սկսանին լեզուագաբել, եթէ երկարեսցին խօսքն, միշտ յառեգոյնս խօսին. և որպէս ոչ եղէն առաջին ՝ի խօսել, նոյն

պէս ոչ երբեք հանդուրժէն լինել առաջին 'ի լռել՝ Լռեաց տովբիթ, բայց այնչափ եղև դառնութիւն սրտի նորա, մինչև 'ի յորդահոս արտասուս լուծանիլ, և ցանկալ էլանել յաստի կենաց։ Սակայն և յայնմ մեծի սրտցաւութիւն իւրում եկաց անխախտելի 'ի հաստատութիւն. զարձաւ առ ՀԱԾ ՋԵՐՄ պաղատանօք. երկիր եպագ տնտեսութեաց ԱԾԱՅԻՆ արդարութիւն. գոլեաց զբարութիւն նորա. խնդրեաց զողորմութիւն նորա. պատրաստ ընծայեցոյց զանձն առ ամենայն հարուածս, և յոժարափոյթ միշտ 'ի համբոյր ԱԾԱՅԻՆ ձեռաց։ Յոնարհեցաւ և խընդրեաց զթողուն մեղաց իւրոց. և ապա արկ աղերս հրամանն տալ էլանել հոգւոյն 'ի մարմնոյ, լաւ հաւմարելով զմեռանել քան զայն կեանս. զի ոչ գիտէր՝ թէ որպիսի այցելութիւն պահեալ կայ նմա 'ի ՀՈՆԵ նաև յաստի կեանս. որպէս և այլում անձին եղելոց 'ի մեծագոյն տառապանս քան զնա յեկեղատանս. և թէ որպէս տրտմութիւնք երկոցունց պատճառեալ գլխովին յայլևայլ սկզբանց՝ ունին փոխիլ յուրախութիւն մեծ և անկարծելի, եթէ՝ անձանց և եթէ իրեանց, և բովանդակ ազգատոհմի նորոյ. զորմէ ժամ է պատմելոյ։

ԳԼ. Լ.

Առաջ սատայի դրդէր հրաձգուելոյ։

'Ի նմին աւուր, յորում տովբիթ լուաւ զգառն զայն յանդիմանութիւն 'ի կնոջէ իւրմէ աննայէ 'ի նէնուէ մայրաքաղաք ասորեստանեայց, օրիորդ մի ազգական նորա 'ի հռագիս ոչ կարի ինչ հեռի յեկեղատանայ մայրաքաղաքէ մարաց, լուաւ դառն նախատինս յաղախնեաց տան հօր իւրոյ։ Այնդ 'ի հռագիս (որ և հռագուէ և հռագա) բնակէր այրն

պատուական հռագուէլ հօրեղբայրը տուլբիթայ. որոյ էր միամօր դուստր սառա անուն՝ հասեալ 'ի չափ լինելոյ առն. զոր բաղումք խնդրեցին վասն հարուստ ժառանգութեան. և տուաւ իսկ եօթն առն հետզհետէ. բայց և ոչ 'ի մին վայելեաց տա- ռապեալ սղջիկն. եօթն անգամ հարսնացաւ, և եօթն անգամ այրիացաւ. այլ միշտ կոյս մնաց. յեօթն արանց անտի այլ ոչինչ չահեցաւ, բայց զցաւագին սուգ յուղարկաւորութեան նոցա։ Ի՞անդի գեւ մի, զոր 'ի գիրն ազմոդեւս կամ ազմոդէոս դեւ կոչէ՝ բռնակալեալ տիրեալ էր ամենայն առաղաստի նորա. և սպանանէր յառաջնում գիշերի զայն, որ ըստ օրինի առն կամէր մերձենալ 'ի նա։ Ապա- սն որոյ յետ այնչափ չար արկածից ոչ եւ ոք իշխէր խնդրել զնա 'ի կնութիւն. և որպէս թէ այս վիշտ չէր բաւական 'ի դառնացուցանել զամենայն ղկեանս պարկեշտասուն օրիորդին, լիրբ և յանդուգն աղախին մի յաղախնեաց անտի տանն՝ այնչափ զայրացոյց զթախիծ սրտի նորա, մինչ փոքր վարկանել նմա զմահ անձինն քան զայն կեանս։ Յանդիմանեաց սառա զաղախին մի տանն վասն անարժան գործոյ ինչ նորա. իսկ լիրբ աղախինն դարձաւ 'ի տիկինն իւր լրբենի դիմաք, և ասէ ցնա. զի՞նչ կամիս ասել, գուցէ կամիցիս և զիս սպանանել, զոր օրինակ ցարդ հեղձուցեր զեօթն արդ. ընդէր և ոչ դու՝ ընդ նոսա կորեար, որովհետև չունիմք տեսանել մեք 'ի քէն զաւակ մինչև յաւիտեան։ Զիր նախատինք դառնագոյն՝ քան թէ առնուլ նիւթ նախատանաց զայն՝ ընդ որ ցաւիլ և որում կարեկից լինել արժան էր։ Եթէ սառա էր քաղցր և համբոյր և երկիւղած 'ի հոնէ, ընկալեալ էր արդեօք անպատկառ աղախինն այն զարժանաւոր պատուհաս լեզուագարութեան իւրոյ։ Ամէն լուեաց սառա, և դարձուցեալ թիկունս աղախնոյն, եւ միայն ընդ միայն 'ի վերնատունն անդր տան իւրեանց. և տարածեալ առաջի ոյ զցաւագին սիրտ իւր, զերիս տիւս և զերիս գիշերս ոչ առ 'ի բերան կերակուր կամ ըմպելի. (այսպէս

ընթեռնումք 'ի լատին թարգմանութիւն։) Լու կա-
ցեալ ընդ պատուհանն՝ որ էր ընդդէմ երուսաղէ-
մի, խնդրէր հանապազ 'ի նոնէ յորդառատ արտաս-
ուօք աղաչել զնա, զի մի՛ ևս լսիցէ զնախա-
տինսն։

Յետ այսպիսի աղօթից՝ միխիթարութիւն ինն ընդ-
կալեալ 'ի սրտի, փոխեաց զպատասխս իւր 'ի
ջերմ օրհնութիւն, այ ասելով։ (Օրհնեալ ես որ ծած-
իմ, և օրհնեալ է անուն քո որ և պատուական
մինչև յաւիտեան. որ 'ի բարկութիւն քում առնես
զողորմութիւն, և 'ի ժամանակի նեղութեան թողուս
զմեղս որոց կարդան առ քեզ յամենայն սրտէ։
Օ՛ քեզ ծած իմ աղաչեցի բոլորով սրտիւ իմով, և
ասացի արձակեալ զհոգիս 'ի մարմնոյս իմմէ, զի մի՛
ևս յաւելից լսել զնախատինսն։ Լու գիտես որ,
զի միշտ սրբութիւն պահեցի զկուսութիւնս իմ, և ոչ
է իմ աղտեղեալ զանուն իմ և զանուն հօր իմոյ։
Լեթէ խնդրեցի այր, այն եղև երկիւղիւ քով. և
ոչ յախտաւոր ցանկութիւն հաճեցայ լինել առն.
ահաւասիկ կորեան իմ ԵՕՅՆ այր. զի կամ ես անա-
արժան էի նոցա, և կամ նոքա ինձ. և գուցէ
պահեցեր զիս առն այլում լաւագունի։ Այ է մար-
դոյ քննել զխորհուրդս քո. բայց հաւասարն է, զի
ամենայն որ պաշտէ զքեզ և սիրէ, կեանք նոքա
եթէ նեղութիւք փորձեսցի, պսակեսցի. եթէ 'ի
տառապանս խոշտանգանաց իցէ՝ ազատեսցի. եթէ
վշտաբեր կրթեսցի, ունիցի մուտ 'ի գիրկս ողորմու-
թեան քո։ Լու ծած իմ՝ ոչ խնդաս ընդ կորուստս մեր-
զկնի մրրկաց առաքէս զանդորրութիւն. և զկնի ար-
տասուաց առաքէս զուրախութիւն։ Լ՚ծ խրատելի
եղիցի անուն քո օրհնեալ ի ամենայն յաւիտեան։
(Այս ամենայն պարզաբանութիւն է ըստ լատին
թարգմանութեան)։

Լ՚ղօթք սառսցի և տոլբիթայ 'ի միասին եղին
առաջի փառաց մեծին այ. և միանգամայն լսելի
եղեն ինն. որ և առաքեաց զհրամայել հրեշտակն
բժշկել զերկոսեան՝ արտաքոյ ամենայն ակնկալու-
թեան նոցա։ Տոլբիթ ոչ կարծէր՝ թէ կամիցի ՝որ

քժշկել զկուրութիւն իւր, բայց հաւատայր՝ թէ լսել լինիցի աղերս իւր՝ բառնալ զնա 'ի կենաց սատի։ Ամն որոյ իբր առընթեր տեսանելով զմահ իւր՝ կոչեաց զտուբիա զորդին իւր, և ետ նմա իբրև վերջին կտակաւ խրատս աքանչելիս. զոր արժան էր նշանակել աստանօր. զի էն հրահանգք, զորս պարտ և արժան էր ծնողաց զսրհանասպազ խօսիլ յականջս, և տպացուցանել 'ի սիրտս որդւոյ իւրեանց. այլ զի մի կարի ինն ընդմիջեսցին ընթացք պատմութիւնն, 'ի նոր գիրս 'ի բուն աղբիւր անդր առաքեմք զփափաքօղս։ Այս 'ի վերջոյ՝ կնիք խրատուց իւրոց դնէ զայս։ "Այս արդ որդեակ իմ յիշեսցես դու զամենայն զպատուիրանս իմ, զոր պատուիրեմ ես քեզ. և մի ջնջեսցին նոքա 'ի սրտէ քումմէ"։ Այլ զի իբրև հայր գորովական ցանկամ, զի մի պակասեսցի քեզ կարևոր դարման կենաց, ահա ցուցանեմ քեզ՝ զի մինչ դու մանուկ էիր փոքրիկ, ետու տասն քանքար արծաթոյ գաբայելայ որդւոյ դաբրիայ 'ի հուագա յերկրին մեդրաց. և զնորա ձեռագիր մուրհակն առ իս ունիմ. արդ պարտ է քեզ երթալ անդր դարձուցանել զմուրհակն, և առնուլ զարծաթն։ Այս մի երկնչիցիս ասել՝ որդեակ, թէ աղքատացաք յոյժ. ոչ պակասին քեզ ինչք և ստացուածք, եթէ երկնչիցիս դու յոյ, և 'ի բաց լինիցիս յամենայն մեզաց, և արասցես զհաճոյս առաջի նորա։ Այլ էր այս աջին նուագ 'ոբ և իմաստուն հօրն ուսուցանել զաւակին զայսպիսի կենսաբեր խրատս, բայց այժմ մերձ համարելով զմահ իւր՝ նորոգեաց նմա զայն, իբրև վերջին կտակ կամեցեալ սանդել նմա, զի անջնջելի կացցեն 'ի սիրտ նորա։

ԳԼ. Բ.

Զ-մէջէն առաւէ զերդի իւր զրոնբէնա յեկէնապանս ուղէ-
ղոնբէ հասպայել հրեշտակէ 'ի ֆերզաբանս երիտասարդէ
երնելոյ։

Որդին լուեալ զամենայն մտադիւր՝ խոստացաւ
առնել զոր ինչ պատուիրեաց նմա. միայն դժուա-
բսի եցոյց հանելոյ զարծաթն. զի նա ոչ զձանա-
պարհն գիտէր երթալ 'ի հռագիս, ոչ զգաբայել
ձանապէր, և ոչ ինքն էր ծանուցեալ գաբայելի.
և զի առ 'ի հանել զայնչափ արծաթ՝ հարկ էր
ցուցանել նշան ինչ հաւաստի։ Զաղագս նշանին՝
ասաց հայրն, շատ է մուրհակն ձեռագիր նորա. և
գաբայել էր ծանուցեալ 'ի հռագիս քաղաքի, զոր
դիւրին էր գտանել անդ. իսկ վասն ձանապարհին
ասաց թնդրել զայր հաւատարիմ տեղեակ այնց ճա-
նապարհաց. և ես ասէ տաց զվարձս նորա։ Լսէ որ-
դին 'ի տանէ, և եդիտ վաղվաղակի պատանի մի
շնորհալի տեսլեամբ, ազնուական՝ 'ի հանդերձս
ձանապարհորդի. որպէս թէ պատրաստ 'ի լուել։
Հանոյ թուեցաւ պատանին տուրիայ. այլ ոչ
գիտելով թէ հրեշտակ իցէ, ողջոյն ետ նմա, և
ասէ, ուստի՞ ես դու եղբայր. ետ պատասխանի
պատանին, յորդւոց իսրայէլի. ասէ տուրիա. կա-
րե՞ս գալ ընդ իս 'ի հռագիս յերկիրն մարաց, և
ե՞ս դու տեղեակ տեղեացն այնոցիկ. ասէ հրեշ-
տակն, քաջ տեղեակ եմ ձանապարհին՝ զոր բա-
զում անգամ արարի. ձանաչեմ և զգաբայել զեղ-
բայր մեր 'ի հռագիս 'ի լերինս եկբատանայ, առ
որում բազում անգամ օթագայեալ է իմ։ Զայս
իբրև լուաւ տուրիա, աղաչեաց զնա քաղցրութի՛ն
մնալ վայրիկ մի, մինչև մտցէ և ծանուսցէ զիրսն
հօր իւրում։ Լնթացաւ փութանակի 'ի տուն և
պատմեաց հօրն. գտի ասէ ընկեր որ գայ ընդ իս.

զարմացաւ տովբիթ ընդ արագ յաջողումն իրաց։ ասաց կոչել զնա։

Եւ երբ եմուտ պատանին անծանօթ 'ի ներքս, ողջոյն ետուն միմեանց։ Հարց ցնա տովբիթ, թէ ո՞վ իցէ, յորմէ՞ ցեղէ. և թէ երթայցէ՞ ընդ որդւոյ իւրում՝ 'ի հնագիս առ գաբայէլ, և դարձուսցէ զնա անդրէն ողջամբ։ Հրեշտակն ոչ յայտնեաց 'ի ժամուն, թէ իցէ հրեշտակ. և ասէ զնա. զաղ-գատո՞ղմ իմ խնդրես, թէ վարձաւոր որ երթիցէ ընդ որդւոյ քում. ասէ ցնա տովբիթ, կամիմ ես-բայր գիտել զազգն քո և զանուն. ասէ հրեշտակն, անուն իմ է ազարիա որդի անանիայ մեծի։ Ասէ այս այլաբանութեամբ ասաց. այլ տովբիթ հաւատալով թէ Ճշմարտութիւն իցէ որդի անանիայ, զոր ինքն քաջ Ճանաչէր, գովեաց զազգատոհմ նորա. և ասէ, Ճանաչէի ես զանանիա և զեղբայր նորա զյոմնա-թան զորդիսն սեմեայ մեծի. երկոքին արք բարե-պաշտանք. ընդ որս երթայաք 'ի միասին երկիր սպագանել՝ն յերուսաղէմ, և մատուցանել զանդ-բանիկս և զտասանորդս արդեանց. և ոչ մոլորե-ցան նոքա ըստ մոլորութեան եղբարցն մերոց. յար-մնտոյ և յազգէ մեծամեծաց ես եղբայր։ Ապա խոստացաւ նմա վարձս դրամ մի աւուր, որ է մի տրամ արծաթոյ, բաց 'ի ծախուց Ճանապարհին զոր առնէր տովբիթ վասն երկոցուն. և յորժամ ողջութեամբ դառնայցէք ասէ, յաւելից ես 'ի վարձն քո. և պատուիրեաց որդւոյն փութանակի պատ-րաստել զամենայն որ ինչ կարեւոր է վասն Ճա-նապարհի։ Եւ հայրն օրհնելով զնա՝ ասէ, գնա՛ դու որդեակ ընդ առնդ ընդ այդմիկ. այլ որ բնա-կեալն է յերկինս ՅԱԾ, յաջողեսցէ զՃանապարհ ձեր. և հրեշտակն նորա ուղեկից լիցի ձեզ։

Եւ ելին գնացին երկոքեան պատանեակք 'ի միա-սին, և շուն տուբիայ պատանեակին ընդ նոսա։ Ապա-զի փոքր ինչ հեռացան 'ի տանէն, սկսաւ մայրն լալ և ողբս առնուլ 'ի վերայ որդւոյն. և անիծա-նել զարծաթն՝ յոյր սակս համարէր զորուսանել զմիամտոր որդեակն իւր. բաւական էր մեզ ասէր որ

պատրաստեալը է մեզ յայլ. զի՞ պիտէր զորդեակն մեր 'ի մէնք արձակել. ոչ դա էր ցուսպ ծերութեանն մերոյ՝ մնասել և ելանել առաջի մեր։ Ակայր թշուառուն և վտանգ՝ որ ոչ անկանէր յայնժամ 'ի միտս գորովական մօրն՝ թէ պատահեսցի որդւոյն 'ի ճանապարհի յաւազակաց, 'ի գազանաց, յանմարդի անապատս, 'ի գետոց, 'ի պակասուէ պաշարաց. մինչ գուցէ և ընդ պատանին առաջնորդ որդւոյն՝ ընդ որ հաճեցաւ 'ի տան իւրում, սկսեալ ելից թերամտել, երբ թէ կարի մանուկ է անփորձ և անզօր 'ի պաշտպանութենէ 'ի վտանգս։ Այսպէս հարկ եղև ծերոյն տովբիթայ զամենայն ճարտարաբանութիւր 'ի վար արկանել՝ առ 'ի հանդարտեցուցանել զվշտահար մայրն. հուսկ յետոյ դադարեցոյց զնա 'ի լալոյ՝ կրկին և կրկին յուսադիր լինելով, թէ բարի հրեշտակ նորա առաջնորդէ նմա, և յաջողեսցէ զճանապարհս նորա, և դարձցի որդին այսրէն ողջութիւն։

Այդ երեալ նոցա 'ի ճանապարհ, 'ի նմին աւուր զառաջին հանդիսան առին առ ափամբ տիգրիս գետոյ, ուր 'ի մեծի վտանգի դտաւ պատանեակն տուբիա։ Զանգի յիջանել նորա լուանալ յեզր գետոյն, ահա ձուկն մի մեծ բացեալ զբերանն՝ վազեաց 'ի գետոյ մնաի կլանել զնա. զոր տեսեալ պատանեակին՝ զարհուրեցաւ յոյժ. և թէպէտ առ զերծանելոյ 'ի վտանգէն շատ էր ելանել 'ի ջրոյն, և մի կամ երկու ոտնափոխ հեռանալ 'ի ցամաք. բայց նա այնչափ շփոթեցաւ, զի զայլ ինչ ոչ գիտաց առնել 'ի ժամուն, եթէ ոչ միլ բառնալ և ազաղակել առ ընկերն հասանել նմա յօգնութիւն, զի յափշտակի 'ի ձկանէ. ուր ահ առաքէր զձուկն զայն ոչ 'ի կլանել զնա, այլ զի ինքն որսասցէ զնա. որ բաց 'ի կերակրելոյ զնոսա զերկոսեան՝ ունէր և այլ օգուտս մեծամեծս բերել նմա։ Այսն այնուրիկ ասաց նմա հրեշտակն. մի ինչ երկնչիր, թոզ զի մերձենայցէ առ քեզ, և դու բռնեսն հար կալ զկանանչայ նորա, և ձգեա զնա 'ի ցամաք։ Այնպէս արար տուբիա. ապա ասէ ցնա. արդ բաց դու

զփոր ձկանդ, և հան զսիրտ, և զլեարդ, և զլեզու դորա. և պահեա զդուշութիւն զի ոչ դեղք առողջարար զանազան ախտից. և զձուկն խորովեցին, մասն ինչ անդ կէրան. իսկ զմնացեալն աղեալ, տարան ընդ ինքեանց, որ և եղև նոցա պաշար մինչև ի նապարհի բաւական, մինչև եկին յԵկբատանս. (այսպէս ունի լատինն)։ Կարող էր հրեշտակն յամենայն տեղիս պատրաստել կերակուր առանց բառնալոյ ընդ ինքեանս զայն ծանրուն. այլ ոչ արար, 'ի խրատ մեզ՝ թէ ուր ժամանեն մարդկային հնարք, չեն սովոր հրեշտակք 'ի կիր արկանել զիւրեանց հրեշտակական կարողութիւն, և ըստ սովորական կարգի՝ չէ պարտ սքանչելիսն մեալ ունել ինչ, զոր մեք կարող եմք բնապէս առնել, թէպետ և փոքր ինչ դժուարութիւն։

'Ի ճանապարհին եհարց տուբիա ցհրեշտակն, թէ վասն որոյ ասաց բառնալ զսիրտ, զլեարդ, և զլեզու ձկանն. և հրեշտակն ուսոյց նմա զներգործութիւնս նոցա. և ոչ անց երկար ժամանակ, զի ետես տուբիա արդեամբք զճշմարտութիւն բանից հրեշտակին։ Յաւ իբրև մերձեցան նոքա 'ի հնագիս, եհարց պատանեակն թէ որ ունին իջևանել. իսկ հրեշտակն մատամբ ցուցեալ զգեօղ մի, ասէ. է անդ այր մի, որ աղգական է քո՝ կոչեցեալ հնագուէլ. և է նորա դուստր միամօր, և անուն նորա սառա. արդ՝ խօսեցայց ես վասն նորա, զի տացէ զնա քեզ կին. զի քեզ անկ է ամենայն ժառանգութիւն հնագուելայ. քանզի չիք նորա այլ ուստր կամ դուստր. և դու միայն ես յազգէ նորա. և աղջիկն արդարև բարւոք է, զգաստ, և իմաստուն։ Տուբիա պարզմտութիւն խոստովան եղև, թէ ինքն երկնչի յայմմ մասին անսալ խորհրդոյ նորա. զի լուեալ է իմ ասէ վասն աղջկանն, թէ տուեալ է զնա եօթն առն, և ամենեքեան սպանեալ են 'ի գիւէն որ ունի զաղջիկն, և սիրէ զնա։ Յայլ հրեշտակն ապահովացոյց զնա (որպէս ընթեռնուլ լատինն). այդ վասանդք ասէ՝ 'ի թոյլ տալոյ ոչ գան 'ի վերայ նոցա միայն, որք առանց ՝ՁԲ երկիւղի են

յարձակին յամենութիւն զօրէն անասնոց անբա-
նից՝ լուկ 'ի դրդռմանէ ցանկութեան։ Եւ խրատ եւս
նմա, նուիրել ոչ աշխարհաբ և ժուժկալութիւն զերիս
առաջին գիշերս. և ապա մերձեսցի առ կինն ան-
արատ սրտիւ վասն սիրոյ որդեծնութեան։ Եւ եւս՝
զի յառաջնումդ գիշերի առցէ ամենեւնեան կրակ,
յորում խունկք ծխեալ իցեն, և դիցէ 'ի վերայ
նորա 'ի սրտէ անտի և 'ի լերդէ ձկանն, և ծխեսցէ. և գիտասցէ հաւաստեաւ՝ զի վասնմարակի փա-
խիցէ դեւն, և ոչ եւս դարձցի։ Եւ սա յաւելուն եօ-
թանասունք. զի քեզ էր պատրաստեալ (աղջիկն)
'ի սկզբանէ իւրմէ. և դու ապրեցուսցես զնա. և
նա ընդ քեզ եկեսցէ 'ի տուն քո. և կարծեմ թէ
որդիք լինին քո 'ի նմանէ։ Երբև լուաւ զայս առ-
բիա՝ անկաւ նման գուութ ընդ աղջկանն, և ոգի նո-
բա կցեցաւ 'ի սէր նորա։

Յետ այսպիսի խօսակցութեաց մտին նոքա 'ի
տուն հաւատաւոր իբրև երկու սնծանօթ ուղևորք
խնդրել իջևանս։ Ընկալաւ զնոսա հաղորդել ու-
բախութիւն։ և հայեցեալ 'ի տուրիա՝ ասէ ցկնոջն
ցկին իւր, տեսանես թէ զիարդ նման է պատա-
նեակս տովբիթայ եղբօրորդւոյն իմոյ։ Եւ սպա դարձեալ առ նոսա, Եհարց թէ յորմէ՞ ցեղէ են, և
ուստի՞ գան. և լուեալ եթէ յորդւոց նեփթաղիմոյ են, որք գերեալք են 'ի նինուէ, Եհարց վաղ-
վաղակի ցնոսա վասն տովբիթայ՝ զոր սիրէր յոյժ,
թէ ճանաչէն զնա, և թէ ողջ իցէ. և յասել
տուրիայ՝ թէ ողջ է, և հայր իմ է, նոյնժամայն
յարուցեալ անկաւ զպարանոցաւ նորա, համբու-
բեաց զնա, և յառաւելութիւն սիրոյն որ առ հայր
նորա, Եւլաց յոյժ 'ի վերայ նորա. և օրհնեաց զնա,
և ասէ ցնա, բարւոյ և բարեբարի առն որդի։ Եւ
տրտմեցաւ մեծապէս 'ի լսել թէ կացին աչք նո-
բա. ընդ որ լացին երեքեան՝ ինքն և հեգնաս կին
նորա, և սառա դուստր նոցա։ Եւ սպա բարեւմ ու-
բախութիւն պատրաստեցին ընթրիս բազմն խորտիկ.
և մինչև էին բազմեալ, յուշ արար տուրիա ընկերի իւրում կերպարանեալ ազարիայի զրանն որ

վասն աղջկանն, զորմէ խօսեցան 'ի Ճանապարհի, զի եղիցի այնպէս. իսկ աղաբիա յայտ արար զերսն հռագուելայ։

Այս անակնկալ խնդիր արկ 'ի վարանս յոյժ զՀռագուել, մինչ չգիտել թէ զինչ տացէ պատասխանի։ Ընդէտ կարծէր զտուբիա արկածիցն Եօթն փեսայից իւրոց յանկարծամահ եղելոց. և զի սիրէր զնա յոյժ, ոչ կամէր թէ լինիցի նա ուրեմն երորդ մեռեալ։ Ուրախկել զեղեալսն, և տալ հաւանութիւն խնդրոյն՝ թուէր մատնել 'ի սպանդ զմիակ որդի իւրումն եղբօրորդւոյ և բարեկամի սիրելւոյ 'ի նմանէ քան զամենայն բարեկամս։ Այլ յայտնել զանցեալ արկածս՝ էր յամօթ առնել զդուստր իւր, և հատանել զամենայն յոյս նորա. զի գիպողութիւն լուագոյն քան զայս՝ ոչ երբէք ընդ առաջ լինելոց էր նմա։ Իսկ մերժել զխնդիրն առանց յայտնելոյ զպատճառն՝ նախատինք մեծ էր տուբիայ. որ գոլով մերձաւոր ազգական սառայի, նմա անկ էր ըստ օրինացն Մովսիսի առնուլ զնա կին. ընդ նմա և ժառանգութիւն նորա։ Յայսպիսի ծուփս խորհրդոց վարանեալ Հռագուելայ, ջանացաւ փոքր ինչ ժամանակ որսալ, զի թերևս գտցէ հնարս ինչ առանց վշտացուցանելոյ զտուբիա, և առանց վնասելոյ դստերն՝ խափանել զխրդիրն։ Այլ զի մի 'ի յապաղանաց անտի 'ի կասկածանս ինչ անկցի տուբիա, ասէ ցնա, արդ ժամ է բազմել 'ի սեղան, կէր ա՛րբ և ուրախ լեր դու այժմ որդեակ իմ, և ապա խօսեսցուք. զի քեզ անկ է մանուկն իմ։ Այլ այս հնարքս օգնեաց և ոչինչ. զի յայտնի ասաց տուբիա, թէ ոչինչ ճաշակեմ ես 'ի տանս յայսմիկ, մինչև ոչ հաստատիցէք առ իս զիրսդ։

Յայնժամ 'ի նեղ անկեալ Հռագուելայ՝ ընտրեաց մերկանալ առաջի նորա զպատճառն յայտնելոյ զպատասխանին, քան թէ առանց յայտնելոյ յայն վտանգ արկանել զպատանին. և ասէ. ահա ասեմ քեզ որդեակ զճշմարիտն. եթող ես զզաւակդ իմ Եօթն առն. և յորժամ կամէին մտանել

առ դա, մեռանելին 'ի նմին դիշերի։ Լ՝ասա՝ (ըստ լատին թարգմանութեան) յառաջ մատուցեալ հրեշտակին, ասէ ցհռագուէլ. մի՛ ինչ երկիցես տալ զմանուկդ սմա. քանզի սմա՝ որ երկիւղած է յոյ, անկ է զի լիցի կին դուստր քո. վասն այնորիկ այլ ոչ կարաց ունել զդա։ Լաւ արժան է դիտել, զի հրեշտակն առ 'ի յաջողել զայս ամուսնութիւն, ոչ եդ առաջի հռագուելայ՝ ոչ զսերտ բարեկամութիւն որ 'ի մէջ տան իւրում և տանն տովբիթայ. ոչ ասաց թէ տուրքա է միամիտ որդի, որով դուստր նորա ոչ ունիցի կրեալ զնեղութիւս, զոր սովորաբար լինի կրեալ 'ի տագերց և 'ի ներից. ոչ խոսեցաւ յաղագս հնդետասան հազար ունկուոյ արծաթոյ, զոր եկեալ էր տուրքա հանել 'ի հռագուէլայ, որք դիւրացուցանեն զհարսնախոսութիւնս. այլ միայն՝ թէ երկիւղած է նա յոյ։ Լ՝մենայն իրօք հաւանելի է՝ թէ այսպէս խոսեցաւ հրեշտակն՝ առ 'ի խրատ և յուսումն հարց և մարց, թէ այս պարտ է լինել նոցա առաջին դիտելի և խնդրելի 'ի փեսայն, յորժամ խորհին տալ զդուստր իւրեանց ումեք. զի թէև միամիտ որդի իցէ, և հարուստ. այլ եթէ ախտաւոր իցէ, ժանտաբարոյ, հպարտ, խառնակեցիկ և անկրօն, միշտ անբերելի վիշտ և տանջանք լինի կնոջն. և աւերումն տան։ Լ՝սկ ընդ հակառակն՝ եթէ բարեպաշտ իցէ, և երկիւղած յոյ, ուրախութիւն լինի կնոջն, և 'ի խաղաղութիւն և 'ի յաջողումն ամենայն բարեաց տանն։

ԳԼ. ԹԵ.

Լ՚մռանռուն պոռբիայ ընդ սառայն դարեր հռաքարելայ. և հալածումն դիւին 'ի սառայն։

Ի բանն աստի հրեշտակին քաջալերեալ հռա-
գուելայ՝ կոչեաց զսառա զդուստր իւր, և կալեալ
զձեռանն նորա՝ ետ զնա կնութեան տուրիայ, ասե-
լով. ահաւասիկ ըստ օրինացն մովսիսի առ դու
զնա, և տար առ հայր քո. և ողորմածն ՅԱ յաջո-
ղեսցէ ձեզ 'ի բարիս. և կոչեաց հռագուել զհեգ-
նա զկին իւր, և գրեցին մուրհակ և ինքեցին վասն
ժառանգութեան, զկէս ընչից իւրեանց տալով յայն-
ժամ. իսկ զմնացեալն ասէ առնուցուք՝ յորժամ մե-
ռանիցիմք ես և կինս իմ. ապա նոստան ուտել և
ըմպել և ուրախ լինել։ Բայց կասկած մահուն նո-
ցոյ փեսային էր լեղի 'ի սրտին հռագուելայ. որ
դառնացուցանէր զամենայն հմտադամ կերակուր։
Չու իբրև կատարեցին ուտել զընթրիսն, ասաց
ցհեգնա ցկինն իւր պատրաստել զսենեակն վասն
նոցա. և առեալ նորա զդուստր իւր՝ տարաւ 'ի
սենեակ անդր. լայր աղջիկն յերկիւղէ անցեալ
արկածից, և մայրն ջնջէր և մաքրէր զարտասուս
նորա, և քաջալերէր զնա՝ ասելով, քաջալերեաց
դուստր՝ որ երկնից և երկրի տացէ քեզ ուրախու-
թիւն և ցնծութիւն փոխանակ տրտմութեան այսորիկ։
Լ՚ապա տարան և զտուրիա առ աղջիկն. յիշեաց նա
յայնժամ զբանն հրեշտակին. առ զամ՚ինախառն
կրակ խնկոցն, և եդեալ 'ի վերայ նորա զսիրտ և
զլեարդ ձկանն՝ ծխեաց 'ի սենեկի անդ. առեալ
ազմոդեաս դիւին զհոտն զայն, եկ նոյնհետայն ան-
տի և փախեաւ 'ի վերին կողմն եգիպտոսի. և կա-
պեաց զնա անդ հրեշտակն, և ոչ եւս դարձաւ 'ի
սենեակ անդր։ Լ՚ՍԼ յաղագս այսր սքանչելի ներ-
գործութեան ունիմք զինի ասել առանձինն զլիսով։

Յետ ծխելոյն՝ յարեաւ տուբիա, յարոյց ընդ-
իւր և զսառա. և ըստ խրատու հրեշտակին՝ կացին
երկոքեան 'ի միասին յաղօթս, երկար և ջերմ պա-
ղատանաք յանձն արարեալ զանձին խնամոց նոսա։
Բայց 'ի սիրտ հոգագուեալոյ այնպէս տպացեալ կայր
կասկած մահուն տուբիայ յայնմ գիշերի, մինչև
առ սաստիկ յուզմանց խորհրդոց իւրոց՝ ոչ կարե-
լով ննջել, յարեաւ գիշերային, և առեալ 'ի ծա-
ռայից իւրոց ընդ իւր՝ ետ փորել և պատրաստել
տեղի գերեզմանի վասն նորա, զի գաղտ թաղես-
ցէ զնա։ Յաւ ընդ առաւօտն եկեալ 'ի տուն՝ ասաց
ցհէգնա ցկին իւր, յղել զմի յաղախնեաց տեսա-
նել զնա. դարձաւ աղաղակն խնդութիւն, ետ աւե-
տիս նոցա՝ թէ կան 'ի քուն խաղաղական երկոքեան
'ի միասին։ Յցաւ տուն ցնծութիւն, և հոգագուել
և հեգնա օրհնեցին զնոյն ուրախութիւն. և հրա-
մայեաց հոգագուել ծառայից իւրոց խնուլ զգե-
րեզմանն։ Յաւ սկսան առնել զհանդէս հարսանեաց
նոցա՝ հրաւիրեալ զամենայն մերձաւորս և զբարե-
կամս իւրեանց. և հոգագուել բռնադատեաց երդ-
մամբ չափ զուրբիա չգնալ անտի, մինչև կատա-
րեսցին չորեքտասան աւուրք հարսանեացն։ Ցետա-
նէր տուբիա եթէ պատշաճ՝ և օրէն էր անսալ
աներոյն. բայց միանգամայն հոգայր յոյժ վասն
ծնողացն, թէ զինչ առնիցեն՝ եթէ տեսանիցեն
զյամել իւր քան զսահմանեալ աւուրսն։ Վասն
որոյ առ շահելոյ ժամանակ՝ աղաչեաց զկերպարա-
նեալ ազարիայն զընկերն իւր երթալ 'ի հոգիս
մնուցանել զմուրհակ պարտուց գաբայելայ, և
առնուլ զարծաթն, միանգամայն հրաւիրել և զնա
'ի հարսանիս իւր։ Գնաց հրեշտակն առեալ ընդ-
իւր չորս 'ի ծառայից հոգագուելայ, և ուղղս երթ-
կուս. և դարձաւ յաջողութիւն, բերեալ ընդ իւր
զարծաթն և զգաբայել 'ի հարսանիս. և եղև ու-
բախութիւն մեծ ամենեցուն. և յամենայն կողմանց
յաճախէին օրհնութիւնք նորապսակ փեսայի և
հարսին։

Բայց մինչ 'ի տանն հոգագուելայ յաճախէին

ցնծալից ուրախութիւնք, 'ի տան ծերոյն տոմբիթայ լսելի լինէին լալիք և հեծութիւնք։ Բնութիւն մարդոյն դիւրատէտ միշտ գտանի 'ի կարծիս թշուառութեց՝ քան 'ի յոյս յաջողութեց։ Բաղում անգամ ՝ուծ իւրով բարերար գթութիւն պարգևէ մեզ բարութիւնս. և մեք մեղէն թշուառացուցանեմք զմեզ մերովս տարադէպ կասկածանօք։ Ա.ռ 'ի տանջել զմեզ՝ յոլովակի շատ է մի միայն անյաջողութիւն՝ որ ոչ է, և ոչ եղիցի, սակայն մեք ձևացուցանեմք զայն առաջի աչաց մերոց. և այնպէս վշտանամք և տառապիմք առաւել քան եթէ իրօք կրէաք։ Տեսեալ տոմբիթայ զի կատարեցան աւուրք ժամանակելոյն, և որդին ոչ երևէր, խորհէր 'ի սրտի իւրում, թէ գուցէ ճախող ինչ դիպուած արգել եղև նմա. գուցէ ասէր մեռաւ գաբայէլ, և ոչ ոք տայ նմա զարծաթն. և նա առ ամենեցուն ոչ կամ գալ։ Խորհէր զամենայն բաց յայնմանէ որ ՝ճմարիտն էր. ճախողութիւն տայր զյամէլն, որ էր 'ի պատճառս մեծի բարեբաստութեան։

Հոգաւէլ կամէր յղել զմի 'ի սպասաւորաց իւրոց 'ի նինուէ առ 'ի հանգուցանել զսիրտ ծնողաց նորա. բայց տուբիայ ոչ բարի թուէցաւ, թէ հայրն լսիցէ զամենութիւն իւր՝ եղեալ առանց գիտութեան նորա՝ յայլմէ որ ոչ գիտիցէ պատմել բարւոք ըստ ամենայն պարագայից. և այնպէս փոխանակ հանդարտելոյ՝ գուցէ և առաւել խռովեսցի, յայլ և այլ սնգէպ կասկածանս անկեալ։ Ա.յլ կամէր զի ինքն անձամբ յայտնեսցէ նմա. հաւատալ եղելով, թէ 'ի լսել հօրն 'ի բերանոյ իւրմէ զամենայն հանգամանս այնր ամենութիւն, զորօրինակ զպարտաւորութիւն իւր յօրինացն մովսիսի առնուլ զնա կին, որպէս և նա ինքն տոմբիթ պատուիրեալ էր նմա՝ առնուլ կին 'ի զաւակէ հարց իւրոց. զհամեստութիւն և զերկիւղածութիւն աղջկանն. զհարուստ ժառանգութիւնն, զոր կիսով չափ ընդ իւր ունէր, հաճեսցի և խնդասցէ հայրն՝ այնպէս, որպէս իւրով հաւանողական հաճութիւնք եղեալ. և օրհնեսցէ զնոսա։ Տոմբիթ իբր այր խոհական՝ քանիւ և յու-

սով բարեաւ՝ որպէս և իցէ հանդարտեցաւ 'ի լաւ լոյ. բայց անկա որպէս կէն տկարամիտ, և որպէս մայր գորովալից ոչ գիտէր բնաւ հանդարտիլ, այլ լայր և սգայր հանապազ. 'ի տուէ հաց ոչ ուտէր, և 'ի գիշերի ոչ դադարէր 'ի սգալոյ զտուբիա զորդին իւր, և ասէր. կորեաւ մանուկն, զի յամենայ այսչափ. ոչ է ինձ պէտս որդեակ իմ և ոչինչ, այլ ընդէ՞ր թողն զքեզ լոյս աչաց իմոց։ Լաւ կամեցեալ տովբիթայ մխիթարել զնա, լուռ լեր ասէ և մի հոգար, ողջ է, զի հաւատարիմ է այրն ընդորում առաքեցաք զնա։ Իսկ կէնն վշտահար՝ դուլուռ լեր ասէ, և մի խաբեր զիս։ Լաւ եղանէր զօրհանապազ և երթայր 'ի վերայ ճանապարհին, ընդ որ կարծէր գալ որդւոյն, և նստէր 'ի բարձրագոյն վայրի առ հեռագոյն ձգելոյ տեսութիւն աչացն, և դիտէր զճանապարհն. և հուսկ ուրեմն ետես զնա զի գայր։

Գանգի տուբիա զկնի կալոյ առ հեռագուելոյ զաւուրս ինչ, յառաջ քան զկատարիլ չորեքտասան աւուրց՝ բազում թախանձանօք ստիպեաց զնա արձակել զկնէն և զկէն իւր՝ փութով մեկնիլ անտի։ Հեռագուել և հեղնա համբուրեալ զսառաւ ըզդուստր իւրեանց, ետուն նմա իբրև ծայրագոյն հարկաւոր՝ պատուէրս ինչ՝ համառօտ, բայց բազմարդիւն. զոր արժան էր ամենայն հարց և մարց տալ դստերաց իւրեանց, յորժամ եղանէն 'ի հայրենի տանէ անցանել 'ի քուն տուն։ Պատուէրքն զոր պարզագոյն ընթեռնուամք 'ի լատին թարգմանութի՞ն են այսոքիկ։ Պատուել միշտ զսկեսուրն և զսկեսրայրն. և պահել զսէր նոցա առ ինքն՝ հաստատուն և անկեղծ պատկառանօք առ նոսա՝ սնեալով զնոսա 'ի հայր և 'ի մայր իւր։ Սիրել միշտ զայր իւր. և չթողուլ երբէք ցրտանալ սիրոյն 'ի պատճառս օտար ինչ ախորժակաց։ Կառավարել զընտանիս 'ի նա յանձնեալս. և բարուք մտաբերութի՞ մնադիր լինել 'ի բարութիւն և յօգուտ տանն։ Օգնացս և զգործս այնպէս բարեկարգել, զի անսուտ գտանելի լիցի, և մի տայցէ պատճառս քամ-

բասանաց։ Օ այս պատուէր կամ խրատ տուէալ հաւատուէլ դստեր իւրոյ՝ ետ ըստ չափու կիսոյ ընչից իւրոց և ծառայս և աղախնայս, ուղտս, և խաշն և արջառ, և արծաթ բազում. և յաւել նոցա օրհնութիւս բազմապատիկս. նոյնպէս և հիգնա իբրև մայր առանձինն յանձն արար տուրիայ ըզդուստր իւր չարամեցուցանել զնա, հայցելով 'ի ամենէ տեսանել զաւակ 'ի սառայէ դստերէ իւրմէ, զի բերկրեցայց ասէ առաջի նոյն. և այնպէս արձակեցին զնոսա երթալ 'ի խաղաղութի։

ԳԼ. Ժ.

Դաբէ պառիէայ 'ի պառն իւր։ Դատարանն ալաց ծերոյն պովիրիայ. լիուրիէան պան նոցա բարիօք։ Լոյս յայտնէրն հրեշտակի զանոն իւր նոցա. և որ ինչ եղեալն էին։

Գ.ուդ՝ եղեալ բազմութիւն 'ի Ճանապարհ, իբրև մերձեցան 'ի նինուէ, ըստ խորհրդոյ հրեշտակին՝ ելեալ տուրիա զկինն և զկարաւանն, զի հանդարտաքայլ եկեսցեն զկնի. իսկ ինքն և հրեշտակն երագեցին 'ի գնացս վաղագոյն ժամանել 'ի նինուէ, և պատրաստել զտունն յառաջ քան զհասանել նորոյ հարսին։ Լաւ անենա մայր նորա, որ նստեր և սպասէր ըստ սովորութեան 'ի վերայ Ճանապարհին որդւոյն իւրոյ, տեսեալ զնա 'ի հեռուստ զի գայր, ընթացաւ խնդութիւն ետ աւետիս առն, և ասէ. ահաւասիկ որդին քո գայ, և այրն որ չոգաւ ընդ նմա։ Իսկ տովբիթ մուռացեալ զկուրութիւն իւր, յարեաւ և ինքն ընթանալ ընդ առաջ որդւոյն. և մինչ ասա անդ խաբխափեր և դլորեր, եհաս որդին, փութացաւ կալաւ յարոյց և կանգնեաց զհայր իւր։ Յայնժամ երկոքին նոքա հայրն և մայրն անկեալ զպարանոցաւ որդւոյն՝ համբուրէին

զնա, և յառաւելութիւն խնդութեան լայնի՛ վերայ նորա. և ասէր մայրն գորովալից, տեսի ես զքեզ որդեակ իմ, արդ այսուհետեւ անհոգ մեռանիմ։ Զ.պա զարձան ամենեքեան և երկիրս պագին նմա, և գոհանային և օրհնեին զնա՝ յաղագս ամենայն ողորմութեանցս այսոցիկ։

Յայնմ վայրի եհան տուբիա զլեղի ձկանն, զոր պատուիրեալ էր նմա հրեշտակն պահել զգուշութիւն. ուսուցեալ էր նմա և զզօրութիւն նորա, և զեղանակ ի՛ գործ արկանելոյ։ Զ.ու ըստ այնմ օձ տուբիա նովաւ մեղմով ինն զաչս հօր իւրոյ. և զլի կսկծեցուցանէր, քաջալերէր զհայրն և ասէր, ժուժեա՛ հայրիկ և համբերեա՛. և իբրև եկաց վայր մի, սկսան լուսանքն կեղևել իբրև թաղանթ ձուոյ, և փրթանիլ, զոր կալեալ տուբիայ մատամբ՝ եհան յաչաց նորա, (այսպէս ընթեռնումք ի՛ լատինն)։ Զ.ու այնպէս բացան աչք տովբիթայ, և ետես աչօք բացօք զորդին եկեալ, զոր կոյր աչօք առաքեաց։ Զ.ցաւ տուն նորա խնդութիւն. և ամենայն մերձաւորք և բարեկամք տեսեալ զնա՝ զլի տեսանէր, աքանչացեալ զարմանային և խնդային, և ամենեցուն ձայնակցելով ընդ տովբիթայ՝ օրհնէին զնա։ Զ.յլ առաւելաւ հասարակաց խնդութիւն, յորժամ զկնի սակաւուց եկն եհաս և սառա, և ամենայն կարաւանն ընդ նմա՝ ծառայք և աղախնայք, ուղտք և հօտք խաչանց և արջառք, և արծաթ՝ թո՛ղ զքսան քանքարսն որ առաւ ի գաբայելայ։ Զ.ու այնպէս ի փոքր ժամանակի՝ ամենեքին կերպարանափոխ եղև տունն այն ողջոյն, փոքր ինչ յառաջ աղքատ՝ և համբրէն ի սուգ և ի լացս համակեալ, իսկ այժմ հարուստ, և համբրէն ի ցնծութիւն։ Զ.յսպէս գիտէ առնել ամենակալ տէրն, յորժամ կամի վախճան առնել տառապանաց իւրոց սիրելեաց, և բարձրացուցանել զնոսա՝ ո՛չ միայն յերկինս, այլև յերկրի ասա։

Յայսպիսում հանրական ուրախութեանն հայր խորհել, թէ զիարդ արժան էր վարձահատոյց լինել կերպարանեալ ազարիայի. որ երբէք ոչ յայտնեաց,

և ոչ իսկ նշան ինչ բնաւ երևեցոյց եթէ հրեշտակ էր՝ , այլ միշտ վարեցաւ իբրև լոկ մարդ։ Լուսեաց տեսլեթ զտուբիա զորդին իւր 'ի խորհուրդ. և յետ յառաջ բերելոյ 'ի մէջ իւրեանց զհաւատարմութիւն նորա , և զազամդեմ բարիս զոր արար նոցա յայնմ Ամնապարհորդութեան , որոշեցին՝ զկէս ամենայն ընչից զոր եբեր յերկրէն մարաց՝ տալ նմա. և առեալ զնա մեկուսի , ասեն. առ դու զկէսն այնր ամենայնի , զոր բերերն։ Յայնժամ էտ նոցա պատասխանի հրեշտակն , և ասէ. Օրհնեցէք դուք զԱծ երկնից , և խոստովանեցէք առաջի ամենայն կենդանեաց վասն ողորմութեանց , զոր արար ընդ ձեզ։ Խորհուրդ թագաւորի բարւոք է ծածկել , այլ գործս այ յայտնել փառք են։ Բարի են աղօթք հանդերձ պահօք. և բարի ևս է առնել ողորմութիւն քան կուտել զգանձս ոսկւոյ. զի ողորմութիւն 'ի մահուանէ փրկէ , և միանգամայն սրբէ յամենայն մեղաց։ Որք առնեն զողորմութիւս և զարդարութիւս , լցցին կենաւք. և որք մեղանչեն՝ պատերազմող են իւրեանց կենացն։ Ուրդ՝ յայտնեցից ձեզ բան մի. զի ասացի իսկ՝ եթէ զխորհուրդս արքայի ծածկել բարիք է , այլ գործս այ յայտնել փառք են։ Յորժամ կայեր դու յաղօթս և նու քո սառա , ես մատուցի զյիշատակս աղօթից ձերոց առաջի սրբոյն. և յորժամ թաղէիր դու զմեռեալս՝ ես ընդ քեզ էի. և յորժամ ոչն դանդաղեցար յառնել և թողուլ զՇնչն քո , զի երթիցես ամիսոփեսցես զմեռեալն , ոչ մոռացայ զքեզ , այլ ընդ քեզ էի։ Այս զի հաճոյ էիր դու այ , հարկ եղև զի փորձութիւն երևեցուսցէ զքեզ։ Այս առաքեաց զիս ՀԱԾ բժշկել զքեզ , և զնուն քո զսառա 'ի չար դիւէն։ Այս եմ հոգեփայել յԵօթանց անտի 'ի սրբոյն հրեշտակս կայ , որք կան առաջի փառաց ամենայն սրբոյն , և հանեն զաղօթս սրբոցն։

Իբրև լուան՝ թէ նա ընդ որում վարեցան իբրև ընդ մարդոյ լոկոյ , հրեշտակ է այ , լցան երկիւղիւ մեծաւ , և յահէ անտի 'ի վերայ

երեսաց իւրեանց 'ի գետին. և ոչ իշխէին ամբառնալ 'ի վերս զերեսս։ Այլ հրեշտակն քաջալերեալ ասասա՝ ասէ, խաղաղութի լեցի ընդ ձեզ, մի երկչոտիք, և զոհ օրհնեցէք. զի ոչ եթէ իմով ինչ շնորհօք եկի ես, այլ կամաքն Տ՝ այ ձեզդ։ և մինչ էի ես ձեզ յանձանութեան՝ զկամս Տ՝ այ կատարէի. երևեցի ձեզ եթէ ուտեմ և ըմպեմ, այլ իմ կերակուրս անտեսանելի 'ի մարդկանէ։ Այս արդ՝ ժամ է ինձ երանել առ այն՝ որ առաքեացն զիս. և դուք խոստովան եղերուք Տ՝ այ ձերում, և քարոզեցէք զաբանելիս նորա. և գրեցէք զայս ամենայն, որ եղև և կատարեցաւ։ Օ՜այս ասացեալ՝ եղև աներևոյթ. և տովբիթ և տուբիա մնացին տարածեալ 'ի գետնի երեսս, օրհնելով զՏ՝ այ, և գոհանալով զմեծամեծացն Տ՝ այ ընդ ժամն երիս (որպէս ունի լատինն։) Այսպա յարուցեալ պատմեցին այլոց զընկալեալ բարութիւնս յՏ՝ այ. և ծերն տովբիթ ասաց օրհնութիւն Տ՝ այ գոհացողականս և մարգարէական։

Իբր տովբիթ ասաց յիսուն և ութից, յորժամ կացին աչք նորա. և մնաց կոյր զամս ութ. և յետ բանալոյ աչացն եկեաց այլևս ամս բազումս միշտ որ, միշտ ողորմած առ աղքատս, և միշտ երկիւղած յՏ՝ այ. եռեսնամ ոչ միայն զթողուցս, այլև զորդիս թողուանց։ Իբրև մերձեցաւ վախճանն կենաց նորա, կոչեաց զտուբիա զորդի իւր. և պատուիրեաց նմա, զի 'ի մեռանել իւրում թաղեսցէ զնա և զմայրն նորա ընդ նմա 'ի նմին գերեզմանի յորժամ մեռանիցի. և ինքն վաղվաղակի առեալ զտուն իւր՝ երթիցէ յերկիրն մարաց. զի մերձ է ասէ կործանումն Նինուէի. * զի հաւատամ ես, որպէս և խօսեցաւ յոնանն մարգարէ վասն Նինուէի, եթէ կործանեսցի ॥։ Թէրևաս մարթի ոք իմանալ սովաւ, թէ անշուշտ ունի կատարիլ երբեմն՝ զոր միանգամ խօսեցաւ յոնանն առ Նինուէացիս։ Այլ եթէ տովբիթ ցուցանէ լինել ուրոյն գուշակութի, յայտ է թէ այսպիսի մարգարէութիւն չէր 'ի գիրս մարգարէութեց յոնանու. բայց և ոչ ամենայն զոր

խօսեցան մարգարէք՝ գրեցան. և տովբիթ իսկ ոչ
երևի բերել 'ի հաստատութիւն լոկ զգրեալ բանն
յոմանս, այլ առաւել զպատգամ կենդանի բա-
նիւ բարբառեալ. * որպէս խօսեցաւ ասէ յոմանս
մարգարէ ||. զոր քաջ գիտէր տովբիթ. և որպէս
թէ մարգարէական հոգւով հաստատեր զմարգա-
րէութիւն նորա։ Այլ յաւել ինքն մարգարէանալ և
զաւերումն երուսաղէմի, և զՏրկիզումն տաճարին,
յասէն. * Այրուսաղէմ եղիցի աւերակ և անա-
պատ. և տունն ՅՍ 'ի նմին հրձիգ լիցի, և յաւեր
լիցի մինչև 'ի ժամանակս ||։ Կուշակեաց և զկա-
տարած գերութեն, և զվերստին շինութիւն երու-
սաղէմի, և տաճարին. յոր յաւելու և այլ ինչ ինչ,
որք հային 'ի նոր եկեղեցի և յերկնաւորն երուսա-
ղէմ, և ոչ յերկրաւորն։

Յանձն արար որդւոյն և թոռանց իւրոց զհա-
ւատարմութիւն առ ՅԾ. զառատաբաշխ ողորմութիւն
աղքատաց, և զհաստատութիւն 'ի հաւատս և յԾ-
պաշտութիւն. և վախճանեաց զկեանս իւր սրբու-
թիւն, հարիւր յիսուն և ութ ամաց. ըստ որում
ունիմք 'ի թարգմանութեն եօթանասնից. ուր 'ի
հայումն գնի հարիւր յիսուն։ և թաղեաց զնա որ-
դին լի փառաւք և ամենայն պատուով։ և յորժամ
մեռաւ ամնա մայր նորա, թաղեաց և զնա առ հօր
իւրում, ըստ որում պատուէր ընկալեալ էր 'ի
նմանէ։ Այլ ինքն առեալ զկինն և զորդիս և զա-
մենայն ինչս իւր՝ գնաց յեկեղատանս մարաց. և
եգիտ անդ զՏոբադուել զսներ իւր և զՏեգնա
զզբաքանչն տակաւին կենդանի, բայց ծերացեալ.
թաղեաց և զնոսա փառաւք. և ժառանգեաց զտուն
նոցա, և զտուն տովբիթայ հօր իւրոյ. և ետես
զորդիս որդւոց մինչև յաղգ հինգ. և զոր դժուա-
րին է երբեք տեսանել յաշխարհի, ամենայն զա-
ւակք նորա և աղգ՝ դման բարեպաշտ, ՅԾ, հաճոյ
ՅՍ և սիրելի մարդկան (որպէս ընթեռնումք 'ի
լատինն)։ Այլ մեռաւ ըստ եօթանասնից՝ ամաց
հարիւր և քսան և եօթնից. այլ մինչև մեռեալ
էր նա՝ լուաւ զկործանմանէն Նինուէի. զոր գե-

բեաց նաբուքոդոնոսոր, և ասուերոս կամ արտա-
շէս. և ուրախ եղև՝ զի զերծաւ 'ի վտանգէն՝ ոչ
գտանելով անդ, և փառս ետ զոհանալով զնոյ։

'Ի վերայ ամաց կենացն տովբիթայ և որդւոյ
նորա տուբիայ զանազանութիւն զոյ 'ի թարգմանու-
թիւնս եօթանասնից և լատինացւոց։ Եօթանասունք
զնեն զտովբիթ յիսուն և ութ ամաց յորժամ կու-
բացաւ. և ամն ութ եկաց 'ի կուրութիւն, որպէս
նշանակեցաք. իսկ թէ յետ լուսաւորելոյ աչացն
ոչչափ ամն եկեաց, ոչ ասեն ինչ. այլ միայն թէ
յորժամ մեռաւ՝ էր հարիւր յիսուն և ութ ամաց.
իսկ կենաց որդւոյ նորա տուբիայ՝ տան ամն հա-
րիւր և քսան և եօթն։

'Ի լատին թարգմանութիւն ընթեռնումք, թէ
յորժամ կացին աչք տովբիթայ, էր ամաց յիսուն
և վեցից. և բացան աչք նորա 'ի վաթսներորդ-
ամի կենաց նորա. որում զհետ զայ թէ ամն չորս
մնաց 'ի կուրութիւն. և յետ այնորիկ եկեաց այլևս
ամն քառասուն և երկու. և ըստ այսմ ամենայն
ամք կենաց նորա եղեն հարիւր և երկու. իսկ
որդւոյ նորա տուբիայ՝ տայ ամն իններսուն և ինն,
կամ հարիւր։ Յաղինոս, որում յայս երկասիրութի-
մեր զհետ երթամք, պինդ ունի զերկրորդս հաշիւ
ըստ լատինականին. վասն զի և 'ի ցուցանել զժա-
մանակ մեռանելոյ տովբիթայ, և որդւոյ նորա, և
զժամանակ կործանման Նինուէի, զոր ստորև ու-
նիմք յառաջ բերել, այս հաշիւ 'ի դէպ գայ. մա-
նաւանդ զի և սովորական չափ կենաց մարդկան
էր յայնժամ այնպէս, որպէս և այժմ առ մեզ.
իբր զի հարիւր ամք կամ փոքր ինչ յաւէտ կամ
նուազ՝ էին սահման յետին ծերութեան։

ԳԼ. ԺԱ.

Լ.ՐԴԵՕՐ 'Ի ԾԼՈՅ ՍՐՍԻ ԵՒ ԼԵՐԴԻ ՅԻՄՆՆ ՀԱԼԱԾԵՑԱՒ ԴԵՒՆ 'Ի ՍԵՆԵԿԷ ՍԱՌԱՅԻ, ԵՐԲԵ ՅԱՅԼ ԻՆՉ ԱՆԵՐԵՒՈՅԹ ԸՆԴՐՈՒԵ։

Խոնդիր մեծ է 'ի վերայ այսորիկ առ մեկնիչս։ Բազումք 'ի յետնոց յայն կարծիս են, թէ ձուկն զոր ըմբռնեաց տուբիա՝ էր այն տեսակ ծովային ձկան, որ կոչի Լուբանոսքոփոս (երկնադէտ), և մնաւանդ Վալլիսնիմոս (գեղեցկանուն), ևս և Լափէքսն, և Եսսորոս, այլև Նրիցաձուկն. և ասեն ընդ պլինիոսի, թէ լինի դեղ ալացաւոց և այլ բազում իրաց. և թէ ծուխս սրտի նորա և լերդի ունի բնական զօրութիւն հանդարտել և խաղաղել զամենայն այլայլութիւն և զխռովութիւն հիւթոց և զամենայն կիրս մարդոյ. և զի դեռն՝ որ ըստ ասելոյ նոցա՝ ոչինչ զօրէ ներգործել, ուր չիք այլայլութիւն և խռովութիւն կրից, ասի հեռանալ 'ի ծխոյ անտի, քանզի 'ի մարդն ծխեալ նովին ծխով, ոչ գտանէ յարմարութիւն իւրում բնակութիւն։ Այլ այս վարդապետութիւն անստոյգ ինչ է, և օտար յուղղախոհ մտաց, ընդ որ ոչ երբեք հաւանեալ է իմ՝ ասէ կաղինոս։

Զկր մարթ ստուգել, թէ զինչ կոչիւր ձուկն ըմբռնեալ 'ի տուբիայ, ուր սքէ գիրն ձուկն և եթ ասէ, և չտայ նմա այլ անուն, և չիք այլ պատմութիւն ժամանակակից՝ որ պատմեսցէ զայս։ Զուկն այն էր 'ի տիգրիս գետ. և չէ հաւաստի թէ 'ի ծովէ եկեալ էցէ հակառակ ընթացից ջրոյ գետոյն ընդ այնչափ երկարաձիգ ճանապարհ. զի քալլիսնիմոս է ձուկն ծովային, և ոչ գետոյ կամ քաղցր ջրոյ. ապա անուն տալ նմա, է խաղալ յանգետս, և ոչ ՀՀմարիտ հիմամբ ինչ խօսիլ։ Լեղի քալլիսնիմոս ձկան գովի 'ի նախնի բժշկաց 'ի բժշկել զլուսն

աչաց, որ է մաշկատեսակ թաղանթ պատեալ զբբօք։ Պաքէն և զմնաբ ծխնելուզաց 'ի կիր արկանեն բժիշկք 'ի բժշկութիւն հրատաւոյ տենդի, և օգտէ որպէս զգեղեցիկ քարն (այն է փանդէ՛հիր)։ այլ չէ մարթ վասն այսորիկ ասել, թէ մուրն իցէ փոշի գեղեցիկ քարի։ Պալլեոնիմոս ձուկն չէ անծանօթ մեզ, և ոչ է գլխովին օտար 'ի մերոց ծովուց։ սակայն որ ունի լուսն յաչս, ոչ լուսաւորի օծմամբ լերդոյ նորա։ Այս ո՞ հաւանեսցի ասել, թէ դևն ոչ մերձենայ երբեք առ նա՝ որ չէ այլայլեալ և խռովեալ կրիւք։ Իսկ թէ ծուխ սրտի և լերդի նախասայեալ ձկան խաղաղ զամենայն կիրս, է փորձ՝ որ ոչ երբեք արարաւ, և ոչ առնիցի առ 'ի գտանել նովաւ օգուտ։ Շահավաճառ մեծ էր արդեօք գանձս ծախել առ ստանալ զայն վաճառ, եթէ շատ էր ծուխ նորա խաղաղել զամենայն կիրս մարդոյ, և առաւել զկատաղի կիրս կանանց։ Այլ եդեալ թէ ծուխն այն առնէր զայն անդորրութիւն, ո՞ կարէ հաւատալ, թէ միանգամ ծխելով ազատէ զմարդ յամենայն այլայլութիւն կրից զամենայն ժամանակս կենաց նորա։ Այս սակայն հրեշտակն ասէ, թէ դևն միանգամ փախուցեալ 'ի ծխոյ անտի, ոչ ևս դառնայ։ * այլ ոչ ևս դիւաւ հարեսցէ ‖։ կամ ըստ լատին ընթերցուածոյ, * այլ ոչ ևս մերձենայ առ նոսա ‖։

Ասմանք համարին թէ այն ծուխ էր լոկ արտաքին ինն պայման եդեալ 'ի հրեշտակէն, որպէս զի յետոյ ինքն 'ի վար արկանիցէ ընդդէմ թշնամւոյն զիւր հրեշտակական զօրուն բարձրագոյն։ որպէս սաբար 'ի լուսաւորել զաչս տուլբիթայ։ Այլ հրեշտակն կարի առաւել ասէ, յասէն՝ ըստ լատին բնագրի, թէ այն ծուխ * վանէ զամենայն ազգդիւաց՝ եթէ՛ յառնէ և եթէ՛ 'ի կնոջէ ‖։ Այլք համարին թէ ծուխն այն էր նշանակ և օրինակ չարչարանացն քրիստոսի։ այլ այն չէր բաւական յայտնի վայուցուցանել զներգործուն անվրէպ փախուցանելոյ զդևն։ Այլ է առաւել անմիջական նշանակ չարչարանաց քրիստոսի, սակայն ոչ միշտ փախչի նովաւ

դևն։ Այնաբ ասեն՝ թէ էր իբր նշանակ սիրոյ, կամ նշանակ նորին իսկ սատանայի. ուստի և փախեաւ նա կամ 'ի ջերմեռանդն աղօթից տուրիայ և սառայի, և կամ յամբարտաւանութէն, տեսանելով զինքն 'ի նմանութէն բերեալ այսպիսի ժահահոտ ծիոյ։ Այլ այսպիսի նշանակք ոչ լուծանեն զխնդիրն։

Իսկ այլք յոլովք լաւ ևս ասեն, թէ ոչ առ 'ի նախատինս չար ոգւոյն այնոցիկ՝ վերացոյց զՀնազանդական կարողութէն նիւթական արարածոց ինչ 'ի տանջել նոքօք զնոսա լոկ մերձ դնելով. յորմէ զգալով նոցա զասատկանալ տանջանաց իւրեանց՝ 'ի բաց փախչին յատելի թշնամւոյ անտի. յայսպիսի իրաց էր ասեն և այն ծուխ սրտի և լերդի ճկանն անծանօթի 'ի մէնք։ Այս առաւել հաւանելի երևի իբր համաձայն բանից բաղմաց երևելի վարդապետաց. որք ասեն թէ 'ի տարագրել անդ ոչ յերկնից զայսս չարս, 'ի մեծագոյն նուաստութէն և 'ի նախատինս նոցա՝ եհեղ 'ի նոսա հաստատուն սոսկումն իմն և արհաւիրս 'ի նիւթական իրաց ինչ, որք ըստ ինքեան ոչինչ կարեն ազդել 'ի նոսա։ Այլ ևս՝ թէ եթող ոչ զազումն 'ի չար ոգւոց անտի մինչև 'ի վերջին դատաստան արտաքոյ դժոխոց 'ի ջուր, 'ի ցամաք, և յօդս. թողեալ 'ի նոսա, որպէս և 'ի դժոխականս զենական զօրութիւն իւրեանց. այլ զի մի այնու հպարտասցին, նուաստացոյց զնոսա, նախ՝ խափանելով՝ զի չկարիցեն 'ի գործ արկանել զզօրուն իւրեանց, եթէ ոչ՝ այնչափ, որչափ ինքն ոչ թոյլ տացէ նոցա. երկրորդ՝ տպացուցանելով 'ի նոսա զասացեալ սոսկումն յամենի և 'ի նախատինս նոցա, երբ տեսանեն զինքեանս զարհուրիլ և փախստական լինել 'ի փանաքի և 'ի ընչին իրաց, զորս և մանկունք առ ոչինչ համարին։

Զտանեմք 'ի ոչ գիրս՝ զի ոչ եհեղ այսպիսի արհաւիրս 'ի մարդիկ 'ի թշնամիս իւր, յորժամ չունէին բնաւ պատճառ ինչ երկիւղի. ապա զինչ մեծ է, եթէ զնոյն իցէ արարեալ և ընդ դևս.

իսկ փախուցանել ծխոյն զդեւս այնպէս՝ զի ոչ եւս իշխիցեն դառնալ կամ մերձենալ, յայտ է թէ ոչ է ներքսարծութիւն ինն քնական՝ որ այնչափ զօրեսցէ ընդդէմ ոգւոցն այնոցիկ։ Լաւ 'ի դէպ է ասել, թէ ծուխն այն էր մի 'ի ընդէն իրաց անտի, յորոց տպացոյց ած 'ի նոսա սոսկումն ինն։ ուստի և բաւական եղև զսպանող դևն աղմոգեւս հալածել 'ի սենեկէ անտի սատանայի. յորմէ ուշիմք ասել, թէ որպէս այն ծուխ, նոյնօրինակ և այլ այսպիսի ընդէն իրք նիւթականք կարեն փախուցանել զդեւս։

Կարէ որ 'ի դէմն ածել զգան աւետարանին, զոր ասաց քէ աշակերտաց իւրոց՝ յոչ կարէին նոցա հանել զազգ ինչ այսոյն չարի. * Բայց սազգ ոչ ելանէ, եթէ ոչ՝ աղօթիւք և պահօք ॥ Մատթ. ԺԷ. 20։ Բայլ ոչ իւիք ընդդէմ ելանէ այդ մեր ոցս քանից. նախ՝ զի յասել հուսիայել հրեշտակին վասն ծխոյն (ըստ լատին թարգմանութեան), թէ վանէ զամենայն ազգ դիւաց, պարտ է խմանալ ՚ի սովորական ոճոյ նոր գրոց՝ ոչ ճշտիւ զամենայնէ, այլ զմեծագոյն մասնէ. ուստի ըստ այսմ մեկնութեան՝ մարթի է ասել, թէ այն դև զոր աշակերտք ոչ կարացին հանել, ոչ էր յայնցանէ՝ յորս եհեղ ած զայն երկիւղ։ Երկրորդ՝ ոչ ասաց քէ թէ այն ազգ դիւի ոչ երբէք էլ, այլ թէ յայնժամ ոչ էանէ այլով իւիք, եթէ ոչ՝ աղօթիւք և պահօք։ 'Ի նոր օրէնս սպառազինեաց զմեզ քէ ընդդէմ սատանայի՝ բաց յաղօթից և 'ի պահոց, խորհրդովք եկեղեցւոյ, և այլովք զանազան խորհրդական սրբազան իրօք. և տեսանեմք զի 'ի չար ոգւոց անտի ոմանք լոկ երդմնեցուցմամբ հալածին, ոմանք միայն կոչմամբ երկրպագելի անուան Յեսի. այլք ցուցմամբ մասին փայտի կենդանարար խաչին, և նշխարաց և պատկերաց սրբոց։ Իսկ ոմանք ընդդէմ կան այսմ ամենայնի, և ոչ իւիք ելանեն, բայց միայն աղօթիւք և պահօք։ Զ. Ած որ 'ի հին օրէնս տպացոյց 'ի չար ոգիսն յայնոսիկ սոսկումն 'ի նիւթական ինչ իրաց, 'ի նոր օրէնս կամ եբարձ զայն և փոխեաց 'ի զարհուրանս յայսպիսի

ՏԵՐ և հոգևորական իրաց. և կամ եթէ եթող 'ի նոսա զայն հին երկիւղ, մեզ ոչ հաղորդեաց ըզ-ծանօթութիւն այնց մարմնեղէն իրաց՝ յորմէ փախ չին իշխանութիւնքն օդոյս. և արդարապէս. զի մերս ապաւինութիւն և ամենայն յոյս լիցի միայն յԱՍՏԾՈ և 'ի բարեխօսութիւն սՐՑ։ Զոյն իսկ ծուխն յայտնեալ մեզ 'ի գիրս տոլբիթայ՝ ոչ ևս կարէ ծառայել մեզ յայն գործ. զի չունիմք յայտնեալ թէ զինչ տեսակ ձկան էր այն ձուկն։

ԳԼ. ԺԲ.

ԼՈՒԵ ԷՐԷ, ԷՍ ՅՈՐՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԷ ՄԵՌԱՆ ՊՈՎԷՐԷՆ ԵՒ ՊՈՒԷԻԱ։ ԵՒ ՈՒԷ ԷՐԷ ԷՈՐԺԱՆԷՅԱՒ ՆԻՆՈՒԷ։

Զ. 'ի հաստատել զԺամանակ մեռանելոյ ծերոյն տոլբիթայ, այս նշանակք կան 'ի սՐ գիրս։ Տոլբիթ գերի վարեցաւ 'ի Նինուէ 'ի վեցերորդ ամի եզեկիայ արքայի յուդայ՝ 'ի սաղմանասարայ ասորեստանեայց արքայէ. առ որում փութով էգիտ տոլբիթ ընորհս, մինչև կացուցանել զնա գործակալ արքունեաց, և 'ի թոշակէ անտի պաշտաման իւրոյ, ևս առաւել 'ի պարգևաց սաղմանասարայ, հաւաքեալ կուտեաց (բաց յառանձնական ծախուց անձին և տան իւրոյ, և բաց յառատ ողորմութեց,) տասն քանքար արծաթոյ. զոր էտ 'ի փոխ գաբայէլայ։ Արդ՝ զայս փոխ էտ, յորժամ տակաւին փոքրիկ մանուկ էր տուբիա որդի նորա. (ըստ լատին թարգմանութեան. գՐ. 21.) Ոչ այսչափ դրամն չէ հաւանելի թէ կուտեալ լցել նա 'ի մի, կամ յերկու ամն։ Յերեքտասաներորդ ամի եզեկիայի սկսաւ թագաւորել սենեքերիմ յաջորդ և որդի սաղմանասարայ. ապա սաղմանասար զկնի գերութեն իսրայէլի եկեաց ամն վեց ևեթ։ Տացուք

տովբիթայ ամն հինգ առ 'ի գումարել զայնչափ արծաթ. և զիցուք՝ որպէս ըստ խոհեմութեան արժան է գնել, թէ տուեալ իցէ զայն արծաթ գաբայելայ, յամին՝ յորում մեռաւ սաղմանասար 'ի սկիզբն երեքտասանեորդ ամի եղեկիայի. յորում ժամանակի տուբիա էր մանուկ փոքրիկ. ապա 'ի պահել զճշմարտութիւն բարոյական այսր բանի գրոյն, մանաւանդ թէ էր նա յայնժամ իբր եօթն ամաց. ապա թէ ոչ՝ ոչ եւս ասիւր մանուկ փոքրիկ, եթէ մեծագոյն էր հասակաւ։ Եւ եւս՝ սենեքերիմ՝ որպէս տեսաք 'ի վերս անդր՝ սպանաւ յամի իբր վեշտասանեորդի եղեկիայ արքայի. ապա յայնժամ տուբիա էր տասնամեան։ Յուցաք 'ի պատմութեան անդ թէ տովբիթ ոչ կուրացաւ 'ի սկզբան թագաւորութեան ասորդանայ. և այժմ զնոյն հաստատեմք 'ի հասակէ փոքուն տուբիայ։ Կուրութիւն տովբիթայ ըստ լատին ընթերցուածոյ ձգեցաւ զամն երիս՝ 'ի չորրորդն մնեալ։ Ի չորրորդումն առաքեաց զորդին հանել զարծաթն 'ի գաբայելայ. ապա որդին որ էր տասն ամաց 'ի մեռանել սենեքերիմայ՝ լինէր երեքտասան ամաց յորժամ առաքեցաւ յեկբատանս։ Այլ զի կարի խիստ է ասել թէ մանուկ երեքտասան ամաց իցէ առաքեալ առ այնպիսի գործ մեծ, և թէ ունէցի զօրութիւն բաւական ըմբռնել ձեռամբ զձուկն մեծ և ձգել 'ի ցամաք, և թէ յարմար գտեալ իցէ առնուլ կին զաղջիկն՝ արդէն եօթն արանց տուեալ, ապա հարկ 'ի վերայ կայ դնել, թէ չէր նա յայնժամ նուազ քան զՀասակ գէթ քսան ամաց։

Դարձեալ՝ գտանեմք զի ամբարտաւանն նաբուքոդոնոսոր վառեցաւ 'ի ցասումն սաստիկ, յորժամ 'ի յուզթայ հատաւ գլուխ հողոփեռնեայ. վասն որոյ կարի հաւանելի երևի, թէ նա ըստ օրինակի սենեքերիմայ ժանտացեալ իցէ 'ի վերայ երբայեցւոց 'ի նինուէ, մինչև չթողուլ թագել զդիակունս նոցա։ Ըստ դնեմք զկուրանալ տովբիթայ։ Յեսաք զՀողոփեռնէս գլխատեալ յամին երկրորդի մանուկ թագաւորին մանասէի. և տու-

բիա լինելը յայնժամ իբր քսան և հինգ ամաց. ուստի զկնի երից ամաց՝ լինի քսան և ութամեան. որ է հասակ բաւական առ նախագրեալ գործս։ Յաւել և զայն, զի տովբիթ՝ ըստ լատին թարգմանութեան կուրացաւ 'ի հասակի յիսուն և վեց ամաց. հանեալ աստի զերկու ամն մանասէի, և զքսան և զերիս ամն եղեկիայ արքայի, մնան ամք երեսուն և մի. ապա ծերն տովբիթ էր ամաց երեսուն և միոյ՝ յորժամ 'ի վերերորդ ամի եղեկիայի վարեցաւ 'ի գերութիւն 'ի նինուէ։ Լրդ 'ի յերեսուն և միոյ մինչև 'ի տարիւր և երկու, որչափ ըստ լատին թարգմանութեանն եկեաց տովբիթ, մնի նորա դայ անկանի 'ի քառասներորդ ամ մանասէի արքայի. որ է ամ արարչութեանն աշխարհի 3523։ Իսկ տուբիա՝ (որ և տովբիթ փոքր կոչի,) ըստ նախընթաց տեսութեանն էր մանուկ մատաղ 'ի խանձարուրս 'ի վերերորդ ամի եղեկիայի, և եհաս ցհասրիւբ ամ. ապա մնի նորա գայ անկանի յիննեւտասներորդ ամ յովսիայ արքայի յուդայ յամի աշխարհի 3554։

Իսկ յաղագս ժամանակի կործանման նինուէի այսպէս տրամաբանել կարելոս։ Եթէ՝ յոնան մարգարէ բաց 'ի պայմանաւոր նախագուշակութեանէ զկործանմանէ նինուէի եթէ ոչ ապաշխարեսցեն բնակիչք նորա, գուշակեաց և սահմանաբար և զանվրէպ կործանումն նորա՝ ըստ ցուցանելոյ տովբիթայ։ Երկրորդ՝ 'ի մարգարէութեանէ անտի յովնանու մինչև ցմահ ծերոյն տովբիթայ նինուէ ոչ կործանեցաւ։ Այս ոչինչ իւիք հաւանելի են բանք նոցա, որք կամեցեալ ազատել զՏերոդոտոս թէ չիցէ սխալեալ 'ի չափս ժամանակաց, և 'ի կարգս թագաւորաց, մինդեն թէ նինուէ երկիցս աւերեցաւ, մի՝ սուղ ինչ զկնի մարգարէութեանէ յոնանու. երկրորդ՝ ոչ յետ բազում ժամանակաց զկնի մահուն տովբիթայ. * Օրի հաւատամ ես, ասէ տովբիթ, որպէս խոսեցաւ յոնան մարգարէ վասն նինուէի՝ եթէ կործանեսցի ։ գոբ. ԺԳ. 6. Իբր ասել, հարկ է զի կատարեսցի այս մարգա-

բէութիւն. ապա մինչև ցայսժամ չէր կատարեալ. արդ՝ տուրիսի գրեթէ ժամանակակից, այր ոչ, և ամենայնիւ Ճշմարտախօս՝ կարէր գիտել, և կամիր զՀշմարիտն ասել, քան թէ հերոդոտոս հեթանոս և յետոյ ժամանակաւ. զորմէ նորին իսկ հետեւողք խոստովան լինին՝ թէ 'ի բազում իրս նուազ խօսեցաւ, և կամ վրիպակ տեղեկացաւ։ Նոյրորդ՝ նինուէ ոչ կործանեցաւ յառաջ քան զԹագաւորել յովսիայ 'ի վերայ յուդայ. վասն զի սոփոնիա մարգարէ՝ որ սկսաւ մարգարէանալ առ սովին արքային՝ իբրև ապագայ մարգարէանայ վասն կործանելոյ նինուէի. սոփ. Բ. 13։ Նոյրորդ՝ նինուէ կործանեցաւ նախ քան զքսանեերորդ ամ Թագաւորութեան յովսիայ արքայի յուդայ. քանզի վասն տուրիայ կրտսերոյ ասէ զիրն ըստ Թարգմանութեան եօթանասնից, թէ * մինչև մեռեալ էր նա, լուաւ ինքն զկործանմանէն նինուէի ||. գոբ. ծբ. 17։ Իսկ տուրիա մեռաւ յինանուտասներորդ ամի յովսիայ արքայի. որպէս ցուցաւ. ապա նինուէ յառաջ կործանեցաւ։ Չինգ երորդ՝ նինուէ աւերեցաւ 'ի քաղդէացւոց, և 'ի մարսց, 'ի պաշարման անդ նորա անձամբ գտան նաբուքոդոնոսոր քաղդեայ, և ասուերոս մար միաբանեալ ընդ միմեանս, որպէս ուսիմք 'ի Թարգմանութեան եօթանասնից. ուր ասի վասն նինուէի * Օ որ գերեաց նաբուքոդոնոսոր և ասուերոսն ||։ Իսկ նորա չէին տակաւին Թագաւոր, այլ միայն իշխանք ժառանգորդք կարդեալք 'ի Թագաւորութեան, առաքեալք 'ի հարց իւրեանց յաւէտ 'ի տեսանել, քան թէ 'ի հրամայել զօրաց. սակայն և այնպէս զփառս յաղթութեան ինքեանք ժառանգեցին։ Այս ցուցանի 'ի հասակէ նոցա. որպէս և յայսմ բանէ գրոյն, որ յանուանէ յիշատակէ զնոսա՝ առանց տալոյ նոցա անուն Թագաւորի. ուր հաստատուն սովորութիւն է ճշմարտին գրոց միշտ Թագաւոր անուամբ յիշել զնոսա, որք ներգործուէին Թագաւորեն։ Այնթէ ումեք կամք իցեն ասել 'ի ընդդէմ հերոդոտոսի, թէ այս ասուերոս որ և արտաշէս էր կիսաքսար կամ աժդահակ որդի նորա,

ոչ ընդդէմ դառնամ ասէ կաղինոս. զի այդ չէ բանաբարիչ՝ որ գրոյն. բայց ոչ ընդունիմ թէ պատշաճիցի ասուերոսի այն ամենայն, զոր վասն կիւաքսարայ և ամբոհակայ գրէ հերոդոտոս. և ոչ զշափս ժամանակաց զոր գրէ նա. վասն զի այսոքիկ ոչ համաձայնին սոքա գրոց։ Այսպա ըստ այսմ տրամաբանութեան կործանումն նինուէի եղև յութուտասներորդ ամի յովսիայ արքայի յուդայ. յամի արարչութեան աշխարհի 3553։ Այլ որք դեղերինն 'ի գիրս այլևայլ մեկնչաց և ժամանակագրաց, բազմասպատիկ զանազանութիւնս գտանեն 'ի հաշուեաստի՝ զոր մեքս եդաք ըստ կաղինոսի, ոչ կամեցեալ ըստ զանազանիս զանազանս բարբառել։

ԳԼ. ԺԳ.

Լ՝ՈՒՌԷ. Այրտաշէս արքայ մարաց և պարսից. Համան. և Մոռդեքէ։

Մինչդեռ նաբուքոդոնոսոր արքայ բաբելոնի ընդարձակեր զիշխութիւն ընդ արևմտեան հիւսիս, արտաշէս թագաւոր մարաց՝ նորին դաշնակից՝ տարածեր զիւրն ՝ի ընդ արևելս։ Ցիրեաց համարէն աշխարհին պարսից. և հանդերձ գաւառաւքն զոր ինքն կալաւ, և զոր ժառանգեաց յիւրոց նախնեաց, որք զկնի պարտութեան ասորեստանեայց 'ի ներքոյ բռնիզուայ՝ կալան անդրէն զդաւառսն զորս կորոյս արփաքսադ, ունէր ընդ իւրով հիշութիւնք հարիւր և քսան և եօթն գաւառս։ Վասն որոյ սահմանք հիշուն նորա տարածեալ ձգէին 'ի հնդկաց աշխարհէ մինչև ցարաբիա։ Յ՝ թագաւորել իւրում զկնի հօր իւրոյ՝ եթող զեկբատանս զարքայանիստ քաղաք մարաց, և եդ զաթոռ թագա-

ւորութենն 'ի մայրաքաղաք պարսից առ ուրաղ՝ որ և Եւլէոս գետով, քաղաք գեղեցիկ և զուարճալի՝ կոչեցեալ սիսիս, որ և շօշ, կամ սուսան, որ և շուշան, ըստ անուան ծաղկանն՝ որ միօրինակ ձայնի յարևելեան լեզուս. (և ասի լինել նոյն ընդ սպահան քաղաքի, գոնե ըստ ոմանց)։ Բրատաչէս Թերևս չէր հաճեալ ընդ եկեղատան քաղաք, զի գուցէ աւերեալ յասորեստանեայց՝ չեղև երբէք ըստ արժանւոյն նորոգեալ, և յառաջին ամրութենէ հասուցեալ։ Այլ ընտրեաց զսիսիս կամ զշուշան, գուցէ՝ զի սովին ցուցակաւ սիրոյ յինքն յանկուսցէ զսիրտս պարսից, յորս ոչ կարէր վստահանալ այնպէս, որպէս վստահ էր յքէր բնիկ մարսն. և միանգամայն զի անձամբ մերձ գոլով՝ գիւրին ևս լիցի սանձակոծել զՋերմ ոգիս պարսից։ Այլ կամ գուցէ արար զայս ընտրութիւն, զի շուշան քաղաք հնուստ էր 'ի միջակէտ անդր երկրի Թագաւորութեանն իւրոյ. վասն որոյ և էր առաւել 'ի ձահ թէ ինքեան, և թէ ժողովրդեան։

Բրատաչէս հարուստ էր զանազան քաղաքական կենցաղոգուտ առաքինութիւնք. արի 'ի պատերազմունս, առատաձեռն 'ի ծախս, քաղցրաբարոյ 'ի գնացս, բարեսիրտ և անկեղծ առ ժողովուրդն. և մտադիր 'ի թեթևացուցանել 'ի նոցանէ զծանրաբեռնուիս։ Այլ այս առաքինութիւնք նորա մեծապէս մեայլ առնուին յերկուց մեծամեծ պակասութեց նորա. զի էր տարապայման վարեալ 'ի կրից բարկութէ, և անչափաւոր 'ի շնորհս սիրելեաց իւրոց. զամենայն ինչ շնորհէր նոցա, և ակնախուփ առանց ինչ քննուէ ստորագրէր զաղերսագիրս նոցա։ Այլ զիրն առաջի արար մեզ յանձին նորա զօրինակս առաքինութեց և մոլութեցս այսոցիկ, յուսումն առաջնորդաց, զի ուսցին սիրելի ընծայեցուցանել զանձինս ժողովրդեան, և ոչ այնչափ զիջանիլ զի տիրեսցեն նոցա, թէպէտ և սիրելիք իցեն։

Յամին երրորդի թագաւորութեան իւրում (յորժամ ըստ հաշուին կաղինոսի էր ինքն 'ի մէջ քառասուն և յիսուն ամաց) կամեցեալ ցուցանել ժո-

զովզդեան առ հասարակ մեծի և փոքու զբարձրու-
թեն իւրոց փառաց, և զնոխութեն թագաւորութեն
իւրոյ, արար հանդիսաւոր կոչունս զաւուրս հա-
բիւր և ութսուն յարքունիս իւր ամենայն մեծամե-
ծաց պարսից և Մարաց, և ամենայն նախարարացն
գաւառաց, և քաղաքապետաց, և զօրավարաց իւ-
րոց զօրաց։ Լ՚ի վերջին եօթնեկի այնց վեց
ամսոց՝ և եւս ընդարձակեաց զառատութեն հնարհաց
իւրոց, հրամանս տուեալ՝ զի եկեսցեն ՚ի վայելել
՚ի հնարհս նորա ոչ միայն ազնուականք, այլև ռա-
միկք առհասարակ շուշան քաղաքի ՚ի մեծէ մինչև
յփոքրն։ Օ՚այս կոչունս արար ՚ի դաւիթ տանն
արքունի, կամ (որպէս ընթեռնու լատինն,) ՚ի
գաւիթ պարտիզի և անտառի՝ իւրով արքայական
մշակութիւն և ձեռամբ տնկելոյ. իբր զի այնչափ
սիրելի էր նմա և զուարճալի այն պարտէզ, զի ան-
ձամբ ինամ տանէր նմա։ Լ՚ինդ կանգնեցան խո-
ռանք բեհեզեայք և կերպասեայք առկախեալք
՚ի կնձեայ պատուական ոսկեխոյակ և ոսկեխարիսխ
սեանց, փղոսկրեայ օղամանեկօք և լաբիւք ծի-
բանեօք և բեհեզովք խառնելովք, ՚ի հովանաւ-
րութեն բազմականաց։ Լ՚ս առ սեղանովք բարձք
ոսկի և արծաթի զարդուք՝ ընդելուզեալք մար-
գարտովք և ակամբք պատուականօք, կարգեալք
՚ի վերայ յատակի՝ գունագոյն ազնիւ քարամբք յո-
րինելոյ ՚ի ձև և ՚ի նմանութեն վարդից և այլ պէս-
պէս ծաղկանց՝ հանդոյն արուեստի ճարտար նկար-
չաց յերիւրեալ. վասն այնորիկ կոչեցաւ վարդա-
յատակ։

Լ՚ստ այսմ արտաքին մեծագործ շքեղութեն և
հարստութեն զարդուց՝ էին և հանդերձանք կե-
բակրոց և ըմպելեաց, և կարգ սպասաւորաց։ Կե-
բակուրն բազմնխորտիկ արքայավայել, և առատ
զինի ազնիւ և ծաղկահոտ յըմպելեաց անտի արբ-
քայի. և բաց ՚ի հասարակ սպասաւորաց՝ կայր
կարգեալ յարքայէ առ իւրաքանչիւր սեղան մի մի
յիւրոց իշխանաց միտ դնել բարեկարգութեն. զի
անպատեհ լինչ մի դիպեսցի, որպէս սովոր է յայս-

ոլիսի հասարակաց կոչումնս՝ ուր առատուն է գինւոյ։ Իւրաքանչիւր 'ի բազմականաց ազատ էր, և կարէր ուտել և ըմպել ըստ հաճոյից, բայց չէր կարող մատուցանել զբաժակն ընկերին, և բռնադատել զնա ըմպել յարբեցութեան։ Օ այս ընթեռնումք 'ի լատինն, այսպէս. "Իսկ ոչ ոք էր՝ որ զչկամեցողս ստիպէր ըմպել. այլ որպէս սահմանեալ էր Թագաւորն՝ կարգեալ առ իւրաքանչիւր սեղան յիշխանաց իւրոց, զի առցէ իւրաքանչիւր զոր կամիր"։ Ի նմին ժամանակի արար կոչումն և կանանց յիւր արքունի ապարանսն. ինքն նստէր ընդ արսն, ասթինեկ տիկին նորա ընդ կանայս։ Յոլիսի վայելուչ և խոհական կարգաւ վարեցաւ արտաքսս արքայ, ցորչափ չէր արբեալ. որ է ասել՝ ցորվայր երևեցուցեալ էր զանձն լինել մարդ։

Յաւուր եօթնեներորդի առաւել քան զիւրն բնաւորական բարեխառնուն ըմպելով, Եհան զնա գինեն 'ի մտաց. և յայնժամ՝ եղև նմա 'ի մոռացօնս դնել զամենայն բարեկարգութիւն։ Զաքեաց եօթն 'ի ներքինեաց իւրոց անմիջական պաշտօնեից ածել զասթինեկ զտիկինն իւր անդր 'ի հանդէս բազմութեանն՝ ունելով զթագն դշխոյութեան 'ի գլուխն, լոկ 'ի ցուցանել ամենայն իշխանաց և ժողովրդոց զգեղեցկութիւն նորա. զի իբր անհամեմատ իմն էր գեղ երեսաց նորա։ Իսկ տիկինն որ չէր արբեալ, ոչ գնաց ընդ նոսա. կամեցեալ համեստութեամբ ցուցանել՝ գտաւ պարտաւոր անլսողութեան և արհամարհութեան։ Զի թերևս ինքն իսկ ասթինեկ տիկինն ըստ բնաբոյս բարուց ինքնահաւան ոք էր, և արհամարհոտ այլոց. որով և ատելի ամենեցուն։ Զ ասն որոյ յայս գիպուած ամենեքին գործակից եղեն 'ի կործանումն նորա. և փոխանակ բարեխօս լինելոյ վասն նորա՝ ծանրացուցին առաւել քան զարժանն զդատ նորա։ Օ ի որպէս իրաւունքն չլինելոյ արհամարհեալ հասարակ է ամենեցուն, նոյնպէս արհամարհոտ բնութեամբ ատելի է ամենեցուն։ Յորվայր չեն կարող առնել ինչ, տանին լռութիւն,

բայց ապա եթէ ընդ առաջ լցցի գիպողութիւն ինն, գժուարին է սանձել զոգի վերժինդրութիւն. և ոչ միշտ բարձրութիւն վիճակին և իշխանութեան ապահովի զարհամարհոտ անձն, որ գնէ 'ի մտի ոչ երբեք լինել կարօտ այլում. քանզի գան յեղակարծ դիպուածք անակնուսնելիք, յորս 'ի ձեռին է նաև առն սոսկականի և նուաստի տալ ըստ հաճոյից իւրոց կամ բաղում օգնութիւն, և կամ բաղում վնաս։ Բարեկամս բարկացաւ յոյժ ընդ անլսողութի տիկնոջն. որում գուցէ տանէր խաղաղական մտաք, եթէ պատգամաբերն համբոյր և անուշակ բանիւք քաղցրացուցեալ էր զանախորժ պատասխանին։ Յորժամ վերջ եղև ամենայն ուրախութեց, և յանկ ելին այնպէս՝ որպէս սովոր են վերջանալ այսպիսի զուարթութիւք յերկարել իւրեանց. լինին ծախք, վատնին դրամք և աշխատութիւք 'ի տալ այլոց զօգասս և զուարճութի. և բոլորն աւարտի 'ի դառնութի։

Բ. Դ՝ ասաց արքայ 'ի բարկութիւն անդ իւրում ցիշխանս պարսից և մարաց՝ որք էին անմիջական խորհրդականք նորա, խորհուրդ 'ի մէջ առնուլ, թէ զինչ արժան է առնել ասթինի տիկնոջն յաղագս անհնազանդութեան նորա։ Պարտ էր սոցա՝ որք տեսանէին զնա ոչ միայն բարկացեալ, այլև արբեալ, որսալ ժամանակ, և խոհական հնարիւք յապաղել զորոշումն իրաց, մինչև արքայն դարձցի յինքն և զգաստասցի. բայց թո՛ղ զի և ինքեանք նոյնպէս արբեալ էին՝ կամ առ հաճելոյ զնա, և կամ առ ատելութեան տիկնոջն, փոխանակ ջուր արկանելոյ 'ի հուրն՝ յաւելին նաւթ, և բորբոքեցին զհնոցն։ Որքեւս մի յեօթն խորհրդականաց անտի յառաջ մատուցեալ՝ ասէ ցարքայ և ցիշխանսն. ոչ եթէ արքայի միայն ընդդէմ դարձառ ասթինի տիկնայ տիկինն, այլև ամենայն իշխանաց և կուսակալաց արքայի. արդ եթէ հնչեսցէ այս բան ընդ ամենայն թագաւորութիւն արտաշիսի, ամենայն կանայք զհետ երթիցեն օրինակի ասթինեայ. և այսուհետև ոչ ևս կարող լինիցին կառավարել

զնոսա. զի ասիցեն, թէ տիկնաց տիկինն կոչէցեալ յարքայէ՝ ոչ կամեցաւ հնազանդիլ, և այնու արդարացուսցեն զըմբոստութիւն իւրեանց։ Եթէ պատրաստական ծանր ինչ պատժով ոչ առցին առաջք մեծի գայթակղութեանս, ամենայն կանայք պարսից և մարաց ըմբոստանայցեն ընդդէմ արանց իւրեանց։ Իսկ դարման այսչափ չարեաց է մի միայն. այսինքն առժամայն մերժել զսթինէ 'ի տիկնութենէ և յառաջաստել. և տալ զտիկնութիւնն այլումի՝ որ լաւ իցէ քան զնա։ Եւ այս լիցի անցեղի վճռաւ՝ ըստ անլուծանելի օրինաց մարաց և պարսից և վաղվաղակի արձակեսցի հրովարտակ ընդ ամենայն երկիր թագաւորութեանդ, պատուիրելով զի կանայք պատուեսցեն զարս իւրեանց, և հնազանդ լիցին նոցա յաղքատաց մինչև ցմեծամեծս։

Արքայն տակաւին արբեալ՝ խսկև խսկ հաւանեցաւ ընդ խորհուրդն. նոյնպէս և խորհրդակիցքն նորա։ Արարաւ վճիռն և 'ի գործ եդաւ. ասթինէ մերժեցաւ 'ի տիկնութենէ և յառաջաստէ արքայի. և հրովարտակն օրինադրական արձակեցաւ ընդ դաւառս թագաւորութենն։ Օրինաւոր էր հրովարտակն ըստ արդար պայմանի, քայց չէր բաւական արդարացուցանելոյ զանարդար վճիռն 'ի բուռն յայտնութիւնէ կրից ցասման արարեալ. ընդ որ և նա ինքն արտաշէս իբրև սթափեցաւ 'ի գինւոյ և 'ի բարկութէ, ոչ հաճեցաւ։ Օ՛ի զմտաւ ածեալ զթեթևութիւն յանցանաց տիկնոջն. և զտարապայման ծանրութիւն պատժոյն, տրտմեցաւ և ատրջացաւ ընդ եղեալն։ Ցեսեալ իշխանացն տխուր և մտախոհ զարքայն, կասկած անկաւ 'ի սիրտ նոցա, զի թէ կայցէ նա ընդ երկար յայնմ մտախոհութեանէ 'ի վերայ գործոյն, զոր եռաւն նմա այնպէս գահավիժ գործել, գուցէ չարիս հասուսցէ նոցա. մանաւանդ զի որպէս ցուցանէ քաղդէական մեկնաբանութիւն, գաղտ յարքայէ կորուսցին զասթինէ, երկուցեալ թէ արքայ յիշելով զանհամեմատ գեղ նորա, դարձուսցէ զվճիռն։ Այսոքն որոյ առ փարատելոյ յարքայէ զտխրութիւնն, և ազա-

տելոյ զանձինս իւրեանց 'ի կասկածանաց չարի, զայն առին 'ի ձեռին, որ է մի միայն փարատիչ տրտմութեց 'ի սիրոյ պատանեւելոց. այսինքն բժշկել այլով սիրով. զի այլ զուարճութիւնք ոչ բառնան 'ի սրտէ զսէր, բայց նոր սէրն հեշտեաւ ընկէ 'ի սրտէ զհինն։ Բ. Առաջի արարին արքայի հրաման տալ, զի ժողովեսցին ընտրանօք յամենայն թագաւորութիւն նորա աղջկունք կոյսք մի քան զմի գեղեցիկք տեսլեամբ, յորս ընդ որ առաւել հաճեսցի արքայ, նմա տացէ զտիկնութիւնն փոխանակ ասթիներայ. իսկ այլք որք հաճոյ իցեն նմա՝ լիցին նորա երկրորդական կանայք։ Հաճոյ թուեցաւ արտաշէսի խորհուրդն. ժողովեցին ըստ հրամանի նորա և մուծին յարքունիս աղջկունս բազումս՝ զընտիր ընտիրս յամենայն թագաւորութիւն նորա։

Ընդ այլ աղջկունս մուծաւ ըստ տնտեսութենն ոյ և Եսթեր կոյս երբայեցի՝ դուստր ամինադաբայ հօրեղբօր մուրթքէի, 'ի ցեղէ բենիամինի, յազգէ կիսեայ և սաւուղայ առաջնոյ թագաւորի իսրայէլի։ Բանզի 'ի մեռանել հօր և մօր աղջկանն, 'ի տուն իւր առեալ զնա մուրթքէի՝ որ մի էր 'ի պաշտօնէից արքունի դրանն, սնուցեալ էր զնա 'ի խոնարհութիւն, 'ի զգաստութիւն, և յերկիւղ ամենայ. որով բնաձիր պայծառութիւն գեղեցկութիւն նորա՝ ևս քան զևս լուսափայլէր 'ի խոնարհ հաճեստութիւն նորա։ Խարձրութիւն փառաց՝ յոր ամբարձաւ, ոչինչ երարձ 'ի խոնարհութիւն նորա և 'ի հաճեստութիւն. և ամենայն մեծութիւնք և քնքշանք մեծի արքունեացն ոչ զօրեցին ազդել 'ի սիրտ նորա ստուեր իմն մնափառութիւն կամ բարձրամտութիւն։ Յառաջնում տեսութիւն սնդ յորժամ եռես զեսթեր ովգա ներքինի, որ էր կարգեալ 'ի վերայ կանանց արքայի, հաճոյ թուեցաւ նմա յոյժ աղջիկն. և փութացաւ տալ նմա անառ և իւղս անուշունս յօծումն, և խունկս, և հանդերձս և զարդս կանանց ըստ սովորութիւն, և զայլ ամենայն հանդերձանս որ ինչ անկ էր առ պատրաստութիւն տիկնութիւն արքայի։ Տուան նմա և եօթն նաժիշտք 'ի

սպասաւորութիւն՝ յարքունի աղջկանց անտի. և ոչ-
գա դարմաներ զնա առաւելագոյն քան զայլ ընկերս նորա. զի եգիտ Եսթեր շնորհս յոյժ առաջի նորա։ Վասն զի յամենայնի հնազանդ էր նմա. և ամենայնիւ շատացեալ, զոր ինչ և տայր նմա. ոչ մերժէր ինչ, և ոչ պահանջէր ըստ կանացի աւելորդիւր և դժուարահաճ բարոյից, որպէս գուցէ առնէին այլք. վասն այնորիկ յարգոյ և սիրելի էր ամենեցուն, որք միանգամ տեսանէին զնա։

ԳԼ. ԺԴ.

Մոռնանակ ասելնէայ որ մերժեցաւն, ընդրէ Եսթեր 'ի թագուհիութիւն արքայէն։

Եսթեր ընտրեցաւ 'ի միջոյ այնչափ բազմութեան օրիորդաց փոխանակ ասթիներայ. 'ի նորա գլուխ եդ արտաքէս զթագ արքայական. զնա արար և հրատարակեաց իւր կին և դշխոյ՝ տիկնաց տիկին։ Բարի և բազմահանդէս կոչունս հարսանեաց ամենայն սիրելեաց իւրոց և զօրապետաց աւուրս եօթն. և որպէս զի տիկնութիւնն Եսթերայ լիցի յառաւել ուրախութիւն համարէն թագաւորութեան իւրոյ, հրամայն Եհան թեթևացուցանել զժողովուրդն 'ի զանազան արքունի հարկաց, և 'ի ծանր ծանր կապալաց։ Բայց Եսթեր ոչ յայտնեաց զհայրենիս և զազգ և զժողովուրդն իւր. զի այնպէս պատուէր տուեալ էր նմա մուրթքէ. թերևս զի կասկածէր, թէ լինելն նորա յազգէ անտի՝ որ նուաստացեալ էր յայնժամ յոյժ գերութիւն, խափանումն ինչ լիցի նորա յառաջադիմութեան։ Իսկ Եսթեր որպէս յառաջագոյն, ըստ նմին օրինակի և զկնի ամբառնալոյ իւրոյ 'ի դշխոյութիւն փառս՝ միշտ

ըստ առաջին խորհրդոյ ՝ծածսեր և գորովական հօրեղբօր իւրոյ վարեցաւ . պահեաց անթերի զխրատս նորա երկնչել յոյ , և առնել զամենայն հրամանս նորա ։ Լոյս ոչ մուրթքէ եցոյց զինքն բնաւ լինել մերձաւոր ազգական եսթերայ , ուստի և չունէր ազատութիւն տեսանել զնա կամ խօսել ընդ նմա ։ Սակայն ոչ երբէք մոռացաւ զնա , երթայր զօր ամենայն և դեգերէր յապարանսն թագաւորին . ուր կենակցելով ընդ բազմաց արքունի պաշտօնէից՝ գտանէր պատեհութիւն լսել վասն եսթերայ , առանց հարցանելոյ ինչ , և առանց ծանօթս տալոյ զանձնէ . գտանէր և 'ի ներքինեաց որք ծառայէին եսթերայ դշխոյին , յորոց իմանայր զամենայն ։ Լսէր և եսթեր իւր առանձինն նեղքինի մի տուեալ նմա յարքայէ՝ առնսթև անուն , հաւատարիմ նմա յամենայնի . այլ թէ գիտէր սա՝ կամ ոչ՝ զազգականութիւն տիկնոջն ընդ մուրթքէի , չէ յայտ . բայց զայս տեսանեմք , զի ունէր զնա եսթեր գործի 'ի ձեռին . նովաւ առաքէր պատգամս առ մուրթքէ , և նովաւ առնոյր 'ի նմանէ պատասխանի . և զամենայն գաղտնի խորհուրդս իւրեանց 'ի ձեռն նորա հողբրդէին միմեանց ։

Մինչ յաճախէր մուրթքէ յապարանսն թագաւորին 'ի սակս սանոյ իւրոյ , յաջողեաց նմա առիթ բարութիւն մեծ առնելոյ արքայի ։ Օ՛ի ընդ այլ ներքինիս և պաշտօնեայս արքայի կային անդ և երկու ներքինիք կոչեցեալք դաբիթէս և թարայ , որք էին անձնապահպետք թիկնապահաց արքայի . կամ (որպէս ընթեռնումք 'ի գլ. ՅԲ. 1.) պահապանք ապարանից թագաւորին ։ Սոքա ատելութիւն մեծ ունելով ընդդէմ արքայի՝ դարան գործէին նմա սպանանել զնա ։ Օ՛պատճառ ատելութենն նշանակէն օրինակք ինչ յունաց , յորոց և մերս , որպէս և քաղդէացին . " Պատն զի , ասէն՝ նախանձէին ընդ մուրթքէի առաւել քան զնոսա պատուելոյ 'ի թագաւորէն ։ Բայց այս չէրևի բաւական պատճառ առ այնչափ թշնամութիւն . մանաւանդ

զի մուրթքէ չէ էր յայտնեալ զազգականութիւն իւր ընդ Եսթերայ թագուհւոյ, և ոչ երևելի պատիւ ինչ կամ իշխանութիւն յայնժամ երևի ընկալեալ նա յարքայէ։ Այսն որոյ բազումք յայս միտս են, թէ համանն իցէ հրապուրեալ զնոսա յայն եղեռն, զի ինքն թագաւորեսցէ. կամ զոք յամաղեկացւոց նստուցանիցէ յայն աթոռ։ Այս զայս գուշակէն 'ի բանից անտի նորին արտաշիսի, զոր ասէ վասն Համանայ. "Այ՝ եթէ նայել ջանացաւ յիշխանութենէ ատոի զմեզ 'ի բաց մերժել։ Այս ևս "զի նա այսու օրինակաւ խորհեցաւ առնուլ զիշխանութիւն պարսից ... և 'ի մնակեղոնացիս անդրէն դարձուցանել։ Եսթ. ԺԶ. 12. Բ 14։ Այլ զիարդ և իցէ, խնայեաւ մուրթքէ հաստատութիւն զամենայն մեքենայս երկուց նեքինեացն, և ծանոյց անյապաղ Եսթերայ. իսկ նա յանուն մուրթքէի՝ յայտնեաց զիրսն թագաւորին։ Այնն նեցան, և յայտնեցաւ Ճշմարտութիւն ամբաստանութեան 'ի նոցին իսկ խոստովանութենէ. և իսկ և իսկ երկոքին ևս կախեցան զփայտէ։ Այս հրամայեաց թագաւորն յանդիմանն ալաց իւրոց արձանագրել զիրսն 'ի մատեանն յիշատակաց. և մուրթքէ յաղագս այսպիսի հաւատարմութեան իւրոյ՝ կարգեցաւ ընդ այլ իշխանս, որք էին պահապանք ապարանից թագաւորին. և պատուիրեցաւ նմա յարքայէ մեծաւ զգուշութիւն առաւել ևս խնամ ունել տան արքայի։

Յառաջ քան զայս դիպուած տեսիլ ետես մուրթքէ։ Լուաւէր նմա լսել ձայն խռովութեան, և որոտմանց և սաստանութեան երկրի, և տեսանել ամբոխուն մեծ 'ի վերայ երկրի։ Այս ապա ետես, զի ահա երկու վիշապք մեծամեծք պատրաստեալ երանեին 'ի կռիւ ընդ միմեանս. և 'ի ձայնէ բարբառոյ նոցա պատրաստեցան ամենայն ազգք տալ պատերազմ ընդ ազգին արդարոյ։ Այս էր օրն խաւարին և մթին՝ տառապանաց և նեղութեանց. զի խռովեցաւ ամենայն ազգն արդար վասն չարեացն՝ որ գալոց էր 'ի վերայ իւրեանց, և պատրաստեցան 'ի կորուստ։ Յայնժամ կարդացին նոքա առ ՝ած.

և 'ի ձայնէ անտի նոցա՝ եղև իբրև 'ի փոքրիկ աղբիւրէ գետ մեծ յոտակ. և արեգակն ծագեաց, և խոնարհքն բարձրացան, և կերան զփառաւորսն։ Օ արթեաւ մուրթքէ, և ունէր զտեսիլ երազոյն 'ի սրտի իւրում. և յամենայն զօրութէ իւրմէ ցանկայր գիտել, թէ զինչ իցէ տեսիլն, և զինչ կամի առնել ասծ։ Եւ անցին բազում ժամանակք՝ զի գիտաց, անձամբ ընդ փորձ տեսլեանն անցեալ։

ԳԼ. ԺԵ.

Համն հաճանուրէ արքայէսի հրովարքակ հանէ կոչանանէլ զամենայն ազգն հրէից՝ որ էին 'ի համարքն նագաքորուրէ արքայէսի։

Համն որդի ամնադովթեայ ամնղեկացի՝ էր յազգէ ագագայ ամաղեկոցւոց թագաւորի, զոր ըմբռնեաց սաուղ. այլ 'ի խնայել նորա 'ի նա՝ սպան զնա սամուէլ ըստ հրամանի ասն, որպէս տեսաք յիւրում տեղւոջ։ Այն այս այր երիւք փառաւորեալ էր, որք բարձրացուցանէին զամբարտաւանութիւն նորա, և ասային նմա զեղծանիլ իշխանութիւն իւրով։ Էր 'ի զարմ թագաւորի, ունէր հարստութիւն թագաւորի, և էր նեբքին սիրելի թագաւորի։ Վանզի արտաչէս բարձրացոյց զնա յառաջին աթոռ քան զամենայն սիրելիս իւր. ուստի և էր երկրորդ զկնի թագաւորին յամենայն թագաւորութիւն մարաց և պարսից։ Յորժամ մտանէր յարքունիս՝ ամենեքեան որք միանգամ էին անդ՝ երկիրպագանէին նմա, որպէս թէ աստուած ամն էր. զի այնպէս հրամայեալ էր թագաւորն առնել նմա։ Այլ միայն մուրթքէ ոչ պագանէր նմա էր կիր, ոչ եթէ առ հպարտութիւն, զի ինքն իսկ վրկայէ առաջի այ՝ որ քննէ զսիրտս և զերիկամունս,

թէ կամէր և պատրաստ էր պագանել զգաբշա-
պարս ոտից նորա վասն փրկութեան ժողովրդեան
իւրոյ. այլ ոչ կրկնէր նմա ծունր, զի զայն պատիւ
տալ մարդոյ անդ՝ նոյն էր, որ ինչ պաշտել զմարդ
իբրև զաստ ոմն։ Համան յանցանել իւրում 'ի մէջ
բազմութեան ժողովրդոց, ոչ խմացաւ զայն աւուրս
բազումս. մինչև լուեալ յայլոց, և այնքան իսկ իւ-
րովք ստուգեալ ըստ իւրոց կարծեաց՝ զանխոնար-
հելն խստասրտութիւն մուրթքէի, կատաղեցաւ
յոյժ. և զի ստուգեաց զնա հրէայ լինել, զկատա-
դութիւն իւր ձգեալ տարածեաց 'ի վերայ համօրէն
հրէական ազգին, որք էին սփռեալ ընդ ամենայն
երկիր թագաւորութեան արտաշիսի։

Ոչինչ երկմտեաց անօրէնն զազգն ամենայն
տալ 'ի կորուստ, այլ միայն տարակուսէր ընտրել
զօրն բարեբաղդ 'ի յաջողումն անօրէնն կամաց իւ-
րոց կատարման։ Որ յայնժամ երկոտասանեքորդ-
ամ թագաւորութեան արտաշիսի. և ամիսն Նիսան,
առաջին եկեղեցական ամիս երբայեցւոց. արդ-
սկսաւ Համան արկանել վիճակ օր յօրէ, և ամիս
յամսոյ. և անկաւ վիճակն 'ի չորեքտասանեքորդ
օր երկոտասանեքորդ ամսոյն՝ որ կոչի ադար։ Որ-
տեսաւ առ թագաւորն, և գեղեցիկ պատրուակ
արկեալ (որպէս սովորութիւն է զրպարտողաց,) 'ի
վերայ դառնամաղձութեան սրտին զփոյթեռանդն
նախանձ 'ի բարութիւն երկրին և թագաւորութեան,
ետոյց արքայի, թէ գոյ ազգ և ժողովուրդ օտար-
ազգի ընդ ամենայն երկիր թագաւորութեան նորա՝
ապիրատ և խորամանկ, անարգու արքայի, անհը-
նազանդ հրամանաց նորա, և ինասակար առ բա-
բիրոք տնտեսութեան թագաւորութեան, զի օտար օրի-
նօք վարին. և թշնամի են աստուածոց, զի ոչ
պաշտեն զնոսա։ Որդ՝ ասէ, եթէ կամք իցեն ար-
քայի, հրաման տացես կորուսանել զնոսա. առ որ
ասիցի պատերազմ, կամ բազմութեն զօրաց. դիւ-
բին է նոցայն ջնջումն, զի չեն միացեալ, այլ բա-
ժանեալ 'ի միմեանց, և ցրուեալ ընդ ամենայն եր-
կիր թագաւորութեան քո. և ես կարդ եցից 'ի գանձս

արքունի բիւր քանքարս արծաթոյ, իմա առաւել յԼնչից անտի ազգին կոտորելոյ։

Բ. Ըստ չէս արքայն՝ որ երկեր գրեթէ միշտ կորուսանել զամենայն խոհեմութիւն, յորժամ ոք 'ի սիրելեաց իւրոց խնդրէր 'ի նմանէ շնորհս ինչ, նոյնհետայն հաւանեցաւ անօրէն առաջարկութիւնն ամենարշտին, ոչ յաղագս խոստման բիւր քանքարաց կամ վասն այլ ինչ անձնական շահից, այլ լոկ 'ի տկարութենէ սիրալիր սրտին։ Ա. Հաւատայր թէ նա որ այնչափ փառաւորեալ էր 'ի նմանէ, լինիցի այնչափ ապաշնորհ, մինչև խնդրել 'ի նմանէ շնորհս իսպառ եղծիչս պատուոյ իւրոյ, արդարութեան իւրոյ, և թագաւորութեան իւրոյ։ Բ. Ու սակայն եթէ թագաւորք և ամենայն առաջնորդք ունին երբէք լինել արթուն և զգուշաւոր 'ի կշռել քաջ զաղերսագիրս, կամ զառաջարկութիւս, է յայժամ մանաւանդ, մինչ մատուցանին կամ առաջարկին յայնցանէ՝ որք առաւել սիրելի են նոցա։ Ի սիրելիսն՝ սովորաբար առաւել զօրաւոր են առանձնական կիրք քան զերախտագիտութիւն։ Շ. Ահախնդրութիւն, ատելութիւն, սէր և խոստումն՝ տան սիրելեցելոյն առ ոմն կոխել զամենայն օրէնս պատշաճողութեան, իրաւանց, և արդարութեան. մինչև բարձրացուցանել զանարժանս՝ եթէ իցեն կախեալ գնմանէ, կամ գնոյ առնուցուն գրամաք զպաշտպանութիւն նորա. և յետս ընկրկել զարժանաւորս՝ եթէ իցեն նոքա ապաւինեալ միայն յարժանաւորութիւն իւրեանց արդեանց։ Յաճախեն ստութիւնք և զբրպարտութիւնք. և սիրելին համարձակութիւն առնու խաբել զիշխանն, զի վստահ է, թէ նա հաւատացեալ նմա՝ ոչ իմանայ զպատրիլ իւր 'ի նմանէ. և եթէ երբէք 'ի յայտ գայցէ խաբէութիւնն, զստախօսութիւնն զգեցուցանէ 'ի կերպարանս Ճշմարտութեան. կամ գէթ յատենէ սիրոյն վստահանայ անդատապարտ ելանել։

Բ. Ըստ չէս ոչ միայն հաւանեցաւ ընդ անագորոյն արիւնարբուշտ առաջարկութիւն համանայ, այլև զխոստացեալ բիւր քանքարն նմա շնորհեաց.* զար-

ծաթդ ասէ՝ կալ ընդ քեզ»։ Զնա եթող և զՀրովարտակն դատապարտութեան գրել ըստ կամի. և առանց յայն արկանելոյ զզրեալն յիւր անուն՝ ետ զմատանին իւր 'ի ձեռս նորա՝ կնքել զդատակնիքն կորստեան հրէից առ հասարակ մեծի և փոքրի, ծերոյ և տղայոյ, առն և կնոջ. և զամենայն ինչս և զստացուածս նոցա յափշտակել. ուր և զօրն գործադրութեան կոտորածի՝ սահմանեալ լինել 'ի չորրորդ աւուր յամենայն երկոտասանեորդի, որ է ադար։ Զայս 'ի հրովարտակի անտի գրեցան և շրջաբերական թուղթք ըստ նմին օրինակի հաստատեալք կնքով արքայի, և ընդ պատգէնից հրովարտակին՝ առաքեցան 'ի ձեռն սուրհանդակաց ընդ ամենայն իշխանութիւն սրտաշիսի 'ի հարիւր քսան և եօթն գաւառս առ ամենայն իշխանս գաւառացն իւրաքանչիւր լեզուաւ. յորս պատուիրեր պատրաստել և կազմ ունել զամենայն որ ինչ հարկաւոր էր 'ի կատարումն մեհաբեր վճռոյն 'ի սահմանեալ աւուրն ընդ ամենայն տեղիս միանգամայն։

Զոստ կուրացոյց ՀԱԾ զչարութիւն համանոյ չգիտել և չիմանալ զոր գործէր։ Զթէ զերկոտասանեորդի ամիսն սահմանեաց 'ի սպանդ հրէից, էր պարտ նմա այնչափ շառաչիւնս հանել յառաջնում ամսեան։ Զոստ մեռասան ամիս թագաւորին. և ոչ ՀԱԾ գմտաւ, թէ ընդ այնչափ ժամանակս քանի՞ դիւրին էր նմա փոփոխել, գոլով 'ի բնէ անհաստատ բարոյից վիճակեալ։ Զոստ նմին օրինակի՝ ոչ գիտաց խորհիլ թէ իշխանք գաւառաց՝ թէ ոչ ամենեքին, գէթ առաւել մասն նոցա, ոչ հաւանեսցին 'ի սրտի ընդ անիրաւ դատակնիքն. մանաւանդ զի տեսանելով զհրեայս որք էին ընդ ձեռամբ իւրեանց այլազգ քան զոր էին նոքա նկարագրեալ 'ի հրովարտակի անդ, ընդ ժամանակս մեռասան ամսոց կարէին գտանել զանազան հնարս 'ի խափանել զդործադրութեան նորա։ Զոչ զայն յիշեաց, թէ 'ի հրեայս են յոլովք հարուստ ընչիք, և ՀԱՐտարքը 'ի գիւաս հնարից. ուստի ունելով նոցա այնչափ

ժամանակ պարապոյ, մարթ էր դրամաք, և հոմն ձարով մտաց գտանել դարման չարեացն, և 'ի դեբև հանել զՀրովարտակն։ ԹՈՀզ զի և նոցին իսկ ծառայից արտաշիսի, որք հաւատարիմ էին առնա, և չունէին խէթս ինչ ընդ հրէայս, անթերեալ էր թէ թագաւոր իւրեանց թէպէտ դիւրաշարժ 'ի բարկութիւն, այլ բնութիւն քաղցր և գթած՝ 'ի շնորհս միոյ ամբարտաւան սիրելւոյ իւրոյ՝ զայնչափ բիւրաւոր անմեղս 'ի կորուստ մատնելով՝ որք խաղաղութիւն կային 'ի թագաւորութեան նորա, զանուն անգութ և անիրաւ բռնակալի ժառանգեսցէ առաջի ամենայն աշխարհի։ Այսպա եղեալ թէ կամէր հման զայն ոճիր գործել, պարտ էր նմա փութացուցանել ստիպով զգործադրութիւնն, և չտալ ժամանակ խորհելոյ. զի այսպիսի ոճիրք սովկուն մեծ պատճառեն. և եթէ տացի պարապ անկիր կամաք և խաղաղական մտաք խորհիլ զմեծութիւն չարութեն, ոչ ոք ձեռնարկէ 'ի նոյն։

Այլ զիարդ և իցէ, վերին տեսչութիւն ամենայն ինչ շրջեցաւ ընդ հակառակն խորհրդոյ չարին։ և այն 'ի ձեռն նորին իսկ հրելի, զոր մահուանչափ ատեայր, յոյր սակս և եհան զհալածումն զայն մեծ 'ի վերայ համբրէն աղգին։ Օ 'ի հրովարտակն մահառիթ՝ որ առաքեցաւ ընդ ամենայն գաւառս թագաւորութեանն արտաշիսի, զոր ուր և կարդային՝ աղաղակ և կոծումն և սուգ մեծ լինէր հրէից, հրատարակեցաւ և անդ 'ի շուշան քաղաքի. իբրև զայն գիտաց մուրթքէ, պատառեաց զպատմուճանն իւր, և զգեցաւ քուրձ, և ցանեաց մոխիր զգլխով իւրով, և ընթացաւ ընդ հրապարակս քաղաքին, 'ի ձայն բարձր աղաղակէր և ասէր, ընդէր բառնայք զուր տարապարտուց զաղգս իմ, որ ոչինչ գործեաց չարիս։ Այլն մինչև 'ի դրունս տանն արքունի, այլ զի էր 'ի հանդերձս սգոյ և ապաշխարութեան, չէր օրէն այնպէս մտանել յարքունիս։ այլ շրջէր 'ի հրապարակի անդ հանդէպ արքունեաց. մանաւանդ յայն կողմն՝ ուր էին կանայք թագաւորին, որպէս զի աք 'ի ներքինեաց և 'ի

նաժշտաց Եսթերայ ընդ ծածուկ պատուհանս տես-
ցէն զնա յայն սգոյ տարազ, գիտելով թէ նոքա
առ ժամայն ազգ առնէն իւրեանց տիկնաց տիկ-
նոջն։ Երկիս և եղև խսկ. զի տեսին նոքա ըզ-
մուրթքէ, և մտին և պատմեցին Եսթերայ. ընդ
որ խոռվեցաւ նա յոյժ. և փութացաւ առաքեաց
հանդերձս պատուականս, և ասաց հանել 'ի նմա-
նէ զքուրձն, և զայն զգեցուցանել նմա. այլ
մուրթքէ չէառ յանձն։ Այսպա առաքեաց Եսթեր
զառնաթն զիւր հաւատարիմ ներքինին՝ ստուգու-
թիւն խմանալ զիրսն 'ի մուրթքէէ։ Իսկ նա պատ-
մեաց զամենայն զոր ինչ արար համան 'ի կորուսա-
նել զՀրէայս. եւ և զպատՃէն հրովարտակին տա-
նել տալ 'ի ձեռս Եսթերայ. միանգամայն և պատ-
ուիրեաց ասել ցնա՝ անյապաղ մտանել և խօսել
ընդ արքայի, յայտնելով զանձն լինել յազգէն Հր-
էլից. և խնդրել և աղաչել վասն ժողովրդեանն
ազգի իւրոյ, և ողբանօք և արտասուօք և ամե-
նայն ոգւով գուն գործել դարձուցանել զսիրտ
արքայի 'ի գութ 'ի վերայ ազգին իւրոյ։

Այսպ խոչ մեծ կայր առաջի առ կատարումն
քանին մուրթքէի, որ 'ի վարանս անհնարինս ար-
կանէր զտիկնաց տիկինն։ Անգի չէր օրէն քնաւ
ումեք՝ թէ այր իցէ թէ կին, մտանել առ արքայ 'ի
ներքին սենեակն՝ առանց կոչելոյ նորա. և այնչափ
սաստիկ էր այս սովորութի կամ օրէն, մինչ զի
թէ ոք առանց կոչման նորա իշխէր մտանել, ոչ
գոյր նորա փրկութի, բայց միայն առ որ ձգէր ար-
քայ զոսկի գաւազանն, 'ի ցուցանել թէ հաՃի ընդ-
մուտն, և շնորհէ նմա զկեանս։ Այս զի էին աւուրք
երեսուն, յորմէ հետէ Եսթեր չէր կոչեցեալ առ
արքայ, այս ևս յաւելեալ զերկիւղ նորա. զի տե-
սանել զանձն ընդ այնչափ ժամանակ մոռացեալ
յարքայէ, մարթ էր նմա կասկածել թէ ցրտացեալ
իցէ առ նա առաջին ջերմ սէր արքայի։ Այս ա-
մենայն ծանոյց Եսթեր մուրթքէի 'ի ձեռն ներքին-
այն իւրոյ։ Լուեալ մուրթքէի զանն Եսթերայ՝
ոչ թուլացաւ, այլ առաւել պնդեաց զառաջին ա-

ռաջարկութեն իւր կարևոր, քաջ կշռեալ 'ի միտս իւր զվտանգն, որ 'ի յապաղելոյ դարմանաց կարէր ծագել՝ եթէ 'ի կողմանէ համանայ, որ գուցէ նոր ստիպումն յաւելուցու 'ի փութացուցանել զգործադրութեն դատակնքոյն. և եթէ 'ի կողմանէ աբքայի, որ եթէ սկսեալ իցէ ցրտանալ 'ի սիրոյն Եսթերայ, 'ի յապաղել երևիլ առաջի նորա, գուցէ խսպառ ցրտանայցէ. և այնուհետև ոչինչ կարիցէ առնել։ Այսպս կարևոր դատեցաւ՝ թէ չէ պարտ յապաղել, ակնուսնելով թէ երևիլ առաջի նորա Եսթերայ իւրոյ սիրելւոյ, անդրէն արծարծեսցի բոցն՝ եթէ սկսեալ իցէ շնջանիլ. և արքայ զամենայն ինչ հնարհեսցէ անուշակ ողջանաց նորա։ Զայսոսիկ որոյ զարձոյց անդրէն գնելբինին՝ ասել ցեսթեր, թէ այս է ժամն յորում պարտ է նմա 'ի զոհ նուիրել զանձն վասն բարութեան ազգին. և չասել 'ի մտի՝ թէ ես միայն ապրիցիմ 'ի թագաւորութեան յամենայն հրեից։ Զի ոչ այլուստ տացէ զօգնականութեն և փրկեսցէ զժողովուրդ իւր. այլ ինքն ընկալցի պատիժ 'ի հանէ, փոխանակ զի ոչ եղ զանձն 'ի կշիռ վասն ազգին։ Եթէ քաջ յուշ ածիցէ զինամանն զոր կալաւ ոչ 'ի վերայ նորա, գուցէ գտանիցէ, թէ վասն այսր ժամու ամբարձաւ յայն բարձրագոյն վիճակ, զի լիցի փրկիչ ժողովրդեան իւրոյ 'ի վտանգէ ատի յայսմանէ։

Այս բանք, զոր հաւատարմութեամբ պատմեաց առնաթեև ցսիկինաց տիկինն իւր, հաւանեցուցին զեսթեր մնանել առ արքայ, թէպէտ և չիցէ կոչեցեալ։ Սակայն ոչինչ վատահացեալ յանձն, այլ զամենայն յոյս և զապաւինութեն իւր յոչ միայն հաստատեալ, առաքեաց ասել ցմուրթքէ՝ ժողովել զամենայն հրէայս որ էին 'ի սիսիս քաղաքի անդ, և միաբան երեքօրեայ պահօք և աղօթիւք պաղատել առ ոչ. և ես ասէ և նաժիշտք իմ աբասցուք այնպէս, և ապա յաւուր երրորդի մտից առ արքայ. և եթէ հաճանիցէ ինձ մեռանել, ոչ յապաղեցից. արար մուրթքէ զամենայն։ Իսկ ես թեր տիկնաց տիկինն ապաստանեալ առ ոչ բոլ-

բով սրտիւ, մերկացաւ յանձնել զհանդերձ փառաց թագաւորութեան իւրոյ, և զգեցաւ քուրձ նեղութեան և սգոյ. և փոխանակ պէսպէս պատուական իւղոց և խնկոց անուշից՝ մխիթարով ելից զգլուխ իւր, և խանդաբեաց զվայելչութիւն վարսից գլխոյն. և զամենայն տեղիս զարդու տան իւրոյ ուր սովոր էր ուրախանալ՝ համակ 'ի սուգ զգեցոյց. և զմարմին իւր 'ի պարսն և 'ի բազում աշխատութիւնս խոնարհեցոյց։ Լու մատուցեալ բազում աղօթիւք ջերմ խնդրուածոց հայցէր 'ի Տէրէ՝ զի խրատիչն օգնել նմա, որ բաց 'ի նմանէ չունի այլ օգնական։ Լու յիշելով զընտրութիւնն զոր արար՝ առեալ զխրատիչ յամենայն ազգաց յիւր ժառանգութիւն յաւիտեան, և զգործս մեծամեծս և զհրաշալիս՝ զոր ընդ ժամանակս ժամանակս գործեաց 'ի նոսա 'ի սիրելիս իւր, ապա գարձուցանէ զանձն 'ի պաղատանս՝ հայցելով լմնել ինքեան առընթեր յայնմ մեծի վտանգի. և տալ բան դիւրին 'ի բերան նորա, որով գտանիցէ շնորհս առաջի թագաւորին. և ապա զանկեղծ խոնարհութիւն սրտի իւրոյ, և զճշմարիտ սէրն՝ զի վկայելով առաջի նորա, ասէ. "Տէ՛ր դու զամենեցուն զսիրտս գիտես և ճանաչես. և ես ատեցի զփառս անօրինացս. և գարշեցեալ եմ յանկողնոյ անթլփատից. և յամենայն օտար ստացուածոցս։ Դու գիտես թէ զկարիս իմ, զի գարշելի է ինձ թագս, որ է 'ի վերայ գլխոյ իմոյ. գարշիմ 'ի սմանէ, որպէս 'ի կապերտէ, որ լմնի ըստ օրինաց կանանց. և ոչ զգենուի գնա, յորժամ 'ի ներքս գադարեմ.... և ոչ փառաւորեցի զգինարբուս թագաւորին. և ոչ արբի զգինի սպանդից նոցա. և ոչ ուրախ եղև աղախին քո յօրէն յայնմանէ՝ յորմէ հետէ մտեալ եմ առ թագաւորն մինչև ցայժմ, բայց 'ի քեզ թո՛ր՝ թէ՞ որ ես աբրահամու։ Լ. Ծ հզօր 'ի վերայ ամենեցունց՝ լուր ձայնից անդուսացս. և փրկեա զմեզ 'ի ձեռաց որ չարչարեն զմեզ. և փրկեա զիս յերկիւղէ անտի զոր երկնչիմն. և ապրեցո զժողովուրդ քո զիս բայէլ"։

ԳԼ. ԺԸ.

Լսելիք հաճախումբ արդարշէսի ցրէ զանօրէն հրովարտակն համանայ։ Լս հակառակ հրովարտակ հանէ։

Լսեթեր յաւուր երրորդի 'ի բաց հանեալ զգ-
հանդերձ սգոյն՝ զգեցաւ զծիրանիս, և զարդարե-
ցաւ 'ի զարդ թագաւորական. և առեալ զերկուս
նաժիշտսն զիւր սիրելիս, յորոց մին ունէր զստորոտ
զգեստու նորա, և զմիւսոյն արկանէր զձեռն իւր,
եմուտ ընդ ամենայն դրունս ապարանիցն, որչափ
կարող էր ծածկելով զնեղբին երկիւղ և զտագ-
նապ սրտին, և զուարթագին երևեցուցանելով
զերեսս։ Լ.յլ իբրև եհաս առաջի թագաւորին,
որ նստէր յաթոռ փառաց արքայական շքեղու-
թիւն, և հայեցեալ ետես զդէմն նորա կարմիր
ցեալ, և զաչս ահագնահայեաց, որք յայտնի ցու-
ցանէին զնեղբին ցասումն սրտին, յայնժամ ես-
թեր թէպէտ և կին արիասիրտ՝ որ եդեալ էր ըզ-
կեանս իւր 'ի վերջին վտանգ, ոչ ևս զօրեաց ծածկել, փոխեաց զգոյն երեսաց, և նուազեալ անկաւ
'ի վերայ նաժշտին իւրոյ։ Լ.սա երևեցոյց ոմն զտե-
ղուութիւն իւր 'ի վերայ սրտից թագաւորաց, զի առ-
քթթել մի ական դարձոյց զբարմտութիւն արքայի 'ի
դուռն և 'ի դորով. մինչ զի արտաշէս փութացաւ
վաղվաղակի էջ մեծաւ երկիւղիւ յաթոռոյ անտի
իւրմէ, և առեալ զտիկինն 'ի վերայ զրկաց իւրոց՝
մխիթարէր և քաջալերէր զնա բանիւք խաղաղու-
թեան. զի՞ է քեզ ասեր եսթեր տիկին, ես եղբայր
քո եմ, համարձակեաց՝ ոչ մեռանիս. (եթէ վասն
առանց կոչման մտանելոյդ առ իս, և եթէ վասն
իշխանութեան հրամանին.) զի 'ի միասին է իմ և
քո հրամանս յամենայնի՝ վասն այլոց և ոչ վասն
քո. ձգեա՛ զձեռնդ և կալ զգաւազանդ ոսկի։ Լ.յլ
զի տիկինն թէպէտ փոքր մի սթափեցաւ, բայց

տակաւին կայր Թալացեալ, ոչ շարժէր, և ոչ բառ մի կարէր յօդել, Թագաւորն ինքնին եդ ըզ-գաւազանն 'ի վերայ պարանոցի նորա, և համբուրելով զնա և փաղաքշելով՝ ասէր. ընդէր ոչ խօսիս, համարձակեա խօսեաց ընդ իս։ Յայնժամ եսԹեր բուռն արարեալ անձին՝ ասէ. հայեցեալ իմ 'ի քեզ ՀՐ՝ Թուեցաւ ինձ զՀրեշտակ ոյ տեսանել. և մեծութիւն փառաց քոց խռովեցոյց զսիրտ իմ, զի աքանչելի ես ՀՐ իմ. և երեսք քո լի են հնորհօք։ Կամէր և ևս խօսել, այլ անդրէն զօրացեալ նեբբին երկիւղալից անձկութիւն ոգւոյն՝ միւսանգամ նուաղեցաւ և գլորեցաւ իբրև զմեռեալ. յայնժամ Թագաւորն ևս առաւել խռովեցաւ, և իշխանք և սպասաւորք նորա առհասարակ ամբոխեալ 'ի նեբբս ընԹացան, և ամենեքեան քաջալերէին զնա և աղաչէին։ Ա.յն նուաղմունք, այն փոփոխումն գունոյ, այն համրութիւն լեզուի, այն տեսիլ մեռելահանգոյն առաւել օգնեցին իւրումն դիտաւորութիւն, քան Թէ որչափ օգնեալ էր պերճաբանութիւն նորա։ Օ 'ի սէրն ոչ երբեք այնպէս պատրաստ է նպաստել սիրելւոյն, որպէս յորժամ տեսանէ զնա նեղեալ։ Սիրելին որ կայ 'ի նեղութիւն՝ զինաԹափ առնէ զսիրոցն յամենայն գոռոզութիւն և 'ի խստութիւն, կակղելով և 'ի գութ և 'ի գորով լուծանելով զսիրտ նորա։

Իբրև խսպառ զգաստացեալ ուշաբերեաց տիկնին, Թագաւորն նստեալ յաԹոռ իւր՝ ձգեաց զգաւազանն ոսկի առ նա, և նա մեծարանօք համբուրեաց զծայր գաւազանին։ Յայնժամ ասաց ցնա Թագաւորն. զի՞նչ կամիս եսԹեր, և զի՞նչ էն ա-ղաչանքդ քո. արդարև ասէմ քեզ, եԹէ խնդրեացես մինչև ցկէս Թագաւորութիւն իմոյ՝ տաց քեզ։ ԵսԹեր ոչ 'ի ՀահԿ դատեցաւ յայտնել զինդրելին իւր անդ յապարանս արքայի 'ի լուր իշխանաց և ծառայից նորա. զի մարԹ էր նմա կասկածիլ՝ Թէ իցեն 'ի նոսա բարեկամք համանայ և պաշտպանեացեն նմա, կամ առժամայն հասուցցեն զիրսն յականջս նորա. և նա յինքն յանկուցեալ զսիրելիս

արքայի 'ի նէ չքին պաշտօնէից նորա՝ 'ի դերև հանեցէ զնորհուրդ իւր։ Եւ կարևոր վարկաւ այնպէս կարգել, զի 'ի ձեռին իւրում ունիցի զԵնամին՝ առանց կասկած ինչ տալոյ նմա յառաջագոյն, և խօսել ընդ արքայի անդ՝ ուր չիցէ այլ ոք. և յայնպիսում ժամանակի, մինչ դիւրին իցէ արքայի բորբոքել, և արագ արագ տալ զդատակնիք, զի մի լիցի նմա ժամանակ սարջանալոյ և փոխելոյ զվնիռ իւր։ Եւ 'ի մսի զայս ամենայն դիւրաւ 'ի գլուխս տանել, եթէ կարիցէ հաստատեցուցանել զարքայն, զի ինքն և համանն դայցեն 'ի կոչունս 'ի տան իւրում։ Վասն որոյ ասաց ցարքայն, օրս իմ այս նշանաւոր է. եթէ կամք իցեն արքայի, եկեսցես դու և Համանն 'ի կոչունս իմ, զոր առնելոց եմ այսօր։

Հաճեցաւ արքայն. և առաքեաց վաղվաղակի կոչել զՀամանն. որ ևս քան զևս բարձրացաւ 'ի միտս իւր ընդ այն մեծ պատիւ։ Գնացին երկուքեան, և Ճաշեցին ուրախութիւն. և իբրև ջերմացաւ արքայ 'ի գինւոյ և 'ի սիրոյ առ ալիկինն իւր, եհարց միւսանգամ թէ զինչ կամի, խոստանալով տալ նմա՝ զինչ և ինդրեսցէ։ Երևի թէ չէր պարտ ասել թերայ և ևս յապաղել զինդիրն զոր ունէր 'ի սրտի. բայց ոչ յայտնեաց այս անդամ. թերևս զի ալիկոծուէին զոր փոքր մի յառաջ կրեաց 'ի սեռեակ անդը արքայի՝ չև էր ըստ ամենայնի անդորրացեալ. և կասկածէր թէ առ անձկութիւն սրտին զոր տակաւին զգայր, չկարիցէ վայելչապէս միտս դատելոյ և ազդուութիւն խօսել 'ի ներգործել յարքային զուռան փոփոխումն հակառակ Համանայ իւրումն առաջին սիրելւոյ։ Եւ ևս հայեցեալ յանձն իւր, որ հաճիւ թէ փոքր մի խաղաղացեալ էր, ոչ կամեցաւ դարձեալ 'ի նոր մրրիկ արկանել զանձն, որ անբաժան էր 'ի գործոյն՝ յոր կամէր ձեռնարկել։ Այնպէս հայեցեալ յանձն արքայի՝ ոչ պատշաճ վարկաւ 'ի միում աւուր երկուս միմանց հակառակ բուռն փոփոխութիւս պատճառել նմա. փոքր ինչ յառաջ 'ի ցասմանէ փոխեցաւ յանկար-

ծակի 'ի սէր նորա. տարադէպ համարձակութիւն լինէր այնպէս արագ 'ի սիրելութիւն 'ի յետին թշնամութիւն համանայ փոխել զնա։ Օ իարդ և ինչ. եւ յայնժամ եսթեր պատասխանի ցարքայ, և ասէ. աղաչանք և խնդրուածք իմ այս են, եթէ գտի ես շնորհս առաջի արքայի, եկեսցէ արքայ և համանն 'ի կոչունսն, զոր առնեմ ձեզ վաղիւ միւսանգամ։ Խոստացաւ արքայ և յայնմ հաճեցուցանել զնա։

Եւ համանն յերեսաց արքայի և տիկնաց տիկնոջն անպայման ուրախութիւն և զուարթութիւն. և ուռուցեալ 'ի փքուռոյց փառաց անտի, ևս առաւել բորբոքեցաւ ցասումն նորա, յորժամ յելանել իւրում յարքունեաց՝ եսես զմուրթքէ 'ի տան արքայի, որ պատիւ ինչ ոչ եցոյց նմա. լռեաց առժամն, բայց իբրև գնաց 'ի տուն իւր, կոչեաց զսիրելիս իւր, և զզովսարրա զկին իւր, եդ առաջի նոցա զմեծութիւն հարստութիւն իւրոյ. և զփառսն զոր ետ նմա արքայ՝ առնելով զնա առաջին 'ի թագաւորութիւն իւրում. և պատմեաց թէ որպէս ինքն միայն կոչեցաւ 'ի տիկնոջէն եսթերայ 'ի կոչունսն ընդ արքայի. և թէ դարձեալ առ վաղիւ հրաւիրեցաւ 'ի նոյն սեղան ընդ արքայի։ Բայց ասէ այս ամենայն առ ոչինչ երևին յաչս իմ, ցորչափ տեսանեմ զմուրթքէ զայր հրէայ 'ի տան թագաւորին։ Լուան նմա խորհուրդ զովսարրա կին նորա և սիրելիք իւր՝ բառնալ յաշխարհէ զխստապարանոցն զայն. այլ զի իշխանուի համանայ ոչ ժամանէր առ այն, ասացին ամբաստան լինել զնմանէ առ թագաւորն, և առնուլ զդատակնիք նորա կախել զնա զփայտէ. յաւելին և խրատ տալ՝ զի առաւօրին տայցէ պատրաստել զփայտն 'ի տան իւրում յիսուն կանգուն բարձրութիւն. և ընդ առաւօտն առեալ զհրաման յարքայէ՝ տացէ կախել զմուրթքէ, և ապա մտանիցէ 'ի կոչունսն տիկնոջն հանդերձ արքայիւ, և ուրախ լիցի ընդ նմա։ Հաճոյ թուեցաւ համանայ խորհուրդն. և ետ պատրաստել զփայտն։

Եւ 'ի տնօրէնութիւն վերին տեսչութիւն՝ մեր-

ժեցաւ քուն յարքայէ զայն գիշեր. ուստի մերձ յարշալոյսն առ սթափութիւն անձին՝ ասաց արքայ ցդպրապետ իւր բերել նմա զգիր յիշատակաց և վերծանել առաջի իւր. և իբրև եհաս յայն տեղի, ուր գրեալ կայր բարութիւն՝ զոր արար մուրեքէ՝ յայտնելով զմիաբանութիւն երկուց ներքինեաց 'ի սպանութիւն արքայի, եհարց արքայ, թէ զինչ շնորհս կամ փառս 'ի վարձ այնչափ հաւատարմութեանն՝ հատուցաք նմա. ասեն սպասաւորքն, չարաբեր և ոչինչ նմա. որ և առանց ինչ վարձուց նստի զօր ամենայն 'ի դուռն արքունեաց։ Ի՞նչ խօսէր զայս արքայն ընդ ծառայս իւր, եկն համան առնուլ հրաման յարքայէ կախեալ զմուրեքէ զփայտէն՝ զոր պատրաստեալն էր։ Հարց արքայ, թէ կայցէ՞ ոք արտաքոյ 'ի գաւթի անդ, զի կամէր խորհուրդ առնուլ վասն վարձահատոյց լինելոյ մուրեքէի. ասեն սպասաւորքն, ահաւասիկ համանն եկեալ կայ անդ. ասէ արքայ, կոչեսցի՛ 'ի ներքս։ Իբրև եմուտ համանն, եհարց ցնա արքայ և ասէ. զինչ արարից առնն՝ զոր ես կամիմ փառաւորել։ Այս հարցումն ելից ցնծութիւն զսիրտ ամբարտաւանին, ոչինչ երկուացեալ թէ ինքն իցէ այրն, զոր արքայ կամի փառաւորել. ասելով 'ի միտս իւր, զնվ կամի արքայ փառաւորել, եթէ ոչ զիս։ Ա՛ն այնորիկ եդ առաջի արքայի զայն, որում ցանկայր փառամոլութիւն նորա։ Ասէ. այրն՝ զոր կամի արքայ փառաւորել, զարդարեսցի արքունի պատմուճանաւ. և դիցի 'ի գլուխ նորա թագ արքայական. (այսպէս ունին լատինն, ասորին, և քաղդէացին համաձայն եբրայականին)։ և հեծուսցի յերիվարն արքայի ամենայն զարդուք, որպէս մինչ հեծանէր արքայ. ապա մի ոմն 'ի փառաւոր իշխանաց անտի արքայի կալեալ զերասանակ երիվարին՝ երթիցէ առաջի նորա, և քարոզն կարդասցէ ընդ հրապարակս քաղաքիս և ասասցէ, այսպէս եղիցի ամենայն առնն, զոր արքայ փառաւորէ։ Ասէ արքայ. բարի է բանդ. արդ՝ դու ինքնին առցես վաղվաղակի զպատմուճանն և զերիվարն արքունի. և հեծուս-

ցեւ 'ի նա զմուրթքէ զայր հրէայ զենամակալ տան իմում. և զգոյշ լեր զի մի վրիպեսցի բան մի 'ի բանից քոց, զոր խօսեցարդ առաջի իմ։

Այս յանկարծահաս շանթ հասեալ 'ի վերայ համանայ, աղաչեաց զչրթունս նորա խնդրել զմահ մուրթքէի. և փոխանակ առաջին ցնծութեան ելից զնա դառն տրտմութիւն ընդ այն նախատինս անձին՝ ծառայել իբրև ասպատանեակ այնմ, զոր կամէր կախել զփայտ։ Սակայն հարկ եղև նմա առնել զամենայն. շրջեցոյց զմուրթքէ ընդ հրապարակս և ընդ փողոցս քաղաքին փառաւք 'ի կերպարանս թագաւորի. և դարձոյց զնա անդրէն յապարանսն արքունի։ Իսկ ինքն գլխակորեալ և լի ամօթով գնաց 'ի տուն իւր, և պատմեաց որ զինչ անցք անցին ընդ նա։ Յայնժամ կին նորա և սիրելիք իւր շուարեալ՝ ոչ ևս ետուն նմա քաջալերս ըստ առաջնոյն, այլ ընդ հակառակն զգուշացուցին զնա, յայտնի գուշակելով զկործանումն նորա 'ի ձեռն մուրթքէի. եթէ յազգէ հրէից է ասեն մուրթքէ և եղև իշխան, հնազանդեա նմա։ Մինչդեռ նոքա զայն խօսէին, եկին երկու ներքինիք կոչել զՀաման 'ի կոչումն տիկնոջն. գնաց նա, բայց սրբատաբեկ. գուցէ և խիթայր՝ թէ սիրտ արքայի սկրսեալ է ցրտանալ 'ի վերայ իւր, յաղագս խորհրդոյն՝ զոր ետ յայնմ առաւօտու թէ զինչ պարտ է առնել առն, զոր արքայն կամի փառաւորել. յորում յիմարեալ 'ի փառասիրուէ՝ առաւել զանձնէ խորհեցաւ, քան թէ զինչ պատշաճ իցէ և վայել ասել առաջի թագաւորի։ Ասէն՝ դնել զթագ իւր 'ի գլուխս այլում, և զիւրն թագաւորական կերպարան զգեցուցանել միւսմ 'ի հպատակաց իւրոց՝ թէպէտ 'ի սուղ ժամու, է լեզու, որ անհնար էր թէ չխայթիցէ զականջս թագաւորի։ Արտաշէս քաջ ծանեաւ՝ թէ խորհրդատուն վասն անձին խորհէր. և այնչափ յօժարուէն տեսանելով 'ի նմա ունիլ 'ի գլուխս իւր զթագն զայն, իրաւամբ կարէր կասկածիլ, թէ Համան ոչ շատանայր լինել սիրելի թագաւորին, և երկրորդ զկնի նորա, այլ խնդրէր

լինել թագաւոր. և զայն ահիթ առնոյր առ 'ի ընդ-
գեղայուցանել զայս ժողովրդեան տեսանել զնա
և փառաւորել 'ի կերպարանս թագաւորի։

Լ՚Թէ խուն ինչ խորհեմուԹի գոյր 'ի համան,
տապաքէն բացէ 'ի բաց հեռացուցանէր 'ի շրԹանց
իւրոց զայդպիսի վտանգաւոր առաջարկուԹի յիրս
այսչափ կասկածելիս. բայց ուր տիրէ փառամոլու-
Թիւն, չքանայ անդ ամենայն խորհեմուԹի։ Լ՚այս
բան՝ Թէ այսպէս խորհեալ ելեալ արտաշէս՝ չիք 'ի
գիրն. այլ քաղեմք զայս (ասէ կաղինոս) յընԹացից
պատմուԹենն։ Լ՚ախ՝ զի տեսանեմք զստիպողական
եղանակն արտաշիսի, որ առանց տալոյ տեղի խու-
սափելոյ, հրամայեաց համանայ ծառայել անձամբ
յերասանակ երիվարին մուրԹքելի. և Թէպէտ ոչ
եդ 'ի գլուխ նորա զԹագ արքայի, բայց զայլ ամե-
նայն փառաւորուԹիս արար նմա անձամբ 'ի նուա-
ճումն ամբարտաւանուԹեան իւրոյ։ Լ՚ուկրորդ՝ տեսա-
նեմք, զի զկնի դիներբուացն եցոյց արտաշէս, Թէ
կալաւ կասկած՝ ունել համանայ 'ի սրտի իւրում
դարձուցանելոյ զԹագաւորուԹիւն պարսից առ ամս
ղեկացիս. քանզի ոչ ոք ամբաստան եղև զհամանայ
Թէ այդպիսի ինչ խորհիցի նա. և սակայն յերկ-
րորդ հրովարտակի անդ որ գրեցաւ յեսԹերայ և
'ի մուրԹքելէ 'ի դիմաց արքայի, ասէ վասն համա-
նայ. * մեքենայել ջանացաւ՝ յիշխանուԹիւն աստի
զմեզ 'ի բաց մերժել։ և փոքր մի զկնի ասէ.
* խորհեցաւ առնուլ զիշխանուԹիւն պարսից ... և
'ի մահեդունացիս՝ (այսինքն յամաղեկացիս) անդրէն
դարձուցանել։ Լ՚հա այսպէս ոճ, որ 'ի պաշտպա-
նուԹի իւրոց ծառայից ոչ միշտ կամի առնել աքան-
չելիս, այլ տնօրինել քաջորուԹիւն զատորին պատ-
ճառս, շարժեաց զսիրտ արտաշիսի 'ի բարին վասն
մուրԹքելի, և 'ի կորուստ համանայ՝ այնպիսի գոր-
ծոյնք, զոր մեք պատահական դիպուածս կոչեմք.
բայց են ոճային ամենեմնատ նախակարգուԹիք։

Լ՚ուգ՝ եմուտ թագաւորն և համան ընդ նմա
'ի գինեբուս տիկնոջն, և իբրև ջերմեցաւ արքայ
'ի գինւոյ, եհարց դարձեալ ցեսԹեր, Թէ զինչ

է խնդրուածք նորա կամ աղաչանք. և ստիպէր զնա՝ զի ասասցէ, խոստանալով որպէս և յառաջագոյն խոստացեալ էր, թէ զինչ և խնդրեսցէ՝ տայ նմա մինչև ցկէս թագաւորութեան իւրոյ։ Այնժամ Եսթեր երեայ զսիրտ իւր, և յերեսս երևեցուցեալ զցաւն զոր կրէր 'ի յոգւոջ, յոգւոց Եհան 'ի խորոց սրտի և ասէ. «Ոչ ցանկամ թագաւորութեան, և ոչ գանձուց ճոխութեան. եթէ գտի շնորհս առաջի քո արքայ, այս է զոր խնդրեմ 'ի քէն, շնորհեսցի ինձ կենաց իմ. և եթէ տայցէ ինձ հրաման արքայ և ես տարածել զխնդիրս իմ, աղաչեմ գթալ յայզգն, որոյ դուստր եմ. քանզի ես և ամենայն ժողովուրդ իմ վաճառեցաք 'ի սպանումն և 'ի կորուստ. երանի թէ 'ի ծառայութիւն, և յաղախնութիւն, և 'ի յափշտակութիւն, զի տանելի լինէր չարն. և ես հառաչելով լռէի. (այսպէս ընթեռնու լատինն համեմատ եբրայականին). այլ եմք դատակնքեալ 'ի մահ առ կատաղութեան առն միոյ. որոյ չարութիւնն հասանէ և առ թագաւորն. արդ՝ ոչ է արժան առն բանսարկուի 'ի տան թագաւորի լինել։

Այլ և ամենևին անկարծելի բան հնչեցաւ յականջս արտաշիսի. և ոչ կարելով 'ի միտ առնուլ զիրսն, ասէ. «Ո՞վ է, կամ ուր է որ իշխեաց ցայդ վայր ձգել զյանդգնութի իւր։ Այսպէս տիկինն. «Ահա այրս այս թշնամի իմ և քո, համանն՝ որ չարս է՝ սա արար։ Այս բան՝ արտաշէս, որ արդէն սկըսեալ էր կասկածիլ 'ի վերայ համանայ, հայեցաւ 'ի նա տիգօք աչաց, յորոց թուէր կայծակունս արձակել. և առանց ասելոյ ինչ՝ լի սրտմտութիւն յարեաւ 'ի ճաշոյ անտի և եմուտ 'ի ծաղկոցն արքունի։ Իսկ համան ընդ այն անակնկալ արկած յերկիւղ մահու ըմբռնեալ, յարեաւ և ինքն 'ի սեղանոյ անտի. և իբր նուաղեալ անկաւ՝ առաջի, կամ (ըստ այլ թարգմանութեան) 'ի վերայ գահոյից ուր նստէր տիկինն, աղաչել զնա վասն փրկութեան անձին։ Արտաշէս որ 'ի գինւոյ և 'ի հրացեալ բարկութենէ խառնեալ երևէր իբր ցնորեալ, 'ի նմին ժամու դարձաւ 'ի ծաղկոցէն, և տեսեալ

զնա առ ոտս տիկնոջն տարածեալ, 'ի վերայ կաս-
կածանաց թագաւորուն՝ յաւել և զկասկած զնմա-
նէ առ տիկինն իւր. և լի բարկութիւն գոչեաց և
ասէ. արդ՝ յայդ ամի հասեր, զի կամիս զկին իմ
բռնադատել 'ի տան իմում։ Զ.ռ այն բան՝ աչքա-
բերելն համան զամսթի հարեալ, անկաւ 'ի վերայ
երեսաց իւրոց. (ուր երբայեցին, և լատինն, և ասո-
րին ընթերցուն, ծածկեցին զերեսս համանայ.)
և բուգաթան մի 'ի ներքինեաց անտի տիկնոջն՝ յա-
ռաջ մատուցեալ ասէ ցարքայ, ահա համան փայտ
մի կազմեաց մուրթքէի, և կանգնեաց զնա 'ի տան
իւրում յիսուն կանգնեան. ասէ արքայ. խաչեսցի 'ի
վերայ նորա։ Զ.ս նոյնժամայն կալեալ զնա սպասաւո-
րաց՝ տարան 'ի տուն իւր, և կախեցին զփայտն զոր
պատրաստեալն էր վասն մուրթքէի։ Զ.ս անդէն 'ի
նմին աւուր յարքունիս գրաւեցին զամենայն զգանձն
համանայ, զոր արքայ պարգևեաց եսթերայ. որ և
պատմեաց արքայի եթէ ազգականն իւր է մուրթ-
քէ սոյն հաւատարիմ. և կոչեցեալ զնա արքայի
առաջի իւր արար զնա դպրապետ թագաւորութե-
իւրոյ. և ետ նմա զմատանին, զոր էհան 'ի համա-
նայ։ Լսէ եսթեր 'ի նա յանձն արար զտնտեսութի-
տան իւրոյ, կացուցեալ զնա հազարապետ ոչ միայն
'ի վերայ ընչից համանայ, այլ և 'ի վերայ ամենայն
տան իւրոյ և ընչից զոր ունէր։

Ա.նայր այնուհետև դարման մատուցանել և
իրաց ժողովրդեան ազգի իւրոյ. որ դժուարին յոյժ
երևէր. քանզի սպանութիւն հրովարտակք էին հրա-
տարակեալ ընդ ամենայն գաւառս թագաւորուն.
և թագաւորն սրտի մտօք անձնատուր եղև յայն
գործ մեծ։ Զ.յլ ՝ուծ ՝որ սրտից՝ դարձոյց և այս
անգամ զսիրտ թագաւորին։ Զ.նկաւ եսթեր վերըս-
տին առաջի ոտից նորա. և համբուրեալ խոնար-
հութիւն զծագ ոսկի գաւազանին, զոր ձգեաց ար-
քայ, յարեաւ և եմուտ 'ի սենեակ արքայի. և խօ-
սեցաւ վասն ժողովրդեան ազգին իւրոյ, աղաչե-
լով զնա՝ նոր հրովարտակօք դարձուցանել զհրո-
վարտակսն զգրեալս 'ի չար բանսարկուէն համա-

նայ։ Արտաշէս միշտ նոյն 'ի հնորհել զամենայն առանց խորհելոյ, ասէ. ցեսմեր. գրեցէ՛ք զու և մուրթաքէ հրամանաւ բանի իմոյ՝ որպէս կամք իցեն ձեզ. և կնքեսջիք մատանեաւս իմով։ Կոչեցան վաղվաղակի բազմութի գրագ, և գրեցան հրովարտակք 'ի գաւառս գաւառս նախարարաց և իշխանաց, և ամենայն հրեից որ էին 'ի համբրէն թագաւորութենն արտաշիսի, որպէս հրաման եւ մուրթաքէ գրել։

Ան հրովարտակին էր այսպիսի։ Աղուամք բազում անգամ զեղծան բարերար քաղցրութիւն թագաւորաց՝ յառաւելն ձկտելով, և 'ի մեծամեծս ձեռնարկելով, քան որչափ ինչ տուեալ էր նոցա։ Այլ 'ի նոցանէ եղև համառ, որ գոլով պատուեալ յարքայէ՝ մինչև յերկրորդ աթոռ նորա վերառեալ, ոչ հանդարտեաց յիւրում պատուի, այլ մեքենայեալ քանացաւ՝ յիշխանութէ անտի 'ի բաց մերժել զբարերարն իւր զթագաւորն, և զերախտաւորն թագաւորին զմուրթաքէ և զեսթեր տիկնաց տիկինն ամենայն ազգաւ իւրեանց հանդերձ՝ սուտ մեսս 'ի վերայ եդեալ՝ խնդրեաց 'ի կորուստ։ Զա կրեաց զարժանահաս պատուհասն կախեալ զփայտէ. արդ դարձցի՛ 'ի բաց մերժեսցի հրամանն այն որ 'ի չարութենէ նորա գրեցաւ ընդդէմ հրէից։ (Զոտ յաւելու լատինն։ Զայս երկրորդ հրամանս հակառակ առաջնոյն՝ մի համարեսցի գալ 'ի թեթևութէ մտաց, այլ է ըստ հանգամանաց և ըստ հարկաւորութեան ժամանակաց, ըստ որում հասարակաց օգուտն ստիպէ խորհիլ և սահմանել։) Հրեայք անմեղ են, ոչինչ գործ չարութեան տեսանի 'ի նոսա. օրէնք նոցա արդար են, որդիք են նոքա բարձրելոյն մեծի կենդանւոյն։ յորոյ 'ի բարերար խնամն վայելէ թագաւորն. և նախնիք իւր 'ի նորայն բարեսէր առատուն ուղղեցին զթագաւորութիս։ Զարդ՝ թոյլ լիցի հրէից խաղաղութիւն վարել զիւրեանց օրէնսն. և նախարարք և իշխանք գաւառաց ձեռնտու լիցին նոցա և օգնական՝ սատակել յերկոտասանեքորդ և յերեքտասանեքորդ աւուր ամենեանն ազարայ զթշնամիս իւր.

եանց. զի զայս իսկ ամենազօրն ՝ած փոխանակ սա տակելոյ ընտրեալ ազգին՝ արար նոցա ուրախութի։ Լ՚ն այն օրնշանաւոր՝ կարգեսցի ՝ի տօնս տարեկանաց ամենայն հրէից, և արասցեն ՝ինմա ուրախութիս. և որք ոչ առնիցեն ըստ հրամանաց մերոց՝ սրով և հրով մաշեսցին։

Գրձակեցան ընդ ամենայն տեղիս արագ աթ ուիչ սուրհանդակք կատարել զհրաման արքայի. հրատարակեցաւ հրովարտակն և ՝ի սիսիս քաղաքի անդ։ Իսկ հրէայք արքունի հրովարտակաւն այնուիկ կարգեալք իբրև սպասաւորք մնհու թշնամեաց հալածչաց իւրեանց, յայնմ սահմանեալ աւուր կոտորեցին լոկ ՝ի սիսիս քաղաքի արս իբրև հինգ հարիւր։ Լ՚ն ՝ի ինդրոյ եսթերայ էտ հրաման արքայ, զի և առ վաղիւ շարունակեսցի կոտորածն. և այնպէս տասն որդիք համանայ մերձ ՝ի դրունս սիսիս քաղաքի կախեցան զփայտէ. և այլ ևս երեք հարիւր ՝ի թշնամեաց անտի հրէից կոտորեցան. իսկ ՝ի համբրէն թագաւորութեն, յայնմ աւուր այսինքն յերեքտասանն ադարայ՝ ընդ ամենայն կոտորեցան հնգետասան հազար ոգիք. այսպէս ունի յոյն. թէպէտ կոմնդոտեան օրինակն դնէ տասն հազար և երեսուն և հինգ. մերս դնէ հինգ հազար. իսկ եբրայեցին, ընդ որում և լատինն, և ասորին ունին եօթանասուն և հինգ հազար։ Լ՚հա ՝ի պատճառս ամբարտաւանութե միոյ առն այսչափ մարդիկ կորեան, այսպէս կարգելով՝ այ ՝ի փրկուի և ՝ի մխիթարութի ժողովրդեան իւրոյ, և ՝ի պատիժ թշնամեաց նոցա. որով տեսիլ երազոյն մուրթքէի անվրիպ եղ ՝ի գլուխ։ Վոքրիկ աղբիւրն՝ որ եղև գետ մեծ, էր եսթեր՝ որ եղև տիկին թագաւորի. երկու վիշապք էին մուրթքէ և համան, որք էլին ՝ի կռիւ ընդ միմեանս։ Ա՚ուրթն և խաւար, և ասպա լոյս և արև՝ էին երկու վիճակք հրէից, առաջինն՝ տառապանաց և նեղութեն, երկրորդն՝ ուրախութե և ցնծութե. զի կարդացին առ ՝ած, և կեցին. և այնպէս որք խոնարհք էին՝ բարձրացան, և կերան զփառաւորսն։

ԳԼ. ԺԷ.

ՈՂ էր արքաշէս այր Եսթերայ. և յորոհամ ծամանակէ թագաւորէաց։

Ի վերայ այսորիկ բազում էն կարծիք. մինչ զբէթէ չմնայ ոք 'ի հին դարս 'ի թագաւորաց պարսից, որում մատենագիր ոք ոչ ընծայիցէ զեսթեր 'ի կնուն. այլ մեք յառաջ քերեմք ասասանօր միայն զկարծիս Կեսարոսի կաղենոսի։ Այդ՝ ասէ նա, թէ Եսթեր եղև կին ասուերոսի կամ արտաշիսի արքայի պարսից և մարաց, որ եղև հայր մեր դարեհի յաջորդի բաղտասարայ 'ի բաբելոն։ Համանակն նշանակեալ 'ի ՅԲ գիրս, և կեանք Եսթերայ և մուրթքէի ստիպէ զմեզ ասել, թէ այս անցք անցին 'ի ժամանակի գերութեն։ Պատարագ գերութեն եղև յառաջնում ամի կիւրոսի. յետ այնորիկ հրեայք օրք մնացին 'ի բաբելոն և 'ի մարս և 'ի պարսս, ինքնակամ կացին անդ, գոլով ազատ՝ երբ և իցէ դառնալ յերկիրն իսրայելի։ Այսպա չունիմք պատճառ խնդրելոյ զայրն Եսթերայ ոչ 'ի կիւրոս. և ոչ 'ի յաջորդս կիւրոսի՝ առ որովք որդիքն իսրայելի էին յազատութեն։

Այսթեր տիկնայ տիկնին յաղօթս իւր առ Ամ՝ ասէ, թէ թշնամիք ոչ շատացեալ ունիլ զինքեանս այսինքն զհրեայս 'ի ծառայուի իւրեանց, կամին և կորուսանել զնոսա. * Այս այսու ոչ շատացան 'ի ծառայելս մերում նոցա. այլ եղին զձեռս 'ի վերայ կռոց իւրեանց, բառնալ զայն, զոր սահմանեալ էր բերանդ քո ‖. Եսթ. ԺԳ. 8։ Այսպա Եսթեր էր ամենայնացեալ յառաջքան զարձակել կիւրոսի զորդիս իսրայելի 'ի գերութէ. զի ասէն * ոչ շատացան 'ի ծառայելս մերում նոցա ‖, տայ իմանալ զժամանակ գերութեան։ Պատասխանեն ոմանք, թէ ազատութին զոր ետ կիւրոս, բարձաւ 'ի ձեռն

կամ թիւսայ, և յաջորդի նորա։ Այլ խօսին առանց բնաւ ինչ հիման։ Օ՛ի թէպէտև յաւուրս թագաւորացս արգելաւ յառաջատուութիւն շինուիլն տաճարին, այլ ոչ գտանեմք ոչ 'ի նոր գիրս, և ոչ 'ի գիրս արտաքինս՝ թէ երկու այս թագաւորք դադարեցեալ լիցեն անդրէն 'ի ծառայուի զժողովուրդն հրէից։

Իսկ վասն մուրթքէի հաւատի է, թէ նա եղև մի յայնցանէ, որք վարեցան 'ի գերութիւն ընդ յեքոնիայ արքայի յուդայ. զի այսպէս ընթեռնումք 'ի գիրս եսթերայ. 'ի գլ. ՃԾ. 3. * Յետսիլ ետես մուրթքէոս որդի յայիրայ, որդւոյ սամեայ, որդւոյ կիսեայ յազգէ բենիամինի՝ այր հրէայ. և էր բնակեալ 'ի սիսիս քաղաքի . . . որ էր 'ի գերութիւն անտի, զոր գերեաց նաբուքոդոնոսոր արքայ բաբելացւոց յերուսաղէմ յեքոնիաւ հանդերձ արքայիւն հրէաստանի ॥։ Այս յերկրորդ գլուխս նորին գրոց, ուր կրկնի այս բան, ընթեռնումք վասն մուրթքէի և զայս. * Այս էր նորա մանուկ սնուցեալ զդուստր ամինադաբայ եղբօր հօրն իւրոյ, և անուն նորա էր եսթեր ॥։ Այս եղանակ խօսից ըստ ձևին և ըստ բնական տեսութիւն ցուցանի, թէ մուրթքէ յերթալ իւրում 'ի գերութիւն՝ ոչ էր մանուկ մատաղ որ սնուցեալ էր զեսթեր։ Այլ եդեալ ևս՝ թէ նա լեալ լիցէ յայնժամ մանուկ 'ի խանձարուրս, 'ի կատարած գերութիւնն լինէր եսթանասուն ամաց. ապա ևս առաւել ծեր լեալ գերութիւնն. սակայն ոչ երբէք կոչի ծերացեալ։

Աղիանոս որ զեսթեր համարի լինել կին էր կայսրաձևն արտաշիսի, 'ի հաշիւս իւր 'ի գերութիւն՝ որ ըստ նորա հաշուի եղև յամի աշխարհի 3436. մինչև ցայս ամուսնութիւն՝ որ ըստ հաշուի նորա եղև յամի աշխարհի 3592. տայ անցանել հարիւր յիսուն և վեց ամաց. և զի մուրթքէ յետ ամուսնութիւն եսթերայ եկեաց այլևս գէթ ամն երկոտասան. ապա զհետ գայ թէ եկեաց նա ամն հարիւր վաթսուն և վեց, և աւելի ևս։ Հաւասարի է թէ կեանք մարդկան այնց ժամանակաց ոչ

էր առաւել քան զմերս։ Տեսանեմք զի ոմանք
գիրն յիշատակէ երբ կարի խիստ սակաւագիւտ ընդ-
այն ժամանակս զկենաս հարիւր և երեսուն ամաց՝
յորս եկեաց յովիաղա. և հարիւր հինգ ամս յուղ-
թայ. և հարիւր և երկու ամս տուլիթայ ծեռ-
ոյն. և հարիւր ամս տուբիայ որդւոյ նորա։ Տես-
անեմք զի ծերացեալ կոչէ զեսթանամիանս։
Պատ հարկ է բերել ապացոյց մեծ առ 'ի հաստա-
տել թէ մուրթքէ անցեալ իցէ զհարիւր և վաթ-
սուն և վեց ամենիւք. առ որ զկնի արքահամու
ոչ հասին և ոչ իսկ նահապետք, որք մօտ էին նմա
ժամանակաւ։ Կաղիանոս տայ լուծումն թէթև
զժուարութեաց ինչ ընդդէմ դրութեան իւրոյ. այլ
երևի թէ չէղև մտադիր այսոցիկ. զի ոչ միայն ոչ
լուծանէ, այլ և ոչ իսկ առարկէ ընդդէմ իւր։

Պետաւիոս ասէ, զի 'ի կամին հասանել առ
երկայնատեւն արտաշէս՝ մուրթքէ տարապայման
ծերանայր. ուստի առ խուսելոյ 'ի զժուարութեան
աստի, ասէ՝ թէ ոչ մուրթքէ, այլ կիս հայր հա-
ւու նորա գնաց 'ի գերութեան ընդ յեքոնիայ։ Բայց
որ մտադիր ընթեռնու զգիրս եսթերայ, գլ. Է.
և ԺԱ. զտանէ թէ նոյն է՝ որ գնաց յոյնժամ 'ի
գերութեան, ընդ այնր՝ որ ասէս զտեսիլ երազոյն,
և մնոյց զեսթեր. "Տեսիլ ասես մուրթքէ ... որ
էր գերի եկեալ յերուսաղէմ. և էր նորա մա-
նուկ մնուցեալ"։ Բրդ՝ 'ի նմին պարբերութեան զյա-
ռաջարբերականն որ տալ կիսեայ, և զգերանունդ նորա
տալ մուրթքէի, է զլեսոլին խառնակել զսոլոբա-
կան ոՀ ոմանք զրոյն։ Յայտնի է և այն զի յաղ-
զաբանութեան անդ մուրթքէի յիշատակ լինի կի-
սեայ, ոչ որպէս թէ նա գնաց 'ի գերուն, այլ զի կիս
էր հայր սաւուղայ արքայի, ազգաբանութիւն յա-
ռաջ խաղայ 'ի զատանել զերևելին և զնշանաւորն
'ի նախնիս մուրթքէի։ Պատ որոյ ոչ նա ինքն
պետաւիոս, ոչ սաղիանոս և՝ ոչ այլք նոցին համա-
խոհք ունին պատճառս մերժելոյ զնախագրեալ
կարծիս, թէ ամուսնութիւն եսթերայ եղեալ իցէ
'ի ժամանակի զերութեան. որոյհետև ոչ խախտէն

զՀիմն յոր հաստատեալ կայ. և ընդդիմանէց նոցա կարի դիւրին է տալ պատասխանի։ Զ.յն զի և պետաբիսս 'ի խօսիլ իւրում յաղագս գերութեան յեքսանիայ, ասէ. * Զ.յս եղև երկրորդ տարագրութի՝ յորում վարեցան եղեկիել, և մուրթքէ, և յովսեդեկ մեծ քահանայ ||. և ահա այն իսկ է՝ զոր մեքս պնդեմք։

'Ի կենաց մուրթքէի իմանամք, թէ 'ի ժամանակս երկայնաձեռն արտաշիսի չէր հնար եսթերայ լինել աղջիկ մանկահասակ, զի ընդ աղջկունս կոյսս կարգեսցի։ Պ.ժուարին է գտանել եղբօր դուստր եսթանասուն ամաց կրտսեր քան զՀօրեղբայրս իւր. և այսպէս աղջիկն ընտրեալ 'ի տիկնութիւն թագաւորի, և սիրեցեալն քան զամենայն աղջկունս՝ լինէր իբրև ուրթանաւոն պառաւ, մանաւանդ թէ առաւել յոյժ, եթէ մուրթքէ ոչ էր մանուկ խանձարրապատ յորժամ գերի վարեցաւ. և երևի թէ ոչ էր, զի 'ի՞նչ խօսի զնմանէ իբրև զտանուտեառնէ։ Զ.ւ ծերագոյն ևս լինէր եսթեր, եթէ ոչ էր նա դուստր եղբօր՝ այլ եղբօր հօրն մուրթքէի, որպէս ունի յոյնն։

Զաղհանոս առ 'ի չտալ պառաւեալ կին արտաշիսի, ասէ թէ հաւանելի երևի թէ եսթեր իցէ ծնեալ 'ի սիսիս քաղաքի. և ոչ մտածէ թէ հայեցեալ 'ի ծնօղս նորա որք մեռեալ էին՝ ուր և ծնեալ իցէ եսթեր, հարկ էր նմա լինել բազմամեան։ Զ.յլ քան գրոյն ըստ Ճառին և ըստ բնաւկան տեսութեան իմացեալ ցուցանէ թէ եսթեր յառաջ քան զգերութիւն ծնաւ. զի յորժամ հանդերձեալ էր մտանել յարքունիս, մուրթքէ պատուիրեաց նմա մեծապէս՝ չյայտնել ոչ զազգն և ոչ զՀայրենի գաւառն. և պահեաց եսթեր զպատուէր նորա մինչև ցայժամ յորում հարկ եղև յայտնել 'ի փրկութի ժողովրդեան իւրոյ։ Զ.սկ վասն՝ չյայտնելոյն այս էր. զի կասկածէր թէ գուցէ խափան լինիցի յառաջադիմութեան եսթերայ. որպէս ասացաք յիւրում տեղւոջ. իսկ եթէ 'ի պարսս և 'ի սիսիս քաղաքի էր ծնեալ, չերևի և ոչ մի ինչ

վտանգ 'ի յայտնելոյ զգաւառ և զքաղաք ծննդեան իւրոյ։ Լ.պա չէր պարտ յայտնել զգաւառ իւր, զի այնու խկոյն երևէր լինել եբրայեցի։ Լ.ւ այսպէս զկնի գերութեն, լինէր ամաց եսթանասնից և աւելի՝ ուսոի և ոչ մատաղահասակ, զի կարգեսցի ընդ կոյս աղջկունս, ուր խորհրդականք արտաշիսի ասացին. * Լինդրեսցեն արքայի աղջկունս կոյսս գեղեցիկս տեսանելով ||. Եսթ. Բ. 2։

Լ.դեալ զայսոսիկ պատճառս, որք ինձ ասէ կաղինոս՝ երևին զօրաւորք, ասեմ թէ եսթեր ամուսնացաւ միւմ 'ի թագաւորաց անտի, որք թագաւորեցին 'ի վերայ պարսից և մարաց 'ի ժամանակի գերութեն. և սոքա են երկու. արտաշէս և դարեհ որդի արտաշիսի։ Այ գիրն ասէ թէ եղև նա կին արտաշիսի. ապա եղև կին հօր դարեհի, որ յաջորդեաց զաթոռ թագաւորութեն բաբելոնի զկնի բաղտասարայ. որպէս ունիմք յիններորդ գլուխն մարգարէութեց դանիելի։ Լ.պա եսթեր եղև կին այնմ արտաշիսի՝ որ էր հայր դարեհի յաջորդի բաղտասարայ 'ի բաբելոն։ Լ.այց այսու ոչ հաստատեմք թէ իցէ նա որդի եսթերայ։ Լ.րտաշէս սկսաւ թագաւորել ոչ բազմօք յետոյ զկնի սկզբնաւորութեց նաբուքոդոնոսորայ. ապա ամուսնութի նորա ընդ եսթերայ եղև փոքր ինչ յետոյ զկնի սկզբնաւորութեց գերութեն։

Լ.ռ այս ընդդէմ դնեն ոմանք, նոսա՝ թէ այն ամուսնութի եղև մինչդեռ կանգուն կայր տաճարն յերուսաղէմ. ապա ոչ եղև 'ի ժամանակի գերութեան։

Պատասխանի. Այ է հաստատի թէ տաճարն կայր կանգուն։ Լ.ովանդակ հիմն այսր կարծեաց է այն բան զոր ասէ եսթեր յաղօթս իւր. * Լ.դին զձեռս 'ի վերայ կռոց իւրեանց . . . եղծանել զժառանգութիս քո . . . և շինուցանել զփառս տան քո. և զսեղանոյ սքի քոյ ||։ 'Ի հրովարտակն արտաշիսի և համանայ չիք յիշատակ ինչ զտաճարէն երուսաղէմի և զսեղանոյ նոն. այլ միայն զկռտորածէ հրէից։ Այ է բռնական մեկնութի՝ ասել,

թէ անդ փառք տանն Ներ և սեղանոյ նորա կոչին սիրտք և հոգիք հրէից արդարոց և Ճշմարիտ ՅԾԱ-պաշտից, զորս պօղոս տաՃար ՅՈՅ կոչէ։ Լ.ու և սա փառք տանն Ներ և սեղանոյ նորա կործանելոյ ոչ էր բովանդակաբար շինել՝ մինչև ոչ և սա կանգնիլ. վասն զի ՅԾ 'ի ձեռն մարգարէից իւրոց խոստացեալ էր, թէ վերստին շինեսցի։ Վասն որոյ փառք Ներ թէպէտ նուազեալ էր, այլ ոչ բարձեալ. իսկ եթէ 'ի գլուխս ելանէր չար խորհուրդ համանայ կոտորել զամենայն ժողովուրդն հրէից, երևի թէ ոչ և սա լինէր շինութէն տաՃարի։ Բարձեալ՝ ոչ է նոր ինչ և անսովոր՝ կոչել ՅԾաշունչ գրոցն տուն Ներ զերևելի ժողովրդանոց ինչ և զսեղանն որ 'ի նմա ոչ 'ի պէտս զոհից, այլ 'ի սակս աղօթից և այլոց բարեպաշտութեց 'ի ժամանակին մինչ աւերակ էր տաՃարն։ * Ընթերցջիք (ասէ բարուք) զՅուղեթ զայդ, զոր առաքեցաք առ ձեզ՝ դնել 'ի տունդ Ներ յաւուրս տօնի. և յաւուրս ժամանակի։ Բարուք. ՅԱ. 14։ Լ.սյ թուղթ զկնի կործանելոյ տաՃարին առաքեցաւ 'ի գերութէն բաբելոնի առ հրէայս որ էին յերուսաղէմ. ապա յայտ է թէ տուն Ներ ասելով՝ իմանայ զտեղի ինչ ժողովելոց հրէից 'ի պաշտօն ՅՈՅ։ ՅՈՒՂ զի ջերմեռանդն հոգի 'ի խօսիլ ընդ ՅՈՅ՝ ոչ կշռէ զբառսն թուաբանական Ճշտութիւն. այլ ըստ առաւելութեն եռանդեանն ընդարձակի 'ի բանսն։

Լ.դկրորդ՝ ընդդէմ դնեն, թէ ասուերոս այր եսթերայ թագուհի՝ անդամ՝ կոչի և արտաշէս. իսկ ամենայն արտաշէսք զկնի գերութէն եղեն։

Լ.յ ուրանայ զայդ կաղինոս. և յիրաւի, վասն զի ասուերոս կոչեցաւ և արտաշէս, մանաւանդ 'ի մեզ 'ի բովանդակ գիրս եսթերայ միշտ արտաշէս կոչի։ Լ.սուերոս այր եսթերայ թագաւորեաց 'ի ժամանակի գերութէն. ապա 'ի ժամանակի գերութէն թագաւորեաց արտաշէս ոմն։ Իսկ թէ արտաքին պատմագիրք ոչ խօսին զնմանէ անուամբ արտաշէսի, չէ ինչ փոյթ. զի և ոչ զդարեհէ և զայլոց հարիւրաւորաց խօսին անուամբք զոր գտա-

նեմք 'ի ՝ծբ գիրս։ Ա՛սեն ոմանք. Ա՛րտաշէս այրն Եսթերայ էր պարսիկ, և ոչ մար. իսկ արտաշէս հայր դարեհի էր մար, և ոչ պարսիկ։ Իրաւացի է առարկութիւն. բայց յոչինչ գրէ կաղենոս՝ ասելով. ընտրեաց արտաշէս զշուշան կամ զսիսիս քաղաք դնել զանոռ իւր անդ փոխանակ եկեբատանայ. և զի ընտրեաց նստիլ յաւէտ 'ի գեղեցիկ քաղաքի պարսից, քան թէ յաւերակ քաղաք անդր մարաց, միթէ կորցոյս ասէ նովաւ զլինել իւր մար։ Ա՛յլ լաւ ևս 'ի վերայ բերէ. Ա՛տեան խորհրդականաց նորա էր կաղմեալ 'ի պարսից և 'ի մարաց. զօրք նորա պարսիկք և մարք. օրէնք նորա միշտ բերին 'ի վկայութիւն յանուն պարսից և մարաց։ Ա՛պա զի՞նրդ մարթ է ասել թէ ոչ էր մար, կամ գէթ չկարէր անխտիր լինել պարսիկ կամ մար։

Լրբոբոդ՝ ընդդէմ դնեն։ Ա՛րտաշէս 'ի զայրանալ իւրում ընդդէմ համանայ, եցոյց կասկած թէ նա մեքենայէր զթագաւորութիւն մարաց և պարսից դարձուցանել 'ի մակեդոնացիս։ Իսկ 'ի ժամանակի գերութեան՝ մակեդոնացիք չէին յայնպիսում վիճակի, զի կարիցեն այնպիսի կասկածտալ։ Ա՛պա այս արտաշէս 'ի կարի անագան ժամանակս եղև։

Պատասխանի. Զթէ կամիցիմք սպասել, զի մակեդոնացիք այնչափ զօրասցին՝ զի կարիցեն տալ կասկած պարսից, ունիմք սպասել ամն հարիւր և առաւել, որչափ ամք անցին 'ի մէջ կիւրոսի և փիլիպպոսի հօր մեծին աղէքսանդրի. և այսպէս երթալով զմատաղահասակ կոյս աղջիկ եսթեր հասուցանեմք 'ի հասակ հարիւր եսթանասուն ամաց, յառաջ քան զՀարսանանալ իւր արտաշէսի։ Բայց որպէս իմանամք՝ ՝ծբ գիրն առնէ աստ այնպէս, որպէս սովոր է առնել յայլ բազում տեղիս. կա՛ էլ զգաւառս ոչ որպէս կոչէին 'ի ժամանակին, յորժամ իրքն գործեցան, այլ որպէս կոչէին 'ի ժամանակի գրողին։ Ի գիրս ծննդոց լերինք ուր հանգեաւ տապանն նոյի, կոչին լերինք արարատայ կամ հայոց. ոչ զի ընդ ժամանակս ջրհեղեղին

այնպէս կոչէին, այլ զի այնպէս կոչէին, յորժամ մնվանս գրեաց զպատմութիւն զայն։ Ի գիրս երկրորդ մակաբայեցւոց. գլ. ա. 12. երկիրն քաղաքեցւոց կոչի ըստ օրինակաց ինչ պարսք, զի 'ի ժամանակս գրողին կամ թարգմանչին այնպէս կոչէին։ Ի մատեանս երրորդ և զյաջորդ զլուխս գրոց եսթերայ ունիմք ըստ օրինակին՝ որպէս յեղան 'ի յոյն բարբառ, * յամին չորրորդի թագաւորութեան պտղոմեայ և կղեոպատրայ ॥։ Զայնմ ժամանակի ամաղեկացիք, և այլ մերձաւոր ժողովուրդք անուամբ մակեդոնացւոց կոչէին. և թարգմանիչն որ զայն հատուած պատմութեան դարձոյց 'ի յոյն լեզու, եդ 'ի բերան արտաշիսի զանունդ մակեդովնացի՝ փոխանակ անուանս ամաղեկացի, ասելով. * Ի՛ մի որպէս համանն ամադովթեանց մակեդովնացի ॥. Եսթ. ԺԲ. 10։ Ի՛թէ համան էր ձիավար, կամ՝ այլ այսպիսի ստորին ծառայ, մարթ է թէ աղգ և հայրենիք այնպիսի առնուաստի լեալ իցէ անծանօթ արքայի։ Ի՛սայց գողով նա իշխան 'ի թագաւորական զարմէ, և այնչափ ներքին սիրելի արքայի աշիսի, չերևի կարելի չէ իսեալ արքայի զազգ նորա թէ ամաղեկացի է. ապա եթէ գիտէր ասէն՝ ընդէր իբրև զմակեդոնացւոյ խօսի զնմանէ. վասն զի յոյն թարգմանն զանունդ ամաղեկացի դարձոյց յայն անուն, յոր ընդ այն ժամանակս կոչէին ամաղեկացիք։ Ի՛նչպէս փոխանակ գրելոյ՝ * Ի՛չխանութիս պարսից յամաղեկացիս անդրէն դարձուցանել ॥, գրեաց * 'ի մակեդոնացիս ॥։ Ի՛սայսպիսի օրինակս՝ բաց յերկուց աստի նշանակելոցս, այլ և ս բազումս դտանեն յաճախագիրս սրբազան մեկնիչք։ Ի՛ նա ինքն պետաւիոս հաւանի՝ թէ այսպէս պարտ է մեկնել զայս բան գրոյն։

Չորրորդ՝ ընդդէմ դնեն։ Ի՛թէ այսպէս կանխեցուսցուք զամուսնութիւն եսթերայ, հարկանիմք ընդ այլ ինն ժայռ, առնել զմուրթքէ կարի ինն ծեր, մինչ առ կիւրոսիւ դառնայ յերուսաղէմ. և չիք տարակոյս թէ դարձաւ. զի յանուանէ յիշատակի 'ի գիրս Է. Եզր. Է. 2։

Պատասխանի. Լինթե մուրթքէ յիշատակէաղն յեզրէ էր մուրթքէն եսթերայ, շատ էր ասէլ թէ յերթալ նորա 'ի գերութի՝ էր ամաց քսան և հնգից. ուստի և 'ի դառնալն յերուսաղէմ՝ լինէր ինն ամաց. որ է հասակ՝ զորով անցանէն և ոմանք այժմ 'ի մերումն ժամանակի. և ոչ գտանեմք թէ յետ այնորիկ յերուսաղէմ յերկար կեցեալ իցէ. զի յիշատակի ընդ այնոսիկ որք գնացին անդ, այլ յետոյ ոչ ևս գոյ յիշատակ ինչ զնմանէ։ Սակայն չէ հաւանելի թէ յիշատակէաղն յեզրէ իցէ մուրթքէն եսթերայ։ Մի՞ զիրն ոչ ասէ թէ նա է. իսկ որք ասեն թէ նա է, ոչ ցուցանեն. և այլուստ չունիմք բնաւ նշան ինչ ասէլ թէ նա իցէ։ Լա՛ դժուարին յոյժ երևի թէ եզր յանուանէ յիշատակելով զայր այսչափ նշանաւոր և այսչափ բարերար ժողովրդեան իւրոյ՝ այնպէս մերկ և հարևանցի անուանեալ էր զնա, առանց ասելոյ թէ էր հօրեղբայր եսթերայ և բարերար ժողովրդեան. շատ համարելով խաւն ընդ այլոց լոկ զանուն նորա նշանակել։

Հինգերորդ՝ ընդդէմ դնեն։ Լոյրն եսթերայ ունէր զծանօթութիւն ոյ ճշմարտի. որ յայտ անտի է, զի ասէ. * Լու են նոքա (հրեայք) որդիք բարձրելոյն մեծի կենդանւոյն ոյ, որ ուղղէ զմեր և զաղգիս մերոյ թագաւորութիւնս յիւրմէ բարեսէր առատութի՝ ॥. եսթ. գ. 16։ Իսկ վասն արտաշէսի հօր մոր դարձի չունիմք ուստեք թէ ճանաչէր նա զճշմարիտն ոյծ։

Պատասխանի. Լոպաքէն նախատինս դնէր ջերմեռանդն ոյծպաշտութի՝ ոչ տիկնաց տիկնոջ եսթերայ, որ համարէր թէ նա չիցէ բնաւ հաղորդեալ առն իւրում ծանօթութի՝ ինչ զոյ ճշմարտի։ Իսկ եթէ կամք իցեն ումեք խնդրել այր եսթերայ զթագաւոր ոք, որ յառաջ քան զամուսնանալ ընդ նմա՝ իցէ ճշմարիտ հաւատացեալ, ոչ երբեք գտցէ այր վասն նորա, եթէ ոչ՝ զկնի քարոզութի՝ աւետարանին։

Վեցերորդ՝ ընդդէմ դնեն։ Լոյս արտաշէս լի-

նէր կիաքսար. բայց ոչ յարմարի նմա ժամանակն զոր քսենոփոն տայ կիաքսարայ։

Պատասխանի. Ի բանէ այսի մարթ է ի միտ առնուլ, թէ որչափ ինչ հաւատ արժան իցէ ընծայել քսենոփոնտեայ, և երոդոտոսի։ Դրկոքին յառաջ քան զկիւրոս դնեն զկիաքսար և զաստիագէս, որ և ԱԺդահակ. բայց երոդոտոս զկիաքսար առնէ հայր աստիագեայ. իսկ քսենոփոն ընդհակառակն՝ զաստիագէս դնէ հայր կիաքսարայ։ Ուստի առ անհամաձայնութեան սոցա՝ որք առաւել հուպ են այնց ժամանակաց, չէ մարթ և զայն իսկ գիտել թէ որ է հայր, և որ որդի։ Սակայն որպէս ի բանս երոդոտոսի կան նշմարանք ինչ, որք մարթին ընծայիլ արտաշէսի՝ յանուն կիաքսարայ, նոյնպէս և ի բանս քսենոփոնտի ընդ անուամբ կիաքսարայ է տեսանել զնշան ինն մերումն արտաշէսի. քանզի ասէ, թէ ի խորհելն ոմանց, զորպիսի ընծայս տացեն կիաքսարայ, առաջարկեցաւ և սահմանեցաւ տալ նմա ի պարգև աղջկունս՝ գեղեցիկս տեսանելով։ Ամենայն զիարդ և իցէ, ոչ երոդոտոս, ոչ քսենոփոն, և ոչ այլ ոք արտաքին մատենագիր՝ ասէ կաղինոս տայէ ինձ փոխել զկարծիս, յորժամ իցէ հաստատեալ ի ՝ՐԵ գիրս։ Դ.Ե ո՞ կարէ ժխտել զայդ, բայց սակայն և Եւսեբիոս համաձայն ՝ՐԵ գրոց համարի ասել, թէ այլ ոք արտաշէս իցէ այր Եսթերայ, ոչ դարեհ մար, և ոչ արտաշէս երկայնաձեռն։

ԳԻՐՔ ԵՐԵՔՍՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԳՐՈՑՆ
ԴԱՆԻԷԼԻ

ԳԼ. Ա.

Դանիէլ մարգարէ։ Նաբուքոդոնոսոր արքայ Բաբէլոնի. և Շուշան։

Պատերազմ զպատմութիւն հրեից, որք 'ի բաժանման գերւոյն և աւարին 'ի մէջ երկուց միաբանեալ թագաւորաց՝ վիճակեցան արտաշէսի, և վարեցան 'ի մարս և 'ի պարսս, արդ՝ դառնամք փոքր մի յետս ըստ ժամանակին առ հրեայս՝ որք էին մնացեալ 'ի բաբելոն ընդ ձեռամբ Նաբուքոդոնոսորայ։ Արեծն և նշանաւոր անձն՝ որ աստ մեզ ընդ առաջ ելանէ, է մարգարէն Դանիէլ. որ ընդ յովակիմայ արքայի յուդայ և ընդ այլոց բազմաց մեծամեծաց յուդայ՝ վարեցաւ 'ի Նաբուքոդոնոսորայ գերի 'ի բաբելոն։ Յովակիմ արքայ փութով դարձուցաւ անդրէն 'ի թագաւորութիւն իւր. այլ Դանիէլ մնուկ 'ի թագաւորական զարմէ՝ մնաց ընդ իւրոց ընկերաց անանիայի և ազարիայի և միսայելի անդ 'ի պատանդ առ Նաբուքոդոնոսորայ։ Ուստի դանիէլ ութ ամաւք յառաջ քան զգերութիւն յեքոնիայ գնաց 'ի բաբելոն։ Հաւասարակաց կարծիք վարդապետաց համարին զնա լինել յայսժամ տասն կամ երկոտասան ամաց,

հիմնեալ 'ի բան գրոյն՝ որ մանուկ տղայ կոչէ զնա. գլ. ԺԳ. 45։ Այլ ոմանք հայեցեալ 'ի հրամանն Թագաւորին ընտրել՝ մանկունս խելամուտս ամենայն իմաստուն, և հմուտս գիտուն և մտավարժս հանճարով ||, ասեն՝ Թէ այս պայմանք ստիպեն դնել զնա յայնժամ գէԹ հնգետասան ամաց. զի առ այն ամենայն զոր խնդրէ արքայ 'ի մանկունս, չերևի բաւական տասնամեան հասակն։ Այլ այս ոչ է ընդդէմ այնմ, զի կոչի մանուկ տղայ. զի և հնգետասնամեան պատանեակն ըստ ոճոյ գրոյն կոչի մանուկ փոքրիկ մանուկ տղայ։

Դանիէլ էր մանուկ գեղեցիկ տեսլեամբ, և ամենայն մասամբք մարմնոյ բարեմոյն և բարեկազմ, չունելով բնաւ արատ ինչ նսեմացուցիչ վայելչութեան գեղոյ գիտակի նորա։ Այլ կամէր Թագաւորն, զի այսպիսիք ընտրեսցին 'ի զաւակաց մեծամեծաց, և մնուսցին յարքունիս՝ արքունի ռոճկաք, և դաստիարակեսցին 'ի դպրութիս և 'ի լեզու քաղդէացւոց զամն երիս, և ապա կացցեն 'ի սպասաւորութի առաջի Թագաւորին։ Այլ ուստ դանիէլ զլեզուս և զգիտութիս քաղդէացւոց, զուսումնականութի, այն է մաԹեմաԹիքա, զաստեղաբաշխութիւն, և զբնական մեդուԹի կամ գուշակութի. զի այսոքիկ էին յարգոյ գիտութիք առ քաղդէացիս։ Իբրև կատարեցան երեք ամք ուսման դանիէլի, ետ Թագաւորն ածել զնա ընդ այլ մանկունս առաջի իւր. և իբրև ինքնին անձամբ քննեաց զնոսա, ոչ ոք գտաւ յամենայն ուսմունս նման դանիէլի և ընկերաց նորա։ Այլ 'ի բնական գիտութեց՝ զոր իւրով ջանիւք և բնաւորութիւն ստացաւ դանիէլ, ետ նոքա ոճ և զերբնական իմն հանճար ընտրուեալոց. գիտել որոշել զերազայոյզ ցնորս մարդկային երևակայութի՝ 'ի հրեշտակական կամ յոճային յայտնութեց. այլև յատուկ լոյս իմն մտաց առ խմնալ 'ի նոսա զգաղտնի խորհուրդս՝ մարդկօրէն բնապես անիմանալիս։

Ոչ էր ինչ ծանր դանիէլի կալ անդ հպատակ սովորութեց և օրինաց դպրոցին քաղդէացւոց. զի մասն

ինչ երջանկութիւն է ուսումնասէր և ուշիմ պատա-
նեկաց՝ որք արտաքոյ իւրեանց հայրենեաց գտա-
նին, յաջողութիւնն ուսանելոյ զգիտութիւնս
արտաքինս։ Այլ 'ի սկզբանն վիշտ մեծ այն էր
նմա անդ, որ այլոց անմանեաց նորա բարեբաղ-
դութիւն մեծ համարեալ էր. այս է՝ 'ի սեղանոյ ար-
քային ուտել, և 'ի գինւոյ նորա ըմպել։ Զան-
զի դանիէլ պժգայր և սոսկայր 'ի սեղանոյ թա-
գաւորին պատրաստելոյ մսովք 'ի զոհից անտի
կռոց, և 'ի հեղձուցելոց արեամբ, զոր արդելեալ
էր ՅԾ որդւոց իսրայէլի։ Այլ ոչ իբրև եդ 'ի մտի իւ-
բում չՃաշակել բնաւ 'ի սեղանոյ թագաւորին, և
ոչ 'ի գինւոյ նորա ըմպել։ Յայսմ համակամ
գտան նմա երեք ազնուական արիասիրտ ընկերք
նորա՝ անանիա, ազարիա, և միսայէլ. որոց ազ-
փանէս ներքինապետն եդ անուանս՝ առաջնոյն
սեդրաք, երկրորդին՝ միսաք, իսկ երրորդին աբեդ-
նագով. որպէս և զդանիէլ անուանեաց բաղտաս-
սար։ Այսն այսր բանի աղաչէցին սոքա չորեքին
ներքինապետն զվերակացու դպրոցին, որ էր այր
խոհեմ և քաղցրաբարոյ, և չէր ինչ նմա անհա-
ճոյ պաշտել նոցա զՃշմարիտ ՅԾ իւրեանց՝ պահե-
լով զօրէնս նորա. և ՅԾ իսկ եհեղ 'ի սիրտ նորա՝
առանձին ինն գութ և սէր 'ի վերայ դանիէլի,
առ 'ի չարտմեցուցանել զնա։ Ասէ՝ և յոժարուն
անասայր նմա, այլ երկիւղ թագաւորին կապէր
զնա, թէ գուցէ 'ի տեսանել նորա զնոսա այլա-
գունեալ և հիւծեալ և տկարացեալ քան զայլ
մանկունս հասակակիցս իւրեանց, ինքն գլխապարտ
լիցի առաջի թագաւորին։

Զայս ասաց դանիէլ ցամենդասադ, զոր կացու-
ցեալ էր ներքինապետն 'ի վերայ չորեցունց երբայ-
եցւոց, փորձել զնոսա, աւուրս տասն տալով նո-
ցա ունգս 'ի կերակուր, և լոկ ջուր յըմպել։
Զուաւ ամենդասադ բանից նոցա, և փորձեաց զնո-
սա աւուրս տասն, և եղեալ՝ զի այն ժուժկալու-
թիւն, որ կազգուրէր զՀոգիս նոցա, ոչ միայն ընդ-
հարացոյց և չտկարացոյց զմարմինս նոցա, այլ և

առաւել զօրացոյց. և զտեսիլ երեսաց և ևս զուարթացոյց և պայծառացոյց. և էին կայտառք և գեղեցիկք քան զայլ ամենայն մինկուսնն՝ որ առ տէրն զսեղան թագաւորին։ Եթէ այնր փոքրոյ արարին փոխանակութիւն. չորեքին մանկունքն թագուհին վերակացուի իւրեանց զամենայն որ ինչ գայր նոցա 'ի սեղանոյ արքայի. և նա պատրաստէր նոցա սեղան ընդոմանք և ջրով։ Այսոքիկ ոչ ժուժկալութիւն մեաւ չորեցունց նոցա զամն երիս, գտան քաջուսուցեալ քան զամենայն իմաստուն քաղդէացւոց. և զգաստք և խոհականք 'ի գործս, հանճարեղք 'ի գնացս. և 'ի վերայ ամենայնի նոքք և երկիւղածք 'ի Տէրն, և անարատք 'ի վարս. որ յարգոյ և պատկառելի առնէր զնոսա ոչ միայն յաղգի անդ իւրեանց, այլև առաջի քաղդէացւոց։ Փութով ընդ առաջ եղև դանիէլի և պատահումն ինչ, որով հռչակեցաւ անուն նորա ընդ ամենայն երկիրն բաբելացւոց։

Եւ անդ տիկին մի երբայեցի երկիւղած 'ի Տէրն՝ անմեղ և անարատ՝ կոչեցեալ Շուշան. ըստ անուանն սպիտակափառ անբաժ յամենայն արատոյ սեւութիւն՝ յաղնուական տանէ գուստր քեղկեայ. և կին յովակիմայ առն մեծատան և բարեպաշտի, մեաւել և գաստիարակեալ 'ի ծնողաց իւրոց յերկիւղ Տէրն ըստ օրինացն Մովսէսի. և տեսլեամբ գեղեցիկ յոյժ։ Եւ ինչ յայնժամ և երկու ծերք 'ի ժողովրդենէ անտի երբայեցւոց դատաւորք տարբոյն այնմիկ. վասն զի 'ի շնորհելոյ նաբուքոդոնոսորայ՝ վարէին նոքա 'ի գերութիւն անդ իբրև առանձին հասարակապետութիւն. ունէին դատաւորս յազգէ իւրեանց, այլև իշխանութիւն մահու՝ ոչ սրով, այլ լոկ քարկոծմամբ. որպէս և 'ի ժամանակս քրիստոնէութեան։ Եւ դարձ՝ սոքա երկու դատաւորք յաձախէին 'ի տունն յովակիմայ. զի նա էր փառաւորագոյն քան զամենեսեան. վասն որոյ առ նա ժողովէին հրէայքն, և անդ գային ամենեքեան 'ի դատաստան առ երկու ծերսն։ Եւ լինէր իբրև ժողովուրդն մեկներ 'ի տանէ անտի յովակիմայ զՀասա

լակ աւուրք, մնանէք շուշան և զգնայր 'ի բու-
բաստանի անդ առն իւրոյ, որ կից էր իւրոց ապա-
բանից։ Յետանէին երկու ծերքն գնա հանապազ,
զի մնանէք և զգնայր 'ի պարտիզն, և ցանկացան
նմա։ Զերանէին և տապէին երկոքին 'ի սիրտս
իւրեանց, այլ ամաչէին պատմել միմեանց զցաւս
իւրեանց. մինչև յետոյ ուրեմն ոչ ևս կարելով
ժոյժ ունել՝ յայտնեցին իրեարց, և ժամադիր
եղեն յիւրեանս՝ հասանել 'ի վերայ նորա յորժամ
միայն գտցի 'ի բուրաստանի անդ։

Եղև՝ յաւուր միում մտեալ շուշանայ ըստ սո-
վորութեան 'ի բուրաստան անդր երկու միայն աղջ-
կամբք, ցանկացաւ լուանալ 'ի բուրաստանի անդ,
քանզի տօթ էր. առաքեաց զաղջկունս բերել նմա
իւղ և օճառ, պատուիրելով փակել զդրունս բու-
բաստանին։ Յայնժամ երկու ծերքն, որք յառա-
ջագոյն մտեալ նստէին անդ թաքուցեալ 'ի մէջ
ծառոց և սպասէին նմա, իբրև տեսին զի արձա-
կեաց զաղջկունս, դիմեցին 'ի վերայ նորա. և
բռնագատէին զնա հաւանիլ 'ի կամն անօրէնութեանն
իւրեանց. ապա թէ ոչ՝ սպառնային նմա սուտ
զրպարտութեան յոգել 'ի վերայ նորա առաջի ժողո-
վրդեան, որպէս թէ այլում պատանւոյ գտեալ
եցեն զնա։ Իսկ սրբասէր տիկինն յայն երկսայրի
վտանգ անկեալ, յո՛ր կողմն և հայէր՝ զմահ տեսա-
նէր առաջի աչաց կամ՝ զհոգւոյ, կամ՝ զմարմնոյն.
սակայն յանձն առ լինել զրպարտեալ և վտանգուն
առաջի մարդկան, քան մեղապարտ առաջի ոյ.
ընտրեաց մեռանել անարատ՝ քան կեալ արատա-
ւոր։ Ապա որոյ աղաղակեաց 'ի ձայն մեծ. աղա-
ղակեցին ընդ նմա և երկու անօրէն ծերքն իբր 'ի
կշտամբանն աղտեղի գործոյ ինչ շուշանայ. և մին
ընթացաւ, և երաց զմեծ դուռն բուրաստանին.
իսկ ընտանիք տանն շուշանայ՝ լուեալ զձայն ձչոյն,
դիմեցին ընդ ծածուկ դուռն 'ի բուրաստան անդր՝
տեսանել, թէ զի՞նչ իրք ընդ նմա անցեալ իցեն.
իբրև լուան 'ի պիղծ ծերոց անտի զաղեղ զրպար-
տութեի զարիկնոջէն, որ միշտ իբրև ջինջ և անա-

բատ հայելի համեստութեան էր պատուական յամենեցունց, զամենի հարան յոյժ. այլ յայնմ աւուր չարաբերն ծերքն այլ ինչ։

Ի վաղիւ անդր իբրև ժողովեցաւ ժողովուրդ բազում՝ ի տունն յովակիմայ, եկին և երկու ծերքն անօրէն մեռք զշուշան ասպանանել զնա։ Հրամայեցին ածել զշուշան անդ յատեան դատաստանի, և եդեալ զձեռս ՝ի վերայ գլխոյ նորա՝ վկայեցին իբրև ականատես վկայք այնր ծանր յանցանաց. իսկ շուշան անօգնական ՝ի մարդկանէ, լայր և հայէր յերկինս՝ անտի խնդրելով օգնութիւն, զի սիրտ նորա էր յուսացեալ ՝ի նոր։ Այլն և իբրքն ընդ նմա, և ամենեքեան որք գիտէին զպարկեշտ և զառաքինի կեանս նորա. սոքա ոչ կարէին հաւատալ, այլ ո՛չ ունէին յերևան ածել զստութեն երկուց մեծամեծ անկասկածաւոր վկայից։ Մինչ զի և ատեանն հաւատաց նոցա իբրև ծերոց և դատաւորաց, և ՝ի մահ դատակնքեցին զանմեղն։ Յայնժամ ՝ի ձայն մեծ աղաղակեաց շուշան առ ՝ն՝ հայցելով յայտնի առնել զանմեղութի իւր. և լուաւ ՝ն՝ ձայնի հաւատարիմ աղախնոյ իւրոյ։ Վասնզի մինչ բազմութիւն ժողովրդեան տանէին զնա կորուսանել, ահա մանուկն դանիել զգեցեալ զոգի ՝ն՝, եւ ընդ առաջ բազմութեն, և աղաղակեալ ՝ի ձայն բարձր՝ եդ վկայուն զանձնէ անպարտ լինել յարենէ սնտի. և յաւել կշտամբել խստիւ զանմիտ զանխորհուրդ դատաստան նոցա, զի առանց հասու քննութեն դատապարտեցին զդուստր իսրայելի։ Դարձ դառնալ անդրէն, և նորոգ քննել զդատն. զի սուտ է ասէ վկայութիւն, զոր վկայեցին նոքա.

Հիացան ամենեքին ընդ այնչափ համարձակութի մանկան միոյ տղայոյ. այլ ՝ն՝ բանի նորա դարձան վաղվաղակի յետս. և հրաւիրեցին զնա նստիլ ՝ի միջի իւրեանց դատաւոր, և քննել զիրսն. զի քեզ ասեն ետ ՝ն՝ զերիցութի։ Յ՝ն՝ առ դանիել լինել դատաւոր. հրամայեաց մեկնել զնոսա ՝ի միմեանց. և կոչեալ մի մի զնոսա զառաջեաւ իւրով,

Եհարց եթէ ընդ որովք ծառով տեսին զնոսա յայն մեղս, մին ասաց ընդ հերձեաւն. իսկ միւսն ընդ սղոցեաւն։ Եւ այսպէս անտման միմանց վկայելով 'ի բերանոյ իւրեանց յանդիմանեցան սուտ վկայք։ Յայնժամ աղաղակեաց ամենայն ժողովուրդն 'ի ձայն մեծ, և օրհնեցին զՅաւ. և ինքեանք ձեռամբ իւրեանց քարկոծեալ սպանին զերկու ծերսն զսուտ վկայս, առնելով նոցա ըստ օրինացն մովսիսի զայն՝ զոր և եղին չարութեան 'ի մտի առնել ընկերին։ Եւ հա այսպէս պաշտպանեաց Ած իւրումն հաւատարիմ աղախնոյ, ապրեցուցեալ սքանչելապէս զարիւն արդար, և զզրպարտութիւնն փոխեալ 'ի պանծագոյն փառս սրբասէր համբաւութեան նորա։

Զինչ հասակի էր դանիել՝ յորժամ զայս դատաստան արար՝ չէ յայտ. զի որ գիրն զայս և եթէ ասէ. "Օ արթոյց Ած զՀոգին սրբ 'ի վերայ մանկան միոյ տղայոյ". յորմէ իմանամք, թէ չէր նա յայնժամ յայն հասակ, յոր մարթ իցէ կոչել զնա պատանի կամ պատանեակ։ Զսան որոյ ոչինչ ընդդիմութիւն երևի ասել զայս դիպուած յառաջ քան զգերուէն յեքոնիայի եղեալ։ Զանզի էին իսկ 'ի բաբելոն բազմութիւնք հրեից մնացեալք 'ի գերութէ անտի ովսիայ արքայի իսրայէլի, յորժամ վերջ եղև թագաւորութեան սամարիայ։ Իսկ յովակիմ այր շուշանայ, և քեղկիա հայր նորա թերևս էին 'ի մեծամեծաց անտի, որք ընդ յովակիմայ արքայի յուդայ վարեցան 'ի բաբելոն. և յորժամ յովակիմ արքայ արձակեցաւ 'ի գերութէ՝ նոքա մնացին անդ։ Եւ յամ փոքր ինչ նպաստեն, և այն, զոր ասէ դանիել 'ի կշտամբել իւրում զծերսն. "Եւ այդպէս առնէիք զդստերս իսրայէլի, և նոքա առ երկիւղի մերձենային առ ձեզ. այլ և ոչ դուստրդ յուդայ կալաք յանձին զանօրէնութիս ձեր". դան. ԺԳ. 57։ Զոր երևի ցուցանել՝ թէ յառաջ քան զայն էին նոքա սովորեալ վարել միայն ընդ իսրայէլացիս. յորմէ մարթ է մակաբերել թէ գերութէն յուդայ չէր եղեալ։

Ոչ մարթ պատմել, թէ յոր բարձրութիւն ամ, բարձաւ անուն դանիէլի սովին դատաստանաւ. և այն անուն՝ զոր յայնժամ ստացաւ՝ միշտ պահեցաւ, և օր քան զօր և ևս բարձրացաւ և փառաւորեցաւ մինչև ցմահն աստիագիսի արքայի, (որ ըստ կաղենոսի՝ է նա ինքն մար դարեհ) և մինչև ցԹագաւորութիւնն կիւրոսի. այսինքն ընդ բոլոր դակ ժամանակ կենաց նորա. ըստ այնմ, * Լու Թագաւորն աստիագէս յաւելաւ առ հարս իւր. և առ կիւրոս պարսիկ զԹագաւորութիւն նորա ॥. դան. ծբ. 65. 'ի դէպ շարակցի այս ընդ նախընԹաց տան, * Լու դանիէլ եղև մեծ ... յօրէ յայնմանէ և անդր ॥. այսինքն և անդր՝ մինչև աստիագէս յաւելաւ առ հարս իւր ॥ : Լ.յսու տայ մեզ ՝ոք գիրն 'ի միտ առնուլ զմեծագոյն գովեստ դանիէլի, որում պարտ է մեզ լինել նախանձաւոր. զի առաքինութիւն նորա եղև ՝ոչ իբր փայլատակումն վաղանցուկ, այլ իբր լոյս միտատև :

ԳԼ. Բ.

Դանիէլ մեծն զերազն նաբուքոդոնոսորայ :

Նաբուքոդոնոսոր արքայ ետես երազ խորհրդաւոր, և 'ի քուն անդր զարհուրեցաւ յոյժ. այլ զարԹուցեալ 'ի քնոյ՝ ԹէպԷտ յիշէր Թէ երազեաց ինչ, բայց զերազն իսպառ մոռացաւ : Սակայն նա զարհուրեալ զՀետ պնդեալ էր գիտել զերազն և զմեկնութիւն նորա : Եթէ գիրն ասէ Թէ զայն երազ ետես յամին երկրորդի Թագաւորութեան իւրոյ : Հաւաստի է Թէ ոչ եղև յամին երկրորդի Թագաւորելոյ նորա 'ի բաբելոն, գոլով բազմաց յառաջ Թագաւոր : Լայլ Թէ ուստի՞ սկսանի դանիէլ զայս Թուական, չէ յայտ. բաղումք ասեն սկսանել յս

մէ անսի, յորում չէտ վճարելոյ զամենայն պատերազմունս իւր, եղև միահեծան Թագաւոր համարէն ինքնակալութեան՝ զոր ցայն ժամանակ ընդարձակեաց։ Լաւ զի չունիմք ոչ 'ի հոգ գրոց, և ոչ յարտաքին պատմութեանց, թէ երբ եղև այն, վասն այնորիկ այր իւրաքանչիւր ըստ կամի սահմանել զժամանակ առանց ինչ հիման, կամ նշանի երևելոյ 'ի հոգ գիրս։ Վասկայն հիմնեալ 'ի վերայ թեթև ինչ յարմարութեան, կարեմք ասել (ասել կաղինոս) թէ այն երազքն եղև երկրորդ՝ ոչ չէտ լրութեան պատերազմանց, և տիրապետելոյ ամենայն նորոգաստացեալ գաւառաց, այլ չէտ մնացեան սեղեկիայ արքայի յուգայ։ Զի որովհետև գրոցն էր երբայեցի 'ի ցեղէն յուդայ, բնական իմն երևի թուել զամն թագաւորելոյ Նաբուքոդոնոսորայ 'ի վերայ Ժողովրդեան յուդայ զկնի մնացեալ սեղեկիայ։ Իբր ասել։ Յամին երկրորդի թագաւորութեան Նաբուքոդոնոսորայ 'ի վերայ մերոյ ազգայեանց։

Ի մանաւոր անտեսութեան նոցն եղև մոռանալ արքայի զերազ իւր։ զի գոլով 'ի վերայ ապագայ ծանոյ և հեռաւոր իրաց, կարէր էր առ այն նշան իմն՝ մանաւանդ թէ սքանչելիք, որպէս զի հաւատ ընծայեսցի մեկնութեանն։ Ի մենայն գէաք, և մոգք, և կախարդք և քաղդէայք երազահանք կոչեցեալք առ արքայ՝ միաբան վկայեցին առաջի նորա, թէ անհնարին է մեկնել զերազն, եթէ ոչ պատմեսցէ զայն արքայ։ իսկ թագաւորն զիւրն ամենայն, թէ բանն վերացեալ է 'ի մտաց նորա։ Նոյնպէս և նոքա զիւրեանց ցուցանէին, ոչ գոյ մարդ ասեն 'ի վերայ երկրի՝ որ զբան թագաւորին կարող իցէ ցուցանել։ Նաբուքոդոնոսոր արթուն էր և հանձնարեալ յոյժ, վասն որոյ իւրով բնական խոհականութեամբ եհաս գիտել՝ թէ այնչափ դժուարին է ստուգութեամբ իմանալ զմիտս խորհրդաւոր երազոյ, որչափ դժուարին է գուշակել զնոյն իսկ զերազն։ վասն որոյ որ չունի զոյս մարգարէական՝ գուշակելոյ զերազն, անգիտանայ և զմեկնութիւն նորա։ Գիտեմ ասել թագաւորն՝ զի բան սուտ և զեղ-

ծուցանելի միաբանեալ էք ասել առաջի իմ, մինչև ժամանակն անցցէ. ասացէք ինձ զերազն իմ, և գիտացից եթէ և զմեկնութիւն նորա պատմելոց էք ինձ։ Իսկ նոքա մասամբ իմն խոստովան լինելով զանկարութիւն իւրեանց, բայց միանգամայն և իմաստուն ձևանալով յայնմ արուեստի, մեղմով իմն անխոհեմ ցուցին զարքայ՝ որ զայն հարցուն առնէր նոցա. ասեն.* Զ մենայն թագաւոր մեծ և իշխան՝ բան զայդպիսի ոչ հարցանէ ցգէտ, և ցմոգ, և ցքաղդեայ. զի բան զոր արքայ հարցանէ՝ ծանր է. և այլ ոք չիք որ պատմիցէ զայդ առաջի արքայի, բայց եթէ դիքն, որոց ոչ է բնակութի 'ի մէջ ամենայն մեղեցաց ||. գան. Բ. 10։

Յայնժամ 'ի սրտմտութի բարկութեանէ բորբոքեալ արքայի՝ հրաման ետ 'ի սայր սուսերի կոտորել զամենայն իմաստունս քաղդէացւոց իբրև խաբեբայս և ստախօսս։ ||Կսաւ կոտորածն, խնդրէին և զդանիել և զընկերս նորա. զի թէպէտ նոքա չէին անուանեալք կամ յիշատակեալք յարքայէ, բայց էին 'ի կարգս իմաստնոց։ Յայնժամ խօսեցաւ դանիել ընդ արիովքայ ոստիկանի զօրաց կարգելոց 'ի գործադրուի վճռոյ արքայի. և իմացեալ 'ի նմանէ զպատճառն՝ յոյր սակս ետ արքայ զայն հրաման, ասաց ցնա՝ աղաչել զարքայն, զի տացէ նմա փոքր ինչ ժամ, և ինքն զմեկնութի երազոյն պատմեսցէ թագաւորին։ ||Է էր այն խնդիր լուծանելի ուսմամբք 'ի գրոց, այլ անմիջապէս յերկնից. վասն որոյ հարկ էր զմեկնութի նորա խնդրել յայ աղօթիւք։

Զ՚ու արդարև աղօթք դանիելի լծորդեալ ընդ աղօթից երից որ ընկերաց նորա, ընկալաւ զլայն կարևոր. զի 'ի գիշերին յայնմիկ յայտնեցաւ նմա երազն և խորհուրդ նորա. և օրհնեաց դանիել զՏէր՝ գոհացեալ զնմանէ, զի կատարեաց զխնդրուածս իւր. և ընդ առաւօտն ասաց ցարիովք՝ չկոտորել զիմաստունս բաբելացւոց, այլ տանել զինքն առաջի թագաւորին, զի ես ասէ պատմեցից նմա զմեկնութին։ Յայնժամ արիովք փութապէս տա-

բաւ զդանիէլ յարքունիս, և պատմեաց արքայի, եթէ գտի այր մի յորդւոց գերութեան հրէաստանի, որ զմեկնութիւն պատմեսցէ արքայի։ Եւ ասաց արքայ մեծանալ զնա առաջի իւր. բայց իբր անհնարին ինն թուէր նմա, թէ զերազն զոր ինքն եղեալ և մոռացաւ, կարիցէ այլ ոք այնպէս ճշգրիտ նկաւ բազբել զայն, որպէս էր ձեւացեալ յերևակայութեան իւրում։ Վասն որոյ ասէ ցդանիէլ. արդարև կարծիցես դու թէ կարող իցես պատմել ինձ զերազն զոր տեսի, և զմեկնութիւն նորա։ Եւ պատասխանի դանիէլ, և ասէ. չեմ ես բաւական, և ոչ իսկ հաւմօրէն իմաստութիւն, և գէտք, և մոգք, և քաղդեայք զկորհուրդդ զայդ՝ զոր հարցանէ արքայ, պատմել առաջի քո։ Եւ գոյ ՆԱ յերկինս որ տեսանէ զամենայն. զներկայն, զանցեալն, և զապագայ. և նա յայտնեաց ինձ զերազն քո, և զնորին խորհուրդ։ Դու արքայ կայիր խորհելով յանկողնի քում զազգմանդէմ փոփոխութիւն թագաւորութեաց, և զարդի բարեվիճակ յաջողութիւն թագաւորութեան քո. և ահա էանց յառաջ խորհուրդքո և զհանդերձելոյն, թէ յետ այսորիկ զինչ լինելոց է և յինչ վիճակ փոխելոց է քո թագաւորութիւն. և այսպիսի մտածութիւն 'ի քուն մտեր։ Եւ ծայանիչն խորհրդոց, որ գիտէ և տեսանէ զամենայն ժամանակս և զժամն՝ եցոյց քեզ զկարդ թագաւորութեց, որ հանդերձեալ է լինել յապագ ժամանակս։

Դու արքայ տեսանէիր առաջի քո պատկեր մի մեծ և ահաւոր յոյժ. երեսք նորա և տեսիլ նորա ահընկէց. գլուխն 'ի մաքուր ոսկւոյ. ձեռքն և լանջքն և բազուկք իւր՝ արծաթիք. մէջք նորա և բարձք պղնձիք. և սրունքն երկաթիք. և ոտքն կէս յերկաթոյ, և կէս 'ի խեցւոյ։ Եւ մինչ սա սանմանմբ հայէիր յայն յահեղատեսիլ արձան, տեսեր զի հատաւ 'ի լեռնէ վէմ առանց ձեռին մարդոյ, և թաւալեալ եհար զարձանն յերկաթեղէն և 'ի խեցեղէն ոտն, և խորտակեաց զնա. ապա պղինձն, և արծաթ, և ոսկին մանրեցան իբրև

զփոշի կալոց ամարայնոյ։ Յետոյ թուեցաւ քեզ ընտել սաստիկ հողմոյ, որ առ տարաւ յայլոց տեսութիւն զփոշին զայն. և վէմն եղև լեռն մեծ, որ թուեցաւ քեզ ընալ զամենայն երկիր։ Այս է երազ քո. և այս՝ մեկնութիւն նորա։ Դու ես արքայ՝ արքայից արքայ որ ունիս բազում թագաւորս ընդ ձեռամբ քով. զի ՝ի ած երկնից ետ քեզ թագաւորութիւն մեծ, և տարածութիւն երկրի ընդարձակ, և փառք բազում, և կարողութիւն հզօր. դու ես գլուխն ոսկի։ Օ կնի քո յարիցէ այլ թագաւորութիւն խոնարհագոյն քան զքեզ, նշանակեալ յարծաթն։ Երրորդն զոր ցուցանէ պղինձն՝ եղիցի բռնագոյն և տիրեսցէ ամենայն երկրի. այլ զորս բինակ երկաթ մանրէ և մալէ զամենայն մետաղ, նոյնպէս ջրրորդ թագաւորութիւնն մանրեսցէ և մալեսցէ զամենայն թագաւորութիւնս։ Այլ խեցին խառնեալ յայտ առնէ՝ թէ այս թագաւորութիւն լիցի բաժանեալ, և ոչ եւ միասցի, որպէս ոչ խառնի երկաթ ընդ խեցի։ Եւ ապա ած երկնից յարուսցէ թագաւորութիւն յաւիտենական, որ ոչ երբէք անցանիցէ յազգ յայլ. և ՝ի նմա վախճան առնուցուն ամենայն թագաւորութիւնք. և նորա վախճան մի լիցի. զի նա կացցէ յաւիտեան։ Այս զայս նշանակէ վէմն ՝ի լեռնէն հատեալ սառանց ձեռին, որ մանրեաց զպատկերն, և զփոշի նորա ցրուեալ անհետ արար։

Այր թագաւորն սասանեալ, զի ՝ի լսել զատոյգ գրութիւն երազոյն՝ յիշեաց զայն նոյնհետայն. և տեսեալ զի համեմատ էր այնմ զոր ետես ըստ առանձնայն մանր պարագայից անվրէպ, որ ամենայն իրաք արժանահաւատ ընծայեցուցանէր զարգացմանն առաւել քան զմարդ, մինչև չթողուլ նմա տեղի երկբայութիւն ՝ի վերայ ճշմարտութիւն մեկնութիւնն, անկաւ ՝ի վերայ երեսաց իւրոց։ և երկիր երպագ դանիէլի իբրև միոյ յաստուածոյ. և հրամայեաց վաղվաղակի զոհս և խունկս անուշունս մատուցանել նմա։ Այլ խրատեալ ՝ի դանիէլէ՝ դադարեցաւ ՝ի զոհից. և խոստովան եղև, թէ

ՇՈՇՆ դանիէլի նա է ՇՈՇ աստուածոց, և Տէր տէրանց, և թագաւոր թագաւորաց, որ յայտնէ զխորհուրդս։ Ի ժամին յայտնմանէ բարձրացոյց նաբուքոդոնոսոր զդանիէլ. եւ նմա պարգևս մեծամեծս և բազումս. և կացոյց զնա հրամանատար ի վերայ աշխարհին բաբէլացւոց, և առաջին իշխան նախարարացն և ամենայն իմաստնոց բաբէլացւոց։ Այլ դանիէլ ի մեծութեանէ իւրում ոչ մոռացաւ զերեսին հաւատարիմ բարեկամս և զընկերս իւր՝ զսեդրաք, զմիսաք, և զաբեդնագով. խնդրեաց և ընկալաւ յարքայէ կացուցանել զնոսա ոստիկանս ի վերայ գործոց աշխարհին քաղդէացւոց։

Յաղագս չորից թագաւորութեանց նշանակելոց ի պատկեր երազոյն՝ չիք հակառակութիւն, առաջնոյն ցուցանել զթագաւորութիւնն քաղդէացւոց. երկրորդին՝ զթագաւորութիւնն պարսից. երրորդին՝ զթագաւորութիւնն յունաց. իսկ չորրորդին՝ զթագաւորութիւնն հռովմայեցւոց, և զյաւիտենական թագաւորութիւնն Յսի Քրիստի։ Այլ թէ զիարդ թագաւորութիւնն պարսից ասիցի խոնարհագոյն քան զթագաւորութիւնն նաբուքոդոնոսորայ, դժուարիմանալի երևի. զի յորժամ կիւրոս պարսիկ էառ զերկիր թագաւորութիւնն նաբուքոդոնոսորայ, երևի թէ եղև մեծագոյն յոյժ։ Այլ մարթէ հեշտեաւ քարոզել զլուծումն ի տարս, և յարտաքին պատմութեանց. քանզի կիւրոս ոչ տիրեաց ողջոյն ոչ թագաւորութիւնն մարաց, և ոչ թագաւորութիւնն նաբուքոդոնոսորայ։ Պատանեմք ի մարգարէս, զի զկնի քառասնամեան գերութեան, եղիպտոս դարձաւ յազատութիւն. որպէս և տիւրոս, և երկիրն իսրայէլի, և որ շուրջ զնովաւ թագաւորութիւնք՝ զկնի եօթանասնամեան գերութեան. ի վերայ սոցա ամենեցուն տիրեաց նաբուքոդոնոսոր. յորոց ոմանք ոչ անկան ընդ տէրութեամբ կիւրոսի. ոմանց կիւրոս ինքնին եւ ազատութիւն. այլք վտարանջեցին ի նմանէ։ Եւ բուն իսկ ի թագաւորութենէ պարսից յաջորդք կիւրոսի բազում գաւառս կորուսին ի ձախող պատերազմունս իւր

եանց. որպէս ունիմք լիով յարտաքին պատմութիւնս։

Դանիէլ սովին Ճանապարհաւ եգիտ շնորհս 'ի նաբուքոդոնոսորայ, և եղև մեծանուն յոյժ առաջի նորա, զոր օր քան զօր և եւս աձեցոյց 'ի ձեռն իմաստուն մատակարարութեան իշխանութեան իւրոյ. որով և կալաւ ընտանութիւն մեծ ընդ նմա. յոր վստահացեալ՝ հնարէր ուսուցանել նմա զշնմարիտ հաւատ, և ածել զնա 'ի ծանօթութիւն միոյն ամենայն։ Այս հայեցեալ՝ հաւանելի երևի ըստ կաղինոսի, թէ սա ինքն նաբուքոդոնոսոր էր թագաւորն այն՝ որում եցոյց դանիէլ, թէ ո՛չ բէլ, և ո՛չ վիշապն էին աստուածք պաշտելիք։ Ի՞նչ զիրս չէք սնուն թագաւորին, բայց տրամաբանելով՝ քաղեմք թէ ոչ էր դարեհ, և ոչ կիւրոս. եգեալ թէ մարք և պարսիկք ոչ Ճանաչէին զբէլ. և 'ի խգովուն անդ, զոր ստորև պատմեսցուք՝ ոչ յիշատակի յանուանէ ոչ պարսիկ, և ոչ մար. և ոչ քաղդէացիք նուա Ճեալք կարօղ էին այնչափ ժպրհութիւն սպառնալ և ընդդէմ դառնալ թագաւորին։

Ի՞նչ բաղտասար և յեղմարովդաք ոչ գտանեմք ոչ այնչափ ընտանութիւն ընդ դանիէլի, և ոչ փոքր ինչ միտ դնել իրաց կրօնի. և ոչ իսկ գտանեմք թէ առ սոքաք իշխանք արքունեաց այնչափ դուն գործեալ իցեն հանել յաչաց զդանիէլ և կորուսանել զնա. յորմէ երևի թէ չունէր դանիէլ առաջի նոցա այնչափ շնորհս և համարձակութիւն, ուստի և ոչ այնչափ նախանձարդս։ Ա.յլ զիարդ և իցէ՝ կաղինոս աստ պատմէ զանցս բէլայ և վիշապին իբրև դիպեալ առ նաբուքոդոնոսորաւ. բայց խոստովանի լինի չգիտել թէ առ որով յերիս թագաւորաց քանի եղեալ իցեն այն իրք. եթէ այլ ոք ասէ յայլ տեղի կարգեսցէ զայս դիպուած, արասցէ որպէս կամք իցեն նմա։ Ա՝իայն թէ դիւրաշարժ լինել 'ի բարկութիւն, և՝ 'ի բարկութիւն իւրում սպառնալ զմահ, և արագ հրամայել զգործադրութիւնն. խոստովանիլ զշնմարիտն ածմ, և քարոզել զնա պաշտելի, և ապա մեղանչել ընդդէմ

նորա՝ և ոչ պաշտել զնա, էն նշանք՝ որք նպաստեն այսմ կարծեաց կաղինոսի իբր սեպհական կնիք նաբուքոդոնոսորայ. զորս ոչ գտանեմք ոչ 'ի քաղտասար, և ոչ յեղմնարովդաք։

Գ.Լ. Գ.

Դանիէլ խորհանէ զԲէլ, և ոգոնանէ զվիշապն զոր պաշտէին Բաբելացիք։

Օ՝անցս բելայ և վիշապին պատմէ դանիէլ 'ի չորեքտասաներորդ գլուխ իւրոց մարգարէական գրոց։ Լ՝աբուքոդոնոսոր թէպէտ խոստովան եղև թէ ածն դանիէլի նա է ածծ աստուածոց, և հզօր քան զայլ ամենայն աստուածս. բայց դեռ ևս չէր հաւանեալ՝ թէ միայն ածն դանիէլի իցէ ածծ, մինչև չիցէ մարթ ճանաչել և պաշտել և զայլ աստուածս։ Լ՝ինքն նաբուքոդոնոսոր պաշտէր 'ի բաբելոն երկուս աստուածս՝ զբել, և զվիշապ մի. բայց զբել առաւել մեծարգի ունէր, և առաւելապէս պաշտօն տանէր նմա. և քաղում ծախս առնէր վասն նորա. զի առաքէր նմա յարքունուստ ռոճ'իկ աւուր միոջ՝ նաշիհ երկոտասան արդու, և քառասուն ոչխար, և գինի վեց մար։ Օ՝այն ամենայն սովեալ աստուածն ուտէր և սպառէր այնպէս, մինչև չմնալ և ոչ ոսկերքաց. և թագաւորն որ երթայր հանապազ երկիր պագանել նմա, տեսեալ՝ ուրախ լինէր ընդ շատակուլ որովայն աստուածոյն իւրոյ, բարուրեալ գուշակ համարելով զայն։

Յաւուր միում թագաւորն յընտանի զրոյցս ընդ դանիէլի որ սեղանակից էր նմա, եհարց ցնա, թէ ընդէ՞ր ոչ պագանէ երկիր բելայ։ Լ՝ատ պատասխանի դանիէլ, թէ ինքն ոչ պաշտէ զկուռս ձեռագործս, այլ միայն զածն կենդանի զարարիչն երկնի

և երկրի։ Ասէ Թագաւորն. իսկ բէլ ո՞չ Թուի քեզ Թէ իցէ ՅԱԾ կենդանի, եԹէ ո՞չ տեսանես՝ որչափ ուտէ և ըմպէ հանապազ։ Ասէ դանիէլ. մի խաբիր արքայ, զի դա է 'ի ներքոյ կաւեայ, և արտաքոյ պղնձի. ոչ կերեալ է դորա երբէք, և ոչ արբեալ։ Թագաւորն դիւրապատասխան 'ի բորբոքումն բարկութեան, հրաման ետ կոչել վաղվաղակի զքուրմսն բէլայ, և ասէ ցնոսա. կամիմ գիտել՝ Թէ ո՞վ սպառէ զայնչափ ծախս իմ. եԹէ ոչ ասիցէք ինձ զՀմարիան, մահու մեռանիցիք. ապա Թէ յուցցիք Հմարտութիւն, Թէ զայն ամենայն բէլ ուտէ, մեռցի դանիէլ զի հայհոյեաց զբէլ։ ՅաՀեցաւ դանիէլ ընդ վՀիռն. եղիցի ասէ ըստ բանի քում։ Քուրմք բէլայ էին եօԹանասուն՝ բաց 'ի կանանց նոցա և 'ի մանկանց. որք առ հաւաստի առնէր զԹագաւորն՝ եդին առաջի նորա զայս պայման, մինչ էր Թագաւորն 'ի տուն բէլայ հանդերձ դանիէլիւ, և ասեն. ահաւասիկ մեք արտաքս ելանեմք. և դու արքայ դիր առաջի բէլայ զկերակուրսդ և զգինիդ. և ելեալ փակեա զդրունսդ, և կնքեա մատանեաւ քով։ Այլ եկեալ ընդ առաւօտն՝ եԹէ ոչ գտցես զայդ ամենայն կերեալ 'ի բէլայ ըստ սովորութեան, մեռցուք մեք. ապա Թէ ոչ՝ մեռցի դանիէլ, որ սուտ խօսեցաւ զմեզ։

Գտացին անտի քուրմքն. և Թագաւորն ձեռամբ իւրով պատրաստեաց զսեղանն առաջի բէլայ. այլ յառաջ քան զմեկնիլ Թագաւորին 'ի մեհենէ անտի՝ ետ դանիէլ ցանել ընդ ամենայն մեհեանն մոխիր Թանձր առաջի Թագաւորին միայնոյ. և փակեալ զդուռնն՝ կնքեցին արքունի մատանեաւ, և գնացին։ Այլ վաղ քաջ ընդ առաւօտն յարուցեալ Թագաւորն փութացաւ գնաց հանդերձ դանիէլիւ 'ի մեհեան անդր. և յառաջ քան զբանալ դրսանն՝ եԹող զի դանիէլ ինքնին զննեսցէ զկնիքն. և եհարց ցնա, Թէ ողջ են կնիքն. ասէ դանիէլ, ողջ են արքայ։ Բացին զդրունսն. և Թագաւորն դէպ ուղիղ 'ի սեղան անդր ձգեաց զաչս, և տեսեալ զի սպառեալ էր ամենայն կերա-

կուրն, յառաւելութէ ցնծութէ սրտին ընդ քա-
ջութի որկորեայ աստուածոյն՝ 'ի ձայն մեծ աղաղա-
կեաց և ասէ, մեծ ես քէզ, և ոչ գոյ նենգութի
'ի քեզ և ոչ մի։ Իսկ դանիէլ կալաւ զթագաւորն,
և ծիծաղելով ասէ. մի փութար արքայ՝ մի փու-
թար մնանել, այլ հայեաց նախ ընդ յատակդ,
և տես որը է հետգ այդ։ Թագաւորն որ 'ի սկզբ-
բանն չէր հայեցեալ 'ի յատակսն, խոստովան եղև
և ասէ, տեսանեմ հետս արանց, և կանանց, և
մանկտւոյ։ Բուրմքն վստահ էին 'ի պայմանադրու-
թէն իւրեանց. քանզի ստորերկրեայ ճանապարհաւ
արարեալ էին ընդ սեղանուն մուտ անյայտ՝ զոր
ոչ ոք գիտէր. և ընդ այն մտանէին հանապազ
կանամբք և մանկամբք իւրեանց, և ուրախութիւն
սպառէին զամենայն՝ չնորհս կալեալ անզգայ աստ-
ուածոյն իւրեանց։ Յայնժամ բարկացեալ թագաւ-
որն՝ ետ ունել զքուրմսն, և զկանայս և զորդիս
նոցա. և յորժամ 'ի ստիպելոյ թագաւորին ցուցին
նմա զգաղտնի դրունս ընդ որ մտանէին և ծա-
խէին զսեղանն բելայ, առ ժամայն ետ կոտորել
զնոսա զամենեսին. և զբել մերժեալ յաչաց՝ ետ 'ի
ձեռս դանիէլի առնել նմա զինչ և կամիցի. իսկ
դանիէլ խորտակեաց զդրօշակն, և զմեհեան նո-
բա կործանեաց։

Նայր վիշապն մեծ, զոր պաշտէին բաբելա-
ցիքն. զոր և մնտամբ ցուցեալ թագաւորն դա-
նիէլի, ասէ ցնա. միթէ և զդմանէ ասիցես թէ
պղնձի է. սհաւասիկ կենդանի է, ուտէ և ըմպէ.
և ոչ կարես ասել՝ թէ չիցէ դա ած կենդանի.
արդ՝ 'ի պագ դմա երկիր։ Ասէ դանիէլ. ես ած-
այ իմոյ երկիր պագանեմ, զի նա է միայն ած կեն-
դանի՝ որ ոչ երբէք մեռանի. բայց դու արքայ տուր
ինձ իշխանութիւն, և սպանից զվիշապդ առաջի քո
առանց սրոյ և գաւազանի. ասէ թագաւորն.
տուեալ է քեզ։ Յաւ առեալ դանիէլի իւղ և ձիւթ,
և ճարպ, և մազ, և եփեալ զնոսա 'ի միասին՝ ա-
րար գնդակս, և եհար 'ի բերան վիշապին. զոր
իբրև կերաւ՝ ուռուցեալ պայթեաց որովայն նորա

և սատակեցաւ։ Յայնժամ դարձեալ դանիէլի առ արքայ և առ ժողովուրդն որ կայր անդ, ասէ. տեսս արքայ, տեսէք և դուք բաբելացիք, թէ զի՞նչ պատեալք, և ո՞ւմ երկիր պագանէք։ Աստուածոցն մտաղիւք լսէր զայսպիսի բանս զգաստացուցիչս 'ի մոլորութենէ, այլ ոչ նոյնպէս իշխանք և ժողովուրդ նորա. յորս քրթմնջիւն մեծ անկաւ, թէ Թագաւոր իւրեանց 'ի հրեութենէ եցե դարձեալ. զի զբեկ կործանեաց ասեն, և զվիշապն սպան, և զբուրմանն կոտորեաց։ Աւերեաս չէր և նոցա այնչափ ինչ փոյթ զաստուածոց կամ վասն կրօնի, այլ երկնչէին թէ ընդ պատրուակաւ կրօնի՝ անկցին ընդ իշխանութենէ հրեից, զորս ունէին առ իւրեանս իբրև գերիս. զի արդէն տեսանէին զգլխաւոր իշխանութեան Թագաւորութենն 'ի ձեռաս դանիէլի, որ և էր առաջին և նեբքին սիրելի Թագաւորին. և զվերակացութենէ գործոց երկրին 'ի ձեռաս սեղբաքայ, միսաքայ, և աբեդնագովի։ Վասն որոյ գուցէ կասկածէին՝ թէ դանիէլ որ գրգռեաց զԹագաւորն ընդդէմ աստուածոց, կարօղ էր գրգռել զնա և ընդդէմ մարդկան. և այնուհետեւ բաբելացիք, և մեծամեծք երկրին ոչ ևս լինիցին ապահով 'ի վերայ անձանց, եթէ կամիցի վարել ընդ նոսա՝ որպէս վարեցաւ ընդ բելայ և ընդ վիշապին։

Ի՞նչ անեցան գունդ կազմեցին, և յայտնի ապստամբութիւն եկին կուտեցան 'ի վերայ Թագաւորին. և խօսեցան առ նա յանդուգն ժպրհութիւն ոչ իբր հպատակք, այլ որպէս տերք բռնաւորք, և ասեն. տուր մեզ 'ի ձեռս զդանիէլ, ասա թէ ոչ՝ սպանանեմք զքեզ և զտուն քո։ Ի՞նչ էր յանդգնութենն, մեծապոյն էր անպատուութենն, ևս մեծագոյն վտանգն։ Աստուածոն անպատրաստ և անպատասպար գտեալ 'ի ժամուն 'ի նուաճել զբուռն յարձակումն նոցա՝ ստիպեցաւ տալ 'ի ձեռս նոցա զդանիէլ։ Այլ ոչ կամեցան տալ նմա իբրև առաջին իշխանի Թագաւորութենէ զայս պատիւ՝ սրով իւրեանց սպանանել զնա, այլ առ 'ի նախատինս՝ արիւն զնա 'ի կեր առիւծուց։ Զոյր յարքունիս

անդ գուբ, ուր պահէին եօթն առիւծս. և տային նոցա օր ըստ օրէ հանապազ երկու մեռեալ մարմինս կամ մարդոյ, կամ իշոյ, և երկու ոչխարս իբրև առաւել ախորժականս գազանացն. այլ յայնմ աւուրս ոչինչ ետուն նոցա. որպէս զի յանսուաղութէ զօրասցի քաջզ նոցա, և վաղվաղակի պատառեալ կերիցեն զդանիէլ։ Իսկայ դանիէլ 'ի գրի անդ զայնչափ աւուրս, մինչ զի թէ ոչ սպանանէին զնա առիւծքն, սպանանէր անսուաղութիւն։ Յետագաւորն նստեալ յարքունիս իւր տխուր՝ խորհէր հանապազ զդանիէլէ, թէ զինչ արդեօք եղև. ոչ կարէր հաւատալ թէ յեօթն քաջզեալ առիւծուց անտի չիցէ նա կենդեալ. բայց և ոչ հաւատալ կարէր վասն գերագոյն վարկման զոր ունէր զնմանէ, թէ չիցէ նա կենդանի 'ի մէջ եօթն առիւծոց։ Փութայր ստուգել զկատարածն. այլ կամէր նախ կարգել զամենայն այնպէս, զի մի դարձեալ յայն վտանգ անկցի. բազմայոյզ զթիկնապահս իւր. կարգեաց զգօրս հաւատարիմս 'ի զանազան տեղիս, այնպէս զի ապստամբքն մի կարիցեն փախստեամբ զերծանիլ յուռկանէն զոր ձգեաց նոցա. որպէս զի կենօք իւրեանց վճարեսցեն զժպիրհ յանդգնութիւն իւրեանց։ Յայս պատրաստութիւն ծախեաց աւուրս վեց. և յաւուրն եօթներորդի եկն անձամբ աշխարել զսիրելին իւր 'ի տեղին մահուան նորա՝ ոչ ևս ակնունելով կենդանի գտանել զնա. բայց միանգամայն հանդերձ փափաքմամբ՝ քան թէ յուսով. որպէս թէ 'ի ներքուստ իրձ սրտին ասէր նմա, թէ դանիէլ ոչ է մեռեալ։

Լ. յն իրձ, կամ յոյս, կամ թէ զինչ և կամիցիմք ասել, ստիպեաց զնա իւրով աչօք խնդրել զսիրելին. հայեցաւ 'ի գուբ անդր, և ետես զնա ոչ պատառեալ, ոչ խոցեալ, և ոչ հիւծեալ, այլ կենդանի, առողջ, բարեսեսիլ և բարեմոյն. ետես զի նստէր հանդարտ և անբիկևան. և առիւծունքն շուրջ զնովաւ իբր սպառազէն պահապանք կարգեալք 'ի պահպանութիւն նորա, և իբր սկուռնդք զուարթազինք քծնեալք զնովաւ։ Մանզի ամե-

նակալ նախախնամեցն ՝ի հեղուԹԷ փոխեաց զգազանական կատաղի բարս նոցա առ դանիէլ. միանգամայն և ՝ի հրեաստանէ առաքեաց իւրում հաւատարիմ ծառայի կերակուր։ Լ՝մՁակում մարդարէ պատրաստեալ էր Ձաշ վասն իւրոց հնձողաց. և այն ինչ երԹայր յանդ տանել զայն նոցա, ահա հրեշտակ ՝ի ներքեւեցուն և ասաց ցնա՝ տանել զՁաշն զոր ունէր ՝ի ձեռին ՝ի բաբելոն՝ դանիէլի ՝ի գուբն առիւծուց։ Լ՝ու այս զարմացեալ ամբակումայ՝ ասէր. տէր զբաբելոն չՁիք իմ՝ տեսեալ. և զգուբն ոչ գիտեմ ուր իցէ. Թող զի հեռի գնալով՝ չէր կարող ըստ ժամանակին հասուցանել ըզՁաշն ցայնչափ հեռաւոր տեղի։ Յայնժամ բուռն եհար հրեշտակն զվարսից գլխոյ նորա, և եդ զնա ՝ի բաբելոն ՝ի վերայ գբոյն. և աղաղակեաց ամբակում և ասէ, դանիէլ դանիէլ, արի առ զՁաշդ զոր առաքեաց քեզ ՁԱծ. իսկ դանիէլ գոհացեալ զբարերար խնամոյ ՁԱն՝ ասէ, յիշեցեր զիս ՁԱծ, և ոչ ընդ վայր հարեր զսիրելիս քո, և առեալ եկեր. իսկ հրեշտակն դարձոյց զամբակում նոյնժամայն անդրէն ՝ի տեղի իւր, զի կարիցէ պատրաստել այլ Ձաշ վասն մՁակաց իւրոց։ Լ՝այս կերակուր առատ, զի էր պատրաստեալ վասն բազմաց, բաւական եղև դանիէլի զաւուրս վեց. յորմէ գուցէ ետ ինչ ինչ և առիւծուց։

Լ՝ԲԴ՝ Թագաւորն յորժամ ետես զդանիէլ կենդանի, սիրտ իւր առ ժամայն գնաց առ ՁԱծն, յորոյ կարողուԹԷ միայնոյ ՁԱնաչէր զպահպանուԹիւն իւրումն սիրելւոյ. և ցնծալից հիացմամբ ազաղակեաց ՝ի ձայն մեծ և ասէ, մեծ ես Տէր ՁԱծ դանիէլի, և չիք այլ ոք բաց ՝ի քէն։ Լ՝ու հրամայեաց հանել վաղվաղակի զդանիէլ ՝ի գբոյ անտի. և փոխանակ նորա արկանել անդր զգլխաւորս ապականմամբ՝ որք ՝ի կորուստ խնդրէին զդանիէլ. կատարեցաւ վՁիռն. և հաղիւ Թէ ՝ի յատակ անդր հասին նոքա, անդէն առաջի աչաց Թագաւորին յօշ յօշ պատառեցին զնոսա առիւծքն։ Լ՝ստ լատինն յաւելու, Թէ նաբուքոդոնոսոր Եհան հրա-

վարտակ, յորում պատուիրէր երկնչիլ ամենայն բնակչաց երկրին յայն դանիէլի. զի նա է փրկիչ որ առնէ նշանս և սքանչելիս 'ի վերայ երկրի, որ ազատեաց զդանիէլ 'ի գրոյ առիւծուց։

Լսագաւորս այս եթէ նաբուքոդոնոսոր էր, թուէր թէ ոչ ևս մնայր խոչ ինչ նմա դառնալ 'ի Ճշմարիտ հաւատ։ Զանեաւ ստուգութիւն զստուծոյ աստուածոց իւրոց. ծանեաւ զնորամանկութիւն և զխաբէութիւն քրմաց պաշտօնէից նոցա. ծանեաւ զամենակարողութիւն, զնախախնամութիւն, և զբարութիւն այ Ճշմարտի. յետ այսր ամենայնի՝ թուէր ասեմ թէ ոչ մնայր այլևս ինչ արգել նմա դառնալ 'ի պաշտօն այն դանիէլի։ Այլ գիւրին է յոյժ առն հաւատացելոյ յետ մատնելոյ զանձն 'ի մոլութիւնս՝ մերկանալ զՃշմարիտ հաւատն, քան թէ անհաւատին ախտասիրի յառաջ քան զմերկանալ զախտս՝ 'ի բաց կալ յանհաւատութէ։ Արբաւ յաղթահարեսցին միտք 'ի Ճշմարտութէ, հակառակ կայ կամքն դնել ընդ լծով հաւատոյ զմտելական դնացս իւր։ Լաբուքոդոնոսոր ծանեաւ զՃշմարիտն ՅԾ. հրաման եհան ժողովրդեան իւրոյ պատուել զնա. բայց ինքն ոչ առ յանձն մտանել ընդ օրէնսդրութիւն։ Ոչ մարթ ժխտել զլինել նաբուքոդոնոսորայ հարուստ բաղում բնական գովելի ձրիք։ Փութաջան էր 'ի բարիսք դաստիարակութիւն մանկանց. մտադիր և փոյթ 'ի զարգացուցանել զգիտութիւնս, և 'ի խնամել զուսումնականս. զթած առ այնոսիկ, որք ինքնին անձնատուր լինէին զինուց նորա. հաւատարիմ առ թագաւորս իւր դաշնակիցս. իրաւասէր և արդար 'ի մեծացուցանել զարժանաւորս, և յընտրել իւր պաշտօնեայս զլաւս և զընտիրս։ Ո այս ամենայն գտանեմք 'ի նմա. որով կարէր լինել օրինակ թագաւորաց։ Այլ 'ի վերայ այսոցիկ՝ այնչափ բռնացեալ տիրեալ էր նմա հպարտութիւն, մինչ զի զամենայն ջանս, և զամենայն բնական ձիրս իւր 'ի նոյն ծառայեցուցանէր։ Խորժական էր նմա հետամուտ լինել տեղեկանալոյ ստութէ աստուածոց իւրոց. վասն զի այնու հա-

ւատի ցուցանէր՝ թէ մեծ է ինքն քան զաստուածս իւր։ Ա՛տադիւր խոստովանէր զՅՈՒԾՆ դանիէլի մեծ քան զամենայն աստուածս. քանզի թուէր նմա ունել զՅՈՒԾամերձութիւն իմն, ունելով առ իւր նաև խապատիւ պաշտօնեայ զդանիէլ՝ որ այնչափ սիրելի և բարեկամ էր ՅՈՒ էրկնից. որով և գնէր 'ի մտի լինել թէր դաշնակից իմն ընդ ՅՈՒ նորա։ Ա՛յլ յորժամ գայր զի արկցէ զանձն ընդ հնազանդութիւն նորին ՅՈՒԾԱՅԻՆ օրինաց, առժամայն ընդդէմ յառնէր հպարտութիւն։ Ա՛ներանալիր հրատարակէր զՅՈՒԾՆ դանիէլի մեծ և ՅՈՒՐ 'ի վերայ ամենայն աստուածոց. բայց ոչ կամէր ճանաչել և խոստովանել զնա ՅՈՒՐ 'ի վերայ իւր։

Գ։Լ. Գ։

Ղ՝ԱՔՈՒՓՈՐՈՆՈՍՈՐ ԿԱՆՓՆԷ ԶՊԱՊԷՆ ՈՍԿԻ 'Ի ՊԱՂԱԾ ԺՈՂՈՎՐԴԷԱՆ. ԻՍԿ ԷՐԵՑ ՄԱՆԿՈՒՆՆ ՀԱՄՈՒԱՆ ՅԱՆՑՆ, ԵՎ ԱՐԿԷԱԼ 'Ի ՀՆՈՑ ՀՐՈՅ՝ ՍԱՊԱՆԷԼՕՑ։

Ա՛ՆՋԻՆՉ տպացեալ կայր 'Ի սիրտ նաբուգոդոնոսորայ պատկերն զոր ետես յերազի. և թէպէտ հաճեալ էր ընդ նշանակութիւն ոսկի գլխոյն՝ որ յինքն ակնարկէր. բայց անհաճոյ էին նմա յայժմայլ մասունքն պատկերին, որք նշանակէին թէ թագաւորութիւն իւր հանդերձեալ է պակասել. իսկ թագաւորութիւն ՅՈՒ պարտ է կալ մնալ յաւիտեան։ Ա՛յլև ձայնն հնչեալ 'Ի ժողովրդեան՝ թէ հրէայ եղև, անբերելի էր ամբարտաւանութիւն նորա. որպէս թէ հրէական ժողովուրդն, զոր ունէր ընդ ձեռամբ իւրով իբրև գերի, ունիցի օրէնսդիր լինել նմա՝ նոր օրէնս կրօնի տալով։ Խորհեցաւ 'Ի սրտի իւրում մեծամեծս, և հաստատեաց գոգցես ստել զերազն, և առաւել զձայնն հրատարակեալ

վասն հրէութեան իւրոյ. վասն որոյ ետ շինել պատկեր համակ ոսկեձոյլ, և կանգնել զնա 'ի պաշտօն հասարակաց։ Այն՝ որք համարին, թէ այն պատկեր էր կուռք կանգնեալ 'ի Նաբուքոդոնոսորայ իբրև 'ի տեղի դրօշելոյն բեելայ՝ զոր խորտակեաց դանիել, 'ի հաճել զժողովուրդն։ Այլք ասեն, թէ էր պատկեր և նմանութիւն նորին Նաբուքոդոնոսորայ. յորում ամբարտաւանն կամէր պաշտօն ընդունել ՝ՇՃական։ Այլ դիրն ոչ երևի յայտ առնել զայս կամ զայն. զի բազում անգամ յիշելով զպատկերն զայն՝ ոչ երբեք անուանէ զնա կուռք կամ դրօշեալ, այլ միշտ իբրև ինչ մի զանազանեալ 'ի կուռց. "Զդիս քո ոչ պաշտեն, և պատկերիդ ոսկւոյ զոր կանգնեցեր՝ երկիր ոչ պագանեն։ Զդարև զդիս իմ ոչ պաշտիցէք, և պատկերին ոսկւոյ, զոր կանգնեցի՝ երկիր ոչ պագանիցէք". (դան. Գ. 12. 14)։ Այս ոչ իսկ ծանուցանէ լինել իբրև բուն պատկեր և նմանութիւն նաբուքոդոնոսորայ. կամ թէ հրամայեալ իցէ՝ զի յայն պատկեր զնա պաշտեսցեն, և նմա երկիր պագանիցեն իբրև ՝ՇՃ։ Զուցէ և չունէր իսկ պէտս կանգնել անկենդան պատկեր այնչափ ծանր. ծախիւք, երբ կարող էր զանձն իւր կենդանի՝ դնել առաջի, և զՇՃականն պահանջել պաշտօն 'ի ժողովրդենէ իւրմէ։

Պատկերն այն էր արձան մեծ, բարձրութիւն նորա վաթսուն կանգուն, և լայնութիւն նորա կանգուն վեց, կանգնեալ 'ի դաշտին դէերայ յաշխարհին բաբելացւոց. որ առանց երևեցուցանելոյ կուռս ինչ, կամ զնա ինքն զԹագաւորն՝ լոկ զի էր պատկեր ոսկի, լիով ծառայէր վախճանի Թագաւորին։ Յայտնի իսկ էր, զի հրէայք ոչ պաշտէին պատկերս. նա՝ դարշէին յայնպիսի դրուագաց առհասարակ, թէպէտ և չիցեն կուռք. և չէր նոցա օրէն և ոչ իբրև սոսկ զարդ ինչ, և իբրև անշնաս յիշատակարան ինչ պահել 'ի տունս իւրեանց։ Այս այսպէս նաբուքոդոնոսոր բռնադատեալով զամենայն ազգս և զլեզուս, որք էին ընդ իւրով տերութիւն

երկիր պագանել պատկերին յիւրմէ կանգնելոյ, առանց անուանելոյ զնա կուռք, լիով յայտնի առնէր սմենայն աշխարհի թէ ոչ եղև հրէայ՝ որպէս ասէին, և ոչ երթայ զհետ կրօնիցն դանիէլի։ Յաւարձանացուցանելով զպատկերն ողջոյն ասկի, դնէր 'ի մտի՝ ցրել Նովաւ զխորհուրդ պատկերին երազոյ. զի չունելով արձանին մասն ինչ դիւրաբեկ, թուէր ինքեան խոստանալ անձին թագաւորութի յաւիտենական նման թագաւորութեանն երկնից։

Հրաման ետ թագաւորն յամենայն կողմանց թագաւորութեան իւրոյ ժողովել զզօրավարս, և զզօրագլուխս՝, և զկուսակալս, և զպետս և զբրնաւորս և զգործակալս գալ 'ի նաւակատիս պատկերին։ Յաւ 'ի ձայն փողոյ քարոզեցաւ հրովարտակ արքայի, թէ յորժամ լսիցեն զձայն միաբանութեանն ազգի ազգի քաջարուեստ նուագարանաց, ամենեքին անկանիցեն և երկիր պագանիցեն պատկերին. և որ ոչ պագանիցէ երկիր, 'ի նմին ժամու ընկեսցի 'ի հնոց հրոյ բորբոքելոյ։ Պատն այսր վախճանի կանգնեալ կայր արձանն այն 'ի դաշտի. և շուրջ զնովաւ բազմութի նուագածուաց ամենատեսակ նուագարանաց փողոյ, սրընգի, թմբկի, քնարի, տաւղի և ն։ Յաւ 'ի կողմն մի դաշտին գոյր հնոց մի մեծ վառեալ. և առ նովաւ փայտակոյտ բազում 'ի պահել անշէջ զբոց հնոցին. իսկ 'ի միւս կողմն յանդիման պատկերին՝ էր աթոռ թագաւորին, և շուրջ զնովաւ բազմութի արքունի թիկնապահաց. և այլևս զբաց աստ անդ կարգեալք 'ի զգուշութի, զի մի աղմուկ ինչ չիոթի ծագեսցէ 'ի բազմութենանդ։ Յայտ է թէ դանիէլ ոչ գտաւ յայն նաւակատիս, զի չէր անդ բնաւ յիշատակութի ինչ զնմանէ. այլ թէ ուր էր յայնժամ, չի՛ յայտ. այս ինչ յայտնի է, զի ոչ կարաց նա խափանել զայս ամպարշտութի։ Պաշտօնեայք որչափ զբաւոր իցեն և յարգոյ առաջի թագաւորաց, ոչ երբէք զբրեն ամենայնի. և ոչ փոքր ինաս է թագաւորաց և թագաւորութեց այն՝ զի խնամատուն պաշտօնեայք յայնժամ թուին ունել առաւել

տկար և ամիրոի իշխանութեն, յորժամ 'ի վար արկանէն զայն 'ի խափանել զանիրաւութեն ինչ և զամենարշութիւն։ Օ անազան պատճառս տան ոմանք յիշատակելոյ զբոյն անդ զգնիել. զուցէ սակն պատճառանօք թագաւորական գործառնութեն իրիք խոյս ետ ուրեք, զի մի գտցի յայնժամ անդ. կամ հիւանդութեն ինչ ձևացոյց, որպէս սովորութեն է մեծամեծաց, յորժամ խնդրէն խուսել 'ի վտանգաւոր ինչ իրաց։

Այլ զիարդ և իցէ, այս հաւաստի է թէ անդ գտան երեք ընկերքն նորա անանիա, միսայէլ, և ազարիա, (որք 'ի բաբելոնացւոց կոչեցան սեդրաք, միսաք, և աբեդնադոլ,) այնպէս տնօրինելով ՝՝՝ առ 'ի տալ դարձեալ նոր նշան նաբուքոդոնոսորայ 'ի խորտակումն ամբարտաւանութեն նորա, և յօրինակ արիութեն և քաջալերութեն առ յապայ եկեալոց ՝՝՝ծառայութեան։ Այնդ գտան նոքա, այլ ոչ կրկնեցին ծունր պատկերին։ Այ հնչել բազմութեան նուագարանաց, լայնածաւալ դաշն երևէր իրրև ծով ծփեալ մարդկամբք որք ելանէին և իջանէին ծունր կրկնելով։ Այս թագաւորն շուրջ հայեր դժնդակ աչօք, և սպառաւորքն դէտակն կալեալ հայլին զննէին արթնութեաբ. հնոցն սպառնացեալ՝ վառեր բորբոքմամբ. իշխանք և մեծամեծք և ամենայն ազգք և ազինք և լեզուք տարածեալ 'ի դէտսի՝ երկիր պագանէին։ Այ՝՝՝ինն անանիա, միսայէլ, և ազարիա ոչ 'ի բորբոքեալ բոցոյ հնոցին զարհուրեալ, և ոչ 'ի ցասմանէ թագաւորին երկուցեալ՝ յոսն կային արիաբար ուղիղ 'ի մէջ անչափ աշխարհաժողով բազմութեն երկրպագուաց։ Այ՝՝՝ադդեացիք ոչ իմիք այնպէս ցանկային, որպէս տեսանել յերեսին իշխանն յայնոսիկ դիմադարձութեն 'ի չարագանել երկիր, զի գիտէին՝ թէ դովին անտարակոյս 'ի կորուստ մատնեացին. վասն որոյ նոյնժամայն մնատուցեալ ամբաստան եղէն զնոցանէ առ արքայ. որ լի եղև բարկութեամբ, բայց ոչ վաղվաղեաց տալ զդատակնիք մնհու ընդդէմ նոցա։ Այ՝՝՝աջ գիտէր թէ չէ պարտ թագաւոր-

բաց լինել դիւրաշարժ 'ի կորուստնել զարս հարկաւորս հասարակաց բարւոյ՝ յորժամ կարիցեն ուղղել զնոսա։ Գիտեր զի ամբարձեալքն 'ի մեծամեծ իշխանութիւս են նշաւակ մեծի նախանձու. և թէ դիւրին է չգանազանել զզրպարտութիւնն յուղիղ ամբաստանութէ, յորժամ միոյ կողմանն ևեթ լսէ զք։ Հրամայեաց ածել զնոսա առաջի իւր. և մի մի յանուանէ կոչելով զնոսա, եհարց եթէ ճշմարիտ իցէ այն՝ զոր ասեն զնոցանէ, թէ զդիս իւր ոչ պաշտեն, և պատկերին ոսկւոյ զոր կանգնեաց երկիր ոչ պագանեն՝ որպէս հրամայեաց։ Պատ խրատ ետ նոցա, զի 'ի լսել միւսանգամ զձայն նուագարանացն, անկանիցին և երկիր պագանիցեն, և այնպէս նովին հնազանդութեամբ ընդունցեն յանձանց զառաջին յանցանս հեռատութէ։ Եւ 'ի վերայ եած ամբարտաւանութիւն և հրացեալ բարկութիւն. ապա թէ ոչ՝ ասէ, 'ի նմին ժամու անկանիցիք 'ի հնոց հրոյն բորբոքելոյ. և ոչ է ուրեք՝ որ փրկէ զձեզ 'ի ձեռաց իմոց։

Զարհուրեցան արիասիրտ նահատակքն ոչ ընդ սպառնալիս, այլ ընդ անազգակ հայհոյութիւն. և ասեն անվեհեր համարձակութիւն, չէ արժան վասն բանիդ այդորիկ տալ քեզ պատասխանի. զի է մեր ուրեք՝ յերկինս՝ զոր մեքն պաշտեմք. կարող է փրկել զմեզ 'ի հնոցէ հրոյդ բորբոքելոյ, և 'ի ձեռաց քոց ազատել՝ ապրեցուցանել զմեզ։ Պատ թէ ուրեք յաղագս իւրոց անքննին խորհրդոց ոչ փրկեսցէ զմեզ, սակայն և այնպէս յայտնի լիցի քեզ ազգայ, զի զդիս քո մեք ոչ պաշտեմք, և պատկերիդ ոսկւոյ զոր կանգնեցեր՝ երկիր ոչ պագանեմք։ Յայնժամ նաբուքոդոնոսոր լի եղև սրտմտութիւն, մինչև դէպն երեսաց նորա շրջեցաւ. և հրաման ետ զհնոցին սաստկացուցանել եօթնապատիկ առաւել քան զսովորականն. և ընտրեալ հինգ զինուորս զօրաւորս զօրութիւն՝ ետ նոցա առաջի իւր կապել զոտս և զձեռս երեցունց սնդապէս. և առ շտապ տագնապի՝ չեթող և ոչ 'ի հանդերձից մերկացուցանել զնոսա, այլ այնպէս ամենայն իշխանական

զդեստուք ընկենուլ զնոսա 'ի բորբոքեալ բոց հնոցին։ Յ համբերն բաղմութեանն անդ ժողովրդեան էր խորին լռութիւն. և ամենեցուն աչք կային կառուցեալ յերեսին անյաղթելի ախոյեանս, մնալով կատարածի իրացն։

Իբրև ընկեցան նոքա 'ի բորբոքեալ բոց անդը, իսկ և իսկ երևեցաւ 'ի հոնէ առաջին սքանչելիքն, զի ոչ մերձեցաւ 'ի նոսա հուրն. ապա առաջամայն երևեցաւ և երկրորդ սքանչելիք, զի հուրն զկապանս ոտից և ձեռաց նոցա նոյնհետայն 'ի մէջ դարձոյց՝ առանց բնաւ այրելոյ կամ դէթ խանձատելոյ զհանդերձս նոցա։ Իսկ նոքա 'ի մէջ հրոյն, որ ծախելով միայն զորթս և զկոշիս և զփայտս՝ բանայր նոցա 'ի հնոցի անդ ձեմարան անարգել, գնային ձեմէին որպէս 'ի հոյակապ սրահի։

Յայնժամ ազարիա եբաց զբերան իւր, և սկսաւ ձայնակցութիւն իւրոց ընկերաց օրհնել և փառաւորել զԾած խաղաղ և անդորր սրտիւ, որպէս թէ էր յանբոյթ աղօթատեղւոջ ուրեք։ Յետանէին ամենեքին զձեմել նոցա, և լսէին զձայն օրհնաբանութեան նոցա. յորմէ կատաղեալ սպասաւորաց թագաւորին, ոչ դադարէին զհնոցն ևս քան զևս բորբոքել նաւթիւ, և ձիւթով, և վշով, և որթով. այնչափ, զի բոցն ելանէր բարձրանայր 'ի վերոյ քան զհնոցն 'ի քառասուն և յինն կանդուն։ Յայնժամ երևեցաւ 'ի մէջ նոցա հրեշտակ Տն 'ի կերպարանս մարդոյ, բայց գերաշխարհիկ ինն տեսլեամբ. և յաւելեալ սքանչելիս 'ի վերայ սքանչելեաց՝ 'ի բաց վանեաց զբոց հրոյն 'ի հնոցէ անտի, որ ելեալ շրջէր և պատէր շուրջ զհնոցաւն, և այրէր կենդանւոյն զորս 'ի քաղդէացւոց անտի մերձ գտանէր. և 'ի մէջ հնոցին յարոյց իբրև զհովմ քաղցրասիդ որ ցօղագին ընդիցէ։ Իբ նոքա երէրեան իբրև 'ի տաճարի սրբութեանն միաբան միաձայն օրհնէին և գովէին և փառաւորառնէին զԾած, ձայնակից ինքեանց հրաւիրելով զամենայն արարածս յօրհնաբանութեան ամենակալ և ամենողորմ արարչին։ Օ նոյն օրհնաբանութեան

երից փառաւորեալ նահատակաց պաշտել հայաս-
տանեայցս եկեղեցի զերկանապաղ յառաւօտեան
պաշտաման։

Ընդ այն նշան ահաւոր ամենեքեան որք կային
անդ՝ սոսկացեալ սասանեցան. և առաւել քան
զայլս Թագաւորն առ մեծի հիացման երևէր կո-
րուսեալ զբարբառ բերանոյ։ Յարեաւ տագնապաւ
յաթոռոյն, և հայեցեալ ընդ բերան հնոցին՝ ասէ
զարմացմամբ ցմեծամեծս իւր. ոչ արս երիս կա-
պեալս արկաք 'ի մէջ հնոցին, զիարդ ապա տե-
սանեմ արս չորս արձակս, և դնան 'ի մէջ հրոյն,
և ապականութիւն ինչ ոչ գոյ 'ի նոսա. և տեսիլ
չորրորդին փառաշուք նման որդւոյ աստուծոյ։ Մեծ ինչ
է, զի նաբուքոդոնոսոր տեսեալ շուրջ զհնոցաւն
զդիակունս սպասաւորաց՝ որք հրկէզ եղեն 'ի հրա-
շական ծաւալմանէ բոցոյ հնոցին, ոչ երկեաւ թէ
նոցն անցք և ընդ նա անցանիցեն 'ի մերձենալ իւ-
րում 'ի հնոց անդր։ Այլ՝ կամ զի զկնի մեռանե-
լոց սպասաւորաց, ոչ ևս դատանելով որ անդ մերձ
'ի մատակարարել զնիւթ, սկսեալ իցէ բոցն շիջ-
անել. և կամ զի վստահացաւ 'ի զերջ սրտին.
զի ոչ մերձենայր ցասմամբ, այլ խոնարհ և ստրջա-
ցեալ ոգւով. և այնպէս մատուցեալ 'ի դուռն
հնոցին՝ քաղցր միանգամայն և երկիւղագին ձայ-
նիւ կոչելով զերեսին նահատակսն յանուանէ,
զոր տային նոցա քաղդէացիք, ասէ. Մեգրաք,
միսաք, և աբեդնաքով հաւատարիմ ծառայք աստ-
ուծոյ բարձրելոյ ելէք արտաքս և եկայք։ Այսկին նոքա.
և ամենայն նախարարք, և կուսակալք, և զօրա-
վարք, և զօրաւորք Թագաւորին Ժողովեցան 'ի
վերայ նոցա. և հայէին և զննէին զձեռս նոցա,
և զերեսս, և զվանդերձս, և զհերս գլխոց նոցա.
և հիացեալ սոլէին՝ տեսանելով, զի ամենեքին ոչ
մերձեցաւ հուրն 'ի մարմինս նոցա, և ոչ իսկ գէթ
հոտ հրոյ գոյր 'ի նոսա։

Այլ նաբուքոդոնոսոր առաւել քան զամենե-
սին աբանչացեալ՝ երկիր եպագ առաջի նոցա նոն
ոչ. և 'ի ձայն բարձր օրհնեաց զնոսա, և գոհացաւ

զնմանէ, որ առաքեաց զՀրեշտակ իւր, և փրկեաց զՀաւատարիմ ծառայս իւր, և զրացոյց զնոսա արքայմարդեալ զանդէպ հրամանի Թագաւորի, և մատնեալ զմարմինս իւրեանց 'ի հուր, քան պաշտել և երկիր պագանել այլ աստուածոյ, բայց միայն ՅՍ իւրեանց։ ԼՍ պատիժ մահու հրամայեաց, և յափշտակութիւն տանց և ընչից՝ որ որ ժպրհեսցի խօսիլ հայհոյութիւն զՅՍ սեդրաքայ միսաքայ և աբեդնաքովի, հրատարակելով թէ ոչ գոյ այլ ՅՍ, որ կարող իցէ այնպէս փրկել զծառայս իւր։ ԼՍ նոյնժամայն բարձրացոյց զնոսա 'ի մեծագոյն իշխանութիւն. և աղաչեաց լինել նոցա իշխան ամենայն հրեից, որ էին 'ի Թագաւորութիւնէ նորա։ Լ.պա եՀան հանրական հրովարտակ զայս օրինակ։ 'Լաբուքոդոնոսոր արքայ առ ամենայն ազգս և լեզուս որ բնակեալ են յամենայն երկրի՝ խաղաղութիւն բազմացի ձեզ։ Լարձրեալն ՅՍ արար նշանս և արուեստս ընդ իս. զոր հաճոյ թուեցաւ առաջի իմ պատմել ձեզ թէ որպէս մեծամեծք և զօրաւորք են. արքայութիւն նորա արքայութիւն յաւիտենից. և իշխանութիւն նորա ազգաց յազգս։

Լ.յսչափ ինչ ծանօթութիւն ունիմք յՅՍծային գիրս զերից հրաշալի նահատակացս զանանիայէ, զազարիայէ, և զմիսայելէ։ Լս թէպէտ զարդիւնս նահատակութիւն, որում արիաբար ինքնայօժար կամք նուիրեցին զանձինս, տկարացաւ բորբոքեալ բոց հնոցին լրացուցանել, այլ ՅՍ և հրեշտակային կեանքնոցա պսակեաց փառօք. այնուհետև մինչև ցոր բնաւորական մահուան իւրեանց՝ միշտ սիրելիք եղեն արքային բաբելոնի. և ս առաւել սիրելիք էին երկնից արքայի. որ անեղբական փառօք փառաւորեաց զնոսա 'ի դասս ՅՍ մարտիրոսաց և մարգարէից. զորոց զպանծալի յիշատակ տօնախմբէ եկեղեցի 'ի միասին ընդ դանիէլի մարգարէին բազմապատիկ պսակօք մարտիրոսութիւն փառաւորելոյ։

ԳԼ. Ի.

Լաբոռափորոնոսոր հալածեալ 'ի Մարդկանէ փախստական անկանի յանապատս, կայեալ անդ ընդ գազանս ամս եօթն։

Յետ այսորիկ եկաց Նաբուքոդոնոսոր առ ժամանակ մի հանդարտեալ 'ի չափու ունելով զանձն։ Այլ զկնի յանընդհատ ինն յաջողութիւն իրաց իւրոց բազմապատիկ յաղթութիւնք պերճացեալ, և ընդարձակեալ զսահմանս տերութեան իւրոյ մինչև յայնկոյս եգիպտոսի, դարձաւ անդրէն 'ի նախկին իւր ամբարտաւանութիւն՝ անձին տալով զամենայն, փոխանակ ամենայն այսոր երկիր պագանելոյ, և նմա միայնոյ խոստովանելոյ զայն ամենայն յաջողութիւնս և զարձրութիւն յոր վայելէր։ Վասն որոյ և ամբարձ փոխեաց զձեռն իւր. և զի ընդ բազում ժամանակս ինչ ոչ շահեցաւ յայնչափ սքանչելեաց, և կիցս ընկէց ընդդէմ այնչափ բարերարութեանց, կամեցաւ ձանաչապարհաւ թշուառութեան ածել զնա 'ի ձանաչել զչափ անձին. այլ յառաջ քան զհարկանել զնա՝ եցոյց նմա զգաւազանն։

Յամի (ըստ հաշուին կաղենոսի) երեսուներորդի վեցերորդի յետ գերութեան յեքոնիայ, և 'ի քառասներորդի երրորդի թագաւորելոյ Նաբուքոդոնոսորայ 'ի բաբելոն, եցոյց նմա ամբ զպատիժն, որ ընդ հուլ ունէր հասանել 'ի վերայ նորա, ամ օրինակիս ըստ այսմիկ։ Ցեսանէր արքայ յանկողնի իւրում 'ի տեսլեան գիշերոյ ծառ մի մեծ յոյժ և զօրաւոր. որոյ բարձրութիւն թուէր հասանել մինչև յերկինս. և լայնութիւն նորա թուէր ծածկել զամենայն երկիր։ Տերևք նորա գեղեցիկք, և պտուղ նորա բազում. 'ի ներքոյ նորա բնակեալ էին գազանք վայրի, և յոստս նորա հանգուցեալ էին թռչունք երկնից. և 'ի նմանէ կերակրէին ամենայն կենդանիք։ Եւ ահա հրեշտակ զուարթուն

և սուրբ իջեալ յերկնից՝ հրամայեաց բարձը բարբառով, զի հատցի ծառն, և քշաեսցին ոստք նորա, և թօթափեսցին տերևք նորա, և ցրուեսցին պտուղք նորա. և փախիցեն գազանք սրբ ի նէ 'ի ներքոյ նորա, և թռչունք որ յոստս նորա. բայց զշառաւիղ արմատոյ նորա ասաց թողուլ, այլ երկաթի և պղնձի կապանօք պնդեալ. և կացցէ 'ի դաշտ վայրի և 'ի խոտ երկրի 'ի ներքոյ ցօղոյ երկնից՝ ընդ գազանս անապատի. և մարդկային սիրտ նորա փոխեսցի, և սիրտ գազանի տացի նմա. և ամս եօթն կացցէ յայն վիճակ։ Ի՝ սոտ դատակիրն քոյ զուարթնոյ է վճիռս, և ըստ հարցուածոյ սրբոյ պատգամն. զի ծանիցեն կենդանիք եթէ տիրէ բարձրեալն թագաւորութիւն մարդկան. և ումմ կամի տացէ զնա. և զկոնարհն 'ի մարդկանէ յարուցանէ և բարձրացուցանէ յաթոռ թագաւորութեան։

Ի՝նդ այն տեսիլ զարհուրեցաւ թագաւորն, որպէս ինքնին վկայէ. կոչեաց զամենայն իմաստունս բաբելացւոց, զգէտս, զմոգս, զկրօնս և զքաղդեայս, այլ յոչն կարել նոցա զմեկնութիւն երազոյն ցուցանել նմա, դիմեաց առ վերջին ապաւէնն իւր առ դանիէլ, գիտելով զի հոգի ինչ գոյր 'ի նմա։ Պատմեաց նմա զերազն. և նա առաջամայն իմացաւ զնշանակութիւն նորա։ Ի՝արգարէն եղեկիել այսպիսի այլաբանութիւն ծառոյ բարձրացելոյ մինչև յամպս՝ ստորագրէ յերեսնեերորդ առաջնեերորդ գլուխ իւրոյ մարգարէութեանց զանցեալ կործանումն սենեքերիմայ ասորեստանեայց արքայի, գնելով զնա առաջի աչաց յերկիւղ փարաւոնի եգիպտացւոց արքայի։ Ի՝այց սոտ տեսիլն չէր զօտարէ, և ոչ լոկ առ երկեցուցանել, այլ՝ էր զնմանէ որ եռեսն. ուստի չէր դիւրին գտանել եղանակ բանից 'ի մեղմել առաջի նաբուքոդոնոսորայ զվշտագին խորհուրդ երազոյն. որպէս զի բարեգուշակ համարելով զայն՝ կարասցէ լսել առ 'ի զգուշութիւն անձին։ Խրատք տալիք իշխանաց և ոմանց փափկասիրտ մեծամեծաց, որպէս զի լինի

ցին արդիւնաբեր, Հարկ է զի նախ քաջ կշռեսցին. զի որ վշտագնի՝ սովորաբար ոչ դայ 'ի զերջ և յուղղութիւն. և դժուարին է ոչ վշտացուցանել՝ յորժամ Հարկ իցէ տրտմեցուցանել։ Դանիէլ ունէր ասել քանս տրտմեցուցիչս. և Հարկ իսկ էր ասել. այլ որպէս զի պատուով ասիցէ՝ միանգամայն և ազդուութիւն իմն, լուռ եկաց իբրև ժամ մի, խորհելով 'ի սրտի իւրում թէ զինչդ յայտնեսցէ նմա զխորհուրդ երազոյն։ Թագաւորն՝ որ զաչս իւր յառեալ ունէր յերեսս դանիէլի, ետես զի խորհուրդք նորա խռովեցուցանէին զնա. յորմէ անկաւ 'ի կասկած, թէ մեծի ձախողութիւն իմիք իցէ դուշակ երազն իւր. բայց և այնպէս ընտրեաց իմանալ զՀմարիսն, քան թէ սուտ յուսով մխիթարիլ։ Այս քաջալերս դանիէլի՝ խօսել Համարձակ. բաղտասար ասէ՝ երազն և մեկնութիւն նորա մի տագնապեցուցանիցեն զքեզ։

Յայնժամ ետ պատասխանի դանիէլ. կամիլ ասքայ զի երազն քո՝ յատելիս քո, և մեկնութիւն նորա 'ի թշնամիս քո ճշդրտեսցի, և ոչ 'ի քեզ։ Ծառն զոր տեսանէիր մեծացեալ և զօրացեալ, որոյ բարձրութիւն մինչև յերկինս Հասանէր, դու ես արքայ։ Այս ըստ կարգի մնրամանն կրկնելով զերազն՝ առաջի դնէ նմա զչգօրութիւն նորա և զմեծութիւն և զփառս նորա. ապա անցանելով 'ի մեկնութիւն Հատման ծառոյն, և երկաթի և պղնձի շղթայիւք կապելոյն շառաւիղի արմատոյն, ասէ. դատաստանք բարձրելոյն Հասեալ են 'ի վերայ ո՞ն իմոյ արքայի. Հալածեսցին զքեզ 'ի մարդկանէ, և ընդ գազանս անապատի եղիցի բնակութիւն քո, և զխոտ իբրև զարջառ ճարակեսցես, և եղիցես անտուն, և անչարկ, դեղերեալ յանձրև, 'ի ձիւն, և 'ի ցօղ երկնից, և յամենայն դժնդակութիւն օդոց։ Յ.յսպէս եղիցին կեանք քո ընդ ամն եօթն. մինչև ծանիցես թէ տիրէ բարձրեալն թագաւորութիւն մարդկան, և ումի կամի՝ տացէ զնա։ Այլ զի ասաց զուարթունն 'ի դիմաց ոյ՝ թողուլ զշառաւիղ արմատոյ ծառոյն, թագաւորութիւն քո 'ի

քեզ զարձցի, յորժամ ծանիցես թէ 'ի նմանէ ուն-
նիս զնա։ Բայց ես աղաչեմ՝ խրատ իմ հաճոյ
թուեսցի քեզ արքայ, զմեղս քո ողորմութիւն քա-
ւեաջիր, և զանօրէնութիւնս զթովք տնանկաց։
Երեղք քո մեծ են, և անօրէնութիւնք քո բազում,
սակայն և այնպէս թերևս զթասցի 'ի քեզ Ած,
եթէ մեծ եղիցին ողորմութիւնք, և զթութիւն քո 'ի
վերայ տնանկաց բազում։

Որդարէն զողորմութիւն և զգթութիւն տուա-
ջադրեաց, քան թէ զայլ գործս ապաշխարութիւն.
քանզի այն առաւել գիւրին էր նմա իբրև թագա-
ւորի. ուսուցանելով առաջնորդաց հոգւոց ջանալ՝
նոցա որք դեռևս անկատար են յոյժ, որչափ հնար
իցէ՝ գիւրել զձանապարհ փրկութիւն՝ առ 'ի մեղ-
մով իմն ածել զնոսա յուղղութիւն։ Բայց ոչ վստա-
հացոյց զնա, որպէս թէ 'ի յաձախել նորա առնել
ողորմութիւնս՝ իսպառ թողցէ նմա Ած զպատիժն
գուշակեալ. մի՝ զի մեղք ոչ քաւին առանց կա-
տարեալ զղջման. և երկրորդ՝ զի կատարեալ
զղջումն, և գործք Աշմարիտ ապաշխարութիւն՝ որք
միշտ և անվրէպ ընդունին զթողութիւն մեղաց, և
հանդերձեալ պատժոց, ոչ միշտ և անվրէպ ընդ-
ունին զթողութիւն պատժոց ստի կենաց, թէ-
պէտ և մեղքն իցեն թողեալ. մանաւանդ մեղք
ծանր գայթակղութիւն. որոց և յետ տալոյ զթո-
ղութիւն, 'ի Աստ Ած ծայրին փառաց՝ ցուցանել զցա-
սումն իմն յօրինակ այլոց։

Հասարակաց կարծիք են, թէ նաբուքոդոնոսոր
ընկալաւ զխրատս Մարգարէին, և եղև առ ժամա-
նակ մի առատ 'ի տուրս ողորմութիւն, և զթոտ
առ տնանկս. այլ ապա կասեցաւ. զի զկնի ամ-
միոյ՝ գտանեմք զնա անդրէն դարձ արարեալ 'ի
սովորական ամբարտաւանութիւն իւր չար և քան
զառաջինն։ Զանզի մինչդեռ Աստուծ 'ի սրահի իւ-
րոց արքունեաց, յիշելով զաեսիլ հատման ծառոյն՝
մերժեաց 'ի բաց զաղդումն երկիւղին այ, և ետ
պատասխանի նեբքին տադնապիչ անձկութիւն սրտի
իւրոյ, թէ յայնպիսում վիճակի կամ, յորում

լունիմ բնաւ պատճառ երկիւղի իմիք. քանզի ասէր՝ եթէ ոչ թերանով, գունէ 'ի սրտի իւրում. ո՞վ կարիցէ հալածել զիս յարքունեաց աստի իմոց. ո՞րպէս մարթ է ինձ երկուանալ ընդ կարողութեն զօրութեն իմոյ. ո՞չ այս այն մեծ բաբելոն է, զոր ես մեծացուցի և ամրացուցի 'ի տուն հաստատութեն թագաւորութեն իմոյ. որով և յայտնի լինի ինձ՝ թէ որչափ իցէ կարողութեն զօրութեն իմոյ. և մեծութեն փառաց իմոց։

Եւ այն ինչ կամէր և ես ասել ինչ, ձայն եղև յերկնից առ նա. քեզ ասեմ նաբուքոդոնոսոր արքայ, թագաւորութեն քո անցեալ է 'ի քէն յայլոյ ձեռս. և 'ի մարդկանէ հալածեսցեն զքեզ. և ընդ գազանս անապատի բնակութեն քո. և խոտ իբրև զարջառ կերիցես. և ընդ ամն եօթեն կացցես յանապատս. մինչև ծանիցես՝ թէ գոյ բարձրեալ, որ տիրէ քեզ, և ամենայն թագաւորութեց երկրի։ Եւ այս ձայն էր կրկնութեն բանից, որ 'ի նախընթաց ամի ասացան նմա 'ի դանիէլէ. և հաղիւ թէ լռեաց ձայնն, ապա հնչեաց բոմբիւն ապրստամբաց ընդդէմ նաբուքոդոնոսորայ. որոյ տեսեալ զանձն զուրկ յամենայն մարդկային օգնականութեն, ցնորեալ 'ի մտաց, եւ յարքունեաց, և միայն ընդ միայն փախուցեալ փութացաւ տագնապաւ անկանիլ և որջանալ 'ի մայրիս ընդ գազանս։ Եւ այս ցուցանէ՝ ասէ կաղինոս, բնական իմաստ բառիցս, ՝ Հալածեսցեն զքեզ 'ի մարդկանէ ॥։ Եւ՝ ուստի տեսանեմք զնա այժմ գազան մեկնիլ 'ի մարդկանէ, հանդերձեալ եմք յետոյ տեսանել զնա գառնալ անդր մարդ, յետ կալոյ նորա զամն եօթեն ընդ գազանս։ Եւ ժամն թողեալ զնա 'ի մայրիս, կացցուք մնասցուք մեք 'ի կարգի պատմութեն բաբելոնի։

ԳԼ. Զ.

Լուսաբովդաւ Խաչաւոր Բաբելոնի։ Լաբուտ մարգարէ։

Հասարակ կարծիք մատենագրաց զեղմարովդաք անագան ուրեմն թագաւորեցուցանեն. այսինքն զկնի մեռանելոյ Նաբուքոդոնոսորայ հօր իւրոյ։ Ամենք նոյնացուցանեն զնա ընդ բաղտասարայ. և ասեն՝ թէ էր նա ինքն բաղտասարն կոչեցեալ և եղմարովդաք, որ թագաւորեաց յետ մեռեալ Նաբուքոդոնոսորայ հօր իւրոյ. քանզի ասեն, 'ի գիրս չորրորդ թագաւորաց. Բ. 27. զկնի Նաբուքոդոնոսորայ ասի թագաւորել եղմարովդաքայ. և 'ի գիրս բարուքայ. Ա. 11. և դանիէլի. Է. թէ բաղտասար յաջորդեաց զնաբուքոդոնոսոր։ Այլ ես՝ ասէ կաղինոս՝ ոչինչ զարմանամ, թէ գոլով Նաբուքոդոնոսորայ երկիցս ելեալ 'ի թագաւորութէ, գտանիցին երկու այլ և այլ յաջորդք յաթոռ թագաւորութէ նորա։ Այլոցն կարծիք տան թագաւորութէ նաբուքոդոնոսորայ ամն միայն քառասուն և երիս և փոքր ինչ աւելի. և հաւաստի համարին զբան իւրեանց, քանզի զկնի երեսուն և եօթն ամաց բանտարկութէ յերթանիայ արքայի յուդայ եղմարովդաք եհան զնա 'ի տանէ բանտին։ Այսպէսն հաւաստի լիներ այդ դրութէ, եթէ նոյնպէս հաւաստի էր, թէ եղմարովդաք յաջորդեաց զնաբուքոդոնոսոր զկնի մահու նորա։ Ի վերայ այսր հիմանն հաստատեալ սոցա՝ կանխեցուցանեն զապաստամբութէ և զհալածումն նաբուքոդոնոսորայ. և զեօթն ամն նորին քաղաքական մեռելուն՝ հաշուեն 'ի քառասուն և երիս ամն թագաւորութէ նորա։ Կաղինոս որոյ կարծիք հակառակ է այսմ, առաջի դնէ նախ զայն, զոր հաւաստի ուղիմք 'ի սրբ գիրս. և ապա հետեւեցուցանէ զկարծիս իւր։

Այս՝ հաւաստի է ասել, զի 'ի գիրս մարգարէութեանն՝ ասէ՞ ՃԾ, թէ ազգք նուաճեալք 'ի նաբուքոդոնոսորայ ծառայեսցեն նմա, և որդւոյ նորա, և թոռնոյ. * Այլ ծառայեսցեն նմա ամենայն ազգք. և որդւոյ նորա, և որդւոյ որդւոյ նորա ||. Եր. 6. այսպէս ընթերցանու լատինն։ Որով լինին երեք թագաւորք, նաբուքոդոնոսոր, որդի նորա, և որդի որդւոյ նորա։

Երկրորդ՝ հաւաստի է, թէ 'ի կատարած երեսուն և եօթն ամաց գերութեանն յեբոնիայ՝ եղմարովդաք թագաւորեր 'ի բաբելոն. և 'ի նմին ամի սկսեալ էր թագաւորել։ Այս յայտնի ունիմք 'ի գիրս չորրորդ թագաւորաց. Եր. 27. * Այլ եղև յերեսնեներորդի եօթներորդի ամի գերութեան յեբոնիայ արքայի յուդայ՝ յամենայն երկոտասանեներորդի 'ի քսան և յեօթն ամսոյն, բարձրացոյց եղմարովդաք արքայ բաբելոնի՝ յամին յորում թագաւորեաց՝ զգլուխ յեբոնիայ արքայի յուդայ, և եհան զնա 'ի տանէ բանտին իւրոյ ||։ Այս կրկնէ և երեմիա. 'ի գլ. ԾԷ 31։ Այլ զի ոչ ուրեք 'ի նոր գիրս ասի, թէ նաբուքոդոնոսոր մեռեալ էր յայնժամ, վասն որոյ և էնթադրի 'ի կաղենոսէ կենդանի լինել։

Երրորդ՝ հաւաստի է, զի բարուք և դանիէլ զաղտասար կոչեն որդի նաբուքոդոնոսորայ. բայց չէ նոյնպէս հաւաստի, թէ արդեօք անմիջական ծննդեամբ որդի՞ իցէ նորա, թէ որդի որդեգրեալ. և կամ ըստ հասարակ սովորութեան երբայեցւոց լեզուի՝ որդի դնի և 'ի տեղի թոռնի։ Որդ՝ եթէ չգուցէ որոշ հին ինչ հակառակ՝ պարտ է ըստ ձառնին և ըստ բնական տեսութեան իմանալ զբանն, և ասել թէ էր որդի անմիջական ծննդեամբ։ Այլ եթէ կայցէ հին՝ ասել զաղտասար որդի եղմարովդաքայ, և թոռն նաբուքոդոնոսորայ, մարթ է ասել զայս առանց ինչ դժուարութեան, ունելով բաղմապատիկ օրինակս յածսային գիրս՝ զթոռունս կոչել որդիս։

Չորրորդ՝ հաւաստի է, զի յառաջնեներորդ գլուխ

գրոց բարուքայ յառաքել Հրէից 'ի բաբելոնէ առ Հրէայս որք էին յերուսաղէմ, արծաթ՝ գնել ողջակէզս, և հանել 'ի սեղանն Տեառն ՅՍ, յանձն առնեն աղօթս առնել 'ի վերայ նաբուքոդոնոսորայ արքայի բաբելացւոց, և 'ի վերայ բաղտասարայ որդւոյ նորա. ուր ոչ գոյ յիշատակ զեղմարովգաքայ. եթէ արդարև կենդանի էր նա յայնժամ, չէին արդեօք զանց արարեալ յանուանէ յիշատակել և զնա, գոլով որդի և ժառանգ թագաւորութեան։ Այսպէս ընդ այն ժամանակս թագաւորէր նաբուքոդոնոսոր, և բաղտասար կենդանի էր. կամ եղմարովդաք մեռեալ։

Հինգերորդ՝ 'ի բանից աստի, և 'ի բանից դանիէլի լինի ուղիղ հեռաւեցուցանել, թէ 'ի մեռանել նաբուքոդոնոսորայ՝ բաղտասար յոգեթագաւորեալ փոխանակ նորա։ 'Ի քաջայայտ սկզբանցս նոր զրոց զայսօրինակ տրամաբանեն կաղենոս։

Հաւաստի է յերեմիայէ՝ թէ թագաւորեցին նաբուքոդոնոսոր, և որդի նորա, և որդի որդւոյ նորա. իսկ սոքա էին եղմարովդաք, և բաղտասար. ապա թագաւորեցին նաբուքոդոնոսոր, եղմարովդաք և բաղտասար։ 'Ի բարուքայ և 'ի դանիէլէ երևի՝ թէ բաղտասար յաջորդեաց զաթոռ թագաւորութեան նաբուքոդոնոսորայ։ Այսպէս եղմարովդաք թագաւորեաց առ կենդանութիւն նաբուքոդոնոսորայ. և չիք գտանել այլ ժամանակ թագաւորելոյ նորա, եթէ ոչ յեօթն ամսն, յորս նաբուքոդոնոսոր էր ընդ գազանս 'ի կորուստ համարեալ։ Օ՛նի դառնալոյ նորա անդրէն 'ի թագաւորութիւն իւր, ոչ ևս գտանեմք յիշատակ ինչ զեղմարովդաքայ. ապա մեռեալ էր նա յայնժամ. և զբաղտասար մանուկ փոքրիկ՝ որք 'ի Հօրէ մնացեալ՝ հաւ նորա մնայց, և առ յիւր որդեգիրս։ Այս տրամաբանութիւն համաձայն գրոյն՝ է համաձայն և իրացն եղելոյց։ 'Ի կորնչել նաբուքոդոնոսորայ, և 'ի մեռանել քաղաքականօրէն 'ի թագաւորութենէն, հարկ է թէ այլ ոք իցէ վարեալ զթագաւորութիւն. ապա թէ ոչ՝ միապետութիւն բաբելացւոց ոչ ևս էր մնա-

ցեալ. կարի հաւանական է թէ որդի նորա լցէ վարեալ. և յետ եօթն ամաց լցէ մեռեալ, և թողեալ որդի փոքրիկ. որ չէ ինչ նոր, որովհետև յամենայն հասակի մեռանին մարդիկ, և ոչ լոկ 'ի ծերութիւն։

Այս այսպէս՝ ըստ հաշուին կաղենոսի, յամի աբրչուութիւն աշխարհի 3621. 'ի տարագրիլ նաբուքոդոնոսորայ, և 'ի մեռանել քաղաքականօրէն 'ի թագաւորութիւն, յաջորդեաց զաթոռ նորա եղմարովդաք որդի նորա. և թէ քաղցր էր սա և մարդասէր առ եբրայեցիս, երևի 'ի մարդասիրութիւն զոր եցոյց յեքոնիայ արքայի յուդայ։ Օր 'ի յամին յորում թագաւորեաց, յերկոտասաներորդ ամենան տարւոյն երեմներորդի եօթներորդի յորմէ հետէ կայր յեքոնիա արգելեալ 'ի տուն բանտին, վաղվաղակի խորհեցաւ հանգուցանել զնա։ Յաւուր քսաներորդի չորրորդի ամսոյն՝ որպէս ունիմք առ երեմիայ ԺԷ. 31. Եհան զնա 'ի տանէն ուր կայր 'ի պահեստի. Բ. Թագ. ԻԵ. 27. և յաւուր քսաներորդի եօթներորդի խօսեցաւ ընդ նմա քաղցրութիւն, և ետ փոխել զհանդերձ բանտին. և արկ զաթոռ նորա 'ի վերոյ քան զաթոռս ամենայն թագաւորաց նուաճելոց, որ էին ընդ նմա անդ 'ի բաբելոն. և կարգեաց նմա ռոճիկ վայելչական, և իբրև մտերիմ բարեկամ արար զնա հանապազ իւր սեղանակից. զի * ուտէր հանապազ հաց առաջի նորա զամենայն աւուրս կենաց իւրոց։ Բ. Թագ. ԻԵ։ Այսչափ ինչ և եթէ ծանօթութիւն ունիմք 'ի նոր գիրս զեղմարովդաքայ։

Զոր թագաւորութիւն սորա՝ բարուք մարգարէ քարոզէր Ժողովրդեան հրէից 'ի բաբելոն։ Այր նա ընկեր հաւատարիմ երեմիայ մարգարէի, և դպիր կամ քարտուղար նորա։ Զի մեռանել երեմիայ յեգիպտոս, բարուք տարեալ եղև 'ի քաղդէացւոց 'ի բաբելոն. և յամին հինգերորդի եղմարովդաքայ արքայի յեօթներորդ աւուր այնր ամսոյ, յորում հինգ ամաք յառաջ առին քաղդէացիք զերուսաղէմ և այրեցին, սկսաւ գրել զգիրս իւր։ Այն է քա

բոզ ազգու և զօրաւոր 'ի կակղել և զսիրտս սալա-
ցեալս. ուր ցուցանէ թէ այն ամենայն թշուառու-
թիւք և տառապանք զոր կրեն, են պատիժ անօրէ-
նութեան նոցա, և թագաւորաց նոցա. և ուրեք ու-
րեք բացագարձութեամբ ձևով դառնայ և իսօսի առ
ած լի զղջութիւն, և հաւատով, և յուսով։ Այսի-
թարէ և քաջալերէ զժողովուրդն յուսով ազատու-
թեան 'ի գերութենէ. և սառաւել խոստմամբ երջա-
նիկ գալստեան ցանկացեալ մեսիային, որ լցուսցէ
զնոսա և զերկիր նոցա համբերն բարութիւնք հոգե-
կանաք։ Այս գիր ընթերցաւ բարուք յականքս
յեբռնիայ արքայի յետ ելանելոյ նորա 'ի տանէ
արգելանաց, և յականքս իշխանաց և զօրաց, և ա-
մենայն ժողովրդեան 'ի փոքուէ մինչև ցմեծամեծս՝
որ բնակեալ էին 'ի բաբելոն։ Այս ամենեքեան 'ի
զէզ հարեալ լային, և պահօք և ջերմ աղօթիւք
ադաչէին զերեսս նոցն. և որք ունէին զբաւականու-
թիւն գնոյ առին զսպասս տաճարի նոցն զոր իւրա-
գինս, որք չէին անցեալ 'ի գանձ արքունի, այլ
մնացեալ 'ի ձեռս զինուորացն քաղդէացւոց. և
առաքեցին առ յովակիմքահանայ որդի քեղկեայ, և
առ այլ քահանայս գտեալս ընդ նմա յերուսաղէմ.
զի մի պղծեսցին 'ի հեթանոսաց։ Ժողովեցին և
արծաթ առաքել յերուսաղէմ, գնել ողջակէզս և
հանել 'ի սեղանն նոցն. և զի մինչև էին առաքեալ
զարծաթն՝ մեռաւ եղմարովդաք, և դարձաւ նա-
բուքոդոնոսոր յաթոռ թագաւորութեան իւրոյ։
Եւ յղել զարծաթն, ը նմին առաքեցին և պատուէր
աղօթս առնել վասն կենաց նաբուքոդոնոսորայ, և
վասն կենաց բաղտասարայ որդւոյ նորա. որ 'ի մե-
ռանել եղմարովդաքայ՝ ինքն մնաց ժառանգ թա-
գաւորութեան։ Տեսեալ նոցա զպատուէրն որ լինէր 'ի
բաբելոն յընթերցուածոյ գրոցն բարուքայ, զպատ-
ՃԷն նորա առաքեցին առ հրեայս որ յերուսաղէմ,
գնել զնա 'ի տուն տէն, այսինքն 'ի ժողովրդանոց
նոցա. զի ոչ ևս գոյր տաճար տէն։ և ընթեռնուլ
յականքս ժողովրդեան յաւուրս տօնից, և յայլ
նշանաւոր աւուրս։

ԳԼ. Լ.

Վասն նաբուքոդոնոսորայ յամայութեան։ Զի էղջ նորա, և դարձ 'ի նախաւորութիւն իւր։

Պարտայայտ է թէ նաբուքոդոնոսոր 'ի բնակակիցս լինելն ընդ երէ վայրիս 'ի նմանութի արջառոյ՝ ոչ փոխեցաւ ըստ գոյացութենն 'ի գոյացութի և 'ի բնութի դազանի. զի անկարելի է էակին յէութէ իւրմէ յայլ օտար էութի փոխիլ, և առաւել մարդոյ բանաւորի դառնալ ըստ գոյացութե յանբան անասուն։ Բազումք յայն կարծիս են, թէ պահելով նորա զանմնային գոյացութի մարդոյ 'ի հոգին, և 'ի նեբքին կազմութի գործարանաց մարմնոյ, միայն արտաքին ձև մարմնոյ նորա փոխակերպեցաւ 'ի նմանութիւն վայրենի արջառոյ։ Այլք թէ ոչինչ իրական փոփոխութի եղև 'ի մասին ինչ մարմնոյ նորա, այլ միայն արտաքին էրևոյթ նորա այլակերպեցաւ, որպէս պատահէ 'ի կախարդութի. որ այլայլելով զտեսակս իրաց յերևակայութի այլոց՝ երևեցուցանէ զառարկայն այն ինչ, որ ինչ ոչ է իրօք։ և այնպէս որք հայէին 'ի նա, թուէր նոցա տեսանել զարջառ վայրենի։ Այսք համարին թէ այս այլայլութի տեսակաց յերևակայութեան ոչ եղև յայլս, այլ յինքեան. զի խելացնորեալ՝ համարէր զինքն արջառ վայրենի. վասն որոյ զայն Ճարակ, զայն բնակութի, և զայն տարազ կենաց ինդրէր, որ համաբնական է վայրենի արջառոյ։

Կաղենոս մանրակրկիտ զննիչ բառից և բանից ՅԾայնն գրոյն, Թողեալ զայսոսիկ կարծիս 'ի կամս հեղինակաց իւրեանց, պահէ վասն իւր զՀասարակաց սկիզբն զայն ՅԾաբանից, թէ չէ պարտ և ոչ իսկ յերբ հրաշալիս բազմապատկել զՀրաշս առանց

հիման. և ոչ ասել ինչ առաւել քան զայն որ ասի 'ի նոր գիրս։ Զոտանեմ ասել 'ի նոր գիրս յերազն նաբուքոդոնոսորայ ասացեալ վասն շառաւիղի արմատոյն՝ թողուլ զնա * երկաթապատ և պղնձապատ ։ կամ ըստ այլ թարգմանութեան, * դասպեալ երկաթի և պղնձի շղթայիւք ։ Զայլ զի դանիէլ 'ի մեկնել զերազն՝ ինչ ոչ խօսի վասն շղթայից, և ոչ ձայնն երկնից՝ զոր յետոյ արձանի լուաւ նաբուքոդոնոսոր, կրկնէ զայն. և զի դժուարին իսկ էր թագաւորին փախչել և թաքչել յանտառս, եթէ կապեալ սնդեալ էր 'ի կրկին շղթայս, ասա հետեւի՝ թէ նաբուքոդոնոսոր ոչ կապեցաւ. և թէ շղթայք երազոյն էին պարզ այլաբանութեամբ, նշանակելով թէ ընդ եօթն ամն ոչ ելցէ նա յանտառաց անտի, անհրաժեշտ զօրութիւն կապեալ անդ։ Զոր ևս գտաւ նեմ ասել 'ի նմին երազի, զի ասի. * Սիրտ նորա 'ի մարդկանէ փոխեսցի. և սիրտ գազանի տացի նմա ։ Զորդ՝ դանիէլ ծածուսոյց մեկնիչ երազոյն 'ի մեկնուն իւրում ոչ սնդեալ զբառս զայսոսիկ, և չտայ ուրոյն մեկնուն ինչ առ այն, այլ զամենայնն մեկնէ լոկ ասելով թէ ընդ գազանս անասպատի եղիցի բնակուն նորա. և խոտ իբրև արջառայ ջամբեսցեն նմա։

Զոր ոչ 'ի ձայնն ազդեալ յերկնից յականջս նաբուքոդոնոսորայ կրկնին այս բառք. յորմէ ունիմք խմանալ, թէ և այս յայլաբանական միտս ասացաւ առ առաւել հաստատութիւն զուշակութեան ընդ գազանս բնակելոյ նորա յանապատի. և առ 'ի բնակել անդ չէր հարկաւոր այլափոխութեան ինչ նեբքին՝ կամ արտաքին, և ոչ յիւրում կամ յայլոց երևակայութիւն։ Զոր ևս ասի, * Ընդ գազանս անապատի բաժին նորա ... 'ի դալար վայրի ։ Զայս բառք մեկնեն զայն ամենայն՝ յորս նաբուքոդոնոսոր հանդերձեալ էր նմանիլ արջառոյ, որ էր ուտել զխոտ որ ինքնին բուսանի յերկրէ առանց մշակութեան, և ոչինչ աւելի նմանութեան տայ իմանալ ընդ նաբուքոդոնոսոր, և ընդ արջառ, եթէ ոչ՝ լոկ 'ի կերակուրն։ Զոր չէ իսկ հարկ տարածել

զնմանութիւն, և ասել թէ Ամարակէր զխոտ յափսի-
թերս գնալով 'ի վերայ երկրի քառոտանի, ոչ
յայլ ինչ 'ի կիր արկեալ զձեռս, եթէ ոչ միայն 'ի
գնալ։ Այլ ոչ զի ուտելով խոտս, և արմատս, և
ընձիւղս ծառոց մորչս և փափուկս, հարկ էր նմա
լինել յիմար մտաթափ՝ համարել զինքն արքա-
զի որովհետև առ ապրեցուցանել զկեանս իւր՝
ստիպեցաւ փախչել և թաքչել յանտառս անե-
ւոյթ 'ի մարդկանէ, այնուհետև հարկ էր նմա
զայն ուտել, զոր անտառն մատակարարէր նմա։
Այնթէ արդարև համարեալ էր զինքն արքատ վայ-
ելեսի, և զնոյն ախորժակ ունէր զոր ունին ար-
քաւք, այն արօտ լինէր վասն նորա փափուքի։
Այս եթէ ելեալ էր 'ի մտաց նորա լինել իւր
մարդ, ոչ էր կարօղ յայնմ անասնական յիմարու-
թեան խորհիլ զայ. և ոչ յասպաղուն դարձի նորա
համարեալ էր նմա 'ի մեղս. զի յիմար գոլով՝ ոչ
ևս ունէր ազատ անձնիշխանութեան դառնալոյ։

Յիմար էր 'ի յամառիլ այնչափ ընդերկար 'ի
ներքոյ պատուհասին, և յոչն փութալ վաղվաղակի
խոնարհիլ առաջի այ։ Այլ այս յիմարութեան հասա-
բակ է մեղաւորաց, որք ընդերկար մնալով 'ի մե-
լութեան խիզ՝ մինչև տիրել 'ի վերայ նոցա, և 'ի
վերջոյ ածել 'ի խստասրտուն զնոսա, միշտ ազատ
են 'ի դառնալ, այլ ոչ դառնան, առաւել անսա-
լով յարաչար սովորութեան իւրեանց, քան լուսոյ բա-
նին. ոչ որպէս թէ չիմանան, կամ չունին անձնիշ-
խանութեան, այլ զի ոչ կամին բուռն առնել անձ-
նոյ։ Այնթէ նաբուքոդոնոսոր յիմարեալ՝ համար-
եալ էր զանձն արքատ վայրենի, թէպէտ թշուառ
էր, բայց առանց իմանալոյ զթշուառութիւն իւր. տա-
ռապէր, այլ ոչ զգայր. և ոչ իմանալով զտանջանս
իւր, պատիժն այն լեալ էր նմա իբր հանգիստ, և
բերկրութիւն ինչ։ Այսպիսի են սովորական ներգոր-
ծութիւնք յիմարութեան, զոր տեսանեմք հանապազ 'ի
խելացնորս։

Այլ անպատմելի տառապանք և դառնութիւն
սրտի նաբուքոդոնոսորայ այն էր. գիտել զի մարդ

էր. գիտէր զի թագաւոր է. բայց առ ահի ասլըս-տամբութեան ժողովրդեան իւրոյ, որք ըստ իւրոց կարծեաց՝ 'ի խնդիր էին սպանանել զնա, տեսանէր զանձն բռնադատեալ ընդ գազանս բնակել և խոտ իբրև զարջառ ուտել։ Այսն զի լսելով նորա զահարկու շուինդն ապստամբաց միաբանելոց ընդդէմ անձին իւրոյ, յանհնարին երկիւղ ըմբռնեալ՝ էլ փախեաւ յարքունեաց և 'ի քաղաքէն, և գնացեալ որջացաւ 'ի մայրիս անտառաց. և անդ անտես 'ի մարդկանէ՝ եկաց բացօթեայ անյարկ 'ի ցօղ երկնից, յանձրև և 'ի ձիւն, 'ի տօթ և 'ի ցուրտ՝ յամենայն դժնդակութեան օդոց։ Այլ առ փոքր փոքր մաշեալ և վատնեալ հանդերձից նորա, մնաց մերկ ամենևին. վարսք գլխոյ նորա և մօրուսք մեծացան իբրև զառիւծուց և ինձ-ռեալ խառուցան. երկնդունք նորա եղէն իբրև զմագիլս թռչնոց. երեսք նորա վատեցան, և մարմին նորա 'ի խստութէ օդոց ներկաւ 'ի գոյն պղնձոյ, և հիւծեալ ցամաքեցաւ, և եղև իբր կմախք ոսկերոտի մերթապատ՝ բայց կենդանի. որով և բոլոր ձև մարմնոյն իբրև յայլանդակ իմն հրեշ փոխեցաւ։ Օ այս մի միայն փոխակերպութեան դնէ կաղենոս եղեալ 'ի նաբուքոդոնոսոր, ոչ միանգամայն, այլ առ սակաւ սակաւ. վասն զի և նա ինքն նաբուքոդոնոսոր զայլ ինչ մեծագոյն փոփոխութէ ոչ խոսի, 'ի պատմելն զանցս որք անցին ընդ նա. զոր ինքն միայն գիտէր՝ անձամբ ընդ փորձ ամենայնի անցեալ։ Այսմ մասին ունի կաղենոս իւր առաջնորդ զերոնիմոս, զԹէոդորետոս, զԹովմաս ագուինացի, և զգասպար սանկտիոս զերևելի մեկնիչսն գրոց. որ ասէ, "Հասարակաց կարծիք է, թէ առաջին կերպարանք և ձև թագաւորին չիցէ այլափոխեալ"։

Այսպիսի գազանական դժնդակ կեանս վարեաց ընդ ամս եօթն՝ պահելով զնա ամենակարող ձեռին նայ, զի մի մեռցի յանբերելի տառապանաց անտի, և մի 'ի գազանաց երկրին պատառեսցի։ Ամենայր զծանրանալ ձեռին ան 'ի վերայ նորա, բայց և

այնպէս յամառեալ պնդեալ կայր յիւրում ամբարտաւանութեան. էր նկուն և նուաստեալ, այլ ոչ խոնարհեալ 'ի սրտի իւրում. էր հարուածեալ, բայց ընդ հարուածովք ընդդէմ գաւազանին աքացէր։ Այսպէս հուսկ ուրեմն յետ կատարածի եօթն ամսոյ՝ դարձաւ 'ի միտս իւր, անձնատուր եղև նմա՝ որ ոչ կամէր կորուսանել զնա, այլ խոշտանկէր զի առ ինքն ձգեսցէ։ Այնմբարձ զաչս իւր յերկինս, և զմիտս առ նա. ընկալաւ կամակար զհարուածս 'ի պատիժ մեղաց իւրոց 'ի ձեռանէ նոյն. և խոստովանեալ զնա եղև զնա միշտ կենդանի, միշտ ամենակալ մեծ և ամենազօր, առ որով ամենայն բնակիչք երկրի իբրև ոչինչ են համարեալ. իշխան և նոր ամենայնի, որ ըստ կամաց իւրոց կարգէ և տնօրինէ զամենայն յերկինս և 'ի վերայ երկրի. և ոչ ոք կարէ ընդդէմ դառնալ ձեռին նորա, և 'ասել թէ զի՞նչ գործեցեր։ Այս խոստովանութեան նորա հսնդերձ ջերմ զղջութեամբ և խոնարհութեամբ՝ ընկալաւ նա որպէս բաւական ապաշխարութեան, և վախճան արար հարուածոց և թշուառութեանց նորա։

Ընդ այն աւուրս մեռաւ եղմարովդաք, որպէս նշանակեցաք 'ի վերոյ. և եթող որդի մանուկ փոքրիկ կոչեցեալ բաղտասար. այլ առ նուազութեամբ հասակին անբաւական 'ի թագաւորութեան. դանիել հաւատի արար զիշխանս և զմեծամեծս թագաւորութեանն, թէ նաբուքոդոնոսոր՝ զոր նորա իրաւամբ մեռեալ կարէին համարիլ՝ կենդանի է. խնդրեսցեն զնա և գտցեն ոչ եւ ամբարտաւան և բռնաւոր անողոքելի՝ որպէս էրն յորժամ միաբանեցան 'ի կորուստ նորա, այլ խոնարհ և հեզ քաղցր և բարեկարգ։ Այլին 'ի խնդիր նորա. և նոր ազդեաց նոցա զտեղին՝ ուր ունէին գտանել զնա. և այն՝ ոչ ըստ այնմ ահարկու այլատարազ տեսլեան, յոր ժամանեալ էր յայն եօթն ամս դաղանական կենաց. քանզի դարձոյց նոր զամենայն զառաջին բնական հանդամանս մարմնոյ նորա. ուստի գտին զնա որպէս էրն յորժամ հալածեցաւ 'ի

նոցանէ։ Եւ ինքն յայնչափ նշանաց խմացեալ՝ էթէ հաշտեալ է ամ ընդ նմա, ոչ ևս խնդրեաց թագաւորեալ զանձն 'ի մարդկանէ. և այնպէս փառաւք ածաւ 'ի բաբէլոն, և հասարակաց հաճութիւն նստաւ անդրէն յաթոռ թագաւորութեան։ որպէս ինքնին վկայէ ասելով. "Եւ կերպարանք իմ առ իս դարձաւ. և իշխանք իմ և մեծամեծք իմ խնդրեցին զիս, և անդրէն 'ի թագաւորութիւն հաստատեցայ. և մեծութիւն առաւել յաւելաւ ինձ"։ դան. Բ. 33։

Բազումք յայս կարծիս են, թէ յետ այնորիկ առ սակաւ ժամանակս կեցեալ իցէ. զի ոչ գտանեմք ասէն թէ արձակեալ իցէ զժողովուրդն հրէից 'ի գերութենէ. և ոչ թէ զսպասս տաճարին ոն դարձուցեալ իցէ յերուսաղէմ. յոր մարթ էր յաւելուլ և զհասակ ծերութեան նորա։ Այլ այդ նշանք թէթև ինչ են. զի առ 'ի արձակել զժողովուրդն, և դարձուցանել զսպասս, շատ էին երեք կամ չորք աւուրք։ Այս ասէ կաղինոս ոչինչ երկուանամ, թէ պահեաց զժողովուրդն և զսպասս ըստ խորհրդոյ դանիէլի, որ առանց նոր յայտնութեան գիտէր 'ի մարդարէութեանէ երեմիայ և եսայեայ զկամն ոն՝ երկարել գերութեանն ընդ ամս եօթանասուն, և շինութեան տաճարին լինել հրովարտակաւ կիւրոսի։ Այսուբոդոնոսոր ոչ դարձոյց զսպասս, բայց ոչ պղծեաց. ոչ արձակեաց զժողովուրդն, բայց ոչ հարստահարեաց զնոսա իբրև բրոնակալ, այլ հայրօրէն խնամ տարաւ նոցա՝ որպէս սեպհական ժողովրդեան երկնից արքային. զոր յայտնաբարբառ քարոզէր օրհնէր բարձրացուցանէր և փառաւոր առնէր։

Իսկ վասն հասակի նորա պէսպէս են կարծիք. կաղինոս համարի զնա ծերագոյն՝ քան զոր այլք սովորաբար կարծեն։ 'Ի կործանմանէ նինուէի՝ որ ըստ հաշուի նորա եղև յամի արարչութեան աշխարհի 3553. մինչև ցերեսներորդ եօթներորդ ամ գերութեան յեբոնիայ, անցին վաթսուն ամք։ Յետսաք 'ի վերջ անդր զնաբուքոդոնոսոր պատանեակ

չեւեւս թագաւոր գտեալ անձամբ 'ի պաշարման անդ նինուէի։ Լաւ դիցուք թէ էր նա յայնժամ հնգետասան ամաց, որ է հասակ բաւական արքայորդւոյ կալ 'ի զինն մարտի՝ և ժառանգել ըզփառս յաղթութեան, թողեալ զօրավարաց զհրամանատարութիւն և զառաջնորդութիւն զօրաց։ Լաւ հնգետասան ամ յաւելեալ 'ի վերայ վաթսնից, լինի նաբուքոդոնոսոր ըստ կաղենոսի՝ ամաց էօթանասուն և հնգից՝ յորժամ փախեաւ յանապատ. և ուրթսուն և երկուց, յորժամ դարձաւ անդրէն 'ի թագաւորութիւն իւր։ Լ։ վերայ այսորիկ յաւելու կաղենոս նաբուքոդոնոսորայ կեանս այլ ևս ամս իբրև տասն. հիմնեալ յայն բան դանիէլի, որ 'ի մեկնել զերազն՝ ասաց "թագաւորութիւն քո քեզ մնայ". և 'ի բանն թագաւորին, որ յետ դառնալոյ յաթոռ իւր՝ ասէ. "Լ։ մեծութիւն առաւել յաւելաւ ինձ"։ Լ։ այս բանք՝ երևի թէ ցուցանեն վայելել նմա 'ի թագաւորութիւն այլևս ժամանակս ինչ, զոր կաղենոս ոչ է ընդ ամն իբրև տասն։ Վասայն սրչափ աւելի ամք տացին նաբուքոդոնոսորայ, նոյնչափ աւելի ամք պակասին բաղտասարայ. և ընդ հակառակն՝ որչափ նուազ ամք ընծային առաջնոյն, նոյնչափ բազմանան ամք երկրորդին։

Լ։ դառնալոյ նաբուքոդոնոսորայ 'ի թագաւորութիւն իւր մինչև 'ի մահն բաղտասարայ անցին ամք քսան և չորք. զոր պարտ է բաշխել 'ի մէջ երկուց՝ հաւուն և թուոին. զի չունիմք հիմն ինչ զայլ ոմն թագաւոր մուծանել ընդ մէջ նոցա, կամ անտերունչ առ ժամանակ մի թողուլ զաթոռն. և չիք ինչ ընդդիմութիւն ասել՝ թէ նաբուքոդոնոսոր զինի դարձի իւրոյ կեցեալ իցէ այլևս ամս իբրև տասն։ Լ։ այսպէս ամենայն ամք կենաց նորա լինին ինսուն և երկու. իսկ եթէ դիցուք առ նինուէիս լինել նորա ութսուն ամաց, լինի ինսուն և հինգ ամաց 'ի մեռանել իւրում՝ որ արդարև է հասակ մեծ, բայց ոչ այնչափ՝ յոր չժամանիցէն ոմանք նաև այժմ 'ի մերում ժամանակի։ Իսկ թէ կատարեալ ապաշխարութիւն 'ի

հնորհս ՝այ մեռեալ իցէ , և փրկութեամբ հասեալ , զի մարթի ուստեք ստուգել . միայն յառաջնոց անտի ՝որն օգոստինոս ՝ի Բոռղին ՃԷ . ՝որն դորոթէոս , ՝որն եպիփան , թէոդորետոս , և ՝ի յետնոց՝ լիրանոս , գիանեսիոս կարդուսեան , պերերիոս , և այլք բարեյոյս են ՝ի վերայ փրկութեան նորա . հիմնեալ ըստ իմիք ՝ի ՝որ գիրս , որ ցուցանէ զնա ՝ի վախճան ամենայնի զիջեալ ՝ի խորին խոնարհութեան . զի ինքնին ՝ի նախատինս անձին իւրոյ հրատարակէ առաջի ամենայն աշխարհի զպատուհասն զոր կրեաց ՝ի պատիժ ամբարտաւանութեան իւրոյ . և զայս արար ՝ի վերջին ամն կենաց իւրոց , յորժամ առաւելեալ էր մեծութիւն քան զառաջինն . * Լ,ու մեծութիւն առաւել յաւելաւ ինձ ։ Լ՝,ուրդ ես ասէ նաբուքոդոնոսոր օրհնեմ և առաւել բարձրացուցանեմ և փառաւոր առնեմ զարքայն երկնից . զի ամենայն գործք նորա Ճշմարիտ են , և շաւիղք նորա իրաւունք . և զամենեսին ոյք գնան ամբարտաւանութիւն՝ կարող է խոնարհեցուցանել ։ Լ՝,յսոքիկ նշան են հաստատուն ՝ի բարի . ոչ ևս գտանեմք և ոչ նշանախեց մի , թէ անդրէն դարձեալ իցէ ՝ի նախկին հպարտութիւն իւր ։

ԳԼ. Բ.

Բաղտասար արքայ Բաբելոնի։ Դանիել մարգարէ։

Յետ մահուան Նաբուքոդոնոսորայ՝ երոդոտոս դնէ յաթոռն բաբելոնի միմեանց զկնի՝ երկուս համանուն թագաւորս զաբնեգէս կամ զաբորոսաւորքադ կոչմամբ. և 'ի մէջ երկոցուն նոցա՝ որ էին հայր և որդի, դնէ զտիկինն Ներիգլիսոր կամ Նիգլիսար՝ կին միոյն, և մայր միւսոյն։ Ոչ էր ինձ փոյթ ասէ կաղենոս՝ զի զանուն եղմարովդաքայ և բաղտասարայ փոխէ 'ի զաբնէդ. նա՝ ընորհս ունէի նմա, զի նշանակէ ինձ զանուն նոցին։ Բայց յետոյ յայտնի հակառակի ածային գրոյն, որ հաստատէ թէ բաղտասար սպանաւ 'ի նմին գիշերի, յորում առաւ բաբելոն քաղաքն. իսկ նա պատմէ՝ թէ մարդասիրութիւն մեծ ցուցաւ նմա, առաքեցաւ 'ի կառավարութիւն երկրին կրմանայ։ Ոչ մին նման խօսի և աբիւդենոս՝ ՝ի յառաջ բերելոյ եւսեբեայ։ Բայլաւ և նա ինքն եւսեբիոս դնէ, թէ յետ Նաբուքոդոնոսորայ նստաւ իշխմարովդաք. և ապա եղբայր նորա բաղտասար։ Մոռղ զոր այլք այլազգագոյնս աւանդեն. բայց զամենեցուն զբանս պարտ է վերածել 'ի նախագրեալ տեսութիւն մեր ըստ նոր գրոց։ Բ. պա ասելի է թէ բաղտասար որդի եղմարովդաքայ յաջորդեաց անընդմիջաբար զնաբուքոդոնոսոր զկնի մահու նորա. որպէս եղմարովդաք յաջորդեալ էր առ կենդանութիւն նորա իրաւամբ արեան կամ գէթ որդեգրութեամբ. ոչ որ ոչինչ արգելս դատեմք. զի նոքա գիրն զոչ ոք դնէ ընդ մէջ. ապա բաղտասար եղև անմիջական յաջորդ նաբուքոդոնոսորայ։

Զ կենաց բաղտասարայ զայլ ինչ ոչ գիտեմք, բայց միայն զի անօրինեաց ընդդէմ ՝ի՝, և վաղահաս օրհասիւ մեռաւ։ Բաբելոն արքայանիստ քա-

զաք նորա էր պաշարեալ 'ի դարեհէ արքայէ մա-
բաց և պարսից։ Բաղտասար կամեցեալ զպաշա-
բեալսն պահել յուրախութեամբ, և ցուցանել թէ
գոյր տակաւին նորա առատութեան ամենայնի, արար
մեծահաց ընթրիս հազար առն 'ի մեծամեծաց իւ-
րոց. և բաց 'ի նոցանէ բազմեցոյց և զկանայս և
զհարէմս իւր։ Իբրև ընդ գինիս եմուտ և ջերմա-
ցաւ գլուխ նորա, հրամայեաց բերել զսպասս, զոր
նաբուքոդոնոսոր հայր նորա եհան 'ի տաճարէն
երուսաղէմի, բայց 'ի պահեստի ունէր գնոսա, և
ոչ երբեք էր պղծեալ յաշխարհային իրս 'ի կիր
արկանելով։ Ուրեալ եղեն սպասքն, և այն ինչ
ամենայն բազմականքն արք և կանայք ըմպէին նոքօք
գինի, և օրհնէին զաստուածս իւրեանց զձեռա-
գործս, ահա յանկարծ ինն երևեցան առաջի աչաց
արքայի մատունք ձեռին մարդոյ, որք գրէին նշա-
նագիրս ինչ 'ի վերայ որմոյ բռելոյ տաճարին յայն
տեղի, որ առաւել լուսաւորեալ էր 'ի լապտերաց.
էր յայտ թէ և այլք 'ի բազմականաց տեսեալ իցեն
զթաթ ձեռին 'ի գրելն. բայց գիրն մնաց յորմն
անդր երևելի ամենեցուն։ Խռադաւորն 'ի տեսա-
նել զայն՝ զարհուրեցաւ յանձն իւր. գոյն երեսաց
նորա շրջեցաւ, և յօդք 'ի միջոց նորա լուծանէին.
և ծունգք նորա ընդ միմեանս բաբախէին. և խոր-
հուրդք նորա խռովեցուցանէին զնա. և ոչինչ իմա-
նայր, այլ նշանակ մեծի թշուառութեան իմք լի-
նել գուշակէր։ Զաղալեցաց 'ի ձայն մեծ ածել
զամենայն մոգս և զքաղդեայս և զգէտս բաբելաց-
ւոց, խոստանալով թէ որ ոք ընթերցցի զգիրն
զայն և զմեկնութիւն նորա ցուցանիցէ նմա, ծիրա-
նիս զգեցցի, և մանեակ ոսկի 'ի պարանոց նորա.
և լիցի երրորդ իշխան 'ի թագաւորութեան նորա։
Այլ ոչ ոք 'ի նոցանէ կարող եղև զգիրն ընթեռ-
նուլ, և զմեկնութիւն նորա ցուցանել. ընդ այն և ս
առաւել խռովիր թագաւորն և ամենայն մեծա-
մեծք նորա ընդ նմա։

Զինչ յայնպիսի վարանական յուզմունս խորհրդ-
գոց կային ամենեքեան, տիկին մայր թագաւորին

Եւ ինքն եմուտ 'ի տաճար անդր խրախուսութեան, և պատ-
մելով առաջի նորա զդանիէլ, թէ որպէս 'ի ժա-
մանակի նաբուքոդոնոսորայ հօր նորա կացուցաւ
իշխան 'ի վերայ ամենայն գիտաց և մտաց և քաղ-
դէից, վասն զի ոգի առաւել գոյ առ 'ի նմա իմաս-
տութեան և հանճարոյ, և մեկնեալ զերազս, և զառակս
խորհնս։ Եւ՝ եթէ ինչ երևի՝ չունել բաղդատաւորայ ծա-
նօթութեան ինչ զիմաստութեան դանիէլի. այս անծա-
նօթութեան նորա հաստատեալ զայն՝ զոր 'ի վերայ անդր
ցուցաք, թէ նաբուքոդոնոսոր ընդ երկար թագաւ-
որեաց յետ դարձի իւրոյ յանապատէ։ Եւ՝ սա կաղ-
նոսի էին անցեալ երեսուն և երկու ամք, զի մեկ-
նեաց դանիէլ նաբուքոդոնոսորայ զերազ ծառոյն։
Եւ՝ աղաստասաբ յայնժամ կամ չէր դեռևս ծնեալ, և
կամ մանուկ էր մատաղ 'ի իրանձարուրս. վասն այ-
նորիկ ոչ կարէր յայնժամ ունել զայն ծանօթութի։
'Ի դառնալ նաբուքոդոնոսորայ յանթոռ իւր, դա-
նիէլ վարէր զպաշտօն իւր իբրև առաջին իշխան
թագաւորութեան, և իբրև այնպիսի չէր մարթ բաղ-
տասարայ չմանասէլ զնա. բայց իբրև իմաստուն
մեկնիչ երազոց և առակաց՝ ոչ էր նմա ծանուց-
եալ. զի յետ աճելոյ բաղտասարայ հասակաւ, մինչև
լինել բաւական իմանալոյ զայսպիսիս, չեզև
առիթ ինչ դանիէլի տալ յայսմ՝ մասին ծանօթու-
թիւն ինչ զանձնէ։ Եւ՝ չէ եթէ ունէր թագաւորն
զծանօթութի ինչ, սակայն 'ի խառնութեան և յա-
հագին երկիւղն անդ իւրում շփոթեալ մոռացաւ
զդանիէլ։ Եւ՝ յիւրև յիշեցոյց զնա մայր նորա, ետ
վաղվաղակի ածել զնա առաջի իւր. պատմեաց նմա
թէ որպէս իմաստունք իւր ոչ կարացին ընթեռ-
նուլ զգիրն և ցուցանել նմա զմեկնութիւն. կրկնեաց
յիշել և զպարգևսն զոր խոստացաւ այնմ՝ որ ցու-
ցանիցէ նմա։

Իսկ դանիէլ հրաժարեալ 'ի պարգևաց՝ ընթեր-
ցաւ զգիրն. և այս ինչ էր գրեալ. Մանէ, որ նշանա-
կէ թուեալ. Ռէկէղ, ծանրութեան կամ կշիռ. Փարէս,
բեկոր կամ հատուած։ Եւ՝ յայսպէս ընթերցեալ դա-
նիէլի զգիրն, և յաւելեալ զմեկնութի նշանակութիւն,

ասէ. Եւ՝ երբայ գիտէիր դու զանցս նաբուքոդոնոսորայ հօր քո, և ինչ ոչ շահեցար անտի. բարձրացուցեր ընդդէմ՝ այ երկնից զամբարտաւան խորհուրդս քո. և զսպասս տան նորա պղծեցեր դու, և մեծամեծք քո, և հարճք քո և կանայք քո արբիք գինի նորոքք. և զաստուածս քո զձեռագործս փառաւորեցեր. և զԾած երկնից՝ որոյ շունչ քո 'ի ձեռին նորա է՝ և ամենայն ճանապարհք քո, արհամարհեցեր։ Վասն այսորիկ 'ի նմանէ առաքեցաւ թաթ ձեռինն գրել զայդ. որոյ մեկնութիւն այս է. Մանէ. թուեաց Ծած զամս թագաւորութիւն քո, և եգիտ զն 'ի վախճան հասեալ է ըստ սահմանելոյն իւրոյ։ Փարէս. կշռեաց 'ի կշիռս, և եգիտ պակասեալ 'ի բարեաց։ Փարսէս. եհատ զթագաւորութիւն քո 'ի քէն, և ետ մարաց և պարսից։

Լուաւ արքայ զդատակնիքն մահապուշակ, այլ ոչ բարկացաւ 'ի վերայ դանիէլի. քանզի երկիւղն մեծ ոչ եթող տեղի բարկութեան. մեծացոյց զդանիէլ ըստ խոստման իւրում, որպէս վայել է առն թագաւորի պահել զխոստումն։ Միանգամայն գուցէ կարծէր թէ 'ի փառաւորել զդանիէլ, գտանիցէ շնորհս առաջի այնր նորա։ Լսակ դանիէլ թէպէտ 'ի սկզբան անդ հրաժարէցաւ յամենայնէ զոր խոստանայր թագաւորն, թերևս զի մի երևեսցի թէ մեծութիւն և շահասիրութիւն աղագաւ ընթեռնու և մեկնի. այլ զնին մեկնելոյ՝ 'ի բառնիլ այնպիսի կարծեաց, ընկալաւ ոչ վասն իւր, այլ վասն ժողովրդեան իւրոյ։ Լայց բաղտասար փառաւորելով զմարդարէ նն՝ ոչ զերծաւ 'ի դատակնիքոյն, որ 'ի նմին իսկ գիշերի կատարեցաւ 'ի վերայ նորա. զի առաւ բաբելոն, և ինքն սպանաւ 'ի նմին գիշերի, թագաւորեալ ամս իբրև չորեքտասան, եթէ տացուք նաբուքոդոնոսորայ ամս տասն յետ դառնալոյ նորա յանտառաց. և էր յայնժամ բաղտասար ըստ հաշուին կաղինոսի՝ ամաց իբրև երեսուն և երկուց։ Փերևս կարծէր ժամանել 'ի հասակ ծերութիւն նաբուքոդոնոսորայ հաւոյն իւրոյ, և յայնժամ ապաշխարել զմեղս մանկութեան։ Լայլ

ոչ ժամանեաց 'ի ծերութիւն, և ոչ ետ նշան ինչ դարձի և ապաշխարութեան. որով և եթող ուսումն մեծ ամենեցուն, զի գիտասցեն՝ եթէ ինորհ մեծ է, եթէ լիցի ումեք ժամանել 'ի ճշմարիտ ապաշխարութիւն. բայց որ մեղանչէ, միշտ կայ 'ի վտանգի ոչ ժամանելոյ առ այն։

ԳԼ. ԹՈ.

Դարեհ մար Եառ զԲաբելն։ Դանիել մարգարէ։

Երբև սպանաւ բաղտասար, դարեհ Թագաւորը եաց փոխանակ նորա. և դարձոյց 'ի մարս զԹագաւորութիւնն բաբելացւոց և քաղդէացւոց։ Կուսակիցք երոդոտոսի ասեն, թէ այս դարեհ է նա ինքն աստիագէս կամ աժդահակ մար. և այս՝ որպէս տեսցուք ստորև, քաղի յայտնապէս նաև 'ի բանից դանիելի։ Բայլ կուսակիցք քսենոփոնտեայ զայդ ոչ ընդունին. և ասեն թէ այս դարեհ է կիւաքսար։ Բայլ որք ի միջին շաւիղ գնան, ասեն թէ դարեհ մար յիշատակեալն 'ի դանիելէ է աստիագէսն երոդոտոսի, և կիւաքսարն քսենոփոնտեայ։ Իսկ ոմանք պնդեն թէ դարեհ ոչ էր ոչ մին և ոչ միւսն յերկուց աստի. և թէ բաբելոն 'ի ժամանակս բաղտասարայ ոչ պաշարեցաւ և ոչ առաւ պատերազմաւ. և թէ դարեհ էր այր սոսկական բնակեալ 'ի բաբելոն. ուր գտեալ իւր կուսակիցս, յարեաւ 'ի վերայ բաղտասարայ, սպան զնա, և կալաւ զԹագաւորութիւն նորա. և յետոյ կիւրոս առեալ զբաբելոն, կալաւ և զԹագաւորութիւն նորա։ Կէսք առ չբառնալոյ խսպառ յաշխարհէ զդարեհ նոյնացուցանեն զնա ընդ կիւրոսի, ասելով թէ կիւրոս կոչէր և դարեհ։ Ոմանք զանազանեն, բայց ասեն թէ ընդ կիւրոսի պաշարեաց զբա-

բելն. այլք թէ 'ի բաբելոն պաշարեցաւ 'ի կիւ-
բոսէ։ Պատճառ այսչափ դէմընդդէմ կարծեաց
այն է, զի հայելով 'ի նոր գիրս՝ սակայն ասել թէ
դարեհ էառ զբաբելոն. իսկ հայեցեալ յարտաքին
պատմութիւնս՝ կամին հաստատել թէ 'ի կիւրոսէ
առաւ բաբելոն։ Իսկ կաղինոս խմաստասիրէ օրի-
նակ զայս։

'Լսէ՝ յասելն այլոց, թէ ամենայն արտաքին
պատմաբանք, ընդ որս և եկեղեցական մատենա-
գիրք արտաքոյ նոր գրոց՝ կիւրոսի տան զառուն
բաբելոնի, 'ի վերին երեսս երևի ինչ մի հաւանել-
լի. այլ իրօք անհիմն տեսանի։ Յետինք առհասա-
րակ այնչափ ինչ ասեն, որչափ գտանեն յայլս որք
յառաջ քան զնոսա գրեցին.; ուստի այն ամենայն
բաղմութիւն 'ի վերջոյ ամփոփի յերկուս և եթ, 'ի
Հերոդոտոս, և 'ի քսենոփոն. զի ամենեքեան զնոսա
և եթ բերեն ասա 'ի վկայութիւն։ Այսուհետև որոյ ցու-
ցեալ թէ այս երկու առաջինք բազում ստութիւս
գրեցին, մարթ է ասել անխիղճ՝, թէ 'ի մէջ այն-
չափ ստութեաց իւրեանց գնելի էցէ և այն թէ
կիւրոս էցէ պաշարեալ և առեալ զբաբելոն։

Երկրորդ՝ երոդոտոս և քսենոփոն ամենևին
ոչ էտ երևեցուցանեն զանձինս պաշարման բաբե-
լոնի։ Երոդոտոս ասէ, թէ կիւրոս դարձոյց զէփ-
րատ գետ 'ի խրամն, զոր ետ բանալ նեգիլիսոր
դշխոյն յատակպէս վասն այնորիկ, և ապա անցոյց
զզօրս իւր ընդ եփրատ սակաւաջուր. և ընդ այն
Ճանապարհ՝ յեղակարծումն եհաս 'ի վերայ բաբե-
լոնի, մինչ ամենայն քաղաքն էր 'ի զինախաղու-
թիս և յայլ խրախութիս ցնծալոց պարապեալ։
Իսկ քսենոփոն դնէ, թէ լայնութի եփրատայ առ
բաբելոնիւ է իբր քառորդ մի աշխարհագրական
մղոնի, և խորութի ջուրց նոցա իբր երկու մար-
դաչափ. և ամենեքեան հաստատեն թէ արագընթ-
աց է յոյժ։ Որ ներհունք 'ի ջրագրական արա-
ուեստի ունին ասել, թէ անհնար է այդ ջրաբաշ-
խութի այդպիսի պարագայիւք։ Քսենոփոն ցու-
ցանէ չգիտել թէ ո՞վ էր յայնժամ թագաւոր 'ի

բաբելոն. զի թէպէտ ասէ թէ մեռաւ թագաւորն, բայց ոչ նշանակէ ուրեք զանուն թագաւորին։ Լրոդոտոս յուցանէ թէ կիւրոսի չեղև այնչափ ինչ փոյթ՝ առնուլ զբաբելոն։ Վասզի պատմէ թէ 'ի խաղալ նորա 'ի վերայ բաբելոնի, յանցանել ընդ կինդոս գետ, հեղձաւ երիվար մի նորա 'ի գետ անդր. իսկ նա 'ի հանել զվրէժ կորստեան երիվարին՝ ետ բաժանել զգետն զայն յերեքհարիւր և յութսուն առուս. և այնպէս յայն գործ դժընդակ աշխատ արարեալ զբովանդակ բանակն իւր՝ յամեցոյց զպաշարումն ցյաջորդ պատրաստութիւն բանակի։ Զի հարկ լինել՝ ասէ կաղինոս՝ քաջահրամուտ զօրավար, և փորձ զինուորական իրաց առ 'ի չհաւատալ թէ թագաւոր պատերազմական, զորօրինակ էր կիւրոս. յայդչափ անմտութիւն եկեալ իցէ։ Այնպուսնակ և այն թէ 'ի բաբելոն գոյր պատրաստեալ պաշար բաւական վասն քսանամեան պաշարման՝ չէ հաւատալի այնմ, որ գիտիցէ թէ զինչ իցէ քաղաք պաշարեալ, և քաղաք այնչափ մարդաշատ։ Պաբէն և սամարիա, և երուսաղէմ 'ի ժամանակս թագաւորաց իսրեանց հզօրք՝ ունէին պատրաստեալ ՅԺամանակին պաշար վասն բազմամեան պաշարման, սակայն յառաջ քան զլրանալ երից ամաց հասին 'ի սով յետին, մինչև առ սովուն բռնութիւն ուտել զմարմինս որդւոց։ Այնապէս ոչ կարծեմ թէ ոք 'ի քաջ զօրավարաց հաւատ ընծայեսցէ այնմ, զոր ասէ քսենոփոն, թէ կիւրոս կարգեալ զբանակ զօրու իւրոյ շուրջ զբաբելոն քաղաքաւ, և զնեալ զարձրութիւն և զամրութիւն պարսպայ նորա, որոշեաց 'ի բաց դարձուցանել անտի զբանակ իւր, այլ ոչ արար. քանզի երկուք ոմանք փախստականք 'ի քաղաքէ անտի պատմեցին նմա, թէ բաբելոնացիք խմացեալ՝ թէ կիւրոս խորհի 'ի բաց դարձուցանել զզօրս 'ի պաշարմանէ անտի, միաբանեցան զհետ պնդիլ և հարկանել զնոսա 'ի յետուստ. և եւ՝ թէ արհամարհէին զբանակ նորա իբրև սակաւաձեռն. նմին իրի փոխեաց կիւրոս զխորհուրդ իւր. առ փոքր ինչ հե-

ռացուցեալ զշօրս իւր՝ զերկու թևս տարածեալ երկայնեաց, որպէս զի առաւել բաղմութիւն երևեսցին։ Այսպէս պատմութիւն հարկ էր հաւատալ, թէ կիւրոս թագաւոր հանձարեալ՝ անձամբ իցէ գնացեալ 'ի պաշարումն քաղաքի, առանց ունելոյ յառաջագոյն զաւղեկութիւն ինչ զհանդամանաց նորա։ Այլ որ աներկիւղ 'ի ձակատ հանդիսանայր ընդդէմ ամենայն մեծամեծ բանակաց, իցէ զանգիտեալ դիմամարտիլ 'ի դաշտ արձակ ընդդէմ պահապան զօրաց բաբելոն քաղաքի։ Այլ որպէս թէ ոչ գիտէր թէ զիարդ բառնին պաշարմունք լռելեայն առանց խմանալոյ պաշարելոց. և թէ զի՞նչ առնեն զօրք՝ յորժամ կամին առանց ինչ ինքսու իւրեանց 'ի բաց դառնալ 'ի պաշարմանէ։ Իր ոք խոհական մտօք քննեսցէ զայս ամենայն, ունի տեսանել թէ չեն պատմութիւնք ճշմարտութիւն, այլ մտացածին գիւաք գրողին. 'ի սոյն կարդաւ կաղինոս մարթ է դասել և զայս մտացածին պաշարումն կիւրոսի։ Պատմաբան յաձախ ըմբռնեալ 'ի ստութիւն, ոչ ևս է վկայ բաւական նաև ճշմարտութեան, յորժամ ինքն միայն պատմէ զայն։

Այրրորդ՝ դարեհ զորմէ է բան մեր, կոչեցաւ և աստիագէս, և էր որդի արտաշիսի արքայի. ապա ոչ է կիւրոս։ Թագաւորն՝ զորոյ զաթոռ յաջորդեաց կիւրոս, ըստ գրոյն՝ էր աստիագէս. * Այլ թագաւորն աստիագէս յաւելաւ առ հարս իւր. և առ կիւրոս պարսիկ զթագաւորութիւն նորա ॥. դան. ը֊. 1։ Այլ դարձեալ ըստ գրոյն՝ նա զոր յաջորդեաց կիւրոս, էր դարեհ. * Այլ դանիէլ յաջողէր 'ի թագաւորութեն դարեհի՝ և կիւրոսի պարսկի ॥. կամ ըստ լատ. * Այլ դանիէլ եկաց մինչև 'ի թագաւորութիւն դարեհի, և 'ի թագաւորութիւն կիւրոսի պարսկի ॥. դան. Ը֊. 28. և երկրորդ ամ դարեհի եղև վերջին ամ գերութեանն։ Այսպա դարեհ և աստիագէս են երկու անուանք միոյ և եւթ անձին։ Յայսմ միաբանի 'ոբ գիրն ընդ երոդոտոսի. վասն որոյ անմարթ է զհետ

երթալ քսենոփոնտեայ յայսմ մասին, որպէս կամին ոմանք, և ուրանալ թէ դարեհ մոր իցէ և աստիա-գէս, իբր զի առ քսենոփոնտեայ կոչի կիւրոսար։ Այս ոչ միայն է բռնաբարել զոր գիրս 'ի ընթերս արտաքնոյ, այլև 'ի նոսին իսկ արտաքին պատմիչս մերժել զայնոսիկ՝ որք ըստ խիզ համաձայնին նմա, և ընտրել զայնս որք անհամաձայն են։ Արտաշէս՝ որպէս յառաջագոյն ասացաք, հաստատեայ զաթոռ թագաւորութեան իւրոյ 'ի շուշան կամ 'ի սիսիս քաղաք պարսից. բայց ինքն էր մոր յազգէ մարաց, և մեռեալ 'ի մարս։ Դարեհ ծնաւ 'ի պարսս. վասն այնորիկ դանիէլ ոչ ասէ զնա մոր հայրենեաց, այլ արեամբ. * Յամին առաջնորդի դարեհի որդւոյ արշաւրայ կամ արտաշիսի 'ի զաւակէ մարաց, որ թագաւորեաց 'ի թագաւորութեան քաղդէացւոց ॥. դան. Թ. 1։ Արդ՝ եթէ դարեհ էր որդի մոր հօր, և նախորդ կիւրոսի, որպէս ունիմք 'ի ծգ գիրս. և կիւրոս յաջորդ նորա և որդի կամբիւսայ պարսկի, որպէս ասէ արտաքին պատմութիւնն. ապա դարեհ ոչ է կիւրոս։

Վասն որոյ չորրորդ՝ ասելի է թէ դարեհ ոչ էր այլ սոսկական եկեալ յաշխարհէ մարաց բնակել 'ի բաբելոն. այլ էր թագաւոր մարաց. և պաշարեալ էառ զբաբելոն։ Օ այս մասն չունիմք 'ի դանիէլէ. զի նա այսչափ և եթէ ասէ. * Այլ 'ի նմին գիշերի սպանաւ բաղտասար արքայ քաղդէացւոց, և դարեհ արքայ ('ի լատինն, և դարեհ մոր) ա՛ռ զթագաւորութիւն ॥. դան. Է. 30. 31։ Արթ էր այսմ լինել առանց պատերազմի 'ի ձեռն դաշնակցեալ ապստամբաց. և ըստ իրաց ինչ մարթ էր և ասել, թէ արշաւիր կամ արտաշէս հայր նորա ոչ էր նա ինքն արտաշէս արքայ. բայց այս քաղի յայլոց մարգարէից։ Վասնզի ընդդիմութիւն բերէ մեզ ասէլն երոդոտոսի, թէ կիւրոս էր որդի մանդանեայ դստեր աստիագեայ՝ ծնեալ 'ի կամբիւսեայ պարսկէ, որում մանդանէ տուեալ էր 'ի կնութիւն։ Դրեթէ զնոյն ասէ և քսենոփոն, եթէ ոչ՝ զի նախանձախնդիր դոլով փառաց կիւրոսի,

հաստատէ թէ, կամ թիւսն էր թագաւոր պարսից։ Իւրքա պատմեն և այլ ինչ ինչ վասն կիւրոսի, այլ զի չեն հակառակ ոճային գրոց, և ոչ ուղիղ տրամաբանութիւն, թէ ճշմարիտ իցեն կամ սուտ, ոչ ընդդիմանամ ասել կաղինոս. բայց ինդեմ թէ զառուսն բաբելոնի ըստ ոճային գրոց՝ դարեհի պարտ է տալ, և ոչ կիւրոսի։

Լրեմիա մարգարէ 'ի ճ. Լ ծ. գլուխս իւրոց մարգարէութեց ստորագրէ զկործանումն բաբելոնի. և կրկնէ բազում անգամ, թէ այն է վրէժխնդրութիւն տէն վասն տաճարի իւրոյ, զորոյ ինքն սպասս պղծեաց բաղտասար. որպէս տեսար 'ի վերս մնդր։ Լսեսպատմէ որպէս ակամատես զկործանումն պարսպաց նորա, և զյարձակումն թշնամեաց. * Հակատեցարուք շուրջ զաբելոնիս ամենայն աղեղնաւորք. ձիգ դիք 'ի նա, և մի խնայիք 'ի նետս ձեր, զի տէն մեղաւ։։։ Բնկան մահարձանքք. կործանեցան պարիսպք նորա. զի վրէժխնդրութիւն յայ է. խնդրեցէք վրէժս 'ի դմանէ։։։ Յարձակեսցին 'ի վերայ, և ըմբռնեսցիս բաբելոն և ոչ իմասցիս. դատեր և ըմբռնեցար. զի տէն ընդդէմ դարձաք ॥։ Վաստրագրէ զաբարաչար կոտորած որ լինիցի 'ի բաբելոն, և յամենայն երկրի նորա. պատմէ զցամաքիլ ջուրց նորա, և զմահ թագաւորին, և զսպառումն զաւակաց նորա առ 'ի չմնալ վերմանկեան կամ հիման, 'ի վերայ որոյ բարձրասցի վերստին տոհմ նորա։ Լթէ հարցցուք ցերեմիա, ոչ արասցէ զայս ամենայն։ Յայ պատասխանի. * Օարթոյց որ զոգի թագաւորին մարաց, զի բարկութիւն նորա 'ի վերայ բաբելոնի, և ջնջեսցէ զնա. զի վրէժխնդրութիւն տէն է, վրէժխնդրութիւն տաճարի նորա ॥։ Լբ եթէ յաւելցուք հարցանել, եթէ ընդ զորս մարաց գայցէն և այլ զորք օգնականք։ Յայ պատասխանի՝ այս։ Բռնիք նշան 'ի վերայ երկրիդ՝ փող հարիք ընդ ազգս ամենայն, հրաւիրեցէք 'ի վերայ գորա գունդս, պատուիրք տուք յինէն այրարատեան թագաւորութեն և տաքանազէան գնդին։ այսինքն էն հայք։

* Կանգնեցէ՛ք զդովաւ նեռտակալս ։ ուր լատինն ընթեռնու , * Թուեցէ՛ք ՝ի վերայ դորա զթափսար ։ որ են արաբացիք ։ Լ. Յլ թէ ով եղեցի գլուխս այնր զորու , ասէ . Հրաւիրեցէ՛ք . . . զթագաւորն մանրաց , զզօրավարս նորա ։ Յայսչափ ազգաց միջի ոչ յիշատակէ անուն պարսից ։

Լաւ Եսայի ՝ի ԺԳ . Լ ԺԴ . գլուխս իւրոց մարգարէութեաց , ուր կանխագուշակեալ սաստագրէ զպաշարումն և զկոտորած բաբելոնի , ասէ ՝ի բերանոյ նոցն , * Լ. հաւասիկ յարուցանեմ ՝ի վերայ ձեր (լատ . ՝ի վերայ նոցա) զմարս , որ ոչինչ հաճարին զարծաթ և զոսկի ։ Լա ինքն Եսայի ՝ի մարգարէանալ իւրում վասն ազատութեան Եբրայական գերութեան՝ խօսի վասն կիւրոսի յիշելով զանուն նորա փառաւք . այլ ՝ի խօսիլ իւրում վասն պաշարման բաբելոնի ոչ ևս յիշատակէ զանուն նորա ։ Ել Ժխտեմ ասէ կաղինոս , թէ գտան ընդ դարեհի և ՝ի պարսից բազում մեծամեծք , որք հաւատարիմ էին առ նա , և յաւետ յելամայ քաղաքէ . զի և Եսայի ԽԵ . 2 . ասէ ՝ի դիմաց բաբելոնի , * Լ՝ վերայ իմ հասին ելամացիք . և հրեշտակք պարսից գան ՝ի վերայ իմ ։ Լ՝ այց նոքա էին հրաւտակք գարեհի գրեալք ՝ի գունդս զօրացն մարաց , և ոչ զօրք կիւրոսի ածեալք և զօրավարեալք ՝ի նմանէ ։ Յայսմ ամենայնէ իմաստասիրէ կաղինոս , թէ դարեհ՝ որ յաջորդեաց զբաղտասար , էր թագաւոր , և ոչ այր սոսկական . և կալաւ զթագաւորութիւն պատերազմաւ , և ոչ դաշնակցութեամբ ասորտամբաց ։ Լ՝ւ կիւրոս զմեծ բանակն պարսից ըստ արտաքին պատմութեաց՝ դարձոյց յայլ կողմն, այսինքն ՝ի լիւդիա , և պաշարեալ զսարդի քաղաք , կալաւ զկրեսոս . ուստի ոչ գտաւ նա ՝ի պաշարման անդ բաբելոնի ։ Լ՝ւ առաւել հաստատի այս այնու , զի ՝ի վեցերորդ գլուխս դանիէլի յետ առման բաբելոնի տեսանէ զգարեհ , և ոչ զկիւրոս հրամայել անդ , անօրինել ըստ իւրոց հաճոյից , բաժանել զգաւառս , կարգել նախարարս , կացուցանել ՝ի վերայ նոցա հրամանատարս ։ Լ՝այս ամենայն են

նշանք գերագոյն և անկախ իշխանութեան. այն զի՝ կամեցեալ դարձեալ թեթևանալ յաշխատութենէ մնասութեան թագաւորութեանն, տեսանեմք զի զբեռն զայն ծանրագոյնք խորհի դնել՝ի վերայ դանիէլի. * Օ՛ի արքայ աշխատ ինչ մի լիցի. . . կացոյց զնա (զդանիէլ) 'ի վերայ ամենայն արքայութեան իւրոյ ॥. գլ. Ը. 2. Եւ կ. ուր լատինն ընթեռնու, * խորհեր կացուցանել ॥. որ առաւել համաձայն թուի հետագայ իրաց, զոր ստորև ունիմք տեսանել։ Այլ ոչ է կիւրոս որ հրամայէ. նա՝ երևի թէ կիւրոս ոչ էր խաղաղութիւն ընդ դարեհի. ապա թէ ոչ՝ դարեհ զգործակալութեան թագաւորութենն յանձն առնէր յաւէտ թուին իւրում կիւրոսի, քան թէ առն օտարի։

Այլ ես զհետ գայ, թէ նոքա որք միացուցանեն զկիւրոս ընդ դարեհի յառուն բաբելոնի, հաւանակին ոչ միայն որ գրոց՝ որպէս ցուցաւ ցայսվայր, այլև արտաքին պատմութեց. վասն զի քսենոփոն ցուցանէ զկիւրոս յայտնի բաժանեալ 'ի հաւէն իւրմէ 'ի դարեհէ. և երոդոտոս ցուցանէ զհաւն գերեալ 'ի կիւրոսէ՝ յառաջ քան զխաղալ կիւրոսի 'ի պաշարումն բաբելոնի։ Այլ թէ ես ասեմ՝ կաղենոս՝ յօժարէի միաբանել զբան այս ընդ սխալանայ մարդոյ, և զհաւաստին ընդ երկբայականին, ընտրէի ասել՝ թէ դարեհ յամին երկրորդի թագաւորելոյ իւրոյ 'ի բաբելոն՝ յաշխատութենց և 'ի բնական ախտակրութէ մեռաւ բնական մահուամբ, և ոչ բռնականաւ. զոր երևի ցուցանել դանիէլ յասել անդ. * Այլ թագաւորն աստիագէս յաւելաւառ հարս իւր. և առ կիւրոս պարսիկ զթագաւորութի նորա ॥. գլ. ԺԲ։ Այսէի և ես, թէ մարք 'ի բաբելոն ոչ յօժարէին նուաճել ընդ ձեռամբ պարսից. ուստի և կացուցին ինքեանց գլուխ և առաջնորդ, և ելին 'ի պաշտպանել զազատութի իւրեանց. և այս էր համանքնական ազգի տիրապետողն՝ ոչ կամիլ նուաճել ընդ ձեռամբ ազգի, յորոյ վերայ ինքն տիրէր. և վասն գոլոյ այնր գլխոյ սահմանաւորեայ կամ իբր առաջարեայ, ներելի լինէր քսենոֆ

փոն 'ի չգիտելն զանուն նորա։ Լսել, թէ կիւրոս խաղաց պաշարել զբաբելոն բռնագատեալ առնուլ զնա պատերազմաւ. զի նմա անկանելք իրաւամբ ժառանգութեամբ գոլով նորա թոռն դարեհի։ Եւ այսպէս շատացուցանելի որչափ ինչ քաւական է զարտաքին պատմութիւնն, տալով կիւրոսի զպաշարումն և զառումն բաբելոնի, և ոչինչ ասելի հակառակ ճշմարտին գրոց, նա՝ նպաստաւոր ինձ ունելի զերեմիա մարգարէ, որ 'ի լրումն եօթանասուն ամաց գերութեանն, որք կատարեցան յամին երկրորդի դարեհի, մարգարէանայ նոր թշուառութիւն 'ի վերայ քաբելացւոց և 'ի վերայ թագաւորի նոցա. " Եւ 'ի կատարել ամացն եօթանասնից, խնդրեցից զվրէժս 'ի թագաւորէն բաբելացւոց, և յազգէն յայմմանէ ասէ տէր՝ ըստ անօրէնութեանց նոցա ‖. երեմ. իէ. 12։

Լայլ թողեալ զանյայտ ծանօթութիւնս արտաքնոց, յորոց ոչ երբեք առնումք լոյս առ կանոնական գիրս, դարձցուք անդրէն 'ի պատմութիւն ոգեգրոց, որ շարունակի 'ի գիրս դանիէլի. գլ. ը։

Գլ. ԺԱ.

Դանիէլ երկրորդ անգամ անկանի 'ի փոքր առիւծոց և ողջ անարատ ելանէ անտի։

Դարեհ էր ամաց վեթասուն և երկուց՝ յորժամ առ զբաբելոն. որ ըստ հասակին կարէր լինել որդի եսթերայ՝ ասէ կաղինոս. այլ չունելով սովորութիւն ճշմարտին գրոյն յանուանէ յիշատակել զմարս՝ զանց առնէ և դանիէլ զնոսաւ։ Յայսմանէ յայտ է թէ դարեհ էր ծնեալ ուրեմն ամաք զկնի գերութեանն յեբենիայ արքայի յուդայ։ Հաճոյ թուեցաւ նմա կացուցանել, և կացոյց հարիւր և

քան նախարարս 'ի թագաւորութենն, զոր բաժանեաց 'ի նոյնչափ ատեանս կամ 'ի գաւառս. և 'ի վերայ նոցա ամենեցուն կարգեաց ատեան մի եռապետական երից գլխաւոր իշխանաց. յայս ատեան դիմէին ամենայն նախարարք յամենայն իրս ծանուցանել իրք առ բարձրագոյն ատեան. զի թագաւորն ոչ ևս կարէր ինքնին աշխատ լինել 'ի մնստակարարութիւն իրաց թագաւորութենն։ Այլ յերից անտի էր դանիէլ. և չէն ինչ զարմանք, եթէ այնպէս վաղվաղակի յայն պատիւ բարձրացոյց զնա դարեհ. քանզի յառաջագոյն 'իսկ ծանուցեալ էր նմա իմաստութիւն և հանճար դանիէլի։ Այսուամենայնիւ ոչ միայն զայն պատիւ ետ նմա, այլև խորհէր իւր փոխանորդ կացուցանել զնա, 'ի նա առպաստան առնելով զամենայն իրս արքայութեան իւրոյ. զոր արարեալ իսկ էր, եթէ դիպուած մի չէր յամենեցուցեալ, և մինչ 'թագաւորին չէր խափանեալ զգործադրութիւն։

Այսչափ սէր դարեհի առ դանիէլ՝ հարկանէր զայս ոչ միայն նախարարաց, այլև նոցին իսկ իշխանակից ընկերաց, սակս գէր 'ի վերոյ ունելոյ զնա արքայի քան զնոսա. * Այս դանիէլ (ասէ գիրն) առաւել էր քան զնոսա. զի հոգի առաւել գոյր 'ի նմա ॥. Ղ. 3։ Այսուամենայնիւ այնորիկ նախանձէին յոյժ ընդ նա, ոչ կարելով տանիլ՝ զի երբայեցի մի 'ի գերելոց անտի լիցի գերագոյն հրամանատար 'ի թագաւորութեան իւրեանց. խնդրէին յանցանս ինչ 'ի նա առ 'ի կորուսանել. այլ զի դանիէլ այնչափ իմաստութիւն և սրբութիւն վարէր յամենայն գնացս իւր, զի և զրպարտութեան իմիք չտայր բնաւ պատճառս, ուստի և այլ ինչ ոչ կարէին գտանել 'ի նա, բայց զի զպաշտօն նորա որ առ ՅԱԾ իւր՝ 'ի յանցանս դարձուսցեն նմա։ Յետանէին զնա զօրհանապազ երիցս յաւուրն կալ անխափան յաղօթս առ ՅԱԾ. զայն հաստատեցին առնուլ պատճառս ամբաստանութեան. այլ յայտնի զայնմանէ ամբաստանել չէին կարող, քանզի որպէս յարտաշիսէ, նոյնպէս և 'ի դարեհէ թոյլ տուեալ էր երբայեցւոց

պահել զօրէնս իւրեանց։ Զ ամն այնորիկ խորհեցան նենգութիւն կորզել յարքայէ պատուէր ընդհանուր՝ հանդերձ ծանր պատժով՝ արգելուլ ամենեցուն առհասարակ զաւուրս երեսուն խնդրել զինչ և իցէ խնդրուածս յումմէ և իցէ՝ ի մարդոյ կամ՝ յաստուածոյ՝ բաց յարքայէ միայնոյ. և որ անցանիցէ զհրամանաւն՝ անկցի ՝ի գուբ առիւծուց։ Այս հաստատութիւն իւրեանց իբրև վճիռ ընդհանուր ժողովոյ ամենայն զօրավարաց, և նախարարաց, իշխանաց և կուսակալաց մարաց և պարսից՝ մատուցին արքայի հաստատել արքունի հաստատութիւն՝ իւրով անուամբ և կնքով։

Արքայն փառասէր և դիւրահաւան բանից նախարարաց՝ առանց քննելոյ զանմիտ վճիռն զայն, և առանց մտադիր լինելոյ չար հետևանաց՝ որ անտի հանդերձեալ էին ծագել, ետ գրել ըստ այնմ հրովարտակ, և հրատարակել։ Ուստ դանիել զհրամանն, և ոչինչ խռովեցաւ. կարէր կալ յաղօթս ՝ի ծածուկ ՝ի սրտի իւրում, կամ ՝ի մութն գիշերոյ, սակայն ոչ փոխեաց զկարգ իւր. այլ ըստ առաջնոյ սովորութեան՝ յերիս ժամանակս յաւուր դնէր ծունր, և կայր յաղօթս և գոհանայր առաջի ՆՈՅ իւրոյ ՝ի վերնատան անդ իւրում. և ոչինչ զանգիտելով թէ տեսանիցեն զնա ՝ի մերձակայ տանեաց՝ բաց ունէր միշտ զպատուհանս որք հայէին ընդդէմ երուսաղէմի։ Տեսին զնա թշնամիք նորա, և վաղվաղակի ամբաստան եղեն զնմանէ առաջքայ. տրամեցաւ արքայ յոյժ վասն դանիելի, և թէպէտ ջանահնար եղև ամենայն զօրութեամբ ազատեցուցանել զնա՝ երկարելով զդատաստանն մինչև ցերեկոյ. այլ ՝ի պնդել ասոսաց, թէ հրամանի մարաց և պարսից և ամենայն վճռոյ հաստատութիւն՝ զոր արքայ հաստատիցէ, ոչ է օրէն շրջել. ՝ի վերջոյ զինքեան արքայ բռնութեամբ նոցա. և ետ հրամանն արկանել զդանիել ՝ի գուբն առիւծուց։ Ասէ՝ ՝ի տալ զանիրաւ հրամանն, դարձաւ առ դանիել, և յոգւոյ ելանելով ասաց. երթ, այլ ՝ածն զոր պաշտես յաձախ, նա փրկեսցէ զքեզ։ Այս բան

արքայի էր 'ի սիրոյ և 'ի յուսոյ. այլ յելից իրացն ցուցաւ լինել որպէս մարգարէութի։

Իբրև արկին զդանիէլ 'ի գուբ անդը, եդին վէմ 'ի վերայ գրոյն. զոր թագաւորն ինքնին կնքեաց իւրով մատանեաւ, և մատանեօք մեծամեծացն, զի մի այլազգ ինչ իրք դիպեսցին դանիէլի 'ի ձեռաց մարդկան։ Այսմանէ երևի թէ առաւել կաս կածէր դարեհ 'ի չարութէ մարդկան, քան 'ի գազանութէ առիւծուց։ Զուստացաւ թէ փակէսցէ ՝ծծ զպատառօղ ժանիս առիւծուց. այլ ոչ յուսացաւ թէ կամիցի նոյնօրինակ կապել զչար կամս մարդկան։ Ինդգէմ առիւծուց ապաւինեցաւ 'ի նախախնամութէնն ՝ծծայնոյ. ընդդէմ մարդկան եդ զիշխանութէ իւր, կնքելով իւրով մատանեաւ ըզբերան գրոյն։ Զայս գնաց 'ի տուն իւր ընկղմեալ 'ի խորին տրտմութէ, ննջեաց առանց ընթրեաց. և քուն հատաւ յաչաց նորա։ Յու 'ի վաղիւ անդր 'ի ծագել առաւօտու՝ յարուցեալ ընթացաւ փութապէս 'ի գուբ անդր, ուր վարէր զնա կաթողինն իդձ սրտի նորա. և թախծագին ձայնիւ աղաղակեաց և ասէ, դանիէլ ծառայ ՝ծոյ կենդանւոյ. ՝ծծն քո զոր գու յաճախ պաշտէիր, եթէ կարաց՝ փրկել զքեզ 'ի բերանոյ առիւծուցդ։ Յետ պատասխանի դանիէլ 'ի գրոյ անտի. այս ՝որ իմ արքայ յաւիտեան կեաց, գիտասջիր զի ՝ծծն իմ առաքեաց զՀրեշտակ իւր, և եխից զբերանս առիւծուցս. զի առաջի նորա գտայ ուղիղ, և առաջի քո արքայ վնաս ինչ ոչ արարի։

Լացաւ դարեհ ցնծութէ՝, զի եգիտ կենդանի զսիրելին իւր, ետ հանել զնա վաղվաղակի 'ի գրոյ անտի. հայէր 'ի նա և զննէր խնամով, կայթէր ցնծութէ՝ 'ի տեսանել զնա անվնաս ամենևին։ Զայս սքանչելիք արիութէն մեծ ազգեցին 'ի սիրտ թագաւորին, նոյնհետայն արձակեաց զինուորս 'ի տունս այնոցիկ, որք 'ի նախընթաց աւուր եղեն գլուխ չարախօսաց զդանիէլ։ Զծան վաղվաղակի կանամիքք և որդւովք հանդերձ, և ընկեցան 'ի գուբ անդր, ուր մինչև եին հասեալ 'ի յատակս,

կալան զնոսա առիւծքն, և զամենայն ոսկերս նոցա մանրեցին։ Յայնժամ դարեհ արքայ գրեաց հրովարտակ, և առաքեաց ընդ ամենայն իշխանութիւն թագաւորութեան իւրոյ, հրամայելով ամենեցուն երկնչել և դողալ յայ դանիէլի. զի նա է ՇԾ կենդանի, յաւիտենական. և արքայութիւն նորա անեղծանելի, և տէրութիւն նորա միտնջենաւոր. նա է փրկիչ, ամենակալ, և առնէ նշանս յերկինս և յերկրի։

Թագաւորութիւն դարեհի 'ի բաբելոն ոչ երկարեաց աւելի քան զամս երկուս. զոր ունիմք ի մատեանսիրել 'ի բանից անտի հրեշտակին, որ յամենայն ութերորդի յամի երկրորդի թագաւորութեան դարեհի՝ ասաց, թէ այն է եօթանասներորդամ գերութեան. պաՀար. Ա. 12. յորում և կիւրոս արձակեաց զերբայեցիս յազատութիւն։ Յայսմանէ իմանամք ասէ կաղինոս, թէ դարեհ զորմէ խօսի անդ զաքարիա՝ էր դարեհ մար, և ոչ դարեհ որդի վիշտասպեայ. վասն զի առ սովաւ ոչ էս գոյր գերութիւն։ ԼՀ վասն վախճանին դարեհի զինչ և ասացին այլք, դանիէլ ցուցանէ թէ դարեհ ոչ մեռաւ բռնական մահուամբ. և թէ կիւրոս ոչ յափշտակեաց, այլ իբրև օրինաւոր ժառանգ զկնի մահուան հաւուն յաջորդեաց զաթոռ թագաւորութեան մարաց և բաբելոնի, կամ քաղդէացւոց, յասէն. * ԼՀ թագաւորն աստիագէս յաւելաւ առ հարս իւր. և առ կիւրոս պարսիկ զթագաւորութիւն նորա ‖. դան. ԺԲ։ Լ.յս ըստ կաղինոսի եղև յամի արարչութեան աշխարհի 3647։ Յետ մահուան դարեհի եկեաց դանիէլ այլ ևս գէթ ամն երիս. քանզի գտանեմք թէ յամին երրորդի կիւրոսի արքայի եղեն առ նա յայտնութիւք 'ի տեսլ։ Լսկ յետ այնորիկ ոչ ևս գտանի ուրեք այլ ծանօթութիւն կամ յիշատակ զնմանէ. ուստի երևի թէ ընդ այն ժամանակս վախճանեաց զցանկալի կեանս իւր՝ լի աւուրբք ամաց իբրև ինքնասուն և վեցից։

Դանիէլ էր այր ընտրեալի՝ տեսլեամբ գեղեցիկ, և ամենայն մնասամբք մարմնոյ բարեյօդ և

բարեձև. բանք նորա քաջագր. և գնացք նազելի։ Ի դասս իմաստնոց անզուգական, չունելով առ իւրով ժամանակօք զոք հաւասար ինքեան յայլ ազգս մեծայն օտար թագաւորութիւն։ Հանձար և խորհրդութիւն նորա գերազանց. որով միշտ վարեցաւ ի բարձր արքունի պաշտօնատարութիւն իւրում. հինգ թագաւորք փոխեցան առ նովաւ, բայց այն ամենայն փոփոխութիւնք թագաւորաց ոչ փոխեցին զվինակ և զաստիճան նորա. զի առ ամենեքումբք եղև միշտ առաջին իշխան։ Այլ առաւել քան զայսոսիկ՝ փայլեր երկնային սրբութիւն նորա. ուստի ոչ սէր և խնամք թագաւորաց որ առ նա՝ զօրեցին երբէք զսուտ իմն ունայնասիրութիւն ազդել ի նա. և ոչ բարձրութիւն իշխանութենն ի մնափառութիւն ամբառնալ զնա։ Ի մէջ շուայտութեանց՝ միշտ ժուժկալ և պահեցող։ Ի լոյծ և ի խենդ արքունիս՝ միշտ ողջախոհ, տարաւ ի գերեզման անարատ զկուսութիւն իւր։ Եւ ակնառութիւն մարդկան, ոչ երկիւղ թագաւորաց, և ոչ բարկութիւն ժողովրդեան զօրեցին երբէք խոտանել զնա ի ջատագովելոյ զծայրին ճշմարտութիւն։ Ախանձելի եղև վասն առաքինութեաց իւրոց, այլ հաստատութիւն և արիութիւն նորա յաղթանակեցին ի վերայ ամենայն նախանձոտաց նորա։ Երկիցս ընկեցեալ ի ժանիս առիւծուց, ոչ մեռաւ. բայց ոչ որ աքանչելեօք արդել զմահ ի նմանէ՝ ոչ վասն այնորիկ պակաս արար ի գլխոյ նորա զկրկին պտակ մարգարիտասուն։ Լուրատեաց մահաբեր գուշակութիւնք զդիպակասիրտ թագաւորս, բայց այնու ոչ անկաւ ի շնորհաց նոցա. զի ի նախանձայուզութիւն նորա ոչ երբէք երևեցաւ կերպարան յանդգնութիւն, այլ ի յանդգիմանել անդ միշտ պահեաց յարգութիւն մեծ, խոնարհութիւն խորին, բարեսիրութիւն անկեղծ։ Երդոյց աշխարհի՝ թէ հնար է միացուցանել զկատարեալ քաղաքավարութիւն ընդ կատարեալ սրբութիւն. և թէ նաև ի մէջ մեծամեծ արքունեաց կարէն ծաղկիլ սէք մեծամեծք։ Իսկ թէ որչափ սիրելի էր ոյ, ունիմք ի միտ առնուլ յայնչափ

բարձրագոյն յայտնութեաց, որով լուսաւորէր զնա. այլ առաւել 'ի տեսանել թէ կամեցեալ ՝՝ յանուանէ նշանակել առ Եզեկիէլի զանձինս առաւել զբաւորս 'ի ցածուցանել զբարկութիւն իւր՝ ընդ նոցի և ընդ յոքայ յիշէ և զգանիել. որ յայնժամ էր հասեալ 'ի վախճան. այլ տակաւին էր յերկրի, և մանկահասակ, որում կային առաջի դեռ ևս ամք յոլովք առ յառաջադէմն լինելոյ 'ի կատարելութիւս և յաւելուլ արդիւնս առաջի ՝՝՝ ։ Զումք գրեն զնմանէ այլ ևս զանազան իրս սքանչելիս. այլ չէն մեր կամք երկբայական և անստոյգ գովութիւնք նսեմացուցանել զայր այսչափ լուսափայլ, որոյ բազում են գովութիւնք հաւաստիք յանձային գիրս ։

ԳԻՐՔ ՀՈՐԵՆՏԱՍԱՆԵՐՈՐԴ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԳՐՈՑՆ ԵԶՐԱՍԱՑ ԵՒ ՆԵՄԵՍԱՑ

ԳԼ. Ա.

Ազատումն Եբրայեցւոց 'ի գերութենէ Բաբելոնի հրամանաւ Կիւրոսի. և հիմնարկութեան տաճարի նոցա։

Իսկ եւ երկերիւր ամօք յառաջ քան զԹագաւորել Կիւրոսի 'ի Բաբելոն, անուն նորա յիշատակի 'ի գիրս մարգարէից իբրև ինքնակալ Թագաւորի. յոյր ձեռն հանդերձեալ էր ազատել զժողովուրդն Եբրայեցւոց 'ի գերութենէ. և տալ ձեռնարկել անդրէն 'ի շինութիւն քաղաքին և տաճարին Երուսաղէմի. ըստ այմմ, Եսայ. Խբ. 28. * Որ ասեմ ցկիւրոս, Թէ իմաստնասջիր և զամենայն կամս իմ արասցես. որ ասեմ ցԵրուսաղէմ, Թէ շինեսջիր. և զտաճարն իմ հաստատեցից. (լատ. և ցտաճարն, Թէ հիմնեսջիր)։ և Խէ. 1. և դնէ. * Այսպէս ասէ տէր ամենայն իմ ցկիւրոս, զորոյ կալայ զաջոյ ձեռանէ նորա հնազանդեցուցանել առաջի նորա զազգս. և զզօրութիւն Թագաւորաց խորտակեցից. և բացից առաջի նորա զդրունս. և քաղաքք մի փակեսցին։ Այս երԹայց առաջի քո. զլերինս հարԹեցից, զդրունս պղնձիս խորտակեցից, և զնիգս երկաԹիս փշրեցից։ Այս տայց քեզ զգանձս խաւարինս, և զաւանդս անէրևոյԹս բա-

ցից քեզ. զի ծանիցես թէ ես եմ Տէր ամ, որ կո-
չեցի զանուն քո՝ Ամ իսրայէլի։ Վասն յակոբայ
ծառայի իմոյ, և իսրայէլի ընտրելոյ ինոյ, ես կո-
չեցից քեզ զանուն քո՝ և ընկալայց զքեզ. . . .
Այս յարուցի զնա արդարութիւն թագաւոր. և ամե-
նայն ճանապարհք նորա ուղիղ են. նա շինեսցէ
զքաղաքն իմ, և զգերութիւն ժողովրդեան իմոյ
դարձուսցէ. ոչ կաշառօք և ոչ պատարագօք՝ ասէ
Տէր զօրութեաց։

Այս մարգարէութիւն եսայեայ, մարթ է թէ
հրէայք որք էին 'ի պարսս, ցուցեալ իցեն կիւ-
րոսի 'ի տիս մանկութեան նորա։ Վասն որոյ կամ
զօրութիւն այսր մարգարէութեան, և կամ վասն այլ
ինչ յայտնագոյն հրամանի ոչ յայտնելոյ նմա 'ի
ձեռն դանիէլի, կամ այլուստ մարգարէի, յառաջ-
նուստ ամի թագաւորութեան իւրոյ 'ի բաբելոն՝ ետ
կիւրոս հրատարակել յամենայն թագաւորութեան
իւրում 'ի ձայն փողոյ, և հանրական հրովարտակ
կաւ, թէ Տէր Աստուծ երկնից՝ որ ետ նմա զամենայն
թագաւորութիւնս յոսս տիրէր, հրամայեաց նմա
շինել զտուն իւր յերուսաղէմ հրէաստանի։ Աստ-
ուծ որ քեզ իցէ 'ի ժողովրդենէն ոչ, երթիցէ յերուսա-
ղէմ. և շինեսցէ զտուն տան ոչ իսրայէլի։ Աստ-
ուծն որ պաշտի յերուսաղէմ, նա է միայն տէր և ճշմարիտ
Աստուծ։ Իսկ այլք որք ոչ ելանիցեն անդր՝ օգնեսցեն
շինութեան տաճարին ոսկւով և արծաթով, ձիթով
և խաշամբք, և ամենայն կարասեօք և կազմա-
ծովք, որպէս պատուիրեսցի նոցա. բաց 'ի պար-
գևաց, զոր իւրաքանչիւր ինքնայօրդոր յօժարեսցի
նուիրել տան։ Այս էր բան հրովարտակի նորա։ Այ-
հրամայեաց միթրիդատայ գանձաւորի իւրոյ բերել
զամենայն սպասս և զկահ տաճարի տան, զոր էառ
Նաբուքոդոնոսոր յերուսաղէմ, և ետ 'ի պահ 'ի
տուն աստուածոց իւրոց. և համարով տալ ցաղ-
մանասար իշխան յուդայ. և ամենայն սպասք որք
տուան հրէից՝ մեծ և փոքր, էին 5469. (ըստ լատ.
4500.) ոսկեղէնք և արծաթեղէնք։

Զ. ա այս կոչ կիւրոսի արքայի միաբանեցան ե-

լին յԵրուսաղէմ արք 42360. 'ի յուդայէ և յիս-
րայէլէ. և ընդ նոսա 7337. ծառայք. 240. սաղ-
մնասացք և նուագածուք. ձիք 736. ուղտք 435.
ջորիք 247. էշք 6720։ Իսկ ոսկի և արծաթ և այլ
կարասիք որք տուան նոցա յարքունուստ՝ ոչ սակաւ
ինչ էր. որ և էս յաւելաւ 'ի յօժարակամ նուիրաց
այնոցիկ, որոց գոլով 'ի ժողովրդենէն ոչ՝ մնացին
յԵրաքանչիւր տեղիս, գտեալ յաջողութիւն 'ի պան-
դըխտութեանն՝ ուր ստացան զեօղս և ագարակս
և տունս։ Այսպէս և 'ի քաղդէացւոց անտի յո-
լովք, որոց թէպէտ չէր ընկալեալ զհրէութիւն,
բայց Ճանաչէին և պաշտէին զՀմարիստ Ճշն իս-
րայէլի, բազում մեծամեծ պարգևօք ձեռնտու է-
ղէն նոցա։

Հասեալ որդւոցն իսրայէլի 'ի հրէաստան, ցրուե-
ցան յԵրաքանչիւր տեղիս նախնի բնակութիւն ի-
բեանց, 'ի կարգի դնել զագարակս և զկալուածս և
զամենայն զառանձնական իրողութիւս իւրեանց.
որպէս զի յետոյ կարող լինիցին առատագոյն նպաս-
տել 'ի պատրաստութիւն շինութեանն։ Զուսի
թէ այս էր խորհուրդ զօրաբաբելի. որ քաջ գի-
տէր թէ ժողովուրդն ոչ տայ՝ եթէ չունիցի։ Այլ
ոչ տացի արօտ խաշանց ընուլ զատինս, զուր ջանայ
հովիւն կանթն առատ հանել 'ի նոցանէ։ Յորժամ
հարուստ է ժողովուրդն, դիւրին է իշխանին քա-
ղել գանձս 'ի նոցանէ. այլ յորժամ չքաւորին,
մարթ է ընուլ զքանտս պարտապանօք, այլ ոչ
զարքունի արիւն գանձիւք։ Զայս գիտելով զօրա-
բաբելի՝ եւ ժողովրդեան պարապ՝ միտ դնել առան-
ձին իրողութեանն իւրեանց. որ և 'ի դէպ յաջողեցաւ։
Զանազի յեօթնեւորդ ամենան ամենեքեան ժողո-
վեցան յԵրուսաղէմ. և իւրաքանչիւր ըստ իւրում
կարի արկեալ 'ի գանձանակ տաճարին 'ի նպաստա-
ւորութիւն գործոյն, հաւաքեցաւ ոսկի 60000. դիդ-
բաքմայ. արծաթ 5000. մնաս, և քահանայական
պատմուճան 100։

Զ գումարիլ որդւոցն իսրայէլի անդրէն 'ի հայ-
բենի աշխարհ իւրեանց, և 'ի հետազօտել զազգա-

համար անձնիւր ցեղից նոցա, բազումք ոչ կարաց-
ցին ցուցանել և հաւաստել զտոհմ իւրեանց լի-
նել 'ի զաւակէ իսրայէլի. յայր սակս 'ի բաց որոշե-
ցան յազգահամարէ իսրայէլացւոց։ Այսպէս և
ոմանք յորդւոց քահանայից չունելով զգիր ազգա-
տոհմի իւրեանց՝ չեղէն կարող հաւաստել գոլ 'ի
զաւակէ քահանայից. Թէպէտ վասն կանանց նոցա
յայտնի էր լինել 'ի քահանայական զարմէ, սակայն
և այնպէս որոշեցին և զնոսա 'ի քահանայութէ և
յամենայն քահանայական պաշտամանց. մինչև յա-
ռիցէ քահանայապետ, որոյ լուսաւորեալ յայ՝ յայտ-
նեսցէ զՇնմարտութիւն։ Յայտմանէ յայտնի է, թէ
քանի հոգոյութի պիտոյ է ամենայն տանուտեարց
և միաբանութեաց 'ի պահպանութի գրուածոց իւր-
եանց. քանզի դէպ լինի երբեմն երկմտանալոյ
թերթի արժէլ գանձ բազում։

Այս յամենայն եօթներորդի, այն է ամիսն
Թշրին, երկրորդ յեկեղեցական ամի երբայեցւոց,
որդիքն իսրայէլի յիւրաքանչիւր տեղեաց ժողովե-
ցան ամենեքեան յերուսաղէմ իբրև զմի այր. և
յեսու յոսեդեկեան և զօրաբաբէլ սաղաթիէլեան
ուղղեցին սեղան զոհից 'ի տեղւոջ առաջնոյն. և
սկսան այնուհետև մատուցանել ողջակէզս և զոհս.
և Թէպէտ նեղէին զնոսա ազգք որք շուրջ զնոքօք,
սակայն նոքա ոչ երբէք կասեցուցին զմատուցմունս
զոհից և ողջակիզաց. ոչ զշաբաթս, ոչ զամնագը-
լուխս, ոչ զտօնս տաղաւարաց, և ոչ զտօնս
տարեկանաց զպատուիրեալս նոցա 'ի մովսիսէ։ Կար-
գեցին գործավարս, և վարձս նոցա, և օրըստօ-
րեայ ռոճիկ. սակ արկին և ընդ տիւրացիս և ընդ
սիդոնացիս բերել մայր փայտս 'ի Լիբանանէ ընդ
ծով մինչև 'ի յոպպէ։

Այս իբրև պատրաստեցին զամենայն, յամենայն
երկրորդի ամին երկրորդի հասանելոյ նոցա յերու-
սաղէմ, եդին զաւաջին վիմն 'ի հիմն տաճարին,
և սկսան շինել. յեսու յոսեդեկեան և որդիքն
նորա և եղբարք տքնէին անխոնջ 'ի վերայ գործոյ
տանն նոր։ Այ կատարիլ հիմանն արարին տօն մե-

ծահանդէս ցնծութիւն փողովք և ծնծղայիւք, և երգովք սաղմոսաց օրհնէին զնա. որպէս կարդեաց դաւիթ թագաւոր իսրայէլի։ Ինդ էր տեսանել նորանշան այլևայլութիւն կրից 'ի ժողովրդեանն. զի երիտասարդք, որոց չէր տեսեալ զառաջին տաճարն, խրախացեալ ընդ հաստատառոյց հիմնարկութիւնն՝ բարձրացուցանէին զձայնս ցնծալից ուրախութիւն։ Իսկ ծերք որք վաթսուն և չորս ամաք յառաջ տեսեալ էին զհոյակապ հրաշակերտ շինուած առաջնոյ տաճարին, և այժմ լոկ զհիմունս տեսանէին, որք չերևէին բաւական այնպիսի մեծակառոյց շինուածոյ, լային մեծակական ձայնիւ. որով աղաղակ ողբոց, և բարբառ ցնծութեան, և փողոց հնչմունք իբր խառնաձայն ինն շփոթ աղաղակ ամբոխից լսելի լինէին 'ի հեռաւոր տեղիս։ Սակայն այն այլատարազ բարբառք ուրախութեան և տրտմութեան 'ի միոյ սկզբնէ ունէին զծագումն. և էին նշանակ յորդեռանդն ողւոյ, և ոչ նախանձաւորութեան փառաց ոչն այլ։

Այն ձայն աղաղակի լուեալ սամարացւոց, այսինքն այնց իսրայէլացւոց՝ զորս ասորդան թագաւոր ասորւոց տարեալ բնակեցուցեալ էր 'ի սամարիա, եկին ստուգել զիրսն. և տեսեալ զի ելեալքն 'ի բաբելոնէ հիմն արկին տաճարին, խնդրեցին զի և ինքեանք 'ի միասին շինեսցեն. քանզի ասէին թէ ինքեանք զնոյն ոճն պաշտեն. և վկայէին թէ յորմէ հետէ ածան անդր՝ զոհեն զոհս ոչ։ զոր ոչ կարէին ասել այլ սամարացիք՝ այսինքն օտար գաղթականք, որք յառաջագոյն առաքեցան անդր 'ի սաղմանասարայ։ Լաւ տարեալ, հուսում, բաղտեմ, սամայի են անուանք երբայականք, և ոչ քաղդէականք կամ պարսկականք. բայց թշնամիք էին ցեղից յուդայ և բենիամենի. զի գոլով յառաջագոյն նախնեաց նոցա ընդ իշխանութիւն սեպհական թագաւորաց իւրեանց, յորժամ գարձան ընդդէն յերկիր իւրեանց, բռնագատեցան լինել՝ 'ի ներքոյ թագաւորացն յուդայ։ Այն այսորիկ եղբաս որ յայլ տեղիս անխտիր անուանէ զերբայեցիս

իսրայէլացի, և յուդայեան, ասա որոշէ զցեղն յուդայի և բենիամենի՝ ոչ և աս հասարակաբար իսրայէլացի կոչելով զնոսա. առ խորշելոյ յատելի անուանէ իսրայէլացւոց որք 'ի սամարիա բնակէին։ Ուստի և զօրաբաբէլ և յեսու յովսեդեկեանց 'ի մերժելն զնոսա 'ի գործակցութէ շինութեան տաճարին, ոչ ասեն թէ չկացեն նոքա յիսրայէլէ. այլ զի կիւրոս հրամայեաց նոցա և եթ շինել, զորս նա ինքն դարձոյց. * Որք մերձէն (ասեն) շինեսցուք զտուն ես ՝ի այ իսրայէլի, որպէս և հրամայեաց մեզ կիւրոս թագաւոր պարսից։

Զայս ասացին, քանզի գիտէին զնենգաւոր խորհուրդ նոցա. որք ընդ պատրուակաւ օգնականութեան՝ խնդրէին խափանել զգործն. զոր և վաղվաղակի երևեցուցին, զամենայն հնարս հնարելով արգելուլ զյառաջադիմութեան գործոյն։ Պաշտաւնօք որացան զխորհրդականս կիւրոսի. և 'ի մեռանել նորա՝ զխորհրդականս ասարսոյերու, իմա կամբիւսեայ ըստ արտաքին պատմութեաց, յաջորդին կիւրոսի. բայց ինչ ոչ շահեցան. միայն գործ շինութեան տաճարին դադարեցաւ։ Քանզի որպէս երևի՝ հրէայք կասկածելով թէ թշնամիք իւրեանց յայտնի մարտիւ 'ի վերայ յարիցեն, խորհուրդ կալան նախ ձեռնարկել 'ի շինութեան տանց և պարսպաց քաղաքին 'ի բնակութեան ինքեանց, և 'ի պաշտպանութեան քաղաքին և տաճարին յերեսաց արշաւանաց թշնամեաց. և ապա միաբան բուռն հարկանիցեն զշինութէ տաճարին.

Լսափանի շինուածքն պատճարին և երուսաղէմ քաղաքի ընդ ամս երիսդասան վինելս ցնափաւորելս վշտաւոր դարեհի։ Օ՚բրաբաբել ընդունելս 'ի նմանէ հրաման՝ անդրէն յեռանարկնի 'ի շինուածս։

'Ի մեռանիլ ասարսոյերու կամ կամբիւսայ, յաջորդէ զտեղի նորա արտաշէս առաջին, յարտաքին պատմչաց ոմանց կոչեցեալ որոպաստոս կամ երբաւազդ մոգ, որ կեղծեալ ձևացաւ մերդէս եղբայրն կամբիւսայ արքայի, և սոզոսկեալ եմուտ 'ի տեղի նորա։ Լ՚ռ սա գրեցին սամարացիք գիր ամբասանութեան լի ամենայն խորամանկ չարութիւն, ստոքագրութիւն հռէու�մայ, բաղդիմայ, և սամսայի գրչի իբր յանուն համբրէն բնակչաց եղելոց յայս կոյս եփրատայ. որք նախանձաւոր օգտանիր բարեաց թագաւորութեան երևեցուցեալ զանձինս, ազգ արարին նմա թէ հրկայք եկեալք 'ի բաբելոնէ՝ նորոգէն և շինեն զապստամբ և զդառնացօղ երուսաղէմ. որ թէ միանգամ շինեսցի, և պարիսպք նորա կանգնեսցին, այնուհետև հարկս նմա ոչ հարկանեն. և իշխանութիւն նորա և ճանապարհ 'ի կողմանս ասորւոց և քանանացւոց խսպառ հատանի. զոր ոչ ոք հաւատարիմ արքայի՝ անցաւ հանդուրժէ տեսանել։ Լ՚ռ առ հաստատութիւն նենգաւոր բանսարկութիւն իւրեանց, խնդրեն քննել ըզգիրս յիշատակարանաց նախնի թագաւորաց. ուր գտցի նշանակեալ, թէ քաղաքն այն ապստամբ է և դառնացուցիչ ամենայն շրջակայ թագաւորութեաց. և 'ի սկզբանէ աղբիւր խռովութեանց և դժբնդակ պատերազմաց. վասն այնորիկ սպառ սպառուաւերեալ անապատ եղև. և արդ մի լեցի նորոգիլ, զի մի ևս աշխատ արասցէ զշրջակայ ազգս։

Լ՚այս գիր արագ ներդրօրդեաց 'ի կապակցոտ

միտս Թագաւորին. որոյ խաբէութիւն կալեալ զԹագաւորութիւնն՝ կայր յերկիւղի հանապազ։ Զոմն ո-
րոյ առանց ընդ բանս ինչ ածելոյ՝ վաղվաղանկի ա-
բար պատասխանի, թէ ինքն իսկ հասու եղև ՃՇՄարտութեան ամբաստանութեանն, եթէ երուսաղէմ
եղև միշտ քաղաք սպստամբ խուսակայոյզ մարտամ-
բոխ. և Թագաւորք նորա հզօրք բռնաւորք. որք
ձգեցին զտերութիւն իւրեանց մինչև ցեփրատ. որ
եղև 'ի ժամանակս դաւթի և սողոմոնի։ Զուստի և
հրաման տայ նոցա երթալ արգելուլ խափանել
զգործ նոցա, զի մի շինեսցի քաղաքն. (ուր լատինն
յաւելու. * մինչև թերևս ելցէ այլ հրաման յե-
բեսայ իմոց ||.) և մի ներել նոցա և մի թուլացու-
ցանել զհարկս, զի մի երբէք բազմասցին, և զո-
բասցի վտանգ ընդդէմ թագաւորական աթոռոյ
նորա։

Օ այս հրովարտակ արտաշէսի իբրև առին հրեայքն՝ բաղաղիմ, և սամսայի գրիչ, փութանակի հասին յերուսաղէմ մեծաւ զօրութիւն և այրուձիով. և խափանեցին սաստիկ սպառնալեօք 'ի շինելոյ զքաղաքն, ընդ նմին և զտաճարն. թէպէտ հրովարտակ արտաշէսի զշինութիւն քաղաքին և եթ արգելլոյր, և ոչ զտաճարին. քանզի պաշտօնեայքն չարախորհուրդք՝ յամբաստանութեան անդ խորհանկուէք զքաղաքն միայն յիշէին, լռեալ զտաճարէն. քաջ գիտելով թէ ոչ շինուած տաճարին, այլ ամրութիւն քաղաքին կարէր կասկած 'ի սիրտ թագաւորին արկանել։ Բայց այս է թշուառութիւն քաղաքաց և ժողովրդոց՝ որք հեռի են յարքունեաց. զի պաշտօնեայք ըստ կամի մեկնեն և յեղաշրջեն զհրամանս թագաւորաց. և նոքա հեռի գոլով՝ ոչ կարեն անմիջապէս յունկն թագաւորին հասուցանել զգանգատ իւրեանց։ Այլ այսպէս խափանեալ դատարկացաւ գործ տաճարի մինչև յերուսաղէմ, մինչև յերկրորդ ամ դարեհի, ընդ ամ երկոտասան։

Բայց 'ի սուղ ժամանակի եբարձ ոճ զարգելս, բառնալով յաշխարհէ զՀալածօղս հրեից. զի ար-

տաչէս սպանաւ 'ի նմին ամի յորում բռնակալեաց զաթոռ թագաւորութեն. և հաւատամ, բաւական, և սամսայի գրիչ, որք էին գլուխք թշնամեաց, զկնի երկուց ամաց ոչ ևս գտանէին 'ի քաղաքական գործս, եթէ մեռեալ իցեն, և եթէ մերկացեալ յամենայն քաղաքական պաշտամանց։ Զկնի արտաշէսի թագաւորեաց դարեհ, որ յարտաքնոց ոմանց կոչի վշտասպ, փոխանակ ասելոյ՝ դարեհ վշտասպայ կամ վշտասպեան, այսինքն որդի վշտասպեայ։

Լուսի թէ ընդ այն ժամանակս եղև զօրաբաբելի ընդ այլոց երկուց պատանեաց ատենաբանել առաջի դարեհի, և մեծամեծացն պարսից և մարաց, թէ զի՞նչ ինչ 'ի վեր քան զամենայն իցէ զօրաւոր ընդ տիեզերս. որպէս Ճոխագոյն գրի 'ի ⲅ. էջ. գլ. ⲓ. Ի ⲓ։ Վանգի պատմէ և յովսեպոս 'ի ⲅ. գլխ. նոխնեաց. գլ. 3. թէ զօրաբաբէլ յառաջագոյն արարեալ էր սերտ բարեկամութիւն ընդ դարեհի, մինչ սոսկական ոմն էր նա։ Վասն օրոյ 'ի թագաւորել նորա՝ գնաց վաղվաղակի առ նա, գտանել հնարս վասն յառաջատութեան գործոյ շինութեան տաճարին և քաղաքին. և գտեալ շնորհս առաջի նորա՝ կարգեցաւ սենեկապան անձնապահ թագաւորին ընդ այլոց երկուց պատանեաց։ Լուս յառաջնում ամի թագաւորութեան իւրոյ՝ արար դարեհ խրախութիւն մեծ իշխանաց իւրոց և ամենայն մեծամեծաց մարաց պարսից, և տեղակալաց կողմանց հնդկաց և եթովպացւոց, ընդ ամենայն հարիւր և քսան և եօթն նախարարաց։ Արքն կերան և արբին և յագեցան, դարեհ եմուտ 'ի սենեակ իւր, և ելեալ 'ի գահոյս իւր՝ 'ի քուն եղև։ Յայնժամ երեք պատանիք, որք 'ի ներքս 'ի սենեկի սպասս կալեալ պահ ունէին նմա, խօսել սկսան ընդ միմեանս, և ասեն. եկայք իւրաքանչիւր ասասցուք բան մի, և որ ասասցէ խիստուն և առաւել զօրաւոր քան զընկեր իւր, մեծամեծ պարգևս և պատիւս տացէ նմա դարեհ. մինչև յերկրորդ աթոռ նորա նստուցանել զնա, և ազգական իւր

անուանել, այլովքն հանդերձ։ Լու գրեաց առաջինն՝ թէ յաղթող և զօրաւոր է քան զամենայն գինի. երկրորդն՝ թէ յաղթող և զօրաւոր է քան զամենայն թագաւոր. իսկ երրորդն որ նա ինքն է զօրաբաբէլ, թէ յաղթող և զօրաւոր են քան զամենայն՝ կանայք. և քան զամենայն յաղթէ ճշմարտութիւն. զոր ծալեալ և կնքեալ՝ եդին ընդ մնարս թագաւորին։

Օ այս փոքր մի այլազգ պատմէ յովսեպոս 'ի նախայիշատակեալ տեղւոջ։ Օ՝ի ասէ թէ իբրև փոքր մի ինչ եաց թագաւորն՝ զարթեաւ, և ոչ ևս կարելով 'ի քուն լինել, սկսաւ զանիւք անկանիլ ընդ նոսա. և յայն խօսակցութիւն արկ նոցա առաջի զերիս նախագրեալ խնդիրս, խոստանալով զնոյն մեծամեծ պարգևսն և զպատիւս այնմ որ ասասցէ առաւել զօրաւոր և իմաստուն քանս. և անդրէն 'ի քուն եմուտ։ Յայնժամ գրեալ նոցա զքանս իւրեանց և կնքեալ եդին ընդ մնարիւք նորա. այսչափ ինչ յովսեպոս։

Իբրև զարթեաւ թագաւորն, ետուն նմա զգիրսն. զոր ընթերցեալ նորա՝ հրամայեաց կոչել զամենայն մեծամեծս պարսից և մարաց. և նստեալ 'ի տեղւոջ յայգորելի, կարդացին զգիրսն առաջի ամենեցուն. և արար թագաւորն կոչել զպատանիսն 'ի մէկնել զքանս իւրեանց։ Առաջինն խօսեցաւ վասն գինւոյ, յայտ արարեալ զզանազան ներգործութիւնս նորա, զոր ներգործէ 'ի մարդիկ՝ 'ի պէսպէս այլայլութիւս երևելիս յեղաշրջելով զնոսա։ Երկրորդն՝ բարձրայոյզ զկարողուի և զզրնութիւն թագաւորի, յորմէ դողան ամենեքեան, զի 'ի նմանէ կախեալ կայ կեանք և մահ ժողովրդեան։ Իսկ երրորդն՝ որ էր զօրաբաբէլ, խօսեցաւ վասն զօրութիւն կանանց, ցուցեալ զկանայս զօրաւորագոյն քան զգինի և քան զթագաւոր. իբր զի յաղթեն և գիտեն գերել զթագաւորս. զոր և արդեամբ հաւաստէ. յիշելով զաւրէնն զդուստր հարձի նորին դարեհի. որոյ նստեալ ընդ աջմէ թագաւորին առնոյր զթազն 'ի գլխոյ նորա, և դներ յիւր

զլուխ. և ածէր ապտակ թագաւորին, և նա ոչինչ ցասնոյր, այլ բացեալ զբերան իւր հայէր յերեսս նորա. եթէ ծիծաղէր, ծիծաղէր և թագաւորն յերեսս նորա. և եթէ տրտմէր, ողբէր զնա թագաւորն, մինչև սթափեցուսցէ զնա։ Այս դարձուցեալ զբանս առ Ճշմարտութիւն, եցոյց գեղեցիկ և զօրաւոր իրաւաբանութիւն եթէ առաւել քան զամենայն մեծ է յաղթող և զօրաւոր Ճշմարտութիւն. ամենայն երկիր 'ի նա ապաւինի. և երկինք օրհնեն զնա. և ամենայն արարածք՝ շարժին և դողան առաջի նորա. ամենայն ինչ որ յերկրի է՝ անցաւոր է և կորստական. իսկ Ճշմարտութիւն կայ մնայ, և զօրաւոր է յաւիտեանս. և կենդանի է. և ունի իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից. և է օրհնեալ նոր ածՃշմարտութիւն։ Այս ասացեալ լռեաց. և ամենայն ժողովն մեծաձայն աղաղակեցին, և ասեն. մեծ է Ճշմարտութիւն և յաղթող է և զօրաւոր։

Յայնժամ թագաւորն հրաման ետ նմա խնդրել զինչ և կամիցի, խոստանալով տալ նմա առաւել քան զգրեալսն 'ի նոցանէ. քանզի հաճեցաւ յոյժ ընդ բանս իմաստութեան նորա։ Իսկ զօրաբաբել թողեալ 'ի բաց զամենայն մնոտի մեծութիւն՝ յիշեցոյց թագաւորին զուխտն, զոր ուխտեաց ՅՀ՝ վասն շինութեան երուսաղէմի, և վասն դարձուցանելոյ զմեզ սպասս տաճարին զմնացեալս 'ի կիւրոսէ 'ի բաբելոն. և աղաչէ կատարել զուխտն իւր զայն. քան զոր մեծագոյն շնորհս կարէր առնել նմա։ Այս ուխտ դարեհի յիշատակէ և յովսեփոս՝ յասէլն. թէ դարեհ մինչդեռ սոսկական ոմն էր, ուխտեաց ՅՀ, զի թէ զթագաւորութիւն պարսից 'ի ձեռս բերիցէ, զինչ որ ինչ 'ի նոր սպասուց մնացեալ իցէ 'ի բաբելոն, դարձուսցէ անդրէն յերուսաղէմ։ Յայնժամ յարուցեալ դարեհ՝ համբուրեաց զզօրաբաբել. և ետ նմա հրովարտակ առ ամենայն գաւառապետս, և տեղակալս, և նախարարս, զի յուղարկեսցեն զնա, և զորս ընդ նմա ելանել և շինել զերուսաղէմ. միանգամայն և պատուիրէ նոցա ոչ

միայն չնեղել զՀրէայս վասն Հարկաց, այլև ձեռնտու լինել նոցա 'ի շինութիւն, փոյթ կալեալ զի կարևոր փայտք իջուսցին 'ի լիբանանէ յերուսաղէմ. և գեօղք և այլ տեղիք, զորս եղովմայեցիք առին 'ի նոցանէ, անդրէն դարձուսցին, և այլն։ Օ՜այս հրովարտակ առեալ զօրաբաբելի 'ի թագաւորէն՝ եկ յերեսաց նորա. և ամբարձեալ զձեռս յերկինս ընդ կողմն երուսաղէմի՝ օրհնեաց զնո՝ զթագաւոր երկնից. և եկեալ 'ի բաբելոն՝ պատմեաց զամենայն եղբարց իւրոց. և միաբան օրհնեցին զնոյն հարցն իւրեանց, զի շնորհեաց նոցա ընդարձակութիւն և արար թողութիւն։

Դարձ արարեալ զօրաբաբելի ուրախութիւն մեծաւ հանդերձ այլովք 'ի հրէից, որք ինքնայորդոր յօժարեցան ելանել ընդ նմա, և հասեալ յաջողութիւն յերուսաղէմ, վաղվաղակի ձեռն 'ի գործ էարկ ընդ յեսուեայ յովսեդեկեան 'ի շինուած տաճարին ամենայն փութոյ սնդուութեամբ. ունելով միաբանեալ ընդ ինքեանս զանգէ և զզաբբիա մարգարէս, որք օգնէին նոցա խրախուսելով և վառելով զժողովուրդն 'ի կողմանէ այ 'ի փոյթ կատարելոյ զշինուած տաճարի նորա։ Իր յայնժամ կուսակալ սամարիոյ Թաթանա ոմն՝ որ յանուանէն երևի գոլ եբրայեցի, այլ ոչ 'ի քաջալուսա խմորոյ անտի յաչաղկոտաց և թշնամեաց իւրոցն հայրենեաց, զի ձշմարտութիւն վարէր զաղաչոտն ծառայութեն թագաւորի իւրոյ, այլ ոչ նեղէր զժողովուրդն. ոչ հարստահարէր և ոչ զրկէր զոք, և ոչ բռնանայր 'ի վերայ սահմանակցաց։ Այս իմացեալ զի հրէայք անդրէն բուռն հարին զշինուածոյ, որ ընդ հակառակութիւն էր, եկն անձամբ յերուսաղէմ. և ընդ նմա սխսին իշխան կողմանցն ասորւոց (եթէ չիցէ նոյն ինքն թաթանա այլև այլ անուամբ անուանեալ) և սադրաբուզան, և ծառայակիցք նորա. ոչ առ 'ի խափանել զգործն, այլ 'ի տեղեկանալ, և անկեղծաբար ծանուցանել թագաւորին. զի չև էր ծանուցեալ նոցա զանցս՝ որ անցին ընդ զօրաբաբէլ և ընդ դարեհ արքայ։

Լրդ՝ եկեալ սոցա յերուսաղէմ, առին գրով զանուանս առաջնորդաց շինուածոցն, և առաքեցին առ Թագաւորն Հանդերձ տեղեկացուցիչ թղթով. յորում ծանուցանէին Թագաւորին, թէ երթեալ նոցա յերկիրն Հրէաստանի 'ի քաղաքն Երուսաղէմ տեսանել այսք զառունն զոր շինէին ՝ն՝ այ մեծի, գտին՝ զի շինէին ընտիր ընտիր քարամբք, և մայր փայտս պահանդս դնէին յորմսն. և գործն էր յաջողակ, և յառաջէր 'ի ձեռս նոցա։ Լսէ հարցեալ ցնոսա, թէ ո՞յր Հրամանաւ բարձրացուցանէին զտունն զայն, ետուն պատասխանի, թէ ծառայք են ՝ն՝ այ երկնի և երկրի. և շինեն զտունն՝ որպէս և յառաջ քան զամս բազումս էր շինեալ մեծի թագաւորի իսրայելացոց սողոմոնի։ Լսէ զի վասն մեղաց Հարց իսրայելացոց մատնեալ էր զնոսա ՝ն՝ 'ի դերութիւն բաբելացւոց, նոքա քակեցին զտունս խաղաղ. և մեծաց աւերակ մինչ ցառաջին ամ կիւրոսի բաբելացւոց արքայի։ Լսէ նա Հրամայեաց շինել զտունս ՝ն՝ այ. որ և զկահս և զսպասս ոսկւոյ և արծաթոյ, զորս նաբուքոդոնոսոր առեալ էր յերուսաղէմէ, ետ ցաղմնասարս գանձապետ տանիլ յերուսաղէմ և դնել 'ի տեղւոջ իւրում։ զոր և կացոյց նա ինքն կիւրոս առաջնորդ Ժողովրդեան. և նա եկեալ նովին Հրամանաւ արկ զՀին տանն, զոր յայսմ հետէ շինեն, այլ չեւս է կատարեալ։ Լրդ՝ եթէ հաճեսցի արքայն, տացէ տեսանել յարքունի յիշատակարանս գրոց բաբելացւոց, թէ գտանիցի հրովարտակ ինչ կիւրոսի. և յայտնել մեզ զկամս արքայի 'ի վերայ այսորիկ։

Հմարտութիւնն 'ի գիրս արքունի պաշտօնէից 'ի տալ զտեղեկութիւն Թագաւորի, է անկերպարան ինն և որպէս Թէ անգոյն. մինչ զի յայն կերպարան երևի, ըստ որում 'ի գրչէն կերպարանի և գունաւորի։ Հռէում և սամսայի, որք հնարէին խափանել զշինուածն, ոչ յիշեցին զՀրովարտակ կիւրոսի. լռեալ և զտաճարէն՝ գրեցին միայն զշինութիւն քաղաքին և զամրութիւն նորա. և յետ յանդիման առնելոյ զնախնի զորութիւն հրէից՝ ասացին

զնեալ լոկ 'ի պատմութիւն արքունի ժամանակագրութեաց, և ոչ 'ի հրովարտակն կիւրոսի։ Լուսնադակ գրեալքն ճշմարիտ էին, այլ 'ի գոյն տխեղծներկեալ. որ զանուանն հրէական ատելի առներ և կասկածաւոր։ Ընդ հակառակն՝ Թաթանեանք, որք նպաստաւոր էին հրէից, 'ի գրեալն զնոյն ճշմարտութիւն չյիշեն զշինութեան քաղաքին, և ոչ զնախնի պատմիչս, որք կարէին ատելի առնել զհրէայս. այլ խօսին միայն մի՛ տաճարին, և առաքեն 'ի հրովարտակն նպաստաւոր շինուածոյն. և առ բառնալոյ զամենայն կասկած զօրութեան և բռնաւորութեան հրէից ժողովրդեան՝ գրեն, թէ շինուածն այն սկսաւ յառաջնումամի թագաւորութեան կիւրոսի 'ի բաբելոն. և զկնի այնչափ ամաց չեւեւ է կատարեալ. յուցանել կամելով զանձուկ աղքատուն ժողովրդեանն։ Լայսպէս է, յորժամ դատ վարեն 'ի ձեռն թղթոց. սովորաբար յաղթէ՝ ոչ որ լաւագոյն ունի պատճառս, այլ որ լաւագոյն գիտէ գրել։

Լայց զարմանք են, թէ վասն էր զօրաբաբէլ և որք ընդ նմա, 'ի խնդրել թաթանեանց, թէ ոչի հրամանաւ շինեն, զնախնի հրամանն և եթ կիւրոսի յառաջ բերին, և ոչ նոյնպէս զդարեհ՝ին, որ առաւել զօրաւոր էր. զի նոր էր, և ինքն դարեհ կենդանի. որով խսպառ հատանէին զնդիր նոցա։ Զնձ թուի թէ՝ որպէս զի ոչ միայնոյ տացի բովանդակ յաջողումն մեծի գործոյն։ Չիշէն զհրամանն կիւրոսի, զի գիտէին 'ի մարդարէից, թէ կիւրոս զայն հրամանն ոչ արար ինքնաշարժ 'ի բարութիւն իւրմէ, այլ բռնադատեալ 'ի հրամանէն ոչ. ուստի հրեայք ունէին զայն իբր անմիջական պատգամ նոն ոչ։ Լոկ դարեհ արար զամենայն յիւրմէ՝ բայց ոչ անպատճառ, այլ 'ի շնորհս և 'ի վարձ իմաստութեան զօրաբաբէլի, զոր ոչ ետնմա, որպէս և ինքն խոստովան լինի. նմին իրի ոչ ընթեռնումք 'ի գիրս թէ զօրաբաբէլ շնորհս ինչ մատուցեալ իցէ դարեհի վասն այնչափ մեծամեծ շնորհաց նոցա։ այլ ոչ միայնոյ։ * Լու յորժամ եկ (ասէ գիրն) 'ի թագաւորէն զօրաբաբէլ, համարձ

զձեռս իւր յերկինս ընդ կողմն երուսաղէմի օրհնեաց զնոր զթագաւոր երկնից ։ ՝Ա. Եզր. Գ. 58։ Լաւ այս յայտնի երևի նաև 'ի պատասխանուոյ նոցա, զի ոչ ահընդահ. և ոչ ողբելով խօսին, այլ աներ-կիւղ աղատաբերան պատասխանեն, *Մեք եմք ծառայք նոն ՝ոյ երկնի և երկրի, և շինեմք զտունս զայս։ ուստի փոյթ կալեալ, թէ գրեսցեն առ դարեհ. զի վստահ էին 'ի խնամն նոն թէ որ սկսաւ զգործն զայն, նա ինքն յաջողեսցէ և զկատարուսցէ. որպէս և յաջողեաց։

ԳԼ. Գ.

Կոչեալ զՏիմոթէոս զաստաբին և երուսաղէմ դաղաքի։ Եզր քաղաքացոյնի դնիլ և իշխան հրէասդանի։

Դարեհ առեալ զգիր թագաւորեանց՝ ետ խնդրել զՀրովարտակն. որ ոչ գտաւ 'ի բաբելոն. այլ գտաւ յեկբատանս յամրոցի քաղաքի. ուր կայր գրեալ այսպէս. *Յամին առաջնումի կիւրոսի, կիւրոս թագաւոր ետ հրաման վասն տանն նոն որ յերուսաղէմ. ասէ, շինեսցի տաճարն նոն, և տեղին՝ ուր զոհեն զզոհսն նոն. և ետ զչափ բարձրութենն կանգուն վաթսուն, և լայնութէ կանգուն վաթսուն. և կարգք երեք 'ի զօրաւոր քարանց. և կարգ մի փայտեղէն. (ուր լտ. յաւելու. իսկ ծախք 'ի տանէ արքայի տացին)։ Ի. Եզր. Զ. 3։ Այսն որոյ և դարեհ հրամն եհան, զի մի ոք բնաւ իւիք իրաք իշխեսցէ խափանել զգործ շինուածոյն. միանգամայն պատուիրէ հարկահանաց իւրոց յայնկոյս եփրատայ՝ յարքունի գանձուց մատակարարել զծախս գործաւորաց. և քահանայից տացին ասէ յողջակէզս նոն ՝ոյ երկնից ցուլք, խոյք, ամիկք. այլև ցորեան, աղ, գինի և ձէթ ըստ ծիսի և սա-

վորութիւն նոցա. և այս ամենայն բովանդակ 'ի տա-
նէ արքայի տացին անխափան. զի մի լուիցի ուս-
տեք գանգատ, և քահանայք մատուցցեն պատա-
րագս ՅՍՆ ՅՍՆ երկնից. և աղօթս արասցեն վասն
կենաց թագաւորին և որդւոց նորա։ Լուս եթէ ոք
յանդգնեսցի այսմ հրամանի ընդդէմ կալ, քակեսս-
ցի տուն նորա. և առեալ փայտ 'ի տանէ նորա՝
բևեռեսցի 'ի նա։ Լուս եթէ ոք 'ի թագաւորաց
արտաքոյ ՅՍՈՒԹԻՒ իւրոյ յանդգնեսցի ձգել զձեռն
արգելուլ կամ ապականել զտունն, ՅՍ՝ որոյ
անուն բնակեալ է 'ի տան անդ, աւերեսցէ ջնջես-
ցէ յաչխարհէ զայն թագաւորութիւն և զժողո-
վուրդ։

Լ.յս պատասխանի ամենայն իրօք էր ըստ մտաց
և ըստ հանձոյից թաթանայի, վասն որոյ և նա վաղ-
վաղակի փոյթ կալաւ հանգերձ խորհրդակցովք իւ-
րովք ՁՀրաման թագաւորին 'ի գլուխ տանել.
որով և գործն յառաջադէմ յաջողէր. որ յամին
երկրորդի դարեհի սկսաւ, և 'ի վեցերորդ ամի
նորա գլխաւորեալ կատարեցաւ։ Լուս թէպէտ ելքաս
երևի ձգել մինչև ցժամանակս արտաշէսի երկրոր-
գի զկատարեալ լրումն չինուածոյն, սակայն յայտ-
նի տեսանի՝ թէ նա առնու զլոլոր չինուածս, յո-
բում փակին և պարիսպք քաղաքին. զի վասն տա-
ճարին առանձինն ասէ. " Լուս որ օր երեք էր ամ-
սոյն ադարոյ յամին վեցերորդի դարեհի արքայի
կատարեցաւ տաճարն։ Լուսկ վասն պարսպաց քա-
ղաքին ասէ. " Լուս շինեցին և հաստատեցին ըստ
հրամանի ՅՍՈՒ իսրայէլի, և որպէս հրամայեցին կիւ-
րոս թագաւոր և դարեհ և 'ի ժամանակս արտաշէ-
սի թագաւորին պարսից։ Է. Եզր. Զ. 14. 15։
Լուսի թէ առ պակասութիւն այսր զանազանութիւն
չինութեան տաճարին 'ի չինութիւն պարսպաց՝ ծնաւ
'ի հրէայս սխալ աւանդութիւն այն, ըստ որոյ ասէին.
" զքառասուն և զվեց ամ չինեցաւ տաճարս այս։
յՍՒ. Բ. 20։ Լուս թէպէտ բանն այնր խաժամուժ
սրբոփին չունի ինչ հաստատութեան վաւերական,
սակայն և այնպէս երևի թէ չիցէ գլխովին ան-

հինն։ Վանդի ըստ բաղմաց մեկնչաց՝ յառաջնոյ ամ. կիւրոսի մինչև ցքսաներորդ ամ արտաշէսի երկրորդի անցին ամք 49. յորոց եթէ հանցին երկու ամք կիւրոսի, զոր հրէայք ծախեցին 'ի ճանապարհորդութիւն, և 'ի պատրաստութիւն նիւթոյ շինուածոյն, որպէս և քսաներորդ ամն արտաշէսի, (որ գուցէ իբր աւարտ ոչ տրկաւ 'ի թիւ,) մնան ամք 46։ Այս ահա 'ի նմին քսաներորդ ամի արտաշէսի կատարեցաւ շինութիւն պարսպայ Երուսաղէմի. ուստի 'ի սկզբնաւորութիւն շինութեան տաճարին և քաղաքին մինչև 'ի լրումն նոցին ողջոյն, անցին ամք 46. 'ի մէջ առեալ և զամսն յորս խափանեցաւ գործ շինութեան։ Որդ հրէայք կարծելով թէ 46. ամքն յիշատակեալք յեզրասայ՝ ծախեալ իցեն լոկ 'ի շինութիւն տաճարին, խառն և չիոթ խոսեին։

Որ ոչ ոչ դարեհի իրողութիւք հրէից սմենայն յաջողութիւն յառաջադէմ էին յերուսաղէմ. և ընդ հակառակն՝ եռանդն ոչ ծածպաշտութեան օր քան զօր նուազէր և ցրտանայր. և որչափ առաւելոյր յաջողութեան և երջանկութեան նոցա, նոյնչափ առաւել ապերախտ և ապաշնորհ ցուցանէին զանձինս առ ոչ։ Որ ոչ ոչ նոցին ցոփութեան առաւելապէս առ յաջորդաւն դարեհի, այսինքն առ արտաշէսիւ երկրորդիւ. որ յարտաքնոց կոչի երկայնաձեռն. կամ երկայնաբազուկ, որ և սա նպաստաւոր էր յոյժ հրէից։ Որ առ սոսաւ 'ի բաբելոն յարքունիս ոմն վարդապետ մնխիսական օրինաց, այր իմաստուն ՝ոբ և սիրելի ՝ոյ՝ կոչեցեալ եզրաս կամ եզր 'ի քահանայական կարգէ, թոռն սարիայ առաջնոյ քահանայի յերուսաղէմ'ի ժամանակս սեդեկեայ, որ սպանաւ 'ի նաբուքոդոնոսորայ 'ի դեբղաթայ։ Սա ոչ հանդուրժելով ամբարշտութեանն որք գործէին յերուսաղէմ, խնդրեաց յարտաշիսէ եկանել յերուսաղէմ իբրև քննիչ արքունի իշխանութիւն. և զի ունէր շնորհս առաջի արքայի, ընկալաւ զոր խնդրեաց։ Որ նմա թագաւորն հրովարտակ ընդարձակ իշխանութիւն. ուր կոչէ զնա քահանայ և գրիչ

գրոց բանի օրինաց ՝ն ՝այ երկնից, և ՝Հրամանաց նորա ՝ի վերայ իսրայէլի. ապա աղդ առնէ ամենեցուն թէ որ ոք ՝ի ժողովրդենէ իսրայէլի ՝ի քահանայից և ՝ի զևտացւոց կամիցի ընդ Եզրի երանել յերուսաղէմ, երթիցէ անարգել։

Լ՚ինքն գերագոյն թագաւորական իշխանութիւնովք հանդերձ եօթն խորհրդականօք իւրովք՝ կացուցանէ զերզ քննիչ այցելու երուսաղէմայ և հրէաստանի։ Տայ նմա ընդարձակ իշխանութիւն տանել ընդ իւր զամենայն զոսկի և զարծաթ, զոր տանն նմա թագաւորն և խորհրդականքն նորա՝ դնել ՝ի տաճարն առաջի ՝ն ՝այ. և և զամենայն արծաթ և զոսկի, զոր ՝ի յօժարակամ նուիրաց կարիցէ հաւաքել յամենայն թագաւորութեան բաբելոնի. պատուիրէ տալ նմա և այլ դրամս վասն գնելոյ զուարակս, խոյս, և գառինս, որչափ ինչ հարկաւոր իցեն ՝ի զոհս և ՝ի նուէրս մատուցանել ՝ի վերայ սեղանոյ ՝ն ՝այ իւրեանց յերուսաղէմ։ Լ՚և եթէ ինքն կամ ընկերք իւր եղբարք նորա դատիցին յայլ իրս ծախել զմնացեալ ոսկի և զարծաթ, արասցեն համարձակ ըստ կամաց և ըստ օրինաց ՝այ։ Լ՚և որ ինչ այլ ծախք պիտոյ իցեն վասն տաճարին ՝այ, մատակարարեսցին յարքունի գանձուց յանմիջական ձեռաց արքայի։ Լ՚և ապա տայ հրաման ամենայն գանձապետաց իւրոց որ յայնկոյս եփրատ գետոյն՝ համարել եզրասայ որչափ ինչ խնդրեսցէ, մինչև ցհարիւր տաղանդ արծաթոյ. հարիւր քոռ ցորենոյ. և գինի նոյնչափ, և ձէթ նոյնչափ. և աղ առանց չափոյ։ Լ՚և և՝ թէ ամենայն ինչ որ պիտոյ իցէ ՝ի ծառայութիւն ՝այ, մատակարարեսցի խնամով. և մի՛ ոք ձեռնարկեսցէ խափանել ինչ ՝ի տանէ ՝ն ՝այ իսրայէլի. զի մի՛ եղիցի բարկութիւն ՝ն ՝այ ՝ի վերայ թագաւորութեան նորա և որդւոց նորա։ Լ՚զատ արար յամենայն հարկաց՝ ՝ի բաժից և ՝ի կապալաց զքահանայս, զզևտացիս, զսաղմներգուս, զդռնապանս, և զնաթանայիս, և միանգամայն ասացից՝ զամենայն ապատաւորս տանն ՝այ։ Լ՚և և՝ ետ եզրասայ լիալիր իշ-

խանութեն կացուցանել դատաւորս, գրիչս կամ դպիրս վերակացուս յայն կողմն գետոյն եփրատայ, որ անկանէր 'ի կողմն երուսաղէմի՝ դատել զամենայն ժողովուրդ ՝ն, որք յայն կողմն իցեն։ Լ՝ստ նմին և զընդարձակ իշխանութիւն ուսուցանել և դարձուցանել զայլադեսս 'ի գիտութեն ՝ն ծածպաշտութեն. միանգամայն և զսուր արդարութեն ետ 'ի ձեռս նորա, բանտել, աքսորել, տուգանել, և 'ի մահ ևս դատակնքել ըստ արժանեաց իւրաքանչիւր յանցանաց։

Լ՝ոյսպիսի զօրաւոր մեծապատիւ և ընդարձակ հրովարտակաւ եկ եղբ 'ի բաբելոնէ ընկերակցութիւնութուտան իշխանաց, և հաղար չորեք հարիւր ինենսուն և վեց գլխաւորաց ժողովրդեան իւրոյ դալ 'ի հրեաստան. թոռ գծառայս, զոր աստ ոչ բերէ 'ի համար։ Հասեալ սոցա յափն թերեայ գետոյն որ գայ յեւի, զտեղի առին անդ աւուրս երիս. և հանդէս արարեալ ամենեցուն, ոչ ոք գտաւ ընդ նոսա յորդւոց քահանայից և յորդւոց ղեւտացւոց։ Լ՝ռաքեաց եղբ հրեշտակս զոմանս 'ի գլխաւորաց առ ղոդէոն, որ էր եբրայեցի իշխան 'ի վերայ գանձուց մետաղաց 'ի կասբիական լերինս որ 'ի մէջ մարաց և վրկանայ. եգեալ բանս 'ի բերան նոցա խօսիլ ցղոդէոն և ցեղբարս նորա նաթանացիս, առաքել առ նա 'ի քահանայից տանն ՝ն. և ածին առ նա արս զօրաւորս ըստ բանի ՝ն և գիտունս յօրէնս նորա յորդւոցն մանղէոյ որք 'ի ղևեայ և յիսրայէլ. և զասերևան և զորդիս նորա և զեղբարս նորա ութ և տան։ Լ՝ւ զասեբիա, և զյեսեա որդի մերարեայ և զեղբարս նորա և զորդիս նորա արս քսան. և երկերիւր քսան նաթանացիս, որք էին ծառայք հրեայեալք 'ի սերընդոց գաբաւոնացւոց և քանանացւոց. զորս յեսու և դաւիթ և սողոմոն կարգեալ էին 'ի գործ ծառայութեն տաճարին. և թագաւորք քաղդէացւոց առաքեալ էին զնոսա 'ի կասբիական լերինս 'ի գործ մետաղաց։

Լ՝ւ այսպէս ժողովեցան ամենեքեան, և լրա-

ցաւ բանակն։ Բայց եղը և իշխանքն հոգային յոյժ, զի ունէին անցանել ընդ անտառս աւազակաց, և ընդ Ճանապարհ յաձախեալ յասպատակաւոր գողոց։ Ցուեալ էր նոցա Թագաւորն հրաման՝ առնուլ յիւրոցն հեծեալս 'ի պահպանութիւն. այլ եղը ոչ իշխեաց խնդրել երկուցեալ 'ի գայթակղեցուցանելոյ զարքայ չեւս հաստատեալ յաձածանութիւն. զի ասացեալ էր նմա, թէ ՝ուծն իւրեանց պահէ հզօր ձեռամբ զամենեսին որք խնդրեն զնա. և պատժէ զոր թողուն զնա. վասն որոյ երկնչէր չերեւիլ առաջի նորա սակաւայոյս կամ թերահաւատ յամենակարօղն ՝ուծ՝ 'ի խնդրելն զոր 'ի պահպանութիւն Ճանապարհի։ Բայց այն զի վտանգն մեծ էր, զի հռչակեալ էր եթէ գանձ բազում ունին ընդ իւրեանս, և ուղևորքն թէպէտ և հաւատարիմ էին, այլ անկիրթ 'ի զէնս։ Վասն որոյ փոխանակ զինուորական զինուց ամենեքեան միաբան զինեցան ջերմեռանդն աղօթիւք և պահօք, զոր մի ողջոյն ծոմապահեալ. որով և ընկալան զօգնութիւն և զպահպանութիւն ամենազօր աջոյ նոն։

Յանձն արար եղբաս սարաբիայ և ասաբիայ և եղբարց նոցա զոսկի և զարծաթ, որք 'ի նուիրաց Թագաւորին և խորհրդականաց նորա և իշխանաց, և 'ի ժողովրդոց տուեալ էին 'ի սպասս տաձարին, արծաթ տաղանդս վեց հարիւր յիսուն, և կահս արծաթոյ հարիւր. և ոսկի տաղանդս հարիւր. և այլ կահ ոսկւոյ քսան և երեք, և երկու սկաւառակ պղնձոյ ՝որ և մաքուր ոսկեզօծ։ Բոկ ինքն եղբաս և այլք ամենեքեան պահէին զայս փոքր խումբ՝ որ էր իբր սիրտ և ոգի համբրէն բանակին ՝որ զգուշալի։ Բայց յարուցեալ 'ի գետոյն Էսոն՝ յառաջ խաղացին զՃանապարհ իւրեանց ըստ աւուրց զինուորաց, միշտ պահպանեալք բարձրացեալ ձեռամբ ՝ուն ՝այ 'ի թշնամեաց և 'ի պատերազմողաց զՃանապարհայն, և հասին ողջամբ և խաղաղութիւն յերուսաղէմ զնին չորեքամենեան Ճանապարհորդութիւն. և հանգեան աւուրս երիս։ Բ.պա յաւուրն չորրորդի ետուն հանդերձ վկայիւք 'ի ձեռս մեծի

քահանայապետին և պահապանաց տաճարին զոսկի և զարծաթ և զամենայն կահ կշռով և համբարով անթերի, որպէս գրեալ կայր 'ի հաշուեգրի։ Եւ 'ի գոհութիւն ետն ոչ վասն անվտանգ խաղաղական ճանապարհորդութեան իւրեանց մատուցին ողջակէզս երկոտասան զուարակս, խոյս ինսուն և վեց, գառինս եօթանասուն և եօթն, և ամիկս երկոտասան։ Զայս ետուն զհրովարտակ և զգիր հրամանի թագաւորին ցիշխանսս ցգործակալս և ցգաւառապետս թագաւորին յայնկոյս Եփրատայ. և մեծաւ պատուով փառաւորեցաւ տաճարն և ժողովուրդ տեառն։

Զ.մն ինչ եղբաս սկսաւ վարել զիշխանութիւն իւր 'ի վերայ ազգին, և ահա առժամայն առաջի մատուցան նմա ծանր ծանր ամբաստանութիւնք. ընդ այլ իրս՝ որք առաւելապէս դժուարախորշելի են առ մարդկային տկարութիւն, ոչ այնչափ ինչ խառվեցաւ եղբաս. այլ իբրև լուաւ թէ ելեալքն 'ի գերութենէ խառնակեցան ամուսնութիւն ընդ կանայս այլազգիս, ոչ լոկ խառնաղանդք, այլ առաւելապէս իշխանք նոցա և քահանայք և զնտացիք, որ սաստիկ արգելեալ էր նոցա յիսծային օրինաց, լի եղև դառնութիւն. պատառեաց զհանդերձս, և ողբս առեալ փետէր զհերս և զմօրուս, և նստաւ 'ի սուգ մեծ տրտմեալ։ Զային առ նա գունդագունդ որք էին երկիւղածք յոյ, և զնոյն գոյժ բերէին նմա. և ինքն նստէր այնպէս 'ի սուգ թախծութիւնէ անբարբառ մինչև 'ի ժամ զոհի երեկորին։ Զայն ժամ յարուցեալ մատոյց զզոհն, և 'ի գուծս անկեալ և ամբարձեալ զձեռս լի ահիւ և ամօթով՝ տարածէր առաջի տեառն զանբերելի ցաւ սրտի իւրոյ հանդերձ խոստովանութիւնք անօրէնութեաց ժողովրդեան իւրոյ։ Եւ մինչ եղբաս կայր յաղօթս մեծամեծ ողբովք անկեալ 'ի վերայ երեսաց առաջի տաճարի տեառն, ժողովեցան զնովաւ մանկունք, երիտասարդք, և կանայք և բազմութիւն ժողովրդեան, և տեսեալ զնա յողբս անմխիթարս՝ ամենեքեան լային ընդ նմա։ Իսկ յեբռնիա տեսեալ՝ զի ամենեքեան

լան, և ոչ ոք խօսի ինչ. մնասուցեալ ասէ ցեղրաս։ արդարև մեղաք՝ առեալ մեզ կանայս յայլազգեաց, և կամք այսօր 'ի նմին անօրէնութեան. այլ զոչնացեալ յամպարշտութեաց մերոց՝ ձեռն արկցուք 'ի դարման. դիցուք երդմունս առաջի նոցն, հանցուք 'ի բաց զկանայս մեր, զոր առաք յայլազգեաց, արձակելով ընդ նոսա և զզաւակս որք 'ի նոցանէ՝ երթալ յերկիր իւրեանց, որպէս կամի տէր։ Արդ արի և պատուիրեա. մեք ամենեքեան ընդ քեզ եմք. զօրացիր և արա՛, որպէս հրամայեալ է 'ի տէրէ այ։

Արծէր եղբաս բազում դժուարութիւն գտանել 'ի բառնալ զայսպիսի զեղծմունս, և 'ի դարմանել զդայթակղութիւնն զայն մեծ. քանզի բազումք էին յանցաւորք. և այն՝ յոլովք 'ի մեծամեծաց և յիշխանաց և 'ի քահանայից և 'ի զևտացւոց։ Այլ յորժամ ետես զբազմաց ինքնայօժար պատրաստութիւն ձեռնտու լինել նմա, քաջալերեալ յարեաւ 'ի գործոյ. չոգաւ 'ի տուն յովհաննու որդւոյ մեծի քահանային եղիսուբայ. բայց ոչ զողջն դադարեցոյց, և ոչ զպահն ելոյծ. զի հաց ոչ եկեր, և ջուր ոչ էարբ 'ի հաշտեցուցանել զնոսա ընդ ժողովրդեան իւրոյ։ Այլ թէպէտ իբրև հայր գորովական խնամարկեր ժողովրդեան իւրոյ, սակայն և զպաշտօն արդարադատ դատաւորի ոչ մոռանայր։ Վասն որոյ ետ քարոզ կարդալ ընդ ամենայն հրեաստան՝ ընդ պատժով աքսորանաց և յափշտակութիւն ստացուածոց, որոց մինչև յերիս աւուրս ոչ գայցեն յերուսաղէմ տալ պատասխանի վասն անձանց։

Հնազանդեցան. և 'ի քսանեքսորդ աւուր եկեղեցական ամենանն ինեներորդի, որ համեմատի աւուրց որ 'ի մէջ մերում նոյեմբերի և դեկտեմբերի, ժողովեցան ամենայն արք յուդայ և բենիամինի յերուսաղէմ։ Նստեր ամենայն ժողովուրդն 'ի մեծի հրապարակի տաճարին. և օրն էր անձրևային և ցրտաշունչ. և ժողովուրդն կայր սրտաթափ սարսռացեալ 'ի ցրտութէ ձմերայնոյ, և ահաբեկեալ 'ի մեղայն խղճէ։ Եզրաս համառօտ

բանիւ յանդիմանեաց առաջի նոցա զծանրութիւն մեղաց. և յորդորեաց զնոսա 'ի խոստովանութիւն և յօրհնութիւն նոյ. և հրամայեաց որոշել յամենայն հեթանոսաց երկրին, և 'ի կանանց այլազգեաց զորս արարին։ Մենեքեան մեծաձայն ետուն պատասխանի, թէ պատրաստ եմք ամենայնի. այլ վասն ցրտութեան և անձրևաց ոչ կարէին ժուժել անյարկ բացօթեայ. իսկ արձակել զկանայս այլազգիս 'ի տանց՝ ոչ է գործ միոյ կամ երկուց աւուրց։ Ասէր՝ ասեն, կարգեսցին իշխանք և դատաւորք 'ի վերայ այսր գործոյ յամենայն տեղիս և 'ի քաղաքս. և սահմանեսցի ժամանակ բաւական յանդիմանելոյ որոց ունիցին կանայս այլազգիս։ Հաճոյ թուեցաւ եղբայրս այս առաջարկութիւն. ուստի և յանձնեցաւ յոմնութանու որդւոյ ազայելի, և եզեկիայ որդւոյ Թովլեայ. որոց ընկերակցեցան իբր փոխանորդ և օգնականք մնասղամնս և սաբատեոս զևտացիք։ Եւ սկսան զգործադրութիւնն յամամամին ամսեանն տասներորդի. արձակեցին զկանայս և զորդիս նոցա. և մնատուցին խոյս յողջակէզ 'ի քաւուն մեղաց։ Եւ եղբարս ուրախ լինէր, զի առանց բանտարկութեան և աքսորանաց, կամ այլ ինչ պատժոց եւարձ 'ի ժողովրդենէ ետն զայսպիսի մեծ անօրէնութիւն։

Այս գործ հաճոյական թէ մեծապէս վատաբար բորբոքեցոյց զընտանին ատելութիւն շրջակայ ազգաց ընդդէմ հրէից։ Մենեքեան յիշէին զնախնի զօրութիւն և զբռնակալութիւն թագաւորացն յուդայ. ուստի և ծանր էր նոցա տեսանել զնորոդուն արքայանիստ քաղաքի նոցա. այլ նախատինքն արձակմանն զտեսրայ իւրեանց 'ի ծայրն հասոյց զկատաղի սրտմտութիւն նոցա։ Եւ իշխէին յայտնի պատերազմաւ 'ի վերայ յառնել, այլ զօրէն ելուզակաց ստէպ ասպատակիէին շուրջ զերուսաղէմաւ. և զի ատորին քաղաքն չէ ևս էր ըստ բաւականին ամրացուցեալ, անդ բաղում ինչսս գործէին. և վիշտս անհնարինս հասուցանէին երբայեցւոց. որք յայսպիսի տառապանս կացին մինչև ցքսանաս-

բորդ ամ թագաւորութեան արտաշէսի. յորում հաճեցաւ ած առաքել նոցա օգնութեան։

ԳԼ. Գ.

Լեռն Եղիան հրէից կապարէ ղղրջակապ պարիսպ Երուսաղէմի։

Որ յայնժամ յաքքունիս արտաշէսի 'ի շուշ քաղաքի այր մի երևելի յազգէն հրէից նեեմի անուն, պարսկերէն կոչեցեալ Նթերսաեթա, այսինքն մատուակ. զի էր մատուակ արքայի, և սիրելի նմա յոյժ։ Ընդ այն ժամանակս եկին անդր 'ի շուշ քաղաք 'ի հրէաստանէ անանի և այլք ոմանք 'ի յուդայէ՝ կամ վասն առանձնական իրողութեան իւրեանց, և կամ վասն դարման ինչ գտանելոյ մեծի նեղութեան Երուսաղէմի։ Եհարց նոցա նեեմի զողջունեն հրէից դարձելոց 'ի գերութենէ. և նոքա պատմեցին նմա զամենայն, թէ յորմէ նեղութեան են անդ հրէայք. և թէ զիարդ փակեալ աւերեալ են պարիսպք Երուսաղէմի, և դրունք նորա հրկիզեալք։ Այն իբրև լուաւ նեեմի, լցաւ տրտմութիւն, և առանձնացեալ լայր և սուգ առնոյր, և պահէր զաւուրս բազումս, և աղօթէր առաջ խնդրելով զօգնութեան նորա։ Յայսմանէ երևի թէ զկնի շինութեան տաճարին առ դարեհիւ, առ սակաւ սակաւ շինեալ էին և զմանն ինչ պարսպաց ստորին քաղաքին. և ուրեք ուրեք դրունս կանգնեալ, զոր շրջակայ հեթանոսք գիշերային հրոսակութիւնք և յարձակմամբք քանդեալ էին, և զդրունսն հրկիզեալք։ Վասնզի քանդումն պարսպաց Երուսաղէմի և հրկիզութեան դրանց նորա որ առնաքուզդոնոսորաւ, ոչ էր նոր ինչ յունկն նեեմեայ, և ոչ կարէր պատճառել նմա այսպիսի տա-

բասայման տրտմութիւն. ուրեմն այս աւեր և հրկիզութիւն յետոյ եղև. զկնի որոյ պարիսպք նորա ըստ մասանց ինչ շինեցան, և գրունքք ևս կանգնեցան։

Զ. Զօթք նեեմեայ լսելն եղեն ցայ. քանզի յամին քսաներորդի արտաշէսի յամսեանն Նիսան, որ համեմատի մերումն սպրիլի, մինչ նեեմի սպասաւորելով սեղանոյ արքային՝ մատուցանէր նմա զբաժակ գինւոյ, ետես զնա արքայն խռովեալ թախծալից և տխրագէմ. իբրև հարց զպատճառն, նեեմի խոստովան եղև և ասաց. զի քաղաք և տուն հօր իմոյ անապատ է, և գրունքն ապականեալ 'ի հրոյ. հարց դարձեալ թագաւորն, զի՞նչ խնդրես։ Յայնժամ նեեմի յոդւոց երեալ՝ և զմիտս առ ՅԱԾ ամբարձեալ ջերմագին աղօթիւք, խընդրեաց 'ի թագաւորէն՝ երթալ նորին հրամանաւ յերուսաղէմ, և շինել զքաղաք հարց իւրոց։

Թագաւորն և թագուհին որ 'ի նմին սեղանի էին, հարցին ցնա, եթէ ցորչափ ժամանակս ունիցի յերկարել զդարձիւր. և քանեալ զիրսն, և ժամադիր լեալ ընդ նմա, շնորհեցաւ խնդիրն։ Յաւել նեեմի միւս ևս շնորհ խնդրել յարքայէ. այսինքն երկու հրովարտակս. մի՝ առ սպարապետս կողմանցն յայսկոյս եփրատայ, զի տացեն ինքեան զօրս 'ի պահպանութիւն, և տարցին մինչև 'ի հրեաստան. և միւս ևս առ ասափ վերակացու արքունի մայրեաց, զի տացի նմա անտի փայտ 'ի կազմած դրանցն և ձեղունաց աշտարակաց, և տանցն որ 'ի վերայ պարսպաց. և 'ի ծածկոյթ տանն՝ զոր ինքն ընտրեսցէ վասն իւր. շնորհեցաւ նմա և այս. վասն զի ձեռն ՅԱ էր ընդ նմա բարութիւն։ Զատ նմա թագաւորն խումբ մի հեծելոց յուղարկաւորել զնա մինչև ցեփրատ. և անցեալ զգետն՝ մատոյց զթուղթ թագաւորին առ իշխանս կամ սպարապետ այնր կողմանն գետոյն. և ընկալաւ 'ի նմանէ զայլ խումբ զօրաց, որք ուղեկցեալ առաջնորդեցին նմա մինչև յերուսաղէմ։ Լուեալ շրջակայ ազգաց թշնամեաց հրեական ազգին զգալուստ նեեմեայ զինուորական զօրութիւն, չար թուեցաւ

նոցա. խռովեցան յոյժ, մանաւանդ սանապարհաց մովաբացի իշխան արմնայ. և տուբիա ամմնացի ծառայ, այլ սիրելի յաչս նոսա իւրոյ, վասն որոյ և զօրաւոր առաջի նորա. և սոքա միաբանեցան ընդ արաբացիս, ընդ մովաբացիս, ընդ ամմնացիս և ընդ փղշտացիս. բայց և այնպէս ոչ կարացին խափանել զնեեմի յառաջադիր գործոյ իւրմէ։

Իբրև եհաս նեեմի խաղաղութիւն յերուսաղէմ, զաւուրս երիս 'ի ծածուկ կալաւ զնորհուրդ իւր. ապա 'ի գիշերի երրորդ աւուր՝ առանց յայտնելոյ ինչ ումեք հեծեալ 'ի դրաստ՝ եալ լուսեղէն սակաւաթիւ արամբք հետեւակօք ընդ դուռն հեղեղատին, և դառնալով 'ի դուռն աղբերջոյ՝ եալ 'ի պարիսպն կամ 'ի թումբն առ դրան ձորոյն. զի ոչ կարէր դրաստու անցանել առ ջրբղխօք թագաւորին սակս կուտակութեան աւերակաց պարսպին. և տեսեալ և զննեալ զտեղիս աւերեալս, և զմնացուածս պարսպացն, ընդ առաւօտն խօսեցաւ առ գլխաւորս ժողովրդեան, յայտնեալ նոցա զնորհուրդ իւր. և ասոյց թէ որչափ ինչ կարէր յուսալ 'ի թագաւորէն։ Լաւ քաջալերեալ զարթոյց զսիրտս ամենեցուն ձեռնամուխ լինել կանգնել զպարիսպս և ամրացուցանել, առ 'ի գլխմ ունել արշաւանաց թշնամեաց իւրեանց։

'Ի բանից անտի նեեմեայ ամենեքեան առ հասարակ զուարթացեալ և խրախուսեալ՝ մեծաւ ձեռամբ միեցան 'ի գործ. և զի մի բազմութիւն գործաւորաց խառնիխուռն գործեսցին 'ի շփոթումն միմեանց, 'ի խումբս խումբս բաշխեցան. և իւրաքանչիւր խմբի կացուցաւ մի ոմն գլխաւոր, և ընդ նոսաւ երկրորդ և երրորդ. որոշեցաւ նոցա և չափ պարսպաց 'ի շինել։ Լաւ այնպէս ամենեքեան անշփոթ միտ եդեալ իւրաքանչիւր իւրում մասին՝ արտի մտաք գործէին։ Լաւ քահանայք և ղևտացիք, իշխանք և գլխաւորք ժողովրդեան 'ի պարծանս համարէին զգործ բեռնակրութիւն ինքնին կատարել. միայն իշխանք թեկուսդորեմայ, թէպէտ ետուն զարս իւրեանց յայն գործ, այլ ինքեանք ամենք և

անվայել համարեցան անձանց տալ զթիկունս 'ի բեռնաբարձութիւն. զոր առ գիրն մասնաւորապէս յիշատակէ 'ի նախատինս փափկասիրութիւն նոցա։

Հարկ էր գործաւորաց զինեալ ձեռամբ աշխատիլ 'ի գործ. քանզի միշտ յերկիւղն էին 'ի դարանակալութեաց, և յանկարծական արշաւանաց թշնամեաց։ Ի սկզբան անդ սանաբաղատ և տուբիա ամենայն ծաղր առնէին զհրեայս. և հենգնեալ ասէին ընդ միմեանս. զի՞նչ ձգնին դոքա քարամբք և շաղախով պարիսպս կանգնել. այժմ իսկ եթէ ելցեն աղուէսք, բբեսցեն զքարինս պարիսպաց դոցա. և զամենայն շինուածն քակեալ կործանեն։ Ի՛յլ իբրև լուան, զի ամենայն խրամատք կարկատեցան, և ամենայն ձեղքուածք լցան, և բոլոր շրջապատ պարսպացն կատարեցաւ ցկէս բարձրութեն ցոր վայր ուներ ելանել, միաբանեցան ընդ արաբացիս, ընդ ամմինացիս, և ընդ փղշտացիս աղովտաց գալ 'ի միասին և քակել կործանել զամենայն շինուածն։ Ի այց 'ի ծածուկ ունէին զմիաբանութիւն իւրեանց, որպէս զի յանպատրաստից յարձակեսցին 'ի վերայ։

Ի՛սեմն տառապէր յանձն իւր, տեսեալ զի հրեայք երուսաղէմի երևեցուցանէին զանձինս պարտասեալ լքեալ 'ի ծանր աշխատութենէ գործոյն, և ահաբեկ 'ի սպառնալեաց թշնամեաց։ Ի՛անզի հրեայք բնակեալք 'ի մէջ հեթանոսաց հասանէին եկեալ յերուսաղէմ, ընուին արհաւրօք զամենեսին՝ պատմելով զահեղ պատրաստութիւն դաշնաւորելոցն։ Յաւելուին զվիշտս նեեմեայ թեղեազրութիւք ոմանց գլխաւորաց երուսաղէմի առ ժանտն տուբիա. որ ազգականութի՛ն արարեալ էր ընդ նոսա, գոլով փեսայ սեքենիայ որդւոյ երայ. և յովնաթան որդի նորա արար կին զդուստրն մեսուղամայ որդւոյ բարաքեայ. երկոքին եւս արք զօրաւորք 'ի քաղաքին։ Ի՛այնպէս և տուբիա գրեր նոցա թուղթս նենգաւորս 'ի զարհուրեցուցանել զնեեմի. զորս սոքա ընդ պատրուակաւ սիրոյ և բարեկամութե՛ն ցուցանէին նմա, և զանս

նորա զամենայն գրեին առ տուբիա։ Օ այս ամենայն գիտէր նեեմի. այլ լռէր. զի չէր ժամ գալ 'ի նեբքին երկպառակութիւն, կամ 'ի պատիժ ձեռնարկել։

Խսկ սանաբաղատ յայն յանդգնութիւն եհաս, մինչև յղել հրեշտակս և գիր առ նեեմի եթէ ստոր. ջացեալ ընդ առաջին հակառակութիւս, որպէս թէ արդ ցանկայ միաբանիլ ընդ նմա, և լինել բարեկամութիւն ընդ միմեանս։ Հինգ անգամ հրաւիրեաց զնա եկանել յերուսաղէմ առ 'ի խօսիլ ընդ միմեանս 'ի դաշտին ոնոյ. ուր դարան գործեալ էր նմա սպանանել զնա։ 'Ի վերջոյ առ 'ի շարժել զնա՝ յօդեաց և զայս սուտ, եթէ յամենայն սահմանս հեթանոսաց լու եղև, թէ նեեմի խորհի ապստամբիլ 'ի թագաւորէն պարսից, և կամի թագաւորել յերուսաղէմ. վասն այնորիկ չինէ զպարիսպս և ամրացուցանէ զաշտարակս նորա. ուստի և դարձեալ կոչէր զնա բարեկամութիւն խորհել 'ի միասին։ Լու զի ոչինչ 'ի նենգաւոր հնարից ատի զօրեաց հանել զնեեմի արտաքս քան զերուսաղէմ, նա ինքն սանաբաղատ և տուբիա կալան 'ի վարձու սուտ մարգարէս մարգարէանալ և մատնել զնա. և սիմայ՝ որ մի էր 'ի մարգարէից ատի, կամեցեալ մարգարէ ձևանալ յայս ժողովրդեան, կայր լռեալ 'ի տան իւրում. հրաւիրեաց նենգութիւն զնեեմի մեկուսանալ 'ի տաճար անդր երկոցուն 'ի միասին՝ փակեալ դրամբք խորհուրդ 'ի մէջ առնուլ վասն իրացս. միանգամայն և յասպահս վանալ յանքոյթ ասպատանի անդ 'ի թշնամեաց. զի մի գիշերային ասէ յանկարծ 'ի վերայ հասեալ սպանցեն զմեզ։ Օ այս ասէր առ 'ի տալ նմա մեղանչել, և անուն չար հանել զնմանէ առ ժողովրդն, և ատելի լինել յայս նոցա։

Լ.յլ ալաղուրջ զդաստութիւն, և անխորտակելի արիութիւնն նեեմեայ, և մանաւանդ ճշմարիտն օգնութիւն՝ զոր նա յարաժամ հայցէր յաղօթս իւր, և արժանաւորէր ընդունել վասն օգ և ճշմարտութեան զործոց իւրոց, պահեցին զնա յամենայն որոգայ-

թից, և պաշտպանեցին յամենայն զրպարտութենէ։ Եւ նա յայս ամենայն ամբոխմունս և յորոգայթս չէզև բնաւ ձեռնթափ 'ի սկսեալ գործոյն։ Յաճոյց զնուռվութիւն 'ի ժողովրդեան, քաջալերեաց զկարձամիտս. բաժանեաց զժողովուրդն յերկուս դասս, միոյն գործել զցերեկ՝ և հանգիստ առնուլ զցայգն, իսկ միւսոյն գործել զցայգն՝ և հանգչիլ 'ի ցերեկի։ Կարգեաց գունդս գունդս զինուորեալս 'ի պահպանութիւն գործաւորաց. այն զի՝ և նոքին իսկ գործաւորք ունէին սուսեր ածեալ ընդ մէջ, կազմ և պատրաստ՝ 'ի լինել հարկի միով ձեռամբ մարտնչիլ, և միւսովն գործել։

'Ի մէջ այսչափ խռովութենից և տառապանաց կատարեցան պարիսպք քաղաքին 'ի յիսուն և երկու աւուրս յամենանն իլուլի։ Մայլ ընդ այն ամենայն աւուրս ոչ նեղեմի, և ոչ ընտանիք նորա և ծառայք բնաւ ոչ մերկացան զհանդերձս, և ոչ զզէնս 'ի բաց եդին, բայց միայն վասն լուացմանց՝ որք պատուիրեալ էին յօրինաց նոցա։ Մինչ զգեցեալ ննջեցին. և ուր հարկ կարևոր քնոյ 'ի վերայ հասանէր, անդ ննջէին. է զի՝ 'ի վերայ պարսպայ, և է զի՝ 'ի վերայ քարակուտից. բայց և 'ի ննջելն առ գործաւորօք՝ ջերմացուցանէին զգործն նեռկայութիւն իւրեանց։ Ամենց դժուարին թուի յայնպիսում համառօտ ժամանակի այսչափ գործոյ 'ի գլուխ ելանել։ Յիրաւի չէ մարթ ժխտել, թէ ածխյատուկ ձեռնկալութիւն գործակից եղև նոցա. սակայն չեղև անդ հարկ դրական սքանչելեաց. զի հանգամանք այնց պարսպայ, եղանակ շինելոյ ընդ այն ժամանակս զպարիսպս քաղաքաց, և կարգն որ պահեցաւ 'ի շինութեան անդ՝ բառնան զդժուարութիւնն։

Ի շինեցան յայնժամ բոլոր պարիսպք քաղաքին երուսաղէմ. որ բաժանեալ էր յերկու քաղաքս, 'ի վերին, և 'ի ստորին։ Վերին քաղաքն էր մասն այն, որ կոչիւր Սիոն. որ և պարսպեցաւ 'ի ժամանակս կիւրոսի. որպէս ցուցանէն մեկնիչք. որ և 'ի գրոց ասի երևի. ուր չէք յիշատակ ինչ վասն

սիանի. որպէս և ոչ վասն այնց նեղբին պարսպաց, որք էին գլխաւոր պատսպարանք քաղաքին. այլ միայն վասն արտաքին չրջապատ պարսպաց։ Այլ այնպէս ոչ ըստ բոլորին, քանզի 'ի բաղումս տեղիս դեռևս կանգուն կային մեացուածք հին պարիսպաց. վասն որոյ շատ էր միայսրել զայնոսիկ ընդ նորոյն։ Այլ չունէին պէտս ժամամաձառ լինել 'ի կանգնել մեքենայս. վասն զի 'ի Թանձրութեան անդ պարսպաց թողուին աստիճանս՝ փոխանակ նորաշէն փայտեղէն սանդխոց։

Այլ ևս ոչ 'ի գործ արկանէին անդ կիր, այլ միայն շաղախ և քարինս. և այս իսկ է պատճառն, զի գտանեմք ուրեք ուրեք 'ի Դր դիրս պարիսպս քաղաքաց ստուարս, որք ընդ ժամանակս ժամանակս պէտս ունէին նորոգութեան. իբր զի ոչ գոլով քարանց կամ աղիւսոց 'ի ձեռն կրոյ միատարրաբեալ, դիւրաւ քակեալ անկանէին. նաև լոկ հուրն բաւական էր կործանել. զի չորանալով շաղախոյ՝ ինքնին քակտէին քարինքն 'ի միմեանց։ Արթ է յաւելուլ, թէ 'ի կործանել քաղդէացւոց զերուսաղէմ քաղաք՝ աւերակք պարսպաց կացին անդ առ պարսպօք. ուստի գործաւորք անդ առ ոտս պարսպաց՝ ուր գործէին, գտանէին զքարինս կուտակեալ։ Հուսկ յետոյ նաև կարգ գործաւորաց և գործոյն բաւնալով զամենայն խառնակութիւն և զչփոթութիւն, բազումս նպաստէ արագ և յաջող շինութիւն։ Այլ զիարդ և իցէ, ամենայն իրօք հաւաստի է թէ յաւուրս յիսուն և երկու շինեցան և կատարեցան նեեմիան պարիսպք երուսաղէմ քաղաքի. որպէս և դանիել կանխաւ գուշակեաց, յասելն. * Այլ դարձցին և շինեսցին հրապարակքն, և պարիսպք, և նորոգեսցին ժամանակք (ըստ լատ. յանձուկ ժամանակի) ‖. դան. Ը. 25։

ԳԼ. Լ.

Հաւատքէ՝ զոր արար Նեղոսի 'ի Կապարոնն պարբերպայ։ Լոյս զէսպէս Բարեկարգութեան զոր արար 'ի ծողովրդեան։

Երբև գլխաւորեալ կատարեցաւ շինութիւն պարսպայ, ժողովեցան յերուսաղէմ առնել նաւակատիս ուրախութիւն և գոհութիւն երգօք և նուագարանօք։ Էշխանք և գլխաւորք ժողովրդեան, քահանայք և ղևտացիք և սաղմոսանուագք կարգեցան յերկու դասս. և ձևացուցին իբր երկու թաւփօրս. որոց մին 'ի մի կողմն, իսկ միւսն ընդհակառակ կողմն շուրջ եկեալ 'ի վերայ պարսպայ, 'ի ձայն եղջերս փողոց, թմբկօք և ծնծղայիւք և սաղմոսարանօք յերգս գոհութեան օրհնելով զնոսա, եկին դէմ ընդդէմ միմեանց առ դուռն, որ կոչիւր Պահպանայ, և անդ միացեալ՝ գնացին միաբան 'ի տաճար անդր կատարել զուխտ իւրեանց։ Իսկ ժողովուրդն սփռեալ ընդ պարիսպն, յաշտարակս, և արդունս քաղաքին 'ի գնին անցանելոյ հանդիսագրաց, ինքեանք ևս զհետ նոցա գնային։ Յայսմ ժամու հանդիսին ամենայն դրունք քաղաքին ամրափակեալ կային, կրկնապատկեալ զպահպանս. զի մի յանկարծահաս յարձակումն թշնամեաց վըրդովեսցէ զհանդէս պաշտամանն նոցա։

Օրհնեցին յաւուր յայնմիկ զոհս մեծամեծս 'ի վերայ Տէր սեղանոյ, և ուրախ եղեն յոյժ. և կարգաւորեցին 'ի նմին աւուր զսրբազան պաշտամունս, և զտօնս, նոր նորոգեալ զամենայն կարգս, որպէս հրամայեալ էր յօրէնսն մովսէսի։ Յրևի թէ նեեմի այսպիսի սքանչելի յաջողութիւն ժամանեալ 'ի կատարումն ծանրակիր գործառնութենն՝ ի՛նչ անդորրացեալ 'ի վարանական հանապազորդ հոգոց. սրսրմիտեալ և շրջակայ թշնամիք ժողովրդեան

իւրոյ կասեցան 'ի նեղելոյ զնոսա, ապշեալ և զար-
հուրեալ ընդ արագ կատարումն մեծի գործոյն 'ի
դլուխ. յայտնապէս առանձին ինն գործակցութիւն
ոյ ընծայելով զյաջողութիւն գործոյն։ Սակայն տա-
կաւին պէտպէտ իշխանավայել խորհուրդք ամբո-
խելին զսիրտ նորա։

Քանզի արդարև կատարեցան պարիսպք, և
աշտարակք, և ամենայն ամրութիւք քաղաքին, բայց
առ համեմատութիւն ընդարձակութեան տակաւ էին
բնակիչք և պահպանք նորա. երևէր քաղաք
ընդարձակ, այլ իրօք էր լայնածաւալ անապատ
անմարդի։ Կաւ բազմութիւն դրանցն, ընդ որս
մնրթի էր թշնամեաց յանկարծական արշաւանաք 'ի
ներքոյ խուժել, ոչ սակաւ հոգս պատճառէին նմա։
Այլ առաւել քան զամենայն տանջէր զնա յետին
տգիտութիւն ժողովրդեան, որք նախ յերեսաց վըշ-
տաց բաբելական գերութիւն, և յետոյ 'ի զբաղ-
մանց շինութեան պարսպաց, և 'ի հանապազորդ
երկիւղէ արշաւանաց թշնամեացն, անհրահանգ և
անուսումն մնացին յօրինաց նոն ոչ։ Քանզի քաջ
գիտէր հանձարեղ իշխանն, զի տգիտութիւն յիրս
կրօնի է սկիզբն և աղբիւր ապականութեան վարուց
յամենեսին. այլ առաւելապէս 'ի մանկունս և յե-
բիտասարդս։ Յաւելոյր զդառնութիւն սրտին նեե-
մեայ և աղքատութիւն ժողովրդեանն. քանզի 'ի
պատճառս շինութեան տաճարին, և տանց և պարիս-
պաց քաղաքին, բազումք 'ի յետին չքաւորութիւն
հասեալ էին. յոլովք ծանրացեալք պարտեօք հան-
դերձ տոկոսեօք. և բազումք 'ի գրաւ եդեալ էին
զագարակս և զայգիս. շատք ևս վաճառեալ էին
զորդիս 'ի ծառայութիւն, և զդստերս 'ի վատթա-
բագոյն գերութիւն։ Ահեծատունք՝ որոց պարտ էր
նպաստաւոր լինել աղքատաց, առաւելուին զտա-
ռապանս նոցա անբմբերելի տոկոսեօք։ Յայսպիսի
թշուառութիւն գոլով ժողովրդեան՝ արդէն սկսեալ
էր շարժումն ինչ խռովութեան երևիլ 'ի նոսա. և
մնրթի էր իրաւամբ կասկածիլ, թէ 'ի յայտնի
ապստամբութիւն փոխեսցի։

Սակայն մեծախորհուրդն նեեմի յայս ամենայն չարեաց միջի՝ ոչինչ լքումն կրեաց, և ոչ անդործ արտամուծք պաշարեցաւ. այլ արիացեալ ձեռն 'ի գործ էարկ դարմանել զամենայն, որչափ ինչ հնար էր յայնպիսում դառնաղէտ վիճակի։ Այնդրեն արկ 'ի համար զամենեսին, որք 'ի գերութեէ եկեալ էին 'ի հրէաստան։ Այս երկրորդ համարաղիր 'ի բաղումն այլազգ դատաւ քան զառաջինն. քանզի յառաջնումն նոքա էին, որք եկին ընդ եզրասայ. իսկ յերկրորդումն բաղումք յայնցանէ պակասեալ էին մահուամբ. և բաղումք յաւելեալք, որք յետոյ եկին։ Այդ աշխատ եղև նեեմի, մինչև հաւանեցոյց զիշխանս և զգլխաւորս ցեղից շինել տունս և բնակել յերուսաղէմ. իսկ 'ի ժողովրդենէն վիճակաւ առեալ զմի 'ի տասանց՝ բնակեցուցանել յերուսաղէմ, զայլս արձակեաց երթալ յիւրաքանչիւր քաղաքս. և այսպէս բաղմացոյց զբնակիչս երուսաղէմ քաղաքի։ Ամենայն դրանց զայսօրինակ կարգեաց. զի ոմանք միշտ փակեալ պահեսցին, ոմանք անագան բացցին. առ որովք կացոյց պահապանս՝ որչափ ինչ կարևոր դատեր։ Այլ քանզի բաղմաց ոչ հաւատայր սակս համախորհուրդ լինելոյ ընդ ժանտին տուբիայ ամենացուոյ, վասն այնորիկ զհրամանատարութիւն 'ի վերայ ամենեցուն յանձն արար անանեայ եղբօր իւրում, և անանիայի առն ճշմարտի և երկիւղածի յոյ. և ևս ստէպ փոփոխեր զպահապանս՝ առ կարձելոյ զկասկածեալ հաղորդակցութիւնն ընդ արտաքինս։

Օգտիտութիւն փոյթ կալաւ այսպէս դարմանել. ստէպ ժողովէր զազգմութիւն յունկնդրութիւն ընթերցման օրինաց. առ որ ընտրեաց զՀմնոազոյն վարդապետս։ Յորչափ եկեաց եղրաս, նա ընթեռնայր հրապարակաւ զգիրս զևտացւոց և երկրորդ օրինաց. և դաստիարակէր զաշակերտս. և օրըստ օրէ մեկնէր նոցա զգիրս օրինաց, և քարոզէր 'ի վերայ բարձրաւանդակ փայտեղէն բեմի 'ի հրապարակս 'ի լուր խուռն բազմութիւն։ Ղևտացիք աշ-

կերաք նորա, որք 'ի քարոզել նորա կային առ նո-
վաւ, շրջէին իմէջ ժողովրդեան կարգաւորել զնո-
սա, և ունկն դնել հանդարտութիւն և լուութեամբ
ընթերցուածոյն։ Իսկ եղբաս այնպիսի եռան-
դեամբ, և փղձկմամբ սրտի ընթեռնոյր և քարո-
զէր, մինչև ժողովրդեան առ հասարակ յարտասուս
լուծանիլ, և լալ հեծեծանօք. և հարկ լինել զա-
տացւոց՝ մեղմել և լռեցուցանել զողբս և զհեծու-
թիս նոցա առ չխափանելոյ զլուր ընթերցուածոց։
Եւ իշխանք և քահանայք երեթային յունկնդրու-
թիւն ածային պատգամաց. զոր մտադիր լսէին և
շահեալ մեկնէին։

Օ կնի մանչու եղբասայ եղեն զօրաւոր քարոզք
և վարդապետք՝ յեսու, կադմիէլ, սաքանիա կամ
սաքանիա, մորեբիա, անանիա կամ քանանի, փա-
դայիա, մեթանայի, և անանի։ Այսք և այլք ընդ
նոսա կամակար անձնատուր եղեն ուսուցանել
զժողովուրդն. որք և ջերմ քարոզութիւն եռուն
առնել զոր դաշնադրութիւն կամ միաբանութիւն
ին նախանձայոյզ բարեպաշտ արանց. որք երդ-
ուան ուիստ եղին՝ գուն գործել աշխատիլ
վասն հասարակաց պահպանութիւն որ օրինաց նո-
րա. և ըստ օրինակի միաբանութիւն կամ եղբայրակ-
ցութիւն ջերմ նախանձաւորաց փառացն՝ ոչ ստորա-
գրեցան նախ՝ նեռմի, և ապա սկիզ ուիթսուն ի-
խանք 'ի ցեղէն յուդայի, և քահանայք և դևտա-
ցիք։ Եւ այսու կարգեցաւ դարման 'ի պահպանու-
թիւն հաւատոյ, յանձնումն ածպաշտութիւն, և 'ի փա-
ռատուն խաւարի տգիտութիւն։

Նոյր թեթևացուցանել զթշուառութիւն
աղքատաց, և սփոփել զնոսա՝ որչափ ինչ հնարա-
ւոր էր յայնպիսուի անձկութիւն ժամանակի. զայն
ևս արար նեռմի։ Հողովեաց զծերակոյտ ժողո-
վրդեանն, խօսեցաւ ընդ իշխանս. կոչեաց առ
ինքն զմեծատունս և զգլխաւորս, և յորդորմամբ
և յանդիմանութիւն, միանգամայն և սպառնալեաք
արար զի ամենայն պարտաւորք ընչաւէտք շնոր-
հեսցեն աղքատաց զամենայն պարտս նոցա, թող-

ցեն և ոչ ևս առցեն տոկոսիս. դարձուսցեն զա-
գարակս և զայգիս առ Հարկի բռնութեան վաճա-
ռեալս, և առ ագահութեան գնեալս անիրաւ գնով։
Այլ ևս արար՝ զի փրկեսցին 'ի ծառայութենէ որք
կային 'ի գերութեան վասն պարտուց. և առ 'ի
գլուխս տանելոյ զայսպիսի գործ մեծ և դժուա-
բին, բազումս զօրեաց իշխանութեան նորա, և հան-
ճարեալ ճարտարաբանութեան. այլ քան զայսոսիկ օրի-
նակ նորա առաւել։ Վասնզի 'ի փրկել զՀրեայս
որք էին վաճառեալք հեթանոսաց, ինքն և եղ-
բարքք իւր և պաշտօնեայքն նորա ետուն բազմաց յաղ-
քատաց դրամս 'ի փոխ առանց տոկոսեաց, և ցո-
բեան. և ասպա թողին նոցա զամենայն զփոխն ձրի։
Օարդարն կամեցեալ ասել, այնպիսի էր անընդ-
հատաղց իրաւասիրութեան նեղմեայ և գութ նորա
'ի վերայ ժողովրդեան 'ի տնտեսութեան իւրում,
զի սակաւք գտանին նմանօրք նմա, և ոչ որք յաղ-
թօղ նմա։ Կարգեալ գոլով յարտաշէսեայ իշխան
և գերագոյն կուսակալ 'ի վերայ Հրէաստանի, ոչ
միայն երբէք չծանրացոյց, և ոչ իւրոց պաշտօնէից
թողացոյց ծանրացուցանել զժողովուրդ իւր, այլև
զտուրս սահմանեալս յիւրոց նախորդաց, որպէս
'ի զօրաբաբելէ և 'ի յեսուեայ յովսեդեկեան 'ի
պէտս սեղանոյ իւրեանց օր ըստ օրէ 'ի հաց 'ի
գինի և յարծաթ քառասուն դիդրաքմայս (Ը լատ.
սկեղս) իբրև իրաւունս, ինքն ընդ երկոտասան
ամ իշխանութեան իւրոյ՝ երբէք ոչ պահանջեաց
զայն օր ըստ օրեայ տուրս 'ի ժողովրդենէ, և
զայնպիսիս ընտրէր առընթեր իւր պաշտօնա-
տարս, որք զգուութ և զողորմութեան ունիցին սիրդ-
բքն իւրեանց գործառնութենց. որպէս ինքն իսկ
ասէ. * Օերկոտասան ամ ես և եղբարք իմ եղ-
եաք իշխանք. բռնի զուրուք մեք ոչ կերաք և ար-
բաք ‖. Նեհ. Է. 14։

'Ի շինութեան պարսպաց և ամրոցաց մեծի քա-
ղաքին Երուսաղէմի դիւրին էր նմա քաղել դրամս
բաւական 'ի գնել գեօղս և ագարակս, բայց ոչ
չափեաց զաշխատանս իւր, և ոչ զգործ պաշտօ-

նէից և սպասաւորաց իւրոց. որք ամենեքին զցայգ և զցերեկ անխոնջ անխափան վաստակէին 'ի գործ. այլ այնպէս կշռեաց զտուրս, զի 'ի շինուածոց անտի ոչ մնաց նմա 'ի հասարակաց տրոց դրամ բաւական գնել թզաչափ մի գետին։ Լ՝ու որպէս զի ատենակալք մի ծանրացին 'ի վերայ ժողովրդեան 'ի պատճառս դարմանոյ կենաց, և մեծամեծք տնանկացեալք՝ մի տայցեն զանձինս 'ի յափշտակութիւն, նա ինքն նեղմի ունէր 'ի սեղան իւր յամենայն աւուր արս հարիւր (ըստ լատ. հարիւր յիսուն) 'ի հրէից. թող զայնոսիկ, որք 'ի շրջակայ ազգաց ստէպ գային առ նա վասն իրողութիւն իւրեանց, և առ նմա ճաշէին։ Սովորական ծախք սեղանոյ նորա աւուր աւուր էր զուարակ մի, և վեց ոչխարք ընտիրք, բաց 'ի թռչնոց և 'ի վայրի որսոց. և զայն ամենայն ծախս յիւրմէ առնէր, հրաժարեալ 'ի սովորական տրոց բովանդակ՝ զոր յառաջագոյն 'ի ժողովրդենէ առնուին։

Լ՝ու զայս ոչ վասն մնոտի փառասիրութեան, կամ առ մարդկան ականէ առնէր, այլ լոկ 'ի սիրոյ և 'ի գթոյ կարեկցութիւն, առ ընծանրանալոց տառապեալ ժողովրդեան. զոր ինքնին յայտ առնէ յոսէն, * Մ՝է յումեքէ առի զՀաց բռնի, քանզի գիտէի՝ եթէ ծանր է ժողովրդեանն ‖. Նեհեմ. Է. 18։ Լ՝ու ոչ յայլոց խնդրեաց վարձս, բայց միայն յոյ. խակ յայ զայլ ինչ ոչ խնդրէր, այլ միայն զի հայեսցի 'ի նա ողորմութիւն և գթութիւն, յիշելով զնա 'ի բարութիւն։ Լ՝հա զայսօրինակ կառավարեաց նեհեմի զՀրեաստան զամս երկոտասան. ապա դարձ արար անդրէն 'ի պարսս. ուր ընդունելութիւն մեծ եգիտ յարքայէ և 'ի պաշտօնէից նորա. այլ որչափ ժամանակս եկաց անդ, չէ հաւաստի։ Օ՝լ 'ի գիրս Նեհեմեայ, ԺԳ. 6. 7. այսչափ ինչ գտանեմք, եթէ յամին երեսներորդի երկրորդի արտաշէսի թագաւորին դարձաւ առ նա. և յետ բազում աւուրց (կամ ըստ լատ. 'ի վախճանի աւուրց) խնդրեաց 'ի թագաւորէն, և եկ յերուսաղէմ։

'Ի գալ նորա անդրէն յԵրուսաղէմ՝ լցաւ դառնութեամբ, տեսեալ զքաղաքն գլխովին կերպարանափոխ, խանդարեալ յամենայն բարեկարգութեանց։ Զանազի զկնի մեկնելոյ նորա անտի՝ մտտեսութի քաղաքին մեաց 'ի ձեռս ծերակուտին. և առ անհոգութեն նոցա, կամ առ անկարութի՝ բացաւ դուռն անհամար անկարգութեց։ Ակսան անդրէն ածել կանոնս այլազգիս ընդդէմ հրամանացն ոչ։ Զդիասիրք մեծ քահանայն սակս ազգականութեան և բարեկամութեան զոր ունէր ընդ նախայիշատակեալ տուբիայ ամենացուոյ, անկաւ 'ի ծանր սեղանակապտութիւն, տուեալ այլազգւոյն այնմիկ՝ որում և մեաս իսկ 'ի տաճարն արգելեալ էր յօրինաց, զմեծ և զընդարձակ տունն գանձու տաճարին. ուր պահէին կահք և սպասք տանն ոն, և տասանորդք և ռոճիկք քահանայից և զևտացւոց։ Իսկ քահանայք և զևտացիք զրկեալք 'ի սովորական պարենից, գնացեալ և ցրուեալ յայգաբակս իւրեանց՝ գործէին զգործ մշակութեան. և ոչ ևս պաշտէին 'ի տաճարի ոն ոչ։ Զսաև սանաբաղատ, որ եկեալ բնակեր յԵրուսաղէմ, ընդդէմ զքաղաքն։ Ոչ ևս պահէին օրէնք շաբաթուց. զի և յաւուրսն յայնոսիկ անխիղճ համարձակ գործէին զամենայն գործ ծառայական մարդիկ և գրաստք նոցա։ Մտեալ էին յԵրուսաղէմ բնակութիւն և տիւրացիք, և վաճառէին անդ ձուկն, բերեալ 'ի նաւահանգստից իւրեանց, և այլ զանազան վաճառս, զոր 'ի շաբաթու հանէին 'ի վաճառ։

Զդիդ իբրև զարձաւ այսրէն նեեմի, փութով եբարձ 'ի միջոյ զամենայն անկարգութիւնս։ Զտ վաղվաղակի ընկենուլ արտաքս զամենայն կահ և զաղխամախս տուբիայ 'ի տանէ գանձու տան ոն. և արար մաքրել և սրբել զտուն գանձուն։ Դարձոյց յԵրուսաղէմ զքահանայս և զևտացիս. և կարգեալ 'ի վերայ գանձանակի տան ոն վերակացուս արս հաւատարիմս և երկիւղածս, հրամայեաց ըստ աւուրց բաշխել և տալ քահանայից և զևտաց.

ւոց զբաժին իւրեանց 'ի տասանորդաց, և յամենայն եկամտից։ Զոգել խստութիւն զծառայական գործս և զաւուրս վաճառաց յաւուրս շաբաթուց. և զգրուշս քաղաքին հրամայեաց յայն աւուրս փակել. առ որովք կացոյց պահապանս յիւրոց հաւատարիմ զինուորաց, պատուիրելով չտալ բնաւ ումեք թոյլ բեռամբ մտանել 'ի ներքս, կամ ելանել 'ի դուրս։ Զի զի տիւրացիք՝ 'ի վերայ այսր ամենայնի՝ զձուկն և զայլ վաճառս իւրեանց յաւուրս շաբաթուց բանային և սփռէին արտաքոյ պարսպաց յանդիման դրանց 'ի գայթակղութիւն հրէից անցանելոյ զօրինօք իւրեանց, խօսեցաւ ընդ նոսա նեեմի խստութեամբ և օպառնալեօք՝ զինուք վանել զնոսա. և յայնմ հետէ ոչ ևս երևեցան անդ։ Զի զսանաքաղատ հալածեալ յիւրմէ՝ տարապրեաց 'ի հրէաստանէ. և 'ի հրէից անտի ոչք արարեալ էին կանայս յայլազգեաց, զբաղումս ետ գան հարկանել հրապարակաւ, և զբաղումս քերծուլ յօրինակ և 'ի զգուշութիւն այլոց յայնպիսի եղեռնական օրինազանցութիւնէ։ Զի է յայտ, թէ ոչ էր եկեաց նեեմի. և ընդ քանի ամն կառավարեաց զերուսաղէմ։ բայց զայս գիտեմք, զի մեղք քաղաքացւոց սովորաբար կարձեն զկեանս բարի ընտիր և հայրագութ կառավարչաց. զորս սակս ապերախտութիւնք նոցա փութով բառնայ ԱՏԾ. և տայ նոցա իշխանս անգութս և բռնաւորս, որք անձանց օգտի և շահասիրութիւնք միտ եդեալ, ընդ կաթին և ընդ գեղման խաշանց՝ և զարիւն նոցա հնարին ծծել։

ԳԻՐՔ ՀՆԳԵՏՄԱՆԵՐՈՐԴ

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԱԿԱԲԱՅԵՑԻՈՑ ՄԻՆՉԵՒ 'Ի ԴՐԻՍՏՈՍ

ԳԼ. Ա.

Շարունակումն պատմութեանց մեր գրոց 'ի Նեեմիայ գնալն 'ի Մաշիաբայեցիս 'ի յեռն թ։ գլխոյ մարգարէութեանց դանէլի։

Յերեմնեբորդ երկրորդ ամ արտաշէսի արքայի՝ յորմէ ընկալաւ Նեեմի դառնալ յերուսաղէմ, մինչև ցաղէքսանդր մակեդոնացի ել ամն իբր ծէ, չիք 'ի հոգ գիրս մատնաւոր ծանօթութիւն ինչ, բաց 'ի գործոց նեեմեայ զկնի դարձի իւրոյ յերուսաղէմ։ Հայմին 117. յետ առաջնոյ ամին կիւրոսի 'ի բաբելոն՝ սկսաւ թագաւորել աղեքսանդր մակեդոն, վասն մեծամեծ գործոցն մեծ անուանեալ։ Դանիել մարգարէ իբր 120. ամաց յառաջ՝ յամի երրորդի բաղտասարայ, և ապա յառաջնումամի մար դարեհի՝ նախասպատմեաց զյաղթութիւն աղեքսանդրի 'ի ը. և թ։. գլխս մարգարէութիւն իւրոյ։

Սա յետ երկոտասանամեայ թագաւորութեան իւրոյ, յորում տիրեաց գոգցես կիսոյ մասին աշխարհի՝ անկաւ յախտ մահու. և իբրև եղեալ մեռանի, կոչեաց զչորեսին զերևելի զօրապետս զիսառաւորեալսն 'ի նմանէ. որք ընդ նմա իսկ սնեալ էին

'ի մանկութէ. բաժանեաց եւ նոցա զթագաւորութիւն իւր, մինչդեռ ինքն կենդանի էր, չունելով զաւակ հարազատ թողուլ նմա։ Այս բաժանումն եւս գուշակեաց Դանիէլ՝ յասելն. ԺԱ. 5. «Յարիցէ թագաւոր հզօր, եւ տիրեսցէ տրութիւն բազմաւ. եւ արասցէ ըստ կամն իւր. եւ իբրեւ յարիցէ, թագաւորութիւն նորա փշրեսցի, եւ բաժանեսցի 'ի չորս հողմս երկնից. եւ ոչ ըստ վախճանի նորա (լտ. եւ ոչ 'ի սերունդս նորա). եւ ոչ ըստ տրութեանն զոր տիրեաց. զի խզեսցի թագաւորութիւն նորա եւ այլոց՝ թող զնոցայն»։ այսինքն բաց 'ի չորից անտի։

Այսոքանչ սոցին յաջորդաց մեծին աղեքսանդրի՝ որ գիրքս ոչ խօսին, բայց եթէ սկսեալ 'ի սելևկիոսէ եւ պատրոլայ. Է. մանչ. գլ. Ի. Այլ սոքա հերոնիմոս տայ մեզ բազում ծանօթութիւնս, որք կարի համանման գտանին մարգարէութեանն Դանիէլի։ Օ՛ի ասէ՝ թէ աղեքսանդր բաժանեաց զմիահեծան թագաւորութիւն իւր զայսոքինակ. զեգիպտոս՝ որ անկանի 'ի հարաւակողմն հրէաստանի, եւ պտղոմէայ որդւոյ դադասի. զասորիս և զբաբելոն՝ սելևկեայ նիկանովրայ. զմակեդոնիա՝ փիլիպպոսի, որ կոչի և արիդէոս. իսկ զպոնտոս և հարուստ մի յասիոյ՝ անտիգոնոսի։

Բայց 'ի չորից աստի մեծամեծ ինքնակալաց, բաժանեցին զթագաւորութիւնն աղեքսանդրի սելեւկիկաս, կրատերոս, լիւսիմաքոս, և այլք. քանզի կապադովկիա, հայաստան, բիւթանիա, և սահմանք բիւզանդիոյ վտարանջեալ 'ի մակեդոնացւոց, մնին ընդ ձեռամբ փոքրագոյն թագաւորաց։ Այս այս է, զոր ասէ դանիէլ. «Օ՛ի խզեսցի թագաւորութիւն նորա եւ այլոց, թող զնոցայն»։ այսինքն թող զթագաւորութիւն չորից նախագրեալ ինքնակալաց։ Բայց մարգարէութիւնն դանիէլի 'ի բաց թողու զնոսա, որոց բան ինչ ոչ գոյր ընդ երբայեցիս. և խօսի միայն զթագաւորաց եգիպտացւոց և ասորւոց. քանզի հրէաստան և իսրայէլ գոլով ընդ մէջ երկուց տրուեցս՝ կրեր յերկոցունց զծանրութիւն

պատերազմաց, կոխան լեալ զօրաց նոցա. Թող զյափշտակուիս, զՀարկապահանջուիս, և զՀարբսատահարութիս անդադարս. ըստ որում՝ 'ի միմեանց վերայ ելեալքս առնելով՝ մի քան զմի զօրանային։

Պտղոմէոս որդի զագոսի, որ և առաջինն պրտղոմէոս արքայ եգիպտացւոց, ինքնակալ խոհական առատամիտ և Ճոխ արիական քաջութիւն, զոր երևեցոյց 'ի նստուցանել անդրէն զպիւռոս 'ի Թագաւորութեն եպիւռոսի. և յաղթեալ դեմետրեայ որդւոյ անտիգոնոսի Թագաւորի ասիոյ, դարձոյց առ սելևկիոս զստորին ասորիս, որ և տաճիկաստան. զոր յափշտակեալ էր անտիգոնոս։ Լ՝այս պտղոմէոս է, զորմէ ասի 'ի մարգարէութիւն դանիելի։ * Լ՝ու զօրասցի Թագաւորն հարաւոյ ||, այսինքն եգիպտոսի։

Պտղոմէոս ՅԷ. փիղադեղփոս՝ այսինքն եղբայրասէր անուանեալ որդի առաջնոյ պտղոմեայ՝ առաւելեալ գտաւ քան զՀայր իւր իմաստութիւն, հարբսատութիւն և զինու զօրութիւն. զի ունէր յոտին երկերիւր հազար հետևակս, քսան հազար երիվարս, երկու հազար կառս գերանդազէնս, չորեք հարիւր փիղս։ Լ՝ու 'ի ծովու հազար հինգ հարիւր նաւս պատերազմի, և հազար նաւս բեռնաբարձս։ Ամբոլոր զազգ հրէից. մեծարեաց զտաճար երուսաղէմի բազում ընծայիւք և պատարագօք. և կուսեալ եօթանասուն և երկու ռաբբիս, այսինքն վարդապետս եբրայեցւոց հմտավարժս յաղեքսանդրիա քաղաք, եւ յեզուլ 'ի լեզուէ եբրայեցւոց 'ի յոյն բարբառ զՇՀաշունչ Տէր գիրս։ Ունէր անդ գրատուն բազմաշարուստ, կարգեալ նմա գրագետս զերևելին դեմետրիոս փաղերեան։ Այս է այն Թագաւոր, զորմէ գուշակեաց դանիել, Թէ առաւելուցու քան զՀայր իւր 'ի Տրութիւն իւրում, յասելն. * Լ՝ու մի յիշխանացն (այսինքն յարքայորդւոց պտղոմեայ առաջնոյ) զօրասցի 'ի վերայ նորա (այսինքն գեր 'ի վերոյ քան զնա,) և տիրեսցէ Տրութիւն մեծ ||։

Լ՝ուս սովաւ 'ի մեռանիլ սելևկեայ նիկանովրայ առաջնոյ 'ի ստորին ասորիս, Թագաւորեաց ընդ

նորա անտիոքոս ԽԱ. կոչեցեալ սովտեր, այս է՝ փրկիչ. զկնի նորա անտիոքոս ԺԲ. Թէոս, այսինքն ՆԾ անուանեալ։ Ի՝նդ սմա մղեաց պատերազմ՝ սաստիկ եղբայրասէրն պտղոմէոս. հուսկ ուրեմն վաստակեալ յերկարատև պատերազմաց՝ խորհեցաւ խնամութիւն հաստատել խաղաղութիւն ընդ անտիոքոսի։ Ի՝ր պտղոմեայ դուստր կոչեցեալ բերենիկէ. զոր՝ էտ 'ի կնութիւն անտիոքոսի. և քանզի էր անտիոքոսի և այլ կին լաւոդիկէ անուն, յորմէ արդէն ունէր երկու որդիս զսելևկիոս կաղզինիկոս, (որ Թարգմանի քաջայաղթ), և զանտիոքոս եւպատոր, այսինքն բարեհայր կամ հօրամոյն, միաբանեալ հաստատեցին երկու ինքնակալք, զի լաւոդիկէ լինիցի 'ի կարգի հարճից կամ երկրորդական կանանց. իսկ բերենիկէ դշխոյ. և որդիք ծնեալք 'ի նմանէ յաջորդք Թագաւորութեան։ Ա՝ռաս որոյ 'ի կատարիլ ամուսնութեան՝ լաւոդիկէ հանդերձ երկու որդւովք 'ի բաց հանաւ յարքունեաց։ Ի՝յլ զկնի սակաւուց վերստին արծարծեալ 'ի սիրտ Թագաւորին սէր առաջնոյ կնոջ՝ դարձոյց զնա անդրէն յարքունիս։

Իսկ լաւոդիկէ ոչ ևս վստահացեալ յանհաստատութեան առն՝ գաղտ դեղ մահու էտ նմա. և առբառնալոյ խսպառ զամենայն խոչ՝ էտ խողխողել և զբերենիկէ ընդ փոքրիկ որդւոյ նորա. և նստոյց յաթոռ Թագաւորութեան ասորւոց զանդրանիկն իւր զսելևկիոս կաղզինիկոս։ Ա՝յս ամենայն յայտնի նախասպատմեաց դանիել 'ի նոյն ԺԲ. գլ. Ի՝չ յետ ամանցն իւրեանց (այսինքն պատերազմին իւրեանց) խառնակեսցին (լտ. դաշնադիր լիցին) ընդ միմեանս (պտղոմէոս ԺԲ. Թագաւոր եգիպտոսի. և անտիոքոս ԺԱ. Թագաւոր ասորւոց), դուստր արքային հարաւոյ մտցէ առ արքայն հիւսիսոյ (այսինքն առ անտիոքոս) առնել դաշինս ընդ նմա (այսինքն ամուսնութիւն). և չհանդարտեսցէ զօրութիւն բազկին (բռնութիւն լաւոդիկեայ), և ոչ կացցէ զաւակ նորա, և մատնեսցի ինքն և ածելիքն իւր, և օրիորդքն, և որ զօրացուցանէր զնա 'ի ժամա-

նակին ||, զի ամենեքեան խողխողեցան ընդ նմա։

Եռաւ պտղոմէոս եղբայրասէր, և Թագաւորեաց անդրանիկ նորա պտղոմէոս Ֆ. Եւ էրգետէս, այսինքն բարեգործ կոչեցեալ. զորմէ ասէ դանիէլ. "Եւ յարիցէ 'ի ծաղկէ արմատոյ նորա 'ի վերայ պատրաստութեան իւրոյ (լտ. յարմատոց նորա տունկ) ||. այսինքն յարմատոց բերինիկեայ. զի պտղոմէոս Ֆ. էր հարազատ եղբայր նորա։ Եւ յարէ դանիէլ. "Եւ եկեսցէ առ զօրութիւն (այսինքն զօրութիւն), և մտցէ 'ի հաստատութիւս թագաւորութեան հիւսիսոյ. և արասցէ ընդ նոսա, և զօրասցի. և զածս նոցա կործանեսցէ հանդերձ ձուլածոյիւք նոցա. և զամենայն սպասս ցանկալիս նոցա զոսկւոյ և զարծաթոյ գերի առեալ բերիցէ յեգիպտոս, և ինքն հաստատեսցի քան զթագաւորն հիւսիսոյ, (լտ. զօրասցի ընդդէմ թագաւորին հիւսիսոյ). և մտցէ 'ի թագաւորութեան արքային (լտ. արքայն) հարաւոյ, և դարձցի անդրէն յերկիր իւր ||։ Այս ամենայն անվրէպ կատարեցաւ. զի պտղոմէոս Ֆ. կամեցեալ առնուլ զվրէժ տարապարտ մահու քեռ իւրոյ բերինիկեայ՝ եկ բազմաձեռն գնդաւ 'ի վերայ սելևկեայ կաղջինիկոսի, որ ընդ մեր իւրում լաւոդիկեայ թագաւորէր յասորիս, և կալաւ զասորիս, զկիլիկիա, և հարուստ մի յայնկոյս եփրատայ։ Այլ լուր առեալ նորա՝ եթէ խռովութիւն մեծ յարուցեալ է յեգիպտոս, ստիպեցաւ դառնալ յետս. և 'ի դարձի իւրում աւար հարեալ առհասարակ զամենայն սահմանս սելևկեայ՝ եառ քառասուն հազար տաղանդ արծաթոյ, և երկու հազար հինգ հարիւր տաղանդ ոսկի և արծաթի սպասս՝ կռոց նուիրեալս, և կուռս ձուլածոյս ոսկւոյ և արծաթոյ։ Այլ 'ի դառնալ իւրում կալաւ զասորիս ընդ իւրով մնտեսութիւն. իսկ 'ի կիլիկիա կացոյց սպարապետ զանտիոքոս, և յայնկոյս եփրատայ զբսանթիպպոս։

Սելևկիոս կաղջինիկոս պարտեալ և կորացեալ գնաց փախստական, և մեռաւ 'ի տրտմութիւն ցաւոց, թողեալ երկու որդիս զսելևկիոս Ֆ. կերաւ-

նոս (այսինքն կայծակն) կուլեցեալ. և զանտիոքոս
Ի. որ յետոյ մեծ անուանեցաւ։ Խօսեցաւ և վասն
սոցա դանիէլ, յասելն. ԺԱ. 10։ * Եւ որդիք նո-
բա ժողովեսցեն զամբոխս զօրաց բազմաց, և մտցէ
դիմել, և հեղեղատեսցէ, և անցցէ և դադարեսցէ
(լատ. դարձցի), և գրգռեսցէ մինչև 'ի զօրու-
թիւն նորա (լատ. գումարեսցէ զօրութիւն նորա)։
Սոքա երկու եղջերք միաբանեալ 'ի վերայ ժխնդրու-
թիւն անարգանաց հօր իւրեանց՝ զօրաժողով եղեն
ընդդէմ պտղոմեայ երրորդի. այլ յերկուց անտի
միոյն և եթ մնաց՝ զգործ պատերազմի վճարել. զի
սելևկիոս կերաւնոս յետ երից ամաց խողխողեցաւ
'ի փռիւգիա 'ի նիկանովրայ և յապատուրիոսէ։
Այսու ժամանակաւ մեռաւ և պտղոմէոս Ի.
ուստի մեծն անտիոքոս դարձոյց զզէնս իւր 'ի վե-
րայ որդւոյ նորա պտղոմէոսի Ի. որ անուանեալ
կոչէր փիլոպատորը, այսինքն հայրասէր։ Եւ էր
սա այր պատերազմող. մատնեալ գլխովին 'ի սէր
ազատութեան դերասան կնոջ. յոյր սակս և զօրա-
պետք նորա տաղտկացեալ 'ի նմանէ՝ ելին հաւա-
տարիմ առ նա։ Սոսն որոյ անտիոքոս կալաւ զա-
սորիս կամ մատնութիւն, և կամ անհոգութիւն թեո-
դոսիոսի, որ էր կարգեալ հրամանատար յասորիս.
և յանդգնեալ մեծամտութիւն առ չունելոյ առաջի
իւր ընդդիմակս, շարժեաց զբանակ իւր դէպ
ուղիղ յեգիպտոս. այլ իբրև ձակատեցաւ առ ռաս-
փիաւ 'ի դրունս եգիպտոսի, կորոյս զամենայն
զզօրս իւր. և ինքն մնազապուրծ ապրեցոյց զանձն
փախստականութիւն։ Եթող և զասորիս՝ զոր ստացեալ
էր, առ ամիսի ունելոյ զզօրութիւն իւր, կասկած
ունելով 'ի մտի, թէ գուցէ պտղոմէոս սոսկին
յաղթութիւն արիացեալ դիմեսցէ 'ի վերայ նորա։
Այս ամենայն նախագուշակեաց դանիէլ, յա-
սելն. * Եւ դաղանասցի թագաւորն հարաւոյ
(պտղոմէոս փիլոպատորը), և ելցէ և տացէ պա-
տերազմ ընդ թագաւորին հիւսիսոյ (անտիոքոսի
մեծի), և գումարեսցէ զօր բազում. և մատնեսցի
զօրն 'ի ձեռս նորա, և առցէ զամբոխն. և բարձ-

բասցի սիրտ նորա, և կործանեսցէ զբիւրաւորս։
Սակայն պտղոմէոս զօրանալով 'ի ձակատու կռուոյն
ոչ զօրացաւ 'ի վերայ անտիոքոսի. "Եւ ոչ զօրաս-
ցի", ասէ դանիել։ Վասնզի շատացեալ նորա՝ զի
յաղթեաց, և վանեաց զթշնամին մինչև յայնկոյս
Եփրատայ, և անդրէն կալաւ զասորիս, արար հաշ-
տութիւն. և ետ ժամանակ անտիոքոսի առնել պատ-
բաստութիւն դժնդակագոյն պատերազմի. ըստ
որում ասէ դանիել. "Եւ դարձցի արքայն հիւսի-
սոյ (անտիոքոս), և ածցէ զօր բազում քան զառաջինն, և 'ի վախճանի ժամանակաց (փոքր մի յա-
ռաջ քան զմահ փիլոպատորայ) եկեսցէ 'ի մտանել զօրու մեծաւ, և բազում ստացուածովք։
Օ 'ի միաբանեցաւ ընդ փիլիպպոսի մակեդոնացւոց արքային ելանել երկոցուն 'ի վերայ եգիպտոսի յայլ և այլ կողմանց, որ առաւել հոգալ իցէ երկաքանչիւրոց և որչափ ինչ տեղի առցէ իւրաքանչիւր, նորա լիցի։ Եւ այսու ոչ շատացեալ անտիոքոսի՝ ձգեաց յիւր կողմն և զայլ ներութիւս։
Օ այսու ժամանակաւ մինչդեռ յայսպիսի վտանգաւոր վիճակի հեծէր եգիպտոս, մեռաւ թագաւոր նորա. և նստուցին զորդի նորա զպտղոմէոս Ե. եպիփան, այսինքն երևելի անուանեալ՝ մանուկ չորից ամաց. թողեալ զմատակարարութիւն թագաւորութենն 'ի ձեռս ագաթոկղէսի եղբօր ագաթոկղեայ դերասան կնոջ հարձի մեռեալ թագաւորին։ Ընդ այս անհնարին ատելութիւն դառնացեալ եգիպտացւոց՝ բազումք 'ի նոցանէ զկնքնկեց եղեն. շատք ևս ապստամբեալ յարեցան 'ի մակեդոնացիս և 'ի քաղդէացիս։ Ի սմին ժամանակի հրեայք, որք կային 'ի խաղաղութիւն՝ չունելով բան ինչ ընդումեք, ըստ խուռվասէր բարոյից իւրեանց ինքնագլուխ հերձեալ 'ի միմեանց՝ բազումք ինքնայօժար մտին 'ի զինուորութիւն անտիոքոսի. այլք դիմեալ յեգիպտոս՝ յարեցան յագաթոկղէս վասն պտղոմեայ։ Հոլչակեալ էր առ նոսա մարգարէութիւնն Եսայեայ, որ ասէ. "Յաւուր յայնմիկ եղիցի սեղան տէր յերկրին եգիպտացւոց, և արձան կանգ-

նեալ են 'ի սահմանս նորա։ Լ.այր մի 'ի հրեից անուն մնիա անուն՝ կամեցեալ արդեամբ հաւասատել զայս նախագուշակութիւն, ժողովեաց ամբոխս բազում, և եել յեգիպտոս. և գտեալ անդ յաջողութիւն՝ ընկալաւ յարքայէ զհեղինուպոլիս, այն է արեգ քաղաք. և կանգնեաց անդ տաճար ըստ ձևոյ տաճարին երուսաղէմի. կրկին վնասու ժողովրդեան իւրոյ. զի մասն ինչ նոցա անդ կորեաւ 'ի պատերազմի, իսկ այլք կորեան հոգւով՝ անցաւ նեղով զպատուիրանաւ նոն, որ հրամայեր յերուսաղէմ ևեթ պատարագս և զոհս մատուցանել։ Օ այս ամենայն դրեաց դանիել 'ի ԺՁ. գլ. իւրոց մարգարէութեց. զի տաց ցնա հրեշտակն, որ խօսեր ընդ նմա. * Լ.յ 'ի ժամանակն յայնոսիկ բազումք յարիցեն 'ի վերայ թագաւորին հարաւոյ (եգիպտոսի). և որդիք մնացելոց (լտ. պատուիրանազանցից) ժողովրդեան քոյ բարձրասցին հաստատել զտեսիլն, և տկարասցին (լտ. կործանեսցին)։

Լ.նտիոքոս զառաջինն էառ զկիլիկիա և զասորիս՝ որք առաւել մնա էին սահմանս նորա, մանաւանդ թէ մասն թագաւորութեանէ իւրոյ. յորս յայնժամ տիրէին թագաւորք եգիպտացւոց։ Իսկ սկսեալ մի 'ի գլխաւոր սպարապետաց պտղոմէայ, առեալ զզօրս իւր, յորս յաւել և յինքնեկաց որչափ ինչ ձեռնհաս եղև, խաղաց ընդառաջ անտիոքոսի. 'ի դիմի հարեալ արիական քաջութիւն՝ յետոյ պարտեցաւ յոտս լիբանանեղոյ լերին մերձ յակունս յորդանանու. և փախստեայ եղեալ տասն հազարաւ՝ անկաւ 'ի սիդոն. զոր վաղվաղակի պաշարեաց անտիոքոս։ Վակայն արին սկսեալ ընդ բազմութիւն պահապան զօրաց ընդերկար պահեաց զքաղաքն։ Լ.յլև պտղոմէոս առաքեաց զերիս 'ի գլխաւոր սպարապետաց իւրոյ յօգնութիւն. բայց վայրապար. քանզի առ պակասութիւն ռոճկաց 'ի դարման քնակչաց, հարկեցան անձնատուր լինել 'ի կամս անտիոքոսի. որոյ տիրեալ քաղաքին՝ արձակեաց ողջանդամ զկսպա. իսկ նա գնաց 'ի հրե-

ստան. ուր բազումք 'ի հրէից առ սէր պղծմանայ ինքնակամ յարեցան 'ի նա, և իջին ընդ նմա յեգիպտոս։

Այս ինքնայօժար բերումն հրէից առ սէր եգիպտացւոց, շարժեաց զզէնս անտիոքոսի 'ի վերայ հրէաստանի. որ ընդ երկար բազմաշխատ և տարժանելի պաշարմամբ էառ զբազում ամուրս և զքաղաքս նոցա. զի ուր առ խստութեամբ երկրին չէր մարթ բանս և բրիչս 'ի կիր արկանել առ 'ի կանգնել պատնէշ, այլուստ տայր բերել զՀող. և ինքն ոչ դադարէր 'ի հարկանելոյ. և այսպէս հրեայք, որք զառաջինն սկսան առ սէր այլոց մտրտնչիլ, յետոյ ստիպեցան վասն ինքեանց՝ իբրեանց զինուք մնքառիլ։ Օ այս և նախասպատմեաց դանիել. ԺԱ. 15. * Այլ եկեսցէ (անտիոքոս) թագաւորն հիւսիսոյ, և կուտեսցէ հող, և առցէ զքաղաքս ամուրս. և բազուկք արքային հարաւոյ ոչ հաստատեսցին. և յարիցեն ընտրեալք նորա՝ և ոչ իցէ զօրութիւն կալոյ (այսինքն ընդդէմ կալոյ)։ Այլ արասցէ 'ի մտանելն իւրում առ նա զկամս իւր. և ոչ ոք իցէ՝ որ ունիցի զդէմ նորա. կայցէ յերկրին սաքիրայ (լտ. երևելւոջ). և վախճանեսցի 'ի ձեռս նորա ॥։

Սակայն անտիոքոս ոչ շատանայր յաղթութիւնք զոր արար, թէ ոչ և զեգիպտոս բովանդակ զբռամբ ածիցէ. այլ տեսեալ զդժուարութիւն գործոյն՝ խորհեցաւ նենգութիւն զգործն 'ի գլուխ հանել։ Կեղծաւորեցաւ իբրու վաստակեալ յերկար պարերազմաց, և առաջի արար պղծմանայ առնել ուխտ խաղաղութեան ընդ միմեանս. զոր և անլոյծ յոգիս խնամութեան կամեցեալ հաստատել՝ խոստացաւ նմա զդուստր իւր զկղեոպատրա 'ի կնութիւն, տալով նմա յօժիտ զստորին ասորիս, որ յայնժամ էր ընդ նորա ձեռամբ, իսկ յայլ ժամանակս տիրապետեալ յեգիպտացւոց։ Օ այս ամուսնութիւն խորհեցաւ անտիոքոս առնել, ակնունելով թէ դուստր իւր կին խորամանկ և առնասիրտ՝ գողացի զսիրտ առն, և լինիցի ինքեան զործակից 'ի կատարումն կամաց իւ-

բոց, գէթ ծանուցանելով նմա զգաղտնի խորհուրդս առն։ Պատարեցաւ ամենամութիւն, բայց չէր 'ի գլուխս Նենգութիւն անտիոքոսի, քանզի կինն հանձարեալ չէառ յանձն մնամնել զթագաւորութիւն որ իւր էր, և ոչ զրկել զորդիս իւր՝ առ ընդարձակելոյ զտերութիւն հօր իւրոյ ըստ անյագ ցանկութեան նորա։ Պատն որոյ յայտնեաց արքայի առն իւրում զամենայն պատուերս նենգութեան, զոր էառնմա հայրն իւր. և ուստոյ չհաւատալ կեղծ բարեկամութեան նորա, այլ կալ միշտ կազմ և պատրաստ։ Օ այս ևս յայտնեաց հրեշտակն դանիէլ, յասելն։ Եւ դիցէ զերեսս իւր (անտիոքոս) մնամնել զօրութիւն յամենայն թագաւորութիւնս նորա. և զամենայն ուղղութիւնս (այսինքն ուխտ խաղաղութեան) առնիցէ ընդ նմա, և զդուստր կանանց տացէ նմա յապականութիւն (այսինքն 'ի կործանումն). (այլ խորհուրդն այն) մի յամրասցի (այսինքն մի յերկարեսցի, լատ. մի կացցէ), և մի եղիցի նա (այսինքն թագաւորութիւն) նորա։

Անտիոքոս իբրև ետես եթէ խաբեցաւ 'ի յուսոյ ակնկալութեան իւրոյ, դարձաւ ծովային պատերազմաւ 'ի վերայ կղզեաց. էառ զՀռոդոս, զսամոս, և զայլ կղզիս բազումս։ Այլ գոլով այնց կղզեաց ընդ հզօր ձեռամբ պաշտպանութեան հռովմայեցւոց, յորոյ զնոսա 'ի վերայ իւր։ Խաղաց 'ի վերայ նորա սկեպիոն նասիկա, որ յայնժամ հիւպատոս էր. այլ զի անբաւական էր ինքնին առաջնորդել այնչափ զօրաց, տուաւ նմա յօգնութիւն միւս սկեպիոն ավրիկեցի եղբայր նորա յաղթող անմիբաղայ։ Իսկ անտիոքոս 'ի պարտութիւն մատնեալ, բռնադատեցաւ ամիոփիլ 'ի մէջ սահմանաց լերանցն տորոսի. և լինել հարկատու հռովմայեցւոց. և առ ապահովութիւն՝ տալ զորդի իւր պատանդ նոցա։ Այն նորա եղկու որդիք, մին սելևկիոս կոչեցեալ, զոր կալաւ առ իւր. իսկ երկրորդն անտիոքոս համանուն հօրն, զոսա ետ պատանդ հռովմայեցւոց։ Այլ ինքն դարձեալ զօրաժողով եղև և դիմեաց 'ի պարսս, ուր 'ի գաւառին ելիմ-

նեայ կորոյս զամենայն զօրս իւր. և ինքն կամ
ել նոսա անկաւ անդ, և կամ վիրաւորեալ փախըս-
տական գնաց և մեռաւ յանշէն անտառի ուրեք.
զի այնուհետև ոչ ևս երևեցաւ, և ոչ գիտաց ոք
ինչ զնմանէ։ Այսոսիկ սորա այսպէս խոս-
սի հրեշտակն առ Դանիէլ. �մ. 18։ * Լու դար-
ձուսցէ զերեսս իւր 'ի կղզիս. և առցէ զբաղումս.
և այրեսցէ զիշխանն որ նախատէրն զնոսա (լտ.
զնա), և զնախատինս նոցա դարձուսցէ յերեսս
նոցա. (լտ. և նախատինք նորա դարձցի 'ի նա)։
Լու դարձցի զօրութիւն յերկիր իւր (լտ. և դար-
ձուսցէ զերեսս իւր 'ի թագաւորութիւն երկրի
իւրոյ) և տկարասցի, և անկցի, և ոչ գտանիցի։

Իսկ զինի նորա թագաւորեաց որդի նորա
սելևկիոս Ղ. Եւպատոր կոչեցեալ՝ յայնմ մասին
ասիոյ, ուր տիրէր Հայր նորա մեծն անտիոքոս։
Օսա քաջ ստորագրէ հրեշտակն առ Դանիէլ.
Ժա. 20. * Լու յարիցէ (ասէ) յարմատոյ նորա
տունկ թագաւորութեան. (լտ. Լու կացցէ 'ի տեղի
նորա սնարդ, և անարժան թագաւորական վայել-
չութեան). և 'ի սակաւ աւուրս խորտակեսցի՝ ոչ
արտմտութիւն, և ոչ պատերազմաւ։ Այսպէս
եղև. զի սելևկիոս Ղ. զուրկ էր յամենայն արքայ-
ական քաջամասնութեանց. որ և յառաջնուրմ ամի
թագաւորութեան իւրոյ մեռաւ ոչ պատերազմաւ,
այլ դեղով մահու, զոր արքայն նմա եղբայր նորա
անտիոքոս երևելին. որպէս ունիմք յիշատակել
'ի կարգի պատմութեան մակաբայեցւոց։ Այս է
սելևկիոս յիշատակեալ յերրորդ գլուխ երկրորդ
գրոց մակաբայեցւոց, ուստի սկսանի բուն կարգ
պատմութեան մակաբայեցւոց։ Լու այսպէս ՝ի գիրք
'ի գրոցն նեեմեայ շարունակեն զպատմութիւն մա-
կաբայեցւոց միջնորդութիւն ժա գլխոյ մարդարէու-
թեանց դանիէլի. ուր գտանեմք, զոր ինչ արտաքին
պատմիչք զինի մեծին աղեքսանդրի տեղեկագոյնք
և արժանահաւատք յիշատակեն 'ի պատմութիւնս։
Այսոսիկ որոյ և մեք սկիզբն արասցուք յերկրորդ
գրոց երրորդ գլխոյն զկարգ պատմութեան մակա-

քայեցլոց. ընդ որ չունի ոք ինչ զարմանալ, գի-
տելով զի երկրորդ գիրքն ոչ է շարունակութիւն
առաջնոյն. այլ մնսն նորա՝ գրեալ յայլմէ սրբա-
զան գրչէ։

Գ.Լ. Բ.

Լիա չահանայապետ և իշխան հրէաստանի։ Սելե-
ւկոս Փիլոպատորն Ասիոյ։ Հեղիոդորոս հան-
դերձյապետ նորա։ Սիմոն վերաքացու գաձարին երուսա-
ղէմ։

Հրեաստան այն ինչ զերծեալ 'ի սրոյ մեծին
անտիոքոսի երրորդի, և յերթևեկ զօրաց պատղամեայ
է. երևելւոյ, յորոց ոտնակոխ եղև ընդ հարուստ
մի ժամանակ, կայր յանդորրու ընդ հայրախնամ
տնտեսութիւն ունեայ մեծի քահանայապետի առն
հզի և բարեպաշտի. որ առաջնորդէր ժողովրդեան
իւրոյ ըստ սրբութեան օրինացն Աշմարութիւն, ահա
Սիմոն անուն ոմն յազգէն բենիամենի, վերակացու
տաձարին, և առաջնորդ տոհմին իւրոյ, այր ամ-
բարտաւան և խռովայոյզ՝ ելից աղմկաւ զքաղաքն
ողջոյն. զի կամէր բռնակալել և տիրել ինքնա-
գլուխ, ոչինչ ակնածելով յումեքէ։ Լ.այլ ոմնիա
իշխան զօրաւոր և ազալուրջ՝ արիաբար գիտակա-
լեալ յանդուգն բերման նորա, սանձէր զնա և
նուազէր, կարձելով 'ի չարեացն՝ զոր անօրինէր 'ի
քաղաք անդր։ Լսկ այրն անօրէն իբրև ետես՝
եթէ ինքնին յաղթել ունեայ և չար ինչ առնել նմա
ոչ կարէ, խորհեցաւ զինուք արտաքին իշխանուն
վրդովել զնա։ Զոքաւ եգիպտ զապողոնիոս, որ 'ի
նմին ժամանակի կարգեալ էր 'ի սելևկիոսէ սպա-
բապետ ստորին ասորւոց և փիւնիկեցւոց. և պատ-
մեայ նմա եթէ տուն գանձուց երուսաղէմի լի է

գանձիւք. և 'ի տաճարին բաց 'ի մեծագանձ սպա-
սուց նոն ոչ՝ պահի հարստութեան անթիւ, զոր չէ
մարթ 'ի համար արկանել. զայն ասէ անկ է թա-
գաւորին առնուլ 'ի սպաս զոհիցն և 'ի պէտս թա-
գաւորութեան իւրոյ։

Այս ախորժական լուր հասոյց ապողոնիոս
վաղվաղակի առ թագաւորն. և զի ոչ ընդերկար
քննին և կշռին իրաւունք, ուր ընդ առաջ լինի շահ
դիւրստանալի, վասն որոյ և թագաւորն նոյնհե-
տայն առաքեաց յերուսաղէմ զհեղիոդորոս զհան-
գերձապետ իւր՝ արքունի հրովարտակաւ, զի 'ի
ձեռս նորա տացին գանձք տաճարին։ Այլոն եհաս
հեղիոդորոս յերուսաղէմ խաղաղութիւն՝ ծածկելով
'ի մտանել իւրում զհրամանն, և կեղծելով անցա-
նել 'ի ստորին ասորիս յայցելուն քաղաքաց։ Նիա
և քաղաքն ամենայն ընկալան զնա բազում մեծա-
բանօք և սիրով. իսկ նա զկնի սակաւուց բացեալ
զարքունի հրամանն՝ յայտ 'արար զիսկական պատ-
ճառ գալստեան իւրոյ։ Ընդ որ վրդովեալ 'ի միտս
իւր մնեայ, սակայն և այնպէս անխռով և անշփոթ
մնօք յայտնեաց նմա. էն արդարև ասէ դրամք
պահեալք զգուշութիւն 'ի տաճարին. բայց այնք
մասամբ ինն էն աւանդք 'ի պահեստ եդեալք. և
մասամբ ինն գլուխք՝ կարգեալք 'ի պարէն և 'ի
դարման այրեաց և որբոց. էն և հիւրկանեայ առն
աւագի և մեծատան 'ի սերնդոցն տոբիթայ. այլ
ոչ որչափ ամբաստանօղ անօրէնն պատմեաց. ընդ
ամենայն թէ խցեն 'ի տաճարին՝ չորեքհարիւր քան-
քարք արծաթոյ, և երկերիւր քանքարք ոսկւոյ. այլ
'ի բաց տալ զայն չէ և չէ հնար. զի լիներ դաւա-
ճանել զնոսա, որք զինչս իւրեանց հաւատացին
տեղւոյս սրբոյ. որ վասն սրբութեան իւրոյ և մեծա-
պատիւ շքեղութեան 'ի պատուի է ընդ ամենայն
աշխարհ. իսկ հեղիոդորոս կրկնէր և պնդէր զհրա-
մանն արքունի, և առ ոչինչ համարեալ զձիգն դի-
մակայութեան մնեայ՝ ինքն սահմանեաց օր և ժամ
մտանել 'ի տուն գանձուց, և բառնալ տանել
զգանձն առ սելևկիոս։

Այս ձայն իբրև լու եղև յԵրուսաղէմ, լցաւ ահիւ և սասանմամբ քաղաքն ամենայն. քահանայք ինքնին իւրեանց քահանայական պատմուճանաւ անկեալ թաւալէին առաջի սրբութեան սեղանոյն, աղաղակէին և խնդրէին յերկնից զօգնութիւն ոյ, որ ետ զօրէնս վասն հաւատարիմ աւանդապահ զգուշութեան, զի զայն ողջ անարատ յիւրաքանչիւր աւանդատուրս հասուցանել մարթասցին։ Իսկ ժողովուրդն յայլագունեալ երեսացն ունեայ 'ի միտ առեալ զծանրաթախիծ տաղտկութիւն և զոգեւոր տագնապ սրտին, անհնարին ցաւով վշտանային ընդ տառապանս նորա. զի սիրելի էր նա ամենեցուն։ Այլք դաս դաս գային պաղատանս և խնդրելովք վերառաքելով առ ոՀ կարձել զտարաբարտ բռնութիւն առն։ Այս տիկնայք սարսափեալք քրձազգեցեալք ընդ հրապարակս խռնեալ աշխարէին. և կուսանք արգելականք 'ի դրունս և 'ի պարիսպս կուսաստանացն ընթանային, և կէսք ընդ պատուհանս արտաքս կարկառէին տեսանել զնոսա. և չկարելով այլազգ օգնել նմա, հեծէին և մորմոքէին ընդ վիշտ վտանգի նորա։ Այս առ հասարակ ամենեքեան 'ի սուգ և յողբս և 'ի տարակուսանս համակեալ, մնային սրտաթափ՝ տեսանել զկատարած մեծի վտանգին ունեայ։

Հեղինոդորոս չունէր ընդ իւր զօրս, այլ սակաւաթիւ սպասաւորս ևեթ. վասն որոյ թէ կամեցեալ էր ունեայ շարժել զժողովուրդն 'ի վերայ նորա, 'ի քթթել ական քարամբք թաղէին զնա հանդերձ սպասաւորօքն։ Այլ այս չէր 'ի դէպ. հարկ էր մեծարել զանդէն պաշտօնեայն վասն ոսպառաղի նեալ արքային. զի քաջ իսկ տեսանէին, զի թէ ձեռն մխէին 'ի նա, մարտ դժնդակ յարուցանէին 'ի վերայ իւրեանց. որուամ չէր հնար նոցա դիմակալել՝ չունելով զօրութիւն բաւական։ Այն որոյ յամենազօր տէրն զէլս իրացն ապատան արարեալ, ամենեքին առ հասարակ անկեալ յերկիր թաւալէին, և զձեռս յերկինս ամբարձեալ աղաթանուէր բարբառով առ ամենակալն կարդային։

Լու լուսաւորեալ ոգեղեղ ի աստուածային սրբութեան հանդերձ, և ձեմիցէ անդ սիգալով, յունելով ուստեք կատարած երկիւղն, զի տեսանիցէ զբաղաքն ողջոյն պակուցեալ և ահաբեկ. ահա երևեցաւ անդէն 'ի տեղւոջն յանկարծ գեղաղէշ երիտասարդ մի հեծեալ յերիվար, և վառեալ 'ի զէն և 'ի զարդ ոսկեփայլ, որ միով խոժոռ և զայրագին հայեցիւք զարհուրեցոյց զհեղեղոդորոս և զսպասաւորս նորա. և երիվարն երկու կիցս ընկեցեալ 'ի սիրտ նորա՝ ընկէց զնա 'ի գետին։ Յայնժամ երևեցան և այլ երկու երիտասարդք հղօրեղք 'ի զարդ գեղեցիկ զարդարեալք՝ ունելով 'ի ձեռս մտրակս, և մատուցեալ յաջմէ և յահեկէ հարին զեղեղեալն 'ի հարուածս մեծամեծս, մինչև առ սատակութիւն ցաւոց մնալ անդգայ թմբեալ մերձ 'ի մահ. և ոչ ոք յիւրոց անտի իշխէր հոգալ լինել և օգնել ինչ նմա, զի ամենեքեան մահու երկիւղիւ ըմբռնեալ՝ ոչ համարձակէին շարժիլ 'ի տեղւոջէն։ Այսպա նոքին իսկ հրէայք բարձեալ զպատգարակաւ հանին զնա 'ի տաճարէն կիսամահ անմռունչ անբարբառ, և պակասեալ յամենայն յուսոյ փրկութեան։

Իսկ ժողովուրդն առ հասարակ միաբան զնոր օրհնէին, որ փառաւորէր զիւր տեղի սրբութիւն. որով և տեսին մահաշունչ՝ զոր ժամ 'ի ժամէ մնային տեսանել, յերեկիլ փառաց ամենակալ նոն՝ փոխեցաւ նոցա 'ի տեսարան խնդութիւն և անպայման ուրախութիւն։ Այլոց ոմիսա հոգայր 'ի միտս, գուցէ կարծիս 'ի մոլի դնիցէ սեւեկիոս՝ որպէս թէ դաւով ինչ 'ի նմանէ, կամ 'ի հրէից ժողովրդենէ հարուածեալ իցէ այրն. և զմտաւ ածէր, թէ լաւ ևս է ապրիլ հեղեղոդորսի, զի կարիցէ ինքնին պատմել զիրան ստուգութիւն առաջի արքայի. զոր և իրաւամբ կարէր յուսալ, զի նորոգ կրեալ նորա զմահաբեր ցաւս հարուածոց՝ ոչ ստեսցէ, կամ զբպարտեսցէ զոք։ Այս խորհուրդ ունէայ, յաւելան և աղաչանք բարեկամաց հեղեղոդորսի՝ զթալ

'ինա, որ այնպէս անկեալ չարաչար՝ կայր յոգիս ապաստան, և խնդրել 'ի բարձրելոյն շնորհել նմա զկեանս։ Եւ զդ՝ այն ինչ քահանայապետն զոհս և պատարագս մատուցանէր, և 'ի խնդրուածս լինէր առ Տէր, ահա նոյն երիտասարդք նովին զնոսա և զարդու զարդարեալ եկին կացին առաջի հեղինոդորոսի, և խթեալ զնա, ասեն. Երթ բազում շնորհս դու ունեայ քահանայապետին կալջիր. զի վասն աղաչանաց նորա շնորհեաց քեզ ՝ուծ զկեանս։ Եւ դու այդչափ տանջանօք յոյ պատուհասեալ պատմեսջիր զուծային մեծութիւնն և զզօրութիւն նորա առ ամենեսին։ Այս իբրև ասացին, անդրէն վերացան։

Եւ հեղինոդորոս իբրև անձին զգաց, յարուցեալ վաղվաղակի՝ ողջակէզս պատարագաց մատուցանէր Տէն. և ուխտս և աղօթս մեծամեծս կատարէր առ Տէր. և զոնիա մեծապատիւ մեծապարգև մեծարեաց։ Եւ եկեալ յերուսաղէմ՝ Ժողովեաց զզօրս իւր, զորս այլևայլ պատրուակաւ կարգեալ էր 'ի զանազան մասակայ տեղիս, 'ի կիր առնուլ զնոսա, եթէ դիմամարտութիւն ինչ գտցէ յերուսաղէմ։ Եւ զՀանապարհային պատմէր ընդ ամենայն տեղիս զանցս իւր. և քարոզէր զմեծութիւն և զզօրութիւն այ, զոր ինքնին իսկ իւրով աչօք տեսեալ էր և զփորձ առեալ։ Եւ հասեալ առ թագաւորն՝ պատմեաց նմա Հնմարտութիւն զամենայն անցս որք անցին ընդ նա. այլ քանզի աչք թագաւորին յառեալ էին 'ի գանձ անդր, սկսաւ հարցանել ցհեղինոդորոս՝ թէ ոմ՞ զբաւական իցէ միւս եւս փորձ փորձել 'ի բառնալ և բերել մեզ զայն գանձ։ Եւ հեղինոդորոս. եթէ ունիցիս քեզ զոք թշնամի, և իրաց մեծաց քոց փնասակար, զնա առաքեսջիր, և ընկալցիս զնա գանալից չարչարան, թէ զերծանիլ և ապրիլ միայն կարասցէ։ Զանգն ՝ուծ զմեծ զօրութիւն իւր յայտնէ 'ի տեղւոջ անդ, և ինքն այցելու և օգնական է նորա. վասն որոյ որ միանգամ թշնամութիւն, կամ արհամարհանօք յայն տեղի մերձենայ, մեծամեծ հարուածովք հարկանէ զնա,

թէ, արձակէսցէ, և եթէ կենդանի։ Զայս ամենայն 'ի միտ առեալ սելևկեայ արքայի հանդարտեցաւ, և ոչ ևս յաւել նեղութիւնս հասուցանել երուսաղէմի։

Զ.ԱԼ ոչ ընդաբոյս լոյս բանի, ոչ հանդարտութիւն թագաւորին, և ոչ իսկ յայանութիւն մեծազօր սքանչելեաց բաւական եղեն կարձել զանօրէնն սիմոն 'ի չարեաց։ Զի ելեալ 'ի հայրենի գաւառէ՝ խոյս եւ 'ի ստորին ասորիս առ ապողոնիոս սպարապետ. ընդ որում յառաջագոյն արարեալ էր բարեկամութիւն։ Լսէ նոցին զօրաւոր հովանաւորութիւն յանդգնէր ձեռներեց լինել յամենայն ոմ'իրս չարեաց. առաքէր յերուսաղէմ արս սիկարեանս, զրէր առ բարեկամն իւր, և տայր սպանանել զթշնամիս կողման իւրոյ. վասն որոյ և յաձախէին սպանութիւք։ Լաւ ընդդէմ մնեայ ոչ զադարէր զրդռել զժողովուրդն և զօտարս յատելութիւն, ամենայն անցից հեղեղոց որոսի զնա և եթէ դնելով զատաձառ։ Լսէ քանզի անօրէնն էր յապահովի ընդպարշտանութիւն ապողոնեայ, զի և նա չարեաց ընկեր և գործոց կցորդ էր սմա, ոչ կարէր մնիս սոյլ ճանապարհաւ գարման գտանել այսչափ չարեաց, բայց բողոք ունելով առ թագաւորն, արքունի հրամանաւ սանձել և 'ի կարգի դնել զապողոնիոս. զի կարձեսցի և սիմոն 'ի չարեաց։ Գնաց մնիա անձամբ առ թագաւորն, խօսեցաւ առաջի նորա զամենայն զբանս իւր. և եհաս խնդրոյ իւրում. զի եդաւ սանձ ապողոնեայ. և սիմոն չուներլով ուստեք օգնութիւն, հանդարտեալ լռեաց։ Լսէ այսպէս դարձաւ խաղաղութիւն երբայական հատարակութիւն, զոր կորուսեալ էր 'ի պատձառս խռովայոյզ սիմոնի։ Լսէ տեսաւ փոքրիւ թէ քանի կա բևոր է առ հասարակաց օգուտ, 'ի սկզբան անդ յորժամ սկսանի ոք բռնանալ, նուաձել և չտալ տեղի զօրանալոյ։

Զ.այս խաղաղութիւն եկաց մնաց 'ի հրէաստան առ կենդանութիւն սելևկեայ թագաւորին. այլ փութով անդրէն բարձաւ 'ի միջոյ առ յաջորդաւ

նորա 'ի սադրելոյ յասումի, որ եղբայր էր ոմեայ, այլ այր ամբարտաւան. որ ջանացաւ լինքն յսուիշտակել զքահանայապետութիւն. բայց տեսեալ զի ամենայն իրաւունք, և ամենայն օրէնք հակառակ կան նմա, ձեռն էարկ առնուլ իւր զօրավիգն զաղուկ հերետիկոսական, որ ոչինչ զանգիտիցէ ոտնակոխ առնել զամենայն արդար իրաւունս և զամենայն ՀԱԾադիր նոր օրէնս. որպէս յառաջիկայ գլուխդ ունիմք պատմել։

ԳԼ. Գ.

Ի՝նդիանոս երանելի Ռափաւոր ասորւոց։ Ի՝նքս փանդեայպէս։ Յասուքն, և Ղենդաստս, և Լիսիմաչոս առաք փանդեայպէսք։

Իբրև փոխեցաւ յաշխարհէ սելևկիոս Դ. փիլոպատորն դեղով մահու յամին հարիւրորդի երեսներորդի եօթներորդի թագաւորութեան յունաց, (որ և ասի թուական սելևկիացւոց) այսինքն ըստ հաշուին կաղենոսի հարիւր քառասուն և ինն ամաց զկնի մահուան մեծին աղեքսանդրի, էառ զթագաւորութիւն ասորւոց եղբայր նորա անտիոքոս անուանեալն երևելի, որդի մեծին անտիոքոսի, ուրթերորդ թագաւոր. շառաւիղ դառնութիւն բղխեալ 'ի նոցունց՝ որոց աղեքսանդր յելս կենաց իւրոց բաժանեաց զթագաւորութիւն իւր։ Որ սա մնացեալ 'ի պատանդս 'ի հռոմմ քաղաքի, ուր իբրև լուաւ զմահ հօր իւրոյ, ամենապարեաց փախստական լինել անտի, և գալ յսուիշտակել զթագ արքայութիւն 'ի դլխոյ եղբօրն, մինչև իցէ նորա հաստատեալ և ամրացեալ։ Այսեաց դաշին ընդ հռոմմայեցիս. ա նօրինեցաւ յեղբայրն, նենդութիւն դեղ մահու արբուցեալ նմա, և անիրաւութիւն յսուիշտակեաց ըղ-

թագաւորութիւն. որ ըստ իրաւանց անկանէր դէ-
մն տրեայ որդւոյ նախագրեալ սելևկիոսի, որ 'ի
նմին ժամանակի կայր 'ի պատանդս 'ի Հռովմ։

Այլ սա անտիոքոս վասն մեծեղեռն անօրէ-
նութեանց իւրոց եղև նկարագիր պատկեր նեռին,
մինչ զի 'ի ՃԾ. Ե ՃԲ. զլուխս մարգարէութեանց դա-
նիէլի ասի ինչ ինչ վասն սորա առաւել յանկաւոր
նեռին՝ քան անձին նորա։ Զոր սա դիմեաց յասոմն
'ի ձեռս բերել բռնութիւն զքահանայապետութիւնն,
զոր ունիա եղբայր նորա վարէր սրբութիւն և ամե-
նայն Հնմարտութեամբ. իբր ոչ եթէ զի հրէայք
ստրուկք էին թագաւորին, կամ որպէս թէ կա-
ցող էր նա տալ զքահանայապետութիւնն ում և հա-
Հոյ թուեսցի նմա. այլ տկարութիւն հրէական հա-
սարակութիւն, և բռնակալութիւն արտաքին թագա-
ւորաց՝ հարկեցուցանէր զնոսա տանիլ բռնութիւն
նոցա, որք ապաստ առնէին և առ ոտս կոխէին
զօրէնս նոցա։ Խոստացաւ յասոմն անտիոքոսի վաթ-
սուն (ըստ լտ. երեք հարիւր վաթսուն) քանքար
արծաթոյ. և այլ ութսուն աստի և անտի, եթէ
տացէ նմա զքահանայապետութիւնն։ Հաց յայսմա-
նէ խոստացաւ և այլ հարիւր (ըստ լտ. հարիւր
յիսուն քանքար), եթէ թողուցու նմա շինել տուն
անառակ խաղուց, կամ երիտասարդանոց՝ ժողո-
վել անդ ընտրանաւ ժիրաժիր մանկուանս, լինել
ինքեան իբր մի մի կրպակս շահու 'ի վաճառ արկա-
նելոյ զհամեստութիւն նոցա։ Հաւ ևս՝ զի մուծանիցէ
յերուսաղէմ քաղաք զհեթանոսական կրօնս և զա-
զատութիւնս անտիոք քաղաքի։

Անտիոքոս առ 'ի ձեռս բերելոյ զայնչափ քան-
քարս արծաթոյ առանց ծախելոյ ինչ յիւրոցն,
յանձն առ, հաւանեցաւ ամենայնի. իսկ յասոմն՝
որ արդէն պատիր հրապուրանօք ձգեալ էր զկնի
մոլորութեանն իւրոյ զյոգունս յեղեռնագործ սրի-
կայից, յորոց բազումք գնացին ընդ նմա առ թա-
գաւորն, վաղվաղակի զընտանի զոր կրօնս օրինա-
ւորս 'ի բաց քակեալ՝ զհեթանոսական նոր կրօնս
ամբարշտութիւն 'ի ներքս արկանէր. զի համախոհք

նորա առ հասարակ ուրացան զՔրիստոսէ. ոչ եւ Թլփատէին զորդիս իւրեանց. շինէին Թատրոնս և կրկէսս, և երիտասարդանոցս պղծութեաց. և այնպէս իմն սկիզբն արարեալ այլազգութեան և հեԹանոսութեան՝ ջնջեաց անհետ արար անօրէնն յաստուծոյ զայն ամենայն ազատութեան հրեաստանի, զոր յառաջագոյն ստացեալ էր յօտար Թագաւորուեց յովհաննէս հայր պտղոմեայ (ըստ լտ. եւպոզեմոսի) այր արժանապատիւ և մեծանուն. որ յետոյ առաքեցաւ 'ի հրեշտակութեան 'ի հռովմ՝ հաստատել ուխտ խաղաղութեան ընդ ծերակուտին հռովմայեցւոց։

Ա. զ չքահանայապետութեան յաստուծոյ քահանայք Թողեալ զպաշտօն պատարագաց սեղանոյն, և զըստաս տաճարին, և արհամարհեալ զողջակէզս զոհից, տային զանձինս 'ի հանդէս հրապարակական խաղուց՝ խառն ընդ խառնաղանձ ամբոխ մարդկան մարզելով յըմբշամարտութիւն և 'ի տիգընկեցութեան։ Այս զայն, որ ցայն վայր 'ի պատիւ համարեալ էր յերուսաղէմ՝ առ ոչինչ զրելով, պարծէին 'ի պղծութիւնս, 'ի զեղծմունս, որպէս և 'ի գազանական բռնամարտութիւնս, որք պանծալի և փառաւոր համարեալ էին առ հելլենացի հեԹանոսս։ Իսկ ինքն անօրէնն յաստուծոյ կռապաշտ էր հաւասար այլոց կռապաշտից. կամ լաւ ևս ասել, գոլով անհաւատ, այլ չխոմելով երևիլ այնպիսի, կեղծաւորեր փոյԹ յանձին ցուցանել 'ի պաշտօն կռոց։ Ի նմին ժամանակի առնէին 'ի տիւրոս քաղաք զՀանդէս կռոցեալ հինգամեակ պաշտամանն դից. իբր զի 'ի հինգամի միանգամ առնէին. անդ էր և անտիոքոս. յայն սակս յաստուծոյ առ ինորհս գտանելոյ առաջի նորա, յղեաց անդ երեքհարիւր սատերս արծաԹոյ 'ի գին զոհից վահագնի կամ հերակլեայ պաշտամանն։ Ցուրք անօրէն. ընդ որ և նորին իսկ օրք բերին գ ժգմնեալ, 'ի մատուցանելն արքային՝ ազաչեցին չխառնել զայն արծաԹ 'ի զոհս կռոց պաշտամանն, այլ յայլ պէտս ծախել. վասն որոյ տուաւ 'ի գործ շինութեան արքունի նաւուց։ Ոչ այսու ժա-

մանակաւ տեսեալ մնեայ եթէ չէ կարօղ զդէմ ունել այսչափ բռնութեաց, խոյս ետ յերուսաղէմ։ Այսպէս և անտիոքոս եկ 'ի տիւրոսն բազմութիւն զինեալ նաւուց, եդեալ 'ի մնի՝ տիրել համօրէն եգիպտոսի։

Ընդ այն ժամանակս 'ի մեռանիլ պտղոմեայ չորրորդի փիլոպատորայ եգիպտացւոց արքայի, երկու որդիք նորա համանուն հօր իւրեանց տղայք տիւք՝ ընդ ակամբ հայեին 'ի միմեանս. երէցն որ անուանեալ էր թագաւոր, մախայր ընդ կրտսերն, զի հայրն 'ի մեռանիլ իւրում, կացոյց զնա իշխան աղեքսանդրիայ քաղաքին. զոր նա համարէր իբր ակն պատուական կորզեալ 'ի բաց 'ի թագէ գլխոյ իւրոյ. զայս գիտելով կրտսերոյն՝ օտարանայր և նա յեղբօրէն։ Այսքա էին որդիք կղէոպատրայ քեռանտիոքոսի։ Այ սան որոյ և անտիոքոս ընդ պատրուակաւ խնամարկելոյ և պաշտպանելոյ քեռորդւոց իւրոց, և թագաւորութեան եգիպտոսի, խորհէր խաղաղութիւն մնանել յարքունիս իբր դաստիարակ մանկանցն, և մեղմով իմն առանց զինաշարժութեան տիրել քաղաքաց և ամրոցաց պատճառանօք պաշտպանութեան։ Իբրև եհաս մօտ 'ի ցամաքն եգիպտոսի, առաքեաց 'ի հրեշտակութեան զապողոնիոս մեծեսթեանց ազգ առնել զժամանել իւր. որոյ կատարեալ զհրեշտակութիւն՝ դարձաւ և պատմեաց անտիոքոսի, թէ վիճակ արքունեաց եգիպտոսի ոչ է այնպէս՝ որպէս կարծէր, այլ գլխովին փոփոխեալ. երկու եղբարք միաբանեալ են. մեծամեծք երկրին են խնամակալու և պաշտպան նոցա և թագաւորութեան. զոր ոչ երբեք յանձն առնուն տալ 'ի ձեռս օտար թագաւորի. և համօրէն եգիպտոս սպառազինեալ, ունելով յոտին կազմ գունդս ահեղախրոխտ զօրաց պատրաստական կայ 'ի դիմի հարկանել նմա, եթէ փորձ ինչ կամիցի փորձել։ Ընդ այս լուր անակնկալ լցաւ դառնութիւն անտիոքոս. զի վերս 'ի վայր տապալեցան ամենայն խորհուրդք նորա։ Այ սան որոյ շատ համարեցաւ առնուլ զանզօր և զանպատասպար քաղաքս. և

սւաբ հարեալ ընդ ամենայն տեղիս՝ ուր և կարաց հասանել, արար խաղաղութիւն ընդ պտղոմէանս, և խաղաց գնաց 'ի կողմանս յոպպէացւոց. և անտի ընդ ցամաք էանց յերուսաղէմ։ Յետ անդ ընդ առաջ ելեալ նմա յասոմնի և ամենայն մեծամեծաց քաղաքին, մեծասքանչ մեծարանօք և շքեղապանծ փառաւորութիւն ընկալան զնա. զոր չէին արդեօք արարեալ քնիկ և օրինաւոր թագաւորաց իւրեանց. գիշերային եղև մուտ նորա, բայց քաղաքն ողջոյն այնպէս լուսաւորեալ էր բազմաձանձնչ ջահիւք և լապտերօք, մինչև գիշերային մթութիւն փոխիլ 'ի լոյս իբր միջօրեայ տուընջեան։ Այս նուագ ոչ կամեցաւ անտիոքոս նեղութիւն ինչ հասուցանել քաղաքին և ժողովրդեան. այլ միայն ուշ եդեալ զնմանէ զամենայն, թողեալ այլուսք դիպող ժամանակի՝ յայտնել զչարութիւն իւր. և անտի խաղաց գնաց 'ի կողմանս փիւնիկեցւոց ամենայն զօրօք հանդերձ։

Ընդ այն ժամանակս յասոմնի չքահանայապետ և մեծասակաւ հայրենեաց բռնանայր 'ի հրեաստան. բայց ոչ երկարեաց ժպիրհ յանդգնութիւն նորա. զի ընդ նոյն ձանապարհ ընդ որ ամբարձաւ, անդրէն կործանեցաւ։ Զի յետ երից ամաց բան ինչ ունելով ընդ անտիոքոսի, յղեաց 'ի ձեռն մենեղաւոսի եղբօր սիմոնի մոլեկանի, զորմէ 'ի վերո անդր խօսեցաք, զպատգամս իւր, ընդ նմին և զդանձն կամ զհարկ արքունի։ Իսկ մենեղաւոս ինչ ոչ խղճելով դաւել զդաւաճանն՝ մարդելոյդ շողոմաբար շողմոգութիւն որսացաւ զսիրտ թագաւորին. և տեսեալ զի իշխանութիւնք և մտնեսութիւն հրեաստանի վաճառէին որոց առաւել ինչ խոստանային, յանձն առ յաւելուլ երեքհարիւր քանքար 'ի գին հրեական քահանայապետութիւն, եթէ բարձցի 'ի յասոմնէ, և տացի նմա։ Հաճեցաւ թագաւորն. և այսպէս նա որ հրեշտակութիւն եկեալ էր յերուսաղէմ, դարձաւ իշխանական ճոխութիւն. և փոխանակ պատասխանւոյ՝ եցոյց յասոմնի զհրաման իշխանութիւն արքունի. ընկէց զնա և տարագրեաց,

որով և ստիպեցաւ նա փախստական անկանիլ յԵրկիր ամենայնոց։ Բայց և ոչ մենեղաւոս յերկաբեաց 'ի քահանայապետութենէ. զի թէպէտ Ձոխ և առատ եղև 'ի խոստումն, այլ ոչ նոյնպէս և 'ի վճարումն. քանզի ամենայն ճարտարութիւն և բրնակալութիւն իւրով չեգիտ հնարս հայթհայթելոյ բաւական 'ի հատուցումն։ Այնքան և սոստրատոս բերդապահ ամրոցին Երուսաղէմի, որում յանձն էր հանել զՀարկ աշխարհին, ծանր ծանր հարկս պահանջելով բռնութիւն զինուց և զօրայ՝ չտայր տեղի և այլուստ հաւաքել ինչ։ Զայսոսն որոյ երկոքին 'ի միասին 'ի դուռն կոչեցան. մենեղաւոս կոչոցեցաւ 'ի քահանայապետական իշխանութիւն, իսկ սոստրատոս առաքեցաւ 'ի կիպրոս 'ի գործ կառավարութիւն. և լիւսիմաքոս կացուցաւ քահանայապետ հրեից փոխանակ եղբօր իւրոյ մենեղաւոսի։ Զնդ այսպիսի նախատինս 'ի խոր խոցեալ մենեղաւոսի՝ ոչ դադարէր 'ի յուղելոյ խռովութիւն, և առաւելապէս զարտմտութիւն դառնութիւն իւրոյ վարէր ընդդէմ ոմեայ, թերևս սակս անաչառ յանդիմանութեան, զոր արար նմա ոմիա գրով, որպէս 'ի մատոյ նշանակեսցուք։

Երբև այս իրք այսպէս անցանէին, դէպ եղև տաբասացւոց և մաղտատացւոց զէն առնուլ գազանապէս վառիլ 'ի գրգիռ մարտի յաղագս տալոյ անտիոքոսի զքաղաքս նոցա յուտեստ անտիոքիդեայ հարձ'ի իւրոյ. զայն լուեալ անտիոքոսի, ամենայնք եաց վաղ հասանիլ և ցածուցանել զնոսա 'ի չարեաց, թողեալ 'ի տեղի իւր փոխաբքայ զանդրոնիկոս զսրբելին իւր։ Իսկ անօրէնն մենեղաւոս զայն ժամանակ դիպող գտեալ գնոյ առնուլ զքարեկամութեն անդրոնիկոսի, գաղտ գողացաւ 'ի տաճարէ անտի բազում ոսկի սպասս, և ետ անդրոնիկոսի. և այլս ևս վաճառեաց 'ի տիւրոս և յայլ քաղաքս, և արար դրամս, զի վատնեալ զինչս իւր յանօրէնութիւն՝ 'ի յետին չքաւորութիւն հասեալ էր։ Զայս սեղանաւորդ անօրէն գործ նորա խմացեալ ոմեայ՝ որ կայր ամրացեալ 'ի տափնա բերդն

անտիոքայ, զբեաց առ նա գիր լի հրաշալեաց կշռամբ
բանաց. իսկ մինեղաւոս, որ արդէն որսացեալ էր
զանդրոնիկոս, առ զերծանելոյ 'ի յանդիմանութենէ
ոնեայ՝ հրապուրեաց զանդրոնիկոս բառնալ զնա 'ի
կենաց։ Այսն որոյ գնաց նա անձամբ առ ոնիա,
և ծանր ծանր երդմամբ դաշինս հաւատարմութեան
կուելով ընդ նմա, հաւանեցոյց զնա ելանել յամրոյ
անտի, թէպէտ և էր 'ի միտս կասկածոտս. որ և
արդեամբ ՀՀդրտեցաւ. զի ընդ ելանել նորա՝ ան-
դէն նոյնհետայն խողխողեաց զնա անօրէնն. ա-
մենեին ոչ զանգիտեաց յիրաւանցն արդարութեան։
Այսօրինակ կնքեաց զկեանս իւր մեծ քահա-
նայապետն ոնիա. իշխան պանծալի, երախտաւոր
ազգին քան զամենեսեան՝ որք յայն վերջին խուռ-
վալից ժամանակս առաջնորդեցին նմա՝ նորայն խո-
հական անտեսութիւն երջանկացոյց զհրէաստան՝
ցորվայր ինքն առաջնորդեաց նմա. նորայն խնամա-
զութիւն, երկայնմտութիւն, արիութիւն ոգւոյ անընկ-
ճելի յամենայն տաժանսպանս՝ այնչափ մեծարու-
բար զնա եւ յաչս ազգաց ստարաց, մինչև թշնա-
մեաց իսկ նորա 'ի յարգի ունիլ զնա. վասն այսո-
րիկ և սուգն ընդ տարապարտ մահ նորա հաստարա-
կաց եղև։ Ինքն իսկ անտիոքոս զկնի դարձի իւրոյ,
'ի լսել զանցս մահուան նորա՝ դժգոհեցաւ 'ի գութ
հարաւ և արտասուեաց յոյժ 'ի վերայ սրբութեան և
բաղում իմաստութեան առնն։ Եւ 'ի խնդրոյ հրեից
և յունաց սարսափելի դատաստանաւ դատեցաւ
զմարդախաղոշն զանդրոնիկոս. յորմէ ոչ սերն և
ընտանութեան առաջին, և ոչ բարձրութեան իշխանու-
թեն զերծուցին զնա։ Այլ կրեաց յաղնուականու-
թէ. մերկացոյց 'ի ծիրանեաց. և ետ շուրջ ածել
յամենայն փողոցս անտիոք քաղաքի իբր վատա-
նուն, և ապա 'ի նմին տեղւոջ ուր զոնիայն խող-
խողեաց, հրամայեաց ձեռամբ դահճի հարկանել
զկառաւին անօրէն մահապարտին։ Այս անգամ
և եթե անտիոքոս յամենայն ժամանակս թագաւո-
րութեան իւրոյ՝ եթող օրինակ արժանաւոր թագաւո-
րաց. պատժել և զսիրելս և զմեծամեծս, յորժամ

Ինասապարտ իցեն, և պահել զկեանս ժողովրդեան, բառնալով զկեանս չարագործաց, թեպետ և մեծարգի իցեն։

Իսկ մենեղաւոս իբրև կորոյս զհաստատանն իւր զանդրդնիկոս, միաբանեցաւ ընդ եղբօր իւրում լիւսիմաքեայ. և երկոքին սոքա համախոհք 'ի չարիս՝ ձեռն արկին գաղտնածածուկ 'ի գողութիւն և 'ի կողոպուտ գանձուց տաճարին. զոր և այնչափ յաձախեցին, մինչև 'ի դուրս հնչել համբաւոյն 'ի լսելիս բազմութեան ամբոխին. որոց չհանդուրժեալ անօրէնն սեղանակապտութեան նոցա՝ խուսափարարին, 'ի վերայ յարձակեցան լիւսիմաքեայ լի որամտութիւն. այլ անապան. քանզի արդէն անթիւ գանձք սակաւ բարձեալ և փոխադրեալ էին այլուր։ Տեսեալ լիւսիմաքեայ զգազանական յարձակումն ամբոխին, վառեցոյց և ինքն արս սրիկայս իբր երիս հազարս, կարգեալ նոցա զօրավար զայր մի ծերացեալ 'ի զինուորութիւն և ամբ հաստակի, որ ըստ նոր գրոց՝ խուժադուժ ևս էր տեսանելով՝ քան մնաքն Թանձրութիւն։ Իբրև ետես ամբոխն զսուր լիւսիմաքեանց մերկանալ ընդդէմ ինքեանց, վառեցան բորբոքեցան և նոքա, և չունելով առ ձեռն այլ զէնս՝ քուռն հարին 'ի քարինս և 'ի բիբս. շատք ևս զաւազն, և զխիճն հողմսառն յերեսս լիւսիմաքեայ և իւրոց սրիկայից արկանէին. զաղումն չարաչար վիրաւորեցին, զոմանս սպանին, և զամենեսեան առ հասարակ 'ի փախուստ դարձուցին. և զնոյն ինքն զսեղանազերծն լիւսիմաքոս առ գանձի տամբն տապաստ արկեալ սպանին։

Տեսեալ ծերակոյտ ժողովրդեանն հրեից, զի զօրութիւն և իշխանութիւն իւրեանց չէ բաւական 'ի ցածուցանել և բառնալ զայս քաղաքական խռովութիւն, ստիպեցան դիմել առ անտիոքոս՝ տալով 'ի 'ի ձեռս նորա զդատաստան մենեղաւոսի։ Վասն որոյ առաքեցան աբք երեք 'ի ծերակուտէ անտի 'ի տիւրոս, ուր եկեալ էր Թագաւորն։ Վիննեցաւ դատն մենեղաւեայ, և գտաւ պարտաւոր։ Իսկ մենեղաւոս հնազանդելն 'ի դաւաճանութիւնս՝ դիմեաց

առ պտղոմէոս այր երևելի մտերիմ և ընտանի թագաւորին, խոստացաւ նմա դանձ բազում, զի հաձեսցէ զմիտս թագաւորին, և դարձուսցէ զվճիռ դատապարտութեան իւրոյ։ Այսոր ասի այսորիկ առեալ պտղոմեայ մեկուսի զթագաւորն իբրև զբօսանաց և սթափութեան պատճառանաւք՝ խօսեցաւ ընդ նմա, և շրջեաց զմիտս նորա, անպարտ առնել զչարեացս պարտն. և 'ի մահ դատապարտել զերիս անպարտ հրեշտակս իբր սուտ զրպարտօղս։ Յոսէպոս թոյլ տայ ՚ած բազում անգամ ոտնակոխ լինել ամենայն օրինաց և արդարութեան 'ի յերկրի աստ, զի ծանիցուք և զիտասցուք, թէ յորժամ ժամ առցէ, ինքն ևս դատեսցէ զդատաւորս, և արասցէ արդարութեան յերկինից։ Տիւրոս քաղաքն ողջոյն կարեկից եղև բազում օրացաւութեան ընդ անիրաւ մահն անպարտ դատապարտելոց. զորս պատուեցին շքեղ և փառաւոր յուզարկաւորութեան։ Իսկ մեծեղաւոս միջնորդութեան ընչաքաղց պաշտպանին իւրոյ ապրեցյա, 'ի տանջել նոր տառապանաւք զերուսաղէմ։ Ամոյլտուութեան՝ զի պահեսցին կենդանի որք այսպիսիք, է գործ ՚ածային նախախնամութեան, զի կամ դառնալով 'ի չարեաց՝ հաձոյասցին նմա. և կամ՝ 'ի յետին տուգանս անձանց՝ չարեօք ծառայեսցեն նմա, որպէս դահիճք իշխանաց ծառայեն նոցա իբր պաշտօնեայք։

ԳԼ. Գ.

Անտիոքոս Գ. երեսելի զինի ընդդէմ եգիպտոսի. և Յառաջ ընդդէմ երուսաղէմի։ Անհեղ երեսոյնի յօրս։

Անտիոքոս երկիցս յարոյց պատերազմ ընդդէմ պտղոմեայ Ա. եգիպտացւոց արքայի, որ անուանեալն էր մայրասէր, հակադրութեամբ. իբր ոչ ելիցէ զի սիրէր, այլ զի ատեայր զմայրն՝ սակս կուսակից և նպաստաւոր լինելոյ պտղոմեայ կրտսերոյ և յամենայնի հակառակ ինքեան։ Յառաջնում՝ նուազգի զնաց յեգիպտոս 'ի տիրել նմա ընդ պատրուակաւ խնամակալութեան և պաշտպանութեան քեռորդւոյ իւրոյ երկուց պտղոմեանց, որք դեռևս մանուկ էին, այլ ոչ կարաց կատարել զգործն 'ի գլուխ, որպէս վերագոյնդ նշանակեցաք. զի առաւել յուսացեալ էր 'ի նենգապատիր դաւաճանութեանն իւր՝ քան 'ի զօրութեան զինուց։ Իսկ զերկրորդ արշաւանս արար մեծագոյն պատրաստութեամբ ընդ ծով և ընդ ցամաք, ունելով 'ի ծովու նաւս յոգնաթիւս զինեալս և պատրաստեալս ամենայն կարևոր կարասեաւք, իսկ 'ի ցամաքի հեծեալս և հետևակս, կառս զերանդաձեւս, և փիղս։ Այս է այն երկրորդ արշաւանք. զորմէ յայտնեաց հրեշտակն դանիէլի. ԺԱ. 25. "Եւ զարթիցէ զօրուն նորա (անտիոքոսի). և սիրտ նորա 'ի վերայ թագաւորին հարաւոյ (պտղոմեայ) զօրութիւն մեծաւ. խմբեսցէ պատերազմ զօրու մեծաւ և հզօրաւ յոյժ. և ոչ հանդարտեսցին, զի խորհեսցին 'ի վերայ նորա խորհուրդս։ Եւ կերիցեն՝ որ ինչ նմա անկ իցէ (լտ. և որք կերիցեն ընդ նմա հաց), խորտակեսցեն զնա, և զզօրսն այրեսցեն. և անկցին վիրաւորք բազումք"։ Որպէս և եղև իսկ. զի անտիոքոս կոտորեալ զընտիր ընտիրս զօրաց եգիպտացւոց, կալաւ զքաղաքս նոցա. ոմանք

և ս ինքնին անձնատուր եղեն նմա. իսկ պտղոմէոս փախստական անկաւ՝ որպէս կարծի յաղթքսսնդրիա քաղաք, ուր իշխեր կրտսեր եղբայր նորա պտղոմէոս. երեցն պատրուակեր զնորհուրդ յափշտակելոյ 'ի ձեռաց եղբօրն զքաղաքն, իսկ կրտսերն զկենսն երիցուն. յորս կատարեցաւ և այն նախագուշակութիւն դանիելի. * Այս երկոցունց թագաւորաց սիրաք իւրեանց 'ի չարուն. և 'ի միում սեղան սուտ խօսեսցին, և մի յաջողեսցի, զի վախճան 'ի ժամանակ է ։

Այնչդեռ անտիոքոս լինէր յեգիպտոս զօրաք իւրովք հանդերձ, նշան ահեղահրաշ երևեցաւ յերուսաղէմ յօգս. ուր բազմութիւն զօրաց յերկուս գունդս բաժանեալք՝ հեծեալք և հետեւակք, վաւեալք 'ի զէն և 'ի զարդ, բուռն զօրութիւն արշաւէին յարձակէին, և զէն առ սուսեր եկեալ 'ի դիմի հարկանէին միմեանց։ Ձէր այն երևայթ ինչ պատրոզական, որպէս դէպ լինի երբեմն երևիլ յամպս պէսպէս շարժմանց այլանձև և այլազունակ ամպոց. այլ իրական. զի յայտնի երևէին յարձակմունք և դիմամարտութիւնք գնդից, և յետադարձութիւնք նոցա, որպէս սովոր է լինել 'ի պատերազմի. այլև հանդերձք զօրացս, ոսկեփայլ գօտիք միջ նոցա, սաղաւարտք, նետք, նիզակք, և սուսերք, այլև շողունք սուսերաց. որպէս և շառաչիւն նետից և նիզակաց, և այլ գզրգմունք և թնդիւնք և ձայնմունք լսելի լինէին ոչ մի օր կամ երկու, այլ յաւուրս քառասուն։ Այս երևայթ զարհուրելի՝ յայտ է թէ ինքնին գուշակէր պատերազմ և կոտորած սաստիկ. բայց քանզի մարթ էր մեկնել զայն 'ի նպաստ, կամ 'ի վնաս երուսաղէմի, ամենեքեան ընդհանային՝ զի կատարեսցի 'ի բարի ինչ երուսաղէմի։

Սակայն տեսաւ արդեամբք, զի լոկ չարիս գուշակէր զեղծեալ և անկարգացեալ քաղաքին. որ և սկիզբն կալաւ 'ի սուտ համբաւոյ, որ հնչեցաւ 'ի միջ ամբոխին, եթէ անտիոքոս մեռեալ իցէ։ Առվոր են խորհրդականք քաղաքաց 'ի հասարակաց նե-

դութիւն երբեմն քաղաքական խնն խոհեմութիւն սուտ համբաւ սփռել պատաքս յանդգնութիւն ամբոխին, և 'ի խափանումն խռովութեաց։ Այս խոհեմութիւն երբեմն օգնել, և երբեմն վնասել. և միշտ վնասել, յորժամ ձգելով զամբոխն 'ի խաղս և 'ի զուարճութիւն՝ հեռացուցանել զնոսա 'ի գործոց ճշմարտութեան և ապաշխարութեան։ Զանգի յորժամ պատժել ճշմարտի զքաղաք ինչ կամ զհասարակութիւն՝ առաքելով զնեղութիւնս, ոչ բառնի այն զրաղեցուցանելով զժողովուրդն 'ի սուտ զուարճութիւս, այլ զարթուցանելով զնոսա խնդրել զողորմութիւն նոց, և պատճառս առեալ զայն հասարակաց թշուառութիւն՝ ձգելով զնոսն 'ի զեղջ և յապաշխարութեան. զի այնպիսի պատուհասք սովորաբար առաքին 'ի պատիժ մեղաց. վասն այնորիկ 'ի քաւիլ մեղաց ապաշխարութիւն՝ բառնի և պատիժն։ Զուցէ իշխանք հրեից 'ի սփոփել զտապնապ սրտից ամբոխին պատճառեալ յահեղ նշանէ անտի, զոր աչքիսկ տեսին, այլ ոչ իմացան զնորհուրդ նոցա, համբաւեցին զմահ անտիրոջոսի, զի 'ի վերայ նոցա շրջեսցի մեկնութիւն։

Այլ սոյն իսկ սուտ համբաւ, որ դիւրաւ հաւանելի եղև բազմաց, սկսաւ երևեցուցանել 'ի միաս երուսաղէմի զնորհուրդ երկնային երևութիւն անցելոյ։ Զի 'ի հասանել այսր լրոյ և առ ամենայիս, անօրէնն յաստին՝ (զորմէ պատմեցաք 'ի վերս անդր թէ իշխեաց յափշտակել զքահանայապետութիւն, և տալա տարապրեալ փախստական անկաւառ փղշտացիս,) չունելով այնուհետև երկիւղ 'ի թագաւորէն՝ յանդգնեցաւ նոր տառապանս հասուցանել երուսաղէմի։ Յողովեաց արս իբր հազար մի՝ ոչ կանոնաւոր զինուորս, այլ արեանարբու ջոկս չարագործաց 'ի կախաղանաց փախուցելոյ. և նոքօք եկն յերուսաղէմ, ակնունելով առնուլ զնա յանկարծահաս արշաւանօք։ Այլ թէպէտ երուսաղէմ էր քաղաք ամուր՝ կարող աշխատ առնել և զմեծամեծ բանակս զօրաց, այլ քանզի բարձեալ էր 'ի նմանէ ճշմարտութիւն, և օրինաց պահպա-

նուԹի, և ամենայն կարգք քաղաքականք, բաւական եղև այսպիսի ընչին խումբ սինկլիքորայ պարտել զնա. զոր բռնակալեալ էր յայնժամ չարեաւ ցապարտ քահանայապետն մենեղաւոս, այր վատասիրտ նանրախորհուրդ. անպիտան յառաջնորդուԹի զորայ, միայն 'ի գողուԹիս քաջալարժ։

Ի մերձենալ յասոմնի 'ի պարիսպս քաղաքին՝ քաղաքացիք խուռնընԹաց արշաւէին 'ի վանել զնա. բայց չունելով գլուխ հրամանատար՝ անկարգ և անկանոն մրցէին. ընԹանային յախուռն յարձակմամբ ուր ոչ գոյր հարկ, Թողեալ անպատսպար զկողմն վտանգաւոր։ Այլ ընդ այն 'ի ներքս արշաւեալ յասոմնի, ոչ իբր 'ի բնիկ հայրենի քաղաք, այլ իբրև 'ի մէջ Թշնամեաց, կոտորէր անխնայաբար զամենեսեան զորս գտանէր։ Եւ յիշէր զտոհմային զքաղաքակից զընկերուԹիւն բարեկամուԹի, այլ իսպառ 'ի ԹշուառուԹի դարձուցանել նկրտէր զքաղաքն բազմաժողով՝ զմայրն յոգնաԹիւ արի քաջալանջ պատերազմողաց. ահարկու երևեցուցեալ զանձն մեծի քաղաքին սակաւաԹիւ սինկլիքորաբ. ուր յայտնի տեսաւ, Թէ չզօրէ ինչ բազմուԹիւն, ուր չիք առաջնորդուԹի։

Այս ամենայն խռովուԹիս մենեղաւոս զգուշացեալ անձին՝ ոչ խառնեցաւ յամբոխն. և իբրև լուաւ զմուտ յասոմնի ընդ պարիսպն, փուԹացաւ ամրանալ 'ի բերդ անդր։ Իսկ անօրէնն յասոմնի զգազանային անգԹուԹիւն իւր յառաջ վարեալ՝ ընդոյր արեան Ճապաղէօք զերուսաղէմ. զոր ոչ ևս կարելով տանել քաղաքացւոց, բազմուԹի 'ի նոցանէ միաբանեալ 'ի մի զօրուԹիւն՝ գրոհ եռուն 'ի զօրս նորա, կէս մի կոտորեցին, և կէս մի 'ի փախուստ դարձուցին. և ինքն յասոմնի մնալպուրծ զերծեալ՝ փախստեայ անկաւ անդրէն առ ամենայնս, ոչինչ տարեալ ընդ իւր յայնչափ ապիրատուԹեց, բայց միայն զամօԹ դաւոյն, և զգաւշումն և զատելուԹի յամենեցունց, զի իշխանուԹէ ինչ ոչ կարաց հասանել։ Այլ զի զորօրինակ դժուարին է Թէ չարագործք 'ի միում գաւառի կամ ՀՐուէ

կացցէն ընդերկար յայլում՝ ՝ուրութեանն առանց գործելոյ ինչ չար, նոյնպէս և յաստուն գտաւ մնասակար նաև առ արեւտայ թագաւորի արաբացւոց. և զի խնդրեր զնա արքայ սպանանել՝ ուր և գտցի, յայն սակս թշուառականն 'ի քաղաքէ 'ի քաղաք փախստեայ լիներ, ատելի հալածական յամենեցունց իբրև ապստամբ յօրինացն, և քաղաքի և հայրենեաց մատնիչ և դահիճ՝, մինչև գնաց անկաւ յեգիպտոս։ Բ.այց և անդ չգտեալ իւր կայան անքոյթ՝. դիմեաց առ լակեդեմոնացիս, ակն ունելով գտանել անդ օգնութիւն յիւրոց ազգակցաց. այլ փոխանակ օգնութեան եգիտ զմահ. և դի նորա թողաւ անթաղ 'ի դաշտի կերակուր գազանաց և թռչնոց։ Բ.յսպէս եղկելին, որ զանթիւ բազմութիւն յիւրմէ աշխարհէ օտարացոյց, և ինքն օտարացեալ 'ի մէջ օտարաց կորեաւ անսուգ անխնամ՝ անհանդերձ. որ կարող էր լինել երջանիկ, եթէ շատացեալ էր ՝ուխտութիւն և իշխանութիւն, զոր ժառանգեաց 'ի նախնեաց իւրոց. այլ առ առաւէլն ձկտեալ ամբարտաւանութիւն՝ կորոյս զոր ունէր։ Բ.յս կուրութիւն յաՃախ է 'ի մոլեկանս՝ կործանիլ 'ի յետին թշուառութիւն, երբ չշատանան չափաւոր բարեօք զոր ունին։

ԳԼ. Ե.

Լ. Սերոան Երուսաղէմի յանփոխայ Երեսելոյ։ Լ. Դիոնիսիոսի նորա։ Լ. Սահակոնի Եղիազարու, և Եօթն Եղբարց մարին հանդերձ։

Յառնուլ անտիոքոսի զեգիպտոս՝ որպէս 'ի վերը ասդը պատմեցաք 'ի հարիւրորդի քառասնեւորդի երրորդի թուականութեանն յունաց, երկու արքայորդիք հարազատք պտղոմէոս անուամբ՝ տեսեալ զի չունին զօրութիւն դիմակալել բարձրայոյն թշնամւոյն, 'ի սկիզբն մտրտին խնդրեցին օգնութիւն 'ի ծերակուտէն Հռովմայ։ Իսկ նոա առաքեաց 'ի հրեշտակութիւն զպղոբրիոս պղոմիբիոս առ անտիոքոս. որոյ լուեալ զգալուստ նորա՝ զառաջինն ուրախ եղև. զի մտերիմ բարեկամութիւն արարեալ էր ընդ նմա մինչ 'ի պատանդս էր 'ի Հռովմ. այլ ուրախութիւն նորա դարձաւ 'ի դառնութիւն, յորժամ լուաւ զասատիկ հրամանն ծերակուտին՝ վաղվաղակի ելանել յեգիպտոսէ, զոր անիրաւութիւն բռնակալեալ ունէր, և թողուլ 'ի ձեռս օրինաւոր բնիկ տերոց իւրոց։ Լ. Նտիոքոս զառաջինն գժկամակէր, և խնդրէր ժամանակ խորհուրդ 'ի մէջ առնուլ. բայց պղոմիբիոս ծայրիւ գաւազանի՝ զոր ունէր 'ի ձեռին, գծելով 'ի գետնի փոքրիկ շրջանակ շուրջ զարքայիւ, ասէ ցնա. Հարկ է քեզ ելանել 'ի շրջանակէ աստի կամ հնազանդելով հրամանին, և կամ ներքոյ անկանելով զինուց ծերակուտին իմոյ։ Այս պատգամ առաւել քան զամենայն սուր երկսայրի խոցեաց զսիրտ անտիոքոսի. քանզի կարի ծանր էր թողուլ 'ի ձեռաց զհրութիւն, զոր արդէն զբռամբ ունէր. և այն յայնժամ, երբ չունէր ընդդիմիւր զբանակ զօրաց. սուր ինքն ունէր առ ձեռն զերկու բանակս զօրաւորս ընդ ծով և ընդ ցամաք. և այնպէս առանց սուր մի հանելոյ և 'ի

փորձ մարտի մտանելոյ՝ դառնալ յետս լոկ բանիւ հրամանի։ Այլ տեղեակ գոլով բուռն զօրութեանն հռովմայեցւոց՝ երկեաւ զրգռել զնոսա ընդդէմ ինքեան. վասն որոյ խոնարհեալ զգլուխն՝ երդուաւ հնազանդիլ, և հնազանդեցաւ. զի ժողովեալ զզօրս իւր՝ զորս սփռեալ էր ընդ եգիպտոս, դարձ արար նոքաւք հանդերձ լի դառնութիւն յասորիս։ Այսպէս սովոր է ՝ուծ զառնութիւն միոյն խոնարհեցուցանել բռնութիւն այլոց. և առ յածուցանել զարձրութիւնն՝ յարուցանել զայլ բարձրագոյն, կացուցանելով զբարձունս ՝ի վերայ բարձանց։ Պովին յետադարձութիւն երկու ինչ զործեաց ՝ուծ. խոնարհեցոյց զհպարտութիւն անտիոքոսի, և նոփաւ խոնարհեցոյց զանկարգացեալ և զանօրինեալն երուսաղէմ։

Զանգի անտիոքոս լցեալ դառնութիւն ընդ այնպիսի անարգական դարձ իւր յեգիպտոսէ, և անկարացեալ թափել զզայրոյթ սրտին՝ ՝ի՛ ՝ի վերայ եգիպտացւոց, և ՝ի՛ ՝ի վերայ հռովմայեցւոց, դարձոյց զգազանային սրտմտութիւն իւր ՝ի վերայ հրէաստանի, պատճառանաւք իբր թէ ապստամբիլ խորհին յիւրմէ. զի ինքն անտիոքոս թէպէտ ՝ի վերին երեսս ունէր զհրէայս իբր իւր դաշնակիցս, բայց իրաւք վարէր ընդ նոսա իբր ընդ հարկատու խակամն ստրուկս։ Զան այնորիկ յայտնի թշնամութիւն գազանացեալ սրտիւ եկն յերուսաղէմ. և թէպէտ քաղաքացիքն ՝ի սկզբան անդ ջան եդին զդէմս ունել, այլ փութով նուաճեցան ՝ի բուռն զօրութենէ անտիոքոսի. որոյ մտեալ ՝ի քաղաքն և ՝ի բերդն, հրաման եւ զօրաց իւրոց, զի որ ՝ի բուռն անկցի այր կամ կին, ծեր և տղայ, զնեալ կամ անգէն, յանխնայս կոտորեսցի ՝ի փողոցս, ՝ի հրապարակս, և ՝ի տունս։ Լու յերիս աւուրս բիւրս ութ միանգամայն կոտորեցին. և ՝ի մնացելոց չորս բիւրս ոչինչ պակաս լաւութիւն քան զսպանեալսն՝ ՝ի գերութիւն վաճառեցին. և այլ չորս բիւրս ՝ի շղթայս պահեցին։ Լոկ մենելաւոս չքահանայապետն, որ օրինաց աշխարհին, և գնդին մատնիչ և դահիճ եղեալ էր, ընդ ամբարիշտ սեղանագործ ժողովրդ-

դեսն իւրոյ կամեցեալ շնորհուկս իմն առնել անտիոքոսի՝ էած զնա 'ի տաճար անդր. և եցոյց նմա զգաղտնի դարանս պահեստի աղնուագոյն դանձուց։ Եւ զսեղանն ոսկի, և զաշտանակն նոյնպէս ոսկեձոյլ, և զայլ ամենայն ՝ի մեծագին սպասս առ հասարակ խորտակեալ՝ 'ի մի կուտեցին. մինչ զի հազար ուԹ հարիւր քանքար ոսկւոյ (որ առնելտերս, 200025) բարձեալ տարաւ անտիոքոս 'ի տաճարէ անտի. աւարեաց և զքաղաքն ողջոյն. քակեաց զպարիսպս նորա. և կացոյց գաղանամիտ բերդապահս 'ի վերին քաղաք անդր՝ որ էր փոխանակ ամրոցի, զոր ևևս ամրացոյց։ Եւ մինչդեռ Թէպէտ ամենայն իրօք ջանահնար լինէր յինքն յանկուցանել զԹագաւորն, սակայն և այնպէս ոչ վստահացաւ արքայ Թողուլ զնա անդ յիւրում խշխանութեան. քանզի Թէպէտ գիտակ էր անօրենութեանց նորա, բայց 'ի միտս կասկածոտս էր զնմանէ, Թէ գոլով հրեայ՝ որպէս եղև մատնիչ հայրենեաց, նոյնպէս եղիցի մատնիչ և իւրոյ Թագաւորութեան։ Վասն որոյ տարաւ զնա 'ի գարիզին սամարիոյ լինել առաջնորդ. կարգեալ նմա գործակից զանգրոնիկոս, ոչ զառաջինն զպաշտպանն իւր, որ գլխատեցաւ ձեռամբ դահձի ըստ նախագրելոցս, այլ զայլ ոմն համանուն, և համանման մահուան արժանի։ Իսկ 'ի կառավարուն երուսաղէմի եԹողոմն փիլիպպոս անուն յազգէ փրանքս, այսինքն փռիւգիացի, որ ըստ բարուց խժդժագոյն ևս էր քան զնոյն ինքն զանտիոքոս, կարգելով զնա ոչ այնչափ 'ի մտտեսել՝ քան Թէ 'ի տանջել զտառապեալ ազգն։

Եկաց երուսաղէմ զամս իբրև երկուս ընդդժնդակ հարստահարութիւն փիլիպպոսի. յորս բազումք կողոպտեցան յընչից, այլք յազատութենէ 'ի ստրկութիւն անկան, շատք ևս 'ի կենաց ելին։ Զ'ի ինչ էր՝ որ տանելի առնէր զամին առաջնորդ զամենայն նեղութիւս. զի ոչ գոյր բռնադատութիւն ուրանալ զՀայրենի հաստատիս օրէնս, և դառնալ յայլազգուն։ Իսկ յամին երկրորդի սկսան նորահնար

խոշտանկանք։ Օ՚ի անտիոքոս առաքեաց զսպողն-
ելիոս սպարապետ իւր քսան և երկու հազար զօրաք,
պատուէր տուեալ նմա մնանել յԵրուսաղէմ և 'ի
սայր սուսերի կոտորել զամենայն այր հասակա-
չափ, և զկնայս և զմանկունս վաճառել 'ի գե-
րութիւն։ Այս իբրև եկն՝ նախ զառաջինն ծածկեալ
զմարդախոշոշ հրամանն՝ խաղաղութեան դաւով
եմուտ. և եղև անդ մինչև ցօր շաբաթու, յորում
հրէայք դատարկացեալք 'ի գործոց՝ ելանէին 'ի
դուրս զքաղաքաց ազատաւ։ Օ՚այն օր ընտրեաց
անօրէնն տալ զօրաց իւրոց առնել զինուորական
խաղս ինչ 'ի զուարճութիւն քաղաքացւոց։ Լ՚ենդ
խուռնընթաց դիմէին ամենեքեան 'ի զենին տես-
լեանն. և ոչ ածէին զմտաւ, թէ կատարած հան-
դիսին հանդերձեալ է կնքիլ կենաց իւրեանց։
Իբրև ետես ապողոնիոս՝ զի լցաւ վայրն, ակնար-
կեաց զօրաց՝ իբրև թէ սկսանել զխաղն. յայնժամ
զօրքն ամենայն յիւրաքանչիւր տեղեաց մտին յամ-
բոխն, և սուր 'ի վերայ եդեալ կոտորեցին զամե-
նեսեան, և անտի սուր 'ի ձեռին ընթացեալ ընդ-
քաղաքն ամենայն՝ դիմեալ կացուցանէին զա-
մենեսեան առ հասարակ զորս և գտանէին. շատ
էր ուժեղ լինել հրէայ, զի յանխնայս խողխո-
ղեսցի։

Յետ այսր անագորոյն արիւնահեղ դաւոյ՝ էլ
հրաման սաստիկ յանտիոքոսէ. զի ընդ ամենայն
տեղիս տէրութեանն իւրոյ թողցեն ամենայն բնա-
կիչք երկրի զօրէնս իւրաքանչիւր, և 'ի մի օրէնս
նորա կացցեն, և պաշտօն տարցին դիցն, որք պաշ-
տին 'ի յունաստան։ Լ՚ոյս հրէից ուրոյն պատուի-
ներ դառնալ 'ի հեթանոսութիւն. չմատուցանել
ոչ իւրեանց ոչ զոհս, ոչ ողջակէզս, և ոչ պատա-
րագս 'ի տաճարի անդ. չպահել զշաբաթս, և ոչ
զայլ տօնս տարեկանաց. այլ տաճարն փոխեսցի 'ի
պաշտօն կռոց. կանգնեսցին սեղանք ջածոց հել-
լենացւոց. և նոցա մատուցցին զոհք, և կերիցեն
զմիս այնց զոհից. խոզենիք լցին անխտիր 'ի սե-
ղանս, որպէս միս այլոց անասնոց. մի և թլփա-

տեսցին մանկունք։ Այս պատուէր եղաւ ընդ պաաժով մահու, զի որ ոչ կացցէ 'ի հրամանի թագաւորին՝ մահու մատցի։ Այս ամենայն կատաղութիւն անտիոքոսի զկնի դառնալոյ նորա յԵգիպտոսէ, և զհետևմունս նորա նախապատմեաց հրեշտակն դանիէլ, յասելն. Գ. Մ. 29. * Ի ժամանակի դարձցի և եկեսցէ 'ի վերայ հարաւոյ (Եգիպտոս) և ոչ եղիցի իբրև զառաջինն՝ վերջինն. (քանզի պատարագմ նորա սկսեալ յաղթութիւն՝ կատարեցաւ անարգանաւք)։ Այս մոցեն 'ի նա բնակք կիտացուց (այսինքն հռովմայեցիք). և խոնարհեսցի (պատգամաւք հռովմայեցւոց երանելի յեգիպտոսէ), և դարձցի, և բարկասցի 'ի վերայ ուխտին սրբոյ. և արասցէ, և դարձցի, և գումարեսցի 'ի վերայ այնոցիկ, զոր թողին զուխտն աբ. (այսինքն յայն սակս յաղթողեաց նոցա անտիոքոսի զօրանալ և ընդդէմ սրբութեանց, զի հրէայք ապաիտ առնէին զօրինս նոսա)։ Այս յարիցեն զաւակք 'ի նմանէ (պաշտօնեայք կարգեալք յանտիոքոսէ), և պղծեսցեն զսրբութիւն բանութիւն. և փոխեսցեն զհանապազորդութիւն (զհանապազորդ զոհս և զպատարագս), և տացեն զպղծութիւն ապականութիւն. և ապականիչք ուխտին ածցեն 'ի վերայ իւրեանց զգայթակղութիւն. (որ յայտ առնէ զհետևանս հալածանաց, զոր տեսցուք յաառաջիկայդ). և ժողովուրդ, որ ճանաչէ զնոյն իւր՝ զօրասցին և արասցեն։ Այս հանճարեղք ժողովրդեանն՝ բազում խիք խելամուտք եղիցին (լտ. ուսուսցեն բազմաց), և տկարասցին սրով, և հրով, և գերութիւն, և յափշտակութիւն զաւուրս։ Այս 'ի տկարանալ նոցա՝ զօգնականութիւն ինչ սակաւ դադարեցեն ||. օգնականութիւնն է այն, զոր մակաբայեցիք եռուն ազգի իւրեանց. որպէս տեսցի 'ի կարգիս։

Յետ հրատարակելոյ հրովարտակին՝ ետ անտիոքոս կանգնել կուռս 'ի վերայ սեղանոյ տաճարին, և ընուլ զհրէաստան առհասարակ սեղանովք պղծութիւն։ Յայնժամ 'ի հրէական ժողովրդենէ կէս մի դարձաւ յայլազգութիւն, կէս մի փախստեայ

եղև յանապատս. շատք ևս անդրդուելի արիութեամբ կամակար յանձն առին զամենայն տանջանս և զխոշտանգանս և զմահ իսկ զլեռովին։ Զ.մնոյ ամիս 'ի խոյզ և 'ի խնդիր երանելին Հալածիչք 'ի տունս տունս. և ուր առ ումեք գտանէին զիրս կտակարանաց, զնա մահու սպանանէին, և զգիրս հուրբ կիզուին. զնոյն առնէին եթէ ուրեք գտանէին մանուկ թլփատեալ, զմանուկն հեղձուցանէին, և զծնօղս նորա սպանանէին։ Զ.սա ամենայ 'ի քան և հինգ երորդի աւուր ամենայն հանդիսիւ զոհս 'ի բագինս բագինս մատուցանէին. և որ ոչ առնոյր յանձն զզոհն պղծութեամբ, զնա անդէն և անդ չարախտավատ մահու կորուսանէին։ Զ.մեաստան եղեն զերկուց կանանց վասն զորդիս իւրեանց թլփատելոյ. զմանկունսն զստեանց մարցն կախեալ, և այնպէս ընդ հրապարակսն առ առակէ շրջեցուցեալ, ապա 'ի պարսպաց անտի 'ի վայր հոսեցին։ Զ.զգ եղև փիլիպպոսի քաղաքապետին թէ բազումք լռելեայն խոյս ետուն յայրսն մօտաւորս, պահել անդ զոր զոր շաբաթու. առաքեաց հուր հարկանել զնոքաք. իսկ թագուցեալքն՝ վասն երկիւղածութեամբ աւուրն փափկութեամբ, և օրինացն սրբութեամբ ոչ խշխելով և ոչ 'ի պաշտպանութիւն անձանց զիմամարտիլ, անդէն խանձատեալ այրեցան։

Զ.յլ աքանչելի եղև անխորտակելի արիութեամբ մեծի նահատակին եղիազարու ինն ամենեան փառաւեղ ծերունւոյ, կամ քահանայի առն աւագի, որ ընդ առաջինսն համարեալ էր յազգի իւրում։ Օ.սա ոչ բռնադատեին յայտնի՝ պաշտօն երկրպագութեամբ, կամ խունկս, և կամ զոհս պղծութեան մատուցանել կուռց, այլ շատանային՝ զի առ կատարումն հրամանի թագաւորին՝ գէթ միանգամ կերիցէ զմիս արգելեալ յօրինաց։ Իսկ նա հաստատեալ պնդեալ սրտիւ ասէր. ընտրեմ զտանջանս և զմահ քաջ անուամբ՝ քան զկեանս խղճիւ և ընկերաց ստգտանօք. և ինքնակամ դիմագրաւ 'ի տեղն տանջանացն դիմէր՝ ոչ մնալով վարիլ 'ի դահճաց։ Յայնմ վայրի քաղցրահայեաց գեղ երեսաց նորա,

վայելչութեան զուարթածաղիկ ալեացն, վեհանձնութեան բարեդիր հասակին, և անընկնելի արիութեան ոգւոյն, փոքր միւս ևս կակղեր և զսիրտ անագորոյն բռնաւորին. զտան և 'ի հեթանոսաց անտի՝ որք 'ի գութ հարեալ ընդ պատուական ծերունին, առ զերծուցանելոյ զնա 'ի վերահաս մահուանէ՝ ջանային հաւանեցուցանել զնա յանձն առնուլ 'ի վերին երեսս զհրաման թագաւորին, խոստանալով զայլ միս ոչ արգելեալ յօրինաց՝ մատուցանել նմա։ Իսկ նա զարհուրեալ ընդ անօրէն հրապոյրս ցոփութեան նոցա, և անդէն և անդ միանգամայն յուշ ածեալ զդայթակղութեան մանկտւոյն, զյաղթանակ հեթանոսաց, զանարգանս ահագին օրինաց, անդրդուելի հաստատութիւն առնէր պատասխանի. պատրաստ եմ 'ի տանջանս և 'ի մահ, քան կեղծաւորութիւն մտանել ընդ սրբութեան խոստովանութեան. զի թէ նոյնչափ ժամանակս կենաց ընդարձակեն ինձ, և 'ի ձեռս մարդկան բնաւ այլ ոչ մատնիցիմ, սակայն 'ի յաւիտենից 'ի մշանջենաւոր ձեռաց անտի ոչ կենդանեաք, և ոչ յետ կենդանութեան ուրեք փախչել կարիցեմ։ Յայնժամ սպասաւորք թագաւորին զառաջինն կարեկցութիւն 'ի թշնամութեան դարձուցեալ, դառն խոշտանգանաքն տանջէին զարի նահատակն։ Իսկ նա առ իւրաքանչիւր տանջանս յոգւոց հանեալ յերկինս առաձգ, մտա 'ի վախճան անդր ասէ. զայս խստութեան տանջանս մարմնոյ ընկալեալ համբերեմ, այլ հոգւով քաջ քաղցրութիւն վասն ահի սատից ոմն ընդունիմ։ Լաւ նա զայսօրինակ արիութիւն պատերազմեալ՝ յաշխարհէ փոխեցաւ 'ի վայելս յաւիտենից փառաց։

Լուաւեալ սխրալի՝ միանգամայն և աղէկտուր տեսարան էր՝ տեսանել զէօթն զուարթահասակ եղբարս 'ի խոշտանգանս դժնդակ տանջանաց առաջի աչաց մոր իւրեանց, և զմայրն աքանչելի՝ անխռով աներկիւղ խրախուսել զորդիս՝ յանձն առնուլ քաջութիւն զտանջանս և զմահ վասն ահագին օրինացն սրբութեան։ Զառաջինն՝ հարուածեցան

'ի հարուածս սաստիկս. այլ անդրդուելի արիուք՝ տարեալ զհարուածս, չետուն անագորոյն բռնաւորին անտիոքոսի որ անդ էր, գէթ 'ի խուն ինչ սրտի դիւր՝ տեսանել շիթ մի արտասուաց յերեսս նոցա, կամ հեծութիւն լսել 'ի բերանոյ նոցա. զի առաւել դիմագրաւ յօժարամիտ էին նոքա 'ի կրել զտանջանս՝ քան դահիճքն 'ի տանջել։ Ա՛ն որոյ մի 'ի նոցանէ խօսել սկսաւ յանուն ամենեցուն, և ասէ. Օ՛ի կայք անցեալ, կամ զմեզ զի՞նչ հարցանելոց էք. մեք կամք պատրաստեալք զկենանս մեր ողջակիզել ՚ն ՚ոյ մերոյ, և ո՛չ խուսկ և ո՛չ պաշտօն ինչ ընծայել կռոց ձերոց. տեսիլ մահու չէ՞ վասն մեր արհարկու, և ո՛չ ունի բնաւին տալ մեզ անցանել ըստ օրէնս հայրենիս։ Յայնժամ անդայրաւգեղ գաղանն անտիոքոս լի եղև սրտմտութեամբ. հրամանն ետ վառել զհուր, և ջեռուցանել տապակս երկաթիս, և կատսայս, և անիւս, և այլ պէսպէս գործիս տանջանաց պատրաստել. և նախ զերիցուն 'ի մէջ եղբարց որ զառաջինն խօսեցաւ, հրամայեաց զլեզուն հատանել, և զմորթ գլխոյն քերծուել և զերեսօքն դարձուցանել, և զձեռս և զոտս ծայրակտուր առնել յանդիման աչաց մերն և եղբարցն, և այնպէս 'ի ջեռուցեալ տապակ արկանել, զի առ սակաւ սակաւ խորովեալ ՀենՀերեալ անդ վՀարեսցէ զկեանս։ Ի՛նչ անօրէնն, թէ այլք զարհուրելաք 'ի սոսկալի տանջանաց անտի՝ զիջանիցին 'ի կամս նորա. և ոչ կարէր առնուլ 'ի միտ, թէ նովաւ ևս առաւել վառեաց զիրՀ նոցա, մինչև երևէին բոցակիզիլ՝ ոբ իմն նաև խանձու ընդ եղբայրն իւրեանց. և ՀՇեպէին վաղագոյն նոյնօրինակ ՀենՀերիլ։ Ա՛ն որոյ յորդորմատուցեալ միսիթարէին և խրախուսէին զմիմեանս՝ քաջութիւն մեռանիլ 'ի հաՀուութիւն ՚ոյ, որ հայի 'ի Հգնութիւն ծառայից իւրոց, և 'ի նոսա միսիթարի. զնոյն խրախոյս մատուցանէր նոցա և մայրն գորովական։ Օ՛ինի առաջնոյն երկրորդն 'ի նոյն տանջանս մատուցաւ. ապա երրորդն. նոյնպէս և այլք մի առ մի, զի երկարելով տանջանացն՝ առաւել

տհաւոր լիցի տեսարանն. և յագեսցի անտիրոյս գազանն արիւնախանձ, արեամբ սրբց նահատակացն։ Իւրաքանչիւրն յօժարակամ դիմագրաւ դիմէր 'ի վիշտս մահուն տանջանաց. ոչ ոք 'ի նոցանէ երևեցոյց բնաւ երկիւղ յերեսս. իւրաքանչիւրն անվեհեր հոմարձակութիւն խօսեցաւ առ բռնաւորն. ոչ ոք ողբեաց զնա աղերսանօք։ Մինեբեան պանծային անտարակոյս յուսով միւսանգամ ծննդեանն յարութիւն մեռելոց 'ի լաւագոյն կեանս, և ամենեքեան 'ի մէջ ահարկու բոցոյն տանջանաց յափշտակեալ կրթէին և սրտաբեկ առնէին զբռնաւորն յանձնառու իւրում։

Մայր առաւել քան զամենեսեան զարմացուցանէր մայրն սքանչելի՝ յաւէժական բարեաց յիշատակաց արժանի. որ չերևէր ունիլ բնաւ 'ի սրտի զայլ տագնապ երկիւղի, եթէ ոչ՝ թէ գուցէ՝ ոք յորդւոց իւրոց հրաժեշտ տացէ 'ի մահուանէ։ Այսոքան օրոց զմայրենի գորովական մեղկութիւնն փոխեալ յարութիւն քաջութիւն, միթէ՝ արեր սրբոյն ասէր զմի մի 'ի նոցանէ ասելով. Որդեակք իմ, մի հոգիք յիս իբր 'ի մայր ձեր, այլ յիսա՝ որ հայր ձեր է. ես կրել կրեցի զձեզ յարգանտի իմում, այլ ես ինքնին չգիտեմ բնաւ թէ զիարդ նկարեցայք դուք անդ. չետու ես զոգիսդ, ոչ կերպարանեցի զանդամսդ, ոչ շնորհեցի զկեանսդ։ Մայր՝ ոչ՝ որ աշխարհի արարիչն է, նա ետ ձեզ զկեանսդ. և նա դարձուցէ զնոյն 'ի ձեզ լաւագոյն՝ ողորմութիւն իւրով 'ի գալստեան իւրում, եթէ վասն պահպանութեան իւրոց օրինաց յանձն առնուցուք զտանջանսդ։ Այրն սրտայուցանէր զորդիս 'ի համբերութիւն, և որդիքն միթէ՝ արիւնն զմայրն արիական համբերութիւն։ Ամենեքեան էին մեռեալ. և մայրն ունէր զնոսա առաջի աչաց՝ մահու տարածեալ 'ի գետնի կիսախորով. հայրն 'ի նոսա անվրդով, և պնդակազմ ոգւով. և եթէ յայն ողորմ տեսիլ ցողեալ լիցէ արտասուս, ոչ այնչափ էր առ կսկծանաց, որչափ 'ի ցնծութիւն սրտին և 'ի փղձկել գթոյ ածսիրութեան։

Այնայր կրտսերն, որ Եօթներորդ էր 'ի լրումն Եօթնագոհար պսակի երանելի մերն. պատանեակ գեղաղեղ և սիրատարփ. մինչև անգութ բռնաւորին յարել 'ի գութ և 'ի սէր նորա։ Այսէր առ նա ոչ խոստութիւն, այլ ողբանօք. իբր հայր մխիթարէր, յորդորէր, աղաչէր չյամառիլ 'ի կամս. չտալ զմանկութիւն իւր 'ի տանջանս եղբարցն. այլ հայել 'ի հուրն պատրաստեալ, և անսալ նմա, զի մի 'ի նոյն արկցի։ Այսոստանայր երդմամբ 'ի մեծութիւնս աւագութիւն հասուցանել և կարգել ընդ բարեկամս իւր. և ամենայն Ճոխութիւն երանելի առնել յաշխարհի, միայն թէ թողցէ զաստուածն իւր, և 'ի նախնեացն օրինաց փոփոխեսցի։ Իբրև եառ թագաւորն, եթէ ամենևին պատանին 'ի բանս նորա ոչ խոտորեցաւ, այլ բացէ 'ի բաց մերժեաց զամենայն խոստմունս նորա, կոչեաց զմայրն, ակնունելով թէ բնական աղէտ մայրենի՝ տեղի տացէ բանից իւրոց. խօսեցաւ նմա զամենայն զոր ինչ ազդողագոյն համարէր 'ի շարժել զաղիս մերն, և աղաչէր և ստիպէր զնա լինել պատանւոյն կենաց խորհրդական։ Իբրև եառս՝ զի ոչ դադարի թագաւորն յաշխատ առնելոյ զնա, յանձն էառ խօսել ընդ որդւոյն. Որդեակ իմ, ասէր, զթա 'ի մայրն քո, ես որ կրեցի զքեզ զինն ամիս յարգանտի, ես որ սնուցի զքեզ զերիս ամն 'ի գիրկս ստեամբք, և հասուցի զքեզ յայդչափ մեծութիւն հասակի, 'ի հատուցումն մայրենի սիրոյս՝ աղաչեմ զքեզ, մի խաբեսցիս երկրաւոր բարեաց իւիք. հայեաց յերկինս և յերկիր, և որ 'ի նոսա արարածք իցեն, և ծանիցես զկարողութիւն և զբարութիւն արարչին. ունիցիս զաչս առ ՈՒԾ, և ոչ երկիցես 'ի չարաչուք դահճէ և 'ի բռնաւորէ այսի։ Որդեակ իմ քաղցրիկ՝ լեր ուղղիկ մանչուամբ՝ եղբարց քոց. և ես 'ի ձեռն ողորմութեն ՈՒՅ գալով զկնի քո սովին նա հատակութիւն, դարձայց առնուլ զքեզ 'ի գիրկս իմ. երանի՛ տամ եղբարց քոց, երանի՛ և քեզ, երանի՛ և ինձ մեր ձերում; եթէ միաբան ամենեքեան վասն սիրոյ ՈՒՅ մերոյ զիցուք զկեանս 'ի տանջանս։

Զէին պէտք այնչափ յորդորանաց աբրահամայ պատանւոյն 'ի յանձնառութեան տանջանաց, որ ինքնայօժար էր կրել զամենայն. վասն որոյ խրախուսեալ ձայնէր առ բռնաւորն, և առ դահիճս. զի՞ կայք, զի՞ յապաղէք բաժանորդ առնել զիս մասին վիճակի եղբարց իմոց. և անդէն վաղվաղակի էանց 'ի ձեռս դահճաց՝ 'ի ձեռաց մերն, որ մատոյց զորդեակն իւր յանբմբերելի խոչտանգանս՝ մեծագոյն ցնծութիւն, քան այլք զորդիս իւրեանց 'ի ինջոյս հարսանեաց։ Իսկ բռնաւորն առաւել 'ի վերայ սոքա դառնապէս սաստկացոյց զտանջանս և էտ կատարմամբ սպանանել։ Զ.սպա մայրն երանելի իբրև ոչ ևս ունէր որդիս՝ տանջել 'ի նոսա, ինքն մատուցաւ 'ի նոյն խոչտանգանս. էօթնպատիկ մարտիրոս լեալ յորդիս իւր, և հուսկ ուրեմն մահուամբ իւրով յաւել զվերջին պսակ իւրում անպարտելի համբերութեամբ։ Զ.հա զայս օրինակ առնել ՝ած տեսանել բռնաւորաց զտկարութիւն իւրեանց, զօրացուցանելով 'ի վերայ նոցա զմանկունս և զկանայս։ Լ.ւ եթէ 'ի հնումն զայսպիսի առաքինութիւն առաքինացան երանելիքս, զորոց բազում են պանծալի բանք առ սէր վարդապետս, զի՞նչ զարմանք են՝ եթէ 'ի նոր օրէնս շնորհաց՝ անբաւութիւնք վկայից և վկայուհեաց նոյնօրինակ և զերօրինակ հանդիսացան։

Գլ. Օ.

Մատաթի և հինգ որդիք նորա։

Մատաթի շմաւոնեան 'ի կարգէ քահանայից՝ այր երևելի, իշխան փառաւոր, յառաջնուրդ անդ խառվութեցն երուսաղէմի եղեալ անտի համբրէն տամբ իւրով՝ եկն և նստաւ յամուրս այրիցն 'ի մովդիմ քաղաք։ Լին նորա որդիք հինգ. Յովհաննէս, որ անուանեալ էր կադդիշ. Շ մաւոն, որ անուանեալ էր Թարսսի. Յուդա մակաբէ. Լզիազար աւարեան. և Յոնաթան՝ որ կոչեցաւ սաֆուտ։ Խազումք 'ի մատենագրաց զայս տոհմ ազնուական Լսսամոնացի կամ Լսսամոնեան կոչեն. զի յովսեպոս ինքուցանէ զնոսա Լսսամոնեումենք. այլ ոչ յիշեմք թէ 'ի ծբ գիրս ուրեք գտանիցի այս անուն, եթէ չիցէ նոյն ընդ Լսիտացիս, զորոց բան լցցի 'ի մեծոյ։ Սովորաբար ծբ գիրն զմակակոչ անունն յուդայի՝ որ է մակաբէ, տարածելով 'ի վերայ համբրէն ազգատոհմին՝ մակաբեանս կամ մակաբէացիս կոչէ զնոսա. և նոքին անուամբ վերնագրէ զպատմութիւն նոցին։ Կարի 'ի ձահ. զի մակաբէ նշանակէ պատերազմող, 'ի դէպ եկեալ այսմ տոհմի. զի ամենեքեան քաջ պատերազմականք էին։

Լրդ մինչ նստէր մատաթի և որդիք նորա ընդ նմա առանձնացեալ 'ի մովդիմ, լցեալ ծանրաթախիծ տրտմութեամբ ընդ աւեր երուսաղէմի, ընդ պղծութիւն տաճարին այ և ընդ ապստամբութիւն յօրինաց այ բազմաց յազգէ հրէից, եհաս և անդր հրդեհ հալածանացն։ Օ յ եկին հասին սպասաւորք անտիոքոսի. և է զի սղոքանօք և խոստմամբք, և է զի սպառնալեօք ստիպէին տագնապէին զամենայն հրէայս 'ի հեթանոսութի։ Լեհաս առաջին մատուցեալ առ մատաթի՝ հրապուրէին

յորդորէին զնա մեծամեծ խոստմամբք անսալ հրամանի կամաց Թագաւորին և զՀելոդիս, որպէս արարին ազգքն ամենայն արք հրէաստանեայք։ Իսկ նա 'ի միտս հաստատուն միշտ պատասխանի առնէր անյողդողդ համարձակութիւն, եթէ ամենայն ազգինք ունկնդիր եղեն հրամանաց Թագաւորին, և ելեալ են յիւրաքանչիւր հարցն օրինաց, սակայն ես ասէ և որդիք և եղբարք իմ ըստ պատուիրանաց հարցն մերոց գնասցուք. ոչ անսամք հրամանի Թագաւորին, ոչ Թիւրիմք յաջ կամ յահեակ։ 'Ի նմին ժամու մինչդեռ արքանեակք անօրէնութեամբ ստիպէին զնա յուրացութիւն, 'ի նեբքին ազդեցութիւն հոգւոյն՝ այ վարեալ 'ի կամակար յանձնառութիւն ամենայն տանջանաց վասն ուխտի նոր կտակարանայն, միանգամայն և 'ի պաշտպանութիւն իւրոց հաւատացեալ եղբարց զէն առնուլ. անդէն և անդ սկսաւ զինուորական օրինօք 'ի գործ զգատաստան արդարութիւն արկանել։ Զտես՝ զի այր մի 'ի հրէից անտի յանդիման ամենեցուն յառաջ եկաց զոհս մատուցանել առաջի մեհենի 'ի բագնի անդ, զոր կանդնեալ էին սպասաւորք անտիրոջոյ. 'ի նախանձ ոն վառեցաւ, և յանըմբերելի սրտցաւութիւն, և 'ի զարհուրանաց, և յարդար սրտմտութիւն խռովեալ ոչ ոչոյն առ հասարակ, դողայր, և ոչ կարէր կալ յակաստանի. ընթացաւ՝ զոտս արձակեաց, եհար զՀրէայն, և անդէն սատակեաց առաջի բագնին՝ ուր անօրինեցաւն. և նովին ածակոյս վրէժխնդիր արդարութիւն սպան և զայրն, որ հրամանաւ Թագաւորին ստիպէր զնա զզոհսն մատուցանել. կոծանեաց և զբագինն, և զմեհեանն աւերեաց։ Զ.պա 'ի ձայն բարձր աղաղակել սկսաւ ընդ քաղաքն ամենայն. եթէ որ ոք ունիցի զնախանձ փառաց ոն՝ երթիցէ զՀետ նորա. և ինքն Թողեալ զամենայն ինչս իւր 'ի քաղաքի անդ՝ ել անտի որդւովքն հանդերձ, և փախստեայ գնաց ամրացաւ 'ի լերինս։ Զազգումքն չոքան զՀետ նորա. այլք Թէպէտ ոչ գնացին ընդ նմա, բայց օրինակ առեալ 'ի նմանէ Թողին զգնաւկութիւն իւրեանց, և կանամքք, և որդւովք և

անասնովք հանդերձ գնացեալ ամրացան յանապատս առ անապրելի պահելոյ զօրէնս ՝ի իւրեանց։

Այս ամենայն ազգ եղև փիլիպպոսի, զոր անտիոքոս կարգեալ էր վերակացու Երուսաղէմի. և նորա փութացեալ ՝ի սկզբան անդ նուաճել զխռովութիւնն զայն՝ մինչև իցէ զօրացեալ, առաքեաց վաղվաղակի զօրս. որք զառաջինն գիմեցին ՝ի վերայ այնր մասին, որ ամրացեալ կայր ՝ի գիւրին. չարամտութիւք ընտրելով զօր շաբաթու, յորում հրէայք դատարկեան ՝ի գործոյ. զի յայլ աւուրս չժուարին էր գտանել զնոսա, թողլ թէ կոտորել։ Այսպէս բանս խաղաղութիւն խօսեցան ընդ նոսա, եթէ գէթ այժմ հնազանդեսցին հրամանի թագաւորին։ Իսկ կրօնասէր երկիւղած հրէայքն վասն աւուրն փափկութիւնն ոչ զկիրճնն առին, ոչ քարինս արձակեցին, և ոչ զամուրսն ուր զօղեալ կային՝ փակեցին. և ոչ բնաւ բանից նոցա ետուն պատասխանի, այլ միայն զիմեանս քաջալերէին՝ մեռանիլ քաջութիւն քան ընդ օրէնս անցանել։ Այն լուեալ զինուորաց. սատակացուցին զպատերազմ, և սպանին ՝ի նոցանէ հազար ոգի ընդ մեծ և ընդ փոքր, ընդ այր և ընդ կին. թողլ զայնոսիկ, զորս ՝ի գերութիւն վարեցին։ Իբրև զայն լուան մնացեալքն և եղբարքն իւր, սուգ մեծ առին, և տրտմեցան յոյժ. և խորհուրդ կալան ընդ միմեանս վասն այսորիկ, և ՝ի խորհրդեան անդ հաստատեցին չելանել ինքեանց յաւուրս շաբաթու ՝ի վերայ թշնամեաց իւրեանց. իսկ եթէ նոքա յայն աւուրս յարձիցեն ՝ի վերայ ինքեանց ՝ի մարտ պատերազմի, համարձակ մարտիցեն ՝ի վերայ ՝նոցա կտակարանացն և ՝ի վերայ անձանց. ապա թէ ոչ՝ թշնամիք ՝նոն միշտ զայնպիսի աւուրս ընտրիցին յարձակելոյ ՝ի վերայ նոցա, որով և ՝ի սուգ ժամանակի ժողովուրդ ՝նոն առ հասարակ ՝ի կորուստ գնայր։

Իբրև լուս եղև ՝ի հրէաստան, եթէ մնացեալ զօրաժողով լինի ընդդէմ պաշտօնէից անտիոքոսի, գային ժողովէին առ նա յամենայն կողմանց ինքնա-

կամ նահատակեալք նախանձախնդիրք օրինաց ՝ն. ընդ որս Լ. սիտացիք ազգ հզօր և պատերազմող և երկիւղած. որ էր կարգ կամ ժողով զինուորաց միաբանեալ 'ի պատերազմիլ ընդդէմ թշնամեաց ՝ն, և 'ի պաշտպանութիւն ՝ն. կտակարանացն. որպէս առ մեօք կարգ ասպետացն Մելիտինոյ (մալթայի). որք և միացեալ ընդ այլոց, ձեւացուցին փոքր գունդ մի զօրաց։ Լ. այս է սակաւ օգնութիւն, զոր նախապատմեաց հրեշտակն դանիէլի, թէ ունի զինուորիլ 'ի պաշտպանութիւն ժողովրդեան իւրոյ ընդդէմ անտիոքոսի, յասելն. "Լ. 'ի տկարանալ նոցա, զօգնականութիւն ինչ սակաւ գտցեն"։ Այլին սակաւաձեռն, այլ զօրաւոր գնդաւ արշաւէր մատաթիա ընդ հրէաստան. հարկանէր սատակէր զուրացողսն, և զպաշտօնեայս անօրէնութիւն, որք ստիպէին տապնապէին զասպատամբութիւն. աւերէր զմեհեանս, և զբագինս կործանէր. և թլփատէր զմանկունս անթլփատս. և ՝ն զօրացուցանէր զնա, և յաջողէր զգործն 'ի ձեռն նորա։

Լ. Յլ յորժամ թուէր թօթափել զանրմբէրելի լուծն, և գլուխ ամբառնալ 'ի խորտակել զեղջիւր ամբարտաւանութիւն, կամեցաւ ՝ն կոչել զմատաթիա. որ իբրև մերձ եղև մեռանիլ, արար առ որդիս իւր եռանդնալից յորդորակ՝ պահել անարատ զօրէնս ՝ն կտակարանացն, պաշտպան լինել ժողովրդեան և փառացն ՝ն արեամբ և կենօք. յիշեցուցանելով նոցա զգործս հարց իւրեանց, զոր ինչ քաջութիւն արարին 'ի դարս իւրաքանչիւր։ Լ. զշմաւոն զերկրորդ որդին հանձարեղ և խորհական 'ի մէջ այլոց՝ կացոյց նոցա խորհրդական, նմա լսել իբրև հօր, և զնմանէ կախեալ կալ յամենայնի։ Լսկ զյուդա զերրորդ որդին՝ իբր արիագոյն, և քան զայլս հմտագոյն 'ի զինուորական մարդս՝ կարգեաց նոցա սպարապետ, լինել զօրավար զօրաց, և տալ պատերազմ ընդդէմ թշնամիս ՝ն. ապա խրատ ետ նոցա ձգել և յարել յինքեանս և զայլս զամենեսին, որք օրինապահ և նախանձախնդիր եղեն օրինաց, և 'ի կիր արկանել զզէնս իւր-

Էանց վասն ժողովրդեան, և վասն օրինաց։ Լ. պա
օրհնեաց զնոսա և կատարեցաւ, փոխեալ առ Հարս
իւր, յամին հարիւրորդի քառասներորդի ութերոր-
դի (լտ. վեցերորդի)։ Լ. սուգ մեծ առին և կո-
ծեցան զնա ամենայն իսրայէլ կոծ մեծ. այլ յե-
տոյ քաջալերութիւն մեծ եղև նոցա՝ տեսանել, զի
յուգա պահէր զպատիւ հօր իւրոյ, և առաւելագոյն
զօրութիւն քան զնա։ Հարք՝ որոց վիճակի ունել այս-
պիսի որդիս, ոչ երբէք մեռանին 'ի յիշողութեան
մարդկան։

ԳԼ. Լ.

Յուդա մոխիրէ որդի մատնիչաց. և պատերազմունք
նորա։ Մեղրաբանութիւն, և մահ Լեռնիդասի երիցեալոյ։

Իբրև մեռաւ մատաթիա, համբարձաւ 'ի տեղի
նորա յուդա՝ որ կոչէր մակաբէ, զօրավար և
սպարապետ զօրաց, և իշխան ժողովրդեան իւրոյ,
և քահանայապետ՝ ճշմարտին առանձին տնտեսութիւն։
Զգնական և ձեռնտու լինէին նմա ամենայն եղ-
բարք նորա սրտի մտօք։ Լ. ինքն, և որք ընդ-
նմա էին, գաղտ գիշերայն առտ անդ ընթանային
'ի գեօղս, 'ի քաղաքս, և յագարակս, և լինքեանս
յանկուցանէին զազգատոհմն և զբարեկամս, որք
կացեալ էին հաւատարմութիւն յուխտի իւրեանց.
որով փոքրիկ գունդ նոցա բազմացաւ ցվեց հազար
այր. և ամենեքեան միաբան կարդային առ ճշ-
խնդ թելով զօգնութիւն նորա, զոր և տեսին յետոյ
յամենայն պատերազմունս իւրեանց։ Որքօք արշա-
ւէր յուդա առաւելապէս գիշերայն, և հասանէր
անկանէր 'ի վերայ գիւղից, և քաղաքաց և ամրո-
ցաց թշնամեաց ներ, կոտորէր զանօրէնս և զապըս-
տամբս յուխտից ներ. և աւար հարկանէր և հրձիգ

առնէր զամսեր ամսեր տեղիս նոցա. և չտայր նոցա գալ և գադար։

Վասն որոյ ապողոնիոս իշխան սամարիոյ կալ. գեալ՝ յանտիոքոսէ, կամեցեալ ազատել զգաւառ իշխանութիւնէ իւրոյ 'ի հարստահարութենէն յուդայի՝ զօրաժողով լինէր 'ի մանկեդոնացւոց, և յայլոց զօրաց անտիոքոսի, որք կային 'ի պահպանութիւն գաւառին՝ գալ տալ պատերազմ ընդ իսրայէլի։ Իբրև լուաւ լինէր այն յուդայի, ոչ մնաց հասանելոյ նորա, այլ ինքն յուսացեալ յօգնութիւն ՏԵՐՈՒԹԵՆՑ՝ անխորտակելի արիութիւն յարձակեցաւ միջամուխ եղև 'ի գունդ անդր թշնամւոյն, եհար և սպան զապողոնիոս, և էառ զուսերս նորա, զոր և 'ի կիր էարկ 'ի պատերազմունս իւր զամենայն աւուրս կենաց իւրոց։ Յանկանել ապողոնիոսի խռովեցաւ ամենայն բանակ նորա, ուստի և երբայեցիք հարին կոտորեցին զբազումս 'ի նոցանէ, և զմնացեալս 'ի փախուստ դարձուցին. և առին կապուտ և աւար բազում։ Այս առաջին յաղթութիւն մեծապէս սրտապնդեալ զօրացոյց զընկերսն յուդայի։

Իբրև լուաւ սրէն կամ սուրէն իշխան զօրաց ասորւոց զմահ ապողոնեայ, և զկոտորած զօրաց նորա, խորհեցաւ և ինքն առնել իւր անուն քաջութիւն և փառաւորիլ յարքայէ. նմին իրի բաց 'ի զօրաց իւրոց՝ կոչեաց իւր 'ի թիկունս այլեւս զօր բազում յանօրինաց և ստուար գունդ կազմեալ՝ եկ 'ի վերայ յուդայեանց։ Այսպէս յուդա զգնդակազմ զայն գունդ գալ 'ի վերայ իւր յայնպիսի պահու, յորում ինքն 'ի նեղ երկիւղ. զի սակաւաթիւ անձինք և եթ էին ընդ նմա. ուր այլք երթեալ էին յիւրեանց սովորական ասպատակութիւս. և որք ընդ նմա էին՝ լուծեալ լքեալ էին 'ի խիստ պահոց, որ դիպաւ առ օրին, վասն որոյ և ոչ բնաւ յօժարէին մխիլ 'ի մարտս։ Այլ յուդա յուսագիր բանիւք քաջալերէր և խրախուսէր զնոսա՝ ապաւինիլ յօգնականութիւն ամենակալին, զի զնորա պատերազմ պատերազմին։ Այլ այն ինչ բանքն 'ի բերան էին, ոչ մնալով մերձենալոյ թշնամեաց՝ ինքն

սակաւաձեռն գնդաւ իւրով յարձակեցաւ 'ի վերայ այնպիսի շտապ տագնապաւ, զի ոչ ասորիք, և ոչ նոցա նիզակակիցք զօրեցին զդէմ ունել նմա, որ և շարժեաց 'ի տեղւոջէն և խառնակեաց զամենայն զգունդն. անդ անկաւ սրէն իշխան զօրաց, և ուրթ հարիւր ընդ նմա. իսկ որք մնացեալ էին, փախուցեալ 'ի բեթորայ՝ ուր ընդ հարան միմեանց, անկանէին 'ի սահմանս փղշտացւոց։ Լ.յս եղև երկրորդ պատերազմ, և երկրորդ յաղթութիւն յուդայ։

Լ.յս ամենայն քաջագործութիւք յուդայի իբրև հասանէին յուսնէն անտիոքոսի արքայի, հեղձամբղձուկ լինէր 'ի սրտմտութիւն բարկութիւն իւրոյ. տեսեալ զի այր մի սակաւ արամբք իշխէ 'ի մարտս մեծի ընդդէմ իւրոյ միահեծան անյաղթելի հրութիւն. և արքունի զօրք իւր չկարեն զդէմ ունել նորա և նուաճել զնա։ Վասն որոյ առ ջնջելոյ զնա յաչաց իւրոց՝ զօրաժողով լինէր յամենայն աշխարհս իւրոյ հրութիւն, զօրս կուտէր բազումս յոյժ։ Լ.ելից և զարկէն պատերազմի գանձիւ, բաւական առատաձեռն բաշխելոյ զօրաց թոշակ ընդ տարի մի ողջոյն։ Լ.յլ տեսեալ զի արքունի գանձք սպառեցան, և հարկ աշխարհին՝ զոր առնոյր 'ի հրէից՝ նուազեցաւ, երկեաւ թէ գուցէ ոչ բաւեցուսցէ զպարգևսն և զթոշակս որպէս յառաջն առատաձեռն բաշխել, խորհեցաւ մտանել 'ի բազմահարուստ աշխարհն պարսից. որ ըստ մասին ընդ տերութիւն իւրով էր նուաճեալ. ակնուսեալով առնուլ փէշս անտի և կուտել արծաթ յոյժ՝ 'ի լրումն ամենայն կարևոր պիտոյից իւրոց։

Լ.թող յանտիոք իւր տեղակալ փոխարքայ՝ զլիսիաս այր փառաւոր յազգէ թագաւորութիւն արկանելով ընդ նորա անտեսութիւն զամենայն սահմանս յեգիպտոսէ մինչև ցգետն եփրատ։ Ելոյսպէս և զորդին իւր համանուն զանտիոքոս եթող ընդ նորա դաստիարակութիւն՝ սնուցանել, մինչև դարձցի նա անդրէն։ Լ.ստ նմա և զկէս զօրաց իւրոց և զփիղսն, պատուէր տուեալ նմա՝ գումարտակ առ-

նել մնանել 'ի հրէաստան, սատակել ջնջել յե-
ռեսաց երկրի զամենայն ազգ հրէից, և բառնալ
զիշատակ նոցա յաչխարհէ։ Իսպառ. և բնակեցու-
ցեալ ազգ օտար ընդ ամենայն սահմանս նոցա լա-
ռաբաժին առնել զամենայն երկիր նոցա, և տալ
նորատուտ ժողովրդեանն։ Այս ինքն առեալ զկիս
'ի զօրաց անտի՝ էանց ընդ գետն մեծ ընդ Եփրատ,
և խաղաց գնաց 'ի պարսս։

Իսկ Լուսիաս ետ վաղվաղակի զկառավարութիւն
փիւնիկեցւոց և ստորին ասորւոց՝ պտղոմէոսի,
միանգամայն յանձնելով 'ի ձեռս նորա քառասուն
հազար հետևակս, և եօթն հազար ձի ասպատա-
նիկ. և յաւել նմա օգնականս զնիկանովը և զդոր-
գիաս սպարապետս հզօրս, և քաջ տեղեակս իրաց
պատերազմի և հաւատարիմս արքայի։ Այս մինչ-
դեռ սոքա 'ի պատրաստի էին շարժել զգունդս
իւրեանց, փիլիպպոս իշխան երուսաղէմի՝ հրեշտակ
արձակէր հրովարտակաւ առ պտղոմէոս փութա-
ցուցանել զչուս զօրուն, միանգամայն խնդրէր 'ի
նմանէ օգնական 'ի թիկունս զօրս վաղվաղակի հա-
ստուցանել. ապա թէ ոչ՝ եթէ յապաղումն ինչ լի-
նիցի, կորուսանէ ասէ անտիոքոս զՀրէաստան։
Իբրև էառ պտղոմէոս զՀրովարտակն, հրաման ետ
եկուց սպարապետաց նոյն հետայն 'ի ձանապարհ
ելանել. և առ զօրացուցանելոյ զբանակ նոցա՝ յա-
ւել 'ի նոսա քսան հազար արս սպառազէնս յամե-
նայն վիճակէ զանազան ազգաց։

Իսկ Նիկանովը իբրև արդէն 'ի ձեռին ունելով
զյաղթութիւնն, եդեալ էր 'ի մտի 'ի հրէից գե-
ռութիւնն անտի ընուլ զհարկն հարիւր քանքարաց,
զոր անտիոքոս ամի ամի տայր հռովմայեցւոց։ Վասն
որոյ առաքեալ 'ի ծովեզերեայ քաղաքս կոչէր
զմարդագլխս վաճառականս 'ի բանակ անդր. պա-
տուիրելով նոցա բերել ընդ ինքեանս ոսկի և արծաթ. զի խոստանայր ինքնուն մարդ 'ի հրէից անտի
տալ նոցա 'ի մի քանքար։ Վասն որոյ լուեալ
որք զամենայն ինչ հաստուցանէին յունկն նորա,
ազգ արարին նմա և զայս ահեղ արշաւանս նիկա-

նովքայ. ինքն ինչ ոչ զանգիտեաց, քաջայոյս գոլով յօգնութիւն բարձրելոյն. բայց այլք բազումք 'ի զօրաց նորա ահաբեկեալ այսր անդր խոյս ետուն 'ի նմանէ. և մնաց ինքն վեց հազարաւ և ԷԹ. այլ ոչինչ լքումն կամ վհատութիւն կրեաց, մանաւանդ թէ բազում զօրաւոր բանիւք քաջալերէր խրախուսէր զամենեսին չզանգիտել չվհատել. և զամենեսին սրտապնդէր ապաւինել յԾծ, որում դիւրին է յաղթել սակաւուք, որպէս բազմօք։ Յուշ առնէր նոցա զմեծամեծ յաղթութիւնս ընդ ժամանակս ժամանակս պարգևեալս յԾոյ ազգի իւրեանց, յորժամ թուէին իսպառ ընկճեալ և կոխան թշնամեաց եղեալ. և առանձինն՝ զկոտորած բանակին սենեքերիմայ։ Յայսմ առնաբանութիւն յուդայի Ի. Մակ. Ի. 20. զտանեմք ծանօթութիւն նշանաւոր ինն յաղթութիւն. զորմէ յայլում վայրի չէք յիշատակ 'ի սՐ գիրս։ Ասա մերում թարգմանութիւն ասէ, թէ հռովմայեցիք յաջողուՐ ՝ն՝ հարին զգաղատացիս, այսինքն զգաղղիացիս։ Լաւ թերևս օգտէ առ այս՝ այն, զոր գրէ եւսեբիոս 'ի քրոնիկոն՝ միով ամաւ յառաջ քան զզօրավարելն յուդայ մակաբէի, յամի չինութիւն հռովմայ շՁ. "Օ մակեդոնացիս հռովմայեցիք յետ սպանանելոյ զպերսևս՝ ազատս թողին, և զիրիկացիս և զգաղատացիս ॥։ Իսկ այլք փոխանակ հռովմայեցւոց՝ իսմնան զՀրէայս միաբանեալս ընդ մակեդոնացիս 'ի բաբելոն. յորոց վերայ ասին եղեալ գաղատացիք երկոտասան բիւրու։ Օայն գունդ անդ ազգակամ տեսեալ մակեդոնացւոց՝ երկեան շրտեան և քակեցան 'ի միաբանութէ Հրէից. իսկ Հրէայք անօգնականք 'ի մարդկանէ, զամենայն յոյս ապաւինութէ յԾծ հաստատեալ, վեց հազարաւ և ԷԹ յարձակեցան 'ի դիմի հարան նոցա. և զամենեսին սպառ սպուռ առ ետեղ կոտորեցին։ Ի վերայ այսր բանի տառապին մեկնիչք, և անգիտութէն խոստովանին։ Իսկ կաղինոս թողեալ զգժուարութիւնն՝ զայս ԷԹ յայտնի բան 'ի վերայ բերէ, թէ չեն ինչ զարմանք, զի այս մեծաբանչ գործ ՝ն՝ ոչ

յիշատակի այլուր, քանզի սովորութիւն է սէր գրոց ուրեք ուրեք արտաքոյ կարգին տալ զծանօթութիւն իրաց իրաց, որք 'ի բուն կարգի իւրեանց ոչ յիշատակեցան. որպէս յայտ է և 'ի մարգարէութիւնս, ուր 'ի մէջ բերին բազում նշանաւոր գործք թագաւորաց. որք 'ի կարգ պատմութեան իւրեանց կամ ոչինչ, և կամ հարևանցի իմն ևեթ յիշատակին։ Այնուհանդ զի (ասէ) այս յաղթութիւն երևի զի պէտք կամ առ ժամանակաւ մեծին աղեքսանդրի, զի նախ քան զաղեքսանդր՝ մակեդոնացիք ոչ կոխեցին 'ի բաբիլոն. կամ առ սելևկեան առաջնով, և կամ առ անտիոքոսիս առաջնով, զորոց ոչինչ խօսին սէր զիրք մինչև ցսելևկիոս Դ. յորմէ սկսանի կարգ պատմութեան մակաբայեցւոց, որպէս տեսաք 'ի վերս անդր միայն զմեծին աղեքսանդրէ յիշատակէ ինչ, բայց և այն համառօտ և 'ի հարևանցի։ Այլ զի մի իսպառ անյիշատակ կորիցէ այսպիսի նշանաւոր յաղթութիւն պարգևեալ հրէից, կամք եղեն՝ զի ասատյիշեսցի 'ի յուդայէ 'ի քաջալերութիւն և 'ի խրախոյս սրտից լքելոց։ Զ այս սակաւուք յուշ արարեալ՝ դարձցուք անդրէն 'ի կարգ պատմութեանն։

Ալիկանովը և գորգիաս եկեալ բանակեցան առամաւնաւ. ուր գորգիաս առեալ ընդ իւր զունդ մի հինգ հազար հետևակաց, և հազար երիվարս, խաղաց յեղակարծումամու հասանել 'ի բանակետ յուդայեանց։ Այլ յուդա՝ որ պահօք և աղօթիւք խնդրեալ էր զՏէրն բազուկ՝ զոր յօգնականութիւն, իմացեալ 'ի ժամու զխորհուրդ գորգիայ՝ փութացաւ աճապարեաց այլով հնարագրութիւն ցրել զՏնարս նորա։ Յեղեկացեալ էր 'ի լրտեսաց իւրոց, զի յառաջապահ զօրք գորգեայ եկեալ են յամաւն. իսկ այլք չեն հասեալ. վաղվաղակի բաժանեաց յուդա զվեց հազար արսն յերիս գունդս. երկոցունց գնդացն զերկոսին եղբարսն զշմաւոն և զյովսէփ զօրավար կացուցանէր, պատուիրելով նոցա գալ զկնի նորա։ Իսկ ինքն ընտրանօք առեալ Լրեաւն քաջ նահատակս յառա-

ջեայ քան զայլս. և առ անարգել արագագոյն ընթանալոյ՝ թեթևս զգեցեալ էին ամենեքին՝ անսաղաւարտ, անզրահ, և անսուր. բայց ունէին նետս և պարսատիկս։ Գորգիաս չու արար զիշերայն իւրով գնդաւ. նոյնպէս և յուդա զիշերամառն իւրով յառաջամարտիկ նահատակաց. բայց ընդ անսովոր ճանապարհ, զի մի զիպեսցի գորգիայ. զի էին նորա կամք առ ժամն 'ի դիմի հարկանել նմա։ Գորգիաս հասեալ 'ի տեղի բանակին յուդայեանց, և չգտեալ զոք անդ, համարեցաւ զնոսա փախուցեալ ուրեք. և մինչ նա ասա անդ դեգերէր 'ի լերինս 'ի խնդիր հրէից, յուդա իւրովքն հանդերձ յանկարծ հասեալ 'ի վերայ բանակին այլազգեաց 'ի Թիկանց ամաւոյ, հրաման ետ հարկանել զփողս, զոր լուեալ այլազգեաց, և տեսեալ զյուդայեանս յանդիման՝ ելին և նոքա. այլ մինչև էին դասաւորեալ և կարգեալ 'ի ճակատ, յուդա և իւրքն բուռն զօրութիւ յարձակեցան խոյացան 'ի գունդ անդր նոցա, և խաւսեալ աղմկեցին զնոսա. մինչև անկարացեալ նոցա ճակատ յարդարել՝ 'ի փախուստ ձեռն էին. և հրէայք զհետ նոցա պընտեալ՝ կոտորէին դիմաՅաւալ առնէին զնոսա ընդ երեսս դաշտին. առաջին անկեալքն սուսերս ընձեռէին հրէից կոտորել նոքաք զվերջինսն։ Եւ անկան յաւուր յայնմիկ յայլազգեաց անտի երեք հազարք, թող զվիրաւորս. իսկ զերծեալքն փախստեայ անկան 'ի կողմանս եդոմայեցւոց և ազովտայ։ Եւ վանապանք այլազգեաց՝ որք պահէին զբանակետղն, տեսեալ զցրումն զօրու իւրեանց, հուր հարին զբանակաւն, զի մի պաշար և այլ կարասիք իւրեանց անկցին 'ի ձեռս հրէից։ Իսկ գորգիաս՝ որ 'ի խնդիր էր հրէից, տեսեալ 'ի լերանց անտի զծուխս բանակի իւրեանց, գիտայ զի 'ի պարտութիւն մատնեալ են այլազգիք. և զկնի սակաւուց ետես և զփախստեայս։ Յուդա արգել զիւրսն չյարձակիլ յաւար և 'ի կապուտ դիւանցն, գուցէ գորգիաս իւրով գնդաւ յանկարծ 'ի վերայ հասանիցէ. ուր եղկելին գորգիաս զանձն

ապրեցուցանել կամեցեալ՝ փախստեայ գնաց յերկիրն փղշտացւոց։

Յետ այնորիկ եկն ետաս նիկանորը իւրով գնդաւ և վերջապահ զօրաք. այլ մինչև էր նա եկեալ, հասին նիզակակից ընկերքն յուդայի 'ի զօրացուցանել զգունդ նորա։ Յարձակեցան 'ի դիմի հարան միմեանց, և կոտորեցին հրէայքն յայնմ մարտի յայլազգեաց անտի ինն հազար սպառազէնս. և զբազումս խոցս խեղդս, և վիրաւորս՝ արտաքոյ բանակին ընկենուին. իսկ մնացեալքն փախստեայ լինէին։ Այս եղև երրորդ և չորրորդ մարտ և յաղթութիւն քաջամարտիին յուդայի։ Մինչդեռ նիկանորը եղեալ էր 'ի մտի, յառաջնումն անդ 'ի մտանել 'ի հրէաստան՝ ունել զբառամբ հաւրիւր ուղիսուն հազար մարդագէրիս 'ի հրէից անտի. վասն այնորիկ ածեալ էր ընդ իւր հազար վաճառականս. այլ խաբեցաւ, զի ոչ միայն չարաբ գերի և ոչ մի, այլ և փոխանակ գերելոյ 'ի հրէից՝ կորոյս զարքունի զօրսն յայն երկու մրցմունս։ Իսկ հրէայքն զհետ պնտեալ փախստէից, իբրև տեսին զի օրն տարաժամել անկանէր, վաղվաղակի տագնապաւ դարձ առնէին, զի 'ի վաղիւ անդր շաբաթ էր, զոր պարտ էր նոցա սքանչելի. և ժողովեալ զաւար և զկողոպուտ անկելոց, և ոսկի և արծաթ, և հանդերձս և մեծուն բազում, ընդ որս և զգանձ վաճառականացն, զոր բերեալ էին գնել մարդագերիս, սկսան զշաբաթամուտն ցնծութիւն օրհնելով և փառաւոր առնելով զնոր, զի փրկեաց զնոսա 'ի ձեռաց հեթանոսաց։ Իբրև էանց շաբաթն, մասն հանէին յաւարէ անտի և բաշխէին նեղելոց որբոց և այրեաց. և ամենեքեան առ հասարակ անկեալ աղօթս մատուցանէին առ ողորմածն, և աղաչէին մինչև 'ի վախճան հաշտ լինել ընդ ծառայս իւր։

Յետ այսչափ չարաչար պարտութեանց պաշտօնեայքն անտիոքոսի դարձեալ փորձ փորձել կամեցեալ 'ի նմին դաշտի, կոչեցին զքաղիդէս սպարապետ, ընդ որում միացաւ մեծ սպարապետն տիմո-

թէոս և նիզակակիցք նորա ամենայնիւ։ Զ.յլ մինչդեռ սոքա ներքսական կարծեաք հակառակէին միմեանց, հասին 'ի վերայ յուղայեանք, և հարին կոտորեցին 'ի նոցանէ քսան հազար սպառազէն. և առին աւար բազում յոյժ։ Զ.յս էղև հինգերորդ մարտ և հինգերորդ յաղթութիւն յուղայի։ Յայսմ մարտի անկաւ և տիմոթէոս. այլ առ լատինս գնի փիլարքոս. որ է անուն պատուոյ, և ոչ յատուկ անուն անձին. ուստի ոմանք սովին փիլարքոսիւ իմանան զփիլիպպոս զիշխանն երուսաղէմի կայուցեալ յանտիոքոսէ. և ասեն թէ կարի հաւանելի է, թէ երկուցեալ յերեսաց յուդայի՝ դիմեալ իցէ առ տիմոթէոս։ Զ.յսմ կարծեաց նպաստեն և սբ գրքն, զի 'ի պատմել զմահ տիմոթեայ փիլարքոսի, առ նմին յաւելուն ասելբ. մակ. ը. 23. «Որ բազում չարչարանս 'ի վերայ ազգին հրէից հասուցանէր ||. և ահա ոչ ուրեք ընթեռնուիմք զտիմոթէոսէ, թէ արարեալ իցէ ինչ չար հրէից, այն զի՝ և անուն նորա չգիշատակի այլուր. իսկ վասն փիլիպպոսի տեսաք 'ի վերս անդր թէ քանի՞ չարիս հասոյց նոցա։

Զ.յս հնգեակ յաղթութիւնք հռչակեցաւ յոյժ զօրութիւն յուդայի. և սարսեցան յահէ նորա ամենայն ազգք, որք շուրջ զհրէաստանիս. մինչ զի այնուհետև ոչ ոք իշխեաց 'ի փորձ մարտի ընդդեմս մտանել. նմանեցաւ առիւծու յամենայն գործս իւր, և անուն նորա փառաւորեցաւ ընդ աշխարհս ամենայն։ Յետ այսր վերջին պատերազմի ամենայն սպարապետք անտիոքոսի խոյս եդուն 'ի տեղիս իւրեանց. այլ նիկանովր՝ որ ամբարտաւանն էր քան զամենեսին, անարգագոյն գտաւ քան զամենեսին, զի փոխեալ զփառաց հանդերձս՝ զգեցաւ գծուծս և աղքատինս, զի մի գայցէ 'ի ծանօթութիւն, և ընդ լերինս, և ընդ անմարդի անապատս փախստեայ անկեալ՝ գնաց կորագլուխ ամենայն թահար յանտիոք քաղաք. ուր համբաւեաց ընդ քաղաքն ողջոյն՝ զայն որ Ճշմարիտ էր, այլ ինքն ասէր 'ի ծածկել զվատութիւն իւր, եթէ հրէայք

ունին ինքեանց օգնական զՅԾՆ իւրեանց, որ անյաղթելի և անվիրաւորելի առնէ զնոսա. զի հաստատութիւն պահէն զօրէնս նորա։ Խոստովանութիւն առն հեթանոսի՝ խորհրդով նշանակեալ։ 'ի նբ գիրս. զի ամենայն թագաւորք իշխանք և զօրավարք ծանիցեն՝ թէ որ իցէ աղբիւրն, ուր ունիցին խնդրել զյաղթութիւն։

Յուդա յետ յաղթութեանն բաժանակից առնէր աւարին զայրիս, զորբս, զծերս՝ զկեղս և զմանկս հաւասար իւրոց զինուորաց. քաջ գիտելով թէ ոչ անէծք ամբարշտաց, այլ օրհնութիւն աղքատաց նպաստաւորելոց՝ ընդունի յերկնից զյաջողութիւն վասն պատերազմողաց։ Իսկ զգէնս սպանելոց քաղէր և բաժանէր 'ի զանազան տեղիս՝ ուր պիտոյն էր. և նոքօք սպառազինէր զամենեսին, որք գային յաւելուին 'ի գունդս նորա։ Պա գնաց աւարաւն յերուսաղէմ. զի զօրքն անտիոքոսի չէին կարող պահել զքաղաքն յերեսաց նորա, քանզի ինքեանք քակեալ էին զպարիսպս նորա. և ոչ իսկ յամրոցն անտի իջանել իշխէին, զի ահ յուդայի պակուցեալ էր զնոսա։ Ընդ կենդանւոյն այրէր յուդա զկալիսթենէս հանդերձ տամբ իւրով՝ ուր զօղեալ կայր, իբր զի յանդգնեցաւ այրել զգրունս տաճարին։

ԳԼ. Բ.

Յորդոր յաղթել և լիսսիայ փոխարքայի կացուցելոյ յանդիմանութեան։ Արքէ պատճառն 'ի հելլենասէրն պղծութենից։

Իբրև ազգ լինէր լիւսիայ փոխարքայի չարաչար հարուած և պարտութեան արքունի զօրաց, հաւլեր և հաշէր տրտմութեամբ առ մղձկեալ սրտին. զի ոչ որպէս էին կամք թագաւորին 'ի վերայ խորայէլացւոց՝ այնպէս կատարեցաւ։ Հաստատեաց 'ի մտի 'ի զալուստ միւսոյ ամին հանել զունդս հզօրագոյնս. զոր և արար իսկ. զի ելեալ յանտիոքայ՝ ած ընդ իւր վաթսուն հազար հետեւակս, և հինգ հազար հեծեալ սպառազէն, և եկն ճակատեցաւ 'ի կողմանս բեսորայ։ Իսկ յուդա ըստ իւրումն սովորութեան զթերին զօրաց իւրոց լրացուցեալ մեծապաղատ խնդրուածովք, եռանդնասէր աղօթս առնելով առ ած ինքն և իւրքն ամենայն, խաղաց գնաց ընդառաջ թշնամւոյն մեռասան հազարաւ. 'ի գիմի հարաւ նոցա, և անդէն կոտորեր 'ի գնդէ անտի լիւսիայ հինգ հազար հեծեալ. իսկ յայլս խառով արկանէր. և թէպէտ բազումս աշխատ լինէր լիւսիաս սմդեալ զնոսա ունել հաստատուն զտեղի ճակատուն, և զմարտն մղել, այլ վայրապար. զի բովանդակ գունդն աղմկեալ՝ առ հասարակ 'ի փախուստ դարձան. զնոյն արար և ինքն՝ դարձ արարեալ յանտիոք։ Այսպա վերստին սկսաւ զօրաժողովք լինել կազմել պատրաստել, և անդրէն արշաւեալ 'ի հրէաստան՝ առ միւս ևս փորձ փորձելոյ։

Իբրև առ սուղ ինչ ժամանակս հանդարտեցան և ոգի առին հրէայք յաշխատութեէ պատերազմաց, կոչեաց յուդա զամենայն քահանայս, և զժողովս ժողովրդեան, որք սրտի մտօք պահեցին զհաւատս և զանձպաշտութեան և զսէր կրօնի, մաքրել և սրբել

զտաձարն պղծեալ 'ի հեթանոսաց։ Եւ զի միջնա-
բերդն երուսաղէմի էր 'ի ձեռս զօրաց անտիոքոսի,
կարդեաց յուդա զմասն զօրաց իւրոց պաշարել
զնա, զի մի կարիցեն զինուորք հեթանոսաց ինքա-
նել անտի և ազմկել կամ խափանել զնոսա 'ի գործ-
ոց իւրեանց։ Եպա եկեալ 'ի տաճար անդր 'ի
լեռն սիոն՝ տեսին զոր տեղիին զայն, ուր յառաջա-
գոյն խուռնընթաց յաճախէին յարաժամ երկրպա-
գուք նոցա, արդ իբրև անապատ ամայի խոպա-
նացեալ. սրահք և գաւիթք անտառամոլք սակս
ընդ այնչափ ժամանակս չկոխելոյ ուրուք անդր.
դրունքն այրեցեալք. սեղանն աղտեղեալ 'ի կռոց.
սենեակք քահանայից կործանեալք. վարագուրա-
ձիգք խաթարեալ. և ամենայն ինչ խանգարեալ և
աւերեալ։ Ենդ այսպիսի աշխարեալի տեսարան ա-
մենեքեան սուգ առնուին, զպատմուճանս պատա-
ռէին, հող 'ի գլուխ լինէին, և 'ի գետնի թաւա-
լեալ լային, և մեծաձայն յերկինս առ ՝ած աղա-
ղակէին։ Եպա ձեռն 'ի գործ արարին մաքրել
զտեղին՝ 'ի բաց առին զվէմն բաղնեացն պղծութեա
և ընկեցին յաղբեւս. շինեցին անդրէն զսեղեակս.
սրբեցին զսրահս 'ի թփոց և 'ի խոտոց։ Եի միայն
տարակոյս մնաց նոցա 'ի վերայ սեղանոյ ողջակի-
զացն եթէ զինչ արասցեն զնա, զի էր սեղան օրի-
նաւոր, կանգնեալ 'ի ժամանակս եզրասայ, և
սրբեալ 'ի պատիւ ՝ճմարտին ՝ այ. այլ 'ի ժամանակս
հալածանաց պղծեցաւ 'ի հեթանոսաց զոհելով 'ի
վերայ նորա կռոց. քակել չիշխէին, զի էր սրբա-
զան ինն. պահել խղճէին, զի պղծեալ էր։ Հուսկ
ուրեմն հաստատեցին քակել, և զքարինս պատ-
ուով դնել 'ի դիպան տեղւոջ, մինչև հաճեսցի ՝ած
'ի ձեռն մարգարէի յայտնել զկամն իւր։ Եւ շի-
նեցին 'ի նմին տեղւոջ նոր սեղան յանկոփ քարանց
ըստ օրինաց. նոյնպէս փոխանակ սեղանոյ ինկոցն,
և աշտանակին լուսոյ, և սեղանոյ հանապազորդ
հացին, և այլոց սպասուց կարևորաց, զորս յափշ-
տակեաց անտիոքոս, նորս շինեցին նոյնօրինակ
գործուածով։ Եւ սկսան այնուհետև կատարել

զպաշտամունս ոմն ըստ օրինաց 'ի տաճարի անդ։ Յամենայն ինչս երդորդի, յամին հարիւրորդի քառասներորդի ութերորդի թուականութեան յունաց, արարին զնաւակատիս սեղանոյն և տաճարին մեծահանդէս փառօք և ցնծալից ուրախութիւն աւուրս ութ. և հաստատեցին՝ զի այն ութօրեայ նաւակատեաց հանապազ տարւոջէ 'ի տարի անխափան կատարեսցին։ Օ այս հանդէս նաւակատեաց ընտրեցին առնել 'ի քսաներորդի հինգերորդի աւուր ամսոյն, յորում աւուր երեք ամսաբ յառաջ հրամայեաց անտիոքոսի կատարեցաւ անդ ասն բագնին, որ ընդ աւուրս տասն շինեցաւ, և կառուցաւ 'ի վերայ 'ոգ սեղանոյն։

Իբրև ամենայն ինչ եղ 'ի գլուխ յաջողութիւն, ձեաց մի միայն հոգ 'ի սիրտ յուդայի, որ տագնապէր զնա. այս է՝ ամրացուցանել զտաճարն և ապահովել յարշաւանաց թշնամեաց. զի մի դարձեալ կոխան լինիցի 'ի հեթանոսաց։ Զանազի պարիսպք քաղաքին քանդեալ էին. զոր թէպէտև շինէին, և ամենայն իրօք ամրացուցանէին, սակայն չկային այնչափ զօրք, և այնչափ բազմութիւն բնակչաց, զի բաւական լիցին պահել զայն ընդարձակ տարածութիւն։ Իսկ միջնաբերդն թէպէտ ամուր էր, այլ էր 'ի ձեռս զօրացն անտիոքոսի. և ոչ կարէր յուդա թողուլ անդ զօրս յիւրոցն 'ի պաշարումն նոցա, զիտեալով զի լուսիաս կազմէր պատրաստէր բազմաձեռն գնդաւ անդրէն 'ի կողմանս հրեաստանի արշաւել։ Այնպէս էր մարթ պարտաւորել զզօրս 'ի պահպանութիւն տաճարին յերեսաց զօրացն անտիոքոսի, և 'ի յարձակմանց այլոց շրջակայ ազգաց հեթանոսաց. քանզի զօրք իւր կարևոր էին նմա յայլ գործս պատերազմի։ Յայսպիսի խորհուրդս վարանեալ, հուսկ ուրեմն հաստատեաց կանգնել շրջապատ պարիսպս բարձրացեալս հանդերձ հաստատիմն ամրակուռ աշտարակաբ 'ի նմանութիւն ամրոցաց, սկսեալ 'ի սիոն լեռնէ՝ իջանելով զտաճարաւն շուրջանակի. զոր բաւական լինիցին պահպանել սակաւաթիւ պահապանք սակս

անձկութեամբ շրջապատին։ Իբրև կատարեաց 'ի գլուխ զգործն, էանց 'ի բեթսուրա, ամրացոյց և զնա ընդդէմ եղուիմայեցւոց. զի մի լիցի նոցա համարձակ ասպատակ սփռել 'ի հրէաստան։ Եւ իբրև ապահովացոյց զայս երկու տեղիս, խաղաց զնդաւ իւրով յակրաբատեան քաղաք, ուստի ամենեկացիք ստէպ արշաւէին յերկիրն հրէաստանի. Եհար զնոսա 'ի հարուածս սաստիկս, և առեալ զկապուտ զաւար նոցա՝ դարձաւ 'ի գաւառն բանեայ. կալաւ զամրոցս նորա, զբնակիչս կոտորեաց, զինչս և զստացուածս նորա աւար Եհար, և զամուրս նոցա հրձիգ արար։ Նոքի էանց 'ի վերայ ամենացւոց. և բազումս անդամ 'ի դիմի հարեալ նոցա՝ սպառ սպուռ աւերեաց զբանակս նոցա, զբաղուստս 'ի սայր սուսերի կոտորեալ, և զայլս ցիր և ցան արարեալ, ընդ որս և զզօրագլուխս նոցա զտիմոթէոս. Եառ և զազէր, և զամենայն քաղաքս և զաւանս որ ընդ նովաւ. և դարձ արար 'ի հրէաստան։ Օ այս գործ քաջութեան՝ որ բազում պատերազմաւ Եղ 'ի գլուխ, մարթ է ասել վեցերորդ յաղթութիւն յուդայի։

Մինչդեռ խորհէր յուդա մակաբէ տալ առ փոքր մի դուլ պատերազմի 'ի հանգիստ աշխատեալ զօրաց իւրոց, հրեշտակ հասանէր առ նա 'ի գազատադ՝ յայն կոյս յորդանանու, եթէ տիմոթէոս կատաղեալ սակս հարուածոց, զոր ընկալաւ 'ի յուդայէ, զօրաժողով եղև յամենայն շրջակայ ազգաց. և եկն գազանաբար 'ի գազատադ 'ի վերայ որդւոցն իսրայէլի կորուսանել ջնջել զնոսա. 'ի տոբիա կոտորեցան՝ որք անդ գտան, և հազար մի 'ի գերութիւն վարեցան կանամբք և որդւովք և ամենայն կահիւ և կարասեօք իւրեանց. իսկ մնացեալքն յիսրայէլացւոց անտի ամրացեալ էին 'ի բերդն. այլ տիմոթէոս պատրաստեալ է գալ պաշարել զնոսա, որք առհասարակ 'ի կորուստ գնան, եթէ յուդա ոչ ակնապարեսցէ հասանել յօգնութիւն նոցա։ Զայն ինչ զթուղթն ընթեռնուին, ահա այլ գուժկանք հասանէին 'ի կողմանց գալիլեացւոց յայս կոյս յոր-

դանանու, եթէ զօրք տիւրացւոց և սիդոնացւոց, և բնակիչք պտղամայիդայ լցան զերեսն անդր, և խսպառ կորուսանել ընչել խնդրեն զհրէայս։ Յուդա 'ի լուր այնչափ զինուց, ոչինչ երկիւղ՝ կամ լքումն կրեաց, այլ վաղվաղակի ժողովեալ զգլխաւորս ժողովրդեան՝ խորհուրդ կալաւ ընդ նոսա վասն եղբարց իւրեանց։ Լ.պա բաժանեալ զզօրս իւր յերիս գունդս, զմին ետ 'ի ձեռս շմաւոնի եղբօր իւրոյ, թողեալ 'ի հաճոյս նորա ընտրել զոր կամիցի, և առաքեաց զնա 'ի կողմանս գալիլեացւոց։ Զայլ գունդ մի եթող 'ի հրէաստան, կարգեալ նոցա զօրագլուխ զյովսեպոս զաքարեանց, և զզաքարիա (որ և զակքէ, կամ ազարիա), պատուիրելով նոցա չշարժիլ ուրեք, և չառնել ընդ ումեք բնաւ պատերազմ, մինչև 'ի դառնալ իւրում; այլ միայն պահել զերկիրն. իսկ ինքն կալաւ վասն իւր զգաղաադ՝ գործ ծանր և դժուարին։

Շմաւոն խաղաց 'ի գալիլեա երեք հազարօք և եթ։ յուդա 'ի գաղաադ միայն ութ հազարաւ. բայց յայս նոցա այնպէս հաստատեալ էր յօգնականութիւն նոցա զի ոչինչ զանգիտէին 'ի բազմութիւն հեթանոսաց։ Շմաւոն մնեալ 'ի գալիլեա՝ հարկանէր ամ անդ զնումբս խումբս թշնամեաց. ապա 'ի մարտ մտեալ աւերէր զբանակ նոցա, կոտորեալ անդէն իբր երիս հազարս, թող զբազմութիւն վիրաւորաց, և հալածական տանէր զնոսա մինչև 'ի դրունս պտղամայ։ Լաւ այսպէս ազատեաց զերկիրն 'ի թշնամեաց։ Լ.պա ածեալ զմտաւ, եթէ չէ կարօղ սակաւաթիւ զօրքն պահել զայնչափ ընդարձակ տարածութիւն երկրի, եհան յերկրէն գալիլեացւոց զամենայն հրէայս կանամբք և որդւովք հանդերձ, և ամենայն կահիւ և կարասեաւք իւրեանց, և ած զնոսա 'ի հրէաստան բնակիլ անդ անսասան. զի գիւրին էր պաշտպանել նոցա անդ, սակս անձկութիւն տեղւոյն։ Լաւ այս է մասն պատերազմական խոհեմութիւն, թողուլ զերկիրն, յորժամ սակս ընդարձակութիւն կամ հեռաւորութիւն չիցէ մարթ պահել զնա 'ի թշնամեաց։

Իսկ յուդա և յոմնաթան եղբայր նորա ուԹ հազարաւ անցին յայն կողմն յորդանանու. և գնացին ընդ երկիր անապատ երից աւուրց ճանապարհ 'ի ծածուկ, զի յանկարծակի 'ի վերայ յարձակեսցին։ Ընդ հասանէին 'ի սահմանս արաբացւոց՝ նաբատացիք խաղաղութիւն ընդ առաջ եղէն նոցա, և պատմեցին նոցա զեղկելի վիճակն, յոր գտանէին հրէայք յերկրին գաղաւաղու. և թէ առ վաղիւն ժամադիր են հեթանոսք միախուսմբ փակել զամուրս, ուր մնացուածք իսրայէլացւոց ամրացեալ կան, և առնուլ ջնջել սատակել զամենեսեան։ Օ այն իբրև լուաւ յուդա, նոյնհետայն դարձոյց զգնացս 'ի բոսոր քաղաք, և յեղակարծուն ժամու 'ի վերայ հասեալ՝ էառ զնա, և աւարեաց և հրձիգ արար. և զամենայն արու 'ի սուր սուսերի կոտորեաց։ Լու անտի գիշերայն դիմեաց 'ի վերայ ամրոցին պաշարելոյ, և եգիտ անդ զօր անԹիւ, որք քարձեալ բերէին սանդուղս, մանգղիոնս, և այլ պէսպէս մեքենայս 'ի վերայ ամրոցին։ Լ.յլ յուդա քաջայոյս 'ի վերին օգնականութիւն՝ արիաբար քաջալերեր խրախուսէր զիւրսն քաջուԹիւն մարտնչել 'ի վերայ եղբարց իւրեանց. և գոչելով առ ՇԾ՝ հրաման ետ հարկանել զփողս. և այն շատ եղև ահափետ առնելոյ զամենայնս, որք առեալ էին զփորձ քաջուԹեն յուդայի, վասն որոյ և յանուանէ նորա սարսէին. ուստի և ընկեցին իւրաքանչիւր զմեքենայս, և 'ի փախուստ դարձան. և յուդայեանք զՀետ մնեալ նոցա՝ հարկանէին զնոսա 'ի հարուածս սաստիկս մի առ միոջ դիմեալ կացուցանելով. և կոտորեցին յաւուր յայնմիկ 'ի թշնամեաց իբր ուԹ հազար սպառազէնս։ Լու էառ յուդա զմնափա գաղաւաղու, զբասփոն, զմակեդ, զբոսոր, և զգաւառն ողջոյն. զամենայն արու 'ի սուր սուսերի իւրեանց արկանէին, զինչս և զստացուածս յաւարի առնուին, և զքաղաքս հրձիգ առնէին զի մի՛ այնուհետև թշնամիք գտցեն ապաստան։ Լու այս եղև ուԹերորդ մարտ և ուԹերորդ յաղԹուԹիւն յուդայի։

Յետ այսորիկ եւ յուդա հանդիստ զօրաց իւրոց, այլ կարի համառօտ եղև. քանզի տիմոթէոս զօրագլուխն ամենացուցոյ՝ լի սրտմտութիւն սակս երկիցս 'ի պարտութենէ մնասելոյ բազմամբոխն գնդաւ իւրովք առաջի յուդայի, դարձեալ զօրաժողով եղև յամենայն ազգաց օրք շուրջ զՀրէաստանեաւ, 'ի վարձու կալաւ և յարաբացւոց զրաղումն, և արար գումարտակ ստուար և սիդակազմ քան զառաջինն, և եկեալ բանակեցաւ յանդիման ռափոնայառ համանուն հեղեղատաւ։ Օր իմացեալ յուդայի 'ի ձեռն լրտեսաց իւրոց, նոյնժամայն իւրով սովորական քաջայոյս վստահութիւն յօգնութեան նոցա՝ սաստիկիւղ խաղաց գնաց ընդ առաջ նորա։ Իբրև եսես տիմոթէոս զահեղախորհուրդ ընթացս յուդայեանց, շրջեաւ լքաւ՝ յիշելով զնախընթաց կրկնակի հարուածս յարաչարս. վասն որոյ պատուէր եւ զօրապետաց իւրոց միտ դնել յուդայի և գնդի նորա, 'ի հասանել նոցա առ ափն հեղեղատին. եթէ 'ի հասանելն միանգամայն և անցանիցեն առանց զտեղի առնլոյ յափն դեւոյն, զիտասցուք ասէ, թէ մեք ոչ կարեմք դիմակալ լինել նմա. իսկ եթէ զտեղի առցէ յափն հեղեղատին՝ ոչ համարձակելով անցանել, յայտ արար՝ եթէ զանգիտեաց. յայնժամ մեք անցցուք մարտ դիցուք և յաղթեսցուք նոցա։ Այն ինչ նորա բանքն 'ի բերան էին, յուդա հասեալ յափն հեղեղատին՝ յառաջեաց եմուտ 'ի ջուր անդր, պատուէր տուեալ զպլրաց իւրոց զամենայն զզօրսն զկնի նորա վարել, մինչև չնալոյ անդէն և ոչ միոյ գէթ 'ի պահպանութենէ կարասեաց։ Այլ ինքն անցեալ ընդ հեղեղատն իւրովքն հանդերձ՝ յարձակեցաւ առիւծաբար 'ի վերայ նոցա, խռովեաց զանանկն առհասարակ, և զարհուրեցոյց, և այնպիսի սաստիկ կոտորած գործեաց 'ի նոսա, զի թուել անգամ զմեռեալսն ոչ ժամանեցին. իսկ զայլս 'ի փախուստ դարձուցանէր. որք առ շտապ տագնապի և առ անարգել ընթանալոյ՝ զղէնս յանձանց 'ի բաց ընկենուին 'ի դաշտս և զձանապարհայն. և երթեալ

անկանէին 'ի կառնայիմ յամուր անդր մեհենին։ Զ.յԼ յուդա, ուր ոչ կարէր զսուր 'ի կիր արկանել, զՀուր առնոյր 'ի ձեռին։ Զ 'ի եմուտ 'ի քաղաք անդր զկնի փախստէից, և հրձիգ արար զքաղաքն և զամուրն մեհենիւն հանդերձ, և զամենայն ամրացեալսն 'ի նմա։

Զ.պա Ժողովեաց և ինքն, որպէս արար 'ի գալիլեա շմաւոն եղբայր նորա, զամենայն ազգն հրէից, որք էին 'ի կողմանս գաղատացու կանտմբք և մանկըտւով և ամենայն կահիւ, ածել յերկիրն հրէաստանի առ հեշտեաւ և կարօղ լինելոյ պաշտպանել նոցա. որով ստացաւ յուդա բազում քաջամարտիկ զինուորս, որք ցրուեալ 'ի մէջ գաղատացւոց՝ առ ոչինչ պիտանացու երևէին. այլ միացեալ ընդ յուդայի՝ զօրացուցին զգունդս նորա։ Զ.յս եղև ինեերորդ մարտ յուդայի և ինեերորդ յաղթութիւն նորա։

ԳԼ. ԹԵ.

Զ.յԼ ՀՈՒԱՓՈՐԾՈՒԹԻՒՆ ՅՈՒԴԱՅԻ։ ԳԱՐՁ ԱՆԿԻՈՅՈՒՆ 'Ի ՊԱՐՍԿՑ, ԵՒ ՀԱՐԱԿԱՎԱՔ ՄԱՀ ՆՈՐԱ։

Զ.ՐԴ մինչդեռ յաղթանակաւ ածէր զնոսա յուդա անցուցանել ընդ յորդանան, և գալ հասանել յերուսաղէմ, նոր դիպուած ստիպեաց զնա անդրէն զէն առնուլ։ Զ 'ի վերայ Ճանապարհին՝ ընդ որ երթային, էր եփրոն քաղաք մեծ և ամրաշարիսպ. և ոչ գոյր այլ Ճանապարհ խոտորիլ յաջ կամ յահեակ, բայց կամ դառնալ յետս և երկայնել զՃանապարհն, և կամ անցանել ընդ մէջ քաղաքին 'ի դրանէ 'ի դուռն։ Իսկ բնակիչք քաղաքին իբրև տեսին զամբոխ զօրացն, և զզաղմութի բանակաց, զդրունսն փակեցին և պնաեցին

վիմք։ Յուդա առաքեաց խօսել խաղաղութիւն ընդ
Իշխանս քաղաքին՝ տալ նոցա անցս, խոստանալով
անցանել խաղաղութիւն առանց վնասս ինչ բնաւ ու-
մեք հասուցանելոյ, բայց որչափ ոտիւք կոխեսցեն
զերկիրն. այլ նոքա ոչ ունկն մատուցին, և ոչ
առին յանձն բանալ զդրունս։ Սակայն յուդա՝ զոր
ոչն կարաց 'ի ձեռս բերել խոնարհ աղերսանօք,
ստացաւ բռնութիւն զինուց։ Հրամանն ետ զի իւրա-
քանչիւր գունդ յոր կողմն և կայր՝ յարձակեսցի 'ի
վերայ քաղաքին. և նոյնժամայն քաջագոյնք 'ի
զօրաց դիմեցին 'ի պարիսպս սանդղօք և պէսպէս
մեքենայիւք, և զամենայն տիւն և զամենայն գի-
շեր աշխատ եղեալ, ընդ առաւօտն գտան 'ի վերայ
պարսպաց. և հոսեալ անտի 'ի ներքս՝ 'ի սուր սու-
սերի կոտորեցին զամենայն արու, խնայեալ 'ի կա-
նայս. աւար հարին, հրձիգ արարին զքաղաքն,
քանդեցին զպարիսպս. և անցին ընդ մէջ քաղա-
քին՝ գնալով 'ի վերայ դիականցն անկելոց։ Եւ
յառաջ խաղացեալ՝ անցին ընդ յորդանան գետ
դէմ յանդիման բեթսանայ։ Եւ ինքն յուդա՝ ուր
ուրեք գոյր կասկած երկիւղն, զվերջն ունէր բա-
նակին, և ընդ ամենայն չուս ճանապարհին յան-
ձանձէր միթարէր և քաջալերէր զամենեսին,
մինչև բազում ցնծութիւն եկին հասին յերուսա-
ղէմ. ելին 'ի լեառն սիոն 'ի տաճարն ուրախութիւն,
զի հասին անդրէն 'ի տեղի իւրեանց խաղաղութիւն
առանց յայնչափ արիւնուռչտ մրցմունս մարտից
ծախելոյ ուրուք 'ի նոցանէ. զոր ծանեան յառան-
ձին օգնականութիւն նոցա զօրութեց. վասն որոյ մա-
տուցին նմա ողջակէզս և պատարագս ցնծալից
գոհաբանութիւն։

Այլ ցնծութիւն նոցա ընդխառնեցաւ տրտմու-
թիւն 'ի ձախող դիպուածոյ ծագելոյ 'ի սնափառու-
թիւն երկուց ձեռնարկեց զօրապետաց, որք անպա-
տիւ արարին զզինուորութիւնն հրեայսատանեայց։
Այանցի որպէս պատմեցաք 'ի վերոյ, յուդա յեր-
թալ իւրում 'ի գաղատ, եթող յերուսաղէմ
գունդ մի զօրաց 'ի ձեռս յովսեպոսի և զաքարիայ

'ի պահպանութեան տաճարին և քաղաքին, պատուէր տուեալ նոցա չմիսել բնաւ 'ի գործ պատերազմի մինչև 'ի դարձ իւր այսրկին։ Իսկ ասքա լուեալ զմեծամեծ յաղթութիւնս մակաբեանց, 'ի նախանձ վառեցան, կամեցան և ինքեանք անուն քաջութեան ժառանգել։ Այսոր որոյ ընդդէմ հրամանատարութեան յուդայի՝ առեալ զզօրս իւրեանց, խաղացին 'ի կողմանս յամնեայ քաղաքին, ուր գորգի սպարապետ անտիոքոսի նստէր գնդաւ իւրով։ Այլ ոմն որ ձեռնտու էր ծառայից իւրոց՝ որք զնորայն պատերազմ պատերազմէին, յոգնականութեան նորա միայն ապաստանեալք, ոչ կամեցան օգնել երկուց սոցա՝ որք լոկ սակս մնոտի փառաց և անուան մխէին 'ի մարտ, համարելով զինքեանս անպարտելիս. զի ունէին զօրս, որք ոչ երբեք յաղթեցան։

Այլ եթէ զօրքն նոյն էին, զօրավարքն նոցա չէին նոյն. և որպէս 'ի փոխիլ գլխոյ՝ փոփոխի բոլոր մարմինն, նոյնպէս փոփոխութեան գլխոյ զօրաց՝ փոխէ բազում անգամ զբոլոր բանակն։ Գորգի էլ 'ի քաղաքէ անտի զօրօք հանդերձ. իսկ յովսեպոս և զաքարիա արիասիրտք էին, ցորչափ հեռի էին 'ի թշնամւոյն. այլ իբրև 'ի մօտոյ տեսին զնոսա, երկեան շրջեան, և նախ ինքեանք 'ի փախուստ դարձան, և զօրքն զկնի նոցա. որոց զհետ պնդեալ գորգեայ, կոտորեաց յաւուր յայնմիկ 'ի փախստականից անտի արս երկու հազար. այլ քան զկոտորածն մեծագոյն եղև նախատինքն և բեկումն սրտի ժողովրդեան հրէից. զի եղև՝ ասէ գիր, կործանումն այն սաստիկ 'ի վերայ ժողովրդեանն։ Այսկայն յուդա փութով կանգնեաց զկործանումն. զի դարձուցեալ զքէնս 'ի վերայ հարաւայինս ամենեցուցոց՝ կալաւ զքեբրոն քաղաք, հանդերձ այլովքն որք ընդ նովաւ. անտի դիմեալ 'ի վերայ փղշտացւոց յեղակարծում ժամու անկաւ 'ի վերայ բնակչացն ազովտայ. էառ զնա, քակեաց զմեհեանս նոցա, կործանեաց զկուռս նոցա և հրձիգ արար. և զինչս և զստացուածս նոցա աւար հարեալ՝ դարձաւ անդրէն 'ի հրէաստան։

Մինչդեռ յայս կողմն եփրատայ նանրանային ամենայն խորհուրդք անտիոքոսի՝ զոր խորհէր 'ի վերայ Եբրայեցւոց, ոչինչ լաւագոյն յաջողէին ձեռն, արկուածք նորա և յայն կոյս եփրատայ 'ի կողմանս պարսից։ Զի որպէս 'ի վեր անդր նշանակեցաք, խաղաց գնաց նա զօրու ծանու և յոգնաթիւ երիվարօք և փղօք 'ի պարսս, հանել անտի հարկս մեծամեծս. բայց վրիպեցաւ 'ի յուսոյն. զի եդիտ զգ-ժողովուրդն ապստամբեալ 'ի նմանէ։ Մինչև յաւ ծեալ ընդ զանազան գաւառս, եկն յերդմայիգա՝ կամ լիմնեայ քաղաք, որ կոչէր և Պերսեպոլիս. ուր էր մեհեան մեծագանձ բազմահարուստ, և խորհէր առնուլ աւարաբար զամենայն զգանձն։ Մինչ ժողովուրդն առ հասարակ 'ի զէն վառեալ, հարին վանեցին զնա անտի 'ի բաց. իսկ նա կո-րաչ լուխ ամօթալից չուս արար անցանել 'ի բաբե-լոն. բայց ոչ ժամանեաց անդր յաղագս օրհասին մահու կանխելոյ զՀանապարհայն։ Մինչև էր նո-րա երթեալ յաշխարհէն պարսից, ազգ եղև նմա պարտութիւն զօրաց իւրոց, զորս եթող 'ի ձեռս լիսիայ իւրումն փոխարքայի յանտիոք, որպէս և այլ ամենայն ձախող անցք, որք անցին ընդ նա, և ընդ միաբանեալսն ընդ նմա։ Զայն իբրև լուաւ, լի եղև խռովութիւն, և 'ի սրտմտութիւն բարկութիւն վառեալ՝ հրաման տայր կառավարին անդադար շտապ տագնապաւ վարել զկառն՝ արագ ժամանել յերուսաղէմ, և անդ յագեցուցանել զցասումն իւր, բնաջինջ առնել զերբայեցիս, և հարթյա տակ կացուցանել զտաճար նոն. և կանգնել յաշ-խարհի նշանաւոր օրինակ վրէժխնդրութիւն։ Մինչ մինչ նա այսպէս սահմանէր յերկրի, ՀԱԾ յերկինս այլազգ անօրինէր զիրսն։ Զի այն ինչ նորա բանք ամբարտաւանութիւն խառն ընդ հայհոյութիւնս 'ի բե-բանն էին, կալան զնա ցաւագին խիթք որովայնի. և 'ի ստիպել զկառավարն Ձեպել տագնապաւ զընթացս՝ շրջեցաւ կառքն, և յանկանել իւրում 'ի կառաց անտի՝ խախտեցան ամենայն ոսկերք նորա, և 'ի զանազան անդամս խորտակեցան։ Այս այսպէս

նա որ կամէր 'ի վերայ ալեաց ծովու սաստել, և զբարձրութիւն լերանց հաւասարել, ոչ ևս կարէր կալ յոտին. ուստի և պատգարակաւ բարձեալ տանէին զնա. յայնժամ 'ի միտ առնոյր յայտնապէս զբարձրագոյն զօրութիւն ՅՍ։ Սաստկացան ցաւք նորա, և զայրացան վերքն. մինչև բոլոր մարմնոյն որդնալից լինել, այնչափ՝ զի 'ի նեխութիւն հոտոյն և զօրք նորա ոչ կարէին հուպ լինել նմա. և ինքն իսկ ոչ կարէր ժոյժ ունել 'ի ժահահոտութենէ անտի։

Յայնժամ ուր ուրեմն հարկեցաւ խոստովան լինել, թէ արդար է և իրաւ հնազանդ լինել ՅՍ, և մի ՅԾ-ակերպ օրինակ բարձրանալ մարդոյ մահկանացուի։ Պարձաւ առ ՅԾ պաղատանօք՝ ոչ զղջմամբ և ձշմարիտ ապաշխարութիւն, այլ լոկ վասն մարմնոյն առողջութեան. վասն որոյ և ոչ հանդիպեցաւ ողորմութիւն։ Լուստս դնէր խոստանայր ապահարկ առնել զերբայեցիս. և ընդդէմ Երուսաղէմի զամենայն ցանկացեալ ազատութիւս. և զտաճարն զարդարել և ձոխացուցանել պատուական սպասուք. և զծախս պատարագացն յարքունուստ ընուլ. և 'ի վերայ այսր ամենայնի երբայեցի ևս լինել. և յամենայն մարդաշատ տեղիս շրջել և քարոզել զզօրութիւն մեծութեանն ՅՍ։ Ամենայն ուստս և 'ի խոստմունս ոչ երևեցոյց բնաւ ապաշաւ 'ի վերայ մեղաց իւրոց։ Հուսկ ուրեմն իբրև ետես եթէ չէղև լսելի, և հատաւ այնուհետև ակնկալութիւն ապրելոյ, հրովարտակ գրէր առ իւր համախոհ հեստեալ և ուրացող երբայեցիս. և յանձն առնէր նոցա զորդի իւր զանտիոքոս, յայտ արարեալ եթէ զնա թողու ժառանգ թագաւորութեան իւրոյ. և տայր փիլիպպոսի՝ որ էր մի 'ի սիրելեաց անտի նորա, զթագն և զպատմուճանն արքայական և զմատանին տանել յանտիոք քաղաք որդւոյ իւրում, և թագաւորեցուցանել զնա։ Իսկ ինքն 'ի դժնդակ տանջանս չարախտավատ դառնութիւն մահու՝ փչեաց զհոգին յապառաժուտ յանմարդի լերինս՝ անխնամ և անօգնական, 'ի հարիւրորդի քա-

ռանեբորդի ինեբորդի թուականութիւն յունաց։ Եւ փիլիպպոս առեալ զմարմին նորա տարաւ ուր և տարաւ. իսկ զթագն և զայլ արքունի նշանս երևի թէ տարաւ յերուսաղէմս. զի երկուցեալ յորդւոյ նորա, անդ փախստեայ անկաւ առ ստղոմիոս փիլոմիտոր. ուր գնայ և կրտսերն անտիոքոս առնուլ զթագ արքայութիւն իւրոյ։

Այսմ վայրի կարևոր համարիմք լուծանել զտարակոյսն ծագեալ 'ի պատմառս մահուանն անտիոքոսի երևելոյ. զոր պատմեցաք դիպեալ զնա նասարհայն 'ի դառնալ իւրում յաշխարհէն պարսից։ ՎանգԷ ըստ նշանակելոյ 'ի գիրս. Է. մակ. ա. գրեն հրէայք յերուսաղէմ առ հրէայս՝ որք էին յեգիպտոս, յամի թուականութիւն յունաց հարիւրորդի ութներորդի ութերորդի, նախ գոհանալով մեծապէս զնոյ՝ վասն ապրեցուցանելոյ զնոսա 'ի մեծամեծ վշտաց և 'ի վտանգաց պատերազմին անտիոքոսի, որ անթիւ զօրս հանեալ էր յաշխարհէն պարսից 'ի վերայ սրբոյ քաղաքին երուսաղէմի. և ապա յարեն զկնի զմահ նորին անտիոքոսի։ Իբր զի գոլով նորա 'ի պարսս՝ աչս արձակեաց 'ի բազմահարուստ գանձ անանեայ կամ նեէմեայ տաճարին. զոր առ 'ի ձեռս քեռելոյ, ձևացոյց թէ կամի առնուլ 'ի կնութիւն զնեէմեա չոծուհին. և զգանձ տաճարին 'ի վարձանս նորա, և թէ անդ ունի բնակել ընդ նմա։ Հաւանեցան քահանայք, կամ քուրմք տաճարին 'ի վերին երեսս ընդ առաջարկութիւն նորա. վասն որոյ եմուտ թագաւորն սակաւուք ոմամբք բարեկամաք 'ի տաճար անդր. և փակեցան արտաքին դրունքն ընդ որ եմուտ. իսկ քահանայքն ընդ այլ գաղտնի պատուհանս որ ընդ առաստաղակալաք էին՝ մնեալ 'ի ներքս, հոսեցին 'ի վերուստ քարինս մեծամեծս 'ի վերայ նոցա, և անդէն հարին սատակեցին զանտիոքոս և զընկերս նորա. և յոչեալ զմարմինս նոցա և զկառափունս հատեալ, ընկեցին արտաքս։ Զկնի պատմելոյ զայս, օրհնեն զնոծ, որ եւ 'ի ձեռս զամպարիշտս։

Արդ՝ բազումք յայս կարծիս են, թէ սոյն այս

անտիոքոս էր երևելին. որ հնարիւք ինն կենդանի զերծաւ 'ի տաճարէ անտի. և ապա 'ի դառնալ իւրում 'ի պարսից՝ մեռաւ զնանապարհայն հարեալ յորդանոյ, որպէս 'ի վերոյ պատմեցաք։ Լ.ռ այս առնուն զթարգմանութիւն ինչ, յորս ոչ ասի պարզապէս՝ թէ ապանին զանտիոքոս 'ի տաճարի, այլ թէ Հարին. որ ոչ միշտ սպանանել ցուցանէ։ Ա ասն որոյ ասեն թէ անտիոքոս արդարև հարաւ անդ և վիրաւորեցաւ, այլ գտեալ ծերպ մի ընդ դրունս՝ էլ փախեաւ, և ապրեցաւ. իսկ ընկերքն նորա անդէն մեռան և յօշեցան անդամ անդամ. որպէս դնէ և հելլինակն նախադրութեաց. Է. Խափ։

Լ.յլ այս մեկնութիւն բռնական ինն երևի. քանզի 'որ գիրքն միապէս պատմեն զհարուածիլ և զկործանիլ անտիոքոսի և բարեկամաց նորա. զիարդ ապա յընկերսն նշանակիցէ զմահ, իսկ յանտիոքոս լոկ զվիրաւորիլն. մանաւանդ զի յայլ թարգմանութիւս, որպէս և 'ի մերումս յայտնի ընթեռնումք, թէ * անդէն զառաջնորդն զնդաւն հանդերձ սատակեցին ॥։

Ա ասն որոյ այլք մերժեն զայս կարծիս. զի չունիմք՝ ասեն նշան ինչ, ոչ յանուանէն, զի անտիոքոսք բազումք եղեն՝ հալածիչք և ինսասակարք հրեից. և ոչ 'ի մանկանուանէն՝ որ ոչ յիշի, որպէս և ոչ յայլ տեղեաց 'որ գրոց. զի ոչ յառաջ, և ոչ զկնի գտանի ինչ, յորմէ ցուցցի թէ իցէ երևելին անտիոքոս։ Լ.յլ ընդ հակառակն ցուցանի 'ի 'որ գրոց, թէ նեղեմեանն անտիոքոս քնաւին օտար է յերևելւոյն. նախ՝ 'ի ժամանակէն. զի հրեայք գրեն յամին յունաց հարիւրորդի ութսներորդի ութերորդի մեծապէս գոհանալ զնոյ վասն ազատութեան 'ի հասեալ վտանգէն. և ապա պատմեն զմահ նեղեմեան անտիոքոսի, որպէս նորոգ գիպուած ինչ. և որպէս ազատութիւն 'ի վերջին վտանգէն. ապա ուրեմն ոչ խօսին զերևելւոյն անտիոքոսէ որ երեսուն և ինն ամաւք յառաջ մեռեալ էր. այսինքն 'ի 149. թուականութեան յունաց։ Լ.ուրկրորդ ցուցանի 'ի զօրաց նորա. զի վասն նեղ-

մեան անտիոքոսի ասի. 'ի Ը. մաշ. գլ. ա. 11. * Լա
ինքն եռայոյց (ըստ լատ. 'ի պարսից) զայնոսիկ,
որք եկեալ պատեալ պաշարեալ պահէին զքաղաքն... 'ի ժամանակին երբև դիմեաց ինքնին իշխանն 'ի կողմանս պարսից ։ Իսկ վասն երևելոյն անտիոքոսի, ոչ գտանեմք թէ ածեալ իցէ զօրս 'ի պարսից, այլ յասորւոց, որովք դիմեաց 'ի պարսս։

Լաւ ևս՝ վասն նեէմեան անտիոքոսի գտանեմք՝ թէ մարտ մղեաց ընդ հրէայս. այլ ոչ գտանեմք թէ բռնագատեալ իցէ զնոսա 'ի հեթանոսութիւն. որպէս սրար երևելին անտիոքոս։ Լաւ հուսկ յետոյ գտանեմք 'ի ԺԵ. Ե 'ի ԺՇ. գլուխս ա. մաշ. զԱնտիոքոս սոն, որոյ ոչ յիշատակի յաւելեալ անուն. որպէս և ոչ նեէմեանն անտիոքոսի. 'ի ա. գլ. Ը. մաշ. և զայն գտանեմք 'ի թուականութիւն յունաց 174. և յաջորդաբար ընդ ամն բազում առաքել զօրս 'ի վերայ հրէից։ Սմա կարի 'ի դէպ գայ ժամանակն մօտ առ 188. նմանապէս և պատերազմ. և չունիմք ինչ, որ հակառակիցի մահուան նորա։ Այլ այս անտիոքոս՝ որ և եօթներորդ, համարեսցի սպանեալ 'ի նեէմեան տաճարի, և ոչ երևելին. որով և անհետանան ամենայն տարակոյսք։

ԳԼ. ԺԱ.

Անտիոքոս Ը. անուանեալ Լուսաւոր, որ և Հօրամոյն։
Այլ պարբերաշրջան Յոռոգայի։

Յամին յորում մեռաւ Անտիոքոս Դ. կոչեցեալ երևելի, թագաւորեաց որդի նորա Անտիոքոս Ը. անուանեալ Լուսաւոր, ըստ մեզ Հօրամոյն. և նոյնհետայն կացոյց ոստիկան 'ի վերայ ատորին ասորւոց և փիւնիկեցւոց զլիւսիաս զդաստիարակ իւր 'ի տեղի պաղոմէոսի, որում Էուդէր

անչն ասէին. զի մեռեալ էր նա։ Յ.յս պաղոմէոս էր մի յիշխանաց անտի Եգիպտացւոց կացուցեալ յիւրմէ արքայէ վերակացու կիսլրոսի։ Յ.ա յառնուլ թշնամեաց զկիսլրոս, ամբաստանեցաւ իբր մատնիչ. և զի դժուարին ինն է արդարանալ յայսպիսի ամբաստանութենէ, յորժամ իրողութիւնքն անյաջող ելս ունիցին, նա փոխանակ արդարացուցանելոյ զանձն առաջի թագաւորին իւրոյ, փախուցեալ անկաւ առ անտիոքոս երևելին. առ որում գտեալ ընորհս՝ կարգեցաւ 'ի նմանէ ոստիկան 'ի վերայ կողմանցն ստորին ասորւոց և փիւնիկեցւոց 'ի վարձ ապստամբութեան իւրոյ յօրինեալոր թագաւորէ իւրմէ։ Յորչափ եկաց 'ի նմին իշխանութեան, ամենայն իրաւամբ զնայր ընդ երբայեցիս. ոչինչ թշնամութեան եցոյց առ նոսա, և ոչ երբեք հարստահարեաց կամ նեղեաց զնոսա, որպէս առնէին այլք նախ քան զնա. այլ ջանայր խաղաղութիւն ամենայն իրսն վճարել ընդ նոսա։ Յ.յսպիսի դովանի իրաւագործութեան նորա զրպարտեցաւ առ արքային իբր անօրէն մատնութեան, և ընկերք թշնամիք նորա յերեսս իսկ մատնիչ երկուց թագաւորութեաց կոչէին զնա. իսկ նա ոչ կարելով տանիլ այսպիսի դառն զրպարտութեանց, դեղ մահու էառ անձամբ իւրով և մեռաւ։ Յ.պա որպէս ասացաք, կացուցաւ 'ի տեղի նորա Լիւսիաս։

Օ.այսու ժամանակաւ, մանաւանդ թէ և փոքր մի յառաջ քան զմահ անտիոքոսի, զօրավարք նորա յաճախ յարձակէին պատերազմաւ 'ի վերայ երբայեցւոց. և ուրեք ուրեք յաջողէր նոցա, յորժամ 'ի բացեայ լինէր յուդա. այլ ուր ուրեք հասանէր նա, միշտ հարուածեալ կորագլուխ մնային։ Ընդ այն ժամանակս եհար յուդա զեդոմացիսն՝ որոց առաջնորդքն գորգիաս զօրագլուխ, կոտորեալ 'ի նոցանէ ոչինչ պակաս քան զքսան հազար. ապա աճապարեալ պաշարեաց զայլս, որք փախուցեալ ամրացան յերկուս ամուրս. ընդ որս զնոյն ունէր առնել, զոր ինչ արար ընդ այլս. այլ զօրապետքն կարգեալք 'ի նմանէ 'ի պաշարումն ամրոցացն, կա-

շառս առեալ բաղմագումար դրամոց՝ թոյլ տային բաղմաց յամենոցացն անտի փախստեայ լինել, մինչ յուղղ յայլ գործ գնացեալ էր։ Իբրև աղդ եղև նմա վասն իրացն, դարձաւ վաղվաղակի, և ինքնին սպան զնոսա, որք արծաթոյ վաճառեցին զեղբարսն՝ արձակելով զթշնամիս նոցա. և գրոհ տուեալ յամուրսն՝ կոտորեաց և անդ աւելի քան զքսան հազար։

Յետ այսորիկ էանց պատահիլ պատերազմաւ տիմոթէոսի ամենայն որ միանգամ պարտեցաւ 'ի յուղղէ. այլ միշտ յուսով յաղթութեանն և կանգնելոյ իւր անուն քաջութեան՝ դարձեալ զօրաժողով լինէր կուտէր զօր անթիւ յայլ և այլ ազգաց, և հեղեղաբար դիմեալ գայր 'ի վերայ երբայեցւոց։ Այս մարտ ծանր և անբերելի երևէր մանկաբեայ. բայց ամենազօրն՝ զոր միշտ յօգնուն կոչէր, առաքեաց նմա օգնականս անպարտելիս։ Օ՛ի այն ինչ լինէր նմա ձեռն պատերազմի 'ի գործ արկանել, երևեցան յերկնից հինգ հեծեալք սպառազէնք՝ վառեալք 'ի զէն և 'ի զարդ ոսկի, և անցեալ 'ի գլուխ գնդին մանաբեանց, և 'ի մէջ առեալ զյուդա աստի և անտի, պաշտպանէին նմա 'ի նեռից թշնամեաց. և ինքեանք քան զտեղ քան զտարափ արձակէին զնեռս ընդդէմ թշնամեաց. յորոց յայնմ մարտի անկան քսան հազար և հինգ հարիւր հետևակք, և վեց հարիւր հեծեալք. իսկ տիմոթէոս պրծեալ ընդ ամենոին՝ 'ի փախուստ դարձաւ, և գնացեալ անկաւ 'ի գաղար քաղաք 'ի բերդ անդր, ուր եղբայր նորա քերէաս բերդապահ զօրագլուխ էր։ Յայնժամ հինգ երկնառաք հեծեալքն, որք պատրաստեցին երբայեցւոց զյաղթութիւնն զայն մեծ, անբերելոյթ եղեն. և զօրքն ամենայն 'ի մի բերան սրտառուչ գոհութիւնս մատուցին ՅՍ, որ հաճեցաւ առաքել նոցա յօգնութիւն զհինգ հրեշտակս։ Իսկ մանաբէ էկն զօրօքն հանդերձ և պաշարեաց զբերդն, որ անառիկ ի՛ն համարեալ էր։ Լուրս չորս աշխատ եղեն զնովաւ երբայեցիք. իսկ որք 'ի ներքս անդ էին, յուսաւ

ցեալ յամրութի բերդին, առաւել քանիւք կսկծելի թշնամանաց՝ քան թէ նեռիւք հարկանէին զերբայեցիս։ Յ.յլ 'ի հինգերորդ աւուր արք ընտիրք քան 'ի գնդէ անտի երբայեցւոց ոչ ևս ժուժելով լսել զթշնամանս անուանն ՅՀ, յարձակեցան ի նախանձու բարկութիւն, և ընդ այգն գոտան 'ի վերայ պարսպաց. ապա և այլք զկնի նոցա ելեալք՝ հարին 'ի պարսպապահ զօրաց անտի զբազումս, և իջեալ այրեցին զդրունս, ընդ որ զօրք յուդայի առ հասարակ 'ի նեռքս խուժեցին. սակայն և այնպէս բերդապահ զօրքն ոչ 'ի բաց եդին զՀնս, այլ յետին քաջուիւ մարտ եդին ընդ մակաբեանս, մինչև խսպառ խորտակեցան. միայն տիմոթէոս անարի գոտաւ քան զամենեսին. քանզի մինչ այլք արիաբար մարտնչէին, ինքն խոյս տուեալ թաքեաւ 'ի գբի միջ, ուր գտեալ զնա՝ անդէն փողոտեցին, և ընդ նմա զքերէաս զեղբայր նորա, և զապողոնիոս, որ էր մի 'ի գլխաւոր զօրապետաց։ Յ.յս մրցմունք եղեն 'ի նմին ամի, յորում մեռաւ անտիոքոս, և ըստ մասին յառաջ քան զմահ նորա. որպէս ասացաք 'ի վերոյ. թէպէտ ըստ սովորական կանխաբանութե պատմագրաց՝ մահն անտիոքոսի յառաջագոյն պատմի 'ի յոր գիրս։

Ոչ լիւսիաս լուեալ զայս ամենայն հարուածս, և զգոյժ մահուն անտիոքոսի, լցաւ դառնութիւն. և ըստ որում 'ի վեր անդր յիշատակեցաք, 'ի պարտութի մատնեալ առաջի յուդայի, դարձաւ յանտիոք միւսանգամ՝ զօրաժողով լինել առաւել քան զառաջինն. զոր յայնժամ կազմ և պատրաստ ունելով եկ 'ի վերայ երբայեցւոց, ածեալ ընդ իւր զամենայն հեծելազօրս, և ութսուն հազար հետևակս. և հասեալ պատեաց զամուրս բեթսորայ, 'ի մոի եդեալ 'ի մի ումն կլանել զերուսաղէմ, և զամենայն հրեաստան։ Իբրև ազդ եղև մակաբեանց պաշարումն ամրութեց իւրեանց, առ հասարակ ըստ իւրեանց սովորութե ողբովք և արտասուօք 'ի պաշատանս մատուցեալ առ ՅՀ, խնդրէին հրեշտակ բարի առաքել նոցա առաջնորդ. զոր և ընկալան.

զի այն ինչ լինէր նոցա մերձ 'ի կողմն քաղաքին հասանել, էջ առաջի նոցա Երիտասարդ մի սպիտակաձի յոսկիազէն վառեալ, ձօձէր զնիզակն, և պատրաստէր յարձակել։ Յայնժամ առ հասարակ ամենեքեան խրախոյս քարձեալ՝ օրհնէին զողորմածն Ե՛ծ. և այնպէս քաջալերեալ զօրացեալ առիւծաբար յարձակեցան 'ի վերայ գնդին Թշնամեաց, և անդէն 'ի նմին տեղւոջ հարին տապաստ արկին վեց հարիւր հեծեալ, և մետասան հազար հետեւակս զօրս ընտիրս. բազումք խոցք վիրաւորք փախստեայ լինէին. շատք ևս կամ առ զրաղեցուցանելոյ զթըշնամին յաւար, և կամ առ անարդել և թեթևս փախչելոյ, զզէնս և զՀանդերձս 'ի բաց ընկենուին և մերկանդամ 'ի փախուստ ձեռկին. և ինքն իսկ հազարապետն լուսիաս կորակոր փախուցեալ մազապուրծ լինէր։ Ապա հատեալ լուսիայ յամենայն յուսոյ յաղթելոյ Երբայեցւոց, որք ունելով ինքեանց մարտակից զամենազօրն Ե՛ծ, անյաղթելի ճեպին, լաւ ևս վարկաւ այնուհետև խոնարհիլ և խնդրել հաշտուն։ Յանձն էառ հաձել զմիտս թագաւորին ստորագրել ամենայն պայմանաց, զոր ինչ և պահանջեսցէ յուդա։ և առեալ գրով զիրն դիրս յուդայ զիրաւացիս՝ մատոյց արքայի։

Ընկալաւ յուդա որչափ ինչ կամեցաւ. առաջին գլուխ պայմանագրութեանցն էր այս. կալ ճեալ Երբայեցւոց անվրդով 'ի գործս պաշտամանց կրօնի իւրեանց, և 'ի պահպանութիւն օրինաց։ Զայն հրովարտակ ստորագրեցին և երկու հրեշտակք հոգվմայեցւոց կուինտոս մէմիոս, և տիտոս մանիլիոս, որք գտան յայնժամ յանտիոք առ հօրամին անտիոքոսի։ Ապա դժուարութիւն թուի ընդ առաջ ելանել. իբր զի հրովարտակ հօրամին անտիոքոսի, և հրեշտակացն հռոմվայեցւոց գրեցան 'ի հնդետասան ամսեանն ահեկանի. և նամակ լուսիայ յառաջագոյն առաքեալ գրեցաւ 'ի 24 յորմզդական ոտնին. երկոքին ևս յամին հարիւրորդի քառասներորդի ութերորդի յունաց թուականութեանէ. ուր ահա տեսաք 'ի վեր անդր՝ զի անտիոքոս

երևելին մեռաւ յամին հարիւրորդի քառասներորդի ինեներորդի։ Ա. ռ որոյ լուծումն գիտել պարտ է, զի առ եբրայեցիս երկու սկզբնաւորութիւնք էին տարւոյ. մինն քաղաքական, որ սկսանէր սեպտեմբերի. իսկ երկրորդն եկեղեցական՝ սկսեալ 'ի մարտի. ապա 'ի սկսանել քաղաքական ամին հարիւր քառասուն և ինն՝ 'ի սեպտեմբերի, տակաւին շարունակէր ամն եկեղեցական հարիւր քառասուն և ութ։ Ոչ ասն որոյ եթէ անտիոքոս երևելին մեռեալ ելցէ 'ի հոկտեմբերի 149 ամին. իսկ հրովարտակքն գրեալ ելցեն յապրիլի կամ 'ի մայիսի 148. եկեղեցական ամին, հետևի թէ վեց կամ եօթն ամսովք յետոյ քան զմահն անտիոքոսի գրեցան. որով բարձեալ լինի կարծեցեալ դժուարութիւն։ Որպէս առ մեզ իսկ, յառաջիկայս օր 'ի 15 յունվարի՝ յորում գրեմք զայսոսիկ յամի ՌՃՁ 1806. սկսեալ ըստ քաղաքականին 'ի 1. յունվարի, տակաւին հաշուի ամն աստղաբաշխական 1805. սկսեալ 'ի 21 անցելոյ մարտի, և տևէ մինչև 9 21 առաջիկայ մարտի։ Ա. յսչափ ինչ առ լուծումն խնդրոյս, արդ՝ դարձցուք անդրէն 'ի կարգ պատմութեան։

Իբրև կատարեցաւ դաշնադրութիւնն, լիւսիաս էանց գնաց առ Թագաւորն. իսկ եբրայեցիք յուսալով այնուհետև ունել զնաղաղուն՝ ետուն զանձինս 'ի մշակութիւն երկրի և յայլ առանին գործառնութիւս իւրեանց։ Ա. յլ խաղաղութիւն ոչ յաջողեցաւ. քանզի զօրավարք այլազգեաց, որք մնացեալ էին 'ի շրջակայ տեղիս, ոչ տային դուլ և հանգիստ նոցա։ Տիմոթէոս և ապողոնիոս, և յերոնիմոս, և դիմոփոնդ, և նիկանորը ոսոիկան կիպրոսի բռնադատէին զնոսա յար 'ի ձեռին ունել զզէնս։ Ա. յս տիմոթէոս և ապողոնիոս ոչ են այնք, զորս յաւաղագոյն յիշատակեցաք, այլ՝ այլ երկու համանուն զօրավարք։ Եւ անօրէն նաւավարքն յոպպէացւոց ստիպեցին զյուդա՝ դարձեալ հեղուլ արիւն բաղում. քանզի առեալ էր նոցա 'ի նաւ իւրեանց զբաղումս 'ի հրեից կանամիքն և մանկամիքն ածել 'ի տեղիս իւրեանց. որք ոչինչ կարծիս խարդաւա-

նաց 'ի մեռ ունելով մոին անկասկած. իբր զի դաշն խաղաղութեան միաբան հաւանութիւն հաստատեալ էր. և 'ի նաւահանգիստ անդր չկայր պատճառ ինչ թշնամութեան. իբրև հասուցին զնոսա 'ի խորս, ընկեցին 'ի ծով անդր ոչինչ պակաս քան զերկերիսը. որք առ հասարակ հեղձան 'ի ջուր։

Իբրև լու եղև յուդայի այն անօրէն գործ դաւաճանութեան, խնդրելով զգնութեան գերագոյն երկնից դատաւորին առնել իրաւունս՝ եկն վաղվաղակի գնդաւ իւրով, և յանկարծ հասեալ 'ի վերայ քաղաքին, հրձիգ արար զտունս և զամենայն նաւս որք էին 'ի նաւահանգստի անդ. և կալեալ զանցս փախստեան՝ կոտորէր սրով զորս 'ի հրկիզութենէ զերծեալ փախստեայ լինէին։ Չէ այսպէս եղեւ նական անգթութեան ոմանց՝ էած 'ի վերայ զկործանումն ողջոյն քաղաքին։ Պարձեալ ազգ եղև յուդայի, թէ և 'ի մեծագոյն նաւահանգիստ յամենայնայ զնոյն խորհին գործել 'ի վերայ իւրեանց քաղաքակից երբայեցւոց. եհաս և անդ՝ գիշերայն, և հրկէզ արար զնաւս հանդերձ ամենայն աղխամաղխիւ որչափ ինչ գտան 'ի նաւահանգիստ անդր. այնչափ մեծ էր բոց հրդեհին, զի ձառագայթ նորա երևէր յերուսաղէմ երեսուն մղոնաւ 'ի բացեայ։ Նոսի էանց պատահել տիմոթէոսի. և զձառնապարհային ընդառաջ եղեն նմա արաբացիք հինգ հարիւր հեծեալք և հինգ հազար հետևակք. 'ի գիսի հարաւ նոցա. և իբրև մարտն սաստկանայր, տեսեալ արաբացւոց զանբաւականութիւն իւրեանց առ 'ի զդեմ ունել յուդայեանց, խոնարհեցան ինդրեցին հաշտութիւն. յանձն առ յուդա, ներեաց և արար խաղաղութիւն ընդ նոսա, ընդ պայմանաւ տալոյ ինքեանց արօտս և բուստ անասնոց։

Նոսի խաղաց 'ի դեկկասպին քաղաք ամուր կառուցեալ 'ի ծովակի կամ 'ի լճի, որ կցորդեր ընդ ցամաք 'ի ձեռն կամրջաց և լեզուի հողոյ. որ և ունէր ջրալից խրամ ձգեալ մինչև 'ի նաւահանգիստն յոսպիտացւոց 'ի դիւրութիւն տուրևառիկ վաճառականութեան. յոյր սակս և բնակէին անդ վաճառա-

կանք յամենայն աղգաց. զի կարի ծաղկեալ էր վա-
ճառականութիւն նորա։ Այս քաղաք իբրև անառիկ
ինն համարեալ էր, նորին աղտոտաւ բնակիչք նորա
յամրութիւն քաղաքին յուսացեալ, և 'ի համբարացն
բազմութիւն, բանիւք կսկծելի նախատանաց երգիւ
ծանեին զյուդա և զզօրս նորա։ Իսկ յուդա միա-
բան ընդ զօրս իւր յոգնութիւն զամենազօրն զմեծն
և զՀզօրն երկնից և երկրի կարգացեալ՝ գաղանա-
բար յարձակեցան, հասին ելին ընդ պարիսպս, և
առին զքաղաքն. և այնպիսի սարսափելի կոտորած
գործեցին, մինչև յարենէ սպանելոցն ներկիլ ծո-
վակին՝ որ շուրջ զնովաւ։ Նոքա արշաւեցին 'ի քա-
ղաքս կամ քարաքայ քաղաք, ուր ակն ունէին գտանել
զտիմոթէոս. այլ 'ի մերձենալ յուդայեանց՝ խոյս
էտ նա անտի, թողեալ ստուար գունդ մի զօրաց
'ի տեղւոջ միում ուժգին ամրացեալ։ Այլ դոմսի-
թէոս և սոսիպատրոս հՀզօր զօրավարք 'ի մնակա-
բեանց գնդէ անտի առեալ հատուած մի սակաւա-
թիւ զօրաց՝ իբրև շրջէին նոքաք արտաքս քան զբա-
նակն, դիպեցան տեղւոյն այնմիկ ամրութիւն, պա-
տեցին զտեղին, առին զամուրն. և կոտորեցին անդ
տասն հազար 'ի զօրականաց անտի, որք պահէին
զտեղին։ Իսկ յուդա իւրով գնդաւ՝ որ չէր ինչ
աւելի քան զվեց հազար և ութ հարիւր, ՀՀետ սնդէր տի-
մոթեայ. թէպէտ և գիտակ իսկ էր ունել նմա
երկերիւր հազար հետևակս, և երկու հազար հինգ
հարիւր հեծեալս։ Իբրև ազգ եղև տիմոթեայ ար-
շաւանն մնակաբեանց 'ի վերայ նորա, փոյթ կալաւ
վաղվաղակի յուղարկել զամենայն կահ կարասի և
զկին և զմանուկ զօրացն յամուր անդր կառնաց-
ուց, որ սակս դժուարամուտ անձկութեան կրձիցն
անմատոյց ինն համարեալ էր։ Այլ հասեալ յու-
դայեանց՝ 'ի դիմի հարան գնդին տիմոթեանց, և
հարին կոտորեցին երեսուն հազար 'ի մարտիկ զօ-
րաց անտի տիմոթեայ. այլ բազում այնք էին որք
ահագին ինն երկիւղիւ խռովեալ շփոթեալ զմի-
մեանս խոցոտէին՝ ոչ կարելով ընտրել զընկեր 'ի
թշնամւոյն։

Իսկ տիմոթէոս 'ի փախստեան իւրում յերեսաց յուդայի, դիպէր առաջի գնդին դոսիթեայ և սոսիպատրեայ, որ և 'ի ձեռն եկեալ նոցա, աղաչէր զնոսա՝ թողուլ զնա կենդանի, խոստանալով երդմամբ փոխանակ միոյ գլխոյ իւրոյ՝ զրաղմութիւն երբայեցւոց որք էին առ նոսա գերեալք, ողջս և անարատս արձակել։ Դոսիթէոս և սոսիպատրոս մեծարգի համարելով զիրկութիւն բազմութեան զգակցաց իւրեանց, քան զմահ առն միոյ, արձակեցին զնա։ Իսկ յուդա յառաջ խաղացեալ՝ անկաւ յամուր անդր կառնացւոց. առ որով բաղումք 'ի փախստականէ անտի զօրաց տիմոթեայ էին պատսպարեալ, և անդ կոտորեաց աւելի քան զքսան հազար։ Եւ այնպէս լոկ վեց հազարաւ եհար 'ի միում, կամ առ առաւելն յերկուս աւուրս՝ յիսուն և հինգ հազար մարտիկ զօրս։ Անտի արշաւեցին յեփրոն քաղաք, զոր գտին պնդակազմ ամրացեալ. սակայն և այնպէս վերին օգնականութեամբ զօրացեալ՝ յարձակեցան առին վաղվաղակի զքաղաքն ամրութեամբն հանդերձ և անդ 'ի ներքս հարին տապաստ արկին քսան և հինգ հազար 'ի բնակչաց անտի։

Անտի ասպատակ դնէին 'ի քաղաք մի սկիւթացւոց՝ սկիւթոպոլիս անուանեալ. այս քաղաք բարեբախտ գտաւ սակս մարդասէր կթոյն, զոր բնակիչք նորա ցուցին առ երբայեցիս բնակեալս 'ի նմա. մինչև նոցին իսկ հրելից վկայել առաջի յուդայի՝ երախտեացն, զոր գտին 'ի քաղաքացւոց անտի 'ի ժամանակի նեղութեան իւրեանց։ Ոչ սան որոյ ոչ միայն չնեղեաց զնոսա յուդա, այլև ինքն և զօրք իւր միաբան ընորհս մատուցեալ՝ յորդորեցին զնոսա յայմմ հետէ ևևս առաւելուլ զնոյն գութ մարդասիրութեան առ նոսա։ Եւ ինքեանք փութային հասանել յերուսաղէմ, զի տօն պենտեկոստէից մերձ 'ի վերայ կայր։ Այն իբրև կատարեցին, էառ յուդա հատուած մի երեք հազար հետևակաց, և չորեք հարիւր հեծելոց, և դիմեաց 'ի վերայ գորգեայ՝ որ կողմնապահն էր կողմանցն եդովմ.

մայեցւոց՝ զինեալ երեսուն հազար հետեւակօք, և չորեք հազար հեծելովք։

Յայսմ մարտի արտաքոյ սովորութեան անկան սակաւ ոմանք 'ի գնդէ անտի երբայեցւոց. անդ մեռաւ և այր մի դոսիթէոս անուն հզօր սպառազէն, որոյ յարձակեալ 'ի վերայ գորգեայ՝ այն ինչ ձեռբակալ առնէր զնա կենդանի ածել առաջի մակաբեայ պատարագ, այր մի թրակացի 'ի հեծելազօր գնդէ գորգեայ 'ի վերայ հասեալ, զուսն հարկանէր և բազկաւն հանդերձ 'ի վայր քարշէր. և նա անդ անկանէր. իսկ գորգի մազապուրծ ձողոպրեալ, փախստեայ անկանէր 'ի մակեդա՝ հանդերձ թեւովն զօրաց, որում ինքն առաջնորդէր։ Բայց միւս թեւ զօրաց նորա կռուէր քաջութիւն ընդ եղբի սպարապետի հրէից, որ առ երկարելոյ մարտի պատերազմին վաստակեալ էր յոյժ, մինչև չինեալ զօրութիւն ոչ 'ի նմա և ոչ 'ի զօրս նորա. ահա 'ի նմին ժամանակի գունդն մակաբեանց զամենազօր զամենակալն ածէ յօգնութիւն կարգացեալ հասին 'ի վերայ, և զայս մնան և զօրացն գորգեայ 'ի փախուստ դարձուցին։ Այս ինքեանք խոյս ետուն 'ի քաղաքն մի սոդոմ, կամ ոդոդամ անուն՝ անդ անցուցանել զչաբաթն ըստ իւրեանց օրինաց։

Ի վաղիւ անդր դարձաւ յուդա 'ի Ճակատուն տեղի ամիոփել պատուով զմարմինս անկելոցն 'ի պատերազմի. և գտեալ զդիակունս եղբարցն իւրեանց՝ տեսանէին 'ի ներքոյ հանդերձից նոցա յուռութուլունս և բժժանս կողոպտեալ յամենայն կռոց յամենայ քաղաքի. յորոց իբր 'ի հեթանոսական գարշելեաց ածային օրէնք ամենեւին 'ի բաց մերժէին զերբայեցիս։ Օ այն իբրև տեսին, ամենեքեան առ հասարակ օրհնէին զնա, որ նովին յայտնի պատժով զդաղտնածածուկ մեղս նոցա 'ի յայտնութիւն դարձոյց. և ուսան էթէ մեծագոյն ամրուն 'ի մարտի՝ է խիղճ մտաց մաքուր և ազատ 'ի մեղաց։ Զէր հաւատի, թէ յայն կողոպուտս ամենեքեան իցեն մեղուցեալ մահուչափ. և եթէ իցեն մեղուցեալ՝ չկայր ինչ ստուգութիւն թէ բա-

զումք չիցեն ըստ ժամանակին զղջացեալ. որով և ոչ մարթի էր իսպառ յուսահատ լինել վասն փրկութեան նոցա։ Այսն որոյ ժողովեաց յուդա յինքնակամ որոց զօրապետաց և զօրաց չորս սատերս արծաթոյ. և առաքեաց յԵրուսաղէմ մատուցանել պատարագս վասն այնց մեռելոց։ Որ գիրք երաւամբք գովին զայս գործ բարեպաշտութեան՝ իբրև քաջ հիմնեալ 'ի վերայ հաւատոյ, որ ուսուցանէ զանմահութեան բանական հոգւոց, և զյարութիւն մարմնոց. և զժամանակեան մաքրութի 'ի հանդերձելումն վասն նոցա, որք 'ի շնորհս մեռեալ՝ տանին ընդ ինքեանս զներելի յանցմունս, կամ զմնացուածս պատժոց մեղացն քաւելոց։

ՅԵրեւս զարմանք ինն թուեսցի որոց կշռիցեն զպատերազմունս յուդայի ըստ ընթացից այժմեան պատերազմաց. յորս բազում անգամ բռնակք զօրաց ընուն զդաշտ մի ողջոյն յառաջ քան զմիել 'ի մարտ, և երբեմն առանց իսկ միելոց. և բազում ամիսս ծախեն 'ի պաշարել զբերդ կամ զքաղաք մի, թէ զիարդ յուդա 'ի չորս կամ 'ի հինգ ամիսս զօրեաց այնչափ պատերազմունս մղել։ Այլ զամենայն զարմանս արժան է դարձուցանել 'ի փառաբանութի ամենակարող զօրութե նոյ, և 'ի սէր նորուն ածային գթութե. որ հաճեցաւ յայն սակաւ սիրելիս իւր ցուցանել թէ սրչափ ինչ կարող է մարդ, յորժամ ածէ օգնական լինի նմա իւրով ամենազօր բարկաւ։ Յուդա զառաւելագոյն ժամանակն ծախէր 'ի չուս. զի ոչ առնոյր զկայ յանդիման թշնամւոյն, և ոչ առաջի քաղաքաց. այլ զհասանել և զբաղխել զձակատ թշնամւոյն, և զյարձակիլ 'ի քաղաքն՝ մի առնէր։ Յաղթութիւնք, զոր այլք սովոր են բազում մարտիւ կանգնել, նա զօրացեալ 'ի նոսկ 'ի սակաւ ժամ վճարէր։ Զուսներ պէտս ժամանակաւ լինել 'ի կարգաւորել զառեալ տեղիս. զի սակաւաթիւ գոլով զօրաց նորա՝ ոչ թողոյր պահապանս 'ի քաղաքսն, զորս նուաճէր։ Այլ զի վախճան նորա էր տկարացուցանել, նուազեցուցանել և զարհուրեցուցանել զթշնամիս ժո-

զովզդեան ՝ի, յառնուլ զքաղաք ինչ՝ մասանէր ՝ի սուբ, յաւար և ՝ի հուբ. և վաղվաղակի ՝ի բաց թռ. զոյր. և ՝ի հարկանել զգունդ մի՝ նոյն ժամայն դարձուցանէր զզօրս իւր ՝ի վերայ այլուսմ։

ԳԼ. ԺԱ.

Յուրա խնդրէ առնուլ զիմնաբերդն երուսաղէմ։ Մարտ ընդ անթիոքոսի արքայի։ Մահ եղիազարու առաքեան։ Լ. ն շաբաթանալոյ։

Յետ այսր ամենայնի՝ ինչ մի վշտադնէր զյուդա, զոր կարեւոր էր բառնալ. և այն էր միջնաբերդն երուսաղէմի, որ գոլով ՝ի ձեռս հեթանոսաց, էր ՝ի հսնապազորդ վիշտս և ՝ի տառապանս երուսաղէմացւոց։ Խորհեցաւ պաշարել զնա. վասն որոյ ժողովեալ զամենայն ժողով զօրաց՝ սկսաւ զպաշարումն յաւարտ սեպտեմբերի յամին յունաց հարիւրորդի յիսնեերորդի՝ համեմատութեամբ քաղաքական ամի երբայեցւոց, մինչ տակաւին շարունակէր հարիւր քառասներորդ ինեերորդ ամն եկեղեցական սկսեալ ՝ի մարտի. որով միաբանի առաջին դիրք մակաբայեցւոց, որ սկսանի զամն ըստ քաղաքականին, ընդ երկրորդին որ սկսանի ըստ եկեղեցականին։ Զայս պաշարումն արար յուդա ոչ հապճեպ յարձակմամբ ըստ իւրումն սովորութեան, այլ կանոնաւոր կարգաւ ըստ պատերազմական արուեստի։ Լ. ծ ոչ միշտ կամի առնել սքանչելիս. զի թէ միշտ առնէր, ոչ ևս երևէին սքանչելիք։ Այլ կռիւս եցոյց ՝ուծ զզօրութիւն իւր. իսկ յայսմ եթող զի յուդա ՝ի կիր արկանիցէ զմարդկային զիւր համաձար։

Լ. ն ինչ իրազեկ եղև բերդապահ իշխանն վասն պատրաստութեան պաշարման, նոյնհետայն հրեշ-

տակս արձակեաց ազգ առնել անտիոքոսի. ընդ որս յարեցան բազումք յուրացելոց անտի իսրայէլացւոց՝ ամենեքեան 'ի զրգռել զԹագաւորն 'ի մարտ ընդդէմ յուդայեանց. վասն որոյ արքայն ինքնին պատրաստեցաւ ելանել։ Զգդ եղև յուդայի՝ որ արդէն սկսեալ էր զպաշարումն, եթէ անտիոքոս գայ 'ի վերայ նորա հարիւր տասն հազար վահանաւոր հետևակօք, և հինգ հազար երեք հարիւր հեծելովք և քսան և երկու վառեալ փղօք, և երեք հարիւր գերանդաձևն կառօք։ Լսելի թէ լրտեսք յուդայի բարւոք 'ի միտ առին զթիւ բանակին անտիոքոսի. զի թէպէտ քանք նոցա ոչ ճշգրտեցան ըստ ամենայնի, սակայն չէին ինչ կարի հեռի 'ի ճշմարտութէ. զի բուն թիւ զօրուն, ըստ որում գրի 'ի ՃԿ. Խէ. Ը։ 30. էր հարիւր հազար հետևակաց, քսան հազար հեծելոց, և երեսուն և երկու վառեալ փղաց։ Անտիոքոս յառաջ քան զլուր իւր՝ վճարեաց զիրսն անօրէնն սեղանակապուտ հաւատացդրուժ չքահանայապետին մենեղաւոսի. որ ակնուանելով որսալ ինչ 'ի պղտորութէ անդ՝ յարեցաւ ընդ այլ անօրէնս՝ երթալ վարել զԹագաւորն 'ի մարտ ընդդէմ դաշնադրութէն. ցուցանելով թէ կարևոր է պահել զմիջնաբերդն երուսաղէմի. ուստի և հարկ է վաղ աճապարել. ապա թէ ոչ՝ 'ի զօրանալ ևևս յուդայի, ոչ ևս կարիցէ զառաջս ուղել նորա։ Այսոսիկ ասէր մենեղաւոս՝ իբր ոչ եթէ փոյթ ինչ էր նմա վասն բերդին, կամ վասն Թագաւորին, այլ զի յուսայր այսպիսի մարդելոյզ շոգմոգութէ հասանել իշխանութէ իմիք։ Այց ոճծ որ աստ սպասէր նմա, աստ ըմբռնեաց զնա։ Հարց փորձ արար Թագաւորն յլիւսիաս վասն առնն. իսկ նա որ ոչ ևս կարէր բառնալ զամբարտաւանութէն մենեղաւ՝ յաձախէր զամբաստանութիս հանդերձ յաւելուածովք, զնա դնելով պատճառ ամենայն չարեաց, որ լինին յաշխարհի անդ. թէպէտ շատ էր և լոկ ճշմարտութէն 'ի մահ պարտաւորել զնա։ Որ անդ 'ի տեղւոջն աշտարակ մի յիսուն կանգուն բարձր, առ որով գոյր մոխրակոյտ

բլուր, հրամայեաց Թագաւորն յաշտարակէ անտի հասել զնա 'ի վայր 'ի մոխիր անդր. ուր և հեղձամղձուկ կորեաւ, անարժան գտեալ հողոյ և պատանոց յիւրումն բնակութեան աշխարհին. զի 'ի դէպ իսկ էր նմա, որ բաղում չարիս էր անցուցեալ 'ի սեղան անդր՝ ուր հուրն սրբուէ կայր և ածիւնն, մոխրահեղձոյց մահու զկատարած իւր վախճանել։

Նոյնժամ խաղաց Թագաւորն ընդ ճանապարհ եդովմայ առնուլ զբեթսոր քաղաք ամուր, և հասանել յօդնութիւն պաշարեալ միջնաբերդին երուսաղէմի։ Իբր զայն զգայր յուդա, պատուիրէր ժողովրդեան աւուրս երիս պահօք և արտասուօք կարդալ առ Ած՝ խնդրելով զողորմութիւն նորա։ ՅԻնքն Թողեալ զպաշարումն, զոր սկսեալն էր, և առեալ զամենայն զօրս իւր խաղաց ընդառաջ անտիոքոսի, և եկեալ զտեղի էառ յանդիման բանակի նորա, որ բանակեալ էր 'ի բեթսակարիա։ Իսկ Թագաւորն ապաւինեալ յահեղ զօրութիւն իւր, բնաւ ոչ կարծէր իշխել յուդայի յառաջամատոյց լինել 'ի մարտ. վասն այնորիկ չարար փոյթ քաջ 'ի կարգի դնել զգիշերապահ զօրս. իսկ յուդայ զայն ժամ դիպօղ համարեալ, առ ընդ իւր փոքրիկ խումբ մի ընտիր ընտիր երիտասարդաց քաջ վառելոց, և գիշերայն միեցաւ 'ի բուն բանակ անդր Թագաւորին. կոտորեաց չորս հազար այր 'ի պահապան գնդէ անտի, և դարձաւ անդրէն 'ի տեղի իւր, լցեալ խռովութիւն և արհաւրօք զարքունի բանակն. բայց Թագաւորն ապրեցաւ, խոյս տուեալ 'ի ժամու յայլ գունդ զօրաց իւրոց։ ՅԻ 'ի վաղիւ անդր ընդ արշալոյսն կանխեաց Թագաւորն և կարգեաց զամենայն զօրս իւր և ճակատեցոյց 'ի մարտ պատերազմի, բաժանեալ 'ի գունդս գունդս զսպառազէն հետևակս. և 'ի գլուխ իւրաքանչիւր գնդի մի մի փիղս. և 'ի պահպանութիւն գնդիցն հինգ հազար հեծեալ. և 'ի վերայ փղաց կազմեցին մեքենայիւք վանդակակապ մարտկոցս, եդեալ յիւրաքանչիւր մարտկոց երեսուն և երկու այր պատերազմող. և 'ի վերայ գլխոց փղաց նստուցին

զփղապանս, որք ածէին և կառավարէին զփիղսն. որոց է տուն Ճաշակել զքաղցու 'ի սեաւ խաղողոյ խառնեալ զմեսով և կնդրկաւ առ գրգռելոյ զգաստանական կատաղութիւն նոցա. իսկ զայլ այրուձին կարգեցին յաջ և յահեակ թեւս գնդին. որոց գործ ոչ էր այնչափ պատերազմիլ, քան թէ 'ի կալ գի պահել զբանակն, և զամենեսին համախուռմբ մղել և յառաջ վարել 'ի մարտ։

Լ. պա 'ի ծագել արեգական՝ ընդհարեալ Ճառագայթից 'ի պղնձապատ վահանս, և յոսկեգոյն պատեհազէն զրահ, և անդրէն ցոլացեալ նշուլիցն՝ զերամբք փայլատակէին։ Լ. ինն եհատ և յուգաբերով գնդաւ. և ըստ իւրումն սովորութիւն՝ առանց ժամավաճառ լինելոյ, յարձակեցաւ 'ի դիմի հարաւ գնդի արքային, և անդէն յանդիման արքայի վեց հարիւր հեծեալ սպառազէն դիմեցաւ կացուցանէր։ Լ. նդ և եղբայր նորա եղիազար աւարեան, անմահ յիշատակաց արժանի գործ քաջութիւն գործեաց. թեպէտ վճարմամբ կենաց իւրոց։ Լ. տեաս զփիղ մի 'ի բանակ անդր թշնամեաց բարձրագոյն քան զայլս 'ի զարդ արքունի զարդարեալ, համարեցաւ թէ արքայն 'ի նմին իցէ. յարձակեցաւ 'ի վերայ գնդին. և յաջ և յահեակ կոտորեալ՝ եհատ 'ի փիղն, եմուտ 'ի ներքոյ նորա մեսաց զուրն 'ի փոր նորա, և անդէն սատակեաց զփիղն փղապետաւ հանդերձ. բայց և ինքն մեռաւ, զի փիղն անկեալ 'ի վերայ նորա՝ անդէն Ճմլեաց զնա։ Ա՝եծ էր արդարև ՇՄասն, զի պակասեաց այր այնպիսի. բայց և օգուտ մեծ եղև երբայեցւոց. քանզի 'ի միտս թշնամեաց ստացան նոքա զգերագոյն իմն անուն արիութիւն և պատերազմական հմտութիւն։

Յուդայ ըստ բաւականին 'ի միտ առեալ զչափ զօրութիւն արքայի և բանակի նորա, 'ի դէպ դատեցաւ առ ժամն չմիալ 'ի փորձ մեծագոյն մարտի. քանզի տեսանէր, զի զօրութիւն արքայի մեծ կարծեցեալ՝ փոքր դատանի յարիութիւն մասին զօրաց նորա. վասն որոյ լաւ էս վարկաւ թողուլ զնոսա վաստակիլ 'ի պաշարումն քաղաքի իմիք, և ինքն խոյս

ետ երթալ հարկանել զնոսա առ փոքր փոքր 'ի զա-
նազան հատուածս. և նոքա չիշխեցին զհետ մնդիլ
նմա, զսաստ առեալ արուեստ քաջուեստ նորա և նո-
ցայոցն։ Իսկ անտիոքոս դարձոյց զզօրս իւր 'ի պա-
շարումն բեթսորայ, ուսեալ կանոնաւոր քայլիւ
ուղղել զընթացս։ Պահապանք բեթսորայ արք կո-
րովիք և քաջ պատերազմականք արիաբար պահէին
զքաղաքն. և ստէպ 'ի դուրս յարձակէին միշտ 'ի
մեծաս արքունի զօրուն։ Այսպէս և յուդա ասա-
նդ ասպատակէր սակաւաթիւ գնդաւ, և յո՛ր
կողմն գնայր՝ պատահէր զօրաց անտիոքոսի. յոլս
միշտ գործէր վրէժս ինչ՝ վերաւորելով, և կոտո-
րելով. մինչև ոչ սակաւուց ևս զէնընկէց փախչ-
տեայ լինել. որով զօրք անտիոքոսի օր քան զօր
նուազէին։ Ապա որոյ անտիոքոս գրեթէ հա-
տեալ 'ի յուսոյ տիրելոյ քաղաքին՝ խորհէր 'ի բաց
թողուլ զպաշարումն. այլ այր մի 'ի հրէից անտի՝
հայրենեաց մատնիչ՝ ռոդոկ անուն, դարձոյց զխոր-
հուրդ արքայի։ Որ յայնժամ ամն շաբաթական,
յորում չէր օրէն՝ հրէից գործել զերկիր։ այլ շա-
բաթամբ ինքնեն կոք, այսինքն զոր ինչ երկիրն ինքնին
բերէ առանց մշակութեան. վասն որոյ նուազութեան
էր յոյժ կերակրոյ ընդ ամենայն հրէաստան. իսկ
'ի բեթսոր քաղաքի սպառեալ էին համբարք սակս
երկարելոյ պաշարմանն։ Այլ թէպէտ յուդա փոյթ
ունէր հասուցանել պաշարելոց զկարևոր պարէնս,
բայց և ինքն կրէր զչքաւորութիւն յերուսաղէմ։
Ռոդոկ զդացոյց արքայի զայս յետին կարօտութիւն
քաղաքին. յոյր սակս և նա՝ ևս առաւել պնդեաց
զպաշարումն. որով 'ի նեղ անկեալ ամրականաց՝
ստիպեցան խօսել հաշտուի վայելչական՝ դաշինս
կռելով ընդ անտիոքոսի. զի պահեցին զկեանս, զպա-
տիւ և զազատութիւն, և անվնաս ելեալ 'ի քաղաքէ,
սփռեցան յայլ և այլ տեղիս։ Իսկ ռոդոկ թէպէտ
ընկալաւ զարժանահաս պատիժ իւրոյ մատնութեան,
վնասրեալ 'ի կենաց սրով յուդայի, սակայն քաղաքն
կորեաւ մատնեալ 'ի ձեռս անտիոքոսի։

Կալեալ անտիոքոսի զբեթսոր՝ յառաջ խաղա-

ցոյց զզօրս իւր 'ի պաշարումն նորոյ բերդին, զոր կառոյց յուդայ 'ի լերին սիոնի 'ի պաշտպանութիւն տաճարին։ Լ.այս պաշարումն սաստիկ էր յոյժ. զի կանգնեցին շուրջ զբերդաւն մանգղինս և մեքենայս, և անօթս հրացանս. Թերևս նման այժմեան անկանի հրացեալ գնտակաց, զի արձակէին նովաւ արուեստական հուր 'ի բանակս զօրաց և 'ի վերայ տանեաց քաղաքաց. և բաբանս քարընկէցս, կամ ռըմբաքարս, և նետաձիգ աշտարակս, որ և բաղիստս՝ աղեղնակերպ գործի պատերազմի հաստատեալ 'ի վերայ պատուանդանի. որով դիւրին ինն շարժմամբ արձակէին կարկտաբար զհոյլս նետից 'ի վերայ թշնամեաց։ Լ.ոյնպէս և ամրականքն 'ի նեղբուստ կազմեցին մեքենայս առ մեքենայս. կանգնեցին և անօթս հրացանս, և ռըմբաքարս, և այլ գործիս պատերազմի. և բուռն զօրութիւն մնար եղեալ կռուէին առաջնորդութիւն մակաբէի։ Լ.յլ առաւել քան զմնարան վշտագներ զամրականսն նուազութիւն մթերից, յոյր սակս զոգաբէնս ձիշտ չափով կշռէին իւրաքանչիւրոց. և բազուքն առ նեղութիւն սովուն՝ խոյս տային յամրէ անտի, և ցրուէին յիւրաքանչիւր տեղիս. որով պահակ զօրաց եբայեցւոց նուազեցաւ յոյժ։ Լակայն՝ և զօրք անտիոքոսի չէին լիացեալ կերակրով. զի յեօթներորդ ամի անդ՝ յորում շաբաթացեալ էր երկիրն, ոչ գտանէին և թշնամիք կերակուր յերկրին, թէպէտ և նպարավաճառք օգնէին նոցա. իսկ թագաւորն պնդեալ էր՝ որպէս և է, առնուլ զամրոցն։ Լ.ւ այն ինչ խորհէին ամրականքն անձնատուր լինել առ սպառելոյ համբաւացն խսպառ, հասին հրեշտակք գոյժ ետուն անտիոքոսի, եթէ բովանդակ մակեդոնիա 'ի պատրաստի կայ ապստամբիլ. զի փիլիպպոս՝ զոր երևելին անտիոքոս հայր նորա առաքեալ էր արքունի նշանօք և զօրօքն դարձելովք 'ի պարսից աշխարհէ՝ թագաւորեցուցանել զորդի իւր, նա յինքն առեալ էր զարքայական նշանս, և յինքն յանկուցեալ զամենայն զզօրն. ապա յաւելեալ յեգիպտոսէ յօգնուն զբազումն՝ առեալ

էր և զանտիրք քաղաք, և նկրտէր տիրել համարէն սահմանաց տէրութիւն նորա։

Օ այն իբրև լուաւ լիւսիան, հաւանեցոյց զարքայն և զմեծամեծս զօրացն՝ 'ի բաց թողուլ զպաշարումն երկար և անհաւատի, քանզի տեղին ամուր է ասէ, և զօրքն նեղեալ 'ի նուազելոյ համարաց. այլ փութալ պարտ է ազատել զանտիրք մայրաքաղաք թագաւորութեան. լաւ ևս է հաշտութիւն առնել ընդ տառապեալ ազգին հրէից, և 'ի կարևոր գործ թագաւորութեանն անապարել՝ քան թէ անդ վայրապար ժամանաձառ լինել. ոչինչ մեաս է թագաւորութիւն թոյլ տալ նոցա կալ յիւրաքանչիւր օրէնս իբրև զառաջինն. միշտ բարեբախտութիւն մեծ է իշխանաց 'ի պատերազմի կարող լինել առնել խաղաղութիւն՝ պայմանօք, որք ոչինչ մեասիցեն նոցա։ Հաճոյ թուեցաւ խորհուրդն առաջի թագաւորին և իշխանաց նորա. և նոյն ժամայն դադարեցոյց զմարան. արձակեաց հրեշտակս առ յուդա՝ խօսիլ 'ի խաղաղութիւն. կուրեցին դաշինս, առ սրոյ պահպանութիւն երդուաւ նոցա թագաւորն և իշխանքն. ապա և նոքա ելին յամրէ անտի խաղաղութիւն։ Կամեցաւ թագաւորն տեսանել զտաճարն, որպէս և զհակաբերդն յուդայի. զարմացաւ ընդ վայելչութիւն տաճարին, զոր և մեծարեաց զոհիւք և պատարագօք. այլ ընդ ամրութիւն հակաբերդին ապշեցաւ. վասն որոյ և զղջացաւ ընդ հաւանիլ բառնալ զպաշարումն, և դատարկել զմիւս բերդն զոր պահէին զօրքն արքունի. զի թուէր նմա, թէ հրեայք ընդ իշխանութիւն իւրեանց ունելով զերկու ամրոցսն 'ի սիոն լերին, թեթև աշխատութիւն կարեն միացուցանել զնոսա. և այնպէս ունիցին ապաստան անպարտելի։ Այս մտախոհութիւն ետ նմա սաեալ վաղվաղակի զերդումն ըստ մնսին։ Օ՛ի ոչ դատարկեաց զամրոցն, զոր յառաջնումն պահէին զօրք նորա. և ետ քակել զպարիսպս և զամրութիւնս երկրորդին, զոր պաշարեալ էր, այլ ոչ առեալ։ Սակայն ըստ իրաց ինչ վնարեաց զինսա եղծման դաշնադրու-

թէն, ընդհանրով յուդայի զամենայն տարածութիւն երկրի 'ի պտղոմայիդայ մինչև ցգերբարա. որ ոչ գոյր 'ի դաշին հաշտութեան։ Զ.Յլ քաղաքացիք պտղոմայիսայ բարկացան յոյժ վասն ուխտիցն հաշտութիւն և տալոյ զքաղաք նոցա յուդայի, երկուցեալ թէ նեղեսցէ զնոսա. սակայն լիւսիաս մատուցեալ, և իմաստութիւն եդեալ առաջի նոցա զպատճառն՝ հանդարտեցոյց զնոսա։ Զրբև կատարեցաւ ուխտն խաղաղութիւն, չու արար վաղվաղակի թագաւորն 'ի կողմանս անտիոքայ. և գտեալ զդիլիպպոս տիրեալ քաղաքին, մարտեաւ ընդ նմա և էառ բռնութիւն զքաղաքն։

Զրբև թէ գալուստ անտիոքոսի 'ի բեթսոր և յերուսաղէմ եղև յաշնանային ժամանակի, 'ի վերջին աւուրս սեպտեմբերի յորժամ հասանէ խաղողն. որով մարթացան քաղցու սեաւ խաղողոյ ճաշակեցուցանել փղաց. և յայսմանէ յայտնապէս հետևի, թէ առաջին գիրք մակաբայեցւոց զամն սկսանի յաշնան ըստ քաղաքականին. իսկ երկրորդն սկսանի 'ի գարնան ըստ եկեղեցականին. և լոկ վերցամսեան այլայլութեամբ երկոքին ևս պահեն զնոյն թուականութիւն, որով և 'ի հաշիւ ամաց միաբանին, և բառնան զամենայն դժուարութիւն։

ԳԼ. ԺԲ.

Դեմետր Բագատուր Աշխոյ։ Մամ Աշոտոսոսի և Լիխ-
սիայ։ Աշղիմոս. Ղեմանովը. Հաստս։ Այլ ևս գործ-
Յուրայ մակաբէի։

Յամի հարիւրորդի յիսներորդի առաջնորդի թագաւորութիւն յունաց՝ ըստ քաղաքականին, մինչ չև էր լրացեալ ամն հարիւրորդ յիսներորդ ըստ եկեղեցականին, որպէս և ոչ երեք ամք զկնի մահուն անտիոքոսի երևելւոյ, եկն Եհաս դեմետր սակաւ սրամքը 'ի Ժողովերեայ քաղաք մի յունասատանի։ Այր սա որդի սելևկիոսի չորրորդի՝ եղբօրորդի անտիոքոսի երևելւոյ հօր նախասացեալ անտիոքոսի եւսպատորայ, ուստի և երկոքին՝ որդիք երկուց եղբարց։ Յորժամ մեռաւ հայր սորա սելևկիոս՝ էր ինքն դեմետր մանուկ տուեալ պատանդ 'ի հռովմ. անդ էր 'ի պատանդ և անտիոքոս հօրեղբայր նորա, որոյ գաղտ փախուցեալ անտի, դեղ մահու արբոյց սելևկիոսի եղբօր նորա, և յափշտակեաց զթագաւորութիւն. զոր 'ի նոյն անիրաւ յափշտակութիւնն յաջորդեաց որդի նորա անտիոքոս հօրամայն։ Դեմետր ժուժեաց ընդ ամն ինն, ապա փախուցեալ և նա 'ի հռովմայ, եկն առնուլ զհայրենի թագ արքայութիւն. պատճառք նորա յայանի էին, և իրաւունքն անդիմադարձ. բայց սակաւ զօրեն պատճառք և իրաւունք 'ի թագաւորութիւս, եթէ ոչ պահպանեսցին զինուք։ Իրաւունք դեմետրեայ ոչ սակաւ ձեռնտու եղեն նմա դատանել 'ի ժողովրդեան շնորհս և զօրութիւն. զի 'ի հրատարակիլ գալստեան նորա՝ նոյնժամայն յարեցան 'ի նա բազմութիւն այնչափ, զի յերեքքաղաքեան նաւահանգստի՝ այսինքն 'ի տրապօլիս, կաւ ըօղ եղև 'ի սուղ ժամանակի կազմել գունդս եր-

կուս. մի ընդ ցամաք, և միւս և ս ընդ ծով։ Եւ զաւ զօրքն՝ որք էին ընդ անտիոքոսի և ընդ լիւսիայ, վտարանջեալ 'ի նոցանէ՝ յարեցան յօրինաւոր թագաւոր իւրեանց. և կալեալ կամէին զանտիոքոս և զլիւսիաս կամէին ածել զառաջեաւ դեմետրեայ. բայց նա և տեսանել անդամ զնոսա ոչ կամեցաւ, այլ հրաման եւ սպանանել զնոսա. զոր և կատարեցին վաղվաղակի զօրքն նոցա։ Եւ թագաւորեաց դեմետր առաջին սովին անուամբ յասորիս՝ կոչեցեալ սոտեր, այս է փրկիչ։

Իսկ արք անօրէնք ամպարիշտք յազգացն իսրայէլի, որք խնդրէին հնարս՝ հանել զքէն վրիժու 'ի յուդայէ, վաղվաղակի եկին հասին առ նորա սպակ արքայն. ընդ որս և անօրէնն աղկիմոս. որ վասն ուրացութենն տարագրեալ էր յերուսաղէմայ, և մերկացեալ 'ի քահանայապետութենէ։ Այս մատոյց թագաւորին ընծայ բազմահարուստ, պսակս, և արմաւենիս, և ոստս թաւս համակ ոսկիս, գործեալ 'ի նմանութենէ ոստոց արմաւենեաց և ձիթենեաց. տարաղ գործուածոյ նոցա ցուցանէր՝ թէ գողացեալ էր զնոսա աղկիմոսի 'ի տաճարէ նոր յաւուրս քահանայապետութեան իւրոյ։ Եւ զայն օր լուռ եղև. բայց ժամանակի սպասէր իւրում անմիտութեան օգնական գտանելոյ։ Դէպ եղև 'ի վաղուն անդր 'ի խորհուրդ կոչել զնա դեմետրեայ, և հարցանել վասն հրէից։ Եւ նա զայն ժամ դիպող գտեալ՝ խօսեցաւ և թափեաց ընդդէմ յուդայի զամենայն ամբարեալ ժահր չարայաչաղ մախանաց, նմա տալով զամենայն աւեր երուսաղէմի, որ գործեցաւն 'ի վերջին պատերազմունս. և խնդրեաց առաքել զոք 'ի հաւատարիմ պաշտօնէից իւրոց աշօք տեսանել զիրսն։ Այնուհանդ ամենայն յաւել աղերս առ արքայն, զոր արդէն որսացեալ էր պարգևօք, դարձուցանել նմա զքահանայապետութենն։ Թագաւորն առաքեաց զբաքիդ զսիրելին իւր զիշխան՝ յայն կողմն Եփրատայ, և զյաղկիմոս ընդ նմա, յանձն առնելով նմա զքահանայապետութիւնն։ Իսկ պատուէրն առ բաքիդ էր միայն զնոսա զվի-

ձակ հրէաստանի և առնել արդարութիւն և իրաւունս. բայց նա համախորհուրդ գոլով ընդ աղկիմոսի՝ առ ընդ իւր զօր բազում։ Լ՝այլ առ չտալոյ կարծիս մարտի յուդայի և եղբարց նորա, հրեշտակս արձակեցին առ նոսա խօսիլ 'ի խաղաղութիւն բանիւք նենգութեամբ հաւատի առնելով զնոսա, եթէ բաբիդ և աղկիմոս ածին զզօրս լոկ 'ի պահպանութիւն ինքեանց, և ոչ առնել պատերազմ։ Լ՝այց յուդա քաջ խելամուտ էր, թէ լոկ 'ի պահպանութիւն իշխանի միոյ չէր հարկ այնպիսի գունդս զօրաց հանել։ Վասն այնորիկ ոչինչ թուլացոյց զպատրաստուելն զգուշութիւն։ Իսկ այլք հաւատացին, և նախ ասիտացիք. որք էին ազգ բարեմիտ և հաւատարիմ ուխտապահ. զի սոքա ոչ կարծելով թէ դաւաճանութիւն վարեսցին ընդ նոսա, մանաւանդ աղկիմոս, զի անհնարին ինն թուէր նոցա, թէ այր քահանայ 'ի զաւակէ ահարոնի խաբեսցէ զնոսա, եկին առ նա յայցելութիւն և խընդրել իրաւունս։ Զա զառաջինն խաղաղութիւն խօսեցաւ ընդ նոսա, երդուաւ ոչինչ մեղանչել նոցա, և բարեկամաց նոցա։ Լ՝այլ կարի կարճատև եղև երդումն նորա. զի 'ի նմին իսկ աւուր ետ խողխողել 'ի նոցանէ արս վաթսուն որ էր օգուտ սակաւ այնմ, որ կամէր պատերազմիլ. և հնարք տխմարագոյն այնմ, որ կամէր դաւաճանել։ Վաթսուն մեռեալք ոչ նուազեցուցանէին զզօրութիւն երբայեցւոց. բայց շատ էին բառնալ զպատերազմակ յերեսաց մատնչին, որ կարի շտապելով կոչոյս զառաւել շահաւոր դիպողութիւն։ Լ՝մենեքեան երկեան, այլ ամենեքին ուսան զգուշանալ և կալ 'ի պահպանութիւն։ Լ՝մուտ բաբիդ յերուսաղէմ, և կացոյց զաղկիմոս քահանայապետ. անտի խաղաց 'ի պաշարումն բերաեթայ, կամ բեցեբայ. կալաւ զքաղաքն, և գտեալ անդ 'ի փախստական զօրաց իւրոց՝ ետ փողոտել զնոսա ընդ այլոց բազմաց 'ի ժողովրդենէ անտի. և ընկենուլ 'ի ջրհոր անդր։ Լ՝չ կացուցեալ զաղկիմոս իշխան հրէաստանի, եթող առ նմա ստուար գունդ մի զօրաց յօգնու-

թէ, և ինքն գնաց առ Թադաւորն տալ զհամար ամենայնի զոր արար։

Յովովվեցան առ աղկիմոս և միաբանեցան ընդ նմա ամենայն ուրացողք, չարագործք և խըռովիչք ժողովրդեանն, որք հարստահարէին և անհնարինս նեղէին, և աւերէին զերկիրն առաւելքան զՀեթանոսս։ Իբրև տեսանէր յուդա զչարիսն, կարէր վարկաւ զառաջս ունել զամենարարչութեան։ Կկամաւ ասպատակել շուրջանակի զսահմանսն Հրէաստանի. և ուր և գտանէր յուրացողաց անտի՝ հարկանէր կոտորէր. և այնպէս նուաճեաց զնոսա, զի ոչ ևս իշխէին երևել։ Ալկիմոս տեսեալ, զի այնչափ զօրք ոչ կարէ ժոյժ ունել յուդայի, դարձաւ լի դառնութիւնք յանտիրք առաքայ չարսխոս լինել զյուդայէ, մինդեղամ թէ մինչ կենդանի է նա, անհնար է խաղաղութիւն առնուլ 'ի Հրէաստանի իրացդ արքունի. և աղաչէր զարքայ խնամ ունել մարդասէր կամաք նեղեալ և ամենայացեալ աշխարհին Հրէաստանի։

Դեմեար անկիրթ յընտրութիւն ստութեաց և զրպարտութեաց՝ ջեռաւ սրտմտութիւն, կուչեաց զնիկանովը սպարապետ փղաց, և տուեալ զօրս 'ի ձեռս նորա՝ Հրաման եւ նմա երթալ վաղվաղակի զբռամբ ածել զյուդա, և զգունդ նորա ցիրևցան առնել, և զաղկիմոս կացուցանել մեծ քահանայապետ։ ԼՀ նիկանովը զօրքք բազմաք. յորս եկին խառնեցան և նորա, որք փախստականք էին 'ի Հրէաստանէ յերեսաց յուդայի։ Եկեալ եղէն արքաւիրքք ժողովրդեանն այ 'ի լուր այսպիսի ահեղ արշաւանաց նիկանովայ։ Շ մաւոն՝ որ այլ անգամ մարտ մղեալ էր ընդ նիկանովայ, և ուսեալ չքանդիտել 'ի նմանէ, սակայն և նա այս անգամ սաղՀեալ ընդ այս անակնկալ արշաւանս՝ զահի հաքաւ։ Լայս երկիւղ ժողովրդեան եբրայեցւոց փրկաւետ եղև նոցա. զի ամենեքին առհասարակ դարձան 'ի զեղջ, յարտասուս 'ի պահս և 'ի պաղատանս առ ՇԱ՝ լինել օգնական ձեռնկալու իւրոյմ վիճակի։ Լպաքէն երկեան Հրէայք 'ի նիկա-

նովքայ. այլ նա առաւել գողայր 'ի հրեից. զի այնչափ յաղթութիւնք, այնչափ հարուածք 'ի զօրս արքունի, մինչև նորին իսկ Նիկանովքայ 'ի փախուստ դառնալ յերեսաց նոցա յորժամ մարտ մղէր ընդ նոսա, անհնարինս տագնապէին զսիրտ զգուշաւոր սպարապետին։ Զայն որոյ հաստատեաց 'ի մոի չմիել 'ի մարտ, այլ Ճանապարհաւ դաւաճանուէ 'ի գլուխ տանել զիրսն. վասն այնորիկ առաքեաց երիս հրեշտակս զպիսիդոնիոս, զԹեոդոտոս, և զմատաթիաս առ յուդայ, պատուէր տուեալ ասել նմա, եԹէ Նիկանովքայ ոչ եկն 'ի մարտ, այլ 'ի հաշտութիւն և 'ի խաղաղութիւն. ուստի Թողեալ զզօրս իւր արտաքոյ՝ ինքն սակաւ արամբք մտանէ խաղաղութիւն յերուսաղէմ. և կամի զի հաստատեսցին դաշինք հաշտութիւն ընդ միմեանս. և ինքն պատրաստ է տալ և ընդունիլ ձեռն հաւանութիւն ամենայնի։

Ուրեալ յուդայի զառաջարկութիւն հրեշտակացն՝ եհան զայն 'ի ժողովն երբայեցւոց. յանձն առին զօրագլուխք և զօրք միաբան։ Զայն որոյ սահմանեցաւ օր՝ յորում 'ի մի վայր եկեալ կուսեցին դաշինք, և հաստատեսցին ուխտք։ Զակայն յուդայ ոչ վստահացեալ 'ի խաղաղական բանս թշնամւոյն, կազմ և պատրաստ պահէր զզօրս իւր՝ կարգեալ զնոսա 'ի դիպան տեղւոջ, զի մի գաւ ինչ գործեսցի նմա, կամ իւրոցն։ Զի մարթ ժխտել՝ Թէ Նիկանովքայ զառաջինն նենգութեամբ սկսաւ զայս գործ. որպէս ակներև տեսանի 'ի Մակ. Է. 27. * Զառաքեաց նա առ յուդա և առ եղբարս իւր բանս խաղաղութիւն նենգութիւն. մի եղիցի կռիւ ընդ իս և ընդ քեզ, եկիցս սակաւ արամբք տեսանել զերեսս ձեր խաղաղութիւն ։ Զայց սակայն յետ միանգամ խօսելոյ ընդ յուդայի՝ 'ի քաղցր և 'ի համբոյր կենակցութիւն նորա ըմբռնեալ ոգեխառնեցաւ ընդ նմա. յոյր սակս փոխեաց զմիտս. ընտրեաց լինել հաւատարիմ՝ առաքինի զօրավարի, քան աղկիմոսի ժպիրհ և ուրացեալ քահանայի։ Զմուտ յերուսաղէմ, զրջէր խաղաղութիւն, ոչինչ նեղութիւն ումեք հասուցանելով.

արձակեաց և զբաղումն 'ի զօրաց իւրոց, ցրուեաց զնուռնս խառնաղանձից զօրս կուտեալ էր. ունէր զրդանօք և փափկութիւն զյուդա. և այնպիսի մտադիւր սիրով վարէր ընդ նմա, մինչ թուէր թէ չկարէ կալ առանց նորա։ Հաւանեցոյց զնա կին առնուլ 'ի նմանէ, և թողուլ զաւակս նմանս ինքեան. յանձն էառ և յուդա, հաւանեցաւ՝ էառ կին. և այնուհետև 'ի ձաշս և 'ի խնջոյս յանձնէին առ միմեանս։

Իբրև ետես աղկիմոս զնոցա զայսպիսի ընդ միմեանս ընտանութիւն, և գիտաց զդաշինս՝ որ 'ի մէջ նոցա հաստատեցան, ջաքաւ վաղվաղակի առ Թագաւորն, ամբաստան եղև զնիկանովրայ համառ խորհուրդ լինել ընդ յուդայի թշնամւոյ արքային. և ետ հանել արքայի հրաման սաստիկ առ նիկանովր՝ կապեալ ոտիւք և ձեռօք տալ ածել զյուդա յանտիոք։ Այս հրամանն եղև խոցուած մեծ 'ի սիրտ նիկանովրայ. քանզի խիստ թուէր նմա անպատճառ մատնել զբարեկամ արդար, և լինել մատնիչ բարեկամին՝ առ հաձելոյ զանիրաւ հրամանն արքայի։ Իսկ ազդ առնել նմա զդուշանալ անձին՝ առաւել կասկածաւոր առնէր զանձն իւր յարքունիս, ուր ապաքէն 'ի յայտ գայր ծածուկ խորհրդակցութիւն նորա, եթէ ջտայր տանել անդր զյուդա։ Այսպիսի ծուփս խորհրդոց՝ փոխեցաւ սիրտ նորա, և սկսաւ զառաջին սէրն յատելութիւն յեղաշրջել, զի 'ի պատճառս բարեկամութենն անկեալ կայր 'ի կնճիռս անլուծանելիս։ Այլ ունել և կապել զյուդա չէր թեթև ինչ. ուսեալ էր քաջ զօրավարն՝ արհամարհել զբազմութիւն. արիութիւն նորա և բազուկ՝ շատ էր զդէմ ունել գնդի միոջ. հարկ էր նիկանովրայ զօրս կուտել. հարկ էր դարանս պատրաստել. հարկ էր միայն և անզէն զնա գտանել. և առ զայս ամենայն 'ի գլուխս տանելոյ՝ ժամանակի պէտք էին։ Իսկ նիկանովր ոչ կարէր պատրուակել զօրտին այլափոխութիւն, զոր ակամայ յերեսս երևեցուցանէր. խիստ ինն և ժպիրն գնացք նորա արտաքոյ իւրոյ սովորութեան՝

զարթոյց 'ի յուդա զկասկած ճշմարիտ թշնամութեան. բայց ոչ կամեցաւ ինքն լինել առաջին 'ի քարկել մարտիւ զբարեկամութենն կապ. վասն որոյ առեալ յիւրոց անտի սակաւս՝ խոյս ետ և գնաց յերեսաց նորա, ոչ ևս երևեալ յերուսաղէմ։

Իսկ նիկանովը իբրև ետես՝ եթէ 'ի դերև ելին խորհուրդք նորա, յայտնի արար զոխութիւն սրտին. և կարծելով թէ յուդա 'ի տաճարն իցէ թագուցեալ, գնաց անդր և խնդրէր 'ի քահանայից 'ի ձեռս տալ զնա վաղվաղակի։ Այլ ոչ երդմամբ հաստատէին չգիտել ամենևին՝ թէ ուր իցէ։ Իսկ նա ևս առաւել սրտմտեալ՝ ձգեաց զձեռն 'ի տաճար անդր, և երդուաւ, զի թէ ոչ կապեալ ոտիւք և ձեռօք զյուդա 'ի ձեռս նորա տացեն՝ հիմնայատակ արարից ասէ զտաճարդ այ ձերոյ, և զմնացուածն նորա դից դիոնիսեայ բագոսի նուիրեցից։ Իսկ քահանայքն՝ օրք չունէին զայլ ապաւէն՝ բայց միայն զայն, ձեռս բարձին յերկինս, և լալով կարդային առ նա, որ յամենայն ժամանակի օգնական և պաշտպան լինէր ազգին իւրեանց և տաճարին. և աղաչէին պահել զայն տեղի սրբութիւն իւրոյ, զոր կամեցաւ հաստատել 'ի միջի իւրեանց։

Յայնժամ ամբաստանեցաւ առաջի նիկանովրայ Հռաքս, որ էր այր երևելի, մի 'ի խորհրդականաց անտի ծերակուտին հրէից, զոր վասն հայրենասէր մարդասէր խնամոտ մտացն՝ հայր կոչէին երբայեցւոց, որ և հոգւով և մարմնով տուեալ էր զանձն 'ի պաշտպանութիւն ածադիր օրինաց և ազգին իւրոյ։ Իսկ նիկանովը՝ առանց այլ ինչ պատճառի, լոկ վասն յայտ յանդիմանութիւն զթշնամութիւն յայտնելոյ ընդդէմ հրէից, արձակեաց վաղվաղակի հինգ հարիւր զօրականս յապարանս նորա՝ ունել զնա։ Այս զառաջինն 'ի ներքուստ անտի մարտնչէր ամենայն զօրութիւն, այլ տեսեալ զի հուր մատուցանէին՝ զդրունսն հրձիգ առնել. և այնուհետև ոչ ևս կարելով պաշտպանել անձին՝ ընտրեաց ազատօրէն մեռանիլ, քան 'ի ձեռս թշնամեացն այ անկանիլ. վասն որոյ մխեաց զսուսերը

իւր յորմվայն ընդ պորտով. այլ առ շտապ տագ-
նապի ոչ քաջ կշռելով զտեղին, ոչ մեռաւ իսկ և
իսկ. ուստի և այնպէս վիրաւորեալ 'ի վերս վա-
զեաց ընդ աստիճանս, եկաց առ պատուհանի
միջոց, և անտի ընկեաց զանձն 'ի վայր, զի ինքնա-
կամ մահուամբ իւրով դէթ ահարկցէ նոցա, կամ
զոմանս 'ի թշնամեացն անտի ոչ ընդ իւրև ձգիցէ
սպանցէ. այլ 'ի տեսանել նոցա զանկումն նորա՝
փարատեցան 'ի տեղւոջէն. և նա անկաւ 'ի գե-
տին, այլ ոչ մեռաւ, և ոչ իսկ շփոթեցաւ. յոտն
կացեալ և վանեալ յայս կոյս յայն կոյս զամբոխն՝
եւ կանգնեցաւ 'ի վերայ վիմի միոջ յանդիման բաղ-
մութեն, խոնարհեցաւ էառ 'ի գերկս իւր զաղիսն.
եցոյց 'ի վերս յերկինս. (ըստ այլ թարգմանութեան,
ընկեաց 'ի վերայ ամբոխին,) և կարդաց զոր կե-
նաց և հոգւոց, զսոյն հաստատումն հաստատանել
նմա, իմա՛ ինքեան, զոր կորուսանէր՝ պատերազ-
մելով վասն անուան նորա։ Այլ նա զայս օրինակ լի
հաւատով յարութեան, և կատարեալ յուսով իւրոյ
փրկութեան՝ քաջութիւն փոխեցաւ յաշխարհէ։ Այլ
խնդիր մեծ է վասն անձնասպանութեան սորա, որ
ոչ երբէք է օրինաւոր։

Սակն օգուտինոս 'ի հերքել զմոլորութիւն աղան-
դաւորաց, որք հիմնեալ յայս գործ հաւքսի՝ ուսու-
ցանէին լինել գործ օրինաւոր և գովելի անձամբ
զանձն սպանանել, ստգտանէ զայս գործ հաւքսի.
և յիրաւի. զի անձնասպանութիւն բռնաբարի իրա-
ւունքն ոչ, որ զիշխանութիւն կենաց և մահու
ինքեան պահեաց. օրինաւոր դատաւորաց ևէթ
ներհելով զայն ի մասին. այսինքն 'ի վերայ չարա-
գործաց, որք արժանի մահապարտուն ոճիրս գոր-
ծեն։ Սակայն հասարակաց կարծիք է, թէ հաւքս
գործեաց կամ մանաւոր աղդեցութիւն ոչ. և կամ՝
անյաղթելի տգիտութիւն և բարեմտութիւն. և զայս
հաստատեն՝ հիմնեալ յածապաշար և 'ի բարեկրոն
վարս նորա, և 'ի վախճան նորա՝ առ խորհելոյ ոչ
'ի ձեռաց թշնամեաց, այլ առ չանկանելոյ 'ի ձեռս
մեղաւորաց հալածչաց հաւատոյ, որք 'ի բիւր վը-

տանգս մեղաց արկանէին զնա. և և՝ի հրաշական գոգցես ոյժ նորա. որով յետ անկանելոյ՝ի պատուհանէն, յետ պատառելոյ որովայնի և թափելոյ աղեաց, տակաւին այնչափ զօրեր, մինչև ինքնին վանել զամբոխն, և բանալ իւր ճանապարհ ելանելոյ՝ի վերայ վիմին, և անդ խօսել, և զաղիս իւր քաջութիւն՝ի բաց կորզել և ընկենուլ յերեսս թշնամեաց. զի երևի թէ բնապէս չէր հնար նմա զայս առնել առանց առանձին ձեռնկալութեան։ Իսկ եթէ սիրեաց զփառս անձին, յայտ է թէ առաւելապէս սիրեաց զփառս։ և՝ի մանուն եցոյց զկատարեալ հաւատ յարութեան և զյոյս առ։

Այնչ այս իրք գործէին յերուսաղէմ, յուդա ձգեաց յինքն զերիս հազար քաջազօր պատերազմական, և նոքօք բանակեցաւ՝ի կողմանս փարսաղայ՝ ոչ և և՝ի ծածուկ, այլ յայտնի։ Այն իրքև գիտաց նիկանովր, ժողովեաց զամենայն զզօրս իւր, և առանց սպասելոյ մեծի գնդին՝ զոր՝ի ձեռն սուրհանդակաց կոչեալ էր յասորւոց, խաղաց պատահել նմա պատերազմաւ անդ՝ի փարսաղա. ուր և՝ի դիմի հարան երկոքին գունդք. և անկան՝ի զօրաց նիկանովրայ արք հինգ հարիւրք (ըստ լատ. հինգ հազարք). իսկ մնացեալքն հանդերձ նիկանովրաւ փախստեայք անկան յերուսաղէմ՝ի լեառն սիոն։ Զահանայք երկուցեալ՝ թէ նիկանովր զվրէժ դառնութիւն իւրոյ թափեսցէ՝ի վերայ տաճարին, մեծահարկի պատուասիրութիւն ընդառաջ եղէն նմա, և ցուցանէին զողջակէզս պատարագաց, զոր մատուցանէին հանապազ վասն կենաց թագաւորին։ Զայլ դազանամիտն հպարտաւցեալ յետ պարտութեան իւրոյ՝ առաւել քան այլք զկնի յաղթութեան, եմուտ՝ի տաճարն, որով և պղծեաց զնոր տեղին. և որ սնարգուէր մարդկան, անարգեաց և զնոյն, այսն առնելով և ծիծաղելով զպատարագաւ և զզոհիւք. և դարձեալ երդուաւ՝ի ցասմամբ առ քահանայս, զի թէ ոչ տացեն՝ի ձեռս նորա զյուդայ՝ ոչ և միայնակ, ըստ որում

յառաջագոյն պահանջէր, այլ գնդաւն իւրով, 'ի հուր դատեսցէ զտաճարն. և էանց գնաց սրտմտութիւն և մեծաւ բարկութիւն՝ պատասխանեալ անդամ ոչ մնալով։

Յայնժամ քահանայքն 'ի տաճարին յանդիմանն սեղանոյն, և յուդա 'ի բանակի իւրում մեծապաղաղ աղերսանօք կարդային առ ամենակալ ամենազօրն՝ հայցելով զգնութիւն նորա ընդդէմ հեթանոսաց, որք հայհոյէին զանուն նոր նորա։ 'Ի նմին ժամանակի հասին զօրքն ասորեստանեայք. և նիկանովր զօրօքն՝ որք մնացեալ էին նմա, էլ յերուսաղէմ, և գնաց միանալ ընդ նոսա 'ի բեթսորոն։ 'Այսպէս և յուդա, որ իւրովք երիւք հազարօք բանակեալ էր յադասա՝ մեկնեցաւ անտի։ Իբրև ազդ եղև նիկանովրայ, թէ յուդայ է 'ի կողմանս սամարիոյ յամուր վայրի, հաստատեաց յաւուր շաբաթու դիմել 'ի վերայ նորա. իսկ հրէայքն որք էին ընդ նմա յուրացելոց անտի թէպէտ ուխտադրուժք, սակայն տակաւին 'ի յարգի ունէին զայն օր, վասն որոյ աղաչէին զնա տալ զպատիւ աւուրն, որ պատուեցաւ 'ի պատիւ հանգստեան ամենակալ ՝ծին. և յասէլ անօրինին, և գոյ՞ ՝ծ ամենակալ յերկինս, ասէն, այո՛ գոյ ՝որ ամենազօր կենդանի, որ հրամայեաց փափուկ ունել զեօթներորդ օր շաբաթուց։ Ի՞սկ ժանտաժուռն անազգակ հայհոյութիւն. ես և ես եմ հզօր երկրիս, որ հրամանն տամ մարտի, և գործել զգործ արքունի։ Ա՝արտն մղեցաւ. այլ գործն արքունի՝ ո՛չ ըստ որում ակն ունէր անօրէնն յաջողեցաւ։ Օ՞օրքն յուդայի լի էին յուսով առ ՝ծ, յորում և առաւել քաջալերեալ զօրացան 'ի ձեռն երազոյ միոյ, զոր պատմեաց նոցա յուդա։ Ո՝ւանզի տեսանէր յերազի զնիա ՝որ քահանայապետն, որ մեռեալ էր, զի աղօթս առնէր վասն ժողովրդեան իւրոյ. և ապա դարձեալ տեսանէր զայլ ոմն մեծաշուք զգեցեալ. և լուաւ՝ զի ասէր ոնիա. Այա՛ է երեմիա մնրգարէ եղբայրասէր, որ անսպառկաս և յաՀախ աղօթս մատուցանէ ՝ոյ վասն ժողովրդեան և վասն սրբոյ քաղաքի. և թուէր նմա թէ

երեմիայ տայը 'ի ձեռս նորա սուսերը մի ոսկեհանդերձ, ասելով. առ զսուսերդ զայդ որ պարգև 'ի ինէ. գովաւ յաղթեսցես թշնամեաց ժողովրդեան իսրայելի։ Լ.յս երազ թուի տեսիլ յայտնեալ 'ի ձեռն որ հրեշտակի. որ այնչափ քաջալերեալ արիացոյց զզօրսն յուգայի, մինչև այնուհետև լինել նոցա իբրև առիւծունս հրաշունչս ընդ հուր և ընդ սուր միջամուխ լինել։

Հասին ճակատքն երկոքեան 'ի միմեանս, և ընդ միմեանս բաղխեցան յաւուր երեքտասաներորդի՝ երկոտասաներորդ ամենեանն ադարայ, և 'ի մարտի անդ անկաւ նախ ինքն նիկանովը 'ի սուր սուսերի. 'ի մեռանել նորա շփոթեալ խառնակեցաւ բոլորը գունդ նորա. և զօրքն հետ զհետէ ծանուցեալ զմահ նորա՝ զէնընկէց լինէին և 'ի փախուստ դառնային, և սոքա զհետ պնդէին նոցա հարկանելով և կոտորելով յագասայ մինչև 'ի գազերա ընդ օր մի ողջոյն. և մեռան 'ի զօրաց անտի նիկանովրայ երեսուն և հինգ հազար։ Յուդա 'ի պնդել զհետ փախստէից՝ ետ հարկանել փողս նշանակաց, զոր եբրայեցիք քաջ իմանային, որ և էր նշան՝ ամենեցուն զէն առնուլ և պնդել զհետ փախստական թշնամւոյն, փակել զճանապարհ առաջի նորա, և առնուլ զկիրճս ընդ որ խնդրէին ճողոպրիլ։ Ի հասանել այնր ձայնի 'ի քաղաքս և յաւանս, պատասխանէին և նոքա նմին ձայնիւ. որով և 'ի սուղ ժամու երևելի մնան հրէատանի հասանէր վառեալ 'ի զէն. զի և նոքա՝ որք առ վատասրտութեամբ չիշխէին 'ի մարտս մտանել և հարկանել զթշնամին, 'ի ձայն այնր նշանակաց փողոյ արիք և քաջք երևէին 'ի սպանանել և 'ի կողոպտել և ետ զպարտեալ և զանզէն թշնամին։ Լ.յն չափ բազմութիւն ընթացան 'ի ձայն այնր փողոյ, և այնպէս քաջ կալան զամենայն անցս և զկիրճս փախստէիցն, զի յանհամար բազմութիւն անտի զօրացն նիկանովրայ ոչ մնաց կենդանի և ոչ մի։ Յուդա ետ հատանել զգլուխն նիկանովրայ և զաջ բազուկն թիկամբն հանդերձ, և տանել յերուսա-

ղէմ. իսկ զՀայրոյին լեզուն եւ հանել և մանր մանր կոտորել և արկանել գէշագէշ 'ի կերակուր թռչնոց. զբաղուկն հրամայեաց կախել յանդիմանս տաճարին, իսկ զգլուխն հարեալ 'ի նիզակ կանգնել 'ի գլուխ սիոն լերին յայտ յանդիմանս քաղաքին։ Այս այսպէս ամենեքին հաստատեցան յայս կարևոր ճշմարտութիւն, թէ ՝ծ օգնէ խոնարհոց, և խոնարհեցուցանէ զամբարտաւանս։ Այսու օրինակաւ զգործս վճարեալ՝ մեծաւ խնդութեամբ և ուրախութիւն 'ի ձայն բարձր գոչման միաբան առհասարակ գոհացան զնոյ. տօն ցնծութեան կատարեցին. և զայն օր կարգեցին 'ի տօնս տարեկանաց ամի ամի կատարել 'ի յիշատակ մեծի բարեբարութեան նոցն։ Այս այնուհետեւ երուսաղէմ առ ժամանակ մի եկաց մնաց 'ի խաղաղութիւն։ Պատմութիւն, զոր հրէայք յերուսաղէմ առաքեցին առ հրէայս որք յեգիպտոս, ըստ աւանդելոյ երկրորդ գրոցն մակաբայեցւոց, ասա վախճան առնուն. յոր մեք յարեսցուք զմնացեալսն, որք աւանդին յառաջին գիրսն մակաբայեցւոց։

ԳԻՐ ԺԳ.

Դանդարուն ընդ Հռովմայեցիս։ Մահ Յուդայ մակաբէի, և Յովհաննու եղբօր նորա։ Մահ աղքիմոսի։

Զոհելոյ ամենայն պատերազմունք մակաբեանն յուդայի յաղթութիւնք էին, սակայն տեսանէր զի յայնչափ թշնամեաց միջի չէր հնար երբեք ժողովրդեան իւրոյ վայելել յանդորր խաղաղութեան։ Վասն որոյ կամեցեալ խնամ ունել հասարակաց բարւոյ՝ կարևոր դատեցաւ դաշնակցիլ բարեկամութիւն ընդ ծերակուտի հռովմայեցւոց, և խնդրել զնոցայն պաշտպանութիւն։ Մեծամեծս և փառա-

ւորս լուեալ էր վասն արդարակորով իրաւասիրութեան, գթութեան և սնսպարտելի կարողութեան նոցա. և թէպէտ ոչ ամենայն զոր լուեալ էր՝ հաւաստի էին, սակայն զոյր 'ի նոսա Ճշմարտութեան բաւական 'ի յարգի առնել զնոսա, և տալ այլոց դիմել ընդ հոլանեաւ պաշտպանութեան նոցա։ Ապա այսորիկ առաքեաց 'ի Հռովմ երկու հրեշտակս արս ընտիրս զեպողեմոս և զյասոնն, որք վճարեցին զիրսն. կատարեցաւ դաշնադրութիւն յերկուց կողմանց լինել միմեանց 'ի թիկունս. զոր զրեցին յերկու տախտակս պղնձիս, զմին առաքեցին յերուսաղէմ, իսկ զերկրորդն առ իւրեանս թողին՝ առ 'ի յիշատակ ընդ միմեանս խաղաղութեան։ Այնգամայն եւուն ծերակուտին հանել հրաման առ դեմետր արքայ՝ հանել զզօրս իւր 'ի հրէաստանէ. ապա թէ ոչ՝ ինքեանք հարկին ելանել 'ի վերայ նորա մարտիւ պատերազմի ընդ ծով և ընդ ցամաք։

Յուդա խորհեր բարի առնել, սակայն երևի թէ ոչ՝ հաճեցաւ ընդ այն դաշնադրութիւն՝ իբր 'ի մարդ ապաւինելով. զի ահա ընդ ելանել երկուց հրեշտակացն 'ի Ճանապարհ՝ իրք մակաբեանց կերպարանափոխ եղեն. և ոչ՝ ոչ այնպէս յայտնի երևեցոյց զզնութիւն իւր 'ի նպաստ հրէից։ Այն զի մինչդեռ հրեշտակք նոցա 'ի Ճանապարհի էին, դեմետր առաքեաց 'ի հրէաստան գունդ մի զօրաց քսան հազար հետևակաց, և երկու հազար հեծելոց ընդ ձեռամբ բաքիդայ և ադկիմոսի. որք գնացին ընդ Ճանապարհ գաղգաղայ. առին զմեսաղեմ, և սատակեցին անձինս բազումս։ Յուդա չունէր պատճառս ահաբեկ լինելոյ, գոլով վարժեալ յեւս մեծամեծ և ահարկու գնդից վերայ յաղթական հանդիսանալ. բայց այսչափ վտանգք միմեանց զկնի հասեալք՝ մինչև չկարել բնաւ ունել գէթ սուգ ինչ հանգիստ, հուսկ ուրեմն վաստակաբեկ առնէն և զբաջազօր դիւցազունս, և արիութիւն բնասէս փոխի 'ի ձանձրոյթ և 'ի տաղտկութիւն։ Յերից հազարաց ընտիր քաջամարտիկ զօրաց իւրոց երկու հազարք և երկերիւրք վտարանջեցին 'ի նմանէ՝

լոկ 'ի ձանձրութիւն և յերկիւղէ. և ինքն միայ ութ հարիւրիւ միայն։ Այրևի թէ յայսմ իրողութիւն կա-մեցաւ ասել տալ 'ի յուդա օրինակ իւրոց ծառայից մի կարի ինն ապաւինիլ 'ի քաջութիւնս և 'ի յաջո-ղութիւնս անցեալս. և թէ պատժէ 'ի ոչս զթեթև յանցմունս՝ զլանալով զմանաւոր և զյայտնի ձեռն-տուութիւնս։ Դիմէն յուդայի 'ի բարեկամութիւն հռովմայեցւոց, թուի նուազութիւն ինն այնր քա-ջայոյս ապաւինութիւն, զոր ունէր ցայն վայր միայն 'ի կարողութիւն ոչ։ Մայլ ետ ասել զի յայս կորովի նահատակ բնութիւնն արասցէ զընթացս իւր. վասն որոյ 'ի տեսանել զսնդակազմ բանակ թշնամւոյն, և զվտարանջել իւրոց զօրաց, ոչ միայն զահի հա-բաւ լուծաւ լքաւ, այլև խռովեցաւ պղտորեցաւ, մինչև չլինել մտադիր խորհրդոց իւրոց զօրավարաց. որք միաբան խորհուրդ տային չմիել 'ի մտրտ, այլ խոյս տալով առ ժամն՝ 'ի դերև հանել զպատրաս-տութիւն թշնամւոյն. և որպէս ժամանակ անդրէն ժողովելոյ զեղբարս իւրեանց։ Օրք բաբիդայ (ասէին) ոչ միան միշտ միախուռն միացեալ. յոր-ժամ սկսանիցին բաժանիլ, յայնժամ մասն մասն 'ի վերայ հասանել և հարկանել զնոսա և տկարացու-ցանել. և այսպէս ստանալով ժամանակ՝ լինի ստա-նալ և զյաղթութիւնն։ Այս խորհուրդ քաջադէպ երևի. այլ յուդա ոչ անսաց. զի չէր սովոր առիւծն քաջ թիկունս դարձուցանել թշնամւոյ. այլ գուցէ առաւել գովելի լինէր՝ եթէ անսացեալ էր հասա-բակաց խորհրդոյ իւրոց մտրտակցաց. զի և նոքա երկիւղած էին և խոհեմամիտ խորհրդական։ Այ-և ևս երևի թէ չիոթութիւնն մտաց ետ նմա մնալ նալ մասամբ իւիք զպաղատանս, որով յամենայն վտանգս սովոր էր ջերմ սրտիւ կարդալ առ ՆԱ-ծ խնդրելով զօգնութիւն նորա. զի յայնպիսի երկիւղ և 'ի տագնապ սրտի գոլով՝ ոչ գտանեմք թէ ըստ սովորութիւնն կարդացեալ իցէ առ ՆԱծ։

Այլ այս ամենայն՝ որք գուցէ եղեն իբրև զբիծս, որք երբեմն նշմարին նաև յարեգակն, ոչ ստուերացուցին զլուսափայլ ՆԱծպաշտութիւն նորա

և զքաջութիւն ևս և 'ի մահու անդ իւրում։
Ա՝ինչև էր միեալ 'ի մարս, մեծաձայն վկայեաց
շարժիլ 'ի սիրոյ, և 'ի նոյն խրախուսէր և զան-
կեալս իւր. եցոյց զանձն պատրաստ 'ի մեռանել
վասն եղբարց իւրոց, զոր և նուիրեաց 'ի կամս նոյ,
'ի նորայն ուծայնին ձեռս ապաստան արարեալ
զկեանս իւր և զմահ։ Լսմուտ 'ի մարտ անդրդուե-
լի արիութիւն. մարտեաւ քաջութիւն յայդուն մինչև
ցերեկոյ. ետես զի աջ թև թշնամւոյն, ուր էր և
բաքիդ՝ հղօրագոյն է, յարձակեցաւ 'ի վերայ,
եհար և ցրուեաց և 'ի փախուստ դարձոյց, և ինքն
զհետ եմուտ՝ միշտ հարկանելով մինչև ցաղուտս։
Ա՝յլ այն ինչ համարէր յաղթանակեալ, երևեցաւ
'ի թիկանց նորա ձախոյ թևն թշնամւոյն պնդեալ
զկնի նորա. դարձոյց զերեսս, մարտեաւ անխոնջ
և ընդ սմա. յայնմ վայրի վիրաւորք յերկուց կող-
մանց անկանէին. այլ հուսկ յետոյ անկաւ և ինքն
սքանչելի նահատակն. և ինացեալքն յիւրոց անտի
'ի փախուստ դարձան։ Լսակ յոլովաթան և շմաւն
եղբարք նորա երկոքին դարձան և բարձին զմար-
մին նորա, և տարեալ թաղեցին 'ի շերիմս հարց
իւրեանց 'ի մամրիմ. և որդիքն իսրայէլի լացին
և կոծեցան կոծ մեծ 'ի վերայ նորա, և սուգ
առին աւուրս բազումս։

Ա՝հա զայս օրինակ կնքեաց զբազմարդիւն կեանս
իւր յուդայն մակաբէ՝ հղօր փրկիչն իսրայէլի.
զորմէ թէպէտ բազումս և մեծամեծս պատմեն՝ որ
գիրքք, բայց զոգ ընդ նմին վկայեն՝ թէ ոչ զբա-
վանդակն գրեցին, այլ թողին զայլ ևս յաձախու-
թիւն գեղեցիկ առաքինութեանց նորա, և քաջութեաց
և մարտից պատերազմի, զի բազում էին կարի
յոյժ։ Լյանանձն ուծպաշտութիւն, սէր նորա առ
ընկերսն, հաւատ և կենդանի յոյս նորա առ ուծ,
զուգակցեալ ընդ արիութիւն, ընդ անդրդուելի
քաջասրտութիւն, և ընդ զինուորական մարզութիւն,
տայ տեսանել թէ մարթ է լինել քաջ սպարա-
պետ, ընդ նմին և մեծ ոգ։ Օ՝ի պատերազմական
առաքինութիւնք-չեն խափան առաքինութեանց ուծ-

պաշտուԹԵ։ ՅաջողուԹիւն, որով այնչափ յաղԹուԹիւն արար՝ որչափ և պատերազմունս՝ այս անյաղԹ սպարապետ, իրաւամբք ունի 'ի Թիւ յաղԹուԹեց դասել նաև զվէրջին պատերազմ, յորում մեռաւ. զի մինչև 'ի կէտ մահուն իւրոյ յաղԹող եղև. և եԹող ուսումն կարեւոր ամենայն պատերազմական սրբուԹիւ վարուց առնել բարեկամ զնած, և ստանալ զօգնականուԹիւն նորա 'ի յաջողումն և 'ի յաղԹուԹիւն մարտի։ Մեռաւ յուդա յամի ԹագաւորուԹեն յունաց հարիւրորդի լիսնեորդի երկրորդի, այն ամ է արարչուԹիւն աշխարհի՝ ըստ կաղենոսի 3941։

Երբև մեռաւ յուդա, որ յահ և յերկիւղ էր ամենեցուն, համարձակուԹիւն առին անօրէնք գործել զամենայն չարիս, և զհրեաստան ընել աղմկաւ. յուզէին խնդրէին զբարեկամս յուդայի, և ածէին առ բաբիդ՝ յայսմ կատականաց, և 'ի խոշտանգանս, զբազումս ևս 'ի մահ։ Իսկ բարեկամք յուդայի ածաւ պաշտք և նախանձաւորք օրինաց ժողովեցան առ յոփնաԹան եղբայր նորա, և աղաչեցին զնա լինել ինքեանց գլուխ և առաջնորդ մարտի։ Յանձն էառ. բայց գոլով նորա յայնժամ յանապատն Թակովեայ մեկուսացեալ զօղեալ առանց պատերազմական զինուց, խնդրեր զէնս և այլ կահս պատերազմի, զի կարօղ լիցի 'ի հանդէս մարտի ելանել։ Ոչ ասն այսորիկ առաքեաց զյովհաննէս զեղբայր իւր սակաւաԹիւ արամբք խնդրել 'ի նաբատացւոց յիւրոց մուերիմ բարեկամաց։ Եւ նորա քանզի ուներին՝ ետուն զէնս, գրաստս և զամենայն կահս պատերազմի, զոր խնդրէին։ Ոչ մինչդեռ յովհաննէս սակաւ ընկերօք ածէր զայն ամենայն առ յոփնաԹան, ահա ելին որդիք ամբրեայ 'ի գամասայ կամ 'ի մագաբայ, ըմբռնեցին զյովհաննէս, և առին գնացին հանդերձ ամենայն կահիւն. և զկնի սակաւուց սպանին զնա։ Երևի ԹԷ այս երկու զոհիւք յուդայի և յովհաննու հաշտեցաւ ած, և ներեաց նուաղուԹեն յուսոյն՝ որ ցուցաւ 'ի գիժել 'ի դաշնակցուԹի օտարաց։

Յոշխաթան կալաւ զթր և զարիական շաւիղ յուղայի. վասն որոյ և իրք իւր յաջողեցան, ցոր. չափ յաճ և եթ հաստատեալ ունէր զյոյս իւր. այլ կասեցաւ յաջողութիւն, մինչ խորհէր առաւէ. լուլ զայն՝ հաստատելով զդաշնագրութիւնն յա. ռաջագոյն արարեալ ընդ հռովմայեցիս. որպէս տեսցի 'ի կարգիս։

ԳԼ. ԺԴ.

Յոշխաթան սպարապետ և չահանայապետ։ Բ. ղէչհանդրոս նախարար անդրիոչեան։ Դէմեդրբ արքայ առաջին։

Առաջին մարտ յոշխաթանու նոր սպարապետս եղև ընդդէմ որդւոյն ամբրեայ, որք ըմբռնելով և սպանանելով զյովհաննէս զեղբայր նորա՝ ետուն պատճառս այնմ մարտի։ Ունէր յոշխաթան անդ առ նոսա լրտեսս, որք ազդ արարին նմա, եթէ մեծահանդէս հարսանիս արարին որդիք ամբրեայ, զդուստր միոյ ուրումն 'ի մեծամեծ աւագաց քանանացւոց հարսնացուցանելով. և թէ փեսայն և հարսն հանդերձ փեսաւիրօք և բազմամբոխ պսհապանօք, կաւօք և մեծամեծ հանդերձանօք գան և անցանեն ընդ այս ինչ և ընդ այն ձանապարհ։ Օ՝որ իբրև ծանեաւ յոշխաթան, վաղվաղակի դարանամուտ եղև գնդաւ իւրով. և 'ի հասանել մեծի չուրն՝ ելին 'ի դարանէ անտի, յարձակեցան 'ի վերայ, հարին սպանին զփեսայն և զհարսն, ընդ նոսին և զբազումս 'ի պահապանաց անտի, և զբազումս խոցս և վիրաւորս արձակեցին, և զայլս փախստեայ արարին. և առին յաւարի զկահ զկարասի, զզէնս և զկառս և զամենայն հանդերձս և ձոխութիս. և դարձան 'ի մարգս կամ 'ի ձահիձս գործեալ 'ի ջուրց յորդանան գետոյ՝ անդ ամրա.

նալ. որպէս զի 'ի յառնել 'ի վերայ նոցա բաբի-
դայ բազմութիւն զօրայ՝ չգտանիցէ մուտ առ նոսա,
բայց միայն ընդ անձուկ կիրճ մի, ընդ որ անհնար
էր բազմութիւն միանգամայն անցանել. և այնպէս
ընդունայն առնել զբազմութիւն նոցա։ Լաբիդ հաս-
տատեալ էր 'ի մոի յաղթել լոկ ընտրութեամբ, յորում գուցէ խղճէին հրէայք մարտ մղել վասն
աւուրն սրբութեան. վասն որոյ յարեաւ 'ի վերայ նո-
ցա 'ի շաբաթու։ Լոկ յոմնաթան զինեալ զանձն
և զիւրսն ջերմ պաղատանօք առ ՅԱԾ, ինքն քան
զայլս յառաջ նահատակեցաւ յարձակեալ ուղիղ
'ի վերայ բաբիդայ. ձգեաց զսուրն բուռն զօրու-
թիւն հարկանել զնա. որ թէ չէր յետ կոյս խուսա-
փեալ, անդէն ընդ մէջ հատանէր զնա։ Յայնժամ
տեսեալ բաբիդայ, զի խրայեւցիք ոչինչ խղճէն
և 'ի շաբաթու պաշտպանել զկեանս իւրեանց,
դարձոյց զսանձ երիվարին, և հանդերձ իւրովքն
փախուցեալ էանց յայնկոյս յորդանանու։ Լու յով-
նաթան զհետ մտեալ նորա՝ էանց ընդ լեղ զյոր-
դանան, զինի նորա հոսեցան և իւրքն, որք հասին
հարին 'ի վերջապահ զօրաց անտի բաբիդայ հա-
զար մի. բայց բաբիդ ապրեցաւ փախստեամբ։

Տեսեալ բաբիդայ, զի և զինի մահուն յու-
դայի գոյր մեծ զօրութիւն առ եբրայեցիս, ոչ ևս
կամեցաւ փորձ փորձել յայտնի պատերազմաւ 'ի
դաշտի։ Այլ դարձաւ յերուսաղէմ, ամրացոյց
զբաղաքս և ամրոցս, բազմացոյց 'ի նոսա
պահապանս առ 'ի նկուն և նուաճեալ պահել
զեբրայեցիս. և առ ապահովելոյ զտեղութիւնն
յապստամբութեաց և 'ի խռովութեաց՝ էառ 'ի պա-
տանդս զբազումս յորդւոց իշխանաց երկրին. և եդ
զնոսա 'ի պահեստ յամրոցն երուսաղէմի։ Այս ե-
զև յամին հարիւրորդի յինսերորդի երրորդի թա-
գաւորութեան յունաց։ Լու 'ի վերջն այսր ամի աղ-
կինս որ բռնութեամբ ունէր զքահանայապետութիւնն,
ձեռն էարկ 'ի գործ ամբարշտութեան, զոր չարաբա-
տամատ մահն վճարեաց. հրամայեաց քակել ըզ-
պարիսպս սրահից նեղբին սրբութեանն. զգործ յոր

այնչափ վաստակեցան եղբաս, զաբարիա, և անդէ նոքա մարգարէք։ Լ.ՍԼ այն ինչ սկսան քակել, հաբաւ անօրէնն 'ի ձեռն. և խափանեցան գործք նոքա. քակեցան երախիք նոքա և պապանձեցաւ. և ոչ կարէր խօսել և հրամայն տալ վասն տան իւրոյ. դողայր յոտից մինչև ցգլուխն, և վարանէր անհընարին տանջանօք։ Լ.Ա նա զայս օրինակ չարաչար վՀարեաց զկեանս, ոչինչ նշան դարձի և ապաշխարութեան տուեալ։

Լսկ բաքիդ՝ որ ակամայ կամաք կայր 'ի հրէաստան, զոր դեմետր արքայ 'ի ՀՆորհս ազկիմոսի պատհեր անդ, իբրև ետես զչարաչար կատարած ազկիմոսի, վաղվաղակի դարձաւ անդրէն յանտիոք առ արքայ. և եկայ ՄՆայ երկիրն հրէաստանի 'ի խաղաղութեան ամն երկուս։ Լ.այս խաղաղութեն ունէր արդեօք երկարիլ և ԷՍ, եթէ յուրացողաց անտի հրէից արք չարայոյզք չէին ձգեալ նոր փոթորիկս յերկրի իւրեանց։ Օ ինուորքն կային խաղաղութեան 'ի պահպանութեան իւրեանց։ Յոմնաթան ոչ ձեռնարկէր 'ի նոր կռիւ առ 'ի չտալ պատճառս պատերազմի. զի ինքն և իւրքն համարէին նստելն հանդարտեալ, առանց բնաւ նեղութեան ինչ հասուցանելոյ ոմեք։ Լայց արք չարաբերք սովորաբար խնդրեն պղտորել զերան. զի 'ի պղտոր ջուրս առաւել յաջողի որս նոցա։ Լարծէին թէ յոմնաթան հանդարտեալ նստիցի յանհոգս, և չզգուշանայցէ անձին և իւրոցն, իբր զի ոչ գոյր յայնժամ ուսուցեալ ձայն պատերազմի։ Համարեցան գիւրին իմն ըմբռնել զնա և զնորայսն՝ յեղակարծ ժամու 'ի վերայ հասանելով։ Վ ասն որոյ գնացեալ յանտիոք՝ ստիպէին զաբիդ ձեռն 'ի գործ արկանել, վստահացուցեալ զնա՝ լինել գործ գիւրին և հաճառօտ, որ 'ի միում գիշերի ունի վՀարիլ։ Լսկ բաքիդ ցանկայր ունել 'ի ձեռին զյոմնաթան, բայց ոչ կամէր 'ի փորձ ընդ նմա մտանել. երկնչէր 'ի նմանէ՝ զինեալ և անզէն, ընկերակցեալ և անընկեր, յորժամ յուշ լինէր նմա բուռն ամբարձումն ձեռաց յոմնաթանու. յորմէ բախտովին խուսափեալ

սպրեցաւ. վասն որոյ 'ի գիւտս համարէր զկենսիւր։ Կամէր ոտիւք և ձեռօք շղթայակապ գտանել զյոմիսաթան՝ առ չզօրելոյ դիմամարտիլ նմա։ Այն սակս գրեաց գաղտ հրովարտակս առ զօրապետս իւր և առ խորհրդակիցս՝ որք էին 'ի հրէաստան, հնարիւք ըմբռնել զնա. զի ինքն նոր զօրս պատրաստէ հասուցանել 'ի հրէաստան։ Բայց նանրայան խորհուրդք նոցա։ Յոմիսաթան արթուն էր միշտ և զգոյշ. ունէր և ինքն գաղտ խորհրդ ակիցս, որք զամենայն արուեստակութիւն թշնամւոյս ազդառնէին նմա։ Կալաւ զյիսուն զօրապետս 'ի գլխաւորաց անտի երկրին՝ խորհրդակիցս բաքիդայ, որք ձեռնարկին փորձ փորձել ունել զինքն, և անդէն ետ խողխողել զնոսա. և ինքն իւրովքն հանդերձ խոյս ետ 'ի բեթբեսի յանապատն. խրամակարկատ արար զնա, և ամրացոյց յամենայն կողմանց։

Յհաս բաքիդ գնդաւ իւրով, առեալ և 'ի պահպանութիւն քաղաքաց հրէաստանի զօրս բազումս. կոչեաց և յամենայն հրէաստանէ զուրացողս հրէից կուսակիցս արքայի, դիմեաց 'ի բեթբեսեն. եդ զնովաւ պաշարումն սաստիկ։ Գիտէր յոմիսաթան, զի չիք տեղի ամուր, որ հուսկ ուրեմն ոչ ստիպեցի անձնատուր լինել՝ յորժամ չունիցի ուստեք օգնութիւն. և բեթբեսեն ոչ երբէք օգնեսցէ նմա, եթէ ինքն մնասցէ անդէն փակեալ։ Վասն որոյ յանձն արարեալ շմաւոնի եղբօր իւրում զտեղին, եթող անդ համբարս կերակրոց, զինուց և այլ կահից, և գունդ մի զօրաց, որչափ բաւական էին 'ի պահպանութիւն ամրոցին. և ինքն ելեալ ժողովեաց առ ի և անտի զհրէայս հաւատարիմ օրինապահս։ Եթող՝ զի բաքիդ և զօրք նորա վաստակաբեկ լիցին 'ի տաժանմունս պաշարման, որ երկարեաց աւուրս բազումս, և ինքն գաղտագնաց արշաւանօք յարձակեցաւ 'ի բանակն ոդստերայ և փասիրնայ երկուց սպարապետաց, և եհար կոտորեաց զզօրս նոցա 'ի բանակեալ անդ նոցա։ Յաւ 'ի նմին ժամուն՝ յորում բաքիդեանք պատաղեալ էին 'ի մրցմունս ընդ յոմիսաթանու, ելին շմաւոն և գունդ իւր ընդ

նմա յամրոցէ անտի, հրձիգ արարին զմեքենայս, քանդեցին զպատնէշս, և կոտորեցին զպահապանսն զորս գտին անդ։ Իսաքիդ այրէր տապէր 'ի սրտմտութիւնէ, զի խաբեցաւ միով յայն ձեռնարկ իբր 'ի գործ դիւրին 'ի գլուխս տանելոյ յաջողութիւնէ. և ա հա տեսանէր, զի կորոյս զզօրս իւր գրեթէ բովանդակ, ընդ նմին և զանուն։ Այլ ոչ կարելով թափել 'ի յոշնաթան զթոյն դառնութեան իւրոյ, թափեաց 'ի նոսա՝ որք խրատ ետուն նմա և հանին զնա յանտիոքայ արշաւել 'ի հրէաստան։ Այսպէս ըզբազումս 'ի նոցանէ, և խորհեցաւ դառնալ յերկիր իւր, ուստի եկեալն էր։

Իրրև գիտաց յոշնաթան զխորհուրդ նորա, առաքեաց առ նա հրեշտակս՝ բանս խաղաղութեան խօսել ընդ նմա, և դնել ուխտ ընդ միմեանս։ Յոշնաթան խոստանայր թոյլ տալ նմա առնել զչու դարձի իւրոյ խաղաղութիւնէ և ըստ իւրոց հաճոյից՝ ոչ հետամուտ լինելով նմա պատերազմաւ. բայց և ինքն պահանջէր 'ի բաբիդայ, 'ի բաց դնել զթշնամութիւն, և դարձուցանել նմա զգերին զամենայն զոր գերեալ էր 'ի հրէաստանէ. և ուխտել զի մի ևս խախտեսցէ զդաշն հաշտութեան։ Իսաքիդ 'ի ներսն գոլով և ահաբեկ 'ի յոշնաթանէ, յանձն էառ յօժարութիւնէ զամենայն. դարձոյց զգերին, և ինքն մնացեալ զօրօքն դարձաւ խաղաղութիւնէ յաշխարհ իւր. և ոչ ևս յաւել կոխել 'ի հրէաստան. և այսպէս խաղաղացաւ հրէաստան։ Իսկ յոշնաթան նստաւ 'ի մնքմնս. սատակեաց զանօրէնս յիսրայէլէ՝ որք ապստամբեալ էին յօրինաց նոն. և դատէր զժողովուրդն արդարութեամբ մինչև ցամն հարիւրորդ վաթսներորդ թագաւորութիւն յունաց ընդ սմն եօթն, յորս եկաց հրէաստան 'ի խաղաղութիւնէ։

'Ի նմին ամի յարեաւ մարտ քաղաքական յասորիս։ Կայր կենդանի որդի մի անտիոքոսի երևելւոյ կոչեցեալ Ալեքսանդրոս. որ և եղև առաջին թագաւոր ասորւոց սովին անուամբ։ Խաղումք ասեն, թէ չէր սա իսկութիւնէ յարենէ անտիոքոսի, այլ խաբեբայ ոմն. որ սակս նմանութեանէ ինչ երեսաց հրա-

կեաց զանձնէ լինել հարազատ որդի նորա։ Ա.յս կարծիք Թէպէտ բազմաց է. սակայն ամենեցուն աղբիւր է մի միայն յովսեպոս Եբրայեցի։ Որ գիրք յայանի կոչէն զնա Ա.ղէքսանդրոս անտիոքեան Եպիփան. այսինքն որդի անտիոքոսի երևելւոյ. որպէս ընթեռնուն լատինք. վասն որոյ վկայութիւն յովսեպոսի չէ բառական՝ տալ մեզ խոտորիլ'ի դիւրիմաց տեսութէ բանի նոր գրոց։ Ա.ղդ՝ սա եկաց առ ժամանակ մի անյայտ, մեալով դիպող ժամանակի զբառմբ ածելոյ զիւր զՀայրենի տերութէն։ Ա.պա իբրև ետես՝ զի դեմետր հօրեղբօրորդի իւր տկարացաւ և իբր անուանարկ գտաւ յաչս ժողովրդեան սակս հանապազորդ հարուածոց զօրաց իւրոց'ի մանաքեանց, եկ յերևան, և որսացեալ իւր թիկունն՝ գաղտնի հնարիւք յինքն յանկոյզ զսիրտ պատրոմկացւոց. որք և ընկալան զնա թագաւոր իւրեանց։

Օ այն լուեալ դեմետրեայ՝ վազվազակի զօրաժողով եղև, և կազմեալ գունդ մեծ, կամեցեալ զառաջս ունել նորա՝ մինչև իցէ զօրացեալ. ոչ կարծէր բազում աշխատութէ պէտս ունել'ի նուաճել զնա. ընդ այն և ետէ խիթայր, թէ գուցէ 'ի կողմն իւր ձգեսցէ զյոմնաթան, որ զկնի եղբօր իւրոյ յուդայի ելից արհաւրօք զարքունիս անտիոքայ. և յուշ ածեալ զանցեալ պատերազմունս՝ ունէր իրաւունս երկնչելոյ դիւրաւ միտել յոմնաթանու 'ի կողմն աղէքսանդրոսի՝ 'ի հանել զվրէժ անցեալ ՀԻասուց իւրոց։ Ա այն որոյ ածանպարեաց ուիստ խաղաղութէ դնել ընդ նմա. առաքեաց առ նա հրեշտակս հանդերձ հրովարտակաւ. որով տայր նմա ընդարձակ իշխանութէն ժողովել զօրս, պատրաստել զէնս, լինել 'ի թիւ բարեկամաց արքայի. միանգամայն և հրամայէր տալ 'ի ձեռս նորա զպատանդս. զորս որպէս տեսաք 'ի վերոյ, բաքիդ եդ արգելական յամրոցն երուսաղէմի ընդ պահպանութէ արքունի զօրաց։ Այն յոմնաթան 'ի մաքմնասայ յերուսաղէմ. և ժողովեալ զծերակոյտ հրէից, և զզօրագլուխս դեմետրեայ կարգեալս 'ի պահպա-

նութեան ամրոցին, ընթերցաւ 'ի լուր նոցա ամենեցուն զարքունի հրովարտակն։ Արկեան յոյժ 'ի լսել զմեծ իշխանութիւն տուեալ յոմխանանու զօրաժողով լինելոյ. վասն որոյ վաղվաղակի եւտուն 'ի ձեռս նորա զպատանդսն, և նա նոցն հետայն յանձն առաբար զնոսա յիւրաքանչիւր ընտանիս իւրեանց. և ինքն սկսաւ շինել և ամրացուցանել զքաղաքն։ Իսկ զօրք դեմետրեայ, զորս բաքիդ կացուցեալ էր 'ի պահպանութեան զսնազան ամրոցաց հրէաստանի, զկնդկեց փախստեայ գնային. միայն յամրոցն երուսաղէմի և բեթսորայ մնացին. իբր զի մեծ մասն պահապանաց նոցա էր 'ի հրէից ուրացեալց չարագործաց թշնամեաց յոմխանանու։

Այս գործառնութեան տարապայման իմն քաղաքական տնտեսութիւն վարելով դեմետրեայ՝ վրիպեցաւ յանկալութեէ իւրմէ։ Նարէր որսալ զոմխանան, չնորհելով նմա զնախագրեալ իշխանութիւն՝ ոչ իբր պայմանս պարտաւորիչս, այլ իբրև պարգևս լոկ 'ի սիրոյ բարեյօժարութեէ սրտին որ առնա. վասն այնորիկ ինչ ոչ խօսի սակս գաշնագրութեէ և միաբանութեէ ընդդէմ աղէքսանդրոսի. ոչ դնէ ուխտ ընդ նմա, և ոչ դաշինս կռէ. պահելով առնել զայն յետոյ, յորժամ գլխովին յինքն յանկուսցէ զսիրտ նորա։ Ի հնարագործութիւնս ոչ ոք այնպէս դիւրաթափիր է, որպէս այն որ համարի հեշտեաւ խաբել. մեծ նշան է սակաւ հանձարոյ և խորագիտութեէ կարծել զայլս միամիտս և դիւրապատիրս։ Զոմխանան ունէր քաղցր ապացոյցս 'ի միտ առնուլ, եթէ դեմետր ոչ կարէ անկեղծութեէ սիրել զնա. և թէ այն գգուանք և առատաձեռնութիւք՝ շահասիրութեէ և երկիւղի էին ծնունդ, և ոչ մտերմութեէ և բարեյօժարութեէ առ նա։ Այլ որպէս և է, յոմխանան առաւել խորագէտ գտաւ քան զդեմետր. զի վաղվաղակի 'ի գործ եդ զշնորհս նորա. բայց առանց կորուսանելոյ զազատութիւն իւր, և առանց ձգելոյ յանձն զպարտաւորութիւն ինչ։

Մինչդեռ և աղէքսանդր լաւ ևս խորհեցաւ.

զի աեղեկացեալ զքաջութիւն յոփնաթանու և եղ-
բարց նորա՝ վաղվաղակի յղեաց առ նա հրովար-
տակս 'ի ձեռն հրեշտակաց. և յայտ արարեալ զմե-
ծարգոյ վարկումն, զոր ունի զնմանէ, արար զնա
իւր բարեկամ և դաշնադիր. և հաստատեաց զնա
գլուխ քահանայապետութիւն հրելից. խոստանալով
զի թէ կամեսցի ունել և զանուն թագաւորի. և
զայն շնորհել նմա. և արդէն իբր թագաւոր ճա-
նաչելով զնա, յապացոյց իւրումն անկեղծութեան
յղեաց նմա 'ի պարգև զնշանակս արքունի. այս-
ինքն պսակ ոսկի, և պատմուճան ծիրանի։ Լնկա-
լաւ յոփնաթան զդաշնադրութիւն. և 'ի նշան երախ-
տագիտութիւն իւրոյ՝ 'ի հանդիսաւոր տօնին տարե-
կանաց տաղաւարահարաց զգեցաւ զայն մեծաշուք
պատմուճան, այլ առ արտին ցածութեան՝ ոչ եդ
զպսակն 'ի գլուխն. թող զի շատ էր նմա խոյրն
քահանայապետութեան։ Լ.այս եղև յամին հարիւ-
բորդի վաթսներորդի յամսեանն եօթներորդի. և
յոփնաթան վաղվաղակի ժողովեաց զզօրս իւր, և
ետ կազմել զամենայն ազգս կահուց և կարասեաց
պատերազմի. և ուրախ լինէին ամենեքեան։

Լ.այս դաշնադրութիւն եղև մինչարեր հարուածՈ
'ի սիրտ դեմետրեայ. այրեր և տապիր, իբր ոչ
ածապարեաց ինքն 'ի նոյն։ Զ ասն որոյ կամեցեալ
քակել զյոփնաթան 'ի միաբանութիւն անտի ազգքա-
սանդրի՝ ձեւացաւ չգիտել զդաշնադրութիւն նոցա
ընդ միմեանս, զի մի ամաչեսցէ յոփնաթան առաջի
ազգքասանդրի՝ եթէ կամիցի քակել 'ի նմանէ։ Զ.րե-
առ նա հրովարտակ իբր առ դաշնակից իւր և բա-
րեկամ՝ մեծամեծ ազատութիւնս շնորհելով ազգի
նորա. արձակէ զնոսա յամենայն արքունի հարկաց,
մինչև թողուլ նոցա և զբաժ ազիցն և պսակաց,
և զկէս պտղոց այգեաց և ծառոց՝ որ գայր նմա։
Խոստանայ թեթևացուցանել զմնաբսս և զկապալս.
և դարձուցանել զամենայն գերիս՝ զորս յանցեալ
պատերազմունս գերեցին։ Զ.ի վերոմիել երբեք
զպաշտամունս կրօնի նոցա. այլ մնասուցանդ տալ
յարքունի գանձուց 'ի սլէտս զոհելոց և պատարա-

դաց տաճարին որպէս և 'ի ծախս ամրացուցանելոյ զպարիսպս. և պարտաւորէ զանձն պահել հաստատութիւն ընդ արքունի զօրս իւր քսան և վեց հազար զօրականս հանապազորդ թոշակաւորս 'ի հրէից, որք ընդ առաջինս և ընդ մեծամեծս հանսրեսցին։ Տայ զառաջին ազատուին տաճարին, զի որք միանդամ ապաստան եղիցին 'ի նմա վասն յանցանաց և կամ վասն պարտուց և սև արքունեաց, մի ոք բնաւ իշխեսցէ նեղել զնոսա և այլ բազումս և մեծամեծս խոստանայ ընորհս։ Սակայն ոչինչ շահի. քանզի ոչ հաւատացին նմա հրէայք. ուստի և ոչ յանձն առին, գիտելով զի ոչ ուղիղ սրտիւ խոստանայր։

Նկաց մեաց յոմնաթան իւրովքն հանդերձ հաւատարիմ ընդ աղեքսանդրու. օրոց զօրացեալ սոքօք և այլովք՝ որք յարեցան 'ի նա, եկ ընդդէմ դեմետրեայ. ընդդէմ հարան բաղխեցան երկոքին ճակատք ընդ միմեանս բազում քաջութիւն. այլ գունդն դեմետրեայ ակարացեալ 'ի փախուստ դարձաւ. և ապա անդրէն դարձ արարեալ 'ի դիմի հարան միմեանց սաստկութեամբ՝ մինչև 'ի մուտս արևու։ Յայնմ մարտի անկաւ դեմետր. և աղեքսանդր յաղթական գտեալ եմուտ 'ի ժառանգութիւն թագաւորութեան հօր իւրոյ։ Որ ապահովացուցեալ զանձն և զթագաւորութիւն իւր հաւատարիմ դաշնադրութիւն հրէից, զնոսն առնել կամեցաւ ընդ եգիպտոսի, զի և անտի անկասկած լիցի. վասն որոյ խնդրեաց 'ի կնութիւն զկղեոպատրա զդուստր պտղոմեայ եգիպտացւոց արքայի։ Հաճեցաւ պտղոմէոս, և հաստատեցին զիրսն երկու թագաւորք ընդ միմեանս՝ յամի թագաւորութեան յունաց հարիւրորդի վեցանասներորդի երկրորդի։ Աբարին զհարսանիս 'ի քաղաքն պտղոմէացւոց, ուր ածաւ հարսն 'ի հօրէ իւրմէ. կոչեցաւ և յոմնաթան մեծարել զարքայական հարսանիս. որոյ եկեալ յանդիման եղև թագաւորացն երկոցունց մեծամեծ պարգևօք, և եգիպտ ընորհս 'ի նոցանէ։ Յայնժամ հասին անդր յերուսաղեմէ արք անօրէնք չարախնդիրք՝ ամբաստան լի-

նել զյոթանթանայ առաջի աղեքսանդրի։ Լ.յլ նա վաղվաղակի կարձեաց զապարասանութիւն նոցա, զգեցուցեալ յոթնանթանու արքունի ծիրանիս, և նստուցեալ զնա 'ի հանդիսի՝ իւր հաւասար. և ապա արքունի հրովարտակաւ հրամայեաց, զի մի՛ ոք բնաւ իշխեսցէ ամբաստան լինել զնմանէ, կամ նեղել զնա բանիւ միով։ Լ.ւ յոթնանթան արքայապանծ փառօք՝ մեծաւ ուրախութիւն գարձաւ յերուսաղէմ. և մինչև ցամն յունական հարիւր վեթասուն և հինգ՝ եկաց 'ի խաղաղութիւն։

ԳԼ. ԺԵ.

Դեմետր երիքրդդ. Լ.պողոնիոս զօրավար նորա։ Գործ՝ յոթնանանու։ Մահ աղեքսանդրոսի։

Զայս խաղաղութիւն վրդովեաց դեմետր երիքորդ, որոյ ընդ երկար կացեալ 'ի կրետէ, եկն յասորիս առնուլ զթագաւորուն հօր իւրոյ դեմետրեայ առաջնոյ, որ մեռաւ 'ի նախագրեալ պատերազմի ընդ աղեքսանդրի. որ և կալաւ զաշխարհ նորա։ Դեմետր ունէր իւր նիզակակից զբազումս. իսկ աղեքսանդր կայր ահաբեկ։ Զառաջինն հրեից վինձակեցաւ զդէմ ունել այսր նորոգ մարտի։ Պապարապետ դեմետրեայ էր ապողոնիոս ոմն անուն՝ լեալ երբեմն իշխան 'ի վերայ ստորինն ասորեստանեայց, որ լինէր այր անզուգական՝ եթէ զօրութիւն նորա, և գործք անտեսութիւն լինէին հաւասար իւրոց մեծաբան պարծանաց։ Այս եդ 'ի մտի խորտակել զհրեայս յառաջ քան զգտանել նոցա դիպողութիւն միանալոյ ընդ ասորիս և ընդ մակեդոնացիս. վասն որոյ առ զրգռելոյ զնոսա 'ի մարտ՝ առաքեաց առ յոթնանթան հրեշտակ՝ ասել ցնա։ Դու միայն ես՝ որ հպարտացեալ իշխես յառ-

նել 'ի վերայ մեր. քաջ գիտես յաղթել, և Ծաղք նախատանաց առնել զմեզ զնենալով լերամքդ, միշտ 'ի նոսա ամբարիակեալ, զի կարիցես կամ ընդ մինք թաքչիլ, կամ 'ի խորաձորս անյայտիլ։ Զ.զնչ յուսացեալ 'ի զօրութենդ եկ ելջ 'ի դաշտ այսր առ մեզ, ուր ոչ գուցէ ոչ մի՛մ ապաւինի, և ոչ ձոր թաքստի։ Հարց փորձեա՛, և գիտասցես, թէ ո՞ իցեմ ես, և ոչք ոչնք իցեն՝ որ ընդ իս են, որք յաչս արարեալ զձեզ՝ ասեն, ո՛չ գոյ ձեզ ոտից կոխիւ առաջի արշաւանաց մերոց. որք և երկիցս անգամ փախստական արարին զՀարս ձեր 'ի ձեր իսկ ընիկ հայրենի լերինս. և այժմ զնիարդ կարիցի՛ք զդէմ ունել այդչափ այրուձիոյ՝ եթէ յանդգնիցիք մարանչել 'ի դաշտի։

Ընդ այսպիսի ամբարտաւան սպառնալից պատգամն ապողոնեայ՝ լի եղև սրտմտութ յոմնաթան. ոչ արար նմա պատասխանի քանիւ, այլ գործով. զի վաղվաղակի ընտրեաց զընտիր ընտիրս զօրացն արս իբրև տասն հազար. և շմուտն եղբայր նորա հանդերձ գնդաւ իւրով յարեցաւ 'ի նա. խաղացին 'ի քաղաքն յոպղէացւոց պահպանեալ քաղաքն զուշութիւն 'ի զօրաց ապողոնեայ 'ի պատճառս նաւաս. հանգստի իւրոց, որ կարևոր երնմա յոյժ։ Ընդ մնարտ պատերազմի 'ի վերայ քաղաքին. իսկ քաղաքացիքն երկուցեալ, թէ յառնուլ նոցա բռնի զքաղաքն՝ աւար հարկանիցեն զնա և քանդեսցեն, բացին ինքնին զդրունսն, և սոքա մտեալ տիրեցին նմա։ Իբրև զայն լուաւ ապողոնիոս, կազմեցաւ պատրաստեցաւ և էառ ընդ իւր երիս հազար հեծեալս, և բազմութի՛ն հետևակաց, 'ի վերին երեսս ցուցանելով իբր խոյս տալ յաղտոս, բայց արդեամբք 'ի դաշտ անդր կամէր տալ պատերազմ՝ յուսացեալ 'ի բազմութի՛ն զօրաց իւրոց, վասն այնորիկ մնա քերէր առ դաշտիւն. եթող և 'ի դաբանի հազար հեծեալ զհետ յոմնաթանու, որ զկնի պնդէր նորա։ Այն իբրև գիտաց յոմնաթան, վաղվաղակի ճնակատ յարդարէր, կարգէր խիտ առխիտ և զտիգաւոր զօրս իւր իբրև պատնէշ 'ի նա-

հանջել զյարձակումն դարանակալացն. հրամանս տուեալ նոցա չշարժիլ 'ի տեղւոջէ անտի. իսկ աղեղնաւորք և պարսաւորք պատպանէին նոցա յառաւօտէ մինչև յերեկոյ յերեսաց հեծելոց թշնամւոյն։ Իբրև ետես յոնաթան զնոսա լուծեալ լքեալ յերկար սպասաւորութենէ յանընդհատ շրջապտոյտ ընդունայն արշաւանաց, ետ նշան շմաւոնի եղջիւր իւրոյ, որ ոչինչ կարի բացագոյն զղջեալ կայր 'ի դարանի. իսկ նորա յեղակարծումն՝ հանգուցեալ զձիաքն իւրովք 'ի վերայ հասեալ, զբազումն 'ի զօրաց անտի ապողջնեայ անդէն սատակէր. և զբաղումս հեծելազօրս հալածականս ընդ երեսս դաշտին տանէր. մինչ զի բազումք առ շտապ տագնապի փախստեայ գնացեալ անկանէին՝ 'ի մերհեանն դագռնոյ յայզմոս ամրանալ։ Ընդ հասանէր յոնաթան զձիաքն իւրովք, և այրէր զմերհեանն ամրացելովքն հանդերձ. և եղէն այրեցեալքն և անկեալքն 'ի սրոյ 'ի զօրաց անտի ապողջնիոսի իբր ութհազար. իսկ այլք վիրաւորք և անվիրք ցանեալ ցրուեցան. և ողջոյն բանակն ապողջնիոսի քակտեալ աւերեցաւ։ Ընտի խաղաց յոնաթան յասկաղոն. ուր ընկալան զնա բնակիչք քաղաքին մեծաւ փառաւք իբրև յաղթանակող. և ապա դարձաւ յերուսաղէմ զնդաւ իւրով և բազմաւ աւարաւ։

Ուեալ արքային աղեքսանդրի զայս նշանաւոր յաղթութիւն յոնաթանու, առաքեաց նմա շինգղոսկի՝ նշանակ մեծի պատուոյ, զոր եղբարց և եղբարագաւորին օրէն էր կրել. և զակկարոն ամենայն սահմանաքն ետ նմա 'ի ժառանգութիւն ուր երբեմն փղշտացիք տիրէին։ Իսկ վասն ապողջնիոսի ոչ մնաց յիշատակ՝ թէ զի՞ եղև. յայտ է թէ կամ մեռաւ 'ի մարտի անդ, և կամ փախստական անկաւ ուրեք՝ սոսկական կեանս վարելով 'ի ծածկել զնայտառակութենէն անձին։ Սակայն եթող յաշխարհի ուսումն կարևոր ամենեցուն, մի յառաջ քան զվնասել զործոյն մեծաբանել. քանզի որ ձեռներեց լինի յիրս ինչ՝ կարծելով 'ի ձեռին ունել զյաղթութիւն, 'ի

փորձ եկեալ բազում անդամ պարտեալ խայտառակի. նա է այր, որ գործէ՝ և լռէ. թողեալ զի գործն քարոզեսցէ զնա, և ոչ ընդվայրայոյժ պարծանք շրթանց նորա. որով յաւէտ նսեմանայ գործն և գործողն։ Համեստութիւն գովեստ մեծ է ոչ միայն 'ի սոսկականս, այլև 'ի քաջ զօրավարս. և առաւել քան զայն՝ խոնարհութիւն. որով ոչ յանձին քաջութիւն, այլ յամենազօր հոն օգնական. նութիւն ապաւինեալ՝ գործէ մեծամեծս և աքանչելիս. որպէս տեսաք 'ի յուդա մնկաբէ և 'ի յոշնաթան և յայլս յոլովս յառաքինի զօրավարաց. որոց առաւել սատար՝ եղեն խոնարհ պաղատանք առ հոն՝ քան զբազմութիւն զօրաց և զինուց ամբարտաւան թշնամեաց։

Սովին նշանաւոր յաղթութիւն յոշնաթանու՝ յաջողեցան մեծապէս իբր աղեքսանդրի արքայի. բայց անդ եգիպտ եղկելին զկործանումն, ուր ակն ունէր նպաստս գտանել։ Օ՛ի առ յինքն ձգելոյ զեգիպտացիս՝ առեալ էր իւր 'ի կին զկիրոպատրա դուստր պտղոմեայ եգիպտացւոց արքայի, և ահա նա ինքն աներ նորա եղև մեծագոյն թշնամի նորա։ Օ՛ի աղգականութիւն պատրուակաւ ծածկեալ զնենգաւոր թշնամութիւն՝ եւին զօրու ծանու իբր յայցելութիւն դստերն, և յօգնութիւն փեսային։ Յամենայն քաղաքս՝ ընդ որ անցանէր, բանային նմա խաղաղութիւն զգրուանս, և ընդառաջ երթային նորա մեծաշուք փառօք. զի այնպէս պատուէր տուեալ էր աղեքսանդրի. և նա պէսպէս սուտ պատճառանօք յիւրաքանչիւր քաղաքս թողոյր պահպանս 'ի զօրաց իւրոց։ Ժամանակին յայնմիկ աղեքսանդրոս էր 'ի կողմանս կիլիկեցւոց՝ խաղաղել զկոտոյութիւն ապստամբուեն։ Իսկ պտղոմէոս յետ այնպիսի նենգաւոր հնարիւք տիրելոյ քաղաքացն ծովեզերեայց մինչև 'ի քաղաքն սելևկիայոց, եմուտ յանտիոք քաղաք. և անդ յայտնեաց զթշնամութիւն իւր, երգեալ և թագ զասիացւոց։ Այս յափշտակեաց յաղեքսանդրէ և զկին նորա. ոչ սոսկացաւ և ոչ ամաչեաց զաբքայածին դուստր իւր առնել հրապարա-

կեալ հնացող, առուեալ զնա 'ի կնութիւն՝ մանաւանդ թէ 'ի հնութիւն դեմետրեայ։ Հրեշտակս արձակեաց առ դեմետր՝ պէսպէս սուտ չարախօսութիւնս և զրպարտութիւնս յօդելով զաղէքսանդրոսէ առ 'ի արդարացուցանել զանիրաւ յափշտակութիւնս իւր, որով զմեծագոյն մասն ՝ որութեան նորա յինքն դրաւեաց. ինդրեաց դաշինս հաստատել ընդ դեմետրեայ. առ որոյ հաստատութիւն խոստացաւ նմա զդուստր իւր, և արարին զանօրէն վատանուն հարսանիս։

Այն իբրև լուաւ աղէքսանդրոս, դարձոյց վաղվաղակի զզօրս իւր ընդդէմ պտղոմէոսի. այլ 'ի պարտութիւն մատնեցաւ. բազմութիւն 'ի բանակէ նորա անկան. այլք ցանեալ ցրուեցան. և ինքն փախստեայ անկաւ յարաբիա. ուր 'ի խնդրել զպաշտպան կենաց իւրոց՝ արկ զանձն 'ի ձեռս դահճի։ Զի զաբեալ արքայ արաբացւոց եհատ զգլուխս նորա, և առաքեաց առ պտղոմէոս. բայց և նա ոչ երկարեաց 'ի վայելումն անիրաւ յափշտակութեան իւրոյ, զի յետ երից աւուրց մեռաւ. և զօրք նորա զորս թողեալ էր 'ի պահպանութիւն քաղաքաց՝ առ հասարակ կոտորեցան յամրականաց անտի. և դեմետր կալաւ զթագաւորութիւն ասորւոց՝ յամի թագաւորութիւն յունաց հարիւրորդի եօթանասներորդի եօթներորդի զկնի երկրեմեան պատերազմաց. և կոչեցաւ դեմետր երկրորդ թագաւոր ասորւոց։

Զամենայն թագաւորաց ասորի պատուեցաւ յովնաթան. սակայն և այնպէս արքունի պահապանք միջնաբերդին երուսաղէմի ոչ երբեք մեկնեցան անտի. ուր ժողովեալ կայր դիրտ անօրինաց ուրացող հրեից. որք չար ևս թշնամիք էին հրէական ազգին, և հանապազորդ 'ՅԻՇՏ երուսաղէմ քաղաքի, խոչընդոտն տանջարին՝ առաւել քան զՀեթանոսս։ Այսն որոյ յովնաթան եդ 'ի մտի բառնալ զայս փուշ յաչաց. ժողովեաց զզօրս իւր 'ի հրէաստան, եւ կազմել զնովաւ մեքենայս բազումս և պաշարեաց զնա. իսկ թշնամիք հրէից վաղվաղակի ազդ արարին դեմետրեայ. որ նոյնհետայն ցասմամբ

մեծաւ արձակեաց հրեշտակս հրովարտակաւ առ յոմնաթան, զի բարձցէ 'ի պաշարմանէ անտի զզօրս իւր, և ինքն փութանակի եկեսցէ 'ի քաղաքն պաղեստացւոց, զի անդ յանդիման լիցին միմեանց, Հրեայք չէին տիրապէս սարուկ թագաւորացն սաղուց, քայց առ հարկի բռնութեամբ նոցա յիրս իրս ինչ հպատակէին նոցա իբր սարուկ. վասն որոյ առաքնորդք հրեից էր զի՝ վարեին զինքնիշխան հրութեամբ 'ի վերայ ազգի իւրեանց, և է զի հնազանդէին նոցա՝ բառնալով զլուծ նոցա, զի մի խսպառ կորուսանիցեն զազատութիւն իւրեանց։ Զոր հրաման թագաւորին բառնալոյ զպաշարումն ոչինչ անսացեալ յոմնաթանու՝ և ելս քան զեւս սնդեալ հրամայեաց զպահ բերդին, քայց միանգամայն կամեցեալ զերևոյթ իմն հպատակութեան ցուցանել նմա, գնաց առ նա՝ առեալ ընդ իւր արս ընտիրս խնամատունս 'ի ծերակոյտ ժողովրդենէ անտի։ Գիտեալ գիտէր, զի սովին գներ զանձն 'ի յեռին վտանգս, սակայն և այնպէս գնաց յանդիման եղև դեմարեայ, մեծասպաս պատարագաւ ոսկւոյ և արծաթոյ և պատուական հանդերձից։

Շրջեաց ՝ն ՝ն զսիրտ թագաւորին. զի գեղեցիկ քաղաքավարութեամբ, քաղցրախօս ՝ն ՝ն զարտարաբանութիւն, վայելուչ և սիրելի բերմունքս յոմնաթանու յոգեալ ընդ մեծագին պատարագաց 'ի գիպող ժամու մատուցելոյ, որսացան զսիրտ դեմարեայ. մինչև ընկալաւ 'ի նմանէ և պէսպէս շնորհս, ազատութիւս 'ի հարկաց, և հրովարտակս նպաստաւորս հրեաստանի. այլ ոչ նոյնպէս զազատանալ միջնաբերդին երուսաղէմի 'ի զօրաց անտի նորա. զի առ այս խնդիրս յոմնաթանու քանիւք մեծամեծ խոստմունքս տուան նմա, այլ արդեամբք վՀարեցաւ և ոչինչ։ Վասնզի դեմարեայ թէպէտ սիրեաց զյոմնաթան սակս բարեբաւութեան նորա, տեսեալ զնա զլսովին հակառակ այնմ, քան զոր լուեալ էր զնմանէ 'ի յսարախօսաց անտի նորա, սակայն ոչ երբէք անկեալ բարեկամութեան կալաւ առ նա։ Զանեաւ թէ կարէ երբէք կարօտիլ նմա, այլ 'ի սրտէ նենգութեամբ

գնայր ընդ նմա։ Եւ ընդ երկար յամենայ կարօտութիւն. քանզի իբրև եաւս զեմետր՝ զի հնաբանդեցաւ ամենայն երկիր առաջի նորա, և դադարեցան վրդովմունք պատերազմաց, ՝ի բաց արձակեաց զամենայն զազգային զօրս իւր պահելով միայն զօտարս, զոր ՝ի կրեռեայ և յայլոց կղզեաց ածեալ էր ընդ իւր։ Զայս բան դարձոյց ՝ի թշնամութիւն ընդ նմա զամենայն զազգային զօրս. որք զկնի բազմամեան վաստակոց՝ կորուսին զառօրեական թուշակ իւրեանց. մինչև չունել այլուստ գտանել զպարէն կենաց, եթէ ոչ յափշտակութիւն և գողութիւն. զի նոր արհեստ ուսանել չէր դիւրին վարժելոց երկար ժամանակաւ ՝ի զէնս։

Օայսու ժամանակաւ տրիփոն ոմն անուն՝ քաջ զօրավար, որ միշտ կալաւ զկողմն աղեքսանդրի արքայի, իբրև ծանեաւ զտրտունջ զօրաց դեմետրեայ, ժամ դիպօղ վարկաւ զայն ՝ի գլուխ տաւնելոյ զնորհուրդ իւր. գնաց փութանակի յարաբիա առ իմաղկուս, որ մնուցանէր զանտիոքոս զորդի աղեքսանդրի արքայի. խնդրեաց զմնուէն՝ յայտնելով նմա զդիպողութիւնն թագաւորեցուցանելոյ զնա ՝ի տեղի հօր իւրոյ. և զկնի աւուրց բազմաց հուսկ ուրեմն ընկալաւ զնա. և վաղվաղակի գումարեցան առ նա ամենայն զօրք, որք յառաջագոյն ծառայեալ էին հօր նորա, և դառնացեալ ընդդէմ դեմետրեայ։ Եւ քաղաքացիք անտիոք քաղաքի չէին հաճ ընդ գնացս դեմետրեայ, վասն երոյ խնդրէին բառնալ զնա. զոր գիտացեալ նորա՝ ապաւինեցաւ ՝ի յոփնաթան, խնդրելով ՝ի նմանէ իւր օգնութիւն. իսկ նա առաքեաց նմա գունդ մի երից հազարաց արս ընտիրս սպառազէնս, որք ՝ի ժամու հասին անդր, յորժամ արք հարիւր քսան հազար ՝ի քաղաքացւոց անտի զէն առեալ խնդրէին կորուսանել զթագաւորն. որ խոյս տուեալ ամփացաւ ՝ի բերդ անդր՝ կոչելով ՝ի պահպանութիւն անձին զգունդն հրեից։ Որքա յապահովի եղեալ զթագաւորն, յարձակեցան ՝ի դուրս, և սկսան անխնայ կոտորել. գաղանաբար ընթանային ընդ

ամենայն փողոցս, զորս և ընուին արեամբ սպանեալոց, կոտորեալով յայնմ աւուր հարիւր հազար 'ի քաղաքացւոց անտի։ Դեմետր ոչ խնայէր, զի թշնամիք իւր մեռանէին. իսկ հրեայք ցնծութեամբ կոտորէին, տեսեալ զի երկու գործս միանգամայն գործէն. մի՝ զի զթագաւորն ապրեցուցեալ, պարտաւոր զնա ինքեանց առնէին. և երկրորդ՝ զի կոտորմամբ ժողովրդեանն զթագաւորութիւն տկարացուցանէին, և զթշնամիս իւրեանց նուազ առնէին. զի անտիոքացիք և 'ի ժամանակի խաղաղութեան 'ի սրսէ միշտ թշնամիք էին հրէական ազգին։ Յետ կոտորածին յարձակեցան յաւար, և 'ի հրկիզութեան քաղաքին. և այնպէս հաճութեամբ թագաւորին աւերեցին զարքայանիստ քաղաք նորա։ Իսկ մնացեալքն 'ի քաղաքացւոց նուաճեալ խոնարհեալ 'ի բաց եդին զդէնս. աղաղակեցին առ թագաւորն զդգարեցուցանել զգունդն մոլեկան 'ի կոտորածէ անտի. և արարին խաղաղութիւն։ Իսկ գունդն հրէից փոտաւորեալ առաջի թագաւորին և առաջի ամենայն զօրաց նորա, դարձաւ անդրէն յերուսաղէմ անուամբ մեծաւ և բազում աւարաւ։

ԳԼ. ԺԱ.

Անդիոքոս Վեղերորդ։ Դեմետր. Տրիփոն։ Պաղոսնիք։ Յոնաթանոս, մահ նորա։ Շ մաւոն եղբայր նորա։

Դեմետր տեսեալ զանձն պարտաւոր հրէից վասն կենաց իւրոց, առ ամօթոյն՝ փոխեալ զերախտաւորութիւն իւր յատելութիւն, ստեաց նոցա յամենայնի զոր ինչ խոստացաւ, և սրտիւ օտարացաւ 'ի յոգնաթանէ, այլ չեգիտ պարապ թափելոյ զդառնութիւն իւր։ Պանդի տրիփոն զօրացեալ զօրաք նորա թագաւորեցոյց զպատանեակն անտիոքոս

վեցերորդ. որ ըստ արտաքին պատմագրաց ՌԼՕ, այսինքն՝ ՅԾ կոչեցեալ։ Սորա առաջին փոյթն եղև շահել զՀրէայս. հաստատեաց զյոժիսթան 'ի քահանայապետութիւնն իւրում, և 'ի վերայ չորից չորրորդպետութեանն. նոյնպէս և զիշխանութիւնն արկանել ծիրանիս, և ըմպել ոսկի նուագաւ, և կրել շինագլ ոսկի, որ ըստ ասացելոցս էր նշանագլեստ եղբարց թագաւորի։ Յաւել նմա 'ի պարգև և նուագս ոսկիս և սպասս տաճարին և զոհից։ Լրա դշմարտն կացոյց իշխան 'ի վերայ կողմանցն, որք ձգին ընդերկայն առ ծովեզերք՝ 'ի տիւրոսէ մինչև 'ի սահմանս եգիպտացւոց։ Յոյժանթան շրջելով յայնկոյս յորդանան գետոյ՝ ձգեաց յինքն գունդս 'ի զօրաց ասորւոց, և նոքաւ եկեալ 'ի կողմանս սակաղոնայ՝ կալաւ զաղուստոս. զի բնակիչքն ինքնին բացին առաջի նորա զդրունս քաղաքին։ Ընտի գնաց 'ի գազա. որոյ բնակիչք զառաջինն ընդդեմ դարձան նմա. այլ իբրև տեսին, զի հրաձիգարար զաւանս նոցա, և զնիւս և զատացուած նոցա յաւարի էառ, խոնարհեցան և անձնատուր եղեն նմա. և անտի տիրեաց յոյժանթան ամենայն երկրի մինչև ցդամասկոս. եհար զիշխանս և զզօրս դեմատրեայ, որք ելին նահանջ արկանել նմա։ Նոյնպէս և շմաւոն զոր թողեալ էր յոյժանթան 'ի վերայ երկրին, էառ զբեթսոր, զնի երկար և խիստ պաշարման։

'Ի մէջ այսպիսի յաջողութեանց անկաւ յոյժանթան 'ի յետին վանդ. զի գունդ այլազգեաց ընդառաջ եղև նմա, և ինքն ըստ իւրում սովորութեան խաղաց ընդդեմ նոցա 'ի դաշտին նասորայ. բայց նոքա դարան գործեալ էին նմա 'ի մերձակայ լերինս։ Յայնժամ երկոքին ճակատք հուսկ եղեն միմեանց, ակսաւ երևիլ որոգայթն, զի դարանակալք ելեալք յիւրաքանչիւր տեղեաց՝ 'ի մէջ արկին զյոժանթան զօրաքն հանդերձ. յորմէ զարհուրեալ զօրաց նորա՝ փախեան ամենեքին 'ի նմանէ. և մնացին երկու միայն ընդ նմա, քաջն մատաթիա սրեսողմեան, և յուդաս հզօր զօրավար կախեան։ Յոյժանթան

երևէր 'ի կորուստ մնասեալ. բայց ինքն ոչ կա-
մեցաւ երևիլ փախստական. յանձն արար զանձն
համառօտ, այլ եռանդագին մնալթանօք առ ՅԾ.
և երկու և եթ ընկերօքն յարձակեցաւ 'ի վերայ
թշնամւոյն, երեք անձինք ընդդէմ միոյ բանակի.
բայց ունէին ընդ ինքեանս զնոսն զօրութեամբ, որ
այնպիսի արհաւրօք ելից զբանակ այլազգեաց,
մինչև ամենեցուն 'ի փախուստ դառնալ։ Օ՛այն
տեսեալ փախստական զօրացն երրայեցւոց՝ դար-
ձան անդէն ամենեքին, և միացեալ ընդ յոմնաթա-
նու, զհետ մնդեցան նոցա, և կոտորեցին յաւուր
յայնմիկ 'ի նոցանէ երիս հազարս հեծեալ սպա-
ռազէնս. և յոմնաթան դարձաւ յերուսաղէմ մեծաւ
փառաւք։

Իբրև ետես յոմնաթան եթէ ժամանակն յա-
ջողեալ է նմա, առաքեաց յիւրոց անտի երկուս
հրեշտակս 'ի հռովմ, պատուիրելով անցանել ընդ
սպարտիա 'ի նորոգել և հաստատել զուխտ հաշ-
տութեան ընդ հռովմայեցիս և ընդ սպարտացիս։
Պատարեցան դաշնադրութիւնքն յաջողութիւ. սպար-
տացիք (որ և լակեդեմոնացիք ասին) խոստացան
յամենայնի լինել նոցա թիկունս. իսկ հռովմայե-
ցիք հրաման արձակեցին յամենայն ազգս, որք
շուրջ զնոքօք, ընդդէմ զյոմնաթան։ Այլ յոմնա-
թան ոչ ևս էր կենդանի, յորժամ պատասխանիք
նոցա հասին յերուսաղէմ։ Օ՛յ՝ մինչդեռ նուամ-
տիոս անտիոքեան, և անթիպատրոս յասոմնեանց
էին 'ի Ճանապարհի երթալոյ 'ի հռովմ, լուեալ
յոմնաթանու եթէ իշխանք դեմետրեայ զօրօք բազ-
մօք քան զառաջինն գան 'ի վերայ նորա 'ի մարտ
պատերազմի, չու արար վաղվաղակի յերուսաղէմ,
և խաղաց ընդդէմ նոցա. և խմացեալ 'ի դիտաց
իւրոց, եթէ նոքա պատրաստին զիշերային անկանել
'ի վերայ նորա, հրաման ետ զօրաց իւրոց կալ վառ-
եալ կազմ և պատրաստ մինչև ցառաւօտ. և կարգ-
եաց զգիշերապահս դէմ ընդդէմ միմեանց։ Իբրև
ծանեան թշնամիք՝ եթէ յայտնեցան խորհուրդք
իւրեանց, երկեան մեծիլ 'ի մարտ. վառեցին խա-

բոյկս խիտառ խիտ ի ամենայն վայրն՝ ուր քանակեալ էին. սրով և խաբէին զհրէայս. և ինքեանք զի-շերայն գաղտագողի փախստեայք մեկնեցան հեռաս-ցան 'ի տեղւոջէն։ Ընդ առաւօտն խմացեալ յով-նաթանաւ զփախուստն նոցա, թէպէտ սկզբեցաւ զհետ, այլ ոչ կարաց հասանել նոցա. զի անցեալ էր նոցա ընդ գետն աղատ։ Դարձաւ յոփնաթան 'ի վերայ արաբացւոց զարդեցւոց, հարկանէր զաս-նակս նոցա, և առնոյր զինչս և զստացուածս նոցա յաւարի։ Ընցանէր 'ի կողմանս դամասկեայ. ան-տի յասկաղոն. առնոյր զամուրս ամենայն որ շուրջ գնուին էին. և դառնայր 'ի կողմանս յոպպէացւոց, և կացուցանէր անդ ոստիկանս և պահապանս 'ի վերայ նոցա, զի լուաւ թէ ձեռնտու լինիցի դեմա-բեայ։ Ապա դարձ արարեալ յերուսաղէմ, խոր-հեցաւ ընդ ծերակոյտ ժողովրդեան ամրացուցա-նել զքաղաքն. եւ շինել զպարիսպն, որ անկեալ էր յուղիանջուրցն հեղեղատաց. և զի այլ անգամ զփորձ առեալ էր՝ եթէ դժուարին է պաշարմամբ առնուլ զմիջնաբերդն, ձեռն էարկ յայլ հնարս. զի եւ բարձրացուցանել պարիսպս 'ի բարձրութիւն մեծ՝ ընդ քաղաքն և ընդ միջնաբերդն, անջրպե-տելով զնա շուրջանակի 'ի քաղաքէն, զի առանձինն լիցի իբր կղզի. և արգել իւրոցն չառնել բնաւ տուր և առ, կամ հաղորդակցութիւն ընդ ամբակա-նացն. մի գնել և մի վաճառել ինչ նոցա. և այն-պէս բերդապահք կամ ինքնին անձնատուր լինին, և կամ անդէն սովամահ մեռանին։

Այսպէս բարեկարգեալ յոփնաթանու զամե-նայն, այն ինչ յառաջադէմն յաջողէին իբր նորա, և ինքն օր քան զօր բարձրանայր փառաք, մեռաւ 'ի ձեռն անօրէն մահուանէ։ Տրուեցին մակեդո-նացւոց հերձեալ էր յերկու խումբս, մի խումբն ունէր զկողմն դեմետրեայ, իսկ միւսն զանտիոքոսի. և երկոքին մարտ աննուէր մղէին ընդ միմեանս։ Տրիփոն տաղտկացեալ պատերազմել վասն այլում, խորհէր յինքն գրաւել զթագ ասիացւոց. բայց երկնչէր 'ի յոփնաթանէ. վասն որոյ կամեցեալ փորձ

փորձել՝ խաղաց 'ի վերայ նորա բազմութիւն զօրաց. իսկ յոմնաթան եւ ընդառաջ նորա քառասուն հազարաւ ընտիր ընտիր վառելովք, տեսանել թէ զի՞նչ իցեն կամք նորա և մնկեդոնեան ասորւոց, որք ցայժամ բարեկամք համարեալ էին երբայեցւոց։ Տրիփոն զառաջինն ձևացաւ զարմանալ ընդ այնչափ կասկածանս յոմնաթանու՝ ընդ որում բարեկամ և դաշնակից էր. յայտնեաց նմա դաւոլ թէ եկեալ է տալ 'ի ձեռս նորա զքաղաքն պտղոմէացւոց. եցոյց նմա պատուասիրութիւն բազում. ետ նմա և պարգևս. և հրամայեաց զօրաց իւրոց հնազանդ լինել յոմնաթանու որպէս ինքեան. և հրաւիրեաց զնա անցանել ընդ իւր 'ի պտղոմայիս, արձակելով զզօրս իւր յիւրաքանչիւր տեղիս, և մի վայրապար աշխատ առնել զնոսա։ Հաւատաց 'ի նա յոմնաթան. և արձակեաց զզօրսն, թողեալ առ իւր 'ի նոցանէ արս իբր երիս հազարս. ապա տեսեալ զի քաղցրութիւն գնայր ընդ նմա տրիփոն, եթող և 'ի նոցանէ երկուս հազարս՝ առաքել զնոսա յերկիրն գալիլեացւոց, և ինքն հազարաւ ևեթ եմուտ 'ի պտղոմայիս։ Ընդ մտանելն վաղվաղակի ետես զորոգայթն, յորժամ ոչ ևս գոյր ժամանակ զերծանելոյ։ Քանզի նոյնժամայն փակեցան դրունք քաղաքին, և ինքն մնաց անդէն գերի. իսկ հազար զօրականքն նորա մնանեցան 'ի Ճարակ սրոյ։ Տրիփոն փութանակի արձակեաց զզօրս իւր զկնի զօրաց յոմնաթանու՝ որք էին յերկրին գալիլեացւոց։ Դէտացին նոքա, թէ 'ի նեղքս արգելաւ յոմնաթան, և ամենեքին կորեան որք ընդ նմա էին. սակայն և այնպէս ոչ լքան. միացան միագունդ արիական քաջութիւն՝ կացին զտեղի առին մնալով թշնամեաց։ Իբրև տեսին զօրք տրիփոնի զաներկիւղ զանդրդուելն արիութիւն նոցա, երկեան՝ թողին և դարձան ընդ Ճանապարհ ընդ որ եկին։ Իսկ հրէայք առանց սյլ ինչ արգելանաց դարձան յերուսաղէմ. ուր իբրև հնչեցան գոյժ արգելանաց յոմնաթանու և կոտորածի զօրացն որ ընդ նմա, սուգ մեծ պաշարեաց զամենայն իսրայէլ։

Շմաւոն, որ մի միայն 'ի հնգեցունց որդւոցն մատաթեսց կայր կենդանի, տեսեալ զժողովուրդ իւր անպատսպար և յամենայն կողմանց պատեալ 'ի թշնամեաց, ժողովեաց զծերակոյտ ժողովրդեանն, յառաջ մատոյց զանձն 'ի պաշտպանութիւն հայրենեաց և ազգին իւրոյ, որպէս արարին ամենայն եղբարք նորա։ Եւ միաշունչ հաւանութիւնք ամենեցուն ընտրեցաւ նոցա զբարգլուխ և իշխան. որ և առ ժամայն անցեալ 'ի գլուխ զօրուն՝ խաղաց ընդառաջ տրիփոնի, որ դայր հարկանել զերուսաղէմ։ Եւ յլ լուեալ տրիփոնի, եթէ շմաւոն ամբարձեալ է և պատրաստեալ փոխանակ յոնաթանու 'ի մարտս պատերազմի, արձակեաց նենգաւորն առ նա 'ի բանակ անդր նորա հրեշտակս՝ ասել ցշմաւոն. թէ յոնաթան արդեալ պահի ոչ առ թշնամութիւն ինչ, այլ սակս արծաթոյն՝ զոր պարտէր ցարքունիս. արդ առաքեսցէ շմաւոն հարիւր քանքար, և զերկուս որդիս յոնաթանու 'ի պատանդս առ նա, յայնժամ արձակեսցի խաղաղութիւնք և յոնաթան։

Եւ անեաւ շմաւոն զնենգաւոր միտս նորա. սակայն խոհեմութիւն երբեմն բռնադատեալ զիշխանս զիշխանել առ աչս խաբեութեան՝ 'ի պահել զժողովուրդն 'ի խաղաղութիւն. ետես զի թէ ոչ տայցէ զքանքարսն և զպատանդս, ժողովուրդ նորա խրատապարանոց 'ի թշնամութիւն դարձցի ընդ նմա. պատճառ կորստեան յոնաթանու զնա դնելով, սակս խնայելոյ յարծաթն և 'ի պատանեակսն. վասն որոյ արար զամենայն ըստ բանի նորա։ Բայց տրիփոն ստեաց և ոչ արձակեաց զյոնաթան յետ ընդունելոյ զոր պահանջէր. և սկսաւ դալ յառաջ 'ի կողմանս երուսաղէմի. իսկ շմաւոն իւրով բանակաւ խաղայր հաւասար քայլիւ ընդ նմա՝ միշտ զառաջս նորա ունելով յոր կողմն և երթայր։ 'Ի նմին ժամանակի հասին առ տրիփոն հրեշտակք 'ի միջնաբերդէ անտի երուսաղէմի, զի ընդ ձանապարհ անապատին հասուսցէ նոցա համբաւս կերակրոյ, ասա թէ ոչ՝ մեռանիմք ասեն 'ի սովոյ։

Տրիփոն պատրաստեաց զամենայն, և խորհէր 'ի գիշերի գալ մտանել գնդաւն հանդերձ. բայց ձիւնաբեր եղև յոյժ յայնմ գիշերի, վասն որոյ ոչ կարաց մտանել. և անփոյթ արարեալ զնոքաւ՝ դարձաւ 'ի քաղաքն պտղոմայեցւոց. և 'ի ձմեռապարհին մնաց 'ի բականաս սպան զյոշնաթան և զերկու որդիս նորա, և ետ թաղել զնոսա անդ։

Ա.հա այսպէս մեռաւ արին և քաջն յոշնաթան. որ յանթիւ դժնդակ մրցմունս պատերազմաց միշտ 'ի գլուխ գնդի զօրաց նահատակեալ, և միշտ ոճային ձեռնտուութիւն նպաստաւորեալ անխոց բնաւ և անվէր՝ սքանչելի յաղթութիւնս կանգնեաց։ Ա.յլ յորժամ ապաւինեցաւ յուխտ դաշնադրութիւնն ընդ հռովմայեցիս, երևի թէ ոճ հեռացաւ 'ի դաշնակցութէ անտի. և մնաց յոշնաթան անպատրաստաբար, որով և խաբեցաւ. և սրով դաւաճանի իւրոյ՝ կնքեաց զկեանս իւր և զերկուց որդւոց իւրոց։ Ա.յլ զպակասութիւն փառաց մահուան նորա՝ լցոյց շմաւոն եղբայր նորա փառաւորելով զդի նորա. զի բարձեալ զայն 'ի տեղւոջէն՝ ուր թաղեցաւ, ած 'ի քաղաքն Մոդիիմ. և եդ 'ի շիրիմս հարց իւրոց. և կանգնեաց 'ի վերայ բրգունս և սիւնս մարմարիոնեայս, և պէսպէս քանդակս և յօրինուածս կնեայս և վանդակապատս. որով շիրիմն այն եղև մեծագործ պանծալի իմն զարդ քաղաքին. որ և 'ի ծովէ երևէր հրաշակերտ, քարոզելով իւրով շքեղութիւն ընդ ծով և ընդ ցամաք զարդիւնս վաստակոց տոհմին մատաթեանց։ Ի տեսակ իմն արդարութէ, 'ի բառնալ մահուն 'ի մէջ զարս մեծամեծս և զհոյակապս՝ պատուել զդի նոցա որ մնայ առ մեզ։

ԳԼ. ԺԷ.

Շմաւոն զօրավար և հանանայապետ. ընտրեալ նորա. պատերազմունք. և մահ նորա։

Շմաւոն հանարակաց ընտրութիւն կալեալ զառաջնորդութիւն ազգին իւրոյ՝ եգիտ անդորրութիւն առ ժամանակ մի, և երջանիկ գտաւ առ նովաւ հրէաստան։ Այլ զի անտիոքոս որդի աղեքսանդրի ոչ եգիտ պարապ պատերազմ յարուցանել 'ի վերայ հրէից, զի փութով զկնի մահուան յոյնաթանուն մեռաւ և ինքն դեղով մահու, զոր ետ նմա անօրէնն տրիփոն. որ և էառ զթագ զասիացւոց, և արար հարուածս մեծամեծս յերկիրս։ Այլ նոյնպէս և դեմետր ոչ նեղեաց զհրէայս, զի չետ նմա դուլ տրիփոն։ Այլ թէպէտ հրէայք կուսակից էին անտիոքոսի ընդդէմ դեմետրեայ, սակայն և այնպէս 'ի խնդրել շմաւոնի 'ի նմանէ հաշտութիւն և հաստատութիւն առաջին ազատութեանն, ընկալաւ զամենայն. որպէս և տեսանել 'է ՝ա. մակ. ԺԳ. 36։ Այլ չեղև նմա ժամանակ ստել խոստմանցն ըստ իւրումն սովորութեան. քանզի զկնի սակաւուց յերթալ նորա յաշխարհ մարաց և պարսից խնդրել անտի թիկունս ընդդէմ տրիփոնի՝ արշակ արքայ պարթևաց ետ ձեռակալ առնել զնա կենդանւոյն, և շղթայակապ արկանել 'ի բանտ մշանջենական. ՝ա. մակ. ԺՊ. 3։

Այլ և տրիփոնի ոչ յաջողեցաւ 'ի գլուխ տանել զխորհուրդ չարութեան իւրոյ։ Այլ զի անտիոքոս եօթներորդ՝ անդրանիկն դեմետրեայ, զօրաժողով լեալ 'ի կղզեաց՝ կաղմեաց գունդ մեծ. և 'ի հասանել յերկիրս հօր իւրոյ՝ բազումք 'ի զօրաց անտի տրիփոնայ յարեցան 'ի նա. որով և զօրացեալ հալածեաց զտրիփոն, և արկ զնա 'ի ծովեզեր-

բեայ ամիսոցն գորայ. զոր և պաշարեաց Ը Ծուլ և Ը ցամաք երկոտասան հազար (ըստ լատ. հարիւր քսան հազար) հետևակօք և ութ հազար հեծեալ սպառազինօք յամին յունաց հարիւրորդի եօթանասներորդի չորրորդի. և զի յառաջնում նուագի ոչ յաջողեցաւ նմա առնուլ զամիսոցն, կրկնեաց անդրէն զպաշարումն 'ի Ծուլ. իսկ 'ի ցամաքէ նոր հնարս մեքենայեալ՝ այնչափ 'ի նեղ էարկ զամրականս, մինչև բռնադատեցան անձնատուր լինել։ Ա.յլ զտրիսին զոր խնդրէր՝ ոչ եգիտ անդ. զի նա յառաջագոյն դիպողութեամբ գտեալ՝ էլ յամրէ անաի, և փախեաւ յորթոսիայ. և այնուհետև ոչ ևս յիշատակի։

Մինչդեռ սոքա մարտնչէին ընդ միմեանս, բերդապահք միջնաբերդին երուսաղէմի չունելով ուստեք օգնութեամբ՝ անձնատուր եղեն շմաւոնի, և նա հանեալ զնոսա անտի, և առաւել ևս ամրացուցեալ զամրոցն, կացոյց 'ի նմա պահապանս յուխտապահ հրեից վասն զգուշութեան։ Ա.սառանդրէն և զքաղաքն յոպպէացւոց. հաստատեաց և ամրացոյց 'ի տեղիս տեղիս 'ի սահմանագլուխս հրեաստանի ամրոցս. եդեալ 'ի նոսա զօրս և զէնս, և համբարս կերակրոյ բազումս. և հանգոյց զազգիւր յամենայն կողմանց և փառաւորեաց. զնոսաբէս ժողովրդեանն բարձրացոյց, և զանօրէնս ջնջեաց յերկրէ։ Ա.մչափ երջանիկ եղեն առնովաւ երբայեցիք, մինչև թուական սահմանել զժամանակ քահանայապետութեան նորա։

Ա.նտիոքոս՝ զոր արտաքինք սիդիտէս կոչեն, մինչև էր միջամուխ լեալ 'ի թագաւորութեան հօր իւրոյ, բաբեկամ ձևանայր շմաւոնի. հրովարտակս խաղաղութեան և սիրոյ յղեալ առ նա 'ի կղզեացն, որով հաստատէր զամենայն ազատութիւս զոր նախընթաց թագաւորք տուեալ էին հրէից. և 'ի վերայ ամենայնի խոստանայր փառաւորել զշմաւոն և զազգն և զտաճարն, յորժամ յաջողեսցի նմա 'ի ձեռս բերել զթագաւորութեան հօր իւրոյ։ Ա.յլ ասոյ իբրև ետես՝ եթէ յաջողէր առաջի նորա պա-

տերազմն, յայտնեաց զչարութեն սրտին։ Օ՛ի մինչ կայր 'ի պաշարմանն դորայ քաղաքի, սառաքեաց շմաւոն 'ի Թիկունս նմա երկու հազար արս ընտիրս սպառազէնս, և պարդևս մեծամեծս ոսկւոյ և արծաթոյ բաղումս. իսկ նա մերժեաց, ոչ ընկալաւ. ստեաց և ամենայն խոստմանց իւրոց. և առաքեաց զաթենոքիոս զմի 'ի բարեկամաց իւրոց յերուսաղէմ, պահանջել 'ի շմաւոնէ զքաղաքս և զգաւառս և զՀարկս նոցուն, զորս ասէր բռնութեամբ կալեալ նորա արտաքոյ սահմանաց հրէաստանի. ընդ որս պահանջէր և զմիջնաբերդն երուսաղէմի։

Այլ այս անիրաւ պահանջմունք նորա փութով աւուն զվախճան. քանզի լուեալ անտիոքոսի զվիսատ պատասխանի շմաւոնի՝ լի եղև սրտմտութեամբ, հրամայեաց վաղվաղակի կենդեբոսի սպարապետի իւրոյ անթիւ բազմութեամբ զօրաց հեծելոց և հետևակաց միսիլ 'ի հրէաստան։ Օ՛այն իբրև ծանեաւ շմաւոն, առաքեաց ընդդէմ նորա զերկոսին որդիս իւր զյուդա և զյովհան իբր քսան հազար սպառազէն հեծելովք, և իբրև 'ի դիմի հարան միմեանց, 'ի պարտութեի մատնեցաւ կենդեբոս. և անկան 'ի զօրաց անտի նորա վիրաւորք բազումք. և մնացեալքն փախստեայ անկանէին յամուրսն։ Յայնմ աւուր վիրաւորեցաւ և յուդա. իսկ յովհան զհետ պնդեր փախստականացն, որք մտեալ ամրանային 'ի բրդունսն 'ի կողմանս ազովտայ. զորովք հուր հարեալ յովհաննու՝ այրեաց անդ արս երկու հազար. և ինքն մեծաւ յաղթութեամբ և խաղաղութեամբ դարձաւ 'ի հրէաստան։ Սա է անտիոքոսն, զորմէ 'ի վերս անդր գրեալ. գուշակեցաք, թէ իցէ սպանեալն 'ի պարսս 'ի նեղմիայ տաճարին 'ի քրմաց։

Յայսմ վայրի և շմաւոն յղեաց հրեշտակս 'ի հռովմ, և վահան ոսկի 'ի հինգ հազար քանքարէ՝ նորոգել զառաջին սեր բարեկամութեան և զդաշնակցութեան ընդ նոսա։ Այրևի թէ ոչ հաճեցաւ ընդ այս ապաւինութեան շմաւոնի յօտարս. որպէս և 'ի ձեռն իւրոց մարգարէից բազում անգամ կշտամ-

բեաց, յորժամ Ժողովուրդ իւր ապաւիներ 'ի Թագաւորս եգիպտացւոց. զի յետ այնորիկ այն տառանձին ձեռնկալութիւն ՝ի, որով յամենայնի անվրէպ յաջողէին ամենայն գործք նորա, նուազեալ երևի 'ի նմանէ. քանզի զկնի սակաւուց ելիք զբազմաբդիւն կեանս իւր հանդերձ երկու որդւովք անօրէն դաւաճանութիւն փեսային իւրոյ։ Յուեալ էր շմաւէոն զդուստր իւր 'ի կնութիւն պտղոմէոսի որդւոյ աբուբեայ առն մեծատան և երևելւոյ 'ի մէջ հրէից, զոր իբրև իւր փեսայ՝ կացուցեալ էր իշխան հրամանատար 'ի վերայ երիքովի և համօրէն շրջակայ գաւառի նորա։ Ի.յլ այսն ամբարտաւան ոչ շատացեալ այնու, խնդրէր և զքահանայապետութիւն և զառաջնորդութիւնն աներոյ իւրոյ։ Այսն որոյ 'ի շրջել շմաւէոնի ընդ երկուց որդւոց իւրոց այցելութիւն 'ի կողմանս գաւառացն խնամել և տեսանել զվէտս նոցա, էջ և յերիքովի. ուր փեսայն նորա պտղոմէոս արար նմա նենգութիւն ճաշ մեծահաց 'ի դոք անուանեալ գեղջ իւրում, (զոր ինքն շինեալ էր 'ի ձև փոքրիկ ամրոցի,) եդեալ 'ի դարանի արս սիկարեանս. և իբրև կերան և արբին, յարեաւ պտղոմէոս Թագուցելովքն հանդերձ, և անդէն 'ի տաճարին սրախողխող սպանին զշմաւէոն և զերկու որդիս նորա, և զծառայս որք ընդ նմա էին, յամին յունաց 177։

Ի.ս գրեաց վաղվաղակի անօրէնն պտղոմէոս առաքային անտիոքոս զորս 'ի Թիկունս նմա հասուցանել, զի 'ի ձեռս տացէ նոցա զքաղաքն և զհարկս զորս պահանջէր արքային 'ի շմաւէոնէ. և զկնոն արձակեաց 'ի կողմն գաղարայ ըմբռնել զյովհաննէս. իսկ զայլս յերուսաղէմ ածապարել առնուլ զլեառն տաճարին։ Ի.յլ յովհաննէս վաղ իմացեալ զնենգաւոր գալուստ արանցն՝ կալաւ զնոսա, և անդէն սատակեաց. և ինքն խոյս ետ և ամրացաւ ուրեք, և յաջորդեաց զքահանայապետութիւն հօր իւրոյ շմաւէոնի։

Ի.ստ կատարի պատմութիւն մնկաբայեցւոց և համօրէն հին կտակարանաց, զի յետ այսորիկ գտա-

նեմք միայն զյառաջաբանն Է. մինչ. Գլ. Ա. և Բ. գրեալ 'ի ձև նմանակի յամին յունաց Հարիւրորդի աւթմնեորդի ութերորդի։

ԳԼ. ԺԲ.

Յաջորդումն իշխանութեանն Եբրայեցւոց արքայոյ Սբ գրոյ՝ Գնելա 'ի Տէր։ Իսր և Բացարդի մարգարէուն Յովհաննայ նահապետի վասն գալստեան Դեսային։

Ոյնի շմաւոնի եկաց քահանայապետ և իշխան Եբրայական ազգին յովհաննէս որդի նորա, զոր արտաքինք հիւրկանոս կոչեն. (որպէս թէ վրկանեան՝ վասն գործոց նորա 'ի կողմանս աշխարհին վրկանայ,) որ և վարեաց զիշխանութիւն ամս լա. և բազում քաջութիւս արար, ց' 3997 ամ աշխարհի ըստ կաղենոսի։ Ոյ յովհաննէս յաջորդեաց որդի նորա Արիստաբուլոս ա. որ և անուանեցաւ միանգամայն քահանայապետ և թագաւոր հրէաստանի. և թագաւորեաց ամ մի և եթ։

Յետ արիստաբուլոսի առաջնոյ յաննէոս եղբայր նորա, որ կոչեցաւ Աղէքսանդրոս ա. թագաւորեաց ամս 27։

Ոյ յաննէոս յաջորդեաց աղէքսանդրա կին նորա. որ թագաւորեաց ամս 9։

Ոյնի աղէքսանդրի երկպառակութիւն և ներքին պատերազմաւ յաջորդեցին որդիք նորա Արիստաբուլոս է. և Հիւրկանոս է. որք զզէնս հռովմայեցւոց բերին 'ի հրէաստան։ Պոմպէոս եկն պաշարեաց և էառ զերուսաղէմ. և հաստատեաց զիշխանութիւն հիւրկանոսի. այլ զի աղէքսանդր է որդի արիստաբուլոսի երկրորդի՝ զոր պոմպէոս առաքեալ էր գերի 'ի հռովմ՝ խնդրէր շարունակել զպատերազմ ընդ ղէմ հիւրկանեայ, վասն այսորիկ

հաւմայեցիք Եղիշն պատերազմաւ 'ի վերայ նորա։ և գաբինիոս կամ գաբիանոս խորտակեաց զնա։ Այս ինքն գաբինիոս բաժանեաց զՀրէաստան 'ի Հռոմոգպետութիւն. և այնուհետև միշտ կացին մնացին զօրք հռոմայեցւոց 'ի Հրէաստան։ Հիւրկանոս յետ ընդ ամն չորս թագաւորելոյ՝ դեղով մահու սպանաւ 'ի Հերովդէ ասկաղոնացւոյ։

Յետ հիւրկանոսի երկրորդի թագաւորեաց Հերովդէս ա. ասկաղոնացի՝ փեսայ նորին հիւրկանոսի. զոր հռոմայեցիք, մանաւանդ թէ նա ինքն օգոստոս կայսր հռոմայեցւոց՝ հաստատեաց յաթոռ թագաւորութեան Հրէաստանի։ Այս Հերովդէս էր որդի անտիպատրոսի ասկաղոնացւոյ՝ 'ի տանէ այլազգեաց. զի թէ և լեալ էր նորա ազգակցութեամբ ինչ խառն ընդ Հրէայս, չունէր և ոչ մի ինչ իրաւունս 'ի թագաւորութեան ոչ յաջորդութեամբ, և ոչ ընտրութեամբ. և Հրէայք բռնութեամբ հռոմայեցւոց արկան ընդ նորին իշխանութիւն։ Ուստի առնովաւ վերջ եղև ունել տանն յուդայ կամ որդւոց իսրայէլի զկերպարան ինն տիրապետական իշխանութեան։

Յամն թագաւորութեան սորին Հերովդէի, ծնաւ յաշխարհ՝ բազում անգամ 'ի սկզբանէ անտի խոստացեալն մեսիայ որ Բարդ մանի օծեալ, փրկիչն մեր և Տէր Յիսուս, նախայաւիտեան բանն ծած և ծոցածին որդի հօր երկնաւորի՝ մարդ եղեալ վասն մեր 'ի ժամանակի՝ յանարատ 'ի նոր կուսէն։ Օրհնեցեամք իւրով Հոգւոյն պատգամք մարգարէից. և տիրապէս հաչակաւոր մարգարէութիւն յակոբայ նահապետին, որ 'ի մարգարէական օրհնութիւնս որդւոց իւրոց, ասաց խօսելով առ ցեղն յուդայ. "Մի պակասեսցէ իշխան յուդայ. և մի պետ յերանաց նորա, մինչև եկեսցէ նա, որոյ իւրն է հանդերձեալքն. (ըստ լատ. որ առաքելին է). և նա է ակնկալութիւն հեթանոսաց։ Ծն. խբ. 10։

Ի դաւթէ մինչև 'ի սեդեկիա եկաց մնաց միշտ գաւազանն թագաւորական իշխանութեամբ 'ի թագաւորս յուդայ։ Իսկ 'ի ժամանակս դերութեանն բաբե-

լենի՝ Յովակիմ կամ Յեքոնիա Թէպէտ 'ի կալանս էր, բայց միշտ իբրև օրինաւոր Թագաւոր ծանուցեալ. և նա ինքն եղմարոմդաք ունէր զնա առ իւր իբրև Թագաւոր. և առաւել պատիւ տայր նմա, քան այլոց Թագաւորաց որք էին առ նմա. * Լու արկ ասէ գիրն զաթոռ նորա (Յովակիմայ) 'ի վերոյ քան զաթոռս Թագաւորացն որ ընդ նմա 'ի բաբելոնի ॥. Բ. Գ. էԵ. 28։

Օ՛կնի մահուն Յովակիմայ ունէր ժողովուրդն հրամանաւ Թագաւորին բաբելացւոց՝ նաև անդ 'ի բաբելոն դատաւորս և իշխանս 'ի ցեղին Յուդայ։ Իսկ յետ գերութեն այլ ամենայն ցեղք որդւոց իսրայէլի մնացին ընդ հրամանատարութիւն ցեղին Յուդայ. ըստ որում նա միայն վարէր զկերպարան հին տիրական իշխանութեան։ Ի՝նակաբայեցիք տիրեցին մինչև ցՀերովդէս, վասն զի ցեղն Յուդայ ընտրեաց զնոսա գլուխ և առաջնորդ իւրեանց, և ինքնակամ մնին ընդ առաջնորդութիւն նոցա. ուստի Թէպէտ պետութիւնն կամ գաւազանն իշխանութիւն ոչ էր յայնժամ 'ի ձեռս Յուդայ, այլ զևեայ, բայց ազատութիւնն ընտրելոյ ինքեանց գլուխ, առաջնորդ, կամ Թագաւոր՝ էր 'ի ձեռս ցեղինյուդայ։ Ի՝սայն 'ի նստել Հերովդի ոչ ևս մնաց Թագաւորութիւն 'ի ցեղին Յուդայ. քանզի Հերովդէս ոչ ընտրեցաւ 'ի նմանէ, և չեղև իսկ օրինաւոր Թագաւոր. այլ բռնակալ՝ առ հարկի արտաքին բռնութեամբ տարեալ։

Իսկ Թէ ցեղն Յուդայ ընտրեաց իւր իշխան և առաջնորդ զմնակաբեան ցեղն քահանայական, տեսանի 'ի հնազանդութիւնէ զոր ընծայէին նոցա առանց զինուց և առանց բռնութեան։ Լու յայտնի իսկ ունիմք 'ի ա. Մակաբ. ԺԲ. 41. ուր ասի վասն շմաւոնի. * Օ՛ի հրէայքն (այսինքն յուդայեանք) ինքեանք, և քահանայքն հաճեացան յանձն առին՝ իշխան քահանայապետ կացուցանել զնա յաւիտեանս ժամանակի, մինչև կանգնեսցի մարգարէ հաւատարիմ. զի լիցի նոցա զօրավար յառաջնորդութիւն ॥։ Լու 'ի 47. համար. * Ի՛ռ յանձն շմաւ-

ւոն. և հանձեցաւ կալ 'ի գլուխ քահանայապետութեանն, լինել սպարապետ զօրավարք՝ գնդին հրեաստանի (կամ յուդայաստանի)։ և կալ գլուխ քահանայից, և առաջնորդել ամենեցուն ։

Իսկ հարազատ և Ճշմարիտ իմաստ մարգարէութեանս յայսոքս այս էր. թէ ոչ պակասեսցէ թագաւորութիւն և պետութիւն 'ի ցեղէն՝ որ էլանիցէ յերանացն յուդայ, մինչև գալոց մեսիային՝ որպէս թէ էլցէ 'ի Ճանապարհ։ վասն այնորիկ յաւել անդ յայսոքս։ * և նա է ակնկալութիւն հեթանոսաց ։ իբր թէ՝ յորժամ տեսցեն, զի բարձեալ է տիրապետական իշխանութիւնն՝ 'ի ցեղէն յուդայ, յայնժամ սպասեսցեն՝ զի մօտ է գալուստ մեսիային։ Ապաքէն հարկ է ասել թէ և հրեայք այսպէս իմանային։ քանզի յորժամ եկին մոգք յերուսաղէմ, և հարցանէին՝ թէ * ուր է որ ծնաւ արքայն հրէից ։ ոչ գտանեմք թէ ոք յերկբայս արկեալ իցէ զայն ծնունդ։ այլ զտեղին միայն խնդրեցին, ուր ըստ մարգարէութեց պարտ էր ծնանել մեսիային, զորոյ ժամանակն առ դուրս հասեալ տեսանէին։ քանզի իշխանութիւնն յուդայ բովանդակ բարձեալ էր 'ի նմանէ, և անցեալ 'ի ձեռս օտարազգի առն։

Իսկ եթէ նաև առ հերովդէիս զկնի ծննդեան փրկչին մերոյ մնաց ստուերք իմն և երևոյթ իշխանութեան 'ի ցեղին յուդայ, յետ մահու փրկչին և այն երևոյթ սպառ սպուռ չքացաւ, մինչ տիտոս հռովմէական զինու կործանեաց զերուսաղէմ. և աւերեաց զամենայն հրէաստան. և այնուհետև հրէայք եղեն անգլուխ և անիշխան. որպէս էին և այժմ ցիր և ցան ընդ ամենայն աշխարհ։ Լուսոյ քան զարեգականն լոյս պայծառ տեսանելով Ճշմարտեալ զմարգարութիւնն, ոչինչ իւիք կարեն ուրանալ թէ եկեալ է մեսիայն։ Զ՞ատ լեցի ընդդէմ հրէից՝ վկայութիւնն յովսեպոսի երբայեցւոյ։ որ թէպէտև առ ահի ինքնակալացն վեսպասիանոսի և տիտոսի չիշխէ պարզապէս խոստովանիլ զքո թագաւոր տիեզերաց, որպէս և առ երկիւղի հրէից

չկամի զնա ՝ն ծ դաւանել, բայց աներ կրայ վկայութիւն գնա՝ թէ ՝Յս էր նա ինքն քն, այսինքն մեսիայն խոստացեալ յայ. քանզի այսպէս գրէ ՝ի դիրս նախնեաց ԺԷ. կ. ըստ բնագրին ՝ի լեզու յունական՝ մանուածոյ, միանգամայն և յայտնի քանիւք և բառիւքս այսոքիւք. ՝Այս լինի ընդ այն ժամանակս Յիսուս, իմաստուն այր՝ եթէ արդարև այր զնա ասել պարտ իցէ. վասն զի էր հրաշափառ գործոց արարող, վարդապետ մարդկան՝ մտագիւր զհիմարութիւն ընդունելեաց. և զազգս հրեայս, որպէս և զազգս հելլէնս յանկոյց։ Քրիստոսն սա էր։ Այս յարժամ զնա մատնութիւն գլխաւորաց մերոց ՝ի խաչ մատնեաց պիղատոս, ոչ դադարեցին՝ որք միանգամ յառաջագոյն սիրեցինն զնա։ Քանզի երևեցաւ նոցա յետ երիր աւուր՝ վերստին կենդանի, որպէս նաձային մարգարէից ասացեալ էր զայսոսիկ և զայլ բիւր սքանչելիս վասն նորա։ Այս մինչև ցայժմ՝ քրիստոնէից առ ՝ի նմանէ անուանելոց ազգն ոչ պակասեաց։

ԳԼ. ԺԹ.

Քանզի ամ անդին յաղաղուրէնէ հրէից ՝ի բաբէլոնական գերութէ, կամ ակնեալ յառաջնոյ ամ կիւրոսի թագաւորելոյ ՝ի բաբէլոն, դնելոյ զմանն Քէ Տեառն մերոյ։ Որ բացարին հուլակաւոր եօթնեքրդդ դանիէլի։

Ի վերայ այսր խնդրոյ բազմապատիկ են կարծիք. այլ մեր թողեալ զամենայն, ասա դնեմք առաջի միայն զկարծիս կեսարոսի կաղինոսի. որ յետ բազմամեան խուզրուութիւն մանրակրկիտ քննելոյ և կշռելոյ զբանս ՝ուր գրոց, և զհիմունս այլոց զանա-

զան կարծեաց, յառաջ բերէ զկիր կարծիս իբր առաւել համանձայն ՝ի զրոց, դնելով առաջարկութեան այսպէս։ Հաշուելով յառաջնոյ ամէն թագաւորելոյ կիւրոսի ՝ի բաբելոն, մահ փրկչին մերոյ Յետ Ալեն գայ անկանի յամի չորեքհարիւրորդի ութսներորդի եօթներորդի։ Խոմանդակ հիմն այսր առաջարկութեան հաստատի ՝ի դնել սահմանս եօթներորդացն յայտնելոյ դանիելի, թէ ուստի սկսանի ժամանակն նշանակեալ ՝ի յայտնութեան անդ և ուր վերջանայ. զսոն որոշանալ յառաջ բերէ զայտնութիւնն դանիելի մեկնողաբար, և ասպա մտանէ ՝ի քննութիւն։

Յամին առաջնում, յորում մաբ դարեհ որդի արշաւրայ կամ արտաշիսի թագաւորեաց ՝ի բաբելոն, դանիել ՝ի մտրգարէական գրոց երեմիայ ՝ի միտ առեալ՝ եթէ մեռ է վախճան հրէական գերութեան, դարձաւ առ ՝ուր ՝ուծ պահօք և խորդով և ջերմ աղօթիւք և խնդրուածովք։ Լու մինչդեռ կայր յաղօթս երևեցաւ նմա գաբրիել հրեշտակապետն. և ասաց թէ ՝ի սկզբան անդ աղօթից նորա՝ յայտնեաց ՝ուծ հրեշտակաց զնորհուրդ մի զիրաց հանդերձելոյց. զոր ես ասէ եկի պատմել քեզ, գիտելով զվառեալ ցանկութիւն սրտի քո իմանալ զնորհուրդս հաւատոյ։ Լրդ՝ քաջ միտ դիր բանից իմոց, և ՝ի միտ առ զոր յայտնեմ քեզ։

Ինան եօթանասուն եօթներակք ոչ ամենեքին, այլ համառօտեալ ՝ի վերայ ժողովրդեան քոյ, և ՝ի վերայ քաղաքին սրբոյ. և վախճան լիցի մեղայ, և կնքեսցին անօրէնութիւք, և ջնջեսցին անիրաւութիւք, և քաւեսցին ամպարշտութիւք. և գայցէ յաւիտենական արդարութիւն. և կատարեսցին տեսիլք և մարգարէութիւք. և օծցի ՝ուն սրբոց։ Լյս է ասէն. * եօթանասուն եօթներորդք համառօտեցան ՝ի վերայ ժողովրդեան քոյ, և ՝ի վերայ քաղաքին սրբոյ՝ ՝ի վախճանել մեղայ, և ՝ի կնքել անօրէնութեց, և ՝ի ջնջել անիրաւուեց, և ՝ի քաւել ամպարշտութեց, և ՝ի գալ յաւիտենական արդարութեան, և ՝ի կնքել տեսլեան և մարգարէի և յո-

ծանել սրբութեան (կամ՝ որոյ սրբոյ, որպէս ունին այլ թարգմանութիւք համաձայն եբրայականին)։ Եւ 'ի վերայ ածէ. Լուրդ գիտասջիր, և 'ի միտս առ, զի 'ի հրատարակելոյ հրովարտակին թէ վերստին շինեսցի երուսաղէմ մինչև ցօծեալն առաջնորդ, եղիցին եօթնեակք եօթն, և եօթներորդք վաթսուն և երկու։ Եւ դարձեալ շինեսցին հրապարակք և պարիսպք յանձուկ ժամանակի. և յետ վաթսուն և երկու եօթներորդաց՝ սպանցի օծեալն. և ոչ եղիցի նորա ժողովուրդ այն՝ որ ուրասցի զնա։

Եւ գայցէ այլ ժողովուրդ հանդերձ իւրով առաջնորդաւ որ ջնջեսցէ զքաղաքն, և զսրբութիւն. և միսյն և միւսոյն վախճան ապականութիւն եղիցի. և 'ի կատարած պատերազմին կացցէ մնասցէ ապականութիւն աւերածոյն։ Օրի այս է ասելն. * Լուրդ՝ զիտասցես և խելամուտ լիցիս յելից բանին տալ պատասխանի, և 'ի շինելն երուսաղէմի՝ մինչև ցօծեալն առաջնորդ եօթներորդք եօթն, և եօթներորդք վաթսուն և երկու. և դարձցին և շինեսցին հրապարակքն, և պարիսպք. և նորոգեսցին ժամանակք։ Եւ յետ վաթսուն և երկուց եօթներորդաց՝ բարձցի օծութիւնն. և իրաւունք ոչ իցեն 'ի նմա, և քաղաքն և սրբութիւնն ապականեսցին առաջնորդաւն հանդերձ որ գայցէ. և ջնջեսցին հեղեղաւ, և մինչև 'ի վախճան պատերազմին հաստատելոյ կարգեսցէ զապականութիւն։

Յաւել հրեշտակն ասել։ Զերջին եօթներորդն հաստատեսցէ զուխտն և զնոստմունս արարեալ բազմաց, զի 'ի կէս այսր եօթներորդի դադարեսցէ յարգ զոհից և պատարագաց. և յետ այնորիկ եղիցի 'ի վերայ տաճարին պղծութիւն աւերածոյ. և աւերածն կացցէ մինչև ցվախճան և կատարած ժամանակի։ Եւ այս է ասելն. * Եւ զօրացուսցէ զուխտ բազմաց. եօթներորդ մի և կէս եօթներորդի բարձցին զոհք և նուէրք, և 'ի վերայ տաճարին պղծութիւն աւերածոյն կացցէ. և մինչև 'ի վախճան ժամանակի կատարած տացի 'ի վերայ

աւերածին։ Ի. Յսպէս խօսի Հրեշտակն առ Դանիէլ 'ի գլ. Թ։

Ի. Զդ յայտ է, թէ Եօթնեւորդաց Հրեշտակին աստ իմանին ոչ Եօթնեակք աւուրց, այլ ամաց. և յայսմ՝ այնպէս միաբան են ամենայն քննիչք և այնչափ քաջայայտ է բանն, մինչ զի ոչ զք որ ողջիկ միտս ունիցի՝ կարէ զայս յերկբայս արկանել։ Ի՞նչ՝ զդք յայժմուս չունիմք սովորութեամբ կամ պատուէր ինչ պահելի յիւրաքանչիւր Եօթնեւորդ ամի, նոքաւուր ինն թուի զեօթն ամն՝ մի Եօթնեակ կամ Եօթնեւորդ կոչել. վասն զի վարժեալ եմք զեօթնեակն զանազանել և բաշխել 'ի վերայ աւուրց։ Ի. Յլ առ Եբրայեցիս ոչ էր այսպէս. քանզի պարտաւոր գոլով նոցա յամենայն Եօթնեւորդ ամի, զոր վասն այնորիկ շաբաթական կոչէին՝ պահել ինչ ինչ պատուէրս կարևորս ըստ օրինաց իւրեանց, Եօթն Եօթն թուէին զամն, այնպէս որպէս և Եօթն Եօթն թուէին զաւուրս։ Ի՞ սոն որոյ Եօթանասուն Եօթնեւորդք՝ զորոց խօսի՝ աստ Հրեշտակն, կացուցանեն զթիւ 499 ամաց։

Ի՞ չիք երկբայութիւն, թէ այս ամք իմանին ըստ սովորական չափոյ ժամանակի։ Ի՞անզի Հրեշտակն խօսելով ընդ մարդոյ՝ մարդկօրէն վարէր զբառս, որպէս յայնժամ վարէին և իմանային մարդիկ. ուստի զայս 499 ամն հարկաւ իմանային ըստ այնմ չափու՝ ըստ որոյ էին ամք Եբրայեցւոց. ամք յիրեարս անհաւասար, բայց 'ի գումար բաղմութեամբ հաւասար լրացեալ ամաց. որպէս եթէ մեք չափեաք զամն զատկէ 'ի զատիկ. զոք թէպէտ ուրոյն ուրոյն առեալ անհաւասար են, բայց բաղմութիւն նոցա միանգամայն հաւասար է սովորական ամաց։ Ի՞ւ յասել Հրեշտակին՝ թէ Եօթնեւորդքն լինիցին համառօտեալ, ոչ նշանակէ թէ ամքն համառօտ լինիցին քան զսովորականն, այլ թէ թիւ Եօթնեւորդաց ոչ լրասցին. վասն զի 'ի կէս վերջին Եօթնեւորդի մեռաւ քն։

Ի՞ թէ անուամբս օծեալ իմանի քն փրկիչ մեր, այնչափ յայտնի է թէ՝ յԱծայնին գրոց, թէ՝ 'ի

հասարակաց հաւանութիւն մատենագրաց, և թէ՝ 'ի յարմարելոյ այլում անձին բանից յայտնութիւն դանիելի, զի և պատասխանելոյ անգամ չէ արժանի՝ որ զքեզ յայլ միտս իցէ զայնմանէ։ Օ՜ումի՞ այլմի 'ի մարդկանէ հնար իցէ ասել՝ թէ՝ վախճան արասցէ մեզաց, և անօրէնութեց. որ է ասել թէ հաղորդելոյ իւրոց պաշտօնէից. իշխանութիւն արձակելոյ 'ի մեզաց, և տալով 'ի ձեռս իւրոց փոխանորդի զվաւկանս ներողութեց՝ վախճան արարեալ իցէ չարութիւն մեզաց և պարտուց պատժոց, եթէ ոչ զՔո՞ զքեզ։ Զի՞ այլ զք բառնայ զսկզբնական մեղս, և ո՞ առնէ արժանաւոր հատուցումն ոչ վասն մեզաց ամենայն աշխարհի։ Յովհաննէս մկրտիչ կամեցեալ ցուցանել իւրոց աշակերտաց՝ թէ Նա՞ է մեսիայն խոստացեալ յԾծային դիրս, յայս յայտնութիւն ակնարկէ, և տայ 'ի միտ առնուլ թէ այս Նա՞ է այն՝ յորում վախճան եղիցի մեզաց, ընդհեսցին անիրաւութիւնք, և քաւեսցին ամպարշտութիւնք. զի այս է ասելն, * Ա՞հա գառն ոչ՝ որ բառնայ զմեղս աշխարհի ‖. յովհ. ա. 29։ Զի՞ 'ի մարդկանէ իցէ ազատ յամենայն մեզաց, և ունակ յաւիտենական արդարութեան, սակայն և այնպէս սպանցի իբրև մեղապարտ։ Ա՞պա ամենայն բանք պարունակեալք յայսմ յայտնութեան դանիելի՝ միայն 'ի վերայ քսի տան մերոյ ձգմարտին։

Հասարակաց կարծիք է և այն, թէ ժամանակն յորում նշանակի օծեալն առաջնորդ, ոչ հայի 'ի ծնունդ տան մերոյ, այլ 'ի մկրտութենն։ Զարդեպ յորժամ չափին ժամանակք թագաւորաց, զորօրինակ փիլիպպոսի, կամ աղէքսանդրի, բառս Նոփաառոր որոշէ զամն ոչ ծնդեան նոցա, այլ զթագաւորելոյն. ըստ այսմ յասել անդ * ցօծեալն առաջնորդ ‖, բառս Ա՞ռաջնորդ որոշէ իմանալ զամն՝ յորում քն հանդիսիւ հրատարակեցաւ առաջնորդ. և այս եղև յաւուր մկրտութեան իւրոց. յորժամ քացան 'ի վերայ նորա երկինք. հոգին որ 'ի նմանութեի աղաւնոյ էջ 'ի վերայ նորա. և լսելի եղև ձայն յերկնից 'ի հօրէ, որ ասաց դա է որդի իմ սիրելի ընդ որ հա-

ՁԵցայ. Մարկ. Գ. 16. 17։ Լաւ այս ձայն լսելի եղև այնչափ բազմութեան, որ բաւական էր առ հանդիսական հրատարակու

մահ փրկչին եղև 'ի յորեքշաբթի ուրբաթուն երորդ եօթներորդ սմի՝ 'ի մուտս եօթանասներորդ եօթներորդաց ըստ յայտնելոյ հրեշտակին։

Զի պարտ փոյթ ինչ ունել վասն կիսոյ եօթներորդին, այսինքն վասն յորից անլրացեալ ամաց, որք մնան զկնի մահու փրկչին. քանզի նա ինքն հրեշտակն նշանակէ զայն յասելն, թէ եօթանասուն եօթներորդք ոչ եղիցին ամբողջ, այլ՝ համառօտեալ. կամի ասել թէ մահ փրկչին ոչ հասանիցէ յյորեքշաբթի ինն սուն ամ, այլ քանի մի ամաք յառաջ եղիցի։ 'Ի պատճառս այսոցիկ եօթանասուն եօթներորդաց, յաւելու հրեշտակն գուշակել և զպզծութիւն և զաւերատաճարին և քաղաքին, ոչ իբր իբս լինելիս 'ի մէջ այնց եօթանասուն եօթներորդաց, այլ յետոյ. թէպէտ 'ի յայտնութիւն կանխէ խօսիլ զայնմանէ, առ 'ի մերձ դնել մեղացն հրէից՝ զոր մեղան 'ի մահն քրիստոսի, և զպատիժն զոր ընկալան՝ յաւերիլ սպառ սպուռ քաղաքի նոցա և տաճարի։ Այս է արտաքոյ երկբայութիւն, թէ ժողովուրդն առաջնորդաւն հանդերձ՝ որ արար զայն աւերած, էր ժողովուրդ հռովմայ առաջնորդութիւն տիտոսի. բայց զժամանակն ոչ նշանակէ հրեշտակն։

Հուսկ յետոյ ամենայնիւ քաջայայտ է, թէ այս մարգարէութիւն ճշմարտեցաւ ըստ ամենայն մասանց. և որչափ ջանայցէն հրէայք ընդդէմ մաքառիլ, ոչ կարէն գտանել ելս փախստեան. զի լինել նոցա ցայս ուրբաթասներորդ դար առանց տաճարի, առանց սեղանոյ, առանց քաղաքի, առանց մարգարէի, գերի և 'ի նախատինս ամենայն ազգաց, է անդիմադարձ ապացոյց կատարման ամենայն բանից հրեշտակին. և տակաւին կատարի և այն, զոր ասէ վասն աւերածոց նոցա մինչ ցվախճան ժամանակի. * Այս մինչև 'ի վախճան ժամանակի կատարած տացի 'ի վերայ աւերածին ||։

Այդեալ զծանօթութիւնս զայսոսիկ 'ի բացայայտութիւնի եօթանասուն եօթներորդաց համառօտե-

լոց, այսինքն ամենց չորեքհարիւր ութսուն և եօթանց. և ցուցեալ զնոսին ուր կատարին այսինքն 'ի մահն Քրիստոսի, և հաստատեալ զիրսն որք են արտաքոյ հակառակութեան, ժամ է արդ անցանել 'ի ցուցանելոյ զսկիզբն՝ թէ ուստի սկսանին. որ է մի միայն նիւթ յորում հակառակին մտաբերագիրքն. և որպէս կարծեմք և ոչ յայտմ հակառակին, եթէ խնդրեսին լոկ զվկայութիւս զոր ունիմք յածային գիրս։ Զայս խնդրի թէ որ եղև առաջին ամ 'ի չորեքհարիւր ութսուն և եօթն ամենց անտի։

Նրեշտակն ասաց առ Դանիէլ, թէ այն է՝ յորում ելցէ բան հրամանի կամ հրովարտակ, զի վերստին շինեսցի երուսաղէմ քաղաք. * Դիտասցես և խելամուտ լիցիս . . . յելից բանին 'ի շինելն երուսաղէմի մինչև յօծեալն առաջնորդ եօթներորդ եօթն և եօթներորդ վեցթսուն և երկու և այլն ॥։ Զայլ քանզի չորս հրովարտակս գտանեմք յայլ և այլ ժամանակս եղեալ, վասն այնորիկ և մտաբերագիրքն բաժանին. ոմանք 'ի միոյ 'ի հրովարտակաց անտի, և ոմանք 'ի միւսոյն սկսանին զառաջին ամ եօթներորդացն դանիէլի։ Զառաջին հրովարտակն էր 'ի կիւրոսէ յառաջնում ամի թագաւորելոյ նորա 'ի բաբելոն։ Զերկրորդն 'ի դարեհէ վեցտասներեան յամին երկրորդի կամ երրորդի թագաւորութեան նորա։ Զերրորդն յերկայնաձեռն արտաշիսէ յամին եօթներորդի։ Զոկ չորրորդն դարձեալ 'ի սոյն արտաշիսէ 'ի քսաներորդ ամի թագաւորութեան նորա. այս ամենայն հրովարտակք քաղին, կամ ասին քաղել 'ի գլոյն եզրասայ։ Որ 'ի դարեհէ սկսանի զեօթներորդս, այնդէ թէ հրովարտակ կիւրոսի էր միայն վասն շինութեան տաճարին, և ոչ վասն քաղաքին։ Որ սկսանի յառաջնոյ հրովարտակէ արտաշիսի, այնդէ թէ հրովարտակ դարեհի էր լոկ հաստատութեան հրովարտակին կիւրոսի, և միայն վասն տաճարին։ Որ սկսանի յերկրորդ հրովարտակէ նորին արտաշիսի, այնդէ թէ նովին հրովարտակաւ միայն շինութիւն քաղաքին ընդհի։ Սակայն իրօք ամենեքին նոքա՝

որք զսկիզբն եօթնեերորդաց դնեն զկնի կիւրոսի, ըստ կասկածելոյ կաղենոսի առաւել շարժին 'ի վկայութիւն արտաքին մատեանադրաց, քան 'ի վկայութիւն ներսային գրոց. և ջանահնար լինին պէտպէս մեկնել զներսային գիրս, և ոչ կամին թէ գտցի 'ի նմա հրովարտակ կիւրոսի վասն շինութիւն քաղաքին Երուսաղէմ. քանզի եթէ ճշմարտութիւն ելեալ իցէ 'ի կիւրոսէ այնպիսի հրովարտակ, ևս առաւել եթէ նաև 'ի գործ եղեալ իցէ, անժխտելի թուի թէ անտի պարտ է առնուլ զսկիզբն եօթնեերորդաց, և ոչ յետոյ քան զայն։

Լ.ԲԴ՝ ասէ կաղենոս՝ ես անտի սկսանիմ ուշիուշով զննելով զամենայն բանս հրեշտակին։ Յետասնեմ զի խօսի նա զեօթանասուն եօթնեերորդաց ոչ լրացելոց. ապա բաժանէ 'ի յեօթն, և 'ի վաթսուն և երկու և 'ի կէս։ Սկիզբն առնեմ յառաջնոյ մասնէ։ Հրեշտակն ասէ առ դանիէլ. "Լ.ԲԴ՝ ամ զմտաւ զբանդ, և 'ի միտ առ զտեսիլդ, եօթանասուն եօթնեերորդք համառօտեցան 'ի վերայ ժողովրդեան քոյ։ Լ.ստ տակաւին ոչ խօսի վասն հրովարտակին, և ոչ վասն շինութեան. այլ ասէ արձակաբար. դանիէլ՝ ուշ դիր և 'ի միտ առ։ Մինչև ժողովրդեան քո ամք չորեքհարիւր. իննսուն ոչ ամբողջք ցօծանիլ. այսինքն ցհրատարակիլ սրբոյն սրբոց առաջնորդ։ Լ.պա 'ի խօսելոյ հրեշտակին առ դանիէլ՝ մինչև ցօծանիլ սրբոյն սրբոց, այսինքն մինչև ցմկրտութիւնն Յ.նի, պարտ էր անցանել փոքր ինչ պակաս 'ի չորեքհարիւր իննսուն ամաց։ Լ.թէ սկսանիցիմք թուել զամս 483. այսինքն եօթնեերորդս վաթսուն և ինն՝ յառաջնոյ ամէ կիւրոսի, յաւելեալ 'ի վերայ զերկու ամս ոչ ամբողջս, որք անցին 'ի մէջ խօսելոյ հրեշտակին, և հրովարտակի կիւրոսի, լինին ամք 485. այս են եօթնեերորդք եօթանասունք համառօտեալք, այսինքն ոչ լրացեալ։

Լ.թէ սկիզբն 483 ամաց, կամ վաթսուն և ինն եօթնեերորդաց՝ կասէսցի առ դարեհիւ, կամ առ արտաշէսիւ, բազմաք առաւելուն եօթանասուն

եօթներորդքն, այսինքն 490 ամքն։ Այս առ 'ի պահել զնշմարտութիւն հրեշտակին՝ որ խօսի ընդ Դանիէլ, չէ մնրթ ձգել զսկիզբն 'ի հրովարտակս յետինս քան զհրովարտակ կիւրոսի։ Եւ ասաց հրեշտակն իբր ապագայ իրս ինչ * եօթանասուն եօթներորդք համառօտեսցին ||, այլ ասաց * հաստատեցան ||. և բնական իմաստ բառին ըստ ձևոն այս է. մնան այլևս եօթանասուն եօթներորդք. և բառս մնան ըստ բնական իմաստից սկսանի յասելոյ անտի հրեշտակին. և չկայ ինչ հարկ 'ի բաց թողուլ զայս բնական իմաստ։ Զ ասն որոյ կաղինոս զառաջին սկիզբն այնց եօթանասուն եօթներորդաց դնէ 'ի նմին ժամանակի, յորում յայտնեաց զայն հրեշտակ. և այնպէս 'ի ժամանակէ անտի յայտնութենն մինչև ցմահ Քրիստի՝ անցին ամք չորեքհարիւր և ութսուն և ինն ոչ լրացեալ։

Այս դնէ նա ինքն կաղինոս զայլ երկրորդ սկիզբն. և է սկիզբն տրամաբաշխութեան եօթներորդացն երկու ամքք յետոյ քան զհրովարտակ կիւրոսի. * Գիտասցես և խելամուտ լիցիս յելից բանին 'ի շինելն երուսաղէմի մինչև ցօծեալն առաջնորդն եօթներորդք եօթն, և եօթներորդք վեցասուն և երկու ||։ Յետ յայտնելոյ հրեշտակին առդանիէլ թէ մինչև ցօծեալն առաջնորդ մնան ընդհանրապէս եօթներորդք ամաց ոչ լրացելոց՝ եօթանասուն, յաւելու տալ նմա առաւել մանր տեղեկութիւն. այսինքն թէ յետ ելանելոյ հրովարտակին՝ զի շինեսցի երուսաղէմ, մինչև ցՔրիստ առաջնորդ անցանիցեն եօթներորդք ամաց եօթանասուն։ Այսոսիկ եօթանասուն եօթներորդս սկսանի կաղինոս 'ի հրովարտակէ անտի կիւրոսի. և ցուցանէ թէ կիւրոս եհան հրովարտակ, զի միւսանգամ շինեսցի երուսաղէմ քաղաքն. և այս ասէ ոչ ցուցանի յարտաքին մատենագրաց, այլ յեսայեայ մարգարէէ։ Այծ բերանով նորա խօսի այսպէս. * Որ ասեմ ցկիւրոս, թէ իմաստնասջիր և զամենայն կամս իմ արասցես ||։ Այս որ էն այն

կամք. ոչ ապաքէն շինութիւն քաղաքին Երուսաղէմի, և հաստատութիւն տաճարին. զի 'ի վերայ բերէ, * Որ ասէ՝ ցԵրուսաղէմ, թէ շինեսջիր, և զտաճարն իմ՝ որ հաստատեցից. (ուր լատինն ընթեռնու հմմտաձայն Երբայականին, և ցտաճարն իմ թէ հիմնեսջիր) ։ Եսայ. խդ. 28։ Զ.մէլ յայտնի ևս 'ի գլ. խէ. 13. խօսելով զկիւրոսէ՝ ասէ. * 'Լա շինեսցէ զքաղաքն իմ, և զգերութիւն ժողովրդեան իմոյ դարձուսցէ ։

Զ.պա ուրեմն պարտ է հաստատ ունել զայս ճշմարտութիւն, թէ կիւրոս շինեաց զերուսաղէմ, յայտ է թէ՝ ոչ իբր ճարտարապետ կամ գործաւոր. և ոչ իսկ իբր լուսեւորն թագաւորութիւն վարելով, և չխափանելով զշինութիւնն. այլ շինեաց՝ պարզապէս հրամանն հանելով շինութեան՝ արքունի իշխանութիւն. զորօրինակ և թագաւորք ասին շինել՝ հանելով հրովարտակ, զի շինեսցի այս կամ այն ինչ։ Գ.իտեմ, զի իշխեցին ոմանք ասել՝ թէ զբան եսայեայ պարտ է իմանալ զբարոյական, և զքաղաքական շինութիւն, և ոչ զնիւթականն. ըստ որում կիւրոս կացոյց երբայեցւոց իշխանս և դատաւորս, և կարգ քաղաքական տնտեսութիւն։ Բայց այդ մեկնութիւն է փոխաբերական, և ոչ ըստ ճառին և բնական. ըստ այդմ մարթ էր մեկնել և զբան հրեշտակին։ Զ.սէ հրեշտակն առ դանիել, * Ելից բանին, զի վերստին շինեսցի երուսաղէմ։ Զ.սէ ոճ առ եսայեայ՝ խօսելով զկիւրոսէ. * 'Լա շինեսցէ զքաղաքն իմ։ ։ Այ կայութիւնքն համաձայն են, ապա և իմաստն միօրինակ է պահելի։

Հրովարտակ կիւրոսի չեղև անգործ։ Հրեայք որք առ կիւրոսի խաղացին ընդ զօրաբաբելի 'ի բաբելոնէ յերուսաղէմ, շինեցին զքաղաքն։ Զ.ուայս ունիմք ականատես վկայս երևելիս՝ զիշխանս կարգեալս 'ի վերայ գաւառաց որ յայնկոյս եփրատայ։ 'Լրա կամեցեալ խափանել զշինութիւնն զայն ոչ իշխեցին գրել ինչ առ կիւրոս, այլ ջանացան՝ զմեծամեծս արքունեաց որսալ։ Զ.պա իբրև մեռաւ

կիւբոս, գրեցին առ յաջորդ նորա, և առ յաջորդ յաջորդի, թէ շինի քաղաքն՝ օրինակ զայս. Պիտուլեցի լեցի ազգայն զի հրեայք որք ելին 'ի քէն առ մեզ, եկին յերուսաղէմ, քաղաք ապստամբ և չարագործ, զոր շինեն կանգնելով զպարիսպս նորա, և զորմունս յարմարելով ։ Արդեսն ասի՝ յերկրորդ գիրս եզրի. Բ. 12։ (Արդ այս համար 12. որպէս և նախընթացն 11. պակասին 'ի գրչագիր օրինակս մեր։)

Այս ամբաստանութիւն արժան է խնամով քննել յառաւել քացայայտութեան մերումն առաջարկութեան։ Որ գրեցին կիւբոսի. վասն էր. զի գիտէին թէ շինութիւնն այն էր ըստ հրովարտակի և ըստ կամաց նորա։ Պիտեցին առ ասարսոյերը, որ ըստ արտաքին մատենագրաց էր կամբիւսէս որ. զի կիւբոսի, բայց ընկալան 'ի նմանէ և ոչինչ. զի ընական է որդւոյ լեզծանել զհրովարտակ հօրն։ Պիտեցին առ յաջորդ ասարսոյերու, որ էր Արտաշէս առաջին (ըստ արտաքնոց որոպաստոս. և մերգէս անուանեալ,) որ անիրաւութիւն յափշտակեաց զթագաւորութիւն։ Ի նմանէ ընկալան հրաման արգելուլ զշինութիւն. վասն զի ոչ էր նա 'ի տոհմէ և յարենէ կիւբոսի. նմին իրի ոչինչ փոյթ եղև նմա պահել անխախտելի զհրովարտակ նորա։ Ի նոյն իսկ 'ի բանից ամբաստանութեանն յայտնի է՝ թէ շինուածն այն լինէր կամաք կիւբոսի։ Որ գրեն, թէ հրեայք ամրացուցանեն զերուսաղէմ առանց թագաւորական հրամանի։ Որ գրեն, թէ խնդրեսցին վասն այսր հրովարտակք 'ի թագաւորական գիւանի. այլ միայն թէ հայեսցին 'ի յիշատակարանս անցեալ ժամանակաց, և գտցեն զի քաղաքն այն միշտ ապստամբ եղև. և հակառակ թագաւորաց, և արմատ մշանջենաւոր պատերազմաց. Բ. Եզր. Դ. 15։ Որ ամենայն զինքնիշխանաբար ձեռնեարկութեան շինութեանն, այլ միայն զմնասս՝ զոր ունէր կրել թագաւորութիւն, եթէ կատարեսցի շինութիւն քաղաքին։

Իշխանքն այնոքիկ թշնամի էին հրէից, եթէ

կարող լեալ էին գրել, թէ առանց վաւերական իշխանութեան շինեն նոքա, ապաքէն անվրէպ 'ի գլուխ հասանէր չարութեան նոցա. զի ունէին ցուցանել զհրէայս յանցաւորքրիստեան յանցանաց։ Բ. Այլ ոչ ասացին խնդրել զհրովարտակս. քանզի գիտէին, թէ ունին գտանել զնպաստաւոր հրովարտակն կիւրոսի արքայի. և իրաւք գոյր այն հրովարտակ. (զոր մէջ և գտնի)։ Այսու պատասխանին՝ զոր ետ արտաշէս ամբաստանողաց, ցուցանէ թէ շինութիւն երուսաղէմի լինէր արքունի հրովարտակաւ. զի ասէ, "Բ. Դ՝ երթայք արդ ելէք և խափանեցէք զգործս նոցա, զի մի շինեսցի քաղաքն. և մի ներէք նոցա և մի թողացուցանէք. (ուր լատինն համաձայն երբայականին և ասորւոյն ընթեռնու. մինչև գուցէ յինէն հրաման տացի)։ Ե. Եզ. Դ. 20. 21։ Զի՞նք սպառնալիք, ո՞չ պատիժք 'ի վերայ ածին, ո՞չ հրամայէ՝ զի քակեսցին ամրութիւնքն արարեալք, այլ լոկ պատուէր առաքի դադարիլ 'ի շինութիւն։ Այլ թէ այն ամրութիւնք չէին արարեալ թագաւորական իշխանութիւն, ուր էր այն յանցանք այնպիսի, զորով բռնակալն այն արտաշէս այսչափ ներողութիւն անցանիցէ։

Բ. Ո այս զօրաւոր ձեռնարկութիւն բաղումք տան պատասխանի, թէ իշխանքն այնոքիկ սուտ գրեցին վասն հրէից շինել զքաղաքն, զի նոքա միայն զտաճարն շինէին։ Այլ 'ի զուր. զի ըստ որ գրոց՝ պաշտօնեայք թագաւորութեան բաբելոնի եկեալ անձամբ տեսանել աչօք իւրեանց զգործն հրապարակական, յայտնի, մնայուն 'ի տես ամենայն աշխարհի, գրեն թագաւորին՝ թէ հրէայք շինեն զպարիսպս. եթէ արդարև սուտ գրեալ էր նոցա զայն, նոյն ինքն գործն ունէր յանդիմանել զստութիւն նոցա. և մեք յետ այսչափ դարուց իշխեցեմք պնդել, թէ սուտ գրեցին։ Ուր 'ի բովանդակ գիրս եզրի, որ մանրամասն գրէ զամենայն պատմութիւն, ոչ ուրեք գտանեմք ասել, թէ իշխանք ծանուցանելով թագաւորին զշինութիւն պարսպայ երուսաղեմի՝ սուտ գրեալ իցեն։ Այլ տեսցուք թէ հրո-

վարտակ կիւրոսի լոկ գուշակելով քաղի յուծային գրոց, թէ նաև իրօք դատնի 'ի նմա։

Ի ժամանակս դարձեալ վերատապեայ, որ յաջորդեաց զկնի արտաշիսի առաջնոյ, ըստ խնդրոյ թագաւորաց իշխանի կողմանց գեղոյն՝ խնդրեցաւ հրովարտակն կիւրոսի. և գտաւ 'ի թագաւորական դիւանի եկբատանայեաց. և ահա կայ նշանակեալ 'ի գիրս Բ. Եղբ. Հ. Ն. օրինակ զայս. "Յամին առաջնում կիւրոսի, կիւրոս թագաւոր հրաման եհատ վասն տանն ՅՈՒ որ յերուսաղէմ, ասէ, շինեսցի տաճարն ՅՈՒ, ուր զոհեն զզոհսն ՅՈՒ. և եհատ չափ բարձրութեան կանգուն վաթսուն. և լայնութեան կանգուն վաթսուն։ Զ այս բան հրովարտակին լատինն յաւելուածով ընթեռնու համանայն երբայականին, այսպէս. "Կիւրոս թագաւոր հրաման եհատ զի տուն ՅՈՒ շինեսցի ... և զի դիցեն հիմունս բարձողս բարձրութեան կանգնոց վաթսնից. և լայնութեան կանգնոց վաթսնից։ Զ այս այսպէս ընթերցեալ տեսանեմք աստ տաճար։ Քաղաք։ Տաճարն յայտնի է. քաղաքն յանուանէ ոչ յիշատակի. այլ հարցանեմք զինչ օրէն կամ պարիսպ իցէ այն, զորոյ զբարձրութիւն և զլայնութիւն սահմանել թագաւորն վաթսուն կանգուն. "Դիցեն ասէ հիմունս բարձողս բարձրութեան կանգնոց վաթսնից, և լայնութեան կանգնոց վաթսնից։ Պարիսպ կամ օրէն լայն վաթսուն կանգուն զինչ այլ շինուածոյ կարիցէ պատշաճիլ, բայց քաղաքի կամ բերդի։ Այլ չէ մարթ ասել, թէ աստ խօսի յաղագս բոլոր մեծութեան շինուածոյ տաճարին, և ոչ սոսկ վասն լայնութեան որմոցն։ Վասն զի այդ ոչ է ըստ ճառին և բնական մեկնութեան գրոյն. ապաքէն հիմն որ բառնայցէ 'ի վերայ բարձրութի և լայնութեան վաթսուն կանգուն, բնապէս իմացեալ՝ յայտ առնէ վերամբարձ ունել պարիսպ այսչափ բարձր, և այսչափ լայն։ Այլ եւ եթէ կամեցեալ էր արքայի խօսել յաղագս բուսական ընդարձակութեան տաճարին, կարի անկատար և կրճատ լինէր հրովարտակն իւր։ Տայ զչափ բարձրութեան և լայնութեան. իսկ զերբորդ հարկաւոր չափն՝

որ է երկայնութիւն, ուր թողու։ Զէ խօսի զայնմանէ. վասն զի չափ շրջապատ պարսպաց քաղաքի է տարածութիւն քաղաքին՝ զորով պատէն։

Կիւրոս արքայ բաց 'ի հրովարտակէ զորմէ յարդ խօսեցաք, գրեաց և՝ շրջաբերական գիր, և առաքեաց ընդ ամենայն երկիր թագաւորութիւն իւրոյ. * Լ,ստ հրամանն պատուիրանի յամենայն թագաւորութիւն իւրում, և գրեաց առ ամենեսեան ||. և այսպէս։ Օ,այս գիր մեկն և որոշ յիշէ եղը յառաջին գլուխ երկրորդ գրոց իւրոց. ուր նշանակէ և զպարունակեալն 'ի նմա, որ է միայն վասն շինութեան տաճարին. և անդ ոչ բերէ 'ի մէջ զհրովարտակն, զի մի երկու անգամ գրեսցէ զայն. լաւ ևս և ճաշողագոյն վարկանելով յիշատակել, որպէս և յիշատակեաց 'ի վերջերորդ գլուխն։ Լ,այց յառաջքան զնշանակել զշրջաբերական գիրն՝ տայ յայտնի նշան և զհրովարտակէն վասն շինելոյ քաղաքին, ասելով. * Յառաջնումամին կիւրոսի արքայի պարսից 'ի կատարել բանին տէն, (կամ ըստ լատ. զի կատարեսցի բան տէն) 'ի բերանոյ երեմիայի մարգարէի, զարթոյց տէր զոգին կիւրոսի թագաւորին պարսից, և եհտ հրամանն պատուիրանի յամենայն թագաւորութիւն իւրում, և գրեաց առ ամենեսեան ||։ Զնոնեսցուք զբառսն. * 'Ի կատարել բանին տէն 'ի բերանոյ երեմիայի ||։ Լ,այս ուրեմն կիւրոս արար հրովարտակ, որով արգիլեցաւ խոստումն տէն 'ի բերանոյ երեմիայի։ Լ,ս զի՞նչ էր այն խոստումն, բայց զոր նշանակեացն երեմիա այսպէս. Ը. 18. * Լ,յսպէս ասէ տէր, ահնուասիկ ես դարձուցից ըզվտարանդութիւն յարկացն յակովբայ, և գերութիւն նորա ողորմեցայց. և շինեսցի քաղաքն 'ի բարձրութիւն իւրում. և տաճարն ըստ իրաւանց իւրոց կանգնեսցի. (ըստ լատ. ըստ կարգի իւրում հիմնեսցի)||։ Ցեսանեա՞ զի խոստումն եղեալ 'ի ձեռն երեմիայի՝ է կրկին. այսինքն թէ շինեսցի վերին քաղաքն, և տաճարն կանգնեսցի։ Իսկ արդ հրովարտակ կիւրոսի եղև 'ի լրումն խոստմանն եղելոյ 'ի ձեռն երեմիայի, * 'Ի կատարել բանին տէն 'ի բերանոյ ե-

բեմիայի ։ Լ.պա հրովարտակ կիւրոսի ոչ եղև լոկ վասն տաճարին, այլ նաև վասն քաղաքին, զի թէ վասն վերին քաղաքին։ Կարի 'ի գէպ գայ այսմ շինուածն արաբեալ 'ի նեհեմեայ, զորմէ 'ի վեր անդր խօսեցաք. ուր տեսանեմք զի 'ի մանրամասն ստուգագրութեանն՝ վերին քաղաքն, այսինքն մասն ոչ կոչէր սիոն, և միւս մասն կոչեցեալ մելոն՝ բնաւ ոչ յիշատակի 'ի շինուածսն յայնոսիկ. և 'ի նախագրեալ վկայութեէ երեմիայի գտանեմք զվասն էրն. վասն զի այն շինուած արգէն շինեալ էր 'ի ձեռն հրովարտակին կիւրոսի։

Լ.ստ հմտառօտին ձեռնարկութիւնքս 'ի մի՝ այսպէս։ Լ.ռ եսայեայ երկիցս ասէ՝ թէ՝ կիւրոս շինեսցէ զքաղաքն երուսաղէմ. առ երեմիայի թէ շինեսցէ զվերին քաղաքն երուսաղէմի. եզը ասէ թէ՝ հրովարտակ կիւրոսի է 'ի գործադրութիւն ըստ խոստմանն եղելոյ յոյ առ երեմիա։ Խշնանք գաւառաց ակնատես վկայք գրեն յարքունիս բաբելոնի, թէ՝ երուսաղէմ քաղաքն նեռգործութիւն շինի. յարքունեաց գայ արգել, բայց ոչ հրամանն կործանելոյ։ Գտանի հրովարտակ կիւրոսի, յորում հրամայէ զի արկցին հիմունք վաթսուն կանգուն լայն և բարձր պարսպի։ Լ.յսչափ վկայութիւնք տաճային գրոց անհիմն լինիին, եթէ կիւրոս չարար հրովարտակ վասն շինութեան երուսաղէմ քաղաքի։ Լ.պա արար կիւրոս հրովարտակ վասն շինութեան քաղաքին։ Հրեշտակն ասէ թէ՝ * յելոց բանին՝ զի միւսանգամ շինեսցի երուսաղէմ, մինչև ցօծեալն առաջնորդ՝ եօթնեռորդք եօթն, և եօթնեռորդ վաթսուն և երկու ։ եղեցին. ապա վաթսուն և ինն եօթնեռորդք առնուն սկիզբն յառաջին ամի կիւրոսի։ Լ.ըդ՝ դարձցուք միւսանգամ լսել հրեշտակին՝ որ ասէ. * Լ.ւ դարձցին և շինեսցին հրապարակքն, և պարիսպք յանձուկ ժամանակի։ Լ.ւ յետ վաթսուն և երկու եօթնեռորդաց բարձցի օծեալն ։։ Դարձցին ասէ ձեռնարկել անդրէն 'ի շինուած, և շինեսցին հրապարակք և պարիսպք քաղաքին 'ի սուղ ժամանակի. և յետ վաթսուն

և երկու եօթներորդաց սպանցի Ի՛նչ։ Բեր ըստ կաղենսոն, ոչ զք կարէ երկուանալ, եթէ այս շինուելոյ Երուսաղէմ քաղաքի յանձուկ ժամանակս այն իսկ է, որ շինեցաւ 'ի նեմեայ 'ի քառասերորդամի արտաշիսի երկրորդի յաջորդին դարձի. որով հետև՝ որպէս տեսաք 'ի վեր անդր, զցայգ և զցերեկ գործելով, շրջապատ քաղաքին սկսաւ և կատարեցաւ 'ի յիսուն և երկու աւուրս։ Լ՚ստ հրեշտակն սկսանի ոչ զեօթանասուն, և ոչ զվաթսուն և ինն եօթներորդս, այլ միայն զվաթսուն և երկու եօթներորդս. * Շինեսցի... 'ի յանձուկ ժամանակս։ Լ՚ս յետ վաթսուն և երկուց եօթներորդաց բարձցի սպանցի օծեալն։ Լ՚թէ եօթանասուն եօթներորդք սկսանին 'ի քառասերորդ ամի արտաշիսի, առ 'ի ժամանել 'ի յեօթանասներորդն, յորում մեռաւ Ի՛նչ, ինան վաթսուն և ինն. և այսպէս հարկաւորի ասել նա՝ որ յարտաշիսէ ասի սկսանի թուել։ Լ՚այլ հրեշտակն ասա միայն վաթսուն և երկու ասէ. * Յետ յետ վաթսուն և երկուց եօթներորդաց։ և ոչ ասէ վաթսուն և ինն։

Լ՚սկսեա՝ եօթն այլ թիւք իմանին 'ի նմա։ Պատասխանի. յառաջ քան զշինութիւն. * յանձուկ ժամանակս։, ոչ միայն իմանին, այլև յայտնի ասին. * Յելից բանին՝ զի շինեսցի երուսաղէմ, ցօծեալն առաջնորդ եօթներորդք եօթն, և եօթներորդք վաթսուն և երկու։ Լ՚այլ զկնի շինուածոյն * յանձուկ ժամանակս։, հրեշտակն ասէ՝ * յետ վաթսուն և երկուց եօթներորդաց։. ուր եօթն ևս զօրութիւն իմանալ կամ յաւելուլ 'ի վերայ, է բրանաբարել զգիրն։ Ասան որոյ կաղենոս զեօթանասուն եօթներորդս համառօտեալս, այսինքն զ489. ամս սկսանի 'ի խօսելոյ հրեշտակին առ դանիել։ Լ՚սաի մինչև ցառաջին ամ կիւրոսի, անցին ամք երկու. և յառաջնոյ ասաի ամ կիւրոսի սկսանի զվաթսուն և ինն եօթներորդս. այսինքն զամս չորեքհարիւր և ութսուն. և երիս մինչև ցմկրտութիւն Ի՛նի նոն մերոյ։ Լ՚ռաջին եօթն եօթներորդք, այսինքն ամք քառասուն և ինն՝ ըստ նորին կաղե-

նոսի՝ սկսանին յառաջնոյ ամէ կիւրոսի. և աւար-
տին 'ի քսանեբորդ ամի արտաշէսի. և ցշինութէ
պարսպայ. * յանձուկ ժամանակս ‖ : Ի շինութէ
աստի սկսանին վաթսուն և երկու եօթնեբորդք,
այսինքն չորեք հարիւր երեսուն և չորք ամք՝ մինչև
ցմկրտութէնն : Ի մկրտութէ աստի սկսանի զվերջին
եօթնեբորդն, այն են ամք երեք անցեալք, և չորք
ոչ լրացեալք. և 'ի կէս այսր եօթնեբորդի եկն
Տէրն և փրկիչն մեր կամաւ 'ի խաչ :

Հաստատին ցայսվայր ասացեալքս և այլ իմն
խորհրդածութիւն : Յորժամ հրեշտակն արար զայս
յայտնութիւն դանիէլի, յայտ է թէ կամեցաւ մխի-
թարել զնա, որպէս ցուցանէ և գիրն, ծանուցա-
նելով զժամանակ գալոյ մեսիային. ապա 'ի բանս
հրեշտակին որ առ դանիէլ՝ ցուցանի ժամանակն :
Լ,թէ եօթնեբորդքն սկսանիցին 'ի ժամանակէ ան-
ուի խօսելոյ հրեշտակին առ դանիէլ, դանիէլ լինի
տեղեկացեալ հաւաստեաւ. իսմանայ թէ մինչև
իցեն անցեալ ամք չորեքհարիւր և ինսուն, գայ
մեսիայն. և 'ի վերջին եօթնեբորդս մեռանի : Զի-
ա՛ռ, նա ինքն դանիէլ, թէ մնայ տակաւին ամ մի
գերութէն. գիտէ զի կիւրոս եղիցի ազատիչ ժո-
ղովրդեան իւրոյ, և հանցէ հրովարտակ՝ որ ասա-
ցաւն 'ի հրեշտակէ, և նախագուշակեցաւ 'ի մար-
գարէից : Լ,ս ինքն դանիէլ եղիցի կենդանի, և
կարիցէ տեսանել զհրովարտակն աչօք իւրովք :
Լ,այս ամենայն յայտնի է. բայց եթէ այս չորեք-
հարիւր ինսուն ամք ոչ սկսանիցին 'ի խօսելոյ ան-
ուի հրեշտակին, այլ յետոյ հրովարտակին, և ինքն
ոչ գիտիցէ, թէ երբ ելանելոյ իցէ այն հրովար-
տակ, և ինքն ոչ ևս եղիցի կենդանի. զի՞նչ կա-
րիցէ դանիէլ գիտել և 'ի միտ առնուլ, կամ թէ՞
իմիք խելամուտ լինել, որպէս պատուիրէ նմա
հրեշտակն : Լ,րևի թէ յայսմ վառեալ ցանկութէ
իւրսմ գիտելոյ ինչ որոշ՝ գէթ խնդրեալ էր 'ի
հրեշտակէն ցուցանել նմա ժամանակ եղելոց հրո-
վարտակին : Լ,այց ոչինչ խնդրեաց. և չունէր իսկ
պատճառ խնդրելոյ. վասն զի հրեշտակն յայտնի

ծանոյց նմա թէ բովանդակ ժամանակն ամիսփեալ է յեսթանասուն եսթներորդս ոչ լրացեալս։

Ի վերայ այս ամենայն պատճառաց յաւելու կաղինոս և պատշաճողութիւն ինչ, բայց ոչ մնդէ։ Մինչեւ ասէ անհաւանելի երևի ինձ թէ ճծային գիրն կարգեալ առ Ինձ, ամն երեք հազար և աւելի պահելով հաստատուն զթիւ ժամանակաց, ապա 'ի մերձենալ մեր առ Ինձ՝ յայնժամ 'ի բաց թողուցու. և 'ի բաց թողուցու անդ, ուր երևի թէ որոշ ցուցանիցէ մեզ զթիւ ժամանակին։ Եթէ եսթներորդք դանիելի ոչ յարեսցին յառաջին ամ կիւրոսի, բոլոր հաշիւ գրոյն աղոտանայ. եթէ սկսանիցիմք 'ի դարեհէ, կամ յարտաշիսէ, ոչ գիտեմք յճծային գրոց թէ երչափ ժամանակք անցին յառաջնոյ ամէ կիւրոսի ցդարեհ. և երչափ ցարտաշէս. և խիստ իմն երևի թէ ՝ոչ գիրն այսպէս առ ոչինչ հատանիցէ զկարգ ժամանակագրութիւն իւրոյ. և մեք ստիպեցիմք խնդրել յարտաքինս՝ որք լի են ստութիւբ՝ զիւր պատգամն ճշմարտութիւն։ Ուր յարելով զեսթներորդս դանիելի յառաջին ամ կիւրոսի, ունիմք 'ի ՝ոչ գիրս հաստատուն ըզ-ժամանակագրութիւս յարարչութէ աշխարհի մինչև 'ի մահն Ինձի հն մերոյ։

Լու ևս քաջայայտ է սուտքրութիւն ճծային գրոյն՝ տալ մեզ զհաշիւ ամաց մերթ բաժանաբար և 'ի մանաւորի, և մերթ գումարմամբ։ Ուր առաջի առնէ զկարգ նշանաւոր անձանց, պահէ 'ի նոսա զկարգ ժամանակագրութիւն։ Լ.յսպէս առնէ 'ի նահապետս 'ի սկզբանէ աշխարհի մինչև 'ի մտանել յովսեփայ յեգիպտոս։ Լ.յսպէս առնէ 'ի թագաւորս յուդայ։ Լու ուր խառնակի այս կարգ, նշանակէ բազում բաժանմունս մանաւորս. ապա տայ զգումարն միանգամայն. այսպէս առնէ 'ի մոկոյ յերկիրն աւետեաց մինչև ցշինութիւն տաճարին. իսկ ուր չկը այս կարգ, միայն զգումար թուոյ ամաց գնէ։ Լ.յսպէս առնէ յամն մնալոյ եբրայեցւոց յեգիպտոս։ Լ.յսպէս 'ի գերութեան բաբելոնի։ Լ.պա գտանելով ասա նոյնօրինակ զգումար ա-

մաց մինչև 'ի մահն Ի՞նչ, ընդհանր իցէ հատանել զանկուածն, և կորուսանել զոր շահեցաք, ոչ ևս ունել յոյծային բանից զչափն ստուգեալ ժամանակին մինչև 'ի մահն ոմն և փրկչին մերոյ Ի՞նչ Ի՞նչ։

ԳԼ. Ի.

Լուծանին գիմաստրուն ընդդէմ նախընթաց գլխոյն։

Զ մեծայնի որ ինչ ասացաւ 'ի նախընթաց գլուխն է մարթ 'ի նոր գրոց հանել ինչ ընդդէմ այլ ընդդէմ դնի ինչ ինչ յարտաքին պատմագրաց։ 'Այս՝ զի կուրտիոս հաստատէ թէ 'ի կիւրոսէ մինչև 'ի դարեհ արշամայ դնին 'ի պարսս չորեքտասան թագաւորք. զորս եւսեբիոս և այլք յանուանէ յիշատակեն՝ նշանակելով և զամն թագաւորելոյ նոցա, օրինակ զայս։

Կիւրոս. ամ	30.
Կամբիւսէս	8.
Մոգք երկու եղբարք, ամիսս 7. կամ ըստ այլոց Դրտաշէս շմերտ. ամ	9.
Դարեհ վշտասպեայ 36. կամ	39.
Դսերքսէս ա՝. 20. կամ	21.
Դրտաւան. ամիսս 7. ըստ այլոց. ամ	8.
Դրտաշէս երկայնաբազուկ.	40.
Դսերքսէս բ՝. ամիսս 2. կամ ամ	4.
Սոգդիանոս, ամիսս 7. կամ ամ	1.
Դարեհ հարձորդի	19.
Դրտաշէս ուշեղ	40.
Դրտաշէս ոքոս 23, կամ	26.
Դսէս ոքայ 4, կամ	3.
Սոգոմանոս, որ է դարեհ արշամայ՝ յաղթեալ յաղէքսանդրէ	6.
Գումար ըստ ոմանց	222. 7։

Լ,թէ 'ի սոսա յաւելցին ամք 556. որք ըստ հասարակ կարծեաց անցին 'ի մեծէն աղէքսանդրէ մինչև 'ի Ս,Ն՝, լինին ամք 587. 9. և եթէ 'ի սոսա յաւելցին այլևս ամք երեսուն և երեք կենաց նոն մերոյ, լինին ամք 620. ուր կաղինոս եդ միայն ամն 487։

Երկրորդ՝ ստիրիկանոս և եւսեբիոս հաստատեն հասարակաց հաւանութիւն մատենագրաց, թէ առաջին ամ կիւրոսի 'ի բաբելոն անկանի 'ի յինեերորդ հինգերորդ ողոմպիադն։ Լ,ս այսպէս միջոտութիւն Ս,Ն՝ի գայր անկանէր 'ի հարիւրորդ եօթանասներորդ եօթներորդն, եթէ 'ի կիւրոսէ սկսանիցին եօթներորդք դանիելի. և սակայն որպէս եւսեբիոս, նոյնպէս և մեծագոյն մասն մատենագրաց դնեն զայն յերկերիւր և երկու ողոմպիադ։

Երրորդ՝ թուկիտիդէս կարի մերձաւոր ժամանակաւ՝ հաստատէ թէ թեմիստոկղէս հայրենակից իւր էանց առ քսերքսէս, որպէս և յառաջագոյն գրեալ էր առ արտաշէս. և դիոդորոս սիկեղացի ասէ, թէ այս եղև յեօթանասներորդ եօթներորդ ողոմպիադի. և այսպէս լինիին ութսուն և ութ ամք յետ առաջնոյ ամի կիւրոսի. իսկ կաղինոս դնէ 'ի քսանեերորդ ամի արտաշէսի քառասուն և ինն ամօք միայն յետոյ քան զառաջին ամն կիւրոսի 'ի բաբելոն։

Չորրորդ՝ մատենագիրք, որք կարգեն զժամանակագրութիւն աստեղաբաշխական ճանապարհաւ խաւարմանց լուսաւորաց՝ ամենեքեան հակառակ են կարծեացն կաղինոսի։ Լ,ս այս չէ փոքր ընդդիմութիւն. վասն զի ուր մանթիմանթիգասէս լինի առայացուցանել զժամանակս խաւարմանց, ընդդէմ կայն այնմ՝ երևի ընդդէմ կալ ապացուցական ձեռնարկութիւն։

Պատասխանէ կաղինոս. յորժամ արտաքին հեղինակք հակառակ են միմեանց, պարտ է մեզ կալ յաւէտ ընդ նոսա, որք յայս կամ յայն ինչ նիւթ միաբանին ընդ ոճայնն գրոց, քան ընդ այնոսիկ՝

որք հեռանան 'ի նմանէ, կամ սահիպեն տալ մեկ-նութիւն բանական։ Եւ դ՝ ընդունիմ, ասէ, ըստ հա-սարակաց կարծեաց, թէ մեծն աղէքսանդր երեք հարիւր յիսուն և վեց ամաց յառաջ ծնաւ, քան զծնունդ փրկչին մերոյ. և մեռաւ երեքհարիւր յի-սուն և ութ ամաց յառաջ քան զմահ Քրիստոսի։ Բայց բովանդակ գիւաբութիւնս յայսմ է, թէ քանի ամաց անցին յառաջնոյ ամէ կիւրոսի 'ի բաբելոն մինչև 'ի մահն մեծին աղէքսանդրի. կաղինոս դնէ ամս 129. իսկ այլք 237. վասն զի չեն միաբան մատենագիրք 'ի հաշուել զամս յաջորդացն կիւրո-սի մինչև 'ի դարեհ վերջին՝ որ յաղթեցաւ 'ի մեծէն աղէքսանդրէ։

Բնդ քանի ամս թագաւորեաց կամբիւսէս, յար-տաքին պատմագրաց չէ մարթ հաւաքել. վասն զի երոդոտոս դնէ թագաւորել նմա ամս եօթն. կտեսիաս ժամանակակից երոդոտոսի՝ ամս ինն և տասն։ Եւ քսերքսէս 'ի սակաւ ժամանակս թա-գաւորեաց անձամբ, և մեղելով գրեթէ հանապազ պատերազմ արտաքոյ պարսկաստանի, եթող թա-գաւորել 'ի պարս զորդի իւր զարտաշէս, հաւա-քի 'ի մատենագրաց անտի. որք թէպէտ խօսին զպատերազմաց քսերքսեայ, բայց այնպէս միացու-ցանեն զարքայն արտաշէս ընդ դարեհի վշտաս-պեայ, որպէս թէ նորա յաջորդ լեալ էր։ Որ ոք կամի հաւաստել զայս, ընթերցցի զառաջին գլուխ ինեներորդ գրոց երոդոտոսի, և զհամառօտութիւնն տրոգոսի պոմպէոսի, զոր արար յուստինոս 'ի գլ. ժա. հինգերորդ գրոց. և համեմատեսցէ երկրորդ գրոց, և տեսցէ զի Հշմարիտ է։

Եւ զերկայնաբազուկն արտաշէս յաջորդեաց որոս՝ հաստատէ պլուտարքոս 'ի վարս նորին երկայ-նաբազուկ արտաշիսի. և տրոգոս պոմպէոս. և յուստինոս 'ի տասներորդ գիրս։ Եւ ամն դարեհի՝ զոր ընդ մէջ ուշեղ արտաշիսի և՝ սոգդիանոսի մուծանեն այլք՝ տալով նմա ամս ինն և տասն, 'սո-քա յայտնապէս ասեն, թէ կացուցաւ թագաւոր. և առ կենդանութիւն արտաշիսի հօր իւրոյ սպանաւ։

ուստի զայս դարեհ չէ պարտ մուծանել 'ի կարգ յաջորդութեան։ Զայն դարեհի արշամայ՝ որ յառաջն կոչէր կոդոմանոս՝ տրոգոս պոմպէոս, և յուստինոս 'ի տասներորդ գիրս գլ. ԺԳ. ասէն թէ պայազատեաց զոքոս. ուստի արտաշէս ոքոս, և արտաշէս ուշեղ՝ լինին մի միայն անձն. որ յառաջն կոչեցեալ իցէ ոքոս, մինչև էր թագաւոր. և ապա անուանեալ արտաշէս՝ յորժամ թագաւորեաց. և վասն սուր յիշողութեան կոչեցեալ ուշեղ։

Զայն արտաւանայ. քսերքսեսի Ը. սոգդիանու, 'և աքսեսի, զորս այլք մուծանեն 'ի կարգ թագաւորաց, նախագրեալ մատենագիրքն խօսին իբրև զիշխանաց և զզինուորաց. այլ ոչ կոչեն զնոսա թագաւոր. և եթէ ապստամբութիւն հրամանատար եղեն առ ժամանակ մի, կամ 'ի տեղւոջ ուրեք, այդ եղև առանց զօրանալոյ 'ի վերայ օրինաւոր թագաւորաց, և յաղթելոյ նոցա. ուստի այսպիսի անձինք ոչինչ յաւելուն յամս, և 'ի կարգ թագաւորաց։ Զեմ, ասէ կաղինոս, հետեւող՝ ոչ երոդոտոսի, ոչ կտեսիայ, ոչ պլուտարքոսի, ոչ տրոգոսի, և ոչ յուստինոսի. բայց 'ի բանի ուր համաձայնին ածային գրոց, գեր 'ի վերոյ դասեմ զոսա, քան զայլ ամենայն արտաքինս։

Զյայտնութիւս որք եղեն առ դանիէլ յառաջնում ամի կիւրոսի արքայի մինչև ցերրորդ ամ թագաւորութեան նորա, մինն է այս. * Զհա երեք թագաւորք յարիցեն (լատ. կացցեն) յերկրիդ պարսից. և չորրորդն մեծասցի մեծութեամբ մեծ քան զամենեսեան. և յետ զօրանալոյ նորա 'ի մեծութեան իւրում, յարիցէ 'ի վերայ թագաւորութեանն յունաց։ Զյարիցէ թագաւոր հզօր և տիրեսցէ տերութիւնք բազմաւ. և արասցէ ըստ կամս իւր։ Զյարիցէ իբրև յարիցէ, (ըստ լատ. կացցէ,) թագաւորութիւն նորա փշրեսցի, և բաժանեսցի 'ի չորս հողմն երկնից. և այլն։ Դան. Ը։ 2։ Զստ հրեշտակն ծանուցանէ մարգարէին զշարունակութիւն, և զվախճան թագաւորութեանն պարսից 'ի թագաւորութիւն յունաց։ Զէ ասէ թէ եղիցին 'ի պարսս այլեւս

երեք թագաւորք, այլ յարիցեն, կամ ըստ լատ. խոյսքն։ Եւ զայս առնու կաղենոս 'ի հաստատութիւն բանից իւրոց. բառդ կոյսքն ասէ նշանակէ առաւել ինչ քան զսարդ Եղեքն. զի նշանակէ զտէրութիւն և զյարակայութիւն։ Յետին երրորդի կիւրոսի արդէն թագաւորքը կամբիւսէս առ կենդանութիւն հօրն. ուստի նա ոչ մնանէ 'ի կարգ երիցն։ Երուազդ մոգ ըստ խոստովանելոյ ամենեցուն՝ ոչ էհաս 'ի լրումն ամի միոյ. ուստի եղև Խոփաւոր, այլ ոչ եկաց. յետ նորա Դարեհ ոչ եկաց յերիրն պարսից. միշտ պատաղեալ արտաքոյ երկրին 'ի պատերազմունս իւր։ Ուստի երկրորդն՝ որ սկսաւ թագաւորել ընդ հօրն գրեթէ նոյնհետայն զկնի մահուան դարեհի, եղև արտաշէս երկայնաբազուկ. զորմէ հաստատէ պլուտարքոս թէ ամն վեցթսունն և երկու թագաւորեաց. և սա է երկրորդ որ եկաց յերիրն պարսից։ Օ կնի նորա Ներքոս. յետոյ անուանեալ Արտաշէս ուշեղ. սա եղև երրորդ որ եկաց յերիրն պարսից։ Հուսկ յետոյ չորրորդն մեծատուն յոյժ և հարուստ եղև Դարեհ արշամայ, որ գնաց պատերազմել ընդդէմ աղէքսանդրի անհամար զօրաք 'ի հարիւր աղգաց գումարելովք. և Խոփաւորն հպէր՝ որ եւ ընդդէմ նորա եղև նա ինքն աղէքսանդր մակեդոն։ Զէս ասէ կաղենոս՝ թէ ընդ այսոցիկ արտաքնոց սրպէս գեղեցիկ համաձայնի այս յայտնութիւն. և նորա զիարդ 'ի դէպ միաբանին ընդ եօթնեերորդաց դանիելի նուազեցուցանելով 'ի քաղմութիւն ամաց զչափ ժամանակաց։

Այլայլութիւնք այսչափ երևելիք յամս, և 'ի թիւս թագաւորաց զոր գտանեմք յարտաքին հեղինակս, որպէս և յեկեղեցական պատմագիրս՝ յորժամ ձեռնարկեն գրել զարտաքին պատմութիւս, 'ի զանազան արմատոց ծագին։ Առաջին է փոփոխութիւն անուանց 'ի կիր արկեալ 'ի թագաւորացն պարսից, յորժամ ելանեին յաթոռ թագաւորութեան. ուստի տեսանեմք զի կամբիւսէս առ զանունս Սուերոս. Երուազդ մոգ՝ զանունս Արտաշէս. արտաշէս երկայնաբազուկ յառաջ կոչէր Արշիր՝ ըստ վկայե-

լոյ կոնսիայ. և դարեհ վերջին ըստ վկայութեան յուստինոսի յառաջագոյն կոչէր Լոդոմանոս։ Լոյ դիւրին եղև վերիպել՝ յերկուց անուանց առնել երկու թագաւորս։ Լրկրորդն է զանազանութիւն թուականաց, և եղանակի թուելոյ զամն այլև այլ ազգաց, ոչ քաջ քննելով և ոչ ճշտիւ պահելով ղայնոսիկ՝ յորժամ 'ի մի և եթ թուական վերածեն զամն։ Լրրորդն է սովորութիւն անուանելոյ թագաւոր զորդիս՝ առ կենդանութիւն հարց։ Լրրոդոտոս հաստատէ, թէ գոյր օրէնք առ պարսիկս, զի յորժամ թագաւորն ելանէր արտաքոյ երկրին պարսից, պարտական էր անուանել զոմն թագաւոր նստիլ անդ յերկրի իւրում։ Ասսորի իրաւամբ ասի թէ կամբիւսէս թագաւորեաց ընդ կիւրոսի. և արտաշէս թագաւորեաց ընդ քսերքսեայ։ Պարզ նշանակելով ժամանակ թագաւորելոյ իւրաքանչիւրոց, նոյն ամք երկու անգամ երևին 'ի թիւ արկեալ, մի՝ 'ի հայրն, և երկրորդ՝ յորդին։ Զորրորդ. բաղում իշխանք ապստամբութիւ յափշտակեալ զթագաւորական իրաւունս՝ առին զանուն թագաւորի առ կենդանութիւն օրինաւոր թագաւորի իւրեանց։ Ասսորի և յեռագայք գտեալ զնոսա նշանակեալ 'ի հին արձանագիրս թագաւոր անուամբ, եդին 'ի կարգի թագաւորաց. թէպէտ գոլով նոցա 'ի մի և 'ի նոյն ժամանակի՝ ոչ մտանէին 'ի կարգ յաջորդութեան։ Հինգերորդ մարթի լինել և մնասաւութի թագաւորութեց, որոց կամեցեալ երևիլ հնագոյն քան զոր էին՝ արձանագրեցին թագաւորս բաղումս, որք ոչ երբէք եղեն. և թուեցին ամս յոլովս, յորս ոչ երբէք թագաւորեցին։ Հուսկ յետոյ՝ յեկեղեցական մատենագիրս, որք ձեռնարկին յարաւաքին պատմութիւնս, արմատ անմիաբանութեան նոցա՝ եղև զկեռ երթալ այսմ կամ այնմ հեղինակի առ 'ի գտանել լոյս ինչ և ոտնկոնիւ։ Որ ծնեալ է 'ի հին աշխարհի՝ ասէ կաղինոս, և կամի գրել զպատմութիւն ամենայն դարուց, և ամենայն ազգաց աշխարհի, բռնադատի ասել զայն, զոր այլք ասացին. եթէ կամիցի ասել

ինչ։ Եւ ևս է պատմել զպատմեալն, քան թէ կեղծել՝ առ ի յաւելուլ նոր ինչ։ Եւ է Ձիմարտաիոս, որ գրէ ինչ որպէս գտանէ գրեալ յայլոց, թէպէտ և գրիցէ սուտ իրս. միայն Ձիմարիտ իցէ թէ յայլոց առեալ գրեաց. և՝ ի սոյն Ձգնի միշտ եւսեբիոս։

Յետ ամենայն բանիցս այսոցիկ՝ ինդրէ կաղինոս հրաման՝ ի գիտնականաց՝ առ՝ ի կարօղ լինել վարիլ ընդ կուրտիոսի, ընդ դիոդորոսի, ընդ եւսեբեայ, և ընդ այլոց՝ նովին ազատութիւն, զոր ինքեանք վարեն՝ ի վերայ այնց հեղինակաց։ Ասպաքէն ասէ առ մատենագիրս ժամանակագրութեանց ոչ գտանեմ ինչ յաՁախագոյն քան զայս ձև բանի. * Ի հերոդոտոսէ ուղղելի է քսենոփոն։ Ի կդէսիայ սրբագրելի է երոդոտոս. Յայսմ ուղղագրելի է դիոդորոս. յայնմ վրիպեալ է եւսեբիոս. և այլն ‖։ Ասի առ վկայութիւն բերեալ՝ ի կուրտիոսէ, որ հաստատէ թէ դարեհ որ յաղթեցաւ յաղէքսանդրէ՝ էր չորեքտասաներորդ թագաւոր պարսից յետ կիւրոսի. պատասխանէ կաղինոս. ՝ի պլուտարքոսէ, և՝ ի արոգոսէ պոմպէոսէ ուղղելի է կուրտիոս։ Ասէ այս մի միայն վրիպակ կուրտիոսի, վերջին գիրք նորա բովանդակ յածի՝ ի վերայ դաշնակցութեց, և հնարագործութեց, զոր արարին գլխաւոր զօրավարք աղէքսանդրի յետ մահուան նորա՝ ի թագաւորել։ Ասէ սակայն հաւաստի է յիածային գրոց. ՁԻ. Մակ. Ձ. 7. թէ աղէքսանդր մինչդեռ կենդանի էր՝ ինքնին բաժանեաց և էտ զարքայութիւն իւր ցչորեսին դայեկորդիսն իւր փառաւորեալս՝ ի նմանէ։ Ասէ սահեցաւ բոլոր վերջին գիրք կուրտիոսի։ Ասաւել զարմանալի է պատմագրին վրիպիլ՝ ի նիւթ այսչափ ծանր, որպէս է բաժանումն մեծի միապետութիւն, քան սխալել՝ ի թիւս նախընթաց թագաւորաց թագաւորութեանն իմիք. բայց յայսմ յաւէտ անպատասխանի է կուրտիոս, զի ինքնին խոստովան լինի ունել ծանօթութիւն ինչ զբաժանումն՝ զոր արար աղէքսանդր առ կենդանութիւն իւրով, և սակայն ինքն ոչ զհետ

երթայ այնմ։ Իսկ առ վկայութիւն ափրիկանոսի և եւսեբեայ և որոց զկնի՝ հնարի կաղենոս այլեայլ պատմառս կամ պատմառանս։

Այլոյն 'ի հաշիւս ողոմպիադայ, որպէս և ծնընդեան, միլոտութիւն, և մահու փրկչին, ունիմ ասել կաղենոս զկարծիս հասարակաց. և առնեմ զայն, զոր յայլս տեսանեմ. իբր զի այր իւրաքանչիւր, վստահացեալ 'ի հաւատս միոյ, կամ երկուց յառաջնոց՝ նշանակեաց զայն որպէս զհասարակաց աւանդութիւն։ Ընդունիմ ասել, թէ առաջին ողոմպիադն սկսանի յիսիտոսէ յերկրորդ ամն եսքիզսի, ոչ զի այնպէս ասէ եւսեբի, կամ զի այնպէս ասեն այլք կարի անագան եկեալք յաշխարհ առ 'ի գիտել զիրս ըստ մասին անգիրս, ըստ մասին այլեալս, և ըստ մասին խառնակեալս յայնմանէ որ եղև առաջին. այլ զի ոչ կարեմ ասել զհակառակն ցուցանել։ Սակայն ոչ ընդունի, թէ առաջին ողոմպիադն համեմատեալ 'ՅԲ գրոց՝ սկսանի ցի յամին քառասներորդի ինեներորդի ազարիայի։ Այլ՝ դնելով նորա ըստ հասարակ կարծեաց՝ թէ 'Ռն ՅՐն մեր իցէ ծնեալ 'ի հարիւրորդ ինեներորդ չորրորդ ողոմպիադի, սկսանի զողոմպիադն յամի աշխարհի 3322. այն է եօթն և տասներորդ ամ յովասայ արքայի յուդայ. զոր և ցուցանէ այնու ցուցմամբ, որ ըստ ինքեան ոչինչ զօրէ, բայց և յայլոց առ հասարակ 'ի վար արկանի 'ի ցուցանել յայսմ զկարծիս իւրեանց։ Այ մենեքեան նախ սահմանեն յիւրեանց, թէ յորմամ ամի աշխարհի ծնաւ 'Ռն. ապա բազմապատկեալ զ194. ողոմպիադս չորիւք ամաք, (զի իւրաքանչիւր ողոմպիադ է չորեքամեայ,) մերձեցուցանեն զայն առ 'ՅԲ գիրս՝ կապելով յայն ամ, որ համեմատի հաշուի իւրեանց. և զի՝ հաշուին կաղենոսի համեմատի եօթն և տասներորդ ամ յովասայ արքայի յուդայ, վասն այնորիկ անտի սկսանի։ Այ թէ ասիցէ ոք, թէ ըստ այդմ դրուեթէ առաջին ամ կիւրոսի 'ի բաբելոն ոչ համեմատի յիսներորդ հինգերորդ ողոմպիադին, և ոչ լինի երթն թեմիստոկղեայ առ քսերքս.

սէս՝ յեօթանասնեւրորդ եօթնեւրորդ ողոմպիադի, և այն։ Բայց ոչինչ փոյթ առնէ. զի ոչ մի, այլ բաղմապատիկ սխալ գտանի ասէ՝ի գիրս արտաքին մատենագրաց։

Եւ յաւելու. թէ բեւս գիտցուս առնուցու զողոմպիադս՝ ըստ որում առնէին զայն՝ի տիւրոս, և յայլ տեղիս՝ի պատիւ հերովդէի. որ էր մեծամանդէս խաղ կրկիսական ըմբշամարտակաց, զոր յամենայն հինգ ամն կատարէին. և յայնժամ հանիւ գիտցուի, յորոյ վերայ ամենեքին հիմնեալ կան, գերեցիկ հաստատուն ընդ մերումս ասէ կաղենոս։ Զիսուն և հինգ ողոմպիադք՝ իւրաքանչիւր հինգամեան, են ամք 275. որով հասանեմք յառաջին ամ կիւրոսի. յաւելցուք ամս երեսուն, զոր թագաւորեաց յառաջ քան զթագաւորել՝ի բաբելոն. և ահա լինին ամք 305։ Բաժանեսցուք զայս գումար չորիւք, և ունիցիմք չորեքամեան ողոմպիադս 79. և տարբերութիւն միոյ յայնչափ ամս առ ոչինչ է գրելի։ Իսկ թէ այն հանդէս ըմբշամարտութեաց՝ի պատիւ դիւսի, կամ այլում չաստուածոյ լինէր՝ի տիւրոս յամենայն հինգ ամն միանգամ, ցուցանէ մեզ՝ զոր գիրն. Ի. Մակ. Գ. 18. «Բրդ՝ էր ժամանակ եկեալ հասեալ՝ էր դից պաշտօնն հինգամեակ պաշտաման՝ի ծուր (որ և տիւրոս) քաղաքի»։ Եւ սա կայն ստոյգ է և այն, զի և հնգամեանն ասել զողոմպիադ՝ նոյնանայ ընդ չորեքամեանն, հաշուելով զմիջոցն՝ և ոչ զսկիզբն։ Իսկ կաղենոսի թողեալ զայդ՝ ազգ առնէ, թէ վրիպակ մի կարի յանձնէ է առ մատենագիրս ժամանակագրութեաց, յորժամ միացուցանէն բազում թուականս. և է յառաջ բերել զգործ ինչ կամ զդիպուած իբրև պատմեալ՝ի ժամանակակից հեղինակէ. և ապա վաղվաղակի յաւելուլ ողոմպիադս, կամ այլ թուական, որպէս թէ ժամանակակից հեղինակն ընդ գործոյն. տացէ և ծանօթութիւն ժամանակին. որ սովորաբար է. սուտ։ Ողոմպիադն, և այլ ևս ամ թուականին է յաւելուած արարեալ՝ի գրողաց բազում դարուք յետոյ։ Եւսեբիոսիոս հաստատէ՝ թէ թեոփիլոսի-

զէս էանց առ քսերքսէս, բայց ոչ ասէ՝ թէ յորմէմ
ողորմիպադի։ Դիոդորոս սիկեղացի եկեալ յաշ-
խարհ բազում դարուք յետոյ, ասէ թէ եղև եօ-
թանասներորդ եօթներորդ ոլիմպիադի։ Ուստի
առնու նա զայս. որովհետև մեք 'ի նոյն դիոդ-
որոսէ բռնադատիմք ասել, թէ յետոյ եղև։ Զ-ոչ
նա թէ փախուստ թեմիստոկղեայ եղև յամին երկ-
րորդի եօթանասներորդ եօթներորդ ողոմպիադի։
Յետոյ ասէ ընդ նմին թուկիտիտեայ, թէ յալ-
կոծուիթէ ընկեցաւ 'ի նաքսոս կղզի. որ էր յայն-
ժամ պաշարեալ յաթենացւոց, որոց զօրավարքն
կիմոն։ Զ-յլ սակայն դիոդորոսն մնաացեալ զերկ-
րորդ ամն եօթանասներորդ եօթներորդ ողոմպիա-
դին, պատմէ յետոյ ուրեմն թէ կիմոն կացուցաւ
զօրավար աթենացւոց յամին երրորդի այնր ողոմ-
պիադի. և նախ մարտ մղեաց ընդդէմ մարաց
կամ մէդացւոց. յետոյ զնոսա առնուլ զշիրոս կղզի
որ յեգէական ծովու. էտ պատերազմ ընդ դոլ-
պեցիս, ապա ընդ կարիստիացիս. յետոյ պաշա-
րեաց զնաքսոս։ Զ-յս ամենայն շար պատերազմաց
զօրավարին կիմոնի սկսաւ յամի երրորդի եօթա-
նասներորդ եօթներորդ ողոմպիադի. ուստի պա-
շարումն նաքսոսի՝ պարտի լինել յեօթանասներորդ
ութներորդ ողոմպիադի, և գուցէ ևս անդադան. և
յայնմ պաշարման զնաց անկանել 'ի գերան՝ թե-
միստոկղէս փախստական միով սմաւ յառաջ քան
զզօրավարութիւն կիմոնի. և բազում ամք յառաջ
քան զայն պաշարումն։ Զ-ի են այսպիսի անբաղա-
դանութիւք և հակասութիւք 'ի գիրս սոցա. ուստի
յասէլ իմ՝ ասէ կաղինոս, թէ բազում անգամ
սուտ ասացին, ոչինչ անիրաւիմ առ նոսա։ Զ-ոդ՝
եթէ յայտնի տեսանեմք յանձախել առ նոսա ստու-
թեց, զիարդ համարիցիմք զնոսա յամենայնի ճշ-
մարտաբանս, մանաւանդ յորժամ բռնադատեն ըզ-
մեզ զատանել յածային գրոյն։ Զ-բան հին ժա-
մանակագրութիւն յորժամ 'ի բաց ելանեմք յածայ-
ին գրոց, ոչ երբէք կարեմք գտանել հաստա-
տուն կռիւ ստից։ Զ-վերայ հիմնարկութիւն հռով-

մայ, որ այսչափ հռչակաւոր է յաշխարհի, քանի՞ կարծիք յածին. Ցիմէոս դնէ երեսուն և ութ ամաք յառաջ քան զառաջին ողոմպիադն։ Կլինկիոս յամին չորրորդի երկոտասան ողոմպիադին, ութսուն և վեց ամաց զանազանութիւն։ Պողիբիոս, և դիոդորոս յամին երկրորդի եօթներորդ ողոմպիադին։ Պլոդոդորոս, կատուղղոս, կուռնելիոս նեպոս, դիոնեսիոս աղիկառնասցի յամի առաջնում վեցերորդ ողոմպիադին։ Աերիոս փղակկոս, լիվիոս, սողինոս, 'ի չորրորդ ամի վեցերորդին։ Աարքոն, պոմպոնիոս ատտիկոս, պլուտարքոս՝ յամի երրորդի նոյն վեցերորդ ողոմպիադի. և ամենեքեան համարին ունել իրաւունս։ Ցախտակք կամ աղիւսակք հիւպատոսացն հռովմայ բովանդակ տարբեր են և աննման միմեանց, և իւրաքանչիւր պնդէ՝ թէ իւրն է ճշմարիտ, և այլոցն սխալ։ Աան նոյն իսկ Վոռի թուականութեան՝ ասէ կաղինոս՝ ո՞ կարէ գիտել զատոյգն։ Լմենեքին սկսանին յամէ ծննդեանն Վոռի. և սակայն են ոմանք որք կանխեն երկու, և երեք, և չորս ամաք, և են որք մինչև ութ ամաք յետս ձգեն զծնսունդ փրկչին. այնպէս զի այս ամ հասարակաց թուականութեան 1814. յորում գրեմք զայս, ըստ ոմանց է 1816. ըստ ոմանց 1818. ըստ ոմանց 1817. և ըստ այլոց 1806. իւրաքանչիւրոցն եղեալ 'ի մտի՝ թէ գտեալ իցեն զկէտ սկզբնաւորութեան. և մինչ ամենեքեան կարծեն յաղթել, ոչ որ համարի զանձն յաղթեալ։

Լրդ՝ եկեսցուք 'ի խաւարմունս. յորոց առ պատմական ժամանակագրութիւս՝ և առաւել առ ժամանակագրութիւս՝ որ գրոց ոչինչ բնաւ մարթ է քաղել։ Լթէ չունէի զայսմանէ զայլ ապացոյց՝ ասէ կաղինոս, շատ էին ինձ վկայութիւք հեղինակաց, որք պինդ կալեալ ունին զայս Ճանապարհ։ Յովսեփ սկալիգէր՝ եթէ ոչ վրիպիմ, եղև առաջին 'ի բանալ զսա. քայց յետոյ ամենեքին որք զկնի նորա մտին 'ի նոյն, ոչ թուին մտեալ առ 'ի հետևող լինել նմա, այլ առ 'ի հալածել զնա և հար-

կանել. և զկնի հարկանելոյ զնա՝ դառնան և զմի-
մեանս հարկանեն, նշան յայտնի, թէ ընթացք
իւրեանց չէ հաւաստի և ապացուցական։ Դաւա-
կան է, թէ ոք ընթեռնուցու զպետաւիոս, զՀոմի-
կիոլոս, և զայլս առ 'ի նոցանէ յիշատակեալս գրե-
թէ յամենայն թերթս, և տեսցէ զի Ճշմարիտ են
բանքս վասն նոցա երկպառակութեանցն։ Ապա՝ անք
այսր Ճանապարհի բազում են։ Այս՝ սխալ է են-
թադրել, թէ յորժամ նախնի պատմաբան ոք ա-
սէ՝ թէ յայս ինչ պատերազմի, կամ յայս ինչ զո-
հագործութիւն, խաւարեցաւ արեգակն կամ լու-
սին, ասիցէ զՃշմարտութիւն։ Ոչ մարթ ժխտել,
թէ այն նախնի պատմագիրք լի են ստութիւն. զոր
ոչ ժխտեն և ոչ նոքին իսկ որք զհետ երթան նո-
ցա։ Ապա զի՞նչ բռնադատէ զմեզ հաւատալ՝ թէ
յասել նոցա, եղև խաւարումն, Ճշմարիտ ասիցեն։
Այրկրորդ՝ սխալ է դնել, թէ պատմաբանք կամ-
ցին նշանակել զՃշմարիտ խաւարումն, յորժամ վա-
ղեն անատոյգ ձևս բանից՝ յորս և եթէ հաստատի
այն խաւարումն. զորօրինակ։ "Ի պատերազմէն
պակասեաց տիւն. 'ի զոհէն պակասեաց արեգակն.
նսեմացաւ արև. Տիւն եղև գիշեր"։ Այս ամե-
նայն ձևք բանից անխտիր կարեն նշանակել՝ թէ
եղև խաւարումն, եղև երեկոյ, եղև աղջամուղջ,
կամ մթայլ թանձրամած. ուստի չէ հարկ խնդրել
զայն ժամանակ յաղիւսակս խաւարմանց։ Պետաւ-
իոս ոչուտ չափ խուզարկու ժամանակագրութեանց
Ճանապարհաւ խաւարմանց, և փութաջան 'ի հաս-
տատել ամենայն զօրութիւն Ճշմարտաբան զնախնի
պատմաբանս, ոչ գտանելով յաղիւսակս իւր հա-
մաձայնութեան խաւարմանց՝ զոր նոքա յայտնի յիշա-
տակեն անուամբ խաւարման, ասէ, թէ պատմա-
բանք կոչեն երբեմն խաւարումն զմասնաւոր ինչ
մթագնութեան արեգական կամ լուսնի պատճա-
ռեալ 'ի թանձր գոլորշեաց։ Այս ընդէ՞ր ոչ կարի-
ցեմ ես՝ ասէ կաղլինոս, և առաւել ուրանալ զայն
խաւարմունս, զոր պատմաբանք ընդհանուր եղե-
լոք նշանակեն, յորժամ մէջ գտանեմ համաձայնու-

թէ ընդ խմոց աղիւսակաց։ Յորմէ՝ եղեալ թէ Հնմարիա էր, թէ 'ի ժամանակի այս ինչ պատերազմի եղև խաւարումն, սխալ է յոյժ քաղել անտի զսմն։ ՅԹէ պատմագրանք այնպէս մանրամասն և Հնտիւ ստորագրէին զզարգաս խաւարմանց, որ. ոչ՝ ստորագրեն աստեղագէտք յորժամ գնեն զայն, յայնժամ մարթ էր ստուգել ոչ միայն զամն, այլև զամիսն, զօրն, և զվայրկեանն. բայց պատմիչք շատ հատարին ասել. "Խաւարեցաւ արեգակն"։ Յիսուն ամն քանի՞ խաւարմունք լինին, գիտակ աստեղաբաշխն և ըստ այնմ կարէ գնոյն պատմութիւն գնել, յորում ամի և գտցէ յաղնուսակ իւր զխաւարումն ինչ։ Յս՝ ասէ կաղինոս, առաջի արկանեմ հատարէն աստեղաբաշխից զայս խնդիր. Մինչդեռ 'ի պոլոնիա լինէր թափոր մեծահանդէս, խաւարեցաւ արեգակն. հարցանեմ յորո՞ւմ ամի թուականութենն։ Ոչ՞ի եղև այն թափոր. ոչ՝ որ լոկ Հանապարհաւ խաւարմանն կարիցէ տալ պատասխանի. վասն զի յայն յիսուն ամն արեգակն բազում անգամ խաւարեցաւ. և մարթ էր թափորին լինել այնպէս 'ի միում, որպէս և 'ի միւսում խաւարմանն։ Պատմագանք աւելի ինչ քան զայս ոչ ասեն. ապա Հանապարհաւ խաւարման զոր ասեն դիպեալ յայս կամ յայն ինչ գործողութեանէ, չէ՞ մարթ գտանել զամն՝ յորում եղև այն գործողութիւն։

Զ. Զոգ՝ հաստատեալ զանպիտանութիւն խաւարմանց 'ի կարգի պատմական ժամանակագրութեանց, մնայ անօգուտ առ այն և շրջանն յուլիական։ Յս է այն մնաւոր ինն շրջաբերութիւն 7980 ամաց. որ չափ ամք խնդրին՝ զի շրջան լուսնի որ 'ի 19. ամն կատարի. և շրջան արեգական որ 'ի 28. ամն կատարի. և շրջան ընդիկտիոնից որ 'ի 15. ամն կատարի, դառնայցեն և գտցին 'ի նմին համամատութենէ, յորում միանգամ գտանին։ Զայս շրջան ոչ կարէ ցուցանել զսխալանս ժամանակագրութեանց, եթէ ոչ 'ի ձեռն խաւարմանց։ Զաստեղաբաշխից քաջ ծառայէ. վասն զի ունին նոքա Հնտիւ զկնան

դիպեալ խաւարմանց. բայց 'ի պատմական ժամանակագրութեանն առ ոչինչ զօրեն. վասն զի 'ի նմա չունիմք 'ի պատմաբանից ոչ զտուղութեի, և ոչ զորպիսութեի խաւարմանցն։ Բաստի ուրանայ կաղինոս, թէ 'ի ձեռն խաւարմանց մարթ իցէ սուտ ցուցանել զվարդապետութեի իւր՝ որ 'ի վերայ եօթներորդացն դանիէլի. վասն զի անհաւատի են խաւարմունքն, զոր ընդդէմ դնեն այնց եօթներորդաց. և ամենևին անստոյգ են ժամանակքն զոր քաղեն 'ի խաւարմանց անտի։ Ընդունի զխաւարմունս նշանակեալս 'ի պտղոմեայ. վասն զի սպասհելով 'ի նաբոնասարայ մինչև ցաղէքսանդր, և յաղէքսանդրէ 'ի վայր զնոյն չափս նորին պտղոմեայ, այն չափք ոչ այլայլեն զժամանակն սկզբնաւորութեի եօթներորդաց զեղեալն 'ի նմանէ։

Այսմ ամենայնէ հետեւեցուցանէ կաղինոս այսպէս, թէ այդ՝ զի յառաջնոյ ամի թագաւորելոյ կիւրոսի 'ի բաբելոն, մինչև ցմահն Ղէոի՝ անցեալ իցեն ամք առաւել քան չորեքհարիւր ութսունեւութ, ոչ ցուցանի՝ եթէ ոչ սակաւ վկայութիւն ոմանց արտաքնոց, որք յայլմէ կողմանէ յաձախս սխալեն։ Բայց եթէ ածային գրովք ցուցանիցի, թէ 'ի ժամանակէ անտի սկսան եօթներորդք դանիէլի, հաւաստի է թէ զմի չորեքհարիւր և ութսուն և վեց ամաց՝ 'ի մուտս ութսուն և եօթներորդ ամի եղև մահն Ղէոի։ Բդ ես ցուցի՝ ասէ կաղինոս՝ ածային գրովք, թէ յառաջնում ամի կիւրոսի սկսան եօթներորդք դանիէլի. ապա յամին չորեքհարիւրորդի ութներորդի եօթներորդի եղև մահն փրկչին. այն է ըստ կաղինոսի 'ի մուտս ամի արարչութեանն աշխարհի 4134։

Այս ամենայն երկրորդ եցաք 'ի կաղինոսէ 'ի հնորհս նորին բազմավաստակ առն, զորոյ զժամանակագրութեի վարեցաք յայս մեր գործ, ոչինչ անտեղեակ գոլով՝ թէ այլք յերևելի արանց առաջնոց և 'ի յետնոց այլազգ կարդեն զնոյն հաշիւս. և ընդհանրապէս՝ ժամանակագիրք հարիւր ամաւ պակաս հաշուեն քան զկաղինոս՝ 'ի սկզբանէ աշ-

խարհի մինչև 'ի քա։ Իսկ որք զեօթանասնից զհետ երթան, կարի այլազգագոյն ունին։ որպէս նշանակեցաք 'ի յառաջաբանի մերում։ այլ այսպիսի զանազանութիւն հաշուի ոչինչ ստանան, ստուգութիւն պատմութեանց՝ որ գրոց, զորս միաբնակ սիմոն ունին ամենայն ողջամիտ մեկնիչք կամ ուղիղ եկեղեցւոյ 'ի սկզբանէ և այսր։

Յայսմ վայրի դնեմք և մեք կնիք այսմ մերում սրպէս և իցէ երկասիրութիւն, յոր 'ի ծերութեան ձեռն արկաք։ թէպէտ ոչ անընդհատ և ոչ միահետ 'ի նոյն աշխատասիրեալ, այլ օրչափ ինչ գործառնութիւք ծանրակիր պաշտաման մերոյ նեղէին մեզ ժամանակ զարապոյ։

Յայս գործ յորդորեցաք ոչ այնչափ առ 'ի ունել զհետաքրքրին և զզուարձալի և զտուգագոյն տեղեկութիւն ինչ ժամանակագրութեան իրաց՝ որք պատմին յիշատակին գիրս, քան թէ առ 'ի զարթուցանել 'ի մեզ զէթ 'ի վերջին ծերութեանս մերում զերկիւղ, և զսէր ՀՈՒ։ յամենայն բանս գրոյն լուսափայլ սեռասնելով զամենակալ զօրութիւն նորա, զիմաստութիւն, զարդարութիւն, զողորմութիւն, զարարութիւն, և զգութ։ յորմէ ուսանիմ երկնչել 'ի նմանէ իբրև յարդարատուն նոցա, և սիրել զնա յամենայն սրտէ, որ անսահմանաբար սիրելին է իբրև հայր բազմագութ։ Մինչդամայն և զլատուհաս պատուիրանացոյցութեան, և զվարձս առաքինագործութեան ամենայն ուրեք տեսանել, ուստանիմ մանուշակի խորշել 'ի միոյն, և ամենայն ոգեւոյ զհետ երթալ միւսոյն։ Որպէս զի ողորմութեամբ նոցա արժանացայց 'ի հնարս նորա կատարել զմնացուած սակաւաբեայ կենաց իմոց։

Եւ զի յաջողեաց՝ որ ինքնին 'ի լոյս ընծայել զապագրութեամբ զայն գործ, շարժելով զսիրտ բարեգործ անձին կարնեցի Գէորգ ազայի Լեկէն մականունեալոյ, որ է որդի Օ՝ՀԱՆԱՆԵԱՆ Յակոբայ, առ ինքնանուէր յոժարամտութեամբ արդիւնա-

նալոյ վաստակոց մերոց, ըստ նաբուն իսկ ըղձա-
նաց փափաքելի է և ինձ, զի առ ամենեսին հան-
դիսացի պիտանութեի և օգտակարութի հոգևո-
րական գործոյս։ Այլ արդարև աղօրմութեամբ ետն
ակն ունիմ, որպէս և հայցեմ աղերսանօք 'ի ետնէ,
զի առաւել քան զառաւել պաղաքեր լիցի 'ի հո-
գիս ետծասեր վերծանողաց՝ 'ի փառս ամենազօր
տերութեան իւրոյ։

ՎԱԽՃԱԿ

ԶՈՐՐՈՐԴ ՀԱՏՈՐԱՅՑ

Որ է վերջին պէսոպութեան հին Այսուհաքանի։

ՅԱՆԿ ԳԻՐՔՈՑ

Գ. ՀԱՏՈՐՈՑ

ԳԻՐՔ ԺԲ.

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

ՑՈՒԴԹԱՑ, ՏՈՎՐԻԹԱՑ, ԵՒ ԵՍԹԵՐԱՑ.

Գլ.		Երես.
Ա.	Յոգրիմ. Հոդրիմանէս. Ալբուսորոնոսոր Բաբելոնայ։	1։
Բ.	Հոդրիմանէս մանուկ պատուհանը 'ի յեռս երիցեցաց։ Խնամս զանցս Ջրոյն՝ որ երիսայր 'ի Տաղարն։	7։
Գ.	Ալէս ապրելալ 'ի ծողովրդենէ՝ խոսպանաց մատնել զտաղարն 'ի յեռս Ասորեաց։ Այլ յոգրիմի ոչ զեռ զխոսպանս, և երկիր զտաղարն։	14։
Դ.	Զամանակ Յոգրիմայ։	27։
Ե.	Տովբիմ։	36։
Զ.	Մանասայի թագաւորութեան պատմութիւն։	39։
Է.	Կուռք սասայի գոռեր հաւատալոյ։	45։
Ը.	Տովբիմ առաւել զորդի իւր զանուանեալ յեկեղեցականութենէն հաւատչել հրեշտակին 'ի ներկայութեան երիտասարդի երեսելոյ։	49։
Թ.	Ասմանասարի պատերազմ ընդ սասայի գոռեր հաւատալոյ. և Ալաշանուն գիւղն 'ի սասայէ։	56։
Ժ.	Դարձեալ պատերազմ 'ի գոռն իւր։ Ասացուն ալաց ծերոյն տովբիմայ. լիուռնիան գան նոցա բարեօք։ Այս յայտնելն հրեշտակի զանձն իւր նոցա. և որ ինչ եղեան զկնի։	60։
ԺԱ.	Ասրդեօտ 'ի ծնողաց որդի և լերդի յկանն հալաց. ծերացաւ գնան 'ի սենեկի սասայի, երեք յայլ ինչ ասենլոյն զօրուն։	66։

ԺՁ. Թէ ինչ էրբ, կամ յորմամ ծամանաքէ մեռանն պուլ-
բէրն և պոռբէրս։ Լս ինչ էրբ կործանեցաս նէ-
նուռ։ 70։
ԺԷ. Լսուներ. Աղբարաշէս արտայ մարայ և պարսէց։
Համան. և Պուրլուքէ։ 74։
ԺԹ. Վոսկանակ ասլիանեայ որ մերծեցաւն, ընդրի եա-
ներբ 'ի տիկնուներն արդարշէսի արտայի։ 81։
Ի. Համան հաւանուներն արդարշէսի հրովարտակ հա-
նել կորուսանել զամենայն ազգն հրէից՝ որ էին 'ի հա-
մօրէն ընդարարուներն արդարշէսի։ 84։
ԻԱ. Լսուներ հաւանուներն արդարշէսի զրել զանօրէն
հրովարտակն համանայ։ Լս հակառակ հրովարտակ
հանել։ 92։
ԻԲ. Ոչ էր արդարշէս այր եսուներայ. և յորմամ ծա-
մանաքի ընդարարքեայ։ 103։

ԳԻՐՔ ԺԳ.

ՏԵՍԱՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴՐՈՑՆ ԴԱՆԻԵԼԻ.

ԻԳ. Դանիէլ մարգարէ։ Նաբուգոդոնոսոր արտայ բա-
բելոնի. և Շուշան։ 113։
ԻԴ. Դանիէլ դիմեալ զերազն նաբուգոդոնոսորայ։ 120։
ԻԶ. Դանիէլ հրծանեալ զբեալ, և սպանանել զիմաստունս
զոր պաղատէին բաբելացիք։ 127։
ԻԷ. Նաբուգոդոնոսոր կանգնեալ զպատկեր ոսկի 'ի
պաղատն ծովովրդեան. իսկ երեք մանկունքն չառ-
նուան յանցն, և արկեալ 'ի հնոց հրոյ՝ ապրին սուրբ-
չելովք։ 134։
ԻԸ. Նաբուգոդոնոսոր հալածեալ 'ի մարդկանէ փախ-
պարան անկանի յանապատս, կացեալ անդ ընդ գազանս
ամս եօթն։ 142։
ԻԹ. Նշմարովքաւ ընդարարոր բաբելոնի։ Նաբոնա-
մարգարէ։ 147։
Ի. Ալ իմաստ նաբուգոդոնոսորայ յամայուներն։ Օ գեղջ
նորա, և դարձ 'ի ընդարարուներն իւր։ 152։
ԻԱ. Աղդասար արտայ բաբելոնի։ Դանիէլ մարգա-
րէ։ 160։

ԺԳ. Դանիէլ մարգարէն։ Դանիէլ մարգարէ։ 164։
ԺԴ. Դանիէլ երիտասարդ անփամ անչափ 'ի գոսք առնելոյ։ Եւ ուղղանորդաց եղանկ անուն։ 172։

ԳԻՐՔ ԺԵԳ։

ՏԵՍՈՒԹԻՒՆ ԳՐՈՑՆ ԵՀԱՐԱՍԱՑ ԵՒ ՆԵՆԻՄԵԱՆՑ։

ԺԵ. Աղաղակեալ երիտասարդաց 'ի փերուսաղէմ բաբելացւոյն հրամանաւ կիսարոյ։ Եւ հիմնարկեալ տաճարն։ 179։
ԺԶ. Լուսանալ շինեալ ընդ ամս երկուասան դնելոյ շնորհաւորել վկայասդ դաբեհի։ Օգնութիւն ընդունելոյ 'ի Նմանէ հրաման՝ անդրէն յեռանարկել 'ի շինուածս։ 185։
ԺԷ. Կապարն շինեալ տաճարին եւ երուսաղէմ հաստատ։ Լաչէր կայուցանի ինքեան եւ իշխան հրեաստանի։ 193։
ԺԸ. Լեզուի իշխան հրեից կապարն ղարկեալ պարսից երուսաղէմ։ 202։
ԺԹ. Լաստատութիւն՝ ղոր արար Նեղի 'ի կապարանն պարբերագոյց։ Վասն պէտքին բարեկարգութեան ղոր արար 'ի ծաղովքդէսն։ 209։

ԳԻՐՔ ԺԶ։

ՏԵՍՈՒԹԻՒՆ ՊԱՌՄՈՒԹԵԱՆ

ՄԱԿԱԲԱՅԵՑՒՈՑ ՄԻՆՉԵՒ 'Ի ՔՐԻՍՏՈՍ։

Ի. Շարունակութիւն պատմութեան ազգ գրոց 'ի Ալեքսանդրայ մինչեւ 'ի մահաբերելս 'ի յեռն ամն գլխոյ մարգարէութեան դանիէլի։ 217։
Բ. Մինչ կահանայապետ եւ իշխան հրեաստանի։ Սելեւկեան Գ. քիւրպատուիր թագաւոր ասիոյ։ Հեղինէոդորոս հանդերձեալ հոգաւ։ Սիմոն մեկրահայոց տաճարին երուսաղէմի։ 228։
Գ. Ադրիանոս երեսելի թագաւոր ասորոց։ Մինչ

ՀԱՀԱՆԱՅԱՊԵՍ։ Յաստէ, և ՊԵՆԵՂԱՍՍ, և ԼԻՍ-
ԱՄԱՍՍ ՍՍԱՍ ՀԱՀԱՆԱՅԱՊԵՍ։ 234։

Ղ. Ի Նախիսսս Ղ. ԵՐԵՍԵԼԻ ՀԻՍԻ ԸՆԴՊԵՍ ԵՎԻՊՍՍ-
ՍԻ. և Յաստէ ԸՆԴՊԵՍ ԵՐՍՍՍՍՂԵՄ։ Ի ՀԵՂ ԵՐ-
ԵՍՅԻՍ ՅՕԳԻ։ 243։

Ե. Ի ՍԵՐԵՍՍՍ ԵՐՍՍՍՍՂԵՄ ՅԱՆԻՊՍՍՍՅ ԵՐԵՍԵԼՍՍՅ։
Ի ԱՂՎԵՍՍԼԻՍԻ ՆՈՐԱ։ Ի ԱԿԱՍՍՍՍԼԻՍԻ ԵՂԻՍՍՂԵՐՍՍ,
և ԵՕԼԻՍ ԵՂԼԻՍՂՅ ՄԱՐԻՍ ՀԱՆԴԵՐՅ։ 248։

Զ. Ի ՍՍՍԱԼԻՍ և ՀԻՆԳ ՍՍՂԵՐ ՆՈՐԱ։ 259։

Է. ՅՍՍՂԱ ՄՍԿԱՍԻՍ ՍՍՂԵՐ ՄԱՍՍԱՍԻՍՅ. և ՍՍ-
ՊԵՐԱՍԼՄՍՍՍ ՆՈՐԱ։ Ի ԱՇԽԱՍՍՍԼԻՍԻ, և ՄԱՀ Ի Ն-
ՊԻՍՍՍԻ ԵՐԵՍԵԼՍՍՅ։ 265։

Ը. ՅՍՍՂԱ ՅԱՂԼԻՍ և ԼԻՍԱՍՅ ՓՍԽԱԲՍՍՅԻ ԿԱՅՍՍ-
ՍԻԼՍՅ ՅԱՆԻՊՍՍՍԻ։ Ի ՍՐԵՍ ՂՍԱՆԱՐՆ Ի ՀԵՐԱՆՍ-
ԱՄԱՆ ՍՂՅԻՍԼԻՍՍՍ։ 275։

ԼԹ. Ի ԱՂԼ ՀԱՂԱՓՍՐՅԻՍԼԻՍՍՍ ՅՍՍՂԱՅԻ։ Ի ԱԲՐՅ ԱՆԻՊԻ-
ՍԻՍ Ի ՊԱՐՍԿՅ, և ՀԱՐԱԽՍԱՎԱՍ ՄԱՀ ՆՈՐԱ։ 280։

Ժ. Ի Նախիսսս Ե. ԱՌՍՍԱՆԻԱԼ Ի ԱՍՍՂԱՍՍՍ, ՍՐ և
Հ Օ Ր Ա Մ Ա Ն Ի Ս։ Ի Ա Ղ Լ ՊԱՊԵՐԱԼՄՍՍՍ Յ Ս Ս Ղ Ա Յ Ի Ս։ 287։

ԺԻ. ՅՍՍՂԱ ԽՆԴՐԵՍ ՍՍՍՍԱԼ ՍԻՆԻՍԵՐԴՆ ԵՐՍՍ-
ՍՍՂԵՄ։ Ի ՍԱՐՍ ԸՆԴ ԱՆԻՊՍՍՍԻ ԱՐՍՅԻ։ Ի ՄԱՀ
ԵՂԻԱՍԱՐՍՍ ՍՍՍՍԵՆ։ Ի Ն ՇԱՐԱԼԻՍԱՆԻՍ։ 298։

ԺԲ. Ի ԳԵՂԵՍՍ ԲԱԳԱՍՍՍ Ի ՆԻԿՅ։ Ի ՄԱՀ Ի Ն Ա Պ Ի Ս Ս Ի Ս
և Ի ԼԻՍԱՍՅ։ Ի ՍՂԻՍՍՍ ՍԻՆԻՍԱՆԻՍ։ Հ Ա Ս Ա Ս։
Ի Ա Ղ Լ Հ Ա Ս Ս Ի Ս Ի Ս Ի

ԺԸ. Յաջորդումն էլխանումն երբայեցւոց արա-
ւոյ ամ գրոց՝ հինլեա 'ի Քրիստոս։ Որ է բացատրի մար-
գարէումն Յակոբայ նահապետի վասն գալստեան
Հնխայնի։ 349։

ԺԹ. Քանզի ամս անցին յաստատումենէն հրէից 'ի
բաբելոնական գերումն, կամ սկսեալ յառաջնոյ
ամէ Կիւրոսի թագաւորելոյ 'ի բաբելոն, հինլեա
ցմահն Քրիստի Տեառն հերոյ։ Որ բացատրին հուլա-
կաւոր եօթնեերորդք դանիելի։ 353։

Ի. Լուծանին դիմադրումնիւռ ընդդէմ նախընթաց
գլխոյն։ 372։

ՎՐԻՊԱԿԻՐ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ

ՀԱՏ. Ա.

Երես.	Տող.	Սխալ.	Ուղիղ.
14	16	Երկիւբորդի	Երկերիւբորդի
34	22	յայմիկ	յայնմիկ
36	3	Ծնալ	Ծնեալ
108	33	զարձինս	զանձինս
142	36	'ի ձերին	'ի ձեռին
230	10	բայց	բայց
240	24	բա՛ մրու. (յոմանս.)	բա՛ զուտ
252	34	ազամ	անդամ
393	24	Թշամեաց	Թշնամեաց

ՀԱՏ. Բ.

22	8	ձեռանց	ձեռաց
27	7	խսպառ.	խսպառ.
56	9	առ. 'ի տանել	առ. 'ի դառանել
157	24	'ի անօրէ. բու�	'ի անօրէ. նուիրն
161	32	'ի հայեբեաց	'ի հայեսիբեաց
174	28	ուխտեցին	ուխտեցիչ
183	27	մարդ. իցէ	մարթ իցէ
206	20	Թոզացոյց	դոզացոյց
210	21	յիշ. տակաբան	յիշա. տակաբան
278	35	չէ մարդ	չէ մարթ
382	13	Նախատան	Նախատինն
427	35	Նմանատիպդիտ տկի (յոմանս.)	Նմանատիպ դիտակի
437	33	առաքեացք	առաքեցաք
470	14	որթի	որդի

ՀԱՏ. Գ.

33	25	ատրնախարիք	ատորնախարիսիք
40	21	յիրաքանչիւր	յիւրաքանչիւր
86	20	յերովբամ	յերոբովամ
208	27	ազգարար	ազգ. ոարար
267	5	կատծակ (յոմանս.)	կասկած
273	4	ամէզանչականք	անմեզանչականք
297	12	ՈՐ	ՈՒՆ
372	29	չայս	զայս
417	37	տեղէան	տեսղէան

ՀԱՏ. Դ.

129	8	'ի յագական	'ի յատական
149	11	կակ	խակ
202	17	փակեալ	քակեալ
266	24	եկուց	երկուց
292	4	սեպտեմբերի	'ի սեպտեմբերի
343	15	արգեալ	արգելեալ
356	34	զովբական	զովբական

Գերբեր եղբայրներ ՀՍՀ 2 ։ սխալներ չունեմ սակայն
9/III 32 թ.